

*Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի
ֆինանսական աջակցությամբ՝ 18T-6A146 ծածկագրով գիտական
թեմայի շրջանակներում:*

*The Work was Supported by the Science Committee of the Republic of
Armenia, in the Frames of the Research Project № 18T-6A146*



*Տպագրությունն իրականացվել է «Հայագիտական
ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական
հիմնադրամ»-ի ֆինանսական աջակցությամբ:*

*This Publication was Made Possible through the Generous Support of
the All Armenian Foundation Financing Armenological Studies
(A AFFAS)*

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

**A. BOZOYAN, G. DANIELYAN
M.-A. CHEVALIER**

**CILICIAN ARMENIA IN DOCUMENTS OF
POLITICAL AND ECCLESIASTICAL
INTERRELATIONS IN THE NEAR EAST**

Issues of Diplomatics

YEREVAN
“GITUT’YUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**Ա.Ա. ԲՈԶՈՅԱՆ, Գ.Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Մ.-Ա. ՇԵՎԱԼԻԵ**

**ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ
ԵԿԵՂԵՑԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ
ՎԱՎԵՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

Բ 802

**Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական
խորհրդի որոշմամբ:**

Բոգոյան Ա.Ա., Դանիելյան Գ.Գ., Շևալիե Մ.-Ա.

Բ 802 Կիլիկյան Հայաստանը Մերձավոր Արևելքի եկեղեցաքաղաքական փոխհարաբե-
րությունների փաստաթղթերում (վավերագիտության խնդիրներ) / Ա.Ա. Բոգոյան
(խմբագիր), Գ.Գ. Դանիելյան, Մ.-Ա. Շևալիե.- Եր.: Գիտություն, 2023.- 475 էջ:

Կիլիկյան Հայաստանի գրեթե երեքհարյուրամյա գոյության ընթացքում (1080–
1375) Հայոց հոգևոր և աշխարհիկ իշխանությունները գործուն դիվանագիտական, հո-
գևոր-քաղաքական և առևտրական նամակագրական կապեր են ունեցել տարածաշր-
ջանի պետությունների մեծ մասի՝ Բյուզանդական կայսրության և նրա ժառանգների՝
Նիկիայի և Տրապիզոնի կայսրությունների, Վրաստանի, Հռոմի պապության, Գերմա-
նիայի և Ֆրանսիայի, Միջերկրական և Սև ծովերի առևտրական պետությունների,
Խաչակրաց պետությունների, Մոսուլի աթաբեկության, Իկոնիայի, Այյուբյան և Մամ-
լուքյան սուլթանությունների, Դանիշմանյան և Արտուքյան ամիրայությունների, Հա-
լեպի աթաբեկության, ինչպես նաև Իրանի մոնղոլական Իլխանության, Կարամանյան
ամիրայության և հիշատակված պետական միավորումները ներկայացնող զանազան
գործիչների հետ: Սույն գրքի հեղինակների նպատակն է եղել՝ հետազոտել Կիլիկիայի
Հայոց պետության իշխանության և թագավորության շրջանին վերաբերող արժեքա-
վոր տեղեկություններ հաղորդող եկեղեցական և քաղաքական վավերագրերն ու
սկզբնաղբյուրները, մանրամասն պատմաքննական վերլուծության ենթարկել մեզ
հասած այլալեզու վավերագրերը, հետազոտել առանձին նոտարական գրասենյակ-
ներից դուրս եկած վավերագրերի բանաձևային համակարգերը և պահպանված
բնագրերում օգտագործվող եզրուծաբանությունը, հայոց հայրապետների և միապե-
տների հետ պաշտոնական գրագրության մեջ օգտագործված տիտղոսները և պատ-
վանունները, լուծել առանձին փաստաթղթերի թվագրման, իսկության և վավերակա-
նության, խնդիրները, հարևան երկրների ինքնակալների հետ հարաբերություննե-
րում օգտագործված դիվանագիտական ընձանների և դեսպանընկալության արարո-
ղակարգերի մասին սկզբնաղբյուրային տեղեկությունները:

Կոլեկտիվ հետազոտությունը նախատեսված է հայագետների, արևելագետների,
միջնադարագետների, աղբյուրագետների և Կիլիկյան Հայաստանի պատմության
հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8080-1530-2

© Բոգոյան Ա.Ա., Դանիելյան Գ.Գ., Շևալիե Մ.-Ա., 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	8
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	10

ԳԼՈՒԽ Ա.

Ա.Ա. ԲՈԶՈՅԱՆ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԱՐԱԿԻՑ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱՍ Ա. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ	34
---	----

Ա. 1. Կիլիկյան Հայաստանի պետական և առևտրատնտեսական վավերագրերի հետազոտման խնդիրները	34
Ա. 2. Վ. Լանգլուայի ներդրումը	42
Ա. 3. Պետական պաշտոնեության հետազոտման փորձը	51
Ա. 4. Վ. Լանգլուայի ժողովածույում հրապարակված վավերագրերը	53
Ա. 5. Վավերագրերի հետազոտման ճանապարհները	62
Ա. 6. Կիլիկյան կառավարման համակարգը	70
Ա. 7. Կիլիկյան նավահանգիստների նշանակությունը	74

ՄԱՍ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՍԱՐԱՆԻ ՆՈՏԱՐԱՏԱՆ ԹՈՂՈՆՆԵՐ. ՀՈՒՄԻ ՊԱՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ	81
---	----

Բ 1. Հռոմի պապ Իննոկենտիոս Բ-ի թուղթը՝ ուղղված Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունուն	81
Բ 2. Թղթի գրման թվականը	88
Բ 3. Վավերագրի կառուցվածքը	93
Բ 4. Նամակի վավերականության հարցը	94
Բ 5. Լուկիոս Գ պապի հայերենով պահպանված նամակը	101
Բ 6. Կղեմես Գ-ի թղթերի հայերենով պահպանված ընդօրինակությունները.....	103

ՄԱՍ Գ. ԺԲ ԴԱՐԻ ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ	116
---	-----

Գ 1. Եկեղեցական բանակցությունների նախադրյալները	116
Գ 2. ԺԳ դարի հայ-բյուզանդական վավերագրերի ժողովածուն և նրա կազմողը	126
Գ 3. ԺԴ դարի հայ-բյուզանդական բանակցությունների հունարեն ժողովածուն	140
Գ 4. Թեոդորանոսի առաջին դեսպանագնացության բանակցությունների բնագրում պահպանված վավերագրերը	142
Գ 5. Թեոդորանոսի երկրորդ դեսպանագնացության «Տրամախօսութիւնների» բնագիրը	150

Գ 6. Միութենական բանակցությունների մասնակիցներն ու վավերագրերի թարգմանիչները	155
Գ 7. 1178 թ. Հռոմկլայի եկեղեցական ժողովը և ՊեՄ ժողովածու չմտած նրա վավերագրերը	174
Գ 8. Ժողովի հրավիրման տեղն ու ժամանակը	175
Գ 9. Հռոմկլայի ժողովի հետ առնչություն ունեցող փաստաթղթերը	178
Գ 10. Հռոմկլայի եկեղեցական ժողովի մասնակիցները	181
ՄԱՍ Գ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԸ ԵՎ ՀՅՈՒՄԻՍՏԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԸ	184
Դ 1. Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգը ԺԳ դարի սկզբներին	184
Դ 2. Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգի հիմնական կաթողիկոսական աթոռները	186
Դ 3. Ամենայն Հայոց կաթողիկոսը	187
Դ 4. Աղուանից կաթողիկոսությունը	188
Դ 5. Աղթամարի կաթողիկոսությունը	190
Դ 6. Լևոն Ա-ը և Հռոմկլայի կաթողիկոսարանի գործերը	192
Դ 7. Հյուսիս-արևելյան Հայաստանը Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում	195
Դ 8. Վրաց թագավորության տարածքում տեղի ունեցած ժողովները և դրանց մասնակիցները	197
Դ 9. Լոռեի ժողովի մասնակիցները, թվականն ու պարագաները	199
Դ 10. Անիի ժողովի պարագաները	207
Դ 11. Տիրխիսի(՝) ժողովը	209
Դ 12. Գրիգոր Տուտեորդի վարդապետին վերաբերող վկայությունների քննություն	212

ԳՂՈՒԽ Բ

Մ.-Ա. ՇԵՎԱԼԻԵ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՀՌՈՄԻ ՊԱՊՈՒԹՅՈՒՆԸ

<i>L'Arménie Cilicienne dans la Correspondance du Pape Innocent III (1198–1216)</i>	221
---	-----

ԳՂՈՒԽ Գ

Գ.Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԱՐԵԻԱՆ ՈՉ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ՄԱՍ Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՎԻՐԱԲԵՐՄԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԸ ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԱՐՔԱՆԵՐԻ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՈՒ ԱՍՈՐԻՔԻ ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՍՈՒԼՔԱՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	256

Ա. 1. Պաշտոնական գրագրությունը հայ-մամլուքյան հարաբերություններում	256
Ա. 2. Մամլուքյան քարտուղարության ձեռնարկների ժանրը	263
Ա. 3. Երկու անհայտ վավերագիր	270
Ա. 4. Քարտուղարության ձեռնարկների նյութը. ալ-Ումարի	287
Ա. 5. Մամլուքյան ժամանակագրությունների նյութը	304
Ա. 6. Իբն Նազիր ալ-Ջալժ, ալ-Կալկաշանդի, ալ-Սահմավի	316
Ա. 7. Դիվանագիտական ընծաների եւ դեսպանընկալության արարողակարգը հայ-մամլուքյան հարաբերություններում	324
ՄԱՍ Բ. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄԸ ՀԱՅ-ՄՈՆՂՈՒԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	356
Բ. 1. Կիլիկյան Հայաստան – Իրանի մոնղոլական Իլխանություն պաշտոնական գրագրության վերաբերյալ տեղեկությունները	356
Բ. 2. Դիվանագիտական նամակագրության լեզուն, բանագնացները, թարգմանիչները	366
Բ. 3. Դիվանագիտական ընծաները հայ-մոնղոլական հարաբերություններում	378
ՄԱՍ Գ. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԻԿՈՆԻԱՅԻ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՍՈՒՎԹԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	397
Գ. 1. Պաշտոնական գրագրության լեզուն եւ դեսպանընկալության արարողակարգը	397
Գ. 2. Իբն Բիբիի երկը	406
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ. Բնագրեր և թարգմանություններ	432
ՑԱՆԿԵՐ	
Ա. Անձնանուններ	446
Բ. Աշխարհագրական անուններ	459
ՊԱՏԿԵՐՆԵՐ	466

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

AALSL	<i>Atti dell' Accademia Ligure di Scienze e Lettere</i>
AESC	<i>Annales. Economies, sociétés, civilisations</i>
AHC	<i>Annuarium historiae conciliorum</i>
AIEO	<i>Annales de l'Institut d'études orientales</i>
Al-Masāq	<i>Al-Masāq: Journal of the Medieval Mediterranean</i>
AnIsl	<i>Annales Islamologiques</i>
ANJ	<i>Armenian Numismatic Journal</i>
AO	<i>Archiv Orientalni</i>
AOL	<i>Archives de l'Orient latin</i>
BCRH	<i>Bulletin de la Commission royale d'histoire. Académie royale de Belgique</i>
BEC	<i>Bibliothèque de l'école des chartes</i>
BEO	<i>Bulletin d'Études Orientales</i>
BMGS	<i>Byzantine and Modern Greek Studies</i>
BSOAS	<i>Bulletin of the School of Oriental and African Studies</i>
CAJ	<i>Central Asiatic Journal</i>
EHR	<i>The English Historical Review</i>
EI2	<i>Encyclopaedia of Islam, Second Edition, 12 vols. with indexes, etc., E.J. Brill, Leiden, 1960-2005</i>
EIr	<i>Encyclopædia Iranica</i>
EO	<i>Echos d'Orient</i>
EMChr	<i>Encyclopedia of the Medieval Chronicle, ed. R.G. Dunphy, Brill, Leiden and Boston, 2010</i>
ES	<i>Eurasian Studies</i>
GA	<i>La Gazette des archives</i>
HJAS	<i>Harvard Journal of Asiatic Studies</i>
IA	<i>Inner Asia</i>
IJMES	<i>International Journal of Middle East Studies</i>
ILS	<i>Islamic Law and Society</i>
JA	<i>Journal asiatique</i>
JAOS	<i>Journal of the American Oriental Society</i>
JEGP	<i>The Journal of English and Germanic Philology</i>
JH	<i>Jewish History</i>
JMH	<i>Journal of Medieval History</i>
JRAS	<i>Journal of the Royal Asiatic Society</i>
JSAS	<i>Journal of the Society for Armenian Studies</i>
MA	<i>Mélanges Asiatiques</i>
ME	<i>Medieval Encounters</i>
MIF	<i>Mémoires de l'Institut de France</i>
MIOG	<i>Mitteilungen des Instituts für Österreichische Geschichtsforschung</i>
MLR	<i>The Modern Language Review</i>
MN (ANS)	<i>Museum Notes (American Numismatic Society)</i>

MO	<i>Manuscripta Orientalia</i>
MQYJ	<i>Ming Qing Yanjiu</i>
MSR	<i>Mamluk Studies Review</i>
NEMBR	<i>Notices et Extraits des Manuscrits de la Bibliothèque du Roi</i>
OCP	<i>Orientalia christiana periodica</i>
OM	<i>Oriente Moderno</i>
PFEH	<i>Papers on Far Eastern History</i>
PG	<i>Patrologiae Cursus completus: Series Graeca, 161 vols., éd. J.P. Migne (Paris: 1857-1866)</i>
PL	<i>Patrologiae Cursus completus: Series Latina, 216 vols., éd. J.P. Migne (Paris: 1844-1855)</i>
PO	<i>Patrologia Orientalis</i>
RA	<i>Revue Archéologique</i>
RÉArm	<i>Revue des Études Arméniennes</i>
RÉB	<i>Revue des Études Byzantines</i>
RHC d.a.	<i>Recueil des historiens des Croisades: Documents Armeniens</i>
RHC Hocc	<i>Recueil des Historiens des Croisades, Historiens Occidentaux</i>
RHÉF	<i>Revue d'histoire de l'Église de France</i>
RHM	<i>Römische Historische Mitteilungen</i>
ROC	<i>Revue de l'Orient Chrétien</i>
ROL	<i>Revue de l'Orient Latin</i>
SG	<i>Studi genuensi</i>
SI	<i>Studia Islamica</i>
SOCC	<i>Studia Orientalia Christiana Collectanea</i>
SP	<i>Scienza & Politica</i>
StG	<i>La storia dei genovesi: atti del Convegno di Studi sui Ceti Dirigenti nelle Istituzioni della Repubblica di Genova</i>
BB	<i>Византийский Временник</i>
3O	<i>Золотоордынское Обозрение</i>
ԱԱ	<i>Արևելյան աղբյուրագիտություն</i>
ԲԵՂ	<i>Բանբեր Երևանի համալսարանի</i>
ԲՄ	<i>Բանբեր Մատենադարանի</i>
ԼՀԳ	<i>Լրաբեր հասարակական գիտությունների</i>
ՀԱ	<i>Հանդես ամսօրեայ</i>
ՀՀՇՏԲ	<i>Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան</i>
ՀՀՏ	<i>Հասկ հայագիտական տարեգիրք</i>
ՀԶՀ	<i>Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ</i>
ՄԺ	<i>Մանր ժամանակագրություններ</i>
ՄՅՀԶՄՄ	<i>Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի</i>
ՄՅՀՄՄ	<i>Մայր Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի</i>
ՊԲՀ	<i>Պատմա-բանասիրական հանդես</i>
ՏՀԳ	<i>ՀՍՍՏ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների</i>

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

«Նրանք, ովքեր փորձում են նսեմացնել հին վավերագրերի և գրառումների վավերականությունն ու ճշտությունը, վնասում են մատենագրության ուսումնասիրությանը... Քանզի, իրականում, հենց այս աղբյուրներից է յուրաքանչյուր անհատ քաղում իր իրավունքները, և առանց դրանց չկա անվտանգություն քաղաքացիական հարցերում: Տե՛ս, [օրինակ], պատմության դեպքում. այն գիտելիքները, որ մենք ունենք Միջին դարերից և հաջորդող ժամանակաշրջաններից. դրանք անորոշ ու թերի կլինեին, եթե չհենվեին այդ վավերագրերի վրա և չլրացվեին դրանցով»¹:

Ժան Մաբլյոն (մահ. 1707 թ.)²

Կիլիկյան Հայաստանն իր գրեթե երեքհարյուրամյա գոյության ընթացքում (1080–1375)՝ սկսած իշխանապետության ժամանակաշրջանից, գտնվելով տարածաշրջանի մշտափոփոխ քաղաքական իրադարձությունների կիզակետում, բազմակողմանի և բարդ փոխհարաբերություններ է ունեցել Միջերկրածովքի և Մերձավոր Արևելքի տարբեր պետությունների թե՛ աշխարհիկ և թե՛ եկեղեցական կազմակերպությունների հետ: Այդ կապերը հաստատել են հիմնականում Կիլիկիայի արքունիքը, Ամենայն Հայոց կաթողիկոսարանն ու երկրում գործող եպիսկոպոսական աթոռներն ու վանական հաստատությունները, տարբեր քաղաքներում իրենց գործունեությունը ծավալած առևտրական տներն ու գործարար անհատները: Կիլիկիայի Հայոց պետությունն ու եկեղեցին ակտիվ դիվանագիտական, հոգևոր-քաղաքական և առևտ-

¹ *Librorum de re Diplomatica. Supplementum. In quo archetypa in his libris pro regulis proposita, ipsaeque regulae denuo confirmantur, novisque speciminibus & argumentis asseruntur & illustrantur.* Opera & studio Domini **Johannis Mabillon**, presbiteri ac monaci è Congregatione S. Mauri (Luteciae-Parisiorum: 1704), p. 2.

² Բենեդիկտյան միաբան և պատմաբան Ժան Մաբլյոնը համարվում է եվրոպական աղբյուրագիտության և վավերագիտության հիմնադիրը: Նրա «*De re diplomatica*»-ն միջնադարյան սկզբնաղբյուրների և հատկապես վավերագրերի գիտաքննական ուսումնասիրության և մեթոդաբանական սկզբունքներն ամփոփող առաջին համակարգված աշխատությունն էր եվրոպական իրականության մեջ: Հետաքրքիր է, որ Ժան Մաբլյոնն այս մենագրության առաջին հրատարակության սկզբում՝ նամակով դիմում է Ֆրանսիայի այդ ժամանակվա վարչապետ (առաջին նախարար) Ժան-Բատիստ Կոլբերին, որը հայտնի է արևելյան ձեռագրերի կայսերական հավաքածուն համալրելու գործունեությամբ: Տե՛ս **R.H. Kévorkyan, A. Ter-Stepanyan, Manuscrits arméniens de Bibliothèque nationale de France.** Catalogue (Paris: Bibliothèque nationale de France, 1998), p. IX–XI:

րական նամակագրական կապեր են ունեցել տարածաշրջանի պետությունների մեծ մասի՝ Բյուզանդական կայսրության և նրա ժառանգների՝ Նիկիայի և Տրապիզոնի կայսրությունների, Վրաստանի, Հռոմի պապության, Գերմանիայի և Ֆրանսիայի, Միջերկրական և Սև ծովերի առևտրական պետությունների, Խաչակրաց պետությունների, Իկոնիայի, Այյուբյան և Մամլուբյան սուլթանությունների, Դանիշմանյան և Արտուբյան ամիրայությունների, Հալեպի աթաբեկության, Ինչպես նաև Իրանի մոնղոլական Իլխանության, Կարամանյան էմիրության և հիշատակված պետական միավորումները ներկայացնող զանազան գործիչների հետ:

Կիրիկիայի կաթողիկոսական դիվանատունը Հայոց եկեղեցու նվիրապետական ամբողջականության պահպանման, եկեղեցածիսական և կազմակերպչական բնույթի տարբեր հարցերով գրագրություն է փոխանակել տարբեր եկեղեցիների հոգևոր առաջնորդների, սեփական եկեղեցու թեմական կառույցների, վանական հաստատությունների ղեկավարների և եկեղեցու դավանաբանական գործերում կարևոր դերակատարություն ունեցող վարդապետների հետ: Սակայն հիշատակված պետությունների, կազմակերպությունների և անհատների միջև փոխանակված թղթակցության չնչին մասն է պահպանվել, քանի որ հիշատակված եկեղեցական և պետական կառույցների կործանման հետ միասին ժամանակի ընթացքում ոչնչացել են նաև նրանց արխիվները, տարբեր մակարդակների դիվանատները: Արդի հայագիտության կարևորագույն խնդիրներից է օտարալեզու մատենագրությունների մեջ և հատկապես արխիվային պահոցներում կատարվելիք պրպտումներով վերհանել դեռևս չհրատարակված կամ հայագետների կողմից ուշադրության չարժանացած նյութերը, պարզել այդ փաստաթղթերի վավերականության աստիճանը, հետազոտել դրանք աղբյուրագիտության լայն դաշտում և մասնագետներին հնարավորություն տալ պատրաստել դրանց քննական հրատարակությունները: Այդ աշխատանքը կնպաստի պատմական իրականության համակողմանի հետազոտմանը:

Ի տարբերություն «կիրիկյան» դիվանների՝ Վատիկանի պապական և եվրոպական մի շարք պետությունների արխիվները (Հռոմ, Վենետիկ, Ջենովա, Թուրին, Նեապոլ, Մոնպելիե, Կաստիլիա, Մադրիդ և մի շարք այլ) պահպանվել են համեմատաբար ավելի քիչ կորուստներով: Դրանց պահոցները պարփակում են նաև Կիրիկիո հայոց պետությանն ու եկեղեցուն վերաբերող բավական մեծ թվով փաստաթղթեր ու նամակներ, որոնց մի մասը մինչ օրս դեռ պատշաճ ուշադրության և ուսումնասիրության չի արժանացել: Սրանց պետք է գումարել ժամանակի հայերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն, պարս-

կերեն, վրացերեն, ասորերեն պատմագրական և մատենագրական բազմատեսակ սկզբնաղբյուրներում պահպանված տպավորիչ քանակի վավերագրերի ընդօրինակությունները և փաստաթղթերի գոյությունը հավաստող հիշատակություններն ու վկայությունները, որոնց վավերագրիտական հետազոտությունն ավելի ու ավելի հետևողական է դառնում:

Պահպանված վավերագրերի առաջին խմբաքանակները գիտական շրջանառության մեջ են մտել դեռևս ԺԹ դարի կեսերին: Կիլիկիայի Հայոց պատմության վավերագրիտական (*diplomatique*) նյութերի ուսումնասիրության առաջամարտիկը դարձավ Ֆրանսիացի հայագետ Վ. Լանգլուան: Նա ուշադրություն հրավիրեց Եվրոպայի գրապահոցներում և արևելյան ձեռագրերում պահպանված և Կիլիկիայի պատմության հետ առնչակից մի շարք միջպետական վավերագրերի վրա, որոնք հավաքեց, հետազոտեց և հրատարակեց իր աշխատություններում³: Նրա և Էդ. Դյուլորիեի⁴ աշխատանքներում առաջին անգամ փորձ է կատարվել բացահայտել և հասկանալ Կիլիկյան Հայաստանի արքունական նոտարատան կառուցվածքն ու աշխատանքի սկզբունքները: Այդ ճանապարհի վրա նրանց դրել էր Ֆրանսիական արևելագիտության, բյուզանդագիտության և հայագիտական դպրոցի հիմնադիրներից մեկը՝ Ա.-Ժ. Սեն-Մարտենը⁵:

³ V. Langlois, “Documents pour servir a une sigillographie des rois d’Arménie au moyen age”, RA, 11^e Année, № 2 (Octobre 1854 – Mars 1855), p. 630–634; **նույնի՝** “Documents pour servir a l’histoire des Lusignans de la Petite Arménie (1342–1375)”, RA, 16^e Année, № 1 (Avril 1859 – Septembre 1859), pp. 109–116, p. 143–166; **նույնի՝** *Essai historique et critique* (St. Pétersbourg 1860); **նույնի՝** *Mémoire sur les relations de la République de Gênes avec le royaume chrétien de la Petite-Arménie pendant les XIII^e et XIV^e siècles* (Turin: Imprimerie royale, 1861); **նույնի՝** “Notice sur le chrysobulle, octroyé par Léon V, roi d’Arménie, aux Siciliens, en 1331”, MA, t. IV, livr. 5 et 6 (St.-Pétersbourg: L’Imprimerie de l’Académie Impériale des Sciences, 1863), p. 649–666; **նույնի՝** *Le trésor des chartes d’Arménie, ou, Cartulaire de la chancellerie royale des Roupéniens: comprenant tous les documents relatifs aux établissements fondés en Cilicie par les ordres de chevalerie institués pendant les Croisades et par les républiques marchandes de l’Italie, etc.* (Venise: Typographie arménienne de Saint-Lazare, 1863).

⁴ Édouard Dulaurier, “Notations chronologiques employées dans les chartes des princes Arméniens”, *Recherches sur la chronologie arménienne, technique et historique*, t. 1 (Paris: Imprimerie impériale, 1859); **նույնի՝** *Étude sur l’organisation: religieuse et administrative du royaume de la Petite-Arménie à l’époque des croisades* (Paris: Imprimerie impériale, 1862), **նույնի՝** “Appendices” et Chartes arméniennes”, RHC d.a, t. 1 (Paris: Imprimerie impériale, 1869), p. 699–762; **նույնի՝** *Note sur deux privilèges accordés par les rois de la Petite-Arménie aux marchands de Montpellier*, Extrait du Recueil des historiens des croisades, T. VI (Paris: Imprimerie impériale, 1871).

⁵ Հայկական վավերագրիտությանը վերաբերող առաջին հրատարակումները թվագրվում են դեռ 1827-ով: Այս թվականին Ֆրանսիական գիտական հանդեսներից մեկում լույս է տեսել Ա.-Ժ. Սեն-Մարտենի հոդվածը, որում հրատարակվել են 1288 թ. ջենովացիներին հայոց արքայի տված արտոնագրի հայերեն և լատիներեն բնագրերը՝ առինքնող պատմաբանասիրական քննությունը: *Sté u M.J. de Saint-Martin*, “Décret ou privilège de Léon III, roi d’Arménie, en faveur des Génois, en l’année 1288”, NEMBR, t. 11.1 (Paris: Imprimerie royale, 1827), p. 97–122: **Նույն այս հատորում հոդված ունի նաև Սիրվեստր դը Սասին (M. Silvestre de Sacy**, “Pièces diplomatiques

Վավերագրիտական պրպտումներն ավելի հաստատուն հետազոտական ծիր ուղղեց Վենետիկի Մխիթարյան միաբան հ. Ղևոնդ Ալիշանը՝ 1885 թ. հրապարակելով հայագիտության համար դարակազմիկ «Սիսուան», իսկ 1893 թ.՝ «Հայ-Վենետ» աշխատությունները⁶: Եվրոպական՝ հատկապես ջենովական և վենետիկյան արխիվներում գտնված հայկական նորահայտ նյութերի հրապարակմամբ այդ նույն ժամանակներում հանդես էին գալիս Ջ. Կանեստրինին, Լ. Մաս Լատրին և Կ. Դեսիմոնին⁷: Նույն տարիներին գերմանական վավերագրիտության հետազոտական դպրոցի ներկայացուցիչ Յ.Ֆ. Բյոհմերը հաջողությամբ սկսել և մեծ թափով շարունակում էր հռոմեագերմանական արքայական և կայսերական վավերագրերի հետազոտումն ու նկարագրական ցանկերի (*Regesta*) կազմումը⁸: Արդեն իսկ ԺԹ դարի վերջին, Հռոմի պապական արխիվում արձանագրված վավերագրերի գիտական-նկարագրական ցանկերն էին հրապարակում Ֆ. Յաֆեն և Ա. Պոտաստը⁹: Եվրոպացի հետազոտողները Հռոմի արխիվներում հետաքրքիր նյութեր են գտնում նաև պա-

tirées des archives de la République de Gènes”, p. 1–96), որում, ի շարս ջենովական մի խումբ վավերագրերի, հրապարակվել է 1201 թ. Ղևոնդ արքայի կողմից ջենովացիներին տրված ևս մեկ արտոնագիր:

⁶ **Ղ. Ալիշան**, *Սիսուան (Համագրություն Հայկական Կիրիկիո եւ Լեւոն Մեծագործ) (Վենետիկ, Ս. Ղազար 1885) (Ֆրանսերեն տարբերակը տե՛ս Sissouan ou l’Arméno-Cilicie: description géographique et historique avec carte du texte et illustrations, Traduite du texte Arménien et publié sous les auspices de son ex. Noubar pasha (Venise: 1899); Léon le Magnifique. Premier roi de Sissouan ou de l’Arménocilie, écrit par le R.P. Leonce M. Alishan, traduit par le P.G. Bayan (Venise: 1888); նույնի՝ Հայ-Վենետ կամ յարընչութիւնք Հայոց եւ Վենետոց ի ԺԳ-Դ եւ ի ԺԵ-ԺԶ դարս (Վենետիկ, Ս. Ղազար, 1886 (խտալերեն տարբերակը՝ L’Armeno-Veneto. Compendio storico e documenti delle relazioni degli Armeni coi Veneziani, primo periodo, secoli XIII–XIV (Venezia, S. Lazzaro: 1893):*

⁷ **G. Canestrini**, “Documenti spettanti al commercio dei Veneziani con l’Armenia, e Trebisonda, Ragusa e Negroponte (1201–1321) comunicati dal Conte L. Serristori e da N. Tommaséo, annotati da Giuseppe Canestrini e preceduti da un suo discorso sulle relazioni commerciali dei Veneziani con l’Armenia e con Trebisonda nei secoli XIII e XIV”, *Archivio storico italiano. Appendice*, 9 (1853), p. 331–88; **L. Mas-Latrie**, “Privilège accordé par Héthoum I^{er}, roi d’Arménie, aux Vénitiens, en 1261, *Bibliothèque de l’école des chartes*, tome 31 (1870), p. 407–411; **C. Desimoni**, “Actes passés en 1271, 1274 et 1279 à l’Aïas (Petite Arménie et à Beyrouth par devant des notaires génois”, *AOL*, t. 1 (1881), p. 434–534; **նույնի՝** “Actes passés à Famagouste de 1299 à 1301 par devant le notaire génois Lamberto di Sambuceto”, *AOL*, t. 2 (Paris, 1884), p. 3–120 *և ROL*, t. 1 (1893), p. 58–139, 275–312, 321–353.

⁸ **J.F. Böhmer**, *Regesta chronologico-diplomatica regum atque imperatorum Romanorum inde a Conrado I. usque ad Heinricum VII.: 911-1313* (Frankfurt am Main: 1831).

⁹ *Regesta pontificum romanorum ab condita ecclesia ad annum post Christum natum MCXCVIII*, edidit **Ph. Jaffé** (Lipsiae: Veit et Comp., 1888); *Regesta pontificum romanorum unde ab post Christum natum MCXCVIII ad a. MCCCIV*, edidit **Aug. Potthast**, vol. I (Berolini: 1874).

պերի և Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների դիվանագիտական շփումների վերաբերյալ¹⁰: Գիտության զարգացման այդ փուլում Երուսաղեմի խաչակրաց պետության արքայական դիվանատան վավերագրերի հրատարակությանն ու նկարագրությանն իրենց ներդրումը բերեցին Ռ. Ռյոհրիխտը¹¹, իսկ հետագայում՝ Հ.-Է. Մայերը¹²: Այնուհետև նոր թափ է ստանում Հռոմի առանձին հայրապետների և Արևմտաեվրոպական միապետների դիվանատներում գրված վավերագրերի հետազոտությունը, հրապարակումն ու ցանկերի կազմումը: ԺԳ-ԺԴ դդ. պապական փաստաթղթերի ժողովածուները (*“Pontificia Commisio ad redigendum codicem iuris canonici orientalis”* մատենաշարի շրջանակներում) և Գրիգոր Թ պապի (1227–1241) հայրապետության շրջանից մինչև Գրիգոր ԺԱ-ի (1370–1378) կառավարման տարիներն ընդգրկող պապական ռեգեստների հրատարակությունները՝ կատարված Հռոմի ֆրանսիական դպրոցի (*École française de Rome*) կողմից, չափազանց օգտակար են Կիլիկյան Հայաստանի պատմությունը կատարող Արևելքի պատմության ընդհանրական համատեքստում դիտարկելու տեսանկյունից: Ավելի մասշտաբային է Արևմտագերմանական Հռոմեական կայսրության պատմության հետ առնչվող վավերագրերի ցանկերի հրապարակումները, որոնք տասնյակ հատորներ են զբաղեցնում գերմանական *Regesta Imperii* շարքում, որի նորանոր հատորները շարունակաբար հրատարակվում են նաև մեր օրերում¹³: Այդ ժողովածուների մի շարք վավերագրեր վերաբերում են Կիլիկյան Հայաստանի և Հռոմի պապության միջև եղած փոխհարաբերություններին:

Եվրոպայի գիտական կենտրոնների կողմից ամբարված և հրապարակված նյութերը արթնացրին նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանավորության տակ հավաքված և ճեմարանում կրթություն ստացած նվիրյալներին: Պետք էր համապատասխան աշխատանքանակ ստեղծել՝ վավերագրերի նորանոր

¹⁰ Ch. Kohler, “Lettres pontificales concernant l’histoire de la Petite Arménie”, *Florilegium ou recueil de travaux d’érudition: dédiés à Monsieur le Marquis Melchior de Vogüé à l’occasion du quatre-vingtième anniversaire de sa naissance* (Paris: Imprimerie Nationale, 1909), p. 303–328.

¹¹ *Regesta regni Hierosolymitani, MXCVII-MCCXCI*, edidit R. Röhrich (Oeniponti: Libria academica Wagneriana, 1893); *նույնի՝ Additamentum* (Innsbruck: 1904):

¹² H.-E. Mayer, *Bibliographie zur Geschichte der Kreuzzüge* (Hannover: Hahnsche Buchhandlung, 1960, երկրորդ հրատարակությունը՝ Stuttgart, 1965).

¹³ *Regesta Imperii* և *Regesta pontificum romanorum* մատենաշարերի նմանությամբ նախորդ դարի սկզբներից Հ.Վ.Ք. Դևիսը նախաձեռնել է անգլո-նորմանական ինքնակալների ռեգեստների՝ *Regesta regum anglo-normannorum* (1066–1154) կազմման աշխատանքները: Շարքի առաջին հատորը լույս է տեսել 1913 թ. (ed. by H.W.C. Davis, R.J. Whitwell (Oxford: Clarendon Press), երկրորդը՝ 1956-ին (ed. by C. Johnson, H.A. Cronne (Oxford: Clarendon Press), երրորդը՝ 1968-ին (ed. by H.A. Cronne, R.H.C. Davis (Oxford: Clarendon Press), չորրորդը՝ 1969-ին (ed. by H.A. Cronne, R.H.C. Davis (Oxford: Clarendon Press):

շերտերը հայագիտության խնդիրների տեսանկյունից շրջանառության մեջ դնելու համար. հարկավոր էր հաշվառել այն փաստաթղթերը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են հայկական միջավայրի, պետական և եկեղեցական կառույցների հետ: Հռոմի, Կ. Պոլսի և հակոբիկ ասորական եկեղեցու հետ դիվանագիտական փոխհարաբերությունների վավերագրերի մի փոքր քանակ պահպանվել է նաև հայ մատենագրական սկզբնաղբյուրներում և ուշադրության է արժանացել ԺԹ դարի 90-ական թվականներից հ. Ա. Տեր-Միքեյլանի, Կ. եպս. Տեր-Մկրտչյանի, Գ. վ. Հովսեփյանի, Ե. Տեր-Մինասյանի, Ա. Հովհաննիսյանի և այլոց կողմից: Հիշատակված հեղինակների, նրանց համախոհների և աշակերտների ջանքերով Ի դարի սկզբին «Արարատ» ամսագրի շուրջ համախմբվեց Հայաստանի հայագիտական դպրոցը, որի հետազոտության ծիրում հաճախ հայտնվում էին վավերագիտական բնույթի հրապարակումներ:

Այս շրջանում Կիլիկիայի հայոց պետության պատմությանն առնչակից վավերագրերի վերաբերյալ հրապարակումներով հանդես էին գալիս Եվրոպայի հայագիտական դպրոցների և կենտրոնների մի շարք ներկայացուցիչներ¹⁴: Եվրոպայում արաբալեզու պատմական սկզբնաղբյուրների հրատարակմանը զուգընթաց՝ գիտական շրջանառություն էր մուծվում նաև հայկական պետությանը վերաբերող վավերագիտական նյութեր, որոնք որոշ ժամանակ անց յուրացվում էին նաև հայագիտական շրջանակների կողմից¹⁵:

¹⁴ Օրինակ, Փարիզի «Բանասէր» հանդեսի խմբագիր Կ. Բասմաջյանը ևս Ե արքային վերաբերող իր աշխատության մեջ ներկայացրել է եվրոպական արխիվների մի շարք վավերագրեր, որոնք վերաբերում են Կիլիկիո վերջին արքային: Տե՛ս Կ. **Բասմաջեան**, Լեւոն Ե Լուսինեան. Վերջին թագաւոր Հայոց (Պարիս, 1908): Այլուր նույն հեղինակը նաև մի շարք վավերագրերի ընդօրինակությունների բնագրեր է հրապարակել Արագոնի արքա Զեյմա Բ-ի (կառ. 1291–1327 թթ.) և հայոց արքա Օշինի (կառ. 1308–1320 թթ.) դիվանագիտական նամակագրությունից, որում երկու միապետները քննարկում են Սբ. Թեկղի նախավկայուհու մասունքները Կիլիկիայից Իսպանիա տեղափոխելու հարցը: Տե՛ս **K.J. Basmadjian**, “Jacque II, roi de Aragon et Oschin, roi de la Petite Arménie (1319 (sic)–1320)”, *ROL*, t. XI (Paris: 1908), p. 1–6: Այս նամակների մասին մանրամասն տե՛ս **V. Calzolari**, “The legend of St. Thecla in the Armenian tradition: from Asia Minor to Tarragona through Armenia,” in: *Thecla: Paul's disciple and saint in the East and West* (Peeters: Leuven, 2017), pp. 283–303:

¹⁵ Օրինակ, մամլուքյան դարաշրջանի պատմիչ ալ-Մակրիզիի (1442 թ.) *Kitāb al-Sulūk* երկի ֆրանսերեն մասնակի թարգմանության հավելվածներում Մ. Քատրմերը ներառել է նաև 1285 թ. հայ-մամլուքյան պայմանագրի բնագիրը՝ քաղված Մուհի ալ-Գինի իբն Աբդ ալ-Ջահիրի (մահ. 1293 թ.) այն ժամանակ դեռ գիտական շրջանակներին անհայտ *Tašrif al-ayyam* երկի՝ Ֆրանսիայի ազգային գրադարանում գտնվող ձեռագրից՝ կից ֆրանսերեն թարգմանությամբ: Տե՛ս *Histoire des Sultans Mamlouks, de l’Égypte écrite en Arabe par Taki-Eddin-Ahmed-Makrizi*, traduite en Français par **M. Quatremère**, t. 2.1 (Paris, 1837), p. 166–171, 201–212: Այս պայմանագրի տեքստը՝ զուգարիվ ֆրանսերեն թարգմանությամբ իր աշխատության մեջ ներառել է նաև Վ. Լանգլուան: Տե՛ս **V. Langlois**, *Le trésor des chartes d’Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupénides*

Ի դարի առաջին կեսի ընթացքում երկար ժամանակ Կիլիկիայի պատմության և հայագիտության հետ կապ ունեցող վավերագրերի, հրապարակմանը, նկարագրությանը և հետազոտությանը հիմնականում անդրադառնում էին բյուզանդագետները (Ֆր. Դյուլգեր, Վ. Գրյունել, Վ. Լորան, Հ. Հունգեր, Ժ. Դարուցեզ և ուրիշներ)՝ կազմելով Բյուզանդիայի կայսերական և Կ. Պոլսի պատրիարքական նոտարատներից դուրս եկած վավերագրերի համակողմանի ցանկեր, նկարագրված վավերագրերը շրջանառության մեջ դնելով միջնադարագիտական հետազոտություններում: Ի դարի 50–60-ական թթ. Ֆր. Դյուլգերը¹⁶ և Ժ. Կարայաննուպոլսը մշակում են բյուզանդական վավերագրիտության հետազոտման և վավերագրերի հրապարակման հիմնական մեթոդներն ու սկզբունքները¹⁷: Բյուզանդագետների ջանքերով Ի դարի ընթացքում հրապարակվում են համեմատաբար անխաթար վիճակում պահպանված Աթոնի վանքերի արխիվային թողոնները (Լ. Պլատի, Վ. Գրյունել, Պ. Լեմերլ, Ն.

(Venise, 1863), p. 217–231: Տարիներ անց Բակուրանը (Վահան Քիրքճեան) սույն դաշնագիրը Մ. Քատրմերի ֆրանսերեն թարգմանությունից հայերեն թարգմանեց և հրատարակեց վերոհիշյալ «Բանասեր» հանդեսի էջերում: Տե՛ս **Բակուրան**, «Դաշնագիր խաղաղութեան ընդմեջ Լեւոն Գ Թագաւորի եւ Եգիպտոսի Մէմլուքեան սուլթան Գալաունի, կնքուած 1285 մայիս 7ին», Բանասեր № 3 (1902, մարտ), էջ 69–79: Դաշնագրի նկատմամբ հետաքրքրությունը հետագայում էլ չի մարել: Այն նորից ֆրանսերեն է թարգմանել Մ. Կանարը: Տե՛ս **M. Canard**, “Le Royaume d’Arménie-Cilicie et de Mamelouks jusqu’au traité de 1285”, *REA* IV (1967), p. 249–258: Ապա անգլերեն թարգմանել են Ռ. Արոթթը, Պ. Հոլտը և բոլորովին վերջերս էլ Դ. Քուքը: Տե՛ս և հմտ. **R.J. Scott**, *Mamlūk-Armenian relations during the Bahrī period to the fall of Sis (1250-1375)* (Montreal: McGill University, 1981) (unpublished MA thesis), pp. 184–196; **P.M. Holt**, *Early Mamluk Diplomacy (1260-1290). Treaties of Baibars & Qalāwūn with Christian Rulers* (Leiden-New York-Köln: E.J. Brill, 1995), pp. 95–103; *Baybars’ Successors: Ibn al-Furāt on Qalāwūn and al-Ashraf*, trans. by **D. Cook** (London and New York: Routledge, 2020), pp. 114–122: Արաբերեն բնօրինակից հայերեն թարգմանությունը տե՛ս Կիլիկյան Հայաստանի պատմության մամլուքյան սկզբնաղբյուրները (I): Իբն Աբդ ալ-Ջահիր (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 20, Արաբական աղբյուրներ Դ), թարգ. բնագրերից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ պ.գ.թ. **Գագիկ Դանիելյանի** (Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2021), էջ 204–214: Դաշնագրի դրույթների քննարկումը տե՛ս նաև **A.D. Stewart**, *The Armenian Kingdom and the Mamluks: War and Diplomacy during the Reigns of He ’um II (1289–1307)* (Leiden: Brill, 2001), pp. 55–61:

¹⁶ **Fr. Dölger**, *Byzantinische Diplomatie. 20 Aufsätze zum Urkundenwesen der Byzantiner* (Ettal: Buch-Kunstverlag Ettal, 1956); **նույնի՝** *Regesten der Kaiserurkunden des oströmischen Reiches: Regesten 565–1453*, T. 1–5 (München-Berlin: Verlag C.H. Bech, 1924–1965).

¹⁷ Տե՛ս **F. Dölger, J. Karayannopoulos**, *Byzantinische Urkundenlehre. Erster Abschnitt: Die Kaiserurkunden* (Handbuch der Altertumswissenschaft, xii. 3) (Munich: Beck, 1968): *Բյուզանդական վավերագրի դասակարգման սկզբունքների մասին տե՛ս* **М.В. Бибииков**, «Византийские акты: проблемы классификации» *Проблемы дипломатики, кодикологии и актов ой археологии, Материалы XXIV Международной научной конференции, Москва, 2–3 февраля 2012* (Москва, 2012), с. 41–49: *Բյուզանդիայի արխիվների և փաստաթղթերի պահպանման ու ընդօրինակման խնդիրների հետազոտության մասին տե՛ս* **А.В. Меньшиков**, *Архивы Византии X–XV вв.* (Москва, 2009) *Թեկնածուական ատենախոսությունը*:

Օյկոնոմիդես և ուրիշներ): Դրանց մեջ Պ. Լեմերլի օգնությամբ հաջողությամբ հայկական հետք հայտնաբերեց բյուզանդագետ Հր. Բարթիկյանը¹⁸:

Խաչակրաց պետությունների և պապական կուրիայի վավերագրերի հետազոտողները (Ռ. Ռյոհրիխտ, Օգ. Հայսենբերգ, Վ. Մալեչեկ¹⁹, Վ. Ռուգտ-Քոլլենբերգ²⁰ և ուրիշներ), ինչպես և Մերձավոր Արևելքի պատմության լայն պրոֆիլի մասնագետները (Կլ. Կահեն, Բ. Շպուլեր, Ժ. Ռիշար, Մ. Բալար և ուրիշներ), իրենց աշխատանքներում լայնորեն օգտագործեցին հրապարակված վավերագրերի նյութերը, և ճշգրտված ու թվագրված հիմքի վրա վերանայվեցին նախորդ հետազոտողների բազում վրիպումներ: Կիլիկիայի պատմության հայագետ ուսումնասիրողները (Կ. Բասմաջյան, Գ. Միքայելյան, Ս. Բոռնազյան, Ժ. Դեդեյան, Լ. Տեր-Պետրոսյան, Կ. Մութաֆյան և ուրիշներ) հիմնականում օգտվել են այդ աշխատանքներից:

Վերջին երեք-չորս տասնամյակների ընթացքում Վենետիկի և Զենովայի արխիվների Կիլիկյան Հայաստանին վերաբերող բազմաթիվ վավերագրեր շարունակել են հրապարակել Դ. Պունչուհի²¹, Ա. Սոպրակազան²², Լ. Բալետտոն²³, Ա. Մուսարրան²⁴ և այլք: Դրանք արժեքավոր տեղեկություններ են պարունակում Մերձավոր Արևելքի և եվրոպական երկրների հետ միջազգային առևտրում հայկական պետության ունեցած դերի ու նշանակության մասին²⁵:

¹⁸ **Հ. Բարթիկյան**, «Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին», ԲՄ, № 4 (Երևան, 1958), էջ 285–295, ինչպես նաև **Նույնի**՝ «Մեծ Լավրայի առաջնորդ (պոռտոս) Թեոկտիստոսի հայերեն ստորագրությունը», ԲՄ, № 11 (Երևան, 1973), էջ 68–72:

¹⁹ **W. Maleczek**, “Ein unbekannter Brief König Leos II. von Armenien an Papst Innocenz III.,” *RHM*, vol. 13 (1971), p. 13–25.

²⁰ **Sté u Rüd t-Collenberg W.**, “À propos de la lettre di duc d'Orléans à Benoit XIII et de Guy, fils du soi-disant roi d'Arménie, Leon V”, *OCP*, vol. 49 (1983), p. 434–438; **Նույնի**՝ “Les Bullae et Litterae adressés par les Papes d'Avignon à l'Arménie Cilicienne, 1305–1375 (d'après les Registres de l'Archivio Segreto Vaticano)”, *Armenian Studies in memoriam Haïg Berbérian*, ed. D. Kouymjian (Lisboa: 1986), p. 697–725:

²¹ **D. Puncuh**, *I Libri Iurium della Repubblica di Genova*, vol. V/2 (Genova: 1996): *Սա Զենովայի արխիվների վավերագրային թողոնների արդի ութհատոր հրատարակության (1992–2002) երկրորդ հատորն է: Մյուս հատորները խմբագրել են Ա. Դեղակազան, Ա. Ռովերեն և այլք:*

²² **A. Sopracasa**, *I Trattati con il regno Armeno di Cilicia: 1201–1333* (Pacta Veneta 8) (Rome: Viella, 2001).

²³ **L. Balletto**, “Genovesi a Laiazzo: il caso di Cerasia Ciciliana (1279)”, *AALSL*, vol. 52 (1985), p. 188–196; **Նույնի**՝ “Nuovi documenti sui Genovesi a Laiazzo”, *SG*, Ser. NS, vol. 4, 1986, p. 39–44; **Նույնի**՝ “Il commercio armeno-italiano (secoli XIII–XV)”, *Roma-Armenia*, ed. Cl. Mutafian (Roma: 1999), p. 184–188:

²⁴ **A. Musarra**, “Unpublished Notarial Acts on Tedisio Doria's Voyage to Cyprus and Lesser Armenia, 1294–1295”, *Crusades*, vol. 11 (2012), pp. 173–197.

²⁵ **C. Otten-Froux**, “L'Aïas dans le dernier tiers du XIIIe siècle d'après les notaires génois,” in: B.Z. Kedar-A.L. Udovitch (eds), *The Medieval Levant: Studies in Memory of Eliyahu Ashtor (1914–1984)* (1988), p. 147–171; **Նույնի**՝ “Les relations économiques entre Chypre et le royaume arménien de Cilicie

Կիլիկյան Հայաստանի առևտրատնտեսական պատմության հետազոտման բնագավառում նոր փուլ բացվեց Ի դարի 80-ական թվականներից հետո: Մասնավորապես, 1989 թ. վերոհիշյալ Լ. Բալետոն խմբագրեց և ամբողջացնելով հրապարակեց Կիլիկիայի Այաս նավահանգստի ջենովական տան երկու նոտարական գործակալների՝ 1274, 1277 և 1279 թթ. ընթացքում արձանագրած վավերագրերի առավելագույնս ամբողջական ժողովածուները²⁶: Այասի նավահանգստի երեք տարիների առևտրատնտեսական գործունեությանը վերաբերյալ հարյուրավոր նոտարական ակտեր ընդգրկող այս ժողովածուների հրատարակությունը նոր հեռանկարներ բացեց մեզանում այդ բնագավառի փաստաթղթերի ուսումնասիրության և Կիլիկիայի սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրության համար²⁷: Առևտրատնտեսական վավերագրերի բազմազանությունն ու դրանց բնագրերի մեզ հայտնի քանակը հույս են ներշնչում, որ մոտ ապագայում վավերագրիտական քննության կենթարկվեն պահպանված հայերեն և այլալեզու վավերագրերի հավաքածուները և կստեղծվեն դրանց մասնագիտական նկարագրությունները: Լատիներեն, հունարեն, ասորերեն, վրացերեն և արաբատառ հնագրությունների համակողմանի իմացությունը թույլ կտա հայագետների նոր սերնդի ներկայացուցիչներին ավելի անկաշկանդ բախել արխիվային պահոցների դռները:

Վավերագրիտական նյութերի հետազոտությունը հայագիտական ուսումնասիրությունների նոր բնագավառ դառնալու հայտ է ներկայացրել դեռ անցյալ դարի վերջին: 1995 թ. տասնամյա պրպտումներից հետո սույն գրքի համահեղինակ Ա. Բոգոյանը հրապարակեց «Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165–1178)» աշխատությունը²⁸: Այստեղ, հայագիտության մեջ առաջին անգամ փորձ է կատարվել եվրոպական վավերագրիտության նվաճումների համակողմանի օգտագործման հիմքի վրա մշակել Կիլիկիո Հայոց պետության պատմության եկեղեցաքաղաքական փաստաթղթերի հետազոտման և վավերագրիտական լրակատար ցանկերի կազմման որոշակի սկզբունքներ և մեթոդաբանություն: Հիշատակված աշխատանքում փորձ է կատարվել հետազոտված վավերագրերի ուսումնասի-

d'après les actes notariés (1270–1320)”, *L’Arménie et Byzance. Histoire et culture* (Byzantina Sorbonensia 12), ed. N. Garsoïan (Paris: Éditions de la Sorbonne, 1996).

²⁶ **L. Balletto**, *Notai genovesi in Oltremare atti rogati a Laiazzo da Federico di Piazzalunga (1274) e Pietro di Bargogne (1277, 1279)* (Genova: 1989).

²⁷ Տե՛ս **Ջ. Գևորգյան**, Կիլիկիայի հայկական պետությունը միջերկրածովյան առևտրի համակարգում XIII–XIV դդ. (Երևան, 2015):

²⁸ **Ա. Բոգոյան**, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165–1178) (Երևան, «Գիտություն» հրատ., 1995):

րության խնդիրների վերլուծության հիմքի վրա մի շարք օրինաչափություններ գտնել Կիլիկյան Հայաստանի կաթողիկոսական և Բյուզանդական կայսրության արքունական ու պատրիարքական նոտարատների գործունեության ասպարեզում: Շուտով այդ փաստաթղթերի հետազոտման սեփական մոտեցումներն առաջարկեց նաև Մոնպելիեի համալսարանի սան, պրոֆ. Ի. Օժեն՝ «Եկեղեցիները բանակցություններում. Հայերը և բյուզանդացիները ժԲ դարի Բ կեսին» աշխատությամբ, ուր հեղինակը գիտական շրջանառության մեջ դրեց հիշատակված դարաշրջանի փաստաթղթերի ֆրանսերեն թարգմանությունը հետազոտությամբ և բավական ընդարձակ ծանոթագրություններով²⁹:

Մոնպելիեի համալսարանի դոկտորանտ Մ. Վաներյանն էլ հետազոտության առարկա դարձրեց Ներսես Շնորհալու նամակագրական ժառանգությունը³⁰: Նույն համալսարանի դասախոս Մ.-Ա. Շևալիեն իր ուշադրությունը սևեռեց Խաչակրաց արևելքի երկրներում գործող կաթողիկ եկեղեցու զինվորական-վանական կարգերին՝ իր հետազոտության հիմնական նյութը հայթայթելով ժԲ-ԺԳ դարերի պապական նամակների թողոններում և հիշատակված վանական կարգերի գործունեությունը լուսաբանող վավերագրերում³¹: Հիշատակված սկզբնաղբյուրների սիստեմավորման արդյունքում ստեղծվեց «Կրոնագինվորական օրդենները Կիլիկյան Հայաստանում» մենագրությունը: Հիշատակված աշխատությունները գրված են եվրոպական պատմագրության 300-ամյա փորձի և վավերագրիտական հետազոտությունների մեթոդների հետևողական կիրառմամբ:

Վերջին տարիներին Կիլիկյան վավերագրիտությանն առնչվող հրապարակումներով ժամանակ առ ժամանակ հանդես են գալիս արդի հայագիտության ներկայացուցիչները³², բայց այս ուղղության ուսումնասիրությունների ավանդույթ ո՛չ հայրենական և ո՛չ է արտերկրի մասնագետների շրջանում այդպես էլ

²⁹ I. Augé, *Église en dialogue: Arméniens et Byzantins dans la seconde moitié du XII siècle* (Corpus scriptorum orientaliū – 633, subsidia 124) (Louvain: Peeters, 2011).

³⁰ S. Vanérian-Mère Mariam, *La Correspondance de Saint Nersès Chenorhali avec les Arméniens* (2007) (*Մոնպելիե-3 համալսարանում պաշտպանված դոկտորական ատենախոսություն*):

³¹ M.-A. Chevalier, *Les ordres religieux-militaires en Arménie cilicienne: Pemptiers, hospitaliers, teutoniques & Arméniens à l'époque des croisades* (Paris: Geuthner, 2009); Մ.-Ա. Շևալիե, *Կիլիկյան Հայաստանի և հոգևոր-ասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, Ժ. Դեղեյանի և Բ. Հարությունյանի խմբագրությամբ, ֆրանսերենից թարգմանեց Վ. Պողոսյանը* (Երևան, ԵՊՀ հրատ., 2007):

³² Օրինակ՝ M. Bais, “Documents de la chancellerie du royaume d’Arménie en Cilicie: traductions et traducteurs”, *La Méditerranée des Arméniens XIIIe–XVe siècle*, ed. G. Dédéyan, Cl. Mutafian (Paris: 2014); P. Halfter, “La couronne d’Arménie: Un document récemment découvert, illustrant les relations entre l’empereur Frédéric II et le roi Hét oum I^{er}”, *La Méditerranée des Arméniens XIIIe–XVe siècle*, p. 101–120 և այլ աշխատություններ:

չի ձևավորվում: Այս գիրքը փորձ է՝ արթնացնել վավերագրատական դպրոցի ստեղծման անհրաժեշտությունը հայագրատական շրջանակներում:

Ժան Մաբլյոնի ժամանակներից ի վեր վավերագրատությունը եվրոպայում աննախագեղ զարգացում է ունեցել: Այդ բնագավառի խնդիրների առանձնացումն ու հետազոտությունը շարունակվում են. համալսարանական միջավայրում այդ գիտաճյուղի խնդիրները քննարկվում են ցայսօր: Վավերագրատության առջև դրվող խնդիրները մեր օրերում լուծվում են հաճախ դատական փորձաքննության (կրիմինալիստիկա) որոշակի մեթոդների կիրառությամբ, որն էլ նպաստում է գիտության այս երկու բնագավառների սերտ զարգացմանը ձեռագրագրատության և հնագրության ասպարեզում: Վավերագրատներին հետաքրքրող խնդիրների մեջ են գրական և խոսակցական լեզուների օգտագործման հարաբերակցությունը վավերագիր սկզբնաղբյուրներում³³, փաստաթղթի կառուցվածքային և բանաձևային լուծումները: Ուսումնասիրողների համար ուրույն հետաքրքրություն է ներկայացնում տարբեր աստիճանների նոտարական գրասենյակների գործունեությունը, վավերագրի կառուցվածքի համակողմանի հետազոտությունը պարզելու համար՝ փաստաթղթի բնօրինակ կամ պատճեն լինելը: Բնօրինակի առկայության դեպքում մեծ կարևորություն է ձեռք բերում վավերագրի գրման համար օգտագործված նյութի (պապիրուս, մագաղաթ կամ թուղթ) տեսակը, թանաքը, տողերի բաշխվածությունը էջի վրա, ուղեկցող կնիքների և դրանց հետ կապված նյութերի հետազոտությունը, վավերագրերի գիտական տեսակավորումն ըստ տիպերի, հեղինակի, նոտարի և ընդօրինակողի ճշգրտումը, բանաձևային համակարգի հետազոտությունը, վավերագրին ուղեկցող նոտարական գրանցումների առանձնացումը, առաքման խնդիրների համակողմանի քննարկումը և այլն: Վավերագրի թե՛ բնագրի, և թե՛ ընդօրինակության թվագրումը, ինչպես նաև կեղծված վավերագրերի բացահայտումը այս բնագավառի կարևորագույն առաքելություններից են: Պատմությունը սպասարկող բոլոր օժանդակ սկզբնաղբյուրների (պատմագրություն, վարձագրություն, իրավունք և այլն) հետազոտողներից վավերագետը միակն է, որը փորձում է օգտագործել մի շարք բնագավառների (լեզվաբանություն, բանասիրություն, տոմարագրատություն, ձեռագրագրատություն, մագաղաթագրատություն, պապիրուսագրատություն, թղթագրատություն (թղթի տեսակներ, ջրանշաններ), կնիքագր-

³³ Օրինակ, միջնադարյան Ֆրանսիայում և նրա հարևան երկրների արխիվներում պահպանվող փաստաթղթերում օգտագործված լեզուներին է նվիրված եղել 2003 թ. սեպտեմբերին թրուսյայում տեղի ունեցած գիտաժողովը (*“La langue des actes. Actes du XI^e Congrès international de diplomatique”* (Troyes, jeudi 11 – samedi 13 septembre 2003), ed. O. Guyotjeannin (Paris: 2004):

տուժյուն, թանաքագիտություն, հնագրագիտություն, իրավաբանական փորձագիտություն և այլն) նվաճումները և դրանց հիմքի վրա հասնել հետազոտական խնդիրների առավել բարձր ճշգրտության և համակողմանիության:

Ի դարի 90-ական թթ. վավերագիտության (*diplomatica*) գիտաճյուղի մեթոդաբանական հիմքերը մեկ անգամ ևս փորձեցին ճշտել և զարգացնել ֆրանսիացի վավերագետներ Օլիվեր Գուլոտֆանինը, Ժակ Պիկեն և Բենուա-Միշել Տոկը³⁴: Հետզհետե առանձին բնագավառներ են դառնում թագավորական, իշխանական, պապական, պատրիարքական, կաթողիկոսական, անհատական և տնտեսական վավերագրերի առանձին տեսակների բազմակողմանի հետազոտությունը, ինչպես նաև տարբեր նոտարական գրասենյակների և նրանց գրագիրների աշխատանքային ձեռագրերը, ինչպես նաև տարբեր տիպի էպիստոլյար (նամակագրական) ժողովածուները, որոնք հանդես են գալիս բնօրինակներով կամ ընդօրինակություններով³⁵: Բյուզանդական պապիրոսագիտության, վավերագիտության, վիմագրության, կնիքագրության, հնագրության և կնիքագիտության նվաճումներն արձանագրված են Օքսֆորդյան Բյուզանդագիտության ձեռնարկում³⁶: Պատրիարքական նամակների թղթառաջ-բանաձևերի հետազոտությունը նոր մակարդակի է բարձրացրել Վիեննայի բյուզանդագիտական դպրոցի ներկայացուցիչ Օ. Մացալը³⁷:

Հնագրությունը և ձեռագիր գրքի ու վավերագրի հետազոտության խնդիրներն այսօր էլ միջնադարագետների հետաքրքրությունների կենտրոնում են³⁸: Հայաստանում ևս բավական մեծ թափ է ստանում ձեռագիր գրքերի ստեղծման կենտրոնների՝ գրչատների ճշտմանն ու աշխատանքի մեթոդներին նվիրված հետազոտությունները: Բագրատունյաց Հայաստանի գրչության առան-

³⁴ Տե՛ս **O. Guyotjeanin, J. Pycke, B.-M. Tock**, *Diplomatique médiévale* (Turnhout: Brepols, 1993), *ինչպես նաև* **O. Guyotjeanin**, “La diplomatique médiévale et l’élargissement de son champ”, *GA*, № 172 (1996), p. 12–18:

³⁵ **P. Hatlie**, “Redeeming Byzantine Epistolography”, *BMGS*, vol. 20, 1996, pp. 213–248; *Epistola 2. La lettre diplomatique: écriture épistolaire et actes de la pratique dans l’occident latin médiéval*, ed. **H. Sirantoine** (Madrid: Casa de Velázquez, 2018).

³⁶ *The Oxford Handbook of Byzantine Studies*, ed. by E. Jeffreys, J. Haldon, R. Cormack (Oxford, Oxford University Press, 2008), pp. 101–156 (*տարբեր հեղինակներ*): Տե՛ս նաև **A. Džurova**, “Analogies et différences codicologiques entre les manuscrits en parchemins Grecs, Slaves et Arméniens”, *UU* 4 (2023), p. 57 – 84:

³⁷ **O. Mazal**, *Die Proimien der byzantinischen Patriarchenurkunden* (Wien, 1974).

³⁸ *Codicology and Palaeography in the Digital Age*, ed. by **M. Rehbein, P. Sahle, T. Schassan**, BoD, Nordersdtedt 2009; **Marco Stroppa**, “Il papiero greco dell’Archivio di Stato Firenze (LDAB 2465)”, *Comunicazioni dell’Istituto Papirologico “G. Vitelli”*, 12, a cura di G. Bastianini, S. Russo (Firenze: Firenze University press, 2015), pp. 71–89; *From Codicology to Technology: Islamic manuscripts and their Place in Scholarship*, ed. **St. Brinkmann** (Berlin: Beate Wesmüller, 2009) և այլն:

ձին կենտրոններին նվիրված աշխատանքներ է հրապարակել Կ. Մաթևոսյանը, քայլեր են կատարվել Մեծոփավանքի, Արցախի, Ուտիքի, Ակոռի, Սկևռայի և Կիլիկիայի այլ գրչության կենտրոնների հետազոտության բնագավառում³⁹:

Դիվանական վավերագրերի և մատենագրական հուշարձանների հետազոտությունն ընթանում է նաև առասպելաբանության և դիվանագիտության սահմանի վրա: Կոստանդին կայսեր և Սեղբեստրոս պապի միջև կնքված միջնադարյան կեղծ փաստաթղթերի հետազոտական մեթոդիկաների հետևողությունը՝ Ա. Հովհաննիսյանը հիմք է դրել մեզանում ապոկալիպտիկ հուշարձանների ուսումնասիրությանը, որոնք հաճախ միահյուսվել արևմուտքում Հովհաննես քրիստոնյա արքային վերաբերող առասպելին⁴⁰: Վերջին տարիներին այս բնագավառին վերաբերող հետաքրքիր հետազոտություններ է հրապարակել Զարուհի Պողոսյանը⁴¹, շեշտադրելով ինդրի թե՛ բնագրագիտական և թե՛ պատմական կողմը: Այս տեսանկյունից առասպելական Հովհաննես թագավորի պատմությանն են անդրադարձել Բ. Վազները⁴², Ա. Կնոբլերը⁴³ և այլոք⁴⁴:

³⁹ Տե՛ս Կ. Մաթևոսյան, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը (Էջմիածին, 1997), էջ 217–319; նույնի՝ Խոր Վիրապի վանքը և նրա գրչության կենտրոնը (Էջմիածին, 1997), Բ–Գ; Հ. Բաղալյան, Սկևռայի գրչության կենտրոնը (ալբոմ-ուսումնասիրություն) (Երևան, «Նաիրի», 2013); Թ. Մինասյան, Արցախի գրչության կենտրոնները, Երևան, Նաիրի, 2015; նույնի՝ Ուտիքի գրչության կենտրոնները (ալբոմ-ուսումնասիրություն) (Երևան, 2020); Ա. Հարությունյան, «Ակոռի բնակավայրը, սրբավայրերը և գրչության կենտրոնները», Էջմիածին ամսագիր Թ (2016), էջ 116–138; Լ. Թումանյան, Վանա լճի կղզիների վանքերի գրչության կենտրոնները (Երևան, 2019); Ա. Ղազարոսյան, «Կիլիկիայի գրչության կենտրոնների սկզբնավորումը. Սև լեռան և Դրազարկի գրչության կենտրոնը», Էջմիածին ամսագիր Ը (2008), էջ 68–79:

⁴⁰ Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 1–2 (Երևան, ՀՄՄԻ ԳԱ հրատ., 1957–1959); A. Osipian, “Armenian Involvement in the Latin-Mongol Crusade: Uses of the Magi and Prester John in Constable Smbat’s Letter and Hayton of Corycus’s “Flos historiarum terre orientis,” 1248–1307”, *ME*, vol. 20.1 (2014) pp. 66–100.

⁴¹ Տե՛ս Z. Pogossian, *The Letter of Love and Concord: A Revised Diplomatic Edition with Historical and Textual Comments and English Translation* (Leiden-Boston: Brill, 2010) և Զ. Պողոսյան, «Վարդան Արևելցու «Հիշատակարանը» մոնղոլների մասին և դրա աղբյուրները», *Տոնագիր. գիտական ժողովածու Լևոն Տեր-Պետրոսյանի 75-ամյակի առթիվ* (Երևան, 2021), էջ 261–296:

⁴² B. Wagner, *Die “Epistola presbiteri Johannis”: lateinisch und deutsch: Übertragungen im Mittelalter: mit bisher unedierte Texten* (Münchener Texte und Untersuchungen zur deutschen Literatur des Mittelalters, Bd. 115) (Tübingen: Max Niemeyer Verlag, 2000).

⁴³ A. Knobler, *Mythology and Diplomacy in the Age of Exploration* (European Expansion and Indigenous Response, vol. 23.) (Leiden-Boston: Brill, 2017).

⁴⁴ *Prester John, the Mongols and the ten lost tribes*, ed. by Ch.F. Beckingham and B. Hamilton (Aldershot: Variorum, 1996); L.N. Gumilev, *Searches for an Imaginary Kingdom: The Legend of the Kingdom of Prester John*, tr. by R.E.F. Smith (Cambridge: Cambridge University Press, 2009); K. Brewer, *Prester John: The Legend and Its Sources* (Farnham, Surrey-Burlington, VT: Ashgate, 2015).

Վավերագրերի հետազոտությունը սերտորեն առնչվում է կնիքների,⁴⁵ ջրանշանների, վավերագրերի պատկերագրության և այլնի ուսումնասիրությանը:⁴⁶ Մեր ժամանակների համար փաստաթուղթը սոսկ կարևորագույն սկզբնաղբյուր չէ. այն իրենից ներկայացնում է զանազան տիպի տեղեկությունների մի հորդ հոսանք, որը կարիք ունի համակողմանիորեն համակարգվելու: Բնօրինակ վավերագրերից յուրաքանչյուրն իր ամբողջության մեջ կատարյալ պատմական հուշարձան է, տարբեր դարաշրջանների հասարակությունները հետազոտելու և կառավարող դասերին դիտելու՝ ճշմարտախոս մի հայելի, որի հետազոտությունը պահանջում է խորը գիտելիքներ մի շարք բնագավառներից: Այստեղ կարևորվում է, մանավանդ, վավերագրի լեզվի համակողմանի իմացությունը: Եթե համեմատենք Կիրիկյան Հայաստանի կաթողիկոսական և արքունական նոտարատներից դուրս եկած վավերագրերը, ապա դրանք աչքի են ընկնում մի սկզբունքային օրինաչափությամբ: ԺԲ-ԺԵ դարերի Կիրիկիայի հոգևոր դիվանատներից դուրս եկած փաստաթղթերն առանձնանում են հայոց լեզվի առավել մաքրությունով՝ դասական հայերենի նորմերի նկատմամբ անվերապահ հարգանքով, իսկ աշխարհական նոտարատներում թողարկված վավերագրերի լեզուն առավելագույնս մոտենում է իրենց ժամանակի խոսակցական տեղական բարբառներին (վերնիկուլար լեզու), որոնց մեջ մեծ չափերի են հասնում դասական հայերենից նահանջները, օտար արտահայտություններն ու հասկացությունները: Հայկական վավերագրի կարևորագույն տեսակներից է նաև վիմագիր արձանագրությունը, որի ուսումնասիրությունը ապագայում պետք է ուղեկցվի վավերագրիտական հետազոտություններով⁴⁷: Ժամանակն է՝ վավերագրերի տարբեր տեսակները մեկ առ

⁴⁵ Օրինակ, Բյուզանդական կնիքագիտությանն են վերաբերում 1987 թվականից մինչ օրս տպագրվող *Studies in Byzantine Sigillography* հանդեսի հրատարակումները:

⁴⁶ O. Guyotjeannin, J. Pycke, B.-M. Tock, *Diplomatique médiévale*, p. 14.

⁴⁷ Միջնադարյան հայկական վիմագրության այս առանձնահատկությանն ժամանակին անդրադարձել է Վ. Լանգլուան (*Le trésor*, p. 2-4): Նա նաև ցույց է տվել մի շարք նշանավոր եվրոպական հուշարձանների վրա առկա վիմական արձանագրությունների հարաբերակցությունը փաստաթղթերի հետ՝ հետևելով Մաբիչոնի և այլոց աշխատություններին: Նույն երևույթն առկա է մեզանում՝ Բագրատունյաց թագավորության ժամանակներից մինչև ԺԹ դարի վերջը եկեղեցիների և վանքերի համալիր կառույցների վրա: Հայաստանի արևելյան գավառներում գտնված վիմական արձանագրություններում օգտագործվող լեզուն հետաքրքիր զուգահեռներ ունի վավերագրերի բառապաշարի հետ: Հմմտ. Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն (Նրևան, 1978): Այստեղ կարևոր մոտեցում կարող է լինել պահպանված վիմագիր արձանագրությունների համեմատությունը ձեռագիր ընդօրինակություններով պահպանվող վավերագրերի հետ, դրանք երկուսի համատեղումով այդ վավերագրերի նկարագրության կազմումը, որոնք որոշ դեպքերում կարող են լրացուցիչ նյութ մատակարարել և պատկերացում տալ տեղական տարբեր նոտարատների՝ հատկապես Սյունիքի վանական համալիրների աշխատանքի սկզբունքների մասին: Կեչառիսի վանական համալիրում Գրիգոր Մագիստրոս

մեկ հետազոտելու և ավելի մեծ ուշադրություն դարձնելու առանձին մատենագիր-անհատների (օրինակ՝ Ներսես Շնորհալի, Գրիգոր Տղա, Ներսես Լամբրոնացի, Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի և այլոց) փաստաթուղթ-թողոններին: Պետք է ստեղծել Հայոց վավերագրատության հետազոտության կայուն հարցաշար, որով կարելի կլինի ամբողջական գիտական նկարագրություն ապահովել հայերենով պահպանված փաստաթղթերի բոլոր տեսակների համար:

Ի տարբերություն Բյուզանդական և արևմտավրոպական երկրների՝ Մերձավոր Արևելքի իսլամական պետությունների պաշտոնական գիվանատների արխիվները և վավերագրերը համակարգային և նույնքան հետևողական հետազոտության նյութ չեն դարձել: Պատճառը գուցե այն է, որ եվրոպական չափանիշներով արխիվներ մուսուլմանական Արևելքում գրեթե չեն պահպանվել⁴⁸: Բացառություն են կազմում թերևս միայն Կահիրեի Գենիզայի⁴⁹, Սինայի

Պահպանվում արձանագրությունը սկսած Ղ. Ալիշանից համեմատվում է Սեն Մարտենին ծանոթ՝ հայերենից իտալերեն թարգմանված վավերագրի հետ տե՛ս **M.J. Saint-Martin**, *Mémoires historiques et géographiques sur l'Arménie*, tome second (Paris, 1819), p. 287–288: Իտալերեն այս բնագրից հայերեն կատարված հետադարձ թարգմանությունը տե՛ս **Ղ. Ալիշան**, Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց (Վենետիկ, 1890), էջ 260; հմմտ. **Կ. Մաթևոսյան**, Անի-Շիրակի պատմության էջեր (հոգվածների ժողովածու) (Երևան, 2010), էջ 140–149: Սեն Մարտենին տվյալ պարագայում հետաքրքրում էր հայկական մի շարք վանքերի վիմագիր-փաստաթղթերում նիկիայի ժողովի 318 մասնակիցներով պայմանավորված նզովքի բանաձևը, որի հետքերով գնալով, նա Հռոմի Պրոպագանդայի (*Propaganda de Fidei*) արխիվում գտել էր սույն վավերագիրը իտալերեն լեզվով: Հետաքրքիր է, թե Վատիկանի արխիվի ո՞ր թղթապանակում է պահվել տվյալ փաստաթուղթը և ի՞նչ բնույթի վավերագրերի հարևանությամբ:

⁴⁸ Իսլամական վավերագրատության ընդհանուր խնդիրների մասին տե՛ս **Cl. Cahen**, “Notes de diplomatique arabo-musulmane”, *JA* 251 (1963), p. 311–332; **նույնի՝** *Les peuples musulmans dans l'histoire médiévale* (Damas, 1977), p. 65–80; **W. Björkman** (Classical Arabic), **G.S. Colin** (Maghrib), **H. Busse** (Persia), **J. Reychman** and **A. Zajaczkowski** (Ottoman Empire), “Diplomatic,” in: *EI2*, vol. II (Leiden: E.J. Brill, 1991), p. 301–316: Մամլուքյան դարաշրջանից մեզ հասած փաստաթղթային «կենտրոնացված» արխիվների բացակայության պատճառներին նվիրված հոդված ունի **Կ. Հիրշլերը**: տե՛ս **K. Hirschler**, “From Archive to Archival Practices: Rethinking the Preservation of Mamluk Administrative Documents”, *JAOS*, vol. 136, № 1 (2016), pp. 1–28:

⁴⁹ **G. Khan**, *Arabic legal and administrative documents in the Cambridge Geniza collections* (Cambridge: Cambridge University Press, 1993); **S.D. Goitein**, “The Cairo Geniza as a Source for the History of Muslim Civilization”, *SI*, III (1955), pp. 75–92 և *հատկապես նույնի՝* *A Mediterranean Society: The Jewish Communities of the Arab World as Portrayed in the Documents of the Cairo Geniza*, 6 vols. (Berkeley-Los Angeles: 1967–1993).

Ս. Կատարինե վանքի⁵⁰ և Երուսաղեմի Հարամ ալ-Շարիֆի⁵¹, Կուսեյր ալ-Կադիմի⁵² և այլ արխիվ-պահոցների փաստաթղթերը և պատառիկները:

Վավերագրերի այդ խմբերին ավելանում են նաև եվրոպական (Վենետիկ, Ջենովա, Ֆլորենցիա, Պիզա, Բարսելոնա և այլուր) արխիվներում պահպանված լատին-մուսուլմանական փոխհարաբերությունների բազմաթիվ վավերագրեր՝ ինչպես բնօրինակ փաստաթղթեր, այնպես էլ դրանց ընդօրինակություններ և թարգմանություններ, որոնց հետազոտման ուղղությամբ ցայսօր բավական աշխատանք են կատարել եվրոպացի միջնադարագետ-արաբագետները (Մ. Ամարի, Լ. դը Մաս Լատրի, Սիլվեստր դը Սասի, Ջ. Վանսբրոու, Մ.Ա. Ալարկոն Սանտոն, Ա.Ս. Աթիյա, Ֆր. Բոդեն, Ալ. Ռիցցո և այլք)⁵³: Եվրոպական արխիվների հարուստ հավաքածուները, սակայն, սահմանափակ պատկերացում են տալիս Արևելքի մուսուլմանական պետությունների արտաքին քաղաքական և առևտրական փոխհարաբերությունների մասին:

⁵⁰ **A.S. Atiya**, *The Arabic Manuscripts of Mt. Sinai: A Handist* (Baltimore: 1955); **H. Ernst**, *Die mamlukischen Sultansurkunden des Sinai-Klosters* (Wiesbaden, 1962); **D.S. Richards**, *Mamluk Administrative Documents from St. Catherine's Monastery* (Mémoires de l'Association pour la Promotion de l'Histoire et de l'Archéologie Orientales, Université de Liège 55) (Leuven: Peeters, 2011).

⁵¹ **D.S. Richards**, **L.S. Northrup** and **A.A. Abul-Hajj**, "A Collection of Medieval Arabic Documents in the Islamic Museum at the Haram Al-Šarīf", *Arabica*, t. 25, Fasc. 3 (1978), pp. 282–291; **D. Little**, "The Significance of the Haram Documents for the Study of Medieval Islamic History," *Der Islam*, 57.2 (1980), pp. 189–219; **նույնի՝** *A Catalogue of the Islamic documents from al-Haram aš-Šarīf in Jerusalem* (Beirut-Wiesbaden: 1984); **H. Lutfi**, *Al-Quds al-Mamlūkiyya: A History of Mamlūk Jerusalem based on the Haram Documents* (Berlin: Schwarz, 1985); **Chr. Müller**, *Der Kadi und seine Zeugen: Studie der mamlukischen Haram-Dokumente aus Jerusalem* (Wiesbaden: 2013).

⁵² **Li Guo**, *Commerce, Culture, and Community in a Red Sea Port in the Thirteenth Century: the Arabic Documents from Quseir* (Leiden-Boston: Brill, 2004).

⁵³ **Տե՛ս M. Amari**, *I diplomati arabi del R. Archivio fiorentino: testo originale con la traduzione letterale e illustrazioni* (Firenze, 1863 ("Appendice", Firenze, 1867); **L. de Mas Latrie**, *Traité de paix et de commerce et documents divers concernant les relations des Chrétiens avec les Arabes de l'Afrique septentrionale au Moyen Âge*, t. 1–3 (Paris: 1865–1872); **J. Wansbrough**, "Venice and Florence in the Mamluk Commercial Privileges", *BSOAS*, vol. 28, № 3 (1965), pp. 482–523; **նույնի՝** "A Mamlūk commercial treaty concluded with the Republic of Florence, 894/1489," in: *Documents from Islamic chanceries*, ed. by S.M. Stern (Oxford: Bruno Cassirer, 1965), pp. 39–79; **նույնի՝** "The Safe-Conduct in Muslim Chancery Practice", *BSOAS*, vol. 34, № 1 (1971), pp. 20–35; **M. Alarcón y Santón, R. García de Linares**, *Los documentos árabes diplomáticos del Archivo de la Corona de Aragón* (Madrid: Impr. de E. Maestre, 1940): Մյուսների հետազոտություններին անդրադարձ կլինի սույն գրքի 9 գլխում:

Ամփոփելով՝ արձանագրենք, որ Ֆաթիմյան,⁵⁴ Այյուբյան⁵⁵ և Մամլուքյան⁵⁶ դարաշրջաններից համեմատաբար սակավաթիվ պաշտոնական փաստաթղթերի բնօրինակներ են մեզ հասել: Վավերագրերի մի նշանակալի քանակություն չընթացս դարերի ինչ-ինչ պատճառներով ոչնչացվել է տարբեր անհատների ձեռքով, մի նշանակալի մասն էլ զոհ է դարձել ավերիչ պատերազմների և ռազմարշավների կամ չի դիմացել ժամանակի և բնության քայքայիչ ազդեցությանը:

Այս կորուստը, սակայն, մեծ մասով փոխհատուցվում է մուսուլմանական մատենագրության (ժամանակագրություններ, տարեգրություններ, առանձին մուսուլմանական տիրակալների վարքագրություններ, կենսագրական բառարաններ և այլն) և inšā-ի գրականության (պաշտոնական գրագրության և քարտուղարության ձեռնարկներ և ժողովածուներ, ինչպես նաև նամակների ժողովածուներ)⁵⁷ հուշարձանների առիթնող հարստությամբ: Արաբալեզու պատմագրության մեջ պահպանված են Մերձավոր Արևելքի միջազգային քաղաքական և դիվանագիտական հարաբերությունների նշանակալի թվով փաստաթղթերի ինչպես ամբողջական ընդօրինակություններ և հատվածական մեջբերումներ, այնպես էլ վերաշարադրանքներ և կամ դրանց գույությունը փաստող բազմաթիվ պատմական հիշատակություններ: Մուսուլմանական (հատկապես Մամլուքյան դարաշրջանի⁵⁸) մատենագրության մեջ պահպան-

⁵⁴ S.M. Stern, *Fāṭimid decrees: Original Documents from the Fatimid Chancery* (London: Faber and Faber, 1964); նույնի՝ “Three Petitions of the Fāṭimid Period Author”, *Oriens*, vol. 15 (1962), pp. 172–209; նույնի՝ “A Fatimid Decree of the Year 524/1130,” *BSOAS*, vol. 23, 1960, pp. 439–455; G.A. Khan, “A Copy of a Decree from the Archives of the Fāṭimid Chancery in Egypt”, *BSOAS*, vol. 49, № 3 (1986), pp. 439–453: Ֆաթիմյան շրջանից մեզ հասած փաստաթղթերի վերաբերյալ ընդհանրական ակնարկ տե՛ս M. Rustow, “Fatimid State Documents”, *JH*, vol. 32 (2019), pp. 221–277:

⁵⁵ H.-A. Hein, *Beiträge zur ayyubidischen Diplomatie* (Freiburg: Schwarz, 1971).

⁵⁶ S.M. Stern, “Petitions from the Mamlūk Period (Notes on the Mamlūk Documents from Sinai)”, *BSOAS*, vol. 29, № 2 (1966), pp. 233–276: Կահիրյան տարբեր պահպանում պահվող մոտ 900 վավերագրերը (մեծամասամբ Մամլուքյան դարաշրջանին վերաբերող կալվածագրեր և առևտրային գործարքներ) ցուցակագրել և նկարագրել է Մ.Մ. Ամինը: *Sté Catalogue des documents d'archives du Caire de 239/853 a 922/1516 (depuis le IIIe/IXe siecle jusqu'a la fin de l'époque Mamlouke), suivi de l'édition critique de neuf documents* (Caire: Institut français d'archéologie orientale, 1981):

⁵⁷ Ընդհանրական ակնարկի համար տե՛ս R. Veselý, “Die inšā'-Literatur”, *Grundriß der arabischen Philologie*, ed. W. Fischer, vol. III: Supplement (Wiesbaden 1992), p. 188–208:

⁵⁸ Մամլուքյան վավերագրության ձեռքբերումների, ներկա խնդրացանկի և անելիքների մասին տե՛ս F. Bauden, “Mamluk Era Documentary Studies: The State of the Art”, *MSR*, vol. 9 (2005), pp. 15–60; L. Reinfandt, “Mamluk Documentary Studies,” in: *Ubi sumus? Quo vademus? Mamluk Studies – State of the Art*, ed. by St. Conermann (Göttingen: Bonn University Press/V & R unipress, 2013), pp. 285–309, ինչպես նաև Ֆր. Բոդենի նաև մերօրյա անդրադարձը՝ “Mamluk Diplomatics: the Present State of Research,” in: *Mamluk Cairo*, pp. 1–104:

ված են նաև Կիլիկյան Հայաստանի դիվանագիտական շփումներին և ռազմաքաղաքական փոխհարաբերություններին վերաբերող բազմաթիվ փաստաթղթերի վերաբերյալ հաղորդումներ, և անգամ առանձին վավերագրերի (պայմանագրեր, պաշտոնական նամակներ և այլն) ընդօրինակություններ, որոնք ցայսօր դեռևս առանձին քննության չեն ենթարկվել:

Այսպիսով՝ ԺԹ դարից սկսած՝ Ֆաթիմյան, Այյուբյան և Մամլուքյան սկզբնաղբյուրների և վավերագրերի հետազոտության ոլորտում իրենց հատկանշական ներդրումն են բերել մասնավորապես Լ. դը Մաս Լատրին, Վ. Բյորկմանը, Մ. Ամարին, Հ. Լամմենսը, Ջ. Վանսբրոուն, Ս. Մ Շտերնը, Հ.-Ա Հեյնը, Ջ. Խանը, Մ. Կանարը, Ա. Աթիյան, Դ. Լիթթլը, Դ. Ռիչարդսը, Ռ. Ամիտայ-Պրայսը, Պ. Հոլտը, Ռ. Վեսելին, Ֆ. Բոդենը, Մ. Դեկկիչեն, Դ. Էզլը, Մ. Ֆավեռոն, ինչպես նաև Ռ. Շուքուրովը և Դ. Կորոբեյնիկովը՝ Մերձմիջերկրածովքի քրիստոնեական և մուսուլմանական պետական միավորումների ուժերի փոխհարաբերություններին նվիրված իրենց հետազոտություններում⁵⁹: Հիշատակված հեղինակների աշխատությունները տարածաշրջանի պատմության հետազոտման համար հսկայական դաշտ են բացել: Այնուամենայնիվ, չնայած մուսուլմանական պատմագրության և վավերագիտության բնագավառում կատարված մեծ աշխատանքին՝ դեռ շատ ու շատ աղբյուրներ կարոտ են գիտական նկարագրության, խորաքննին հետազոտության և գիտական հրատարակության:

Վերջին տարիներին սրվել է հետաքրքրությունը Մերձմիջերկրածովյան քրիստոնեական երկրների և Արևելքի մուսուլմանական պետությունների փոխհարաբերությունների վերաբերյալ մեզ հասած վավերագիտական նյութի նկատմամբ, և թեման պարբերաբար հարստանում է նորանոր ուսումնասիրություններով և հոդվածների ժողովածուներով⁶⁰, որոնց ձեռքբերումներին ուշի-ուշով պիտի հետևեն հայագետ միջնադարագետները:

⁵⁹ Հիշյալ ուսումնասիրողների կարևորագույն աշխատանքները կամ արդեն հղվել են վերևում կամ էլ դեռ կհղվեն ստորև՝ Գ. Դանիելյանի հեղինակած հատվածում:

⁶⁰ P.M. Holt, *Early Mamluk Diplomacy (1260–1290)* (մի անգամ արդեն հղվել ենք վերևում); *Diplomatics in the Eastern Mediterranean 1000–1500: Aspects of Cross-Cultural Communication*, ed. by A.D. Beihammer, M.G. Parani, Chr.D. Schabel (Leiden-Boston: Brill, 2008); *Les Relations diplomatiques entre le monde musulman et l'occident latin (OM, Nuova serie, Anno 88, Nr. 2)*, ed. by D. Aigle and P. Buresi (2008); *Letters from the East: Crusaders, Pilgrims and Settlers in the 12th–13th Centuries*, tr. by M. Barber, K. Bate (London: Routledge, 2010) (խաչակրաց Լևանտից Արևմուտք ուղարկված նամակների թարգմանական ժողովածու); *La correspondance entre souverains, princes et cités-états: Approches croisées entre l'Orient musulman, l'Occident latin et Byzance (XIII^e–début XVI^e siècle)*, ed. D. Aigle, St. Péquignot (Turnhout: Brepols, 2013); *Mamluk Cairo, a Crossroads for Embassies: Studies on Diplomacy and Diplomatics*, ed. by F. Bauden and M. Dekkiche (Leiden-Boston: Brill, 2019); *Culture matérielle et contacts diplomatiques entre l'Occident latin, Byzance et l'Orient islamique (XI^e–XVI^e siècle)*, ed. F. Bauden (Leiden: Brill, 2021):

Այսպիսով, ի մի բերելով վերոգրյալը՝ պետք է շեշտենք, որ վաղուց արդեն ժամանակն է, որ հայագիտությունը ևս յուրացնի միջնադարյան վավերագրերի հետազոտման փորձն ու նվաճումները և դրա հիմքի վրա նորովի անդրադառնա Կիլիկյան Հայաստանի դարաշրջանից պահպանված փաստաթղթերին՝ ստեղծելով դրանց համար գիտական նկարագրության ցանկեր (regesta)՝ պատմական լիակատար ծանոթագրություններով: Հայաստանը պետք է ունենա վավերագրիտության հետազոտության սեփական դպրոցը, որի խնդիրը պետք է լինի Հայաստանում գործած նոտարատների աշխատանքի առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրությունը: Այդ ճանապարհին որոշ օգտակար ուղենիշներ կարող է տալ օգտակար լինել մեր ներկա հետազոտությունը:

Սույն կոլեկտիվ մենագրությունը կյանքի է կոչվել 2018–2021 թթ.: Այս երեք տարիների ընթացքում մի փոքրիկ խմբով՝ հանձինս Ա. Բոզոյանի (խմբի ղեկավար), Մ.Ա. Շևալիեի և Գ. Դանիելյանի, ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի տրամադրած դրամաշնորհային ծրագրի («Կիլիկյան Հայաստանը Մերձավոր Արևելքի եկեղեցաքաղաքական փոխհարաբերությունների փաստաթղթերում (վավերագրիտական խնդիրներ)» խորագրով) շրջանակներում (ծածկագիր՝ 18T-6A146) փորձել ենք հայագետների և հատկապես միջնադարյան հայոց պատմության մասնագետների ուշադրությունը հրավիրել պատմագիտության մեզանում վաղուց ևեթ գրեթե անտեսված օժանդակ գիտաճյուղերից մեկի՝ վավերագրիտության վրա: Ընթերցողի դատին հանձնվող այս գիրքն ամփոփում է հիշյալ ծրագրի շրջանակներում գիտական խմբի անդամների կատարած հետազոտության արդյունքները՝ համանուն վերնագրի ներքո:

Սույն գրքի հեղինակները նպատակն է եղել՝ հետազոտել Կիլիկիայի Հայոց պետության իշխանության և թագավորության շրջանին վերաբերող արժեքավոր տեղեկություններ հաղորդող եկեղեցական և քաղաքական վավերագրերն ու սկզբնաղբյուրները, մանրամասն պատմաքննական վերլուծության ենթարկել մեզ հասած այլալեզու վավերագրերը, հետազոտել առանձին նոտարական գրասենյակներից դուրս եկած վավերագրերի բանաձևային համակարգերը և պահպանված բնագրերում օգտագործվող եզրույթաբանությունը, հայոց հայրապետների և միապետների հետ նամակագրության մեջ օգտագործված տիտղոսները և պատվանունները, լուծել առանձին փաստաթղթերի թվագրման, իսկություն և վավերականության խնդիրները:

Կոլեկտիվ հետազոտության նպատակներից մեկն էլ եղել է տարբեր արքունիքներին և նվիրապետական աթոռներին կից նոտարական գրասենյակների աշխատանքի սկզբունքների բացահայտումը: Սա, անշուշտ, օգտակար

կլինի Մերձավոր Արևելքի քաղաքական կոնյուկտուրայի և հոգևոր աստիճանակարգի մասին մեր ընկալումները խորացնելու առումով:

Հեղինակներն իրենց փորձով են համոզվել, որ տարբեր բնույթի փաստաթղթերի զուգահեռ-համեմատական քննությունն անգնահատելի նյութ կարող է մատուցել Կիլիկյան Հայաստանի քաղաքական, եկեղեցական և տնտեսական պատմության խնդիրների վերաբերյալ, զարգացնել առանձին նոտարական գրասենյակներում աշխատանքի կազմակերպման և գործավարության, հայ և օտար աշխարհիկ տիրակալների և հոգևոր առաջնորդների պաշտոնական նամակագրության, ինչպես նաև դեսպանների նշանակման, դեսպանագնացությունների կազմակերպման, դեսպանընկալման, բանակցություններում զանազան նվերների և ընծաների օգտագործման՝ դիվանագիտական նվիրաբերման արարողակարգերի մասին մեր ընկալումները: Հետևապես, հայագիտության զարգացման ներկա փուլում առաջնահերթ նշանակություն ունի պահպանված փաստաթղթերի բնօրինակների հրատարակությունը, ընդօրինակությունների գիտահամեմատական բնագրերի կազմումը, վավերագրերի ձևաբանական և պատմաաղբյուրագիտական տեսանկյունների մանրակրկիտ հետազոտությունը: Այդ աշխատանքներին պիտի ուղեկցեն փաստաթղթերի գիտական նկարագրություն-ցանկերի (regist) պատրաստումը՝ ժամանակագրական հերթականությամբ, ինչպես որ նմանատիպ հետազոտությունները կատարվում են արդի բյուզանդագիտության և եվրոպական միջնադարագիտության բնագավառում: Ռեգեստների միջոցով միջնադարագետ պատմաբան, վավերագրագետ և անգամ բանասեր մասնագետները ճշգրիտ տեղեկություններ կարող են ստանալ պահպանված կամ կորած յուրաքանչյուր վավերագրի, դրանց պատճենների կամ մատենագրության մեջ նրանց մասին պահպանված վկայությունների, յուրաքանչյուր փաստաթղթի գրման թվականի, պատմական հանգամանքների և շարժառիթների վերաբերյալ:

Աշխատության սկզբի գլուխներում Ա. Բոզոյանը, մի շարք մեկնակետերից ելնելով, հետազոտում է ԺԲ-ԺԳ դարերի հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական բանակցությունների վավերագրերի հետազոտման որոշ տեսանկյուններ: Հեղինակն իր մի շարք հոդվածներում և մենագրություններում անդրադարձել է Կիլիկիայի, Հռոմի, Միջերկրական ծովի պետությունների, ինչպես նաև Մեծ Հայքում և Վրաստանում գտնվող հայկական մշակութային կենտրոնների կապերի և շփումների հետազոտությանը: Ներկա հետազոտությամբ Ա. Բոզոյանն իր առջև կոնկրետ խնդիր է դրել՝ ուսումնասիրել ԺԲ-ԺԳ դարերի Բյուզանդիայի և Կիլիկյան Հայաստանի եկեղեցաքաղաքական

փոխհարաբերությունների վավերագրերի որոշակի խմբեր: Այս տեսանկյունից չափազանց մեծ կարևորություն են ձեռք բերում Հոռմի պապական արխիվից դուրս՝ հայկական միջավայրում և հայերեն լեզվով պահպանված փաստաթղթերը: Նա նաև նպատակ է ունեցել՝ ամփոփելու Վրաց թագավորության սահմաններում և Մեծ Հայքում գտնվող հայկական իշխանությունների, եպիսկոպոսների և վանական վարդապետների միջև ծավալված փոխհարաբերությունների վավերագրերի մասին տեղեկությունները:

Խմբի խորհրդատու պրոֆ. Մ.-Ա. Շևալիեն իր հետազոտությունների մեծագույն մասը նվիրել է խաչակրաց Լեանտում (Միջերկրածովք, Մերձավոր Արևելք) գործող Հիվանդախնամների, Տաճարական և այլ ասպետական կաթողիկ վանական կարգերի պատմության հետազոտությանը: Նրա աշխատանքներում կարևոր տեղ է հատկացված Կիլիկիայում և Մերձավոր Արևելքում կրոնա-ասպետական կարգերի պատմության հետազոտությանը և այդ ֆոնի վրա հայոց պատմության և մշակույթի խնդիրների քննարկմանը:

Մ.-Ա. Շևալիեի խնդիրն է եղել՝ ուսումնասիրել պապական վավերագրերի ռեգեստներն ու ռազմական օրգենների փաստաթղթերի ժողովածուները, հետազոտել դրանք Կիլիկյան Հայաստանի պատմության ու փաստաթղթագիտության տեսանկյունից ու կազմել վավերագրատական ցանկեր:

Գ. Դանիելյանի հիմնական խնդիրն է եղել բազմակողմանի վերլուծության ենթարկել Ռոմի սելջուկյան սուլթանության, մոնղոլական Իլխանության և Մամլուքյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի քաղաքական-դիվանագիտական հարաբերություններին առնչակից վավերագրատական նյութը, ուսումնասիրել հայկական և հիշյալ պետությունների բարձրագույն քաղաքական իշխանությունների պաշտոնական գրագրության և նամակագրության, ինչպես նաև դեսպանընկալման և դիվանագիտական նվիրաբերման արարողակարգը: ԺԲ-ԺԵ դարերի արաբալեզու պատմագրական գրականությունն անգնահատելի կարևորության հարուստ և ցայսօր հայագիտությանը մեծավ մասամբ անհայտ նյութ է պարունակում Մերձավոր Արևելքի մուսուլմանական տերությունների և շրջակա պետությունների միջև պաշտոնական դիվանագիտական գրագրության արարողակարգային սկզբունքների, բանաձևային համակարգերի, եզրութաբանության, տիտղոսների և պատվանունների, անգամ այս կամ այն օտար տիրակալի (այդ թվում՝ հայոց արքայի) հետ նամակագրության մեջ օգտագործվող թղթի տեսակների վերաբերյալ: Հատկանշական է, որ Եգիպտոսում և Ասորիքում Այյուբյանների և հատկապես Մամլուքների իշխանության դարաշրջանում իսլամական մատենագրության մեջ՝ բացի պատմագրության, ժամանակագրության և տարեգրության գրա-

կան տեսակներից, մեծ զարգացում է ապրել նաև մի նոր գրական ժանր՝ պաշտոնական գրականության և քարտուղարության ձեռնարկների ժանրը (al-inšā): Գ. Դանիելյանի ուշադրության կենտրոնում են եղել քարտուղարության հիշյալ ձեռնարկների ժանրի երկերը, որոնց հայտնած տեսական բնույթի տեղեկությունները համեմատվել են հայ-մամլուքյան դիվանագիտական նամակագրության վերաբերյալ ԺԳ-ԺԵ դարերի արաբալեզու պատմական գրականության մեջ պահպանված բացառիկ վավերագրերի ընդօրինակությունների հետ: Հատկանշական է, որ ԺԳ-ԺԴ դարերի եվրոպական լեզուներով (լատիներեն, հին ֆրանսերեն) որոշ աղբյուրներում մեզ են հասել հայ-մամլուքյան մի քանի վավերագրերի թարգմանություններ, որոնցից երկուսի արաբերեն բնագրերը չեն պահպանվել:

Մեզ է հասել նաև ԺԴ դարի պարսկալեզու մի կարևոր սկզբնաղբյուր, որը պատկերացում է տալիս Իրանի մոնղոլ իլխանների և Կիլիկիո հայոց բարձրագույն քաղաքական և հոգևոր իշխանությունների նամակագրության մասին: Հայկական և որոշ օտարալեզու աղբյուրներում բազմաթիվ վկայություններ և տեղեկություններ կան մոնղոլական իշխանություններին հայոց արքունիքի հղած դիվանագիտական ընձանների, դրանց գործադրմամբ քաղաքական բնույթի հարցեր լուծելու, պատասխան նվերների և դրանց մատուցման արարողակարգի վերաբերյալ:

Ի տարբերություն Մամլուքյան սուլթանության՝ Ռումի սելջուկյան սուլթանության և հարակից երկրների տիրակալների դիվանագիտական նամակագրության, Իկոնիայի դիվանատների աշխատանքի, գրագրության լեզվի, դեսպանընկալության և դեսպանագնացության արարողակարգի մասին հետազոտությունները շատ չեն: Այնուամենայնիվ, այս առնչությամբ շատ արժեքավոր տեղեկություններ կան ինչպես ժամանակի հայալեզու, այնպես էլ Ռումի սուլթանության պարսկալեզու պատմագրական գրականության մեջ: Առկա են նաև ուշագրավ վկայություններ երկու պետությունների տիրակալների միջև դիվանագիտական ընձանների փոխանակության մասին:

Այսպիսով, ներկա կոլեկտիվ հետազոտության մեջ շոշափված խնդիրների լուծումը առավել քան արդիական է արդի հայագիտության համար, քանզի մեզանում դեռևս փորձ չի կատարվել զուգահեռաբար ուսումնասիրել տարբեր նոտարատներից դուրս եկած վավերագրերը և համադրման միջոցով պարզել յուրաքանչյուրի կողմից փաստաթղթերի կազմման սկզբունքներն ու առանձնահատկությունները: Հայկական վավերագիտության հետազոտման համար խիստ կարևոր կլինի ընդհանրապես մեզ հասած հայերեն, հունարեն, լատիներեն, հին ֆրանսերեն, ասորերեն, արաբերեն, պարսկերեն, վրացերեն և այլ լեզուներով վավերագրերի, դրանց ընդօրինակությունների, առանձին

Վաստաթղթերի մասին պահպանված պատմական վկայությունների մեկտեղումն ու քննությունը: Սա պարարտ հող կդառնա բոլոր պահպանված բնագրերի գիտական հետազոտության և հրապարակման համար և թարմություն կբերի հայոց միջնադարյան պատմության արդի հետազոտությունների ասպարեզում:

Ա.Ա. Բոգոյան, Գ.Գ. Դանիելյան

ԳԼՈՒԽ Ա

ՅՈՐ

Ա.Ա. ԲՈԶՈՅԱՆ

ՀՀ ԳԱՍ արևելագիտության ինստիտուտ

**ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՅՈՅ

ՄԱՍ Ա

ԿԻՒԽԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ

Ա 1. Կիլիկյան Հայաստանի պետական և առևտրատնտեսական վավերագրերի հետազոտման խնդիրները.

Գրեթե երեք հարյուրամյակ (1080–1375)՝ սկզբում իբրև ինքնանկախ կամ ստորակա իշխանությունների դեռևս չձևավորված միություն, իսկ հետագայում՝ որպես Ռուբինյան իշխանական տան շուրջ ձևավորված միացյալ թագավորություն, Կիլիկյան Հայաստանը պահպանեց սեփական պետականությունը՝ հարևան բազմաբղետ քաղաքական միավորների միջավայրում: Մեզ հետաքրքրող երկրամասը, թեպետ աշխարհագրական իր դիրքով գտնվում էր Մեծ Հայքի տարածքից դուրս, սակայն իր արմատներով և տարածաշրջանում հաստատված հայկական իշխանությունների վարած քաղաքականությամբ սերտորեն կապված էր բուն Հայաստանի քաղաքական և հոգևոր կենտրոնների հետ, իսկ թագավորության շրջանում հույսեր էր փայփայում՝ վերականգնելու համահայկական պետականությունը: Կիլիկիայի թագավորներն իրենց դրամների գրառումների և վավերագրերի թղթառաջք բանաձևերում իրենց անվանում էին «Հայոց» կամ «Ամենայն Հայոց» թագավոր, նաև՝ *rex Armenorum*: Ինչպես մերձեփրատյան, այնպես էլ Տավրոսի և Միջերկրական ծովի միջև գտնվող իշխանություններն իրենց պետական և հոգևոր նկրտումներով ձգտում էին շարունակել ազգային պետականության լավագույն դրսևորումները՝ յուրացնելով հարևան երկրների առանձնահատուկ պատմափորձը¹: ԺԲ դարի սկզբից նրանց մեջ առանձնացան Հեթումյան և Ռուբինյան

¹ Տե՛ս **G. Dédéyan**, *Les Arméniens entre Grecs, Musulmans et Croises. Étude sur les pouvoirs Arméniens dans le Proch-Orient Méditerranéen (1068–1150)*, vol. 1–2 (Lisbonne, 2003): Տե՛ս նաև նաև այս գրքի մասին մեր հրատարակած գրախոսությունը՝ **Ա. Բողոյան**, «G. Dédéyan, *Les Arméniens entre Grecs, Musulmans et Croises. Étude sur les pouvoirs Arméniens dans le Proch-Orient Méditerranéen (1068–1150)*, vol. 1–2, Lisbonne, 2003», *ՊԲՀ* 2 (2005), էջ 296–302:

իշխանական տները, որոնք, միմյանց և հարևանների դեմ պայքարելով, հետզհետե իրենց ձեռքը վերցրեցին երկրամասի կառավարման լծակները: Միևնույն ժամանակ, գտնվելով աշխարհաքաղաքական նոր միջավայրում, այդ երկրամասն ամենասերտ քաղաքական, մշակութային և առևտրատնտեսական փոխհարաբերություններն էր հաստատել հարևան Բյուզանդիայի, խաչակրաց պետությունների և անդրծովյան եվրոպական տերությունների, Միջերկրական ծովի առևտրական նավահանգիստների և իտալական քաղաք-պետությունների հետ: Գրեթե ողջ ԺԲ դարում Կիլիկիայի և մերձեփրատյան հայկական իշխանությունները ստիպված էին հանդես գալ իբրև Բյուզանդական կայսրության ստորականներ՝ հաճախ պայմանագրեր կնքելով և համաձայնության գալով տարածաշրջանի խաչակրաց և մուսուլմանական պետությունների հետ: Իշխանապետության դարաշրջանում (1080–1198) Կիլիկյան Հայաստանի քաղաքական և տնտեսական գործունեության մասին որևէ միջպետական վավերագրի բնօրինակ հայագիտությանը հայտնի չէ: Պատճեններով հայտնի են մի շարք վավերագրեր, որոնք փոխանակված են Հռոմ-կղզյի կաթողիկոսության ու Բյուզանդական կայսրության, ինչպես նաև Հռոմի պապության միջև: Երկրամասի Ռուբինյան իշխանները հիշատակվում են միայն 1108 թ. կնքված Դեաբոլի հաշտության պայմանագրում, որը կնքվել էր Ալեքս Ա Կոմնենոսի և Սիցիլիայի նորման թագավոր Ռոբերտ Գվիսկարի որդի Բոհեմունդ Անտիոքացու միջև: Կիլիկիայի հայկական իշխանությունն Արևմուտքում գրված վավերագրերում հիմնականում հայտնվում է միայն ԺԲ դարի 90-ական թվականներից, երբ Լևոն Ռուբինյանը քայլեր ձեռնարկեց իր երկիրը Արևմտյան (Սրբազան Գերմանական) և Արևելյան (Բյուզանդական) Հռոմեական կայսրությունների կողմից ճանաչել տալու համար, և ի վերջո՝ 1198 թ., թագեր ստացավ այս երկու գերտերություններից:

Միայն Միրիոկեֆալոնի ճակատամարտից հետո (1176 թ.) Ռուբինյանները կարողացան հաստատել իրենց ինքնանկախ իշխանապետությունը և, տարածաշրջանի մյուս քաղաքական ուժերին ստիպելով ճանաչել սեփական պետության գերակայությունը, սկսեցին մտածել *de jure* քաղաքական ու տնտեսական անկախության և միջազգային ճանաչման մասին: ԺԲ դարի վերջից Ռուբինյան իշխանապետությունը սերտ կապեր հաստատեց Շտաուֆերների գերմանական կայսերական ընտանիքի հետ՝ 1198 թ. սկզբին արժանանալով միջազգային ճանաչման², իսկ ԺԳ դարի սկզբից առևտրատնտեսական պայմանագրեր սկսեց ստորագրել Միջերկրական ծովի քաղաք պետությունների՝

² P. Halfter, “La couronne d’Arménie: un document récemment découvert illustrant les relations entre l’Empereur Frédéric II et le roi Hétoum I^{er}”, *La Méditerranée des Arméniens XI^e – XV^e siècle*, sous la direction de Cl. Moutafian (Paris: Geuthner, 2014), p. 104.

Վենետիկի և Ջենովայի հետ: Կիլիկյան Հայաստանը գործուն քաղաքական, մշակութային ու առևտրատնտեսական փոխհարաբերություններ է հաստատում նաև հարևան ինչպես մահմեդական, այնպես էլ մյուս՝ ոչ քրիստոնյա ժողովուրդների պետական և կրոնական կազմակերպությունների հետ, նրանցից շատերի հետ կնքում քաղաքական և առևտրական պայմանագրեր, երբեմն էլ՝ համատեղ դրամ հատում, ինչպես Իկոնիայի սելջուկյան սուլթանության հետ³: Տարբեր ժողովուրդների, պետական և եկեղեցական կառույցների հետ Կիլիկիայի հայկական պետության փոխհարաբերությունների համակողմանի ուսումնասիրությունը ժամանակակից հայագիտության կարևորագույն խնդիրներից մեկն է դարձել: Այս տեսանկյունից վավերագրերի պարունակած նյութերը անփոխարինելի սկզբնաղբյուրի արժեք ունեն:

Կիլիկյան պետության և տարածաշրջանի տնտեսական կյանքում կարևոր դեր էին կատարում հայկական դրամների տարբեր տեսակները, որոնց շրջանառությանն անդրադարձել են դրամագետները և հատկապես Զ. Պտուկյանը⁴: Երկրամասի դրամահատական գործունեության մեջ հայկական պետության ունեցած դերը մեծ հետաքրքրության է արժանացել ԺԳ-ԺԴ դարերի դրամագիտական նյութերով հետաքրքրվող և Եվրոպայի տնտեսական պատմությամբ զբաղվող մասնագետների կողմից⁵: Պահպանված առևտրատնտեսական արտոնագրերի և նոտարական արձանագրությունների հիմնական մասը վերաբերում են զանազան դրամական միավորների փոխանակման չափերին և ապրանքների գներին, որոնցով էլ կարևորվում է դրամագիտական նոր հետազոտությունների նշանակությունը Կիլիկիայի հայկական պետության տնտեսական գործունեության տարբեր ոլորտները և հատկապես առևտրատնտեսական վավերագրերը հետազոտելու համար: Պակաս հետաքրքիր չէ նաև մի շարք խորհրդանիշերի՝ օրինակ. առյուծների օգտագործումը հայկական դրամների վրա⁶:

³ Կիլիկյան Հայաստանը ԺԳ դարի սկզբին միացյալ՝ երկլեզու դրամ էր հատում Իկոնիայի սուլթանության հետ (P. Bedoukian, “The Bilingual Coins of Hetoum I (1226–1270), King of Cilician Armenia”, *MN (ANS)* 7 (1957), pp. 219–230): Մեզ են հասել նաև Մոնղոլական տերության (տե՛ս Գ.Ա. Գալստյան, Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից, Լենինական 1945) և Եգիպտոսի Մամլուքյան սուլթանության հետ (տե՛ս V. Langlois, *Le Trésor*, p. 213–235) կնքած պայմանագրերի ընդօրինակություններն ու պատճենները, որոնց մեջ կարևոր տեղ են զբաղեցնում տնտեսական պայմանավորվածություններին վերաբերող կետերը:

⁴ P.Z. Bedoukian, *Coinage of Cilician Armenia* (New York: The American Numismatic Society, 1962).

⁵ Levon I. Ein armenischer König im staufischen Outremer, hrsg. von Chr. Philipsen, Th. Bauer-Friedrich und U. Dräger (Schriften für das Kunstmuseum Moritzburg Halle (Saale), Bd. 19) (2019).

⁶ Միջնադարյան Եվրոպայում շրջանառության մեջ եղած այս և այլ սիմվոլների մասին տե՛ս M. Пастуро, *Символическая история*, с. 48.

Միջնադարյան միջազգային առևտրի զարգացման խնդիրների շուրջ գրականությունը⁷ և բնագավառի զարգացման հիմնական միտումները ուսական միջավայրում ժամանակին ներկայացվել են Ա. Ջիվելեգոփի հանրամատչելի աշխատանքներում: Դրանց ենք պարտական նաև Ի դարի սկզբում միջնադարյան եվրոպական քաղաքի զարգացման խնդիրների վերհանման և զարգացման որոշակի միտումների հետազոտական հարցադրումները շրջանառության մեջ դնելու համար⁸:

Սարգիկայի և Լաոդիկիայի Դ դարի ժողովները արգելում էին եպիսկոպոսական նստավայր հիմնել գյուղերում⁹, ինչն էլ շորս դար անց հաստատում է Կառլոս Մեծը¹⁰: Եվրոպայում եպիսկոպոսը դառնում էր քաղաքի և նրա գավառի հիմնական պաշտպանը, ինչն էլ հիմք է տալիս ասել, որ արագ զարգանում էին հենց եպիսկոպոսական քաղաքները¹¹:

Իսկ Կիրիկիայում և բուն Հայաստանում նկատելի է հակառակ երևույթը: Եպիսկոպոսական աթոռների ընտրյալները նախընտրում էին հաստատվել քաղաքին մոտ գտնվող վանական հաստատություններում: Նույն երևույթը միանշանակ կերպով կրկնվում է, ինչպես մենք տեսնում ենք, Մերձավոր Արևելքի թե՛ հակոբիկ, և թե՛ նեստորական եկեղեցիներում: Հատկանշական է, որ երկար ժամանակ հակոբիկ ասորիների հոգևոր-եկեղեցական կենտրոնը գտնվում էր Մելիտենեից հարավ բարձրացող Նեմրութ լեռան ստորոտում կառուցված Բար Սառումա վանքում¹²: Հավանաբար արաբական, իսկ հետագայում նաև սելջուկյան ռազմարշավները և ստեղծված պետական կառուցվածքները դուրս էին մղում եպիսկոպոսական աթոռները քաղաքներից և ստիպում հաստատվել նշանավոր վանական համալիրներում, որոնք արտաքին աշխարհից պատսպարված էին պարիսպներով: Այդպիսի դիրք ուներ, օրինակ,

⁷ A. Beer, *Geschichte des Welthandels im neunzehnten Jahrhundert*, t. I (Wien: 1864); W. Heyd, *Histoire du commerce du Levant au Moyen-Âge*, t. I (Leipzig: 1885); A.К. Дживелегов, *Торговля на западе в средние века* (С.-Пб., 1904), с. 221–223; Այս խնդիրներին վերաբերող գրականությանն անդրադարձել է P. Brezzi, *Società feudale et vita cittadina dal IX al XII secolo* (Roma: 1972: Տե՛ս նաև F. Opll, *Stadt und Reich im 12. Jahrhundert (1125–1190)* (Wien-Köln-Graz: Hermann Böhlau nachf, 1986), S. 574–614:

⁸ A.К. Дживелегов, *Средневековые города в Западной Европе* (С.-Пб., 1902): Միջնադարյան եվրոպայում այս խնդիրների հետազոտության մասին տե՛ս նաև F. Opll, *Stadt und im 12. Jahrhundert (1125–1190) աշխատությունը*:

⁹ G. Barone-Adesi, “L’Urbanizzazione episcopale nella legislazione tardoimperiale”, *L’évêque dans la cite du IVe au Ve siècle. Image et autorité. Actes de la table ronde de Rome (1^{er} et 2 décembre 1995)*, sous la direction de É. Rebillard et Cl. Sotinel (Rome: École Française de Rome, 1998), p. 55–57.

¹⁰ É. Delaruelle, “Charlemagne et l’Église”, *RHÉF*, t. 39, № 133 (1953), p. 181–184.

¹¹ A.К. Дживелегов, *Средневековые города*, с. 6–8:

¹² Հակոբիկ ասորական եկեղեցում Բար Սառումա վանքի խաղացած դերի մասին տե՛ս E. Honigmann, *Le couvent de Barsauma et le patriarcat Jacobite d’Antioch et de Syrie* (Louvain: 1954), p. 52–76:

Հայոց կաթողիկոսի նստավայր Հռոմկլան: Եպիսկոպոսական աթոռների այս կարգավիճակը շարունակվեց նաև Կիլիկիայի Հայոց թագավորության դարաշրջանում, թեպետ որոշակի միտում էր նկատվում՝ կաթողիկոսական աթոռը երկրի մայրաքաղաք (Սիս) տեղափոխելու, իսկ որոշ եպիսկոպոսական աթոռներ էլ փորձում էին ամրապնդվել Տարսոնում, Ադանայում և այլուր (օրինակ՝ Տփղիսում):

ԺԲ դարում միջնադարյան եվրոպական քաղաքների ինքնավարացման կարևոր գործիքներից մեկը դարձան համալսարանները, որոնց ուղղորդում էին հոգևոր-եկեղեցական կառույցները (վանքեր, եպիսկոպոսական աթոռներ): Այդ հաստատությունները կարևոր դեր ստանձնեցին նաև նոտարական գործի զարգացման բնագավառում¹³: Կիլիկյան Հայաստանում և Մեծ Հայքում ևս այս դարաշրջանում ստեղծվեցին բարձր մակարդակի հասած ուսումնական կենտրոններ, որոնք ևս տեղակայված էին վանական համալիրներում: Դրանց մեջ կարևորվում են Կարմիր վանքի, Սկևռայի, Դրազարկի, Հռոմկլայի, Անիի, Հաղպատի, Նոր Գետիկի, Գլաձորի և մյուս դպրոցները:

Քաղաքում հանգրվանած եպիսկոպոսական աթոռներ գոյություն ունեին նաև Հայաստանում: Այս միտման որոշ դրսևորումներ առկա են նաև խաչակրաց դարաշրջանի Մերձավոր Արևելքում: Մոնղոլական տիրապետության տակ գտնվող Հայաստանում քաղաքային ինքնուրույնության ձգտող եպիսկոպոսական քաղաքի օրինակ էր Երզնկան: ԺԳ դարի լայնածավալ մատենագրական գործունեության մեջ առանձնանում է «Երզնկայի եղբայրության» կանոնադրությունը¹⁴, որի օգտագործման օրինակներ ենք տեսնում նաև ավելի ուշ ժամանակաշրջանի Ղրիմում և Լեհաստանում: Կարելի է այս կանոնադրությունը համեմատել Եվրոպայում ժԲ–ԺԳ դդ. լայն տարածում ստացած գիլդիանների կամ արհեստավորների համքարական կանոնադրությունների հետ: Մյուս օրինակը Հայաստանում, հավանաբար Անին էր, որը երկար ժամանակ հայկական Բագրատունիների իշխանության հոգևոր և կրոնական կենտրոնը լինելուց հետո, գրեթե երկու դար ձեռքից ձեռք էր անցնում՝ հիմնականում ճանաչելով քրիստոնյա վրացական թագավորության գերակայությունը: Վրացական թագավորության հզորացման հետ Անին հետզհետե կորցրեց իր վաղեմի նշանակությունը: Զաքարյանների օրոք առաջնության

¹³ A History of the University in Europe, vol. 1: Universities in the Middle Ages, ed. by H. de Ridder-Symoens (Cambridge: Cambridge University Press, 1992).

¹⁴ Բնագրի հայտնաբերողն ու հրատարակիչը, խնդրին վերաբերող առաջին հետազոտության հեղինակը Լ. Խաչիկյանն է: Տե՛ս Լ. Խաչիկյան, 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «Եղբայրությունը», ՏՀԳ 12 (1951), էջ 73–84, ինչպես նաև **Նույնի՝** Աշխատություններ, հտ. Ա (Երևան, Նաիրի հրատ., 2012), էջ 264–301:

դրոշակակիրը դարձավ Հաղթատի վանական կենտրոնը, որի առաջնորդը համարվում էր Տփղիսի եպիսկոպոս:

Կիլիկիա երկրամասի քաղաքական և տնտեսական կյանքում հնուց ի վեր վիթխարի նշանակություն էր ձեռք բերել ծովը¹⁵, սակայն մինչև Հայոց պետության այսօրվա իմաստով միջազգային ճանաչումը, այսինքն՝ 1198 թ. Բյուզանդական կայսրության և Արևմտահռոմեական-գերմանական կայսրությունների ուղարկած թագերով Լևոն Ա Ռուբինյանի թագադրումը¹⁶, կիլիկյան ծովափի իսկական տերը միջազգային իրավունքի տեսանկյունից մինչև ԺԲ դարի վերջը դիտվում էր Բյուզանդական կայսրությունը, որից էլ Վենետիկի, Ջենովայի և մյուս միջերկրածովյան պետություններն արտոնություններ էին կորցնում Փոքր Ասիայի և Հյուսիսային Ասորիքի ծովափերում նավագնացության և առևտրական գործարքների իրականացման համար¹⁷: Պետք է նկատի ունենալ, որ ԺԱ – ԺԲ դարերի ընթացքում կնքված պայմանագրերում, չնայած երկրամասում հայկական իշխանությունների գոյությանը, ինչպես Կիլիկիայի, այնպես էլ Հյուսիսային Ասորիքի նավահանգստային քաղաքները համարվում էին Բյուզանդական կայսրության սեփականությունը¹⁸: Այդ մասին են

¹⁵ Դեռևս հելլենիզմի դարաշրջանում հայտնի էին կիլիկյան ծովահենները: Հարցի ընդհանուր գծերով շարադրանքը տե՛ս **Cl. Mutafian**, *La Cilicie au carrefour des empires*, t. I (Paris: Les Belles Lettres, 1988), p. 217–228: Բյուզանդական կայսրության ծովային քաղաքականության մեջ ծովի դերի մասին տե՛ս **H. Ahrweiler**, *Byzance et la mer. La marine de guerre la politique et les institutions maritimes de Byzance aux XII^e–XV^e siècles* (Paris, 1966): Զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում Միջերկրական ծովի դերի մասին տե՛ս **M. Balard**, *La Méditerranée médiévale: Espaces, itinéraires, comptoirs* (Paris: Picard, 2006), p. 75–95:

¹⁶ Այդ մասին տե՛ս **Fr. Hild & H. Hellenkemper**, *Kilikien und Isaurien* (Tabula Imperii Byzantini, Bd. 5), T. 1 (Wien: 1990), S. 76: Վերջին տարիներին նոր փաստեր են ի հայտ գալիս, որոնցով Լևոն Ռուբինյանի թագադրումը թվագրվում է 1199 թ.: Տե՛ս *Das Lemberger Evangeliar. Eine herausgegeben von G. Prinzing und A. Schmidt, mit beiträgen von A. von Euw, Chr. Hannick, M.K. Krikorian, Annette Lang-Edwards, G. Prinzing, A. Schmidt, Chr. Weise* (Wiesbaden: Dr. Ludwig Reichert Verlag, 1997), S. 20, n. 3: Հմմտ. այդ գրքի գրախոսությունը, **Վ.Հ. Ղազարյան, Ա.Ա. Բոզոյան**, «Էմբերգի Ավետարանը. ԺԲ դարի վերագտնված մի նկարագրող հայերեն ձեռագիր, հրատարակված Գյունտեր Պրինցինգի և Անգրեա Շմիդտի կողմից», ՊԲՀ 1 (1999), էջ 360–366:

¹⁷ Այդ մասին տե՛ս **Fr. Hild & H. Hellenkemper**, *Kilikien und Isaurien*, S. 126: **M. Balard**, *La Romanie génoise (XIIIe–début du XVe siècle)*, vol. 1–2 (Genova-Roma: 1978); **M. Balard**, *La Méditerranée*, p. 98–112:

¹⁸ Այս դրույթը հաստատում է նաև Բոհեմունդ Անտիոքացու և Բյուզանդիայի կայսր Ալեքս Ա Կոմնենոսի միջև կնքված Դեաբոլի հաշտության պայմանագիրը: Այդ մասին տե՛ս **Ա. Բոզոյան**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30–70-ական թվականներին (Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1988) (այսուհետ՝ **Ա. Բոզոյան**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը), էջ 72–74 և հմմտ. **R.-J. Lilie**, *Byzantium and the Crusader States 1096–1204* (Oxford: Clarendon Press, 1993), p. 75: Նմանատիպ խնդիր Բյուզանդիայի արտաքին քաղաքականության մեջ չի նկատում Վ. Ստեպանենկոն: Ըստ նրա՝ ինչպիսիք Արևելքի պետություններից Բյուզանդական կայսրությունը պահանջում էր միայն վասալական հնազանդություն: Այդ փոխհարաբերություններում ծովի դերին նա ընդհանրապես չի անդրադարձել: Տե՛ս **B.И.**

վկայում Կոմնենոս կայսրերի կողմից Վենետիկին¹⁹ և Ջենովային²⁰ տրված առևտրական արտոնագրերը և ԺԲ դարասկզբին Սիցիլիայի նորմանների առաջնորդ Բոհեմունդ Տարենտացու և կայսր Ալեքս Ա-ի միջև կնքած և երկրամասի քաղաքական կարգավիճակը շուրջ մեկ հարյուրամյակ կարգավորած Դեաբոլյան հաշտության պայմանագիրը²¹:

Խաչակրաց պետությունների ստեղծումից հետո Միջերկրական ծովի նավագնացային քաղաքների հետաքրքրությունը մեծացավ Կիլիկյան ծովափերի և հատկապես Իսոսի ծովածոցի նկատմամբ, թեպետ, ինչպես երևում է, Կիլիկիայի իշխանությունները դեռևս մեծ հետաքրքրություն չէին ցուցաբերում ծովային գործերի նկատմամբ: Այդ բնագավառը գրեթե ամբողջովին Բյուզանդական կայսրության հովանավորության ներքո էր: Այդ մասին է վկայում ԺԲ դարի Բ կեսին Պիզայում գծված պորտուլանը, ուր բացի Տարսոնից՝ Կիլիկյան ծովափում գործող որևէ այլ նավահանգիստ չի հիշատակվում²²:

Կիլիկյան նավահանգիստների դերը տարածաշրջանում սկսեց մեծանալ, երբ երկրամասում հաստատված հայկական թագավորությունը ճանաչվեց միջազգային հանրության՝ հատկապես Արևմտահռոմեական Սրբազան կայսրության կողմից իբրև գործընկեր: Այդ պահից ի վեր՝ Կիլիկիայի իշխողները սկսեցին մեծ թափով կառուցել ծովափերը և նոր ժամանակների կարիքներին

Степаненко, *Византия в международных отношениях на Ближнем Востоке (1071–1176)* (Свердловск: 1988), с. 43–72:

¹⁹ Այդ պայմանագրերում հիշատակվում են Կիլիկյան քաղաքներ Մամիստրան, Ադանան, Տարսոնը (1082 թ. մայիս, 1084 թ., 1126 թ. օգոստոս, 1147 թ. հոկտեմբեր, 1187 թ. փետրվար, 1198 թ. նոյեմբեր): Տե՛ս **Fr. Dölger**, *Regesten der Kaiserurkunden des Oströmischen Reiches von 565-1453* (հետալսու՝ **Fr. Dölger**, *RKOR*), 2. Teil: *Regesten von 1025–1204* (München-Berlin: 1925), S. 27, Nr. 1081, S. 31, Nr. 1109 և հմմտ. **A. Schaub**, *Handelsgeschichte der Römmanischen Völker des Mittelmeergebiets bis zum Ende der Kreuzzüge* (München-Berlin: 1906), S. 20, 219, S. 59, Nr. 1304, S. 67, Nr. 1365, S. 92, Nr. 1576, S. 104, Nr. 1647:

²⁰ Շեշտվում է, որ նրանք շարունակելու են օգտվել Ասորիքում ունեցած արտոնություններից (1169 թ. հոկտեմբեր, 1170 թ. մայիս): Տե՛ս **Fr. Dölger**, *RKOR*, 2. Teil, S. 82, Nr. 1488, S. 83, Nr. 1497 և հմմտ. **A. Schaub**, *Handelsgeschichte*, S. 219:

²¹ **Fr. Dölger**, *RKOR*, 2. Teil, S. 51, Nr. 1243: Տե՛ս նաև **Ա. Բողոյան**, *Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը*, էջ 73–75: Այդ պայմանագրի մասին տե՛ս նաև **R.-J. Lilie**, *Byzantium and the Crusader States. 1096–1204* (Oxford: Clarendon Press, 1993), p. 75–82; **R.-L. Lilie**, *Handel und Politik zwischen dem byzantinischen Reich und den italienischen Kommunen Venedig, Pisa und Genua in der Epoche der Komnenen und Angeleri (1081–1204)* (Amsterdam: 1984), S. 50, 63:

²² **P.G. Dalché**, *Carte marine et portulan au XIIe siècle. Le Liber de existencia riveriarum et forma maris nostri Mediterranei (Pise, circa 1200)* (Roma: 1995), p. 131.

հարմարեցնել Այսար, Ալեքսանդրեթը, Կոռիկոսը, Լամոսը և մյուս նավահանգստային քաղաքներն ու հանգրվան կայանները²³: Միայն հայկական թագավորության միջազգային ճանաչումից հետո Կիլիկիան սկսեց ինքնուրույն տնօրինել սեփական նավահանգիստների ու ծովափի եկամուտները, երկրի պաշտպանության ու տնտեսական բարգավաճման, հոգևոր-մշակութային ու առևտրատնտեսական կապերի համար սկսեց օգտագործել նավահանգիստները՝ ամենայն հավանականությամբ փորձ անելով ստեղծել ոչ միայն առևտրական, այլ նաև ռազմական տորմիդ²⁴:

ԺԳ դարի ընթացքում մշակութային և առևտրատնտեսական սերտ փոխհարաբերություններ հաստատվեցին եվրոպական տերությունների և մի շարք քաղաք-պետությունների հետ, քանի որ Կիլիկյան Հայաստանի տնտեսական կյանքի համար իսկական պատուհան բացվեց դեպի Միջերկրական ծով և Արևմուտք: Իսկ դա հնարավոր դարձավ միայն ԺԲ դարից հետո, երբ Արևելյան Փոքր Ասիայում և Հյուսիսային Ասորիքում թուլացան Բյուզանդական կայսրության դիրքերը, և Կիլիկյան Հայաստանը միջազգային հանրության կողմից ճանաչվեց Իսոսի կամ Հայոց ծոցի իսկական տերը, որը ԺԳ դարում արդեն սկսում է և՛ հայկական, և՛ օտար սկզբնաղբյուրներում անվանվել նաև Հայոց ծով (*Mare Armeniae*, *Mer d’Hermenie*, *Marino dell’Armenia*)²⁵: Միջազգային նա-

²³ Դրա պերճախոս վկաներն են նավահանգստային քաղաքներում հայտնաբերված ԺԳ-ԺԴ դարերի շինարարական հսկայածավալ աշխատանքների հնագիտական հետքերը: Տե՛ս R. Edwards, *The Fortifications of Armenian Cilicia*, p. 77–83, 161–167; Fr. Hild & H. Hellenkemper, *Kilikien und Isaurien*, S. 163, 170–172, 318–319:

²⁴ Կիլիկյան Հայաստանում նավատորմի գոյության մասին են խոսում մի շարք վկայություններ, որոնք դեռևս ի մի չեն հավաքված և հարկն եղածի պես չեն պարզաբանված: Այս հարցին նվիրված միակ հոդվածը մեզանում պատկանում է Արտաշես Տիրացյանին, որը գիտական գրականության մեջ արժարժված փաստերի համադրությամբ ցույց է տալիս Կիլիկյան Հայաստանում սեփական նավատորմի գոյության փաստը: Տե՛ս Ա. Տիրացյան, «Կիլիկիայի հայկական պետության սեփական նավատորմի գոյության փաստը: Տե՛ս Ա. Տիրացյան, «Կիլիկիայի հայկական պետության սեփական նավատորմի գոյության փաստը», «Էջմիածին» Զ (1957), էջ 43–44: Վիլբրանդ Օլբենբուրգցի պատմում է դեռևս 1212 թ. Կոռիկոսի նավահանգստի կառուցապատման շինարարական աշխատանքների մասին: Տե՛ս P. Halfter, “Die Beschreibung des Armenischen Königreiches Kilikien durch den hildesheimer Domherren Wilbrand von Oldenburg”, Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը, խմբ.՝ Պ.Մ. Մուրադյան (Երևան, 2000), S. 413: Նոտարական գրառումներում տեղեկություններ կան հայկական պետությանը պատկանող նավերի շահագործման մասին: Տե՛ս Զ. Գևորգյան, Կիլիկիայի հայկական պետությունը, էջ 40–42:

²⁵ Ըստ Դ. Ալիշանի Իսոսի ծոցն *Armenicus Sinus* է անվանել Դ դարի հռոմեական պատմիչ Ամիանոս Մարկելիանոսը, որը Կիլիկիային հայերի տիրանալու ժամանակաշրջանը հետ է տանում ավելի քան յոթ հարյուրամյակով: Այս մատենագրական տեղեկությունը, ցավոք, դեռևս չի հաստատվում Ամիանոսի բնագրով. չենք կռահում, թե ինչ է նկատի ունեցել միսիթարյան նշա-

վագնացություն, ծովային առևտրի և իրավունքի հետազոտության խնդիրները պետք է լինեն հայագիտական հետազոտությունների տեսադաշտում, քանի որ դրանք մինչև ԺԸ դարի վերջը տարբեր երկրներում հաստատված հայկական առևտրական դասի գործունեության հետազոտման բանալիներից են: Հայագիտությունն այսօր ունի նավագնացության պատմության մեջ և ծովային իրավունքով զբաղվող միջնադարագետների պատրաստման կարիք:

Վենետիկի հանրապետության արխիվներում պահպանվող Բյուզանդիայի և Արևելքի հետ առնչություն ունեցող միջպետական վավերագրերի հիմնական զանգվածը դեռևս ԺԹ դարում հրատարակել են Տաֆելը և Թոմասը²⁶: Զենովայի և մյուս իտալական քաղաքների առտրատնտեսական հարաբերությունների միջպետական վավերագրերը դեռևս լիովին հրատարակված չեն, թեպետ արդեն երկու դար է շրջանառության մեջ են դրվում եվրոպական մի շարք արխիվների վավերագրական ընդարձակ նկարագրությունները և խնդրին վերաբերող բազմաթիվ վավերագրեր են հրատարակվում: Աստիճանաբար սեղանին են դրվում այլևայլ բնագրերի, առանձին կամ խումբ-խումբ վավերագրերի հրատարակված բազմաբնույթ ժողովածուներ²⁷ և հետազոտություններ, շրջանառության մեջ են դրվում նոր մոտեցումներ²⁸:

Ա. 2. Վ. Լանգլուայի ներդրումը.

Վիկտոր Լանգլուայից հետո որևէ մեկը փորձ չի կատարել վերստին ի մի բերել Կիրիկյան Հայաստանի պատմության մասին պատմող բոլոր քաղաքական և տնտեսական վավերագրերը, և մինչ օրս գոյություն չունի այդ վավերագրերի գիտական նկարագրության համապարփակ ցանկ:

նավոր վանականը: Ղ. Ալիշանն անդրադառնում է կիրիկյան ծովածոցին տրվող այլալեզու գրքերի բոլոր անվանումներին. տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան (Համագրութիւն Հայկական Կիրիկիո եւ Լեւոն Մեծագործ) (Վենետիկ, Ս. Ղազար, 1885), էջ 299–300, 355–356:

²⁶ *Urkunden zur älteren Handels- und Staatsgeschichte der Republik Venedig mit besonderer Beziehung auf Byzanz und die Levante. Von neunten bis zum ausgang des fünfzehnten Jahrhunderts*, hrsg. **G.L.Fr. Tafel, G.M. Thomas**, I. Teil (814–1205), II. Teil (1205–1255), III. Teil (1256–1299) (Wien: 1856–1857).

²⁷ *Տե՛ս դրանցից մի քանիսը. Codice diplomatico della Repubblica di Genova dal 968 al 119*, a cura di C. Imperiale di Sant'angelo, vol. 3 (1936–1942); **M. Ballard**, *Notai genovesi in Oltramare. Atti rogati a Cipro da Lamberto da Sambuceto (11 ottobre 1296–23 giugno 1299)* (Gênes: 1983) և այլն:

²⁸ *Տե՛ս ներքոբերյալ գիտաժողովների և ժողովածուների նյութերը. Le partage du Monde. Échange et colonisation dans la Méditerranée médiévale*, sous la direction de **M. Balard** et **A. Ducellier** (Paris: 1998); *Genova, Venezia, il levante nei secoli XII–XIV. Atti del Convegno Internazionale di Studi Genova-Venezia, 10–14 marzo 2000*, a cura di **G. Ortalli** & **D. Puncuh** (Genova: 2001); *Spazi per la memoria storica. La storia di Genova attraverso le vicende delle sedi e dei documenti dell'Archivio di Stato. Atti del convegno internazionale, Genova, 7–10 giugno 2004*, a cura di **A. Assini** e **P. Caroli** (Roma: 2009) և այլն:

Կիրիկյան պետության առաջին առևտրական պայմանագրերը Ջենովայի²⁹ և Վենետիկի³⁰ հանրապետությունների հետ կնքվել են 1201 թ.: ԺԳ–ԺԴ դդ. ընթացքում առևտրական արտոնություններ են տրվել նաև Պիզային³¹, Ֆլորենցիային³², Մոնպելիերին³³, Մարսելին³⁴, Սիցիլիային³⁵ և այլ երկրների ու քաղաք-պետություններին³⁶: Ըստ այդ պայմանագրերի՝ Կիրիկիայի արտաքին առևտուրն իր ձեռքն էր վերցրել պետությունը, իսկ արտոնագրերը ողջ երկրի տարածքում հիշատակված կողմերի հետ կնքում և հաստատում էր երկրի թա-

²⁹ Ջենովացիներն առաջինն էին, որ արտոնագիր էին ստացել Կիրիկիայի հայկական արքունիքից: Մեզ են հասել այդպիսի մի շարք պայմանագրեր, որոնցից առաջինը կնքվել է 1201 թ. մարտին, իսկ այնուհետև, վերստին թարմացվել ու վերահաստատվել է 1215, 1288 և 1289 թվականներին: Տե՛ս V. Langlois, *Le Trésor*, p. 22–23, 84–85, 105–108, 126–128, 154–161 և հմմտ. նաև Ad. Schaube, *Handelsgeschichte der römischen Völker des Mittelmeergebiets bis zum Ende der Kreuzzüge* (München-Berlin: Druck und Verlag von R. Oldenburg, 1906) [Handbuch der Mittelalterlichen und Neueren Geschichte, hrsg. G.V. Below und F. Meinecke, Abteilung III], S. 218–219: Ջենովայի քաղաքային արխիվում այդ վավերագրերը պահպանվում են հիմնական արխիվային ֆոնդում: Լևոն Ա-ի 1201 և 1215 թթ. ջենովացիներին տրված վավերագրերը հրատարակված են հիշատակված հատորում: Տե՛ս *I libri iurium della Repubblica di Genova*, vol. I/2, a cura di D. Puncuh (Genova: 1996), № 344, p. 164–166, № 346, p. 168–171:

³⁰ Վենետիկցիներին Կիրիկիայի տված արտոնագրերը վեցն են, որոնք հասել են 1201, 1245, 1271, 1307, 1321, 1333 թվականներին տրված վավերագրերի տեսքով: Տե՛ս V. Langlois, *Le Trésor*, p. 23–25, 85–86, 109–112, 143–146, 151–153, 166–169, 182–184, 193–194 և հմմտ. նաև A. Schaube, *Handelsgeschichte*, S. 219–220:

³¹ Պիզացիներին տրված արտոնագրերից պահպանվել է միայն Ռայմոնդ-Ռուբենի 1216 թ. տրված վավերագիրը, ուր նա ստորագրում է՝ որպես Անտիոքի իշխան, եւ ոչ թե որպես Հայոց թագավոր: Պիզայի՝ Կիրիկիայում ունեցած առևտրական արտոնությունների մասին պատմում է Ֆլորենտացի Բալդուչի Պեգոլոտին: Տե՛ս V. Langlois, *Le Trésor*, p. 86–87, 138–139:

³² Չնայած ֆլորենտական Բարդի և Պերուցի առևտրական ընկերությունների հետ սերտ կապերին, որոնց մասին վկայում է Բալդուչի Պեգոլոտին, մեզ է հասել միայն մեկ վավերագիր, որն էլ, ըստ վերջինիս բերած բնագրի, հրապարակել է Վ. Լանզլուան: Տե՛ս Անդ., p. 195:

³³ Մոնպելիերի առևտրականներին տրված արտոնություններից մեզ են հասել երկուսը (Անդ., p. 178–179, 185–186): Հետաքրքիր է, որ դրանք պահպանվել են միայն հայերեն լեզվով՝ հանգամանք, որը խոսում է հայերենի՝ իբրև միջազգային հանրության կողմից ընդունելի դիվանագիտական լեզվի մասին:

³⁴ Մեզ է հասել միայն մեկ վավերագիր՝ առ այն, որ Կիրիկիայի ափերին վենետիկյան նավերից վնաս է կրել մի մարսելցի վաճառական (Անդ., p. 164–165):

³⁵ Անդ., p. 186–190, հմմտ. նաև [Ղ. Ալիշան], «Լևոն Ե, և իր հրովարտակը», Բազմալեզու, 1847 (Ն. տարի, թիւ 6), էջ 92: Հետաքրքիր է նաև այն պարագան, որ այս վավերագիրը ևս հասել է հայերեն բնագրով:

³⁶ V. Langlois, *Le Trésor*, p. 25–26:

գավորը, որը կրում էր «Թագաւոր Հայոց» (*regis Armeniae*) կամ «Թագաւոր ամենայն Հայոց» (*rex omnium Hermenorum*) տիտղոսը³⁷: Սակավաթիվ պայմանագրեր են հայտնի, որոնք կարող էին սահմանափակել ինքնակալ-թագավորի իշխանությունը որևէ անհատ սենիորի (հողատիրոջ) տարածքում³⁸:

ԺԹ դարի 60-ական թթ. Վ. Լանգլուան առաջին պրպտումներն է կատարել Թուրինի, Վենետիկի, Նեապոլի և Մալթայի արխիվներում: Պարզել է, որ Թուրինում գտնվող արխիվային նյութերի մի մասը³⁹ տեղափոխվել են Ջենովայի հանրապետություն, որոնց մեջ պահպանվել է Լևոն Գ-ի ստորագրած արտոնագրի բնօրինակը և կիրիկյան արքունիքի հետ կիզուրյան հանրապետության փոխհարաբերությունների բազմաթիվ վավերագրեր: Թուրինի արքունական գրադարանում գտնվող ձեռագրերից մեկում, ուր 1789 թ. ընդօրինակվել են ջենովական հանրապետության կնքած վավերագրերի ամփոփումները, ևս գտնվում են Կիրիկյան Հայաստանին վերաբերող բազմաթիվ նյութեր⁴⁰: Ջենովայի թագավորական համալսարանի գրադարանում պահվում է ջենովական *Liber Jurium*-ի բնօրինակը և Ջենովայի Ս. Գէորգ բանկի արխիվը, որոնք ԺԹ դարի սկզբին մասնագիտական և վավերագրիտական հետազոտության էին ենթարկվում: Այստեղ պահպանված վավերագրերը նկարագրվում էին մասնագետների կողմից, կազմվում էին բազմաբնույթ ժողովածուներ⁴¹: Կիրիկյան Հայաստանի և Ջենովայի, ինչպես նաև մյուս իտալական և միջերկրածովյան պետությունների միջև ծաղկող առևտրի մասին առատ տեղեկություններ է հայտնում ԺԳ դարի ֆլորենտացի վաճառական և բանկային գործակալ Բալդուչի Պեգոլոտին Միջերկրածովյան առևտրին վերաբերող սեփական երկում⁴²: Վենետիկի հանրապետության արխիվը պահպանվում է քաղաքի հնագույն Ֆրարի վանքում, ուր ձևավորվել է երկու տարբեր հավաքածո, որոնք

³⁷ Անդ., p. 17-18:

³⁸ Օրինակ՝ 1215 թ. ջենովացիներին տրված արտոնագրում թագավորի տված արտոնությունները չեն վերաբերում միայն Օտտո Թաբարեացու, Ադամ Գաստոնցու, Վահրամ Կոռիկոսցու և Լևոն Կապանցու տարածքներին: Տե՛ս Անդ., p. 126-127:

³⁹ Վ. Լանգլուան օգտվել է Ս. դը Սասիի մի հաղորդումից. *Extrait du rapport lu à la Classe d'histoire et de littérature ancienne de l'Institut de France*, par M. Sylvestre de Sacy, sur les recherches faites dans les archives de Gènes, en exécution des ordres du Gouvernement et de la délibération de cette Classe, du 14 thermidor an 13. – Magasin encyclopédique, ou Journal des sciences des lettres et des arts, rédigé par A.L. Millin, t. IV (1807), p. 133-147.

⁴⁰ V. Langlois, *Le Trésor*, p. 7-8.

⁴¹ Տե՛ս, օրինակ՝ *Documenti inediti riguardanti le due crociate di San Ludovico IX re di Francia*, Fasc. 1, raccolti ordinati ed illustrati da Luigi Tommaso Belgrano (Genova: 1859):

⁴² Տե՛ս V. Langlois, *Le Trésor*, p. 8 և հմմտ. *Della mercatura scritta da Francesco Balducci Pegolotti* (Lisbona-Lucca: 1766), p. 44-48:

հայտնի են *Liber Factorum* և *Liber Commemorialium* անուններով: Այդ հավաքածոների առաջին նկարագրողներից էր Մաս Լատրին⁴³: Ս. Մարկոսի գրադարանը նաև ունի մի կարևոր մատյան (*Codice Trevisiano*), ուր հավաքված են բազմաթիվ վավերագրեր, որոնց մի մասը վերաբերում են Կիլիկյան Հայաստանի և Վենետիկի հանրապետության փոխհարաբերությունների պատմությանը⁴⁴: Այս ձեռագրի վրա Վ. Լանգլուայի ուշագրությունն է հրավիրել Մխիթարյան միաբանության վարդապետ, հ. Բառնաբե Իսայեանը⁴⁵: Վենետիկյան արխիվների բազմաթիվ վավերագրեր, որոնք վերաբերում են Կիլիկիայի պատմությանը, հայտնի են եղել հ. Ղևոնդ Ալիշանին: Թեպետ Ֆլորենցիայի և Պիզայի ռեֆորմացիայի դարաշրջանի արխիվներում գեռևս Կիլիկյան Հայաստանին վերաբերող փաստաթղթեր չեն հայտնաբերվել, գիտենք, որ Բալդուչի Պեզոլտին մի շարք տեղեկություններ է հաղորդում Բարդի և Պերուցի առևտրական տների և Կիլիկիայի միջև կատարված առևտրական գործարքների մասին⁴⁶: Արագոնի, Սիցիլիայի և Նեապոլի հետ փոխհարաբերությունները թեպետ սկսվում են ավելի ուշ, սակայն Մխիթարյանների կողմից 1847 թ. շրջանառության մեջ է դրվել մի շահագանց կարևոր վավերագիր՝ հայերեն լեզվով, որի բնօրինակը պահպանվում է Սիցիլիայի Մեսինա քաղաքում⁴⁷: Կարևորություն են ներկայացրել նաև Մալթայի արխիվներում Երուսաղեմի վանական կարգերին վերաբերող փաստաթղթերը, որոնց մեջ Սեբաստիանո Պաոլին գեռևս 1733 թ. հրատարակած իր գրքում մի շարք արտոնագրեր էր հրապարակել, որոնք Հայոց թագավորները տվել էին Հիվանդախնամ ասպետներին: Մալթայի Հիվանդախնամների վանական կարգի արխիվի վավերագրերի առանձին խմբերի նկարագրությունը Մաս Լատրիի⁴⁸ հրապարակումներից հետո ի մի է բերել արխիվի ավանդապահ Ա. Սկուֆլերը⁴⁹:

Կիլիկիայի թագավորության պատմությունը բազմաթիվ խաչաձևումներ ունի Կիպրոսի պատմության հետ: Խաչակրաց դարաշրջանի այս երկու պետությունների պատմության և վավերագրերի դասակարգման խնդիրներին

⁴³ V. Langlois, *Le Trésor*, p. 8: Վենետիկի քաղաքային արխիվի նկարագրություններից ամենահայտնին տե՛ս A. da Mosto, *L'Archivo di Stato di Venezia. Indich generale, Storico, descryptive ed analitico*, t. I-II (Roma 1937–1940).

⁴⁴ *Memorie storiche de Veneti primi e secondi*, di Jacopo Fliasi, edizione seconda, tomo VI (Padova: 1812), p. 208.

⁴⁵ V. Langlois, *Le Trésor*, p. 9.

⁴⁶ Անդ, p. 9:

⁴⁷ [Ղ. Ալիշան], «Լեւոն Ե եւ իր հրովարտակը», էջ 92 և հմմտ. V. Langlois, *Le Trésor*, p. 9:

⁴⁸ M.L. de Latrie, *Archives, bibliothèque et inscriptions de Malte* (Paris: Imprimerie impériale, 1857).

⁴⁹ A. Scufflaire, “Les archives de l’Ordre de Saint-Jean de Jérusalem ou de Malte à Malte”, *BCRH*, t. 129 (1963), pp. 69–74.

անդրադարձել են Մաս Լատրին⁵⁰, Լորան Ֆենոյը⁵¹ և Նիկոլա Կուրեասը⁵²: Ի դեպ, վերջերս, հիմնվելով բազմաբնույթ սկզբնաղբյուրների վրա, Զ-ԺԳ դարերում հայ-կիպրական փոխառնչությունների պատմությունը փորձեց ի մի բերել և հանգամանորեն շարադրել Ժ. Դեդեյանը⁵³:

Վ. Լանգլուան կարողացել էր պարզել, որ Վիեննայում պահվում են վենետիկյան արխիվային հավաքածուների վավերագրերի բազմաթիվ ընդօրինակություններ, իսկ Բեռլինի արքունական արխիվում պահպանվում են Տևտոնյան ասպետական կարգի փաստաթղթերը, որոնից մի քանիսի պատճենները Ֆրանսիացի հետազոտողին էր ուղարկել Պրուսիայի թագավորական արխիվի տնօրեն դե Լանցիգոլը: Փարիզի կայսերական արխիվում պահպանվող վավերագրերը հիմնականում վերաբերում են Կիրիկյան Հայաստանի գահազուրկ վերջին թագավոր Լևոն Ե Լուսինյանի գործունեությանը: Հայկական վավերագրերի հետազոտման տեսանկյունից կարևորվում է նաև Մոնպելիեի քաղաքային արխիվը, ուր կարելի է գտնել Լևոն Դ թագավորի կողմից վավերացված երկու հայերեն արտոնագրեր⁵⁴: Չնայած Բալդուչիո Պեգոլոտիի վկայություններին՝ Վ. Լանգլուան որևէ նյութ չի կարողացել գտնել Նիմի արխիվում⁵⁵: Կիրիկյան Հայաստանին վերաբերող փաստաթղթեր չեն գտնվել նաև Մանոսքի և Մարսելի արխիվներում, ուր պահվում են Երուսաղեմի Ս. Հովհաննես վանական կարգի վավերագրերը, թեպետ ժամանակին Դյու Կանժը տեղեկացրել է Լևոն Բ-ի և Կոստանդին Լամբրոնացու կողմից այդ վանական կարգին տված արտոնագրերի մասին⁵⁶: Վ. Լանգլուան կարողացել է մի քանի վավերագրեր առանձնացնել լոնդոնյան հավաքածոներից, առանձին վավերագրեր է հայթայթել Բարսելոնայի, Մադրիդի և Սարագոսայի արխիվներում⁵⁷:

Վ. Լանգլուան ոչ միայն անխոնջ հավաքողը, այլ նաև հայկական վավերագրերի առաջին հետևողական հետազոտողն է: Նա փորձել է տալ «կիրիկյան դարաշրջանի» վավերագրերի արտաքին բնութագիրը. «Հայկական թա-

⁵⁰ M.L. de Latrie, *Histoire de l'île Chypre sous le règne des princes de la maison de Lusignan*, t. III (Paris: Imprimerie impériale, 1855):

⁵¹ L. Fenoy, *Chypre, île refuge, 1192–1473. Migrations et intégration dans le Levant latin*, thèse de doctorat en Histoire, Montpellier-3 (2011).

⁵² N. Coureas, “Friend or Foe?. The Armenians in Cyprus as others saw them during the Lusignan Period (1191–1473)”, *La Méditerranée des Arméniens*, pp. 75–83:

⁵³ G. Dédéyan, *Les Arméniens en Chypre (577–1211). De Justin II à Hugues Ier de Lusignan* (Nicosie: 2018).

⁵⁴ V. Langlois, *Le Trésor*, p. 10.

⁵⁵ Անդ, p. 10–11:

⁵⁶ Անդ, p. 11:

⁵⁷ Անդ, p. 11–12:

գավորական նոտարատնից դուրս եկած վավերագրերը գրված են եղել մագաղաթյա թերթի վրա, որի վրա հիշատակվում էր հասցեատերը, ստորագրվում էր կարմիր թանաքով և հաճախ կնքվում ոսկե կնիքով, մետաքսյա կարմիր թելով... Մինչև բնօրինակ վավերագրի պատրաստումը, փաստաթուղթը պատճենվում է նոտարատանը, մնում թագավորական արխիվի տրամադրության տակ»⁵⁸: Ըստ Վ. Լանգլուայի, ելնելով թագավորի կամքից, նոտարատանը ձևակերպում էին բոլոր վավերագրերը պետական լեզվով՝ այսինքն հայերենով, որը լատիներեն կամ ֆրանսերեն էին թարգմանում թարգմանիչները, որոնք ըստ ֆրանսիացի հայագետի՝ հիմնականում եվրոպացի կամ հատկապես ֆրանսիացիներ էին: Այնուամենայնիվ, պահպանված հնագույն վավերագրերը մեզ են հասել լատիներենով:

Այս լեզուներով էր ընթանում նաև հայերի և արևմտյան քաղաքական և հոգևոր գործիչների հետ նամակագրությունը, մինչդեռ երկրի ներսում նոտարատան պաշտոնական լեզուն մնում էր ժամանակի խոսակցական հայերենը, որն այսօր անվանում ենք «միջին հայերեն»: Ըստ Վ. Լանգլուայի՝ հայերեն լեզվով մեզ են հասել եզակի առևտրական արտոնագրեր. 1288 թ. տրված Ջենովացիներին, 1330 թ. Սիցիլիայի թագավոր Ֆրեդերիկ Գ-ին և Մոնպելիեի վաճառականներին տրված երկու արտոնագրեր⁵⁹: Հեթում Ա-ի ժամանակներից հայկական նոտարատանը սկսվում է օգտագործվել ֆրանսերենը, որը հետագայում, գրեթե ամբողջապես փոխարինում է լատիներենին, իսկ ԺԴ դարում այդ լեզուների տեղը զբաղեցնում է բարբառային իտալերենը, իբրև միջագային խոսակցական լեզու՝ *lingua franca*⁶⁰: Ըստ Վ. Լանգլուայի՝ հայերեն վավերագրերի գրչությունը բավական մոտ է ԺԳ-ԺԴ դարերի հայերեն ձևագրերի բոլորագրին, իսկ լատինատառ բնօրինակները ոչնչով գրեթե չեն տարբերվում միևնույն ժամանակի արևմտյան նոտարների ձևագրերից, դրանով իսկ մատնելով գրիչների եվրոպական ինքնությունը⁶¹: Այդ մասին են խոսում նաև վավերագրերի (լատիներեն, ֆրանսերեն) թարգմանություններում հաճախակի կրկնվող, վավերագրի լեզվին հատուկ բանաձևերը:

Վ. Լանգլուան բերում է թագավորական նոտարատնից դուրս եկած փաստաթղթերում առկա Հայոց թագավորին բնորոշող տարբեր նամակագրական բանաձևերը, որոնք գրեթե առանց փոփոխության կրկնվում են լատիներեն և ֆրանսերեն լեզուներում: Հատկանշական է «*Dei et Romani imperii gratia, rex Armeniae*» («Աստծո եւ Հռոմի կայսեր շնորհով [կամ ողորմությամբ] Հայոց

⁵⁸ Անդ, p. 12:

⁵⁹ Անդ, p. 12–13:

⁶⁰ Անդ, p. 13:

⁶¹ Անդ, p. 13:

թագավոր») կամ «*Véritable serviteur de Dieu, par sa grâce et sa miséricord, roi de tous les Arméniens*» («Աստծո հավատարիմ ծառա, շնորհով և ողորմությամբ Ամենայն Հայոց թագավոր») բանաձևի տարբեր ձևակերպումները և թագավորի անվան և տիտղոսների հիշատակման բազմազան եղանակները⁶²:

Լևոն Ա թագավորի ժամանակներից սկսած վավերագրերում թագավորական հրամանները հաստատվում էին բարձրագույն իշխանական խորհրդի (*assensu Curiae*) կողմից, սակայն մանկահասակ Ռայմոնդ-Ռուբենի արտոնագրերի կատարման երաշխիք էին Լևոն Ա-ի երաշխավորությունն ու կամքը (*consensus et voluntate*)⁶³: Վ. Լանգլուան ուշադրություն է հրավիրում նաև Կիլիկիայի թագավորական նոտարատանը վավերագրի հաստատագրմանն ու թվագրման բանաձևերի վրա: Այստեղ օգտագործվում են հիմնականում Հոռոմոց ինդիկատին (*endition dex Grex*) և Հայոց Մեծ ու Փոքր թվականները⁶⁴: Հայկական թագավորական նոտարատանը հավանաբար շարունակվում էր կիլիկյան նոտարատներում մինչ այդ օգտագործված Բյուզանդական տոմարական համակարգով վավերագիրը թվագրելու ավանդույթը⁶⁵: Սրան զուգահեռ՝ պետության և եկեղեցու կողմից օգտագործվող հիմնական տոմարական համակարգն էր մնում Հայոց թվականը⁶⁶: Սա կարևոր խնդիր է, որի վրա կցանկանայի հրավիրել հետազոտողների ուշադրությունը:

Իրեն հայտնի վավերագրերի վրա Լևոն Ա-ի ստորագրությունները փորձել է առաջինը հրապարակել Սեբաստիանո Պաոլին⁶⁷: Այդ վավերագրերի ստորագրության թանաքի կարմիր կամ պուրպուր (ծիրանի) գույնը Վ. Լանգլուան համեմատում է Բյուզանդիայի և նրա տարածքում և այլ երկրներում (Ֆրանսիա, Սերբիա, Բենեվանտ, Իկոնիա ևն.) ստեղծված վավերագրերի վրա պահպանված տիրակալների ստորագրությունների հատուկ գույնի հետ: Վավերագրերում ծանուցվում է թե ո՞վ է ստորագրողը. «յաղագս առաւել հաստատութեան ձեռնագրեցաք մերով թագաւորական բարձր ձեռնագրեաւ» (*apposuimus cyrographum nostrum կամ sobre esto mandamos dar esta nuestra carta*

⁶² Անդ, p. 13–14:

⁶³ Անդ, p. 14:

⁶⁴ Անդ, p. 14–15:

⁶⁵ Այդ համակարգի մասին տե՛ս V. Grumel, *Traité D'Études Byzantines. Volume I, La Chronologie* (Paris: Presses Universitaires de France, 1958) (այսուհետ՝ V. Grumel, *La Chronologie*):

⁶⁶ Հայոց մատենագրության մեջ օգտագործվող տոմարական համակարգերի մասին տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն (Երևան, ԵՊՀ հրատ., 1973), էջ 96–155:

⁶⁷ Տե՛ս *Codice diplomatico del sacro militare ordine Gerosolimitano oggi di Malta, raccolta da varj documenti di quell' archivo, per servire alla Storia dello stesso Ordine in Istoria e illustrato con una serie cronologica de Arch Maestri, Che lo govrnarono in quei tempi* (Lucca: 1733), p. 95–96, 98–101, 104–107, 135 և այլն:

firmada de nuestro nombre) կամ «եւ վասն առաւել հաստատութեան ձեռնագրեցաք մերով սովորական բարձր ձեռնագրովս» (*insuper rubies apicubus propria manu signavi կամ propria manu rubies litteris armenicis illud signavi կամ presentem paginam subscription rubea facta mea propria manu*): Հետաքրքիր է նաև այս ծանուցումների բազմալեզու փունջը (*ci avons escrit de nostre main vermeil կամ sobre esto mandamus dar esta nuestra carta firmada de nuestro nombre*), որը Կիլիկիայի թագավորական նոտարատան աշխատանքային ձեռագրի անքակտելի մասն է կազմում: Հայերենով պահպանված վավերագրերում թագավորը գրում է իր անունը և «թագաւոր Հայոց» կամ «թագաւոր ամենայն Հայոց» կոչումը⁶⁸: Վավերագրերից շատերն ունեցել են ուղեկցող թագավորական ոսկե կնիքներ: Որոշ վավերագրերում առկա է «և կնքեցաւ արքունական ոսկի վուլովս» (*in quorum omnium testimonium, fecimus presentem rotulum nostril parvi sigilli, quo in regno nostro utimur, appensione muniri*) բանաձևը: Այդ կնիքներից մի քանիսն հասել են մինչև մեր օրերը, սակայն Վ. Լանգլուան կնիքների փոխարեն ներկայացնում է ժամանակին իր կողմից հրապարակված Լևոն Ա-ի արծաթե դրամներից մեկը⁶⁹: Լևոն Ա-ի հիշյալ կնիքները պահվում են Վատիկանի պապական գրադարանում⁷⁰ և ցայսօր կնիքագետների կողմից հատուկ հետազոտման չեն արժանացել և սոսկ ներկայացվում են կնիքների մասին պատմող մասնագիտական գրացուցակներում (կատալոգ)⁷¹, ցայսօր մնալով իբրև Վատիկանի և Եվրոպայի թանգարանային այլ քաղաքների հարստություն: Առհասարակ Կիլիկյան դարաշրջանի կնիքները, ցավոք, մինչ օրս հետազոտված չեն⁷². հրապարակված չեն նաև հայկական ձեռագրերում հաճախ հանդիպող նույն դարաշրջանի բազմաթիվ կնքագրողները, որոնք պատկանում են առանձին անհատների՝ հիմնականում հոգևորականների: Արդեն ժամանակն է, որ այս բնագավառի համար Հայաստանի գիտական հաստատությունները պատրաստեն սեփական մասնագետներին, որոնք կկարողանան հայկական նյութը համեմատել և հետազոտել եվրոպական, բյուզանդական և մուսուլմանական կնիքների հավաքածուներում պահպանված օրինակների

⁶⁸ Անդ, p. 96, 101, 135 և հմմտ. V. Langlois, *Le Trésor*, p. 15–17:

⁶⁹ Անդ, p. 17–19:

⁷⁰ Դրանցից մի քանիսի լուսանկարները վավերագրերի հետ միասին հրապարակել է Կլոդ Մութաֆյանը: *Տե՛ս Roma-Armenia*, sous la direction de Cl. Mutafian (Roma: Edizioni de Luca, 1999), p. 143–144:

⁷¹ A. Martini, *I sigilli d'oro dell'Archivio Segreto Vaticano* (Milan, 1984), p. 48, 204.

⁷² Հայտնի կնիքների մասին թուուցիկ խոսք կա V. Langlois, *Le Trésor*, p. 18–19 աշխատանքում: Այստեղ ընդգծվում է, որ հայկական կնիքի վրա իր տեղն ունի առյուծի պատկերը, որը նույնանում է Լևոն թագավորների անվան հետ: Ընդհանրապես եվրոպական միջնադարում նման սիմվոլների օգտագործման մասին տե՛ս M. Пастуро, *Символическая история*, с. 48:

հետ, կազմեն դրանց համապարփակ ցանկերը, ցույց տան այդ կնիքների նշանակությունը միջնադարի Հայոց պատմության վերականգնման գործում:

Դեռևս ժԹ դարում Լևոն Ա-ի և Լևոն Ե-ի նամակների ոսկե կնիքների մասին հոդված է հրատարակել Գ. Շլումբերգերը⁷³: Լևոն Ա-ի երեք ոսկե, հայատառ կնիքով նամակներն էլ ուղղված են Իննոկենտիոս Գ-ին (1198–1216) և պահպանվում են Վատիկանում, իսկ Լևոն Ե-ի լատինատառ կնիքը պահվում է Փարիզի Ազգային գրադարանի Կլեղամբուլտի ֆոնդում և հատված է 1389 թ. մարտի 25-ին: Շլումբերգերը հրատարակել է նաև Կոստանդին Ա կաթողիկոսի կնիքը (տե՛ս AOL, I (1881), p. 669–673), ինչպես նաև Լևոն Ա-ի ոսկե նորագյուտ դրամը (տե՛ս AOL, I (1881), p. 675–678): Կիլիկյան թագավորական կնիքները պետք է ներագրավվեն հայագիտական հետազոտությունների շրջանակի մեջ, քանի որ դրանք նույնպես Կիլիկիայի հայկական թագավորության լեգիտիմության ցուցանիշներից են: Այս բնագավառում հետաքրքիր նորություն են Հակոբ Կլայեցի Ամենայն Հայոց կաթողիկոսի սուրգույն երկկողմանի հայատառ կնիքի գրոշմները, որոնք հայտնաբերվել են Տիրուլի արխիվում գտնվող վեց «Թողության թուղթ»-երի վրա: Դրանք գրոշմվել են 1293 մայիս-հունիս ամիսներին: Կնիքները դրված են Նինվեի արքեպիսկոպոս Հովհաննեսի անունից: Հետաքրքիր է, որ Հակոբ կաթողիկոսի մահից վեց տարի հետո է կնիքը հայտնվել հիշատակված մագաղաթե փաստաթղթերի վրա: Վավերագրում հիշատակված անձի ինքնությունը կարոտ է պարզաբանման: Այս, դեռևս լիովին չհետազոտված կնիքների կապը այդ ժամանակի եկեղեցաքաղաքական իրադարձությունների հետ դեռևս բացահայտված չէ: Ավստրիացի բյուզանդագետ-հայագետ, կնիքագետ Վ. Զայբտի և Մ. Բիտչնաուի բացատրության փորձն արժանի է ամենայն խրախուսանքի⁷⁴:

Եվրոպայի արխիվներում պահպանվող և կիլիկյան նոտարատներից ելած վավերագրերի տակ հաճախ հանդիպում են թագավորների ստորագրությունները, ուր հանդիպում են «թագավոր» (*rex* կամ *rey*), «թագավոր Հայոց», «թագավոր ամենայն Հայոց» (*rex omnium Armenorum*) վավերագիտական բանաձևերը, որոնք համապատասխանում են Կիլիկիայի հայկական դրամների վրա պահպանված գրություններին⁷⁵: Նման բանաձևումներն էլ պատահական չէին ստեղծվում. դրանք համապատասխանում էին տվյալ երկրի որդեգրած

⁷³ G. Schlumberger, “Bulles d’or et sceau des rois Léone II(I) et Léon VI(V) d’Arménie”, *ROL* I (1893), p. 161–167.

⁷⁴ W. Seibt, M. Bitschnau, “Ein Johannes “Erzbischof von Ninive” siegelt 1293 tirolische Ablասurkunden mit dem Typar des armenischen Katholikos Jakob I. († 1286)”, *MIOG*, 122 Bd., Teilband 1 (Wien-Köln-Weimar: Böhlau Verlag, 2014), S. 112–123.

⁷⁵ V. Langlois, *Le Trésor*, p. 17–18.

պետական-քաղաքական ուղեգծին և ամրագրվում էին պաշտոնական գրագրության մեջ:

Ա. 3. Պետական պաշտոնեության հետազոտման փորձը.

Արդեն իսկ Վ. Լանգլուայի կողմից ճշտված է, որ Կիլիկյան Հայաստանի արքունական նոտարատունը գտնվել է թագավորության մայրաքաղաք Սսում: ԺԳ դարի մի շարք վավերագրերից հայտնի է, որ երկրի առաջին ատենադպիրը կամ նոտարը, որը գլխավորում էր պետական քարտուղարությունը՝ հաճախ Սսի արքեպիսկոպոսն էր, նա նաև Դրագարկի վանահայրն էր⁷⁶, որը վավերագրերում անվանվում էր «*curia Sisensis episcopi*»: Արքունի նոտարատան կամ քարտուղարության գլխավոր պաշտոնյան միջին հայերենով գրված սկզբնաղբյուրներում անվանվում էր թագավորական «ջանցլեր», որն ամենայն հավանականությամբ փոխառված էր իսաղակիրների պետական համակարգից: Հայերեն սկզբնաղբյուրներում, այդ պաշտոնն անվանվում է նաև «ատենադպիր»: Բյուզանդիայի կայսերական նոտարատան և նրա ղեկավար Մեծ լոգոթետի գործունեության ոլորտները նույնանում են Կիլիկիայի նմանատիպ պաշտոնեայի պաշտոնական պարտականությունների հետ, գուցե միակ տարբերությունը կայսերական գրագրության անհամեմատ մեծ չափերի մեջ էր⁷⁷: Պաշտոնի վրացական տարբերակը հայտնի է ԺԱ – ԺԳ դդ. Վրաց թագավորության պատմությանը, որը ստացել է թրոնոմարտոպոլիտիս (գլխավոր ատենադպիր) – ֆյոնդոլոլո (ճկոնդիդեի) անվանումը⁷⁸: Հիշյալ դարաշրջանում այդ պաշտոնը ստանում էր Ճկոնդիդի, Բեդիայի, Ալավերդիի, Սամթավիսի և Ածկուարի եպիսկոպոսներից որևէ մեկը: Կարելի է ենթադրել, որ Կիլիկիայում երբեմն էլ այդ պաշտոնին կարող էր նշանակվել ոչ միայն Սսի, այլ նաև Տարսուսի կամ Կիլիկիայի որևէ այլ քաղաքի եպիսկոպոսը⁷⁹: «Ջանցլեր» գործակալության պաշտոնյաներից էր պրոքսիմոսը, որի գործառույթը

⁷⁶ M. Bais, “Documents de la chancellerie du royaume d’Arménie en Cilicie: traductions et traducteurs”, *La Méditerranée des Arméniens XII^e–XV^e siècle*, ed. G. Dédéyan, Cl. Mutafian (Paris: 2014), p. 235, 241.

⁷⁷ Այդ ինստիտուտի և նրա ղեկավարի գործունեության մասին տե՛ս L. Bréhier, *Le monde byzantin: Les institutions de l’empire byzantine* (Paris: 1970), p. 140–141.

⁷⁸ Ենթադրվում է, որ առաջինը և առաջինը ճկոնդոլոլո Գրիգոր Մալաթրայի (ճկոնդոլոլոլո) (տե՛ս Գրիգորյան 2017), թ. 271–276.

⁷⁹ 1261 թ. Հեթում Ա-ի կողմից վենետիկցիներից տրված վավերագիրը լատիներեն է թարգմանվել Տարսուսի (բնագրում՝ *Torso*) ամենայն հավանականությամբ հակաքաղկեդոնական Հայոց արքեպիսկոպոսի կողմից. Տե՛ս L. de Mas-Latrie, “Privilege accordé par Héthoum Ier, roi

ամենայն հավանականությունը պիտի վերաբերեր ֆինանսական գործերին⁸⁰: Պետական նոտարական գրասենյակին կից ամենայն հավանականությունը գործում էր նաև արխիվ-նոտարատուն⁸¹: Կիլիկիայի նոտարատանը հավանաբար աշխատել է նաև թագավորության լատին քարտուղար «*latinus regis cancellarius*», որն ուներ նաև իրեն ենթակա գրիչներ⁸²: Նմանատիպ պաշտոնեություն ունեին նաև Կիլիկիայում գործող մաքսատներն (բաժտուն) ու առևտրական մի շարք երկրների (Ջենովա, Վենետիկ, Կիպրոս ևն.) նոտարական գրասենյակները⁸³: Կիլիկիայում էին հաստատվել նաև Վենետիկի և Ջենովայի կողմից հաստատված պալլեր կամ կոնսուլներ (գունց), որոնց գործունեության մասին պատմում է նրանց նոտարական գրասենյակների բազմաթիվ գրանցումներ⁸⁴: Գրասենյակի աշխատանքին մասնակցում էին ոչ միայն հայազգի գրչներ, այլ նաև օտարազգիներ (*latinus regis cancellarius*), ինչպես այդ մասին վկայում են մի շարք վավերագրեր⁸⁵: Որոշ պահպանված փաստաթղթերի բնագրերից կարելի է եզրակացնել, որ օտարներին տրվող վավերագրերի հիմնական մասը գրվում էր ոչ միայն հայերենով, այլև թարգմանվում էր լատիներեն, ինչպես նաև հին ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, եթե այն ուղարկվում էր եվրոպական պետություններ: Պահպանվել են գրեթե մեկ տասնյակի հասնող նմանատիպ, երկլեզու վավերագրեր կամ թարգմանված վավերագրերի ընդօրինակություններ, որոնց նոտարական գրառումներում հիշվում է հայերեն բնօրինակի գոյության փաստը: Այդ արտոնագիր-պայմանագրերից վեցի վրա մասնագետների ուշադրությունն է հրավիրում իտալացի հայագետ Մարկո Բայսը⁸⁶:

Ի տարբերություն կաթողիկոսական նոտարատան, արքունական գրասենյակից դուրս եկած և մեզ հասած հայերեն վավերագրերի լեզուն միջին հայերենն է, որը լի է բազմաթիվ օտարաբանություններով⁸⁷: Այս հանգաման-

d'Arménie, aux Vénitiens, en 1261", *BEC* 31 (1870), pp. 411 և հմմտ. **M. Bais**, "Documents de la chancellerie", p. 239:

⁸⁰ **V. Langlois**, *Le Trésor*, p. 19.

⁸¹ **Անդ.**:

⁸² **Անդ.**:

⁸³ Պահպանվել են Այասի ջենովական երկու նոտարների գործավարման մատյանները, որոնք հարուստ տեղեկություններ են տալիս Կիլիկիայում տեղի ունեցած բազմաթիվ առևտրատնտեսական գործարքների մասին տե՛ս **L. Balletto**, *Notai genovesi in Oltremare atti rogati a Laiazzo da Federico di Piazzalunga (1274) e Pietro di Bargogne (1277, 1279)* (Genova: 1989).

⁸⁴ **V. Langlois**, *Le Trésor*, p. 19–20.

⁸⁵ **Անդ.**, p. 19:

⁸⁶ **M. Bais**, "Documents de la chancellerie", p. 231–248.

⁸⁷ **Լևոն Բ-ի՝ 1288 թ. ջենովացիներին տված արտոնագրի հրատարակությունները տե՛ս J. de Saint-Martin**, "Décret ou privilège de Léon III, roi d'Arménie, en faveur des Génois, en l'année

քը մասնագետների և հատկապես լեզվաբանների առջև խնդիր է դնում համակողմանիորեն հետազոտել ԺԳ-ԺԴ դդ. Կիլիկիայի թագավորական նոտարատնից դուրս եկած հայատառ վավերագրերի բառապաշարն ու լեզվական ինքնատիպությունները, որոնք այդ դարաշրջանի Կիլիկիայի խոսակցական բարբառի առանձնահատկություններն էին:

Թագավորական նոտարատան քարտուղարների և պաշտոնեության մասին վավերագրերի հաղորդած տեղեկությունները Վ. Լանգլուայի հետևողությամբ փորձել է ի մի բերել պատմաբան Ս. Բոռնազյանը⁸⁸:

Ա 4. Վ. Լանգլուայի Ժողովածոյում հրապարակված վավերագրերը.

Բերենք Վ. Լանգլուայի կողմից իր գրքում հրապարակած վավերագրերի ամբողջական ցանկը՝ ուշադրություն հրավիրելով այն փաստաթղթերի վրա, ուր պահպանվել են նոտարների հաստատումները.

1. 1201 մարտ - խրիստովու-արտոնագիր՝ տրված Ջենովացիներին - «*Data par manus Johannis venerabilis archiepiscopi Sisensis, trium arcium abbatis, totius regni Armenie legati et cancellarii, anno incarnati Verbi millesimo ducentesimo primo, mense marcio*»: Հիշատակված Հովհաննեսը՝ Կոմարդիասի տեր Կոստանդին Հեթումյանի որդին է, որը 1203 թ. ընտրվել է Հայոց կաթողիկոս և կրել է «Մեծաբարո» մականունը: Վավերագրում նա ոչ միայն թագավորական դիվանի դեսպանն ու քարտուղարն է, այլ նաև Սսի արքեպիսկոպոսն ու Դրազարկի վանահայրը (*trium arcium abbatis*): Վավերագրի լատիներեն թարգմանությունը Ջենովական արքունիքում, իր ստորագրություններով հանդերձ վերահաստատել է Ս. պալատի նոտար Աստո Պլանչենտինուսը⁸⁹:

2. 1201 թ. դեկտեմբեր - խրիստովու-արտոնագիր՝ համաձայնեցված վենետիկցիների հետ: Հայկական կողմից վավերագիրը վավերացրել է Հայոց արքունիքի կանցլեր, Սսի արքեպիսկոպոս, վերոհիշյալ Հովհաննեսը. «*Factum est hoc privilegium et datum per manus domini Johannis, venerabilis archiepiscopi Sisensis, illustris Armenie cancellarii, anno dominice incarnationis millesimo ducertesimo*

1288», *Notices et Extraits des Manuscrits de la Bibliothèque du Roi* 11 (1827), p. 97-122: Հմմտ. նաև V. Langlois, *Le Trésor*, p. 154-158: Օշին թագավորի անունից 1314 թ. Մոնպելիեի վաճառականներին տրված արտոնագրի հրատարակությունը տե՛ս Անդ, p. 178-179: Լևոն Ե (Գ)-ի՝ 1321 թ. Մոնպելիեի առևտրականներին տված երկրորդ արտոնագիրը տե՛ս Անդ, p. 185-186: Արագոնի թագավորության կազմում գտնվող Սիցիլիային Լևոն Ե-ի տված պայմանագիրը տե՛ս [Ղ. Ալիշան], «Լևոն Ե, և իր հրովարտակը», էջ 92-94; V. Langlois, *Le Trésor*, p. 186-190:

⁸⁸ Ս.Վ. Բոռնազյան, *Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XII-XIV դարերում* (Երևան, ՀՍՍՀ հրատ., 1973), էջ 70-73:

⁸⁹ V. Langlois, *Le Trésor*, p. 105-107.

primo, mense secembris»: Վավերացրել է Վենետիկի նոտար Գաբրիել Պաուլինիուսը, իսկ ավելի ուշ՝ 1229–1249 թթ., Վենետիկի դուքս Հակոբ Տեոպուլին. «*Ego Gabriel Paulinius, notarius et ducalis aule Veneciarum cancellarius, autenticum huius exempli sigilio aureo sigillatum vidi et legi, et sicut in auctentico continebatur, ita ut in isto continetur exemplo; ideoque meo proprio signo ipsum coroboravi et de mandato domini Jacobi Teupuli, incliti ducis Venecie, currente anno domini nostril Jhesu Christi millessimo ducentesimo quadragessimo sexto, mensis madii, indictione quarte, in palatio ducatus Venecie*»⁹⁰:

3. 1210 թ. ապրիլի կես - Լևոն Ա-ի նամակ-նվիրատվություն՝ ուղղված Իննոկենտիոս Գ-ին: Հիշատակված չէ նվիրատվության նոտարը. նամակը թվագրված է Տարսոնում «*Datum Tharsi Cilicie, medio mensis aprili*»⁹¹:

4. 1210 թ. օգոստոս - նախորդ նամակ-նվիրատվության հաստատումը Իննոկենտիոս Գ-ի գրասենյակի կողմից: Թվագրված է Լատերանում. «*Datum Laterani, III nonas augusti, pontificates nostril anno tertio decimo*»⁹²:

5. 1210 թ. օգոստոս - խրիստովոլ, որով Լևոն Ա-ը Լարանդան հանձնում է Հոսպիտալիերներին, նոր արտոնություններով. «*Factum est autem hoc anno ab incarnatione istud m°cc°x° mense augusto, indictione xiiij°, per manus Bartholomai, regie duane secretorum pro[to]notari, feliciter. Amen*», վերջում՝ թագավորի հունարեն և հայերեն ստորագրությունը⁹³:

6. 1212 թ. ապրիլ - խրիստովոլ-արտոնագիր՝ տրված Լևոն Ա-ի կողմից Տեվտոնյան օրդենին, որով Ամուղա ամրոցն է տալիս այդ վանական կարգին՝ այլ արտոնությունների հետ մասին: Բեռլինի կայսերական արխիվի ընդօրինակություն. «*Pro quibus confirmandis presens scribe jussi privilegium, propria mea manu litteris rubies signatum, et regali sigillo meo aureo corroboratum et sigillatum. Factum est autem hoc privilegium incarnationis dominice anno m°cc°xij°, mense aprilis*»: Հրատարակված է 11.11.1861 թ. Վ. Լանցիզոլեի Բեռլինում կատարված ընդօրինակությունից⁹⁴:

7. 1213 թ. մարտ - Իննոկենտիոս Գ պապի նոտարատան կողմից նախորդ արտոնագրի հաստատումը. «*Datum Rome, apud sanctum Petrum, vj° kal. marci, pontificates nostril anno xvj°*»: Հրատարակված է 11.11.1861 թ. Վ. Լանցիզոլեի Բեռլինում կատարված ընդօրինակությունից⁹⁵:

⁹⁰ Անդ., p. 109–112:

⁹¹ Անդ., p. 112–114:

⁹² Անդ., p. 114–115:

⁹³ Անդ., p. 115–116:

⁹⁴ Անդ., p. 117–120:

⁹⁵ Անդ., p. 121:

8. 23 ապրիլ 1214 թ. - Լևոն Ա-ի կողմից Հոսպիտալիերներին տրված խրիստոփոփարտոնագիրը՝ Վաներ ամրոցի (Մելոնի տարածքում) պահպանությունը այդ վանական կարգին հանձնելու վերաբերյալ: Վավերագիրն հաստատված է Տարսոնում, նույն կարգի մագիստր Բովոնիսի ձեռքով. «Factum est autem hoc privilegium per manum magistri Bovonis, latini cancellarii domini regis apud Tarsus, incarnati verbi anno m^occ^o xiiij^o, nono kal. maii»⁹⁶:

9. 23 ապրիլ 1214 թ. - Լևոն Ա-ի կողմից հոսպիտալիերներին տրված խրիստոփոփարտոնագիրը՝ հաստատված Տարսոնում, մագիստր Բովոնիսի ձեռքով, «incarnati Verbi anno m^occ^o xiiij^o, nono kal. madii» - տարում⁹⁷:

10. 15 մարտ 1215 թ. - Լևոն Ա-ի Ձենովացիներին տրված խրիստոփոփարտոնագիրը՝ հաստատված կայսերական նոտար Նիկոլաոս Պորտայի և այլոց կողմից: Հնդօրինակել է 12.03.1856 թ. Մ.Ա. Կաստելլին Թուրինում՝ Ատտո Պլանչենտինուսի հաստատած օրինակից⁹⁸:

Հրովարտակների հավելված (տրված՝ Անտիոքի իշխան և Հայոց գահի ժառանգ Ռուբեն-Ռայմոնդի անունից)։

11. 17 մարտ 1207 թ. - Անտիոքի իշխան Ռայմոնդ-Ռուբենի անունից Հոսպիտալիերներին տված հրամանագիր-արտոնագիրը՝ հաստատված Գոֆրեդի Լիրատ մագիստրոսի և թվագրված Լևոն Ա Հայոց արքայի նոտար Բարսեղ քարտուղարի ձեռքով. «Factum est autem hoc privilegium in tempore fratris Gofredi Lirat, magistri ejusdem domus hospitalis infirmorum Iherusalem, et datum est per manus Basili, fidelis cancellarii domini L[eonis] regis Armenis, avunculi mei, in xxij die madii, indictione x, anno dominice incarnationis m^occ^o vij ; feliciter. Amen» և Լևոն արքայի անվան հունարեն ստորագրությունը⁹⁹:

12. սեպտեմբեր 1210 թ. - Անտիոքի իշխան Ռայմոնդ-Ռուբենի նախորդ հրամանագիր-արտոնագրի հաստատումը Հոսպիտալիերների և Հայոց թագավորության մաքսատան պրոտոնոտար Բարթոլեմիոսի ձեռքով. «Factum est autem hoc, anno ab incarnatione Domini m^occ^o x^o, mense septembris, xiiij indictione, per manus Bartholomei, regie duane secretorum domini regis Armenie pro[to]notarii; feliciter, Amen»¹⁰⁰:

13. 31 մարտ 1215 թ. - Անտիոքի իշխան Ռուբեն-Ռայմոնդի՝ Հոսպիտալիերներին տված հրաման-արտոնագրի հաստատումը Իորդան քարտուղարի ձեռքով. «Anno ab incarnatione Domini m^occ^o xv^o, primo kal. aprilis. Datum per

⁹⁶ Անդ, p. 122–123:

⁹⁷ Անդ, p. 124–125:

⁹⁸ Անդ, p. 126–128:

⁹⁹ Անդ, p. 129–131:

¹⁰⁰ Անդ, p. 132–133:

manum Iordani cancellarii mei, etc.»¹⁰¹: Ստորագրությունները՝ Լևոն արքայի գլխավորությամբ, Կիլիկիայի և Անտիոքի պատրիարք, եպիսկոպոսներ, պաշտոնյաներ և հավատարիմ իշխաններ երկուստեք՝ Հայոց և Անտիոքի իշխանապետության կողմից. «Factum est autem et confirmatum hoc privilegium, in presentia domini Petri, venerabilis patriarche Antiochie et excellentissimi domini Levonis, magnifici regis Armenie, mei avunculi et aliorum venerabilium: domini Hotonis, Apamiensis archiepiscopi; domini Booz (Պողոս), electi Tarsensis; domini Ioannis Mamistaneae (Մսիս) ecclesie electi; domini Eustachii, episcopi Valaniensis (Անտիոքի իշխանության ծովափնյա քաղաք); et fidelium baronum regis Armenie: domini Constancii, conestabuli (գունդստաբլ) Armenie; domini Ade, senescalci (սենեսկալ/սեղանապետ); domini Varan, marescalci (մարաջախտ); et fidelium baronum meorum: domini Othonis de Tiberiade; domini Aharie, senescalci Antiochie; domini Willelmi de Insula; domini Gauteri de Laitor; domini Eschivardi; domini Guillelmi de Hasart; domini Thome, marescalci (մարաջախտ); domini Simonis, camerarii (արարողոպետ); domini Poncii Lombardi; domini Bauduini de Maimendon; domini Thome Malebrun; domini Bartholomei de Iauane»¹⁰²:

14. 31 մարտ 1215 թ. - Անտիոքի իշխան Ռուբեն-Ռայմոնդի 1210 թ. սեպտեմբերին Հոսպիտալիերներին տված հրաման-արտոնագրի հաստատումը, որն ունի նախորդ գրությունից բերված թվականը, Իորդան քարտուղարի հաստատումն ու նույն ստորագրությունները՝ մեկ տեղափոխությամբ¹⁰³:

15. փետրվար 1216 թ. - Անտիոքի իշխան Ռայմոնդ - Ռուբենի ջենովացիներին տված արտոնագիրը (հաստատված՝ սեփական կնիքով), ուր չի նշված Լևոն Ա-ի անունը: Ընդօրինակվել է 12.03.1856-ին Մ. Կաստելիի ձեռքով¹⁰⁴:

16. 7 ապրիլ 1216 թ. - Անտիոքի իշխան Ռայմոնդ-Ռուբենի, Լևոն Ա-ի համաձայնությամբ պիզացիներին տրված արտոնագրի հաստատումը՝ ստորագրված՝ Անտիոքի և Պիզայի պարոնների կողմից¹⁰⁵:

17. 1233 թ. հոկտեմբերի վերջ - Լամբրոնի տեր Կոստանդին թագադրի Գովալյրա (ամենայն հավանականությամբ՝ Կովառա) ամրոցի նվիրատվությունը Հոսպիտալիերներին¹⁰⁶:

¹⁰¹ Անդ, p. 133–134:

¹⁰² Անդ, p. 134:

¹⁰³ Անդ, p. 135–136:

¹⁰⁴ Անդ, p. 136–137:

¹⁰⁵ Անդ, p. 138–139:

¹⁰⁶ Անդ, p. 140: Այս ամրոցի մասին տե՛ս նաև Գ.Ֆ. Թինոյան, «Կիլիկիայի Հայոց թագավորության ներքաղաքական և արտաքին քաղաքական իրադրությունը 1240-ական թթ.», ԼՀԳ 1 (646) (հունվար-ապրիլ 2016), էջ 130:

18. 22 հունվար 1236 թ. - Հեթում Ա և Զաբեղի մի շարք բերդերի խրիստովու-նվիրատուությունը Տևտոնյան օրդենին՝ թվագրված Հայոց Մեծ թվակա-նով և հաստատված Մանուել քարտուղարի ձեռքով. «Datum januuario mense, xxij° die, anno Armenorum DC et quadragesimo V°, indictione ix°, per manus Manuelis cancellarii»: Վավերագրի իսկությունը հավաստել է Վ. Կանցիզոլը¹⁰⁷:

19. մարտ 1245 թ. - Հեթում Ա-ի և Զաբեղի անունից վենետիկցիներին տրված խրիստովուլը, որն հաստատում է նախորդ արտոնագիրը՝ վավերաց-ված Գրիգոր քարտուղարի ձեռքով. «Factum est hoc privilegium per manus Gregorii sacerdotis, cancellarii, anno Domini incarnationis millesimo CC°XLV°, mence marci»: Փաստաթղթի իսկությունը հաստատել է Վենետիկի դքսական քարտուղարության նոտար Գաբրիել Պաուլինուսը¹⁰⁸:

20. 1252 թ. - Հեթումի և Զաբեղի դուստր Եֆիմեի և Սիդոնի տեր ժուլիենի ամուսնական պայմանագիրը՝ Հեթում արքայի հայատառ ստորագրու-թյամբ¹⁰⁹:

Հավելված

21. 3 հոկտեմբեր 1270 թ. - Հայոց թագավորի վստահագիրը Զենովայի քա-ղաքացի Ժակ Պալավիչինոյին, նրա նավի կողոպտման գործով¹¹⁰:

22. 22 հոկտեմբեր 1268 թ. - Կոռիկոսի մոտ եղած մի գալերի բռնագրավ-ման առիթով Զենովային ներկայացված փոխհատուցման հայց¹¹¹:

23. 6 հոկտեմբերի 1271 թ. - Ժ. Պալավիչինոյի հայցը Կոռիկոսից՝ ներկա-յացված Զենովային¹¹²:

24. 7 հոկտեմբերի 1271 թ. - Ժ. Պալավիչինոյի հայտարարությունը Կոռի-կոսի դիպվածի մասին¹¹³:

25. 3 հունվար 1271 թ. - Լևոն Բ-ի խրիստովուլ-արտոնագիրը վենետիկցի-ներին, որն հաստատված է Ժեֆրոյ գրչի կողմից. «Et le translate ei escrist Jeffroy lescrivein, de mot à mot, si cum il es de sons ascrit en erminois, per commendement del roy»¹¹⁴:

¹⁰⁷ V. Langlois, *Le Trésor*, p. 141–143.

¹⁰⁸ Անդ, p. 143–145:

¹⁰⁹ Անդ, p. 146–147:

¹¹⁰ Անդ, p. 149:

¹¹¹ Անդ, p. 150:

¹¹² Անդ:

¹¹³ Անդ, p. 151:

¹¹⁴ Անդ, p. 153:

26. 23 դեկտեմբեր 1288 թ. - Լևոն Բ-ի խրիստովուլ-արտոնագիրը Ջենովային՝ ամբողջով թշամբ գրված և ստորագրված հայերեն. «Գրեցաւ արդահատութեամբ Հեթում ջանցլերին...»¹¹⁵:

26ա. նույն թվահամարի տակ գրված նամակի լատիներեն թարգմանությունը. «Scriptum fuit per manum Aitoni cancellarii...»¹¹⁶: Այստեղ, թագավորի ստորագրությունից հետո հավելված է. «De Ossino, proximo, honorate capitane pasidonii de Ayacio, barono Pagorno, et Bedrois camerlengo et scribe, quod rex, Deud sibi det vitam ! dedit privilegium honorabili communi Janue, et sicut vobis stabilitum est quod non deberetis expedire aliquem qui haberet privilegium, ipsi portaverunt michi privilegium, et legimus illud et intelleximus, et precepimus vobis quod debeatis accipere et intelligere et facere scribe vobis, et duca similiter debeat scriber sibi, et debeatis facere sicut precepi, u test preceptum in privilegio», որից հետո արաբատառ ստորագրված է. «Մելք՝ որդի Աբասի, որդի Մահերի»¹¹⁷: Մ. Կաստելիի 12.03.1856 հաստատած օրինակից էլ հրապարակել է Վ. Լանգլուան¹¹⁸:

27. 1289 թ. - Հեթում Բ-ի՝ ջենովացիների հետ համաձայնեցրած արտոնագիրը¹¹⁹:

28. Հայաստանի արքայի և կատալանցիների միջև համաձայնեցված առևտրական արտոնագիրը¹²⁰:

29. 2 սեպտեմբեր 1295 թ. - Մարսելի վաճառականին Այասում տրված վկայագիր¹²¹:

30. 10 հունիս 1304 թ. - Հայաստանի սպարապետ Թորոսի նոտարական հավաստագիրը՝ հաստատված ջենովական համայնքի և Հայոց թագավորության նոտար Գաբրիել Պարոնցու կողմից. «Ego Gabriel de Parono, notarius publicus communis Janue et domini regis Armenie, quum predictis interfui rogalus, scripsi, meo que consueto signo more solito consignavi. Millesimo ccc°vij°, die martis, quinto septembris, sexto inditionis»¹²²:

31. 20 մայիս 1307 թ. - Լևոն Գ-ի՝ վենետիկցիներին տված խրիստովուլ-արտոնագիրը: Թագավորի կողմից Հայոց մեծ թվականով և ինդիկտիոնով թվագրելուց հետո հավելված է. «Et ce fu fait à Sis la cité, par la man de Gregoire

¹¹⁵ Անդ, p. 158:

¹¹⁶ Անդ, p. 161:

¹¹⁷ Անդ:

¹¹⁸ Անդ, p. 162:

¹¹⁹ Անդ:

¹²⁰ Անդ, p. 163:

¹²¹ Անդ, p. 164–165:

¹²² Անդ, p. 165–166:

*chanselier, en l'an de nostre seignor Jesu Christe mill et tressens et set. Et la escrit Paumier le escrivain, par le commandement dou roy»*¹²³:

32. 30 մայիս 1307 թ. - վենետիկցիների կողմից Հայոց սպարապետին տրված հավաստագիր¹²⁴:

33. Անդրե Սանուտոյի և Պոլ Մորոզինիի գալերների Այասին հասցրած դրամական վնասների չափերը¹²⁵:

33ա. 1307 թ. Հայաստանից Վենետիկ ուղղարկված փաստաթուղթը՝ Սիսի և Ս. Մարտոսի հանրապետությունների միջև կնքված պայմանագրի առիթով¹²⁶:

34. 7 հունվար 1314 թ. - Օշին թագավորի կողմից Մոնպելիեի վաճառականներին տրված հայերեն արտոնագիրը՝ Այասում առևտուր անելու վերաբերյալ՝ թագավորի ստորագրությամբ: Այն ուղղված է. «Ի Աւշին Եհաննէնց, սիր Միխայլէնց, Այասոյ բատանն գլխաւոր, որ առնուս զթագաւորին ձեռնագրազ բարձր համանքն. ու իջու ի բայժտանս ի թաթերն. ու որպէս գրած է ու համած ի մէկ այլ դեհն»¹²⁷:

35. 1320 թ. - Վենետիկի պետության կողմից Լևոն Դ-ին ուղարկած բողոքները, որով պահանջում են վերականգնել հին արտոնությունները: Պահանջն ուղղված է Հովհաննէս Կառողո Հայոց պալլին. «Nota quod vir nobilis Joannes Caroso, iturus bajulus Armenie, habuit rotulum in quo continentur omnia supradicta»¹²⁸:

36. 1 մարտ 1321 թ. - Լևոն Դ-ի խրիստովուլ-արտոնագիրը՝ տրված վենետիկցիներին, որի վերջնամասը վերականգնել է Վ. Լանգլուան. «E à grandir, nous avons escrit le royal haut escrit de nostre man, et l'avons garni de nostre boll d'or, en l'an d'Ermenie set sent et settante dix, indision quarte, ou mes de mars, premier jor. E ce fu fait à Sis la cite, par la man de Jehan chancelier, en l'an de nostre seignor Jesu Crist, mill et treissens vint et un. E l'a Vasile le escrivain, par le commendament dou roy»¹²⁹:

37. 16 մարտ 1321 թ. - Լևոն Դ-ի տված հայերեն արտոնագիրը՝ Մոնպելիեի վաճառականներին, որն ուղղված է Այասի Պետրոս պրոքսիմոսին և բաժնետան գլխավոր պարոն Կոնստանցին, գրեթե նույն բառերով, ինչ No. 34 արտոնագրում¹³⁰:

¹²³ Անդ, p. 166–169:

¹²⁴ Անդ, p. 169–170:

¹²⁵ Անդ, p. 170–175:

¹²⁶ Անդ, p. 176–177:

¹²⁷ Անդ, p. 178–179:

¹²⁸ Անդ, p. 179–182:

¹²⁹ Անդ, p. 182–184:

¹³⁰ Անդ, p. 185–186:

38. 24 նոյեմբեր (1330) 1331 թ. - Լևոն Դ-ի կողմից սիցիլիացիներին տրված հայերեն խրիստովու-արտոնագիրը՝ հետևյալ ավարտով. «Գրեցաւ ի թվականութեան մարդեղենալոյն Քրիստոսի յուսոյն մերոյ ՌԳՃԼ ի Հայոց մեծաց թուիս 22 ի ի յընիքտիոնիս Հոռոմոց ԺԵ, և յամսեան նուեմբերի ԻԴ ի ջանլերութեան Յանէս Իրիցանց և արքայհայրութեան Վասլի ծառայի Աստուծոյ և շնորհողի այսմն վերնոգրեալ պարգևացս»¹³¹:

Հավելված.

39. 1332 կամ 1333 թ. - Պիեռ Բրազադինոյի հաշվետվությունը՝ ուղարկված Վենետիկի դուքսին, ուր խոսվում է հայկական գործերի մասին¹³²:

40. 10 նոյեմբեր 1333 թ. - Լևոն Դ-ի խրիստովու-արտոնագիրը՝ տրված վենետիկցիներին: Թագավորի ստորագրությունից առաջ կարդում ենք. «Datum anno incarnationis Domini millesimo trecentesimo trigesimo tertio, et antea computationem scilicet Armenorum septingentesimo octuagesimo secundo, mense novemberis, die decima, sub cancelatu honorabilis viri domini Joannis»¹³³:

41. 10 հունվար 1335 թ. - Խրիստովու՝ տրված Բարդի առևտրական տանը¹³⁴:

Հավելված.

42. 1 մարտ 1341 - Լևոն Դ-ի նամակը՝ Վենետիկի դուքսին¹³⁵:

43. Մոտ 1340–1342 թթ. - Բալդուչի Պեգալոտիի հաշվետվությունը՝ Հայաստանի հետ արևմուտքի կապերի մասին¹³⁶:

44. 1302–1330 թթ. - Վենետիկի Պրեզադի խորհրդի տեղեկությունները՝ Վենետիկի հանրապետության և Հայաստանի առևտրական փոխհարաբերությունների մասին¹³⁷:

45. 19 հոկտեմբեր 1389 թ. - Լևոն Ե Լուսինյանի արտոնագիրը՝ տրված Մադրիդ քաղաքին¹³⁸:

46. 20 հուլիս 1392 թ. - Լևոն Ե-ի կտակը¹³⁹:

¹³¹ Անդ, p. 186–190:

¹³² Անդ, p. 191–192:

¹³³ Անդ, p. 193–194:

¹³⁴ Անդ, p. 195:

¹³⁵ Անդ, p. 196–198:

¹³⁶ Անդ, p. 199–203:

¹³⁷ Անդ, p. 203–205:

¹³⁸ Անդ, p. 205–206:

¹³⁹ Անդ, p. 207–211:

Հաշտության պայմանագրեր.

Թ. 1 – Հեթում Ա-ի և Իկոնիայի սուլթան Ալա ալ-Դին Քալկուբադի միջև կնքված պայմանագիրը (ընդօրինակված՝ Վ. Բովեի գրքից, հեղինակ՝ Սիմոն դը Սենթ Քվենտին)¹⁴⁰:

Թ. 2 – Լամբրոնի տեր Կոստանդինի և Իկոնիայի սուլթան Քեյկուբադի միջև կնքված պայմանագիրը (ընդօրինակված՝ Վ. Բովեի գրքից, հեղինակ՝ Սիմոն դը Սենթ Քվենտին)¹⁴¹:

Թ. 3 – Հեթում Ա-ի և Մանգու խանի միջև կնքված պայմանագրի հիմքերը (ընդօրինակված՝ Հայթոնի «Ծաղիկ պատմութեանց» երկից)¹⁴²:

Թ. 4 – Մանգու խանի և Հեթում թագավորի միջև պայմանագրի համաձայնեցումը (ընդօրինակված՝ Հայթոնի «Ծաղիկ պատմութեանց» երկից)¹⁴³:

Թ. 5 – 1268 թ. - Հեթում Ա-ի և Եգիպտոսի մամլուքյան սուլթան Բայբարս Բունդուկդարի միջև կնքված պայմանագիրը (ընդօրինակված՝ Հայթոնի պատմությունից)¹⁴⁴:

Թ. 6–7 – 1285 թ. մայիս - Լևոն Բ-ի և Եգիպտոսի մամլուքյան սուլթան Կալավոնի միջև կնքված պայմանագիրը (Կալավոնի արաբերեն կենսագրությունը)¹⁴⁵: Խոսքը Մուհի ալ-Դին Իբն Աբդ ալ-Ջահիրի Tašrif al-ayyām երկից կատարված քաղվածքի մասին է:

Թ. 7 – Հեթում Բ-ի՝ Բայդուց ստացած արտոնագիրը եկեղեցու գործունեության մասին (Բար Հեբրեոսի տեղեկությունն է)¹⁴⁶:

Թ. 8 – 1323 թ. - Լևոն Դ-ի և Եգիպտոսի սուլթան ալ-Մալիք ալ-Նասիրի միջև կնքված պայմանագիրը (տեղեկություն՝ Հովհաննես ԻԲ պապի նամակում)¹⁴⁷:

Հավելված.

Թ. 9 – Մամլուքյան սուլթանների նոտարական գրասենյակից դուրս եկած թղթառաջներ՝ ուղարկված Սսի Հայոց թագավորներին (քաղված ալ-Ումարիի Al-Taʿrif bi-l-mustalah al-šarīf երկից)¹⁴⁸:

¹⁴⁰ Անդ, p. 213:

¹⁴¹ Անդ, p. 214:

¹⁴² Անդ:

¹⁴³ Անդ, p. 215–216:

¹⁴⁴ Անդ, p. 216:

¹⁴⁵ Անդ, p. 217–231:

¹⁴⁶ Անդ, p. 232:

¹⁴⁷ Անդ, p. 232–233:

¹⁴⁸ Անդ, p. 234–235: Այս թղթառաջների մասին մանրամասն տե՛ս ներքևում՝ Գ. Դանիելյանի հատվածում:

Պատմագրական երկերում հիշատակվում են բազմաթիվ տեղեկություններ ամրոցների և տիրույթների գնման, գերիների փրկագնման, խաչակրաց և Հայոց իշխանական տների միջև ամուսնական պայմանագրերի և ստորակայական երդումների մասին, որոնք հիմնականում պիտի կատարվեին նոտարական գործակալների և հաշտարար դատավորների ու միջնորդների ներկայությամբ: Նմանատիպ գործարքներին վերաբերող փաստաթղթերն հիմնականում հաստատվում էին գրավոր ստորագրությամբ և նոտարի վավերացմամբ: Հռոմկլայի և Մերձավոր Արևելքի մի շարք ամրոցների գնման վերաբերյալ վավերագրերը թեպետ մեզ հիմնականում չեն հասել, սակայն դրանցից մեկը ԺԳ դարում տեսել է Սմբատ Սպարապետը, գրելով. «Իսկ կոմսն Ճօսլինն ետ տէր Գրիգորիսի և տէր Նէրսիսի զգիր ձեռին իւրոյ՝ զի Հռոմկլայն յաւիտեան մնասցէ աթոռ հայրապետացն Հայոց. և նոքա եղին զնոյն զիր յարկեղ սրբոյ աթոռոյն ի յիշատակ ապագայիցն, զի մի ոք եկեալ յազգայնոցն ի խնդիր լինիցի այնմ դղեկին (պատմիչը նկատի ունի Հռոմկլան – Ա.Բ.), այլ բարձեալ է զամենայն յիշատակ մարմնեղէն նոյն ձեռնագրան, եւ հաստատեալ է զհոգեւոր յիշատակն այնմ տեղոյ, որոյ ողորմեսցի Տէր»¹⁴⁹:

Ա 5. Վավերագրերի հետազոտման ճանապարհները.

Վիկտոր Լանգլուայի ստեղծած ժողովածոյում հավաքված են հիմնականում նվիրատվություններ և առևտրական արտոնագրեր, խաղաղության պայմանագրեր, թեպետ այդ դարաշրջանից պահպանվել են նաև Հայոց թագավորների և Հռոմի պապերի միջև նամակագրության նմուշներ և վավերագրերի խմբեր¹⁵⁰: Հեղինակը երկու խմբի է բաժանում Հայաստանի և Արևմուտքի նավագնացային պետությունների հետ փոխհարաբերությունները. Ջենովայի և Վենետիկի հանրապետությունների հետ կնքված երկարատև ու շարունակական փոխհարաբերություններ, ինչպես նաև պիզացիների, կատալոնացիների, պրովանսցիների, սիցիլացիների և այլոց հետ ժամանակավոր և եզակի առևտրական գործարքներ: Նման պայմանագրերում և արտոնագրերում կարգավորվում էին մաքսատնով անցնող ապրանքների գներն ու օտարերկրյա վաճառականների իրավունքները, նավաբեկության և ավիամերձ իրավունքին վերաբերող դիրքորոշումը, կտակով կամ անկտակ ժառանգման

¹⁴⁹ **Սմբատայ Սպարապետի** Տարեգիրք, աշխատասիրութեամբ Ս. վ. Ազըլեան (Վենետիկ, Ս. Ղազար, 1956), էջ 169 (այսուհետ՝ **Սմբատ**, Տարեգիրք (Վենետիկ):

¹⁵⁰ **Անդ**, p. 20–21: Այս գրքի համահեղինակ Մարի-Աննա Շևալիեի կազմած Իննոկենտիոս Գ պապի վավերագրերի ցանկ-նկարագրությունները տե՛ս գրքի երկրորդ գլխում:

խնդիրները, քրեական և քաղաքացիական պրոցեսները, անձի կարգավիճակը: Ըստ Լանգլուայի՝ ջենովացիներն առաջին ծովագնացներն էին, որոնց հետ 1200 թ. ընթացքում Հայոց թագավորը համաձայնեցրել է առևտրական արտոնություններ, սակայն 1201 թ. ստորագրված արտոնագիր-խրիստոբուլը կարծես արտոնությունների ցանկի ուրվագիծն է, քանի որ Լևոն Ա-ի համաձայնեցված մեկ այլ արտոնագրում շատ ավելի են լրացուցիչ պայմանավորվածությունները: Նույն դինամիկան տեսնում ենք նաև Լևոն Բ-ի և Հեթում Բ-ի արտոնագրերում: Նման վավերագրերը չորսն են և կնքված են 1201, 1215, 1288 և 1289 թթ., վերաբերում են երկկողմ փոխհարաբերությունների բազմազան խնդիրների: Վերջին վավերագրի ամփոփումը բերված է Կաֆարոյի Տարեգրությունում և համաձայնեցված է Հեթում Բ-ի հետ: Օրինակ՝ ըստ 1215 թ. վավերագրի՝ ջենովացիները արտոնություն են ունեցել առևտուր անելու Կիլիկիայի թագավորության ողջ տարածքում, բացի Օտտոն Տիբերայեցու, Ադամ Գաստոնցու, Վահրամ Կոռիկոսցու և Լևոն Կապանցու իշխանությունների տարածքից, որոնց վրա, հավանաբար, թագավորի իշխանությունը չէր տարածվում, կամ 1288 թ. կնքված արտոնագրում հստակեցվում է հայ կնոջ հետ ամուսնացած և կտակ չթողած ջենովացի առևտրականի շարժական և անշարժ ունեցվածքի ճակատագիրը¹⁵¹: Այս վավերագրերում ջենովացիների, ինչպես նաև մյուս առևտրականների համար բացված պատահանները և հաստատագրված արտոնությունները իր «Pratica della mercatura» գրքում ներկայացնում է նաև Բալդուչի Պեգալոտին:

Վենետիկցիների և Կիլիկյան Հայաստանի միջև կնքված վեց (1201, 1245, 1271, 1307, 1321 և 1333 թթ.), բովանդակությամբ գրեթե միմյանց կրկնող պայմանագիր է իր ժողովածոյում հրապարակել Վ. Լանգլուան: Վենետիկցիներն ունեին ջենովացիների գրեթե բոլոր արտոնությունները կիլիկյան Հայաստանում, այդ թվում՝ սեփական պալլի նշանակումը երկրում¹⁵²: Ժողովածոյում բավական կարևոր տեղ են զբաղեցնում վավերագրերը, որոնք խոսում են Պիզայի և Սիցիլիայի հետ առևտրական փոխհարաբերությունների մասին: Հատկապես հետաքրքիր է 1330 թ. առևտրական արտոնագիրը, կնքված Սիցիլիայի թագավոր Ֆրիդրիխ Ա-ի հետ: Այդ վավերագրի հրապարակումից քիչ առաջ Լևոն Դ-ը ամուսնացել էր նրա դստեր հետ: Հեղինակը նաև վկայում է Կիլիկյան Հայաստանի կապերը Ֆլորենտական Բարդի առևտրական ընկերության հետ, որի գործակալներից էր Բալդուչի Պեգալոտին, ինչպես նաև Պրովանսի քաղաքներ Նիմի և Մոնպելիեի վաճառականների հետ¹⁵³:

¹⁵¹ Անդ, p. 21–23:

¹⁵² Անդ, p. 23–25:

¹⁵³ Անդ, p. 25–26:

Իր աշխատանքի երկրորդ գլխում Վ. Լանգլուան խոսում է նախքան Կիլիկյան պետությունը հին Հայաստանի անցած պատմական ուղու մասին¹⁵⁴, անդրադառնում է Տավրոսի լանջերին, բյուզանդական տարածքների վրա նոր պետության ստեղծման պատմությանը, որն իր սկզբնավորման ժամանակներից մասնակցում է խաչակրաց շարժմանը¹⁵⁵: Խաչակրաց պետությունների հետ շփումներից Կիլիկյան Հայաստանում ծնունդ է առնում ավատատիրության մի նոր դրսևորում, որը տարբեր էր նախքան այդ գոյություն ունեցող հասարակական հարաբերություններից, ըստ Վ. Լանգլուայի՝ շատ նման եվրոպականին. թագավորից անկախ հողատերերի ժառանգական հողատիրույթներով (*franc-alleu*), դրանց տերերը երգում էին տալիս իրենց գերակային (սյուզերեն)¹⁵⁶: Հայոց թագավորության ավատատիրական կառուցվածքը առկա է ըստ Վ. Լանգլուայի Լևոնի Ա-ի թագադրության Սմբատի բերած՝ մասնակիցների ցուցակում, Իննոկենտիոս Գ-ի թղթերում և Կիլիկիայում գործող ասպետական կարգերի փաստաթղթերում և այլուր¹⁵⁷: Իր երկրում այս հասարակական կարգի ադապտացման շնորհիվ էլ Կիլիկիայի Հայոց թագավորությունն իր արժանի տեղն է զբաղեցրել եվրոպական պետությունների ընտանիքում՝ դառնալով ստորական ինչպես Հռոմի պապության, այնպես էլ Գերմանական կայսրության¹⁵⁸: Թեպետ Պ. Հալֆտերն ընդգծում է, որ Լևոն Ա-ի թագադրումից հետո էլ Կիլիկիայի հայկական պետությունը չի դարձել խաչակրաց Արևելքի պետությունների ընտանիքի լիիրավ անդամ¹⁵⁹, համենայն դեպս Կիլիկիայի ԺԲ-ԺԴ դարի հասարակությունը հետաքրքիր զուգահեռներ է ստեղծել եվրոպական հասարակության սիմվոլների (նշանային համակարգ), արարողակարգերի և հասարակության կառուցվածքի նմանողություն¹⁶⁰:

¹⁵⁴ Անդ, p. 27–29:

¹⁵⁵ Անդ, p. 29–30:

¹⁵⁶ Անդ, p. 30–31: Հմմտ. J. le Goff, *Pour un autre moyen âge. Temps, travail et culture en Occident: 18 essais [rec. d'articles]* (Paris: Gallimard, 1977), p. 349–420; A. Guerreau, “Fief, féodalité, féodalisme. Enjeux sociaux et réflexion historique”, *AESC*, 45^e année, № 1 (1990), pp. 137–166; B. Dominique, “La mutation féodale a-t-elle eu lieu ? (note critique)”, *AESC*, 47^e année, № 3 (1992), pp. 767–777; Ch. Lauranson-Rosaz, “Le débat sur la “mutatration féodale”: état de la question”, *SP* 26 (Bologne: 2002), p. 3–24:

¹⁵⁷ V. Langlois, *Le Trésor*, p. 31.

¹⁵⁸ Տե՛ս նաև P. Halfter, *Das Papstum und die armenier im frühen und hohen Mittelalter. Von den ersten Kontakten bis zur Fixierung der Kirchenunion im Jahre 1198* (Köln-Waimar-Wien: 1996), S. 242–243: Տե՛ս նաև իմ գրախոսությունը՝ Ա. Բոզոյան, «Պապությունն ու հայերը վաղ և զարգացած միջնադարում (առաջին շփումներից մինչև 1198 թ. եկեղեցական միության հաստատումը)», «Էջմիածին» ԺԲ (1996), էջ 115–128:

¹⁵⁹ P. Halfter, *Das Papstum*, p. 245:

¹⁶⁰ Տե՛ս M. Блок, *Короли-чудотворцы: очерк представлений о сверхъестественном характере королевской власти, распространённых преимущественно во Франции и в Англии*, пер. с фр.

Կիրիկիայի հայկական թագավորության ամենագլխավոր ինստիտուտը թագավորական իշխանությունն էր, որը վերջնականապես ձևավորվեց Լևոն Ա-ի (1187–1219) իշխանության տարիներին: Բյուզանդական հպատակությունը թոթափելու առաջին փորձը նկատվում է դեռևս ԺԲ դարի 30-ական թթ., որի մասին ուղղակի վկայություն է պահպանել հույն մատենագիր Միքայել Իտալիկոսը¹⁶¹: Լևոն Ա-ի խնդիրն էր իր պետության անկախությունը ճանաչելի դարձնել ինչպես արևմտավրոպական և բյուզանդական կայսրություններին, այնպես էլ Մերձավոր Արևելքի խաչակրաց և մահմեդական պետական միավորումներին: Լևոնի գործունեության կարևորագույն բնագավառներից մեկը երկրի կառավարման ներքին համակարգի ստեղծումն էր՝ հիմնված էր ավատական բուրգի վրա, որի գագաթին գտնվում էր թագավորը¹⁶²: Այդ իշխանությունը դիտվում է Աստծո կողմից տրված, և ժառանգվում է որդուց որդի¹⁶³: Թագավորին էին ենթարկվում բոլոր մեծ ավատական տիրույթներ ունեցող իշխանները, որոնք պատերազմի դեպքում իրենց զինվորական ջոկատներով պարտավոր էին հավաքվել, անսալով գերակայի հրամանը¹⁶⁴: Կիրիկիայում նաև գործում էր եվրոպական ավատատիրության հիմնական օրենքը՝ «իմ վասալի վասալը իմ վասալը չէ» սկզբունքը, որի վրա հիմնված է նաև Կիրիկիայում թարգմանված և երկրի օրենսդրական կարգավորիչների մեջ իր տեղն ունեցող «Անտիոքի Ասսիզներ» ժողովածուն¹⁶⁵: Լևոն Ա-ի օժմանը մասնակցած՝ թագավորին ենթակա, շուրջ 45 ստորակա ավատատեր իշխանների մասին են խոսում պատմիչներ Կիրակոս Գանձակեցին¹⁶⁶ և Սմբատ Սպարապետը¹⁶⁷: Թագավորն իրեն պատկանող տարածքները նվիրում, վաճառում կամ ծառայության փոխարեն ժամանավորապես հանձնում էր այլևայլ ավատերե-

В.А. Мильчиной, предисл. Ж. Ле Гоффа, Науч. ред. и послесл. А.Я. Гуревича (Москва, 1998), *ինչպես նաև* М. Пастуро, *Символическая история, или Гегельнская история* խոսում է կենդանական և բուսական սիմվոլների, գունային երանգների, հերալդիկայի և դրոշների, խաղերի և այլ տիպի սկզբնաղբյուրների մասին:

¹⁶¹ Այս մասին տե՛ս **Հ. Բարթիկյան**, «Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը» և Կիրիկիայի հայոց առաջին թագավորի խնդիրը», ՊԲՀ 4 (1984), էջ 216–220:

¹⁶² Այդ մասին տե՛ս **Ս.Վ. Բոռնազյան**, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները, էջ 47:

¹⁶³ **Սմբատ Սպարապետ**, Դատաստանագիրք, հավաքական տեքստը, ուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագր. Ա. Գալստյանի (Երևան, 1958), էջ 81, ՀԶ:

¹⁶⁴ **Սմբատ**, Տարեգիրք (Վենետիկ), էջ 236–238, 244–245:

¹⁶⁵ Տե՛ս **Սմբատ**, Դատաստանագիրք, էջ 82 և հմմտ. *Assises d'Antioche*, reproduites en français L.M. Alishan (Venise: Imprimerie arménienne médaillée, 1876), p. 9:

¹⁶⁶ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատասիրություն Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի (Երևան, 1961), էջ 158:

¹⁶⁷ Տե՛ս **Սմբատ**, Տարեգիրք (Վենետիկ), էջ 208–212: Հմմտ. *La chronique attribué au Connetable Smbat*, Introduction, traductions et notes par G. Dédéyan (Paris: 1980), p. 72–81:

րի, ասպետական կարգերի և վանքերի, որոնցից շատերն ամենայն հավանականությամբ ստորակայության երգում էին տալիս նրան¹⁶⁸: Երկրում հսկայական դեր ունեին նաև հին ժառանգական ազնվականական ընտանիքների (Ռուբինյաններ, Հեթումյաններ, Նաթանայելյաններ ևն.) ներկայացուցիչները, որոնք լայն իրավական արտոնություններ ունեին պետության կառավարման համակարգում¹⁶⁹:

Աշխարհիկ իշխանավորների առաջնահերթ պարտականություններից էր զինվորական ծառայությունը, որը մեծ հարգանք էր վայելում թե՛ Բագրատունյաց թագավորության կործանումից հետո երկրամասի հասարակական կյանքում, և թե՛ Բյուզանդական կայսրության արևելյան տարածքներում՝ Կապադովկիայում, Կիլիկիայում, Հյուսիսային Ասորիքում և Մերձեփրատյան տարածքներում հաստատված հայ ազգաբնակչության շրջանում: Ազնվականությունը, որի հիմնական մասը զբաղվում էր զինվորական գործով, կամբրոնի Հեթումյանների օրինակով, հաճախ էր ապստամբում թագավորական իշխանության դեմ¹⁷⁰: Այդ պայքարում ներքին ուժերը արտաքին աշխարհում ձեռք էին բերում նաև դաշնակիցներ, որոնց հետ պայմանագրեր էին կնքում¹⁷¹: Կիլիկիայի պատմությունը գիտե ավատատիրական ապստամբությունների բավական հետազոտված շղթա, որոնց մեծամասնության հիմնական պատճառներից մեկը թագավորական իշխանության ձեռքբերումն էր, ծածկված՝ լեգիտիմություն ապահովելու, պետության հիմքերն ամրապնդելու քողով¹⁷²:

Ավատական իշխող դասի մեջ առանձնահատուկ դեր էր կատարում բարձրաստիճան հոգևորականությունը, որն ուներ պետության կառավարմանը մասնակցելու, արդարադատություն իրականացնելու և եկեղեցու անունից ավատական տարածքները շահագործելու իրավունք¹⁷³: Եկեղեցու նվիրապետական համակարգում կարևոր դեր էին կատարում հոգևոր պաշտոնյաները. քահանայապետերը, քահանաները, վանահայրերն ու վանականները, որոնց իր «Ընդհանրական թղթում» առանձին դիմում է նաև Ներսես Դ

¹⁶⁸ **Սմբատ**, Տարեգիրք (Վենետիկ), էջ 208-209, հմմտ. **V. Langlois**, *Le Trésor*, p. 32:

¹⁶⁹ Տե՛ս **Սմբատ**, Դատաստանագիրք, էջ 82: Հմմտ. **Ա. Բողոյան**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 221:

¹⁷⁰ **V. Langlois**, *Le Trésor*, p. 33-39.

¹⁷¹ **Անդ**, p. 214, № 2:

¹⁷² **Լ. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները և հայերը, հտ. 2, Պատմա-քաղաքագիտական հետազոտություն (Երևան, 2007):

¹⁷³ Այս դասի հիմնական հոգևոր պարտականությունների մասին մանրամասն խոսում է Ներսես Շնորհալի կաթողիկոսն իր «Ընդհանրական թղթում»:

Շնորհալին, նրանց հետ կապելով ողջ հասարակության բարոյական առողջությունը. «Քանզի վերակոչին ծնող, դայեակ, վարդապետ, բժիշկ, դէտ, հովիւ, առաջնորդ, միջնորդ, դատաւոր, և այլ ևս հոլովագոյն անունս, որովք խորհուրդք աստուածապաշտութեանն կատարի...»¹⁷⁴:

Ավատական հասարակության բուրգում ավելի ցածր կանգնած դասը հոգևորականությունից և զինվորականությունից հետո քաղաքացիներն ու գյուղացիներն էին: Ըստ դարաշրջանի իրավահասարակական պատկերացումներին. «Արք քաղաքացիք առաւել քան զգեղջկունս պատուիցին, եւ գեղջկաց նմանապէս առաւել պատիւ իցի, քան բնակչաց ագարակի»¹⁷⁵: Քաղաքացիների և գյուղացիների դասերի միջև եղած տարբերություններին և նրանց նկատմամբ հասարակության վերաբերմունքին է անդրադառնում նաև Ներսես Շնորհալին¹⁷⁶: Նա առանձնահատուկ շեշտում է. «...քաղաքայնոցդ, և որք ի վաճառափողոցս նստիւք գնել և վաճառել, և առ արուեստաւորսդ...»¹⁷⁷: Կիլիկյան վավերագրերում նրանց անվանում են նաև «բուրճես» (*burgensis*)¹⁷⁸: Խոսքը միջնադարյան ավատական հասարակության կարևոր խավերից մեկի մասին է, որը հետագայում, Ֆրանսիական հասարակության մեջ ստացավ երրորդ դաս անվանումը, և որի անբախտելի մասն էր կազմում գյուղացիությունը՝ «երկրագործք և համօրէն ժողովրդականքդ», որոնք կիլիկյան վավերագրերում անվանվում են նաև *rustici*¹⁷⁹:

Կիլիկիայում թագավորական իշխանության կողմից ստեղծված պետական հաստատությունների մեջ, որն ավելի ընդգծված նմանություն ունի եվրոպական կառույցների հետ, Վ. Լանգլուան առանձնացնում է վավերագրերում արձանագրված թագավորական «դիւանը» (*regalis curia, la royal haut cort*)¹⁸⁰: Ըստ Ֆրանսիացի հետազոտողի՝ այս հաստատությունն առաջին անգամ հիշատակվում է Լևոն Ա-ի կառավարման տարիներից սկսած: Պետական այս ինստիտուտը Լ. Տեր-Պետրոսյանը նույնացնում է իշխանների կամ բա-

¹⁷⁴ Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսիսի Շնորհալոյ (Յերուսաղէմ, տպ. Սրբոց Յակովբեանց, 1871), էջ 4 (այսուհետև՝ Ներսէս Շնորհալի, ԹԸ):

¹⁷⁵ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրութեամբ Խ. Թորոսյանի (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975), էջ 32:

¹⁷⁶ Ներսէս Շնորհալի, ԹԸ, էջ 79:

¹⁷⁷ Անդ:

¹⁷⁸ V. Langlois, *Le Trésor*, p. 33.

¹⁷⁹ Ներսէս Շնորհալի, ԹԸ, էջ 80: Հմմտ. V. Langlois, *Le Trésor*, p. 33:

¹⁸⁰ Այս ինստիտուտի մասին հիշատակություն կա Լևոն Ա-ի և Լևոն Գ (Բ)-ի՝ Վենետիկին և Ջենովային տրված վավերագրերում: Տե՛ս V. Langlois, *Le Trésor*, p. 34:

րոնների ժողովի հետ, որն առաջին անգամ հիշատակվում է Ռուբեն Գ իշխանի գահակալման առիթով¹⁸¹: Ամենայն հավանականությամբ այս նույն հաստատությունն է, որ Ներսես Լամբրոնացու Լևոն Բ իշխանին ուղղված թղթում անվանվում է «արքունական ատեան»: Հատկանշական է, որ հիշատակված նամակում Ներսես Լամբրոնացին Լևոնին անվանում է «քրիստոսազոր իշխողն մեր Լևոն» (RHC, d.a., t. 1, p. 579), նրա նստավայրն անվանում է «արքունական ապարանք» (p. 581), թագավորի շուրջ ստեղծված է պալատ, ուր պաշտոնավարում են «պրոքսիմոս», «գունդատաբլ», «մարաջախտ» խաչակրաց պետություններից փոխառնված պաշտոնյաները (RHC d.a., t. 1, p. 598): Ակնհայտ է, որ դեռևս թագավորական գահին բարձրանալուց առաջ Լևոն Բ-ն ստեղծել է թագավորական իշխանության կառավարման մի ինքնաբավ համակարգ:

Վ. Լանգլուայից¹⁸² սկսած՝ հայագիտության մեջ հստակորեն չեն տարբերակվել Կիլիկյան պետության մեջ եղած կառավարման երկու ինստիտուտները՝ նոտարական գրասենյակը կամ դիվանը (*chancellerie*) և իշխանների կամ բարոնների ժողովը (թագավորական ատյան): Ամենայն հավանականությամբ, դիվանը կամ նոտարական գրասենյակը ստորագրավել է բարոնների կամ թագավորական ատյանին: Եթե թագավորական ատյանի անդամ են դարձել Կիլիկյան պետության մեջ եղած իշխանները՝ նշանավոր հողատերավատատերերը, ապա նոտարական գրասենյակի ղեկավարին ամենայն հավանականությամբ նշանակել է թագավորը՝ ավելի հաճախ մայրաքաղաքներ Սսի կամ Տարսոնի եպիսկոպոսներից: Կիլիկիայի հայկական նոտարատների աշխատանքի մասին չափազանց քիչ տեղեկություններ ունենք: Համենայն դեպս, կարելի է ենթադրել, որ ինչպես թագավորական նոտարատանը, այստեղ ևս համագործակցում էին լատին նոտարների հետ¹⁸³:

Ինչպես ասացինք, «արքունական ատյան»-ի մասին կոնկրետ վկայություն կա 1193/1194 թ. գրված, Տարսոնի եպիսկոպոս Ներսես Լամբրոնացու «առ Լևոն» թղթում, որը համաձայն Վ. Լանգլուայի, էդ. Դյուլորիեի և Լ. Տեր-Պետրոսյանի համապատասխանում է խաչակրաց արևելքի «*regis / regalis curia*» և «*roial aute cort*» ինստիտուտներին¹⁸⁴: Այստեղ խոսքն իրավամբ արքունական

¹⁸¹ Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը, հտ. Բ*, էջ 153-157:

¹⁸² V. Langlois, *Le Trésor*, p. 34.

¹⁸³ Այդ մասին տե՛ս J. Richard, "La diplomatie royale dans les royaumes d'Arménie et de Chypre (XIIe–XVe siècles)", *Bibliothèque de l'École des chartes* 124 (1986), p. 69–86 և հմմտ. նույնի՝ "Le plurilinguisme dans les actes de l'Orient latin", «La langue des actes», Actes du Xie Congrès international de diplomatique (Troyes, jeudi 11 – samedi 13 septembre 2003).

¹⁸⁴ Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը, հտ. Բ* էջ 154-155 և հմմտ. V. Langlois, *Le Trésor*, p. 34:

ատյանի կամ բարոն-իշխանների ժողովի մասին է, որն ըստ Ներսես Լամբրոնացու վերոհիշյալ նամակի կարող էր քննել աշխարհիկ և հոգևոր գործերը և համապատասխան վճիռ արձակել: Այս հաստատության և Սսի արքեպիսկոպոսի իշխանության ներքո գտնվող պետական գրասենյակի լիազորությունների հստակեցման ճանապարհի հետազոտման համար հայագիտությունը դեռևս անելիքներ ունի: Պարզ է, որ արքունական ատյանը ունեցել է թագավորից հետո ամենաբարձր իշխանությունը, որը հաստատում է Լամբրոնացու թղթի համապատասխան տեղին. «Եթէ իրաւացուցանէ քո արքունական ատեանդ առանց քննելոյ և դատելոյ ձգել զիս յանպատուութիւն, ընդգրկեմ զնոյն որպէս զՔրիստոսի աթոռակցութիւն»¹⁸⁵: Այս պետական ինստիտուտի մասին սա բացառիկ վկայություն է, որը կարիք ունի նոր լուսաբանման:

Ըստ Ֆրանսիացի երկու հետազոտողներ Վ. Լազլուայի և Էդ. Դյուլորիերի¹⁸⁶ այդ ինստիտուտը փոխառնված է խաչակիրներից, տեսակետ, որն իմ կարծիքով մանրագննին հոտազոտության կարիք ունի: Նման իշխանական խորհրդի գոյության մասին տեղեկացնում են Հայոց պատմության ավելի վաղ գրված սկզբնաղբյուրները: Դեռևս նախքան թագավորական իշխանության պաշտոնական միջազգային ճանաչումը (1198 թ.) Լևոն իշխանը Կիլիկիայում ստեղծվել էին պետության կառավարման հիմնական ինստիտուտները, որի հիմքում գտնվում էր իշխանական ատյանը: Այդ կառավարման ինստիտուտի կայացնելիք որոշման մասին Ներսես Լամբրոնացին գրում է. «Եթէ իրաւացուցանէ քո արքունական ատեանդ առանց քննելոյ և դատելոյ ձգել զիս յանպատուութիւն, ընդգրկեմ զնոյն որպէս զՔրիստոսի աթոռակցութիւն»¹⁸⁷: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ ի սկզբանե միմյանցից պետք է առանձնացնել «արքունական ատյանը» և դիվանատուն՝ նոտարական գրասենյակը, որոնք Վ. Լազլուայի հետազոտության մեջ շփոթված են: Ամենայն հավանականությամբ, արքունական ատեանին կամ մեծ իշխանների ժողովին ստորադրված էր արքունական դիվանը, որի ղեկավարը Տարսոնի կամ Սսի եպիսկոպոսն էր, երբեմն էլ թագավորին մոտ կանգնած կրթյալ աշխարհիկ գործիչներից որևէ մեկը (օրինակ, ըստ 1288 թ. հայերեն վավերագրի՝ Հեթում ջանցլերը): Դիվանի ղեկավարը, որին ատենադպիր կամ ջանցլեր էին անվանում, հավանաբար նշանակվում էր թագավորի կողմից: Նման կարգավիճակ ուներ Վրաստանում

¹⁸⁵ RHC d.a., t. I, p. 583.

¹⁸⁶ V. Langlois, *Le Trésor*, p. 34; RHC, d.a., I, p. 583, n. 1.

¹⁸⁷ Անդ, p. 583:

մծիգնոբարթուխուցես-ճկոնդիդելի ինստիտուտը¹⁸⁸: Այս պետական պաշտոնյաների գործառույթների համեմատական հետազոտությունը հետաքրքիր նյութ կարող է տալ Մերձավոր Արևելքի այս երկու քրիստոնեական պետությունների պետության կառուցվածքի հետազոտման ասպարեզում: Ուրեմն, հիմք ընդունելով շրջանառության մեջ եղած վկայությունները, հետագա հետազոտություններում պետք է հստակորեն միմյանցից առանձնացնել և տարբերակել «արքունական ատյանը» և «արքունական դիվանը»:

Բացի այս հաստատություններից, Ներսես Լամբրոնացին խոսում է նաև երկրի կառավարման համակարգում օգտագործվող մի շարք տերմինների մասին. «սիր և պրոքսիմոս, գունդստապլ և մարաշախտ, և ձիավոր և լեճ» և բերում է դրանց մի մասի արևելքում օգտագործվող տարբերակները. «ամիրայ և հեճուպ և մարզպան և սպայասալար»¹⁸⁹: Սա նշանակում է, որ դեռևս թագավորություն չհռչակած Կիլիկիայում ստեղծվել էին պետական կառավարման մի շարք կարևորագույն ինստիտուտներ, որոնց առանձնացումը և յուրաքանչյուրի գործառույթների բացահայտումը պահանջում է աղբյուրագիտական նյութի համակողմանի հետազոտություն:

Ա 6. Կիլիկիայի կառավարման համակարգը.

Ըստ Վ. Լանգլուայի՝ Լևոն Ա-ի ջենովական վավերագրերում հիշատակված *Curia Sisensis episcopi* հաստատությունը համապատասխանում է Նրուսահեմի Ասսիզներում «*cour des Bourgeois*» կամ «*du Vicomte*» ինստիտուտին¹⁹⁰: Արդարադատության այս ինստիտուտն ըստ Խ. Թորոսյանի հայտնի է նաև Մխիթար Գոշի «Դատաստանագրքին»¹⁹¹: Ժամանակին Խ. Թորոսյանը ցույց է տվել, որ Վ. Լանգլուան իր աշխատություններում Կիլիկյան Հայաստանի դատական համակարգի երկու մոդել է առաջարկում¹⁹²: Հիմնվելով եղած գրականության և ԺԲ-ԺԳ դդ դատաստանագրքերի վրա Խ. Թորոսյանը Կիլիկիայում շուրջ երկու տասնյակ դատարանների տեսակներ է առանձնացնում¹⁹³,

¹⁸⁸ Տե՛ս Եվգենի Գրեյնգոլցի և Էմիլ Կրեյնի և Էմիլ Կրեյնի «Միջին Արևելքի պատմությունը» (Երևան, 2017), թ. 26–28, 63–64:

¹⁸⁹ Անդ, p. 598:

¹⁹⁰ V. Langlois, *Le Trésor*, p. 34:

¹⁹¹ Հայագիտության մեջ այս խնդրի շուրջ հրապարակվել են բազմաթիվ աշխատանքներ, որոնց ընդհանուր բնութագիրը տվել է Խ. Թորոսյանը: Տե՛ս X. Торосян, *Суд и процесс в Армении X–XIII вв.* (Ереван, 1985), с. 52–89:

¹⁹² V. Langlois, *Essai*, p. 47–48, նույնի՝ *Le Trésor*, p. 34–35: Համեմատությունը տե՛ս X. Торосян, *Суд и процесс*, с. 90–91:

¹⁹³ Անդ, с. 107:

որոնց գոյությունը դեռևս պետք է ապացուցվի, դրանցից յուրաքանչյուրի մասին մատենագրական և վավերագրական տեղեկություններ հավաքելով:

Վավերագրերի հրապարակմանը նվիրված իր գրքի առաջաբանում Վ. Լանգլուան անդրադառնում է նաև ավատատերերի իրավունքներին ու պարտականություններին, հայկական իրավունքի նորմերին և օտարերկրացիների արտոնություններին¹⁹⁴: Այստեղ նա առանձնացնում է վավերագրերում հիշատակված մի շարք եզրաբառեր. *contrarietas* (միջնորդական իրավունք), *molestia* (առևտրական և տնտեսական գործերում պարտադիր միջնորդություն), *servitut* (ծառայություն), *pactum* (պայմանագիր), *achoisson* (գերակային սրվող հարկ կամ ծառայություն), *exaction* (առևտրից թագավորին վճարվող տուգանք), *angoria tribute* (ճանապարհային պարհակ), *dime* (տասնորդ), *consuetudo* (տեղերում վճարվող արտակարգ հարկ), *dzarca* (գողացված ապրանքի 1/3-ը պետությանը վճարելու պարտավորություն), *driectura terrae et maris* (ցամաքով և ծովով տեղափոխվող ապրանքի վրա դրված հարկ, կամ մաքս), *transitus* կամ *passagium* (սահման կամ կամուրջով անցնելու հարկ), *tabulagium* (տոնավաճառում և խանութում ապրանքը ցուցադրելու իրավունք), *anchoragium* (խարիսխ ձգելու իրավունք), *Datio, driectura, tributum* (տուգանք-հարկեր), *capitation* (գլխահարկ)¹⁹⁵: Ըստ Վ. Լանգլուայի, Կիլիկյան Հայաստանում հայկական գրավոր և սովորութային իրավունքի հետ համատեղ, ուր տեղ պիտի գտած լինեին նաև բյուզանդական օրենքները, զուգահեռաբար օգտագործվում էին նաև Երուսաղեմի ասսիզները¹⁹⁶: Ֆրանսիացի գիտնականը օրինակ է բերում ավատական կալվածքի ժառանգման բնագավառից և վավերագրերից: Խոսում է եվրոպական իրավունքում նավաբեկության ենթարկվածի իրավունքի և անկտակ մնացած սեփականության ժառանգման կարգի մասին¹⁹⁷: Թագավորական իշխանության հիմնական ինստիտուտներին և քաղաքական պարտականություններին անդրադառնալիս Վ. Լանգլուան խոսում է Լևոն Ա-ի կողմից արևելյան արմատներ ունեցող խաչակրաց կամ արևմտյան թագավորություն ստեղծելու մասին, որի կառավարման ինստիտուտների առաջին նկարագրողներից է առ Լևոն թղթում Տարսուների արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացին¹⁹⁸:

¹⁹⁴ V. Langlois, *Le Trésor*, p. 35–40:

¹⁹⁵ Անդ, p. 36–37:

¹⁹⁶ Անդ, p. 37–38:

¹⁹⁷ Անդ, p. 39–40:

¹⁹⁸ Անդ, p. 40–52:

Վ. Լանգլուան վավերագրերի ժողովածոյի առաջաբանի երրորդ գլուխը նվիրել է թագավորութանն ու ազնվականութանը, կաթողիկոսարանին և հոգևորականութանը¹⁹⁹: Առաջին ենթագլխում հեղինակն հիշատակում է Կիլիկիայի թագավորութանը նախորդած պետական կազմավորումները, անդրադառնում՝ Լևոն Ա-ի ստեղծած պետական ինստիտուտներին և թագավորական ընտանիքին պատկանող տիրույթին²⁰⁰, անդրադառնում է վավերագրերի բանաձևերում թագավորական իշխանության որակումներին: Նկատվել է, որ դրամների վրա հայոց թագավորների իշխանության աղբյուրը արձանագրված է «Կարողութեամբն Աստուածոյ» բանաձևով: Ֆրանսիացի հետազոտողը ներկայացնում է Կիլիկիայի պատմության համառոտ ժամանակագրությունները, թագավորական ավատն իր հիմնական քաղաքներով²⁰¹: Երկրորդ ենթագլխում Վ. Լանգլուան խոսում է ազնվականության և խոշոր հողատիրության մասին, որոնք գտնվում էին թագավորական իշխանության ենթակայության ներքո²⁰²: Երրորդ ենթագլուխը նվիրված է Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգին Կիլիկիայի պետական համակարգում, իշխող կաթողիկոսների ժամանակագրությանը, թագադրման պրոցեսում նրանց դերին, ինչպես նաև տարածաշրջանում գործող հույն, լատին և ասորի եկեղեցիներին²⁰³:

Չորրորդ ենթագլխում Վ. Լանգլուան անդրադառնում է Կիլիկյան Հայաստանում օտարերկրացիների հողատիրույթների խնդրին, ներկայացնելով նաև Երուսաղեմում ստեղծված Տաճարականների, Հոսպիտալներների և Տևտոնականների տիրույթները²⁰⁴: Շարունակության մեջ խոսվում է իտալական ծովային հանրապետությունների (Ջենովա, Վենետիկ) և այլ քաղաք-պետությունների (Պիզա և այլն) Կիլիկիայում ունեցած տիրույթների և արտոնությունների մասին²⁰⁵:

Վ. Լանգլուայի ներածության հինգերորդ գլուխն անվանված է Հայաստանի առևտուրը Ռուբինյան թագավորների իշխանության ներքո, ուր ընդհանուր գծերով ներկայացվում է Արևելքի հետ Արևմուտքի առևտրական փոխհարաբերությունները, անդրադարձ է կատարվում այդ գործում Կիլիկիայի խաղաղած դերին²⁰⁶: Այնուհետև անդրադառնում է մաքսատներին և

¹⁹⁹ Անդ, p. 53–57:

²⁰⁰ Անդ, p. 53–55:

²⁰¹ Անդ, p. 55–56:

²⁰² Անդ, p. 57–63:

²⁰³ Անդ, p. 63–71:

²⁰⁴ Անդ, p. 72–82:

²⁰⁵ Անդ, p. 82–88:

²⁰⁶ Անդ, p. 88–94:

այնտեղ մուծվող մաքսերին, ինչպես նաև տարբեր օտարերկրյա վաճառականների արտոնություններին, ինչպես և արտահանման և ներկրման խնդիրներին²⁰⁷: Հեղինակն իր բերած նյութերով նպաստում է Կիլիկյան առևտրի միջազգային նշանակության բացահայտմանը²⁰⁸:

Կիլիկիայում գոյություն ունեին նաև արքունական տարբեր գործակալություններ (մաքսատներ, շուկաներ, առևտրական տներ և այլն), որոնք պետք է նպաստեին օտարերկրացիների առևտրական գործունեությանը և ապահովեին պետության մաքսերի և հարկերի գանձումը: Վենետիկցիները, ջենովացիները և Կիլիկիայի հետ պայմանագրեր ստորագրած տերությունները Կիլիկիայի մի շարք խոշոր քաղաքներում (Տարսոն, Մոպսուեստիա, Սիս Ադանա, Այաս) հաստատում էին սեփական ներկայացուցչություններ, կառուցում էին եկեղեցիներ, աշխատեցնում էին արհեստանոցներ և մանուֆակտուրաներ, ունեին իրենց գերեզմանոցներն ու պահեստները²⁰⁹: Միջերկրական ծովի առևտրական քաղաք-պետություն Ջենովան Այասում պահում էր սեփական առևտրական նոտարատունը, որի աշխատանքային արդյունքների մի մասը պահպանված է: Հավանաբար նմանատիպ պայմանագրերի արդյունք են նաև արդեն ԺԳ դարի ընթացքում բազմիցս հիշատակվող հայկական հոգեսները, վանքերն ու եկեղեցիները Իտալիայի գրեթե ողջ տարածքում²¹⁰: Կիլիկիայի մի քանի քաղաքներում իրենց նոտարատներն ունեին ջենովական և վենետիկյան հանրապետությունները ներկայացնող նոտարները: Ցավոք, շրջանառության մեջ են միայն Այասում գործած երկու նոտարների 1274, 1277 և 1279 թթ. գրառման մատյանները: Որոշ վավերագրեր են պահպանվել Ջենովական

²⁰⁷ Անդ, ք. 94–98:

²⁰⁸ Անդ, ք. 99–101:

²⁰⁹ Այդ արտոնություններն ամրագրվում էին վերը նշված արտոնագրերում:

²¹⁰ Հայոց հետ մշակութային փոխհարաբերությունների բազմաթիվ վավերագրեր են հասել, որոնցով հաստատվում է հայերի ներկայությունը Հռոմում, Ֆլորենցիայում, Ռիմինիում, Անկոնայում, Օրվիետոյում, Վիտերբոյում, Սիենայում, Սալեռնոյում, Կավալոյում, Ամալֆիոյում, Նեապոլում, Ջենովայում, Պադովայում, Վենետիկում, Տարվիզիոյում, Մանտովայում, Միլանում, Պավիայում, Լուկայում, Բոլոնիայում, Պիզայում, Լիվոռնոյում, Մալթայում, Սիցիլիայում: Այդ վավերագրերում են ընդօրինակվել բազմաթիվ ձեռագրեր, որոնց մասին խոսում են ԺԳ–ԺԴ դարերի բազմաթիվ հիշատակարաններ ու հիշատակագրություններ: Տե՛ս ՀԶԶ, ԺԳ դար, կազմեց Ա.Ս. Մաթևոսյան (Երևան, 1984), էջ 155, 217, 218, 224, 274, 313, 369, 546 և այլն և ՀԶԶ, ԺԴ դար, կազմեց Լ.Ս. Խաչիկյան (Երևան, 1950), էջ 3, 69, 75, 78, 190, 238, 503 և այլն: Ողջ միջնադարի ընթացքում Իտալիայի հետ Հայաստանի հարաբերություններին վերաբերող վկայությունները մանրագնեսին հետազոտության է ենթարկել գերաշնորհ Լ. Զեքիանը: Տե՛ս Լ.Բ. Zekiyan, “Le colonie Armene del medio evo in Italia e la relazioni culturali Italo-Armene (Materiale per la Storia degli Armeni in Italia)”, *Atti del primo simposio internazionale di arte Armena (Bergamo, 22–30 giugno 1975)* (Venezia, San Lazzaro: 1978), ք. 803–931:

առևտրական հանրապետության Կիպրոսում²¹¹, Կաֆայում²¹², և այլուր գտնվող նոտարական գրասենյակներից, որոնք սերտ կապեր էին հաստատել Կիլիկիայի քաղաքների հետ:

Ա 7. Կիլիկյան նավահանգիստների նշանակությունը.

ԺԳ դարի երկրորդ կեսին, Մերձավոր Արևելքում խաչակրաց պետությունների կործանումից, մանավանդ՝ նշանավոր նավահանգստային քաղաքներ Սուրի և Աքքայի անկումից հետո, մեծացավ Կիլիկյան Հայաստանի ծովափերի և առևտրական նավահանգիստների նշանակությունը Արևելքի հետ եվրոպական քաղաք-պետությունների և մեծ տերությունների փոխհարաբերություններում: Այդ մասին են վկայում ԺԳ դարի հեղինակներ վենետիկցի Մարինո Սանուտո Տորսելոյի և Ֆլորենտացի Զիովանի Ուցանոյի գրքերը, ուր մանրամասն նկարագրվում են Կիլիկիայի ծովափնյա հանգրվանները ի սպաս Եվրոպայի ռազմական, տնտեսական և քաղաքական շահերի՝ օգտագործելով նաև այդ ասպարեզում կուտակված հին աշխարհի գիտելիքները²¹³: Գաղտնիք չէ, որ նշված հեղինակներից առաջինն իր գիրքը շարադրում էր՝ նկատի ունենալով, որ շարունակվելու են կազմակերպվել նոր խաչակրաց ռազմարշավներ դեպի Մերձավոր Արևելք, այդ իսկ պատճառով հեղինակն ընդգծում է Կիլիկյան նավահանգիստների ռազմավարական նշանակությունը:

Իսոսի ծոցի նավահանգիստների դերի բարձրացմանը նպաստել է նաև Մոնղոլական տերության ստեղծումը, որի դաշնակիցը դարձավ Կիլիկիայի Հայոց թագավորությունը: Մոնղոլական Իլխանությունը՝ Եգիպտոսի մամլուքների գլխավոր հակառակորդը Մերձավոր Արևելքում, փորձում էր իր թշնամու տնտեսական հզորությանը հարված հասցնել՝ գլխավոր առևտրական ճանապարհները տեղափոխելով Ալեքսանդրիայից, Բաղդադից ու Դամասկոսից

²¹¹ **M. Balard**, *Notai genovesi in Oltramare atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto* (11 ottobre 1296 – 23 giugno 1299) (Genova, 1983); **նույնի՝** *Notai genovesi in Oltremare atti rogati a Cipro: Lamberto di Sambuceto* (31 marzo 1304 – 19 luglio 1305, 4 gennaio – 12 luglio 1707), *Giovanni de Rocha* (3 agosto 1308 – 14 Marzo 1310) (Genova: 1984):

²¹² **M. Balard**, *Gênes et l'outre-mer. I. Les actes de Caffa du notaire Lamberto di Sambuceto, 1289-1290* (Documents et recherches sur l'économie des pays byzantins, islamiques et slaves, et leurs relations commerciales au moyen âge XII) (Paris-La Haye: Mouton & Co, 1973).

²¹³ Մեզ հետաքրքրող գիտելիքների մասին ավելի մանրամասն տե՛ս **Ղ. Ալիշան**, *Սիսուան*, էջ 299–302:

Փոքր Ասիա՝ Տրապիզոն ու Սինոպ: Այսպես ևս, ըստ այդ ծրագրի տրամաբանության, դարձաւ Թավրիզից եկող ցամաքային ճանապարհի վերջին հանգրվաններից մեկը՝ Միջերկրական ծովում ձեռնոց նետելով վենետիկյան հովանավորության ներքո գտնվող Եգիպտոսի Ալեքսանդրիա նավահանգստին²¹⁴, մրցակցելով նաև վերոհիշյալ երկու սևծովյան նավահանգստային քաղաքների հետ, ուր իր գործունեությունն էր ծավալել Ջենովան:

Դրանով պետք է բացատրել այն մեծ հետաքրքրությունը, որ տարածաշրջանի նկատմամբ ցուցաբերում էին եվրոպական առևտրական պետությունները՝ միջնորդ առևտրի ամենագործուն կենտրոններ Ջենովան և Վենետիկը՝ իրենց քաղաքական հակամարտությունն ու պատերազմական գործողությունները 1293 թ. ծավալելով Կիլիկիայի ծովափի անմիջական հարևանությամբ. «Ճնորհացն դալէք :ԺԲ: կռուեցան ի յԱյաս ընդ :ԼԲ: դալէք և ընդ դարիթ Վնիսեացոցն եւ շահեցան ի նոցանէ :ԻԴ: դարիթ եւ ընդ դալէ»²¹⁵: Հետևելով մոնղոլներին՝ Հեթում Կոռիկոսցի ժամանակագիրը հրճվանքով է ընդգծում Կիլիկիայի հետ նույն ճամբարում գտնվող ջենովացիների հաղթանակը վենետիկցիների նկատմամբ: Միջերկրական ծովի առևտրում Ալեքսանդրիայի հեղինակության բարձրացմանն ու վենետիկցիների մենաշնորհի հաստատմանն ուղղված լուրջ քայլեր էին նաև մամլուքների կողմից Այասի պարբերական ավարառումները²¹⁶: Բերված օրինակները ցույց են տալիս, թե որքան լուրջ հակառակորդ էր իր առևտրական մրցակիցների համար Այաս նավահանգիստը, որի կորուստն էլ հավանաբար կանխորոշեց Կիլիկիայի հայկական պետության կործանումը:

Վավերագրերը ցույց են տալիս, թե Կիլիկիայի թագավորները որքան շատ էին շահագրգռված Եվրոպայի հետ առևտրական կապեր ունենալու խնդրում: Վավերագրական նյութերի մեր ունեցած պակասը հաճախ լրացնում են Կիլիկյան ճանապարհները և բնակավայրերը նկարագրող ուղեգրությունները և տարբեր եվրոպական ֆինանսական տների ներկայացուցիչների հաշվետվությունները, որոնք հաճախ ստուգողական այցերով ժամանում էին տարածաշրջան: Ըստ Բալդուչի Պեգոլոտտիի՝ Պրովանսի, Նիմի, Մարսելի վաճառականները ևս արտոնություններ ունեին Կիլիկիայում և մուտքի ու ելքի համար վճարում էին սոսկ երկու տոկոս մաքս: Այդ արտոնությունը հաստատում են Մոնպելիեի վաճառականներին 1314 թ. հունվարի 7-ին և 1321 թ.

²¹⁴ Г. Микаелян, *История Киликийского Армянского государства* (Ереван, 1953), с. 350–401.

²¹⁵ ՄԺ, հտ. 1, կազմեց՝ Վ. Հակոբյան (Երևան, 1951), էջ 86, հմմտ. նաև R. Lopez, *Storia della colonie genovesi nei mediterraneo* (Bologna, 1938), p. 230; Fr. Hild & H. Hellenkemper, *Kilikien und Isaurien*, S. 163:

²¹⁶ Եգիպտոսի Մամլուքները նավահանգստային քաղաքը գրոհել կամ ավարառել են 1266, 1275, 1283, 1298, 1305, 1320, 1322, 1337 թվականներին (այդ մասին տե՛ս Անդ, 161–162):

մարտի 16-ին տրված շնորհագրերը: Դրանց հայերեն բնագրերը պահպանվել են Մոնպելիեի քաղաքային արխիվում²¹⁷: Վավերագրերից առաջինը վավերացրել է Օշին թագավորը (1308–1320)՝ կարգադրելով Այասի մաքսապետ, պրոքսիմոս Թորոս Միխայլենցին կատարել հրամանը: Երկրորդ արտոնագիրը տրված է Օշինի որդի՝ տասներկուամյա Լևոն Դ-ի (1320–1342) անունից: Այստեղ հիշատակվում է նախորդ շնորհագիրը, սակայն այս անգամ մանկահասակ թագավորի գիտությամբ վավերագիրը ստորագրել են նրա երկու խնամակալները: Կարգադրության կատարումը թողնված է Այասի մաքսատան գլխավոր պրոքսիմոս Պետրոսի տնօրինությանը: Այս վավերագրերի գոյությունը խոսում է այն մասին, որ, հետևելով միջազգային պրակտիկային, իշխանության յուրաքանչյուր փոփոխության և սերնդից-սերունդ անցման ժամանակ պայմանագրերը և գործարքային բնույթի վավերագրերը Կիլիկիայում նորոգում էին: Այս փաստը հույս է ներշնչում, որ դեռևս ոչ բոլոր վավերագրերն են մեզ հայտնի, և այս ասպարեզում հնարավոր են նոր հայտնագործություններ:

Բավական լայն արտոնություններ էին տրվում նաև Կիլիկիայում գործունեություն ծավալած առևտրական քաղաքներին: Ջենովայի և Վենետիկի հետ կնքված պայմանագրերը վկայում են, որ նրանց թույլ էր տրվում ապրել իրենց շնորհված թաղամասերում, ունենալ սեփական դատարան, եկեղեցիներ ու գերեզմանատներ, աշխատեցնել արհեստանոցներ, կառուցել իջևանատներ, բաղնիքներ, դպրոցներ: Կիլիկիայում մահացած օտարերկրացիների գույքը չէր բռնագրավվում, այլ մի շարք իրավական ձևականությունների կատարումից հետո, վերադարձվում էր հանգուցյալի ժառանգներին կամ կտակի առկայության դեպքում՝ նրա հայրենիքին: Կիլիկիայի Հայոց պետության հետ առևտուր անող քաղաքների ու պետությունների հետ փոխհարաբերություններ մշակելիս, Կիլիկիան պայմանավորվում էր երկկողմանիորեն հրաժարվել ափամերձության իրավունքից և տիրոջն էր վերադարձնում նավաբեկության հետևանքով ափ նետված գույքը²¹⁸: Պետությունն ինքն էր հատուցում կամ ստիպում էր մեղավորին՝ տուժածին վերադարձնել Կիլիկիայի սահմաններում օտարերկրացիներին հասցված վնասը: Այդ մասին լավագույն վկայությունն է Վենետիկի հանրապետության իշխանությունների առջև բարձրացված իրավական գործը, որով Կիլիկիայի իշխանությունները պահանջում էին հատուցել մարսելցի վաճառական Պետրո Բուատրոլինգուային Կոռիկոսի մոտ

²¹⁷ V. Langlois, *Le Trésor*, p. 178–179, 185–186:

²¹⁸ Այս թեման հետազայում զարգացրեց իրավաբան Յ. Բարսեղովը տե՛ս Ю.Г. Барсегов, «Отказ армян от берегового права», ՊՔՀ 1 (1971), էջ 95-110, *ինչպես նաև նույնի՝* «Борьба Киликийской Армении против пиратства в Среднеземном море», ՊՔՀ 3 (1973), էջ 71–84:

հասցված վնասը: Հետաքրքիր է նաև, որ վավերագրում մարսելցու օգտին վկայություններ են տալիս նարբոնացի վաճառական Պետրոս Դանիելիսը և պիզացի առևտրական Բոնուսինա Սլբերտինին²¹⁹:

Իտալական որոշ քաղաք-պետությունների, հատկապես Ջենովայի ներկայացուցիչներին հաջողվել է Կիլիկիայում ունենալ սեփական նոտարական գրասենյակներ: Կոռնելիո Դեսիմոնին 1881 թ. սկիզբ դրեց Ջենովայի քաղաքային արխիվում պահպանվող, Կիլիկիային վերաբերող նոտարական արձանագրությունների հրատարակությանը²²⁰: Իր ներածական հոդվածում հեղինակը հիշատակում է Վ. Լանգլուայի հրատարակած 1201 և 1215 թթ. կնքված արտոնագրերը, որոնցով ջենովացիները կարողացել էին գաղութ ունենալու իրավունք ձեռք բերել Կիլիկիայի Սիս, Մամիստրա և Տարսոն քաղաքներում: 1248 թ. Կիլիկիայի ափերի մոտ Անտիոքի իշխանը ծովահենական հարձակման է ենթարկում Նիկոլոզո Նեգրոնեյին, որից հետո ջենովացիները ժամանակավորապես հեռանում են տարածաշրջանից, իսկ 1267-ին կրկին վերադառնում են և Լուչետո Գրիմալդիի ղեկավարությամբ ավարառում Կոռնելիոսը²²¹:

1274 թ. Այասում իր գործունեությունը ծավալած Ֆեդերիկո դի Պիացալունգայի և նրա գործը 1277 ու 1279 թթ. շարունակած Պիետրո դի Բարգոնեի թողած նոտարական արձանագրություններում, որոնք պահվում են այժմ Ջենովայի քաղաքային արխիվում, ավելի քան 300 նոտարական գործարքի արձանագրություն է պահպանվել: Դրանք հիմնականում վերաբերում են Այասում արձանագրված առևտրական գործարքներին²²²:

Միջերկրածովյան առևտրում Կիլիկյան Հայաստանի մերձավոր հարևանը Կիպրոսի թագավորությունն էր, ուր աշխատող ջենովական նոտարները ևս մեծ քանակի տեղեկություններ են հաղորդում Կիլիկիայի և Կիպրոսի միջև տնտեսական փոխհարաբերությունների մասին: Դեռևս ԺԹ դարի վերջին, Կոռնելիո Դեսիմոնին շրջանառության մեջ է դրել 1290–1301 թթ. Ֆամագուստայի ջենովական նոտարատանը կամբերտո դի Սամբուչետոյի արձանագրած շուրջ 220 գրառում, ուր մեծ քանակի տեղեկություններ կան Կիլիկիայի

²¹⁹ V. Langlois, *Le Trésor*, p. 164–165: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Հայ-Վենետ կամ յարրնշութիւնք Հայոց եւ Վենետոց ի ԺԳ-Դ եւ ի ԺԵ-ԺԶ դարս (Վենետիկ, Ս. Ղազար, 1886), էջ 74–78:

²²⁰ Chevalier Cornelio Desimoni, “Actes passés en 1271, 1274 et 1279 à l’Ayas (Petite Arménie) et à Beyrouth par devant des notaires génois”, *Archives l’Orient Latin*, tome I (Paris: 1881), p. 434–534.

²²¹ M.L. de Latrie, *Histoire de l’île Chypre sous le règne des princes de la maison de Lusignan*, t. II (Paris: Imprimerie impériale, 1852), p. 74–79.

²²² L. Balleto, *Notai genovesi in Oltremare Atti rogati a Laiazzo da Federico di Piazzalunga (1274) e Pietro di Bargone (1277, 1279)* (Genova, 1989).

հետ առևտրական կապերի վերաբերյալ²²³: Կիպրոսի և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերությունների հետազոտությունը վերջին տարիներին շնորհիվ կիպրագետ Ն. Կուրեասի աշխատությունների նոր հարթության վրա են բարձրացել²²⁴:

Բացի ծովային ճանապարհներից, երկրի համար կարևոր նշանակություն ունեին նաև ցամաքային ուղիները: Միջնադարյան եվրոպական սկզբնաղբյուրներում հիշատակվում է Մարսելից Աքքա տանող երկու ճանապարհ. մեկը բաց ծովով, մյուսը՝ ծովափով: Բաց ծովով ճանապարհը ուցեկցող քամու դեպքում կարող էր տևել ընդամենը 15 օր²²⁵, իսկ ցամաքայինը՝ Իտալիայից մինչև Հյուսիսային Ասորիք կարող էր տևել վեցն անգամ երկար: Կիլիկիայի արևմուտքից դուրս եկող առևտրական մայրուղիները ձգվում էին Միջերկրական ծովի ափով դեպի Ատալիա²²⁶, Իկոնիա²²⁷, Անտիոք²²⁸, իսկ Կապադովկիայի վրայով՝ դեպի Փոքր Ասիայի սևծովյան նավահանգիստներ՝ Սինոպ և Տրապիզոն²²⁹: Ըստ Բալդուչի Պեգոլոտիի և Մարկո Պոլոյի՝ առևտրական կարևորագույն ճանապարհներից մեկն էլ Այասից ձգվում էր մինչև Թավրիզ²³⁰: Ծովայինի կողքին մեծ էր նաև այդ ցամաքային ճանապարհների ռազմավարական և տնտեսական նշանակությունը: Այդ է պատճառը, որ դրանց տիրանալու համար Եգիպտոսի մամլուքները մեկ հարյուրամյակ շարունակ պատերազմներ մղեցին մոնղոլների դեմ՝ օգտագործելով նաև փոքրասիական սելջուկների ուժերը, որոնք մինչև մոնղոլների հայտնվելը տարածաշրջանում փորձում էին իրենց ձեռքը վերցնել Կիլիկիա-Կապադովկիա-Սինոպ գնացող ցամաքային ուղիները: Կիլիկիայի նավահանգիստները և Ատալիայից ու Իկոնիայից եկող՝

²²³ C. Desimoni, “Actes passes à Famagouste de 1299 à 1301”, AOL, t. II (Paris: 1884), p. 3–120.

²²⁴ Տե՛ս նրա վերջին աշխատություններից մեկը. N. Coureas, “Friend or Foe ? The Armeniens in Cyprus as others saw them during the Lusignan Period (1191–1473),” in: *La Méditerranée des Arméniens*, pp. 75–83:

²²⁵ Տե՛ս J.K. Wright, “The Geographical Lore of the Time of the Crusades: A Study in the history of medieval science and tradition in Western Europe” (New York, 1925), pp. 109–110 և հմմտ. К. Паїт, *Географические представления в эпоху крестовых походов. Исследование средневековой науки и традиции в Западной Европе* (Москва, 1988), с. 274:

²²⁶ Այդ ճանապարհի Կիլիկիայի հատվածի մասին տե՛ս Fr. Hild & H. Hellenkemper, *Kilikien und Isaurien*, S. 134–136:

²²⁷ Անդ, S. 138–140:

²²⁸ Անդ, S. 132–133:

²²⁹ Տե՛ս Г. Микаелян, *История*, с. 353–360; F. Hild, *Das byzantinische Straßensystem in Kappadokien* (VTB 2) (Wien, 1977) և հմմտ. Fr. Hild & H. Hellenkemper, *Kilikien und Isaurien*, S. 136–138:

²³⁰ Տե՛ս Francesco Balducci Pegolotti, *La Pratica della Mercatura*, ed. A. Evans (Cambridge, Mass., 1936), p. 28, 389 և հմմտ. Fr. Hild & H. Hellenkemper, *Kilikien und Isaurien*, S. 137:

դեպի Անտիոք գնացող ցամաքային ճանապարհները վաղուց ի վեր օգտագործվում էին Երուսաղեմ գնացող ուխտագնացների կողմից²³¹:

Ինչպես տեսանք, Կիլիկիայի հայկական թագավորության՝ Եվրոպայի հետ քաղաքական և տնտեսական փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրության հիմնական սկզբնաղբյուրները ցայսօր մնում են առևտրական պայմանագրերն ու արտոնագրերը, որոնք պահվում են հիմնականում Իտալիայի, Անգլիայի, Գերմանիայի և Իսպանիայի արխիվներում: Այդ վավերագրերի մեծագույն մասի հրատարակության և գիտական շրջանառության մեջ դնելու ավանդի համար պետք է արժանին մատուցել Ֆրանսիացի գիտնական Վիկտոր Լանգլուային և Վենետիկի մխիթարյան միաբան հ. Ղևոնդ Ալիշանին²³²: Չնայած նրանց գրքերի հրատարակումից անցել է արդեն ավելի քան մեկ դար, սակայն Տորինոյի, Ջենովայի²³³, Վենետիկի, Ֆլորենցիայի, Նեապոլի, Մալթայի, Վիեննայի, Բեռլինի Փարիզի, Մոնպելիեի, Լոնդոնի, Բարսելոնի, Մադրիդի, Սեգովայի արխիվներում կամ ուրիշ դիվանատներում այդ ուրտին վերաբերող էական գիտական հայտնաբերումներ չեն կատարվել:

Հետազոտության ներկա փուլում կարիք է առաջացել հրատարակել, քննել և նկարագրել Կիլիկիայի արքունական, իշխանական, կաթողիկոսական և եպիսկոպոսական դիվաններից դուրս եկած, պահպանված վավերագրերը: Այդ տեսանկյունից բավական հուսադրող արդյունքներ են սպասվում օրիակ. Հոռոմի, Ջենովայի, Նանտի, Բորդոյի և Մարսելի արխիվների մանրագնին հետախուզումներից²³⁴: Հույս ունենանք, որ գիտական ուսումնասիրությունների շարունակումը Եվրոպայի մի շարք քաղաքային և պետական

²³¹ Անդ, S. 141:

²³² Եթէ Վ. Լանգլուան ի մի է հավաքել եվրոպական արխիվների մեծագույն մասը (V. Langlois, *Le Trésor*, p. 6–12), ապա Ղ. Ալիշանը մասնավոր հետազոտության է ենթարկել Վենետիկի քաղաքային դիվանատները: Տե՛ս Ղ. Ալիշան, Հայ-Վենետ և իտալիական Վենետիկը՝ *L'Armeneo-Veneto. Compendio storico e documenti delle relazioni degli Armeni coi Veneziani, primo periodo, secoli XIII–XIV* (Venezia, S. Lazzaro, 1893):

²³³ Ջենովական վավերագրերին նվիրված նորագույն հետազոտություններից տե՛ս C. Otten-Froux, “L’Aïas dans le dernier tiers du XIIIe siècle d’après les notaires génois,” in: B.Z. Kedar-A.L. Udovitch (eds), *The Medieval Levant: Studies in Memory of Eliyahu Ashtor (1914–1984)* (*Asian and African Studies*, 22) (1988), p. 147–171: Այս աշխատանքում քննական վերլուծության են ենթարկվում Այասին վերաբերող մոտ 256 ջենովական գործարքային վավերագրեր: Ուսումնասիրության այս եղանակը ցանկալի կլինի օգտագործել նաև ԺԳ–ԺԴ դարերի մյուս առևտրական քաղաքների հետ Կիլիկիան նավահանգիստների փոխհարաբերությունների հետազոտության բնագավառում:

²³⁴ Ի տարբերություն առևտրական պայմանագրերի ու գործարքների, իմ կարծիքով, մեծ են սպասելիքները վերոհիշյալ և մանավանդ Հոռոմի պապական արխիվներում Կիլիկիայի թագավորների և կաթողիկոսների նամակների և այլ վավերագրերի հայտնաբերման գործում: Այդ է վկայում նաև կիպրոսցի հետազոտող Ն. Կուրեսաի հետազոտությունը. N. Coureas, “The

արխիվներում, որոնք հասու չեն եղել վերևում հիշատակված հեղինակներին, թույլ կտան ապագայի հետազոտողներին հայտնաբերել մեզ հետաքրքրող խնդիրներին վերաբերող այլ վավերագրեր և ամբողջացնել Կիլիկյան Հայաստանի և Եվրոպայի քաղաքական, տնտեսական, եկեղեցական և հոգևոր-մշակութային փոխհարաբերությունների պատմությունը:

Ջենովական առևտրական գործարքների հետազոտման համար կարևոր նշանակություն ունեն այդ հանրապետության նոտարների թողած մատյանների Կ. Դեզիմոնիի, Մ. Բալարի, Ռ. Պավոնիի²³⁵, Վ. Պոլոնիոյի²³⁶, Լ. Բալետոյի հրատարակությունները, որոնց մեծ մասին արդեն անդրադարձել ենք վերևում:

Հիշենք, որ 1288 թ. Լևոն Գ-ի կողմից ջենովական հանրապետությանը տրված հայերեն վավերագրի կարևորությունը դեռ մոտ 200 տարի առաջ՝ 1827 թ. անդրադարձել է Ֆրանսիական հայագիտական դպրոցի հիմնադիրներից մեկը՝ Սեն Մարտենը:

Papacy's relations with the kings and the Nobility of Armenia in the period 1300–1350,” in: *Actes du Colloque “Les Lusignans et l’Outre mer”* (Poitiers: Presses universitaires de Poitiers, 1993), p. 99–108:

²³⁵ **R. Pavoni**, *Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio–27 ottobre 1301)* (Genova: 1987); **նույնի՝** *Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (gennaio–Agosto 1302)* (Genova, 1987).

²³⁶ **V. Polonio**, *Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio 1300 – 3 agosto 1301)* (Genova, 1983).

ՄԱՍ Բ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՆՈՏԱՐԱՏԱՆ ԹՈՂՈՆՆԵՐ. ՀՌՈՄԻ ՊԱՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ¹

Բ 1. Հռոմի պապ Իննուհինսորդ Բ-ի թուղթը՝ ուղղված Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունուն.

Ամենայն Հայոց կաթողիկոսարանն իր երկարատև պատմության ընթացքում բազմաթիվ շփումներ է ունեցել Տիեզերական եկեղեցու տարբեր թեմական Աթոռների պաշտոնատար անձանց, առաջնորդների և պատրիարքների հետ: Սակայն պետական և եկեղեցական արխիվների չգոյություն, ժամանակի ընթացքում օտար նվաճողների կողմից դրանց ոչնչացման պատճառով, պատմաբանների ուսումնասիրության համար մնացել են հատուկենտ վավերագրեր, որոնց նշանակալի մասը պատճեններ են, ընդօրինակված ձեռագիր մատյաններում, միջնադարյան մատենագրության այլ ժանրերի երկերի հետ կողք-կողքի: Այդ է պատճառը, որ միջեկեղեցական փոխհարաբերությունների մի շնչին մասն է միայն հաստատագրված բնօրինակ վավերագրերով, որոնք փոխանակված են տարբեր եկեղեցական կազմակերպությունների առաջնորդների և ներկայացուցիչների միջև: Այդ վավերագրերի բազմակողմանի ուսումնասիրությունն էլ այսօրվա հայագիտության կարևորագույն խնդիրներից է:

Չնայած Հռոմի պապական արխիվները մինչև մեր օրերն են հասել նվազագույն կորուստներով, այնուամենայնիվ մի շարք վավերագրեր, որոնք պահպանվել են մեր մատենագրության մեջ, դեռևս հայտնաբերված չեն Հռոմի արխիվների խնամյալ պահոցներում: Այդ իմաստով բացառություն չեն

¹ Այս հատվածի նախնական բնագիրը հրատարակված է. **Ա. Բոզոյան**, Հռոմի պապ Իննուհինսորդ Բ-ի թուղթը՝ ուղղված Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունուն, «Էջմիածին» Գ (1999), էջ 77-96 և հմմտ. նաև **A. Bozoian**, "Les premières lettres des papes conserve dans la littérature arménienne (XII^e siècle)", *Gli armeni lungo le strade d'Italia. Atti del Convegno Internazionale (Torino, Genova, Livorno, 8-11 marzo 1997)* (Pisa: Istituti Editoriali Poligrafici Internazionali, 1998), p. 5-11:

կազմում Հռոմի պապության հետ Հայոց կաթողիկոսարանի փոխհարաբերությունների վավերագրերը, որոնք սկսած ժԲ դարից ավելի ու ավելի հոծ են դառնում կապված խաչակրաց շարժման դրսևորումների և Արևելքում Հռոմի եկեղեցական կառույցների կազմակերպման հետ: Այս առումով նշանակալի ժամանակաբաժան է ժԱ դարի 90-ական թթ. վերջը, որից հետո Հռոմի պապությունը իր հովանավորության տակ առավ Մերձավոր Արևելքում ստեղծված խաչակրաց պետությունները և սեփական պատրիարքական, արքեպիսկոպոսական և եպիսկոպոսական Աթոռները հաստատեց Երուսաղեմում, Անտիոքում, Տրիպոլիում, Սուրում (Տյուրոս), Եդեսիայում, Տարսոնում և այլուր²: Իհարկե, հայագիտական գրականության մեջ երբեմն արծարծվել և մի շարք միջնադարյան բնագրերում էլ վկայություններ են պահպանվել, որ Հայոց եկեղեցին Հռոմի պապության հետ փոխհարաբերություններ է հաստատել և վավերագրեր է փոխանակել ավելի վաղ ժամանակներից³, սակայն հայերեն լեզվով պահպանված Հռոմի պապերի առաջին վավերական և մի շարք պարամետրերով պատմագիտական քննություն բռնող նամակը պատկանում է Իննոկենտիոս Բ-ին (1130–1143) և ուղղված է Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունուն (1113–1166)⁴: Այս վավերագրի նշանակությունը չափազանց

² Ավելի մանրամասն տե՛ս **Cl. Cahen**, *La Syrie du Nord à l'époque des Croisades et la Principauté franque d'Antioche*, Paris (Paris: Librairie orientaliste Paul Geuthner, 1940), p. 309–326; հմմտ. **Kl.-P. Todt** und **B.A. Vest**, *Syria (Syria Prōtē, Syria Deutera, Syria Euphrtēstia)* (TBI, hrsg. J. Koder, Bd. 15, Teilband 1) (Wien, 2014), S. 425–443:

³ Այդ փոխհարաբերությունների շուրջ մի շարք լատինալեզու վավերագրեր են հրատարակել դեռևս ժԷ դարում, թեաթինյան կրոնավոր Կղեմես Գալանոսի կողմից: Նկատի ունեմ Գրիգոր է պապի դարաշրջանին վերաբերող վավերագրերը: Այդ վավերագրերի նորովի հրատարակությունը, հայերեն թարգմանությունն ու հետազոտությունը հայագետների դատին է հանձնել Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, հայր Պ. Անանեանը: Տե՛ս Պ. Անանեան, «Գրիգորիս Վկայասէր և հայ հոովմէական յարաբերութիւնները», Բազմալէպ 1–4 (1992), էջ 7–30:

Ավելի վաղ գրված մեկ այլ փաստաթղթի վրա ևս, հայագետների ուշադրությունն է հրավիրել հ. Պ. Անանեանը: Տե՛ս Պ. Անանեան, Զաքարիա Հայոց կաթողիկոսի եւ Աշոտ իշխանաց իշխանի թղթակցությունը Փոտ պատրիարքի եւ Նիկողայոս Ա պապի հետ (Վենետիկ, 1992), էջ 80–93:

Այնուամենայնիվ, պետք է ասել, որ մինչև ժԲ դարը Հռոմի հետ փոխհարաբերությունների ուսումնասիրությունը դեռևս կարոտ է վավերագրատական համակողմանի քննություն: Այդ տեսանկյունից համապարփակ մոտեցում է ցուցաբերել գերմանացի հետազոտող Պ. Հալֆտերը (**P. Halfter**, *Das Papstum*), որի աշխատությանը մասնավոր գրախոսություն ենք նվիրել «Էջմիածին» ամսագրի 1996 թ. վերջին՝ ժԲ համարում: Չնայած Պ. Հալֆտերի աշխատանքն այս առումով բավական ուշագրավ է, սակայն այն ևս դեռևս պատասխան չի տալիս պատմաբանասիրական բազմաթիվ խնդիրների: Այդ իսկ պատճառով այս հարցերի ապագա ուսումնասիրողից, ըստ իս, պահանջվում է Քրիստոնյա Արևելքի լեզուների, պատմության և բանասիրության բավական խորը և լայն պատրաստություն:

⁴ Մեզ չի հասել քիչ ավելի վաղ գրված Ռնորիոս Բ պապի (1124–1130) նամակը, որի մասին վկայություն է պահպանել ժԳ դարի ունիթոր հեղինակ Մխիթար Ապարանեցին: Տե՛ս Ղ. Ալիշան,

մեծ է ոչ միայն Հայոց Եկեղեցու պատմական անցյալի ուսումնասիրության ու հայագիտության, այլ նաև կաթողիկե եկեղեցու պատմության և մեզ հասած վավերագրատական ժառանգության ուսումնասիրության տեսանկյունից⁵: Պետք է նշել, որ գիտությանը դեռևս հայտնի չէ այդ վավերագրի լատիներեն բնագիրը: Այն մեզ է հասել ԺԲ դարի հայերեն թարգմանությամբ և մինչև այսօր ունեցել է միայն մեկ հրատարակություն, որն էլ, ցավոք, հաճախ չի արժանացել ուսումնասիրողների պատշաճ ուշադրությանը: Անհրաժեշտ է նշել, որ այս բնագիրը մինչև վերջերս չէր թարգմանվել նաև որևէ օտար լեզվի⁶:

Իննուկենտրոս Բ-ի գահակալության տարիներին Հայոց եկեղեցու և Հռոմի պապության պաշտոնական փոխհարաբերությունների մասին մեզ հասած առաջին վկայությունները պատկանում են լատին, հայ և հակոբիկ ասորական պատմագրությանը: Այդ տեսանկյունից առաջնակարգ են Վիլհելմ Սուրացու (Գրյոմ Տյուրոսցի) «Տարեգրության» և Միքայել Ասորու «Ժամանակագրության» մեջ պահպանված վկայությունները⁷, որոնք վերաբերում են Արևելքում պապի լեզատ (նվիրակ) Ալբերիկ Օստիացու գործունեությանը⁸: Պապական դեսպանագնացը Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ-ին այցելել է Տլուքի Ծովք ամրոցում⁹:

Շնորհալի եւ պարագայ իւր (Վենետիկ, Ս. Ղազար, 1873), էջ 171–172 և հմմտ. Պ. Անանեան, «Ներսէս Շնորհալի. Միջեկեղեցական յարաբերութիւններ», Բազմավէպ 1-4 (1996), էջ 203–204:

⁵ Այս վավերագիրը վերևում վկայակոչված աշխատանքում վերստին հրատարակել է Պ. Անանեանը (տե՛ս Պ. Անանեան, «Ներսէս Շնորհալի»):

⁶ Պ. Անանյանի հոդվածի վերջում նամակն իտալերեն է թարգմանել պրոֆ. Գաբրիելյա Ուլուհոջեանը: Ողջունելի է, որ Պիտեր Հալֆտերը և Անդրեա Շմիդտը ևս իրենց հրատարակումը նվիրել են Իննուկենտրոս Բ-ի թղթի հետազոտությանը և հրատարակել են այն գերմաներեն թարգմանությամբ: Տե՛ս A. Schmidt, P. Halfter, “Der Brief Papst Innozenz’ II. An den armenischen Katholikos Gregor III.: ein wenig beachtetes Document zur Geschichte der Synode von Jerusalem (Ostern 1141)”, AHC, t. 31/1 (1999), p. 50–71:

⁷ Այդ մասին տե՛ս *Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d’Antioche (1166–1199)*, Éditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III (Paris: E. Leroux, 1905), p. 255–256: Հիշատակված փոխհարաբերություններին արձագանքել է նաև ԺԲ դարի ժամանակագիր Սամուել Անեցու Շարունակողներից մեկը: Տե՛ս Սամուելի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս, ծայրաքաղ արարեալ, Յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Ա. Տէր-Միքէլեանի (Վաղարշապատ, 1893), էջ 122–123; հմմտ. Սամուել Անեցի եւ Շարունակողներ, ժամանակագրութիւն Աղամից մինչև 1776 թ., աշխատասիրությամբ Կ. Մաթեոսյանի (Երևան, «Նաիրի», 2014), էջ 203–204:

⁸ Ալբերիկ նվիրակի գործունեության հիմնական քաղցրի մասին տե՛ս RHC Hocc, t. I, Libr. 15, cap. XI (p. 674), cap. XII (p. 676), cap. XV (p. 681), XVIII (p. 687) և հմմտ. Guillaume de Tyr, *Chronicon*, édition critique par R.B.C. Huygens, détermination des dates par H.E. Mayer et G. Röscher (Tvrnholti: Typographie Brepols editors pontifici, 1986), p. 688:

⁹ M.S., t. III, p. 255: Հմմտ. G. Dédéyan, *Les Arméniens entre Grecs, Musulmans et Croises. Étude sur les pouvoirs Arméniens dans le Proch-Orient Méditerranéen (1068–1150)*, vol. 2 (Lisbonne: 2003), p. 1254:

Անդրադառնանք մեզ հետաքրքրող նամակը հիշատակող առաջին տեղեկությունների քննարկմանը, պատմաբանասիրական եզրահանգումներին և սկզբնաղբյուրների տեսությունը: Վավերագիրն անվանապես հիշատակող առաջին տեղեկությունը պատկանում է Ներսես Լամբրոնացուն, որը վավերագրի գրման հանգամանքների մասին տեղեկացնում է թղթին կցած հիշատակարանում¹⁰: Ըստ այդ վկայության, մեզ հետաքրքրող նամակը գրվել և ուղարկվել է «Աղպրի լեկաթի», նույն՝ Ալբերիկոս Օստիացի եպիսկոպոսի Հռոմ վերադառնալուց հետո¹¹: Այդ վավերագիրը պատասխանն է Ալբերիկոս նվիրակի միջոցով Հռոմի պապին ուղարկված Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի նամակի, որի բնագիրը մեզ չի հասել¹²:

Հայ մատենագրության մեջ պահպանված հաջորդ վկայությունը ևս ամենայն հավանականությամբ հասնում է մինչև Ներսես Լամբրոնացու ժամանակները: Հայագիտական գրականության մեջ այժմ նրան է վերագրվում կաթողիկոսական Գավազանացանկի այն խմբագրության նախօրինակը, որը նոր հավելումներով ընդօրինակվել է Ադանայի ժողովից հետո¹³: Այստեղ պահպանված վկայությունն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել թեաթինյան կրոնավոր Կղեմես Գալանոսը, որը յուրաքանչյուր Հայոց կաթողիկոսի գործունեության մասին խոսելիս, նախ բերում է տվյալ հայրապետի մասին ԺԳ դարում խմբագրված կաթողիկոսական ցանկի համապատասխան հատվածը, ուր Գրիգոր Գ Պահլավունուն վերաբերող մասում կարդում ենք. «Առ սա (իմա՛ Գրիգոր Գ Պահլավունի – Ա.Բ.) Պապն Հռոմայ գրեաց թուղթ. և խնդրեաց կատարել գտօն Մննդեանն և Մկրտութեանն և արկանել ջուր ի Սուրբ խորհուրդն, որպես և առնէ սուրբ Եկեղեցին Հռոմայ, և ամենայն ազգ քրիստոնէից: Եւ առաջ քան զսա Իննոկենտիոս Բ պապն զնոյնս գրեաց, եւ եցոյց հարկաւոր»¹⁴:

¹⁰ Այս հիշատակարանի մասին ավելի հանգամանալի տե՛ս Թղթի գրման թվականը հատվածում (հմմտ. նաև ՄՄ, ձեռագիր, թ. 1026, էջ 231ա):

¹¹ Տե՛ս ՄՄ, ձեռագիր, № 1026, թ. 231: Հմմտ. Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի. արքեպիսկոպոս Տարսոնի, կեանքն ու գրական վաստակները հանդերձ ազգաբանութեամբ Պահլավունեաց եւ Լամբրոնի Հեթմեանց (Վիեննա, 1956), էջ 296–297:

¹² Այդ մասին տե՛ս Հռոմի պապի նամակի բնագրում առկա համապատասխան վկայությունը. «Լուաք զուղղափառ հաւատս ձեր ի գրոյս, զոր եբեր Աղպրի արքեպիսկոպոս Աւստոյ զոր իբիեւ ընթերցաք ...» (ընդգծումն իմն է – Ա.Բ.):

¹³ Տե՛ս Յ.Զ. Վարդանյան, «Ներսես Պալիանենցին վերագրվող ժամանակագրական մի ցանկի մասին», ՊԲՀ 3 (1980), էջ 201:

¹⁴ Տե՛ս Միաբանութիւն Հայոց սուրբ Եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ Եկեղեցւոյն Հռովմայ, շարդրեալ ի յերկուս հատորս. ի պատմական և վիճաբանական ի կարգէ թէատինոսաց Կղեմէս վարդապետէ, Ա հատոր (Հռոմ, 1650/1690), էջ 234 (այսուհետ՝ Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն Հայոց): Այս նույն վկայությունը Մխիթար Ապարանեցու խմբագրութեամբ է մեջբերում Գ. Ղ. Ալիշանը: Այստեղ Իննոկենտիոս Բ-ի անունից առաջ եղած «եւ յառաջ քան զսա» դարձվածքը

Այս խնդրին վերաբերող հաջորդ վկայությունը գիտական շրջանառություն մեջ դնելու պատիվը ևս պատկանում է բազմավաստակ մխիթարյան հայագետ Ն. Ղ. Ալիշանին, որը գրում է. «յամին 1141, ինչպէս նշանակէ մեծանուն վարդապետն Եսայի Նշեցի. «[Ի]նոկենտիոս պապն Հռոմայ, որ էր ի հինգ հարիւր և յիննսուն թուին Հայոց». և որ աւելի փափագելին էր մեզի կ'աւելացնէ Եսայի թէ իր ատեն՝ յետ իբր 160 կամ քիչ մ'աւելի ամաց՝ «ունիմք այսօր ի միջի մերում գիւնդիրն (Պապին – Ա.Բ.) հանդերձ Պատասխանական բանիւ», Գրիգորիսի և Ներսիսի. զոր մեք հիմայ գրողքս՝ դժբախտաբար ոչ ունիմք»¹⁵: Հետաքրքիր է այն փաստը, որ ըստ Ն. Ղ. Ալիշանի, Եսայի Նշեցին ուսումնասիրության նյութ դարձած այս թուղթը թվագրում է Հայոց 590, այսինքն՝ Քրիստոսի 1141/2 թվականով¹⁶:

Գրիգոր Գ կաթողիկոսի թղթի ամբողջական բնագիրը գիտական շրջանառության մեջ է դրվել միայն 1893 թ., վաղամեռիկ հայագետ¹⁷, էջմիածնի

փոխված է «եւ յետ սորա» բառակապակցությամբ: Այս խմբագրությունը լրիվ փոխում է նախադասության իմաստը և թույլ է տալիս ենթադրել, որ Ինոկենտիոս Բ-ից առաջ գահակալած Հռոմի պապն էլ է նամակ ուղարկել Հայոց Գրիգոր Գ կաթողիկոսին: Տե՛ս Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 171–172: Հիմնվելով այս վկայության վրա՝ Ղևոնդ Ալիշանը եզրակացնում է. «Ինոկենտիոսի նախորդն է Ռնորիոս Բ Պապը, որ քահանայատեց յամս 1124–30. ըսել է որ այս միջոցին առաջին անգամ թղթակցութիւն եղած է այս կրօնական և ծիսական խնդրոյ վրայ, զոր առաջ և ետև ամեն Հռովմայ հայրապետք ալ առաջարկած են Հայոց...»: Տե՛ս Անդ, էջ 172; հմմտ. նաև L.B. Zekryan, *Le colonie Armene*, p. 848: Պետք է այստեղ նշել, որ մինչև այսօր Ռնորիոս Բ պապի անվան հետ կապված որևէ թղթակցություն, որն առաքված լիներ Հայոց կաթողիկոսներին կամ եկեղեցուն, հայտնի չէ հայագիտությանը: Սակայն չեմ կարող որևէ ենթադրություն անել, քանի որ ձեռքի տակ չունեմ Մխիթար Ապարաներցու երկի բնագիրը:

¹⁵ Տե՛ս Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 172: Պիտի նշեմ, որ պրպտումներից հետո ես կարողացա գտնել Եսայի Նշեցու այն երկի բնագիրը, որից օգտվել էր մխիթարյան հայագետը: Այդ երկի ընդօրինակություններից մեկը պահպանվում է Երևանի ՄՄ, թ. 573 ձեռագրում:

¹⁶ Պիտի նշեմ, որ Եսայի Նշեցու երկի վերևում հիշատակված ընդօրինակությունը չի հաստատում Ղ. Ալիշանի վկայությունը: ՄՄ, թ. 573-ում Ինոկենտիոս Գ-ի թուղթը թվագրված է Հայոց ԾԶ (=580), այն է 1131 թ. (տե՛ս թղ. 320ա): Հետևապես մեզ մնում է ենթադրել, որ կամ Ղ. Ալիշանն օգտվել է Ս. Ղազարի Մատենադարանի մեզ անձանոթ մեկ այլ ձեռագրից կամ էլ ինքն է սրբագրել թվականը:

¹⁷ Ա. Տեր-Միքելյանն առաջիններից է, որ Եվրոպայում ստացած իր կրթությունը ներդրեց էջմիածնում հայագիտական դպրոց ստեղծելու գործում: Վաղարշապատի ձեմարանում նա եղել է, հետագայում Կ.Պոլսի պատրիարք դարձած Մաղաքիա պատրիարք Օրմանյանի սանը: ԺԹ դարի վերջին և Ի դարի սկզբին Վաղարշապատում հայագիտական դպրոցի ստեղծման մեջ անգնահատելի է Մաղաքիա Օրմանյանի դերը, որը բավական կարճ ժամանակ դասավանդելով Գևորգյան ձեմարանում, կարողացավ ստեղծել հայագիտական մի դպրոց, որի հետևորդները դարձան Ա. Տեր-Միքելյանը, Գ. Տեր-Մկրտչեանը, Կ. Տեր-Մկրտչեանը, Գ. Հովսեփեանը, Ե. Տեր-Մինասեանը և ուրիշներ:

ճեմարանի ուսուցիչ Արշակ վ. Տեր-Միքելեանի կողմից¹⁸, որին հայագիտութ-
յունը պարտական է բազմաթիվ նորահայտ բնագրերի հայտնաբերման,
ուսումնասիրության և հրապարակման համար: Տարօրինակ է, որ վավերագ-
րի հրապարակումից հետո, անցած գրեթե հարյուրերեսուն տարվա ընթաց-
քում ո՛չ Ֆ. Տուրնըբիզը և ո՛չ էլ Մաղաքիա պատրիարք Օրմանյանն ու հ. Լ.Ս.
Կոզյանը չեն ակնարկում անգամ այդ նամակի գոյության փաստը: Վավերագ-
րի հրապարակված բնագիրը վրիպել է նաև Ժ. Դեդեյանի ուշագրությունից¹⁹:

Իննուկենտիս Բ-ի թղթի մեզ հայտնի ձեռագրերից երկուսը պահպանվում
են Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում.

ա/ դրանցից հնագույնը ՄՄ, թ. 500 մատյանն²⁰ է, որից էլ «Արարատ» ամ-
սագրում մեզ հետաքրքրող վավերագիրն հրապարակել է Արշակ Տեր-Միքե-
լեանը: Այս ձեռագիրը Գրիգոր է Անավարզեցի (1293–1307) կաթողիկոսի մե-
կենասությունից ընդօրինակել է Վարդան գրիչը: 1305 թ. մեկենաս-կաթողիկո-
սը այս մատյանը, իր նվիրակ՝ Կեսարիայի Կոստանդին արքեպիսկոպոսի ձեռ-
քով, նվիրել է Եսայի Նչեցի վարդապետին. «Տէր Գրիգորիս՝ ծառայ Աստուա-
ծոյ եւ ողորմութեամբ նորին կաթողիկ[ոս] Հայոց, ընծա[յ]եցի զգիրքս Եսայի
վարդապետին ի ձեռն մեր հաւատարիմ լիկատին Տէր Կոստանդեայ արքե-
պիսկոպոս Կեսարու, առաքեալ յարեւելս ի թվիս ԶԾԴ (= 1305)»²¹: Ձեռագրում
տեղ են գտել բազմաթիվ արժեքավոր թղթեր, որոնց մի նշանակալի մասը
հրապարակել է հ. Ա. Տեր-Միքելեանը²²: Մատենում ներկայացված են Ներ-
սես Շնորհալու և Գրիգոր Տղայի պաշտոնական նամակները, «Պատճառ
խնդրոյ միաբանութեան» ժողովածուն, Ներսես Լամբրոնացու «Թուղթ ... առ
Լևոն»-ը, Փոտ պատրիարքի ու Զաքարիա կաթողիկոսի նամակագրությունը՝

¹⁸ Տե՛ս **Ա. Տեր-Միքելեան**, Միջին դարերի կաթողիկոսների ձգտումները եկեղեցական խա-
ղաղության համար, «Արարատ» (1893), էջ 133–138:

¹⁹ **G. Dédeyan**, “Le rôle complémentaire des frères Pahlawuni Grigor III, Catholikos, et Saint Nersès Šnorhali, coadjuteur, dans le rapprochement avec les latines, à l’époque de la chute d’Édesse (v.1139 – v.1150)”, *REArm*, t. XXIII (1992), p. 237–251: Ժ. Դեդեյանի ուշագրությունից վրիպել է նաև այդ նամակին վերաբերող Լ. Զեքիեանի անդրադարձը: Տե՛ս **Լ. Zekiyan**, “Nersès de Lambron’ and Nersès Šnorhali”, *Dictionnaire de Spiritualite*, t. XI (Paris: Beauchesne, 1976), p. 136 և հմմտ. նաև **նույնի՝ Le colonie Armene**, p. 848–849:

²⁰ Ձեռագրի ընդարձակ նկարագրությունը տե՛ս **ՄՅՀԶՄՄ**, հտ. Բ (Երևան, 2004), էջ 1015–1018: Ցավոք, այս և մի քանի հաջորդ հատորներում պակասում է ձեռագրացուցակի ներա-
ծությունը, և ընթերցողին անհայտ է մնում յուրաքանչյուր կոնկրետ ձեռագրի նկարագրողը: Այս հատորի մասին տե՛ս իմ հրատարակած գրախոսությունը՝ ՀՀՀ, ԻԶ (2006), էջ 376 և այլն:

²¹ **ՄՄ**, թ. 500, թղ. 380 բ, հմմտ. **ՄՅՀԶՄՄ 2004**, հտ. Բ, սյ. 1018, ուր այս հիշատակագրութ-
յան էջահամարն իրականությանը չի համապատասխանում:

²² Տե՛ս **Ա. Տեր-Միքելեանի** վերևում հիշատակված հոդվածաշարը:

“Գիրք թղթոցից” ծագող մի շարք վավերագրերի ուղեկցությամբ, Գրգոր Տուտեորդու թուղթն ուղղված Գրիգոր Դ կաթողիկոսին, Լևոնի «Տոմարը», ԺԲ դարի Հռոմի պապերի նամակները ողղված Հայոց կաթողիկոսներին և Լևոն իշխանին, ինչպես նաև Ներսես Լամբրոնացու «Ատենաբանությունը» հանդերձ բյուզանդական ինը խնդիրների պատասխաններով և այլ կարևոր վավերագրերով: Փաստաթղթերի այս չափազանց կարևոր ժողովածուն, որը պատկանել է Եսայի Նչեցուն, Հայոց եկեղեցու պաշտնական վավերագրերի հավաքածու է, ուր Գրիգոր Անավարզեցու հրամանով հավաքված են եղել Հայոց եկեղեցու դավանանքին և արարողակարգին վերաբերող նյութեր:

բ / Հաջորդ մատյանն այժմ կրում է ՄՄ, թ. 1026 համարը²³: Ձեռագիրը Ն. Ակինեանի ու ՄՄ համառոտ ձեռագրացուցակի տվյալ բաժնի հեղինակ, երջանկահիշատակ Օ. Եգանյանի կողմից թվագրվում է ԺԴ դարով²⁴: Մատյանում ընդօրինակված է Ներսես Լամբրոնացու կողմից լատիներենից թարգմանված Հռոմի եկեղեցու ծիսարանը, որին համապատասխանող լատիներեն բնագիրն էլ դեռևս հայտնի չէ կաթողիկ արարողական գրականության հետազոտողներին²⁵: Ձեռագրում պահպանված նյութերի մեջ ուրույն հետաքրքրություն են ներկայացնում նաև Հռոմի պապեր Լուկիոս Գ-ի (1182–1185)²⁶ և Կղեմես Գ-ի (1187–1191)²⁷ նամակները: Այստեղ, պետք է հատկապես մատնանշել այն փաստը, որ ՄՄ, թ. 1026 մատյանի նախագաղափար օրինակը արտագրվել է Ներսես Լամբրոնացու կազմած և ընդօրինակության տված ժողովածուից, որի մասին են վկայում մեզ հասած ձեռագրում պահպանված մի քանի արժեքավոր հիշատակագրություններն ու հիշատակարանը²⁸: Այնուամենայնիվ, ՄՄ, թ. 1026 ձեռագրի ընդօրինակության ժամանակ, իմ կարծիքով,

²³ Ձեռագրի ընդարձակ նկարագրությունը տե՛ս **ՄՅՀԶՄՄ**, հտ. Դ (Երևան, 2008), սյ. 99–108 (ցավոք, **ՄՅՀԶՄՄ**, հտ. Դ-ին հատուկ բազմաթիվ թերություններ անցել են են նաև ՄՄ ձեռագրացուցակի այս և հետագա հատորներին (տե՛ս նախորդ ծանոթագրության մեջ հիշատակված գրախոսականը): Մեզ հետաքրքրող մատյանում պահպանված բնագրերին շատ ավելի մանրամասն անդրադարձել է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Գ. Ներսես Ակինեանը (տե՛ս **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի, էջ 296–313):

²⁴ Տե՛ս **Անդ**, էջ 305; **ՄՅՀԶՄՄ**, հտ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունեյան, Փ. Անթաբյան, ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի (Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965), հտ. Ա, սյուն 461, հմմտ. նաև **ՄՅՀԶՄՄ**, հտ. Դ, սյուն 100:

²⁵ **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի, էջ 307–308:

²⁶ Տե՛ս **ՄՄ** ձեռագիր, թ. 1026, թղ. 170բ–177բ, հմմտ. նաև Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, յօրինեալ ի հայր **Միքայէլ վ. Չամչեանց** Կոստանդնուպոլսեցոյ, հտ. Գ (Վենետիկ, 1786), էջ 142–144, ինչպես նաև **Ա. Տէր-Միքելեան**, Միջին դարերի կաթողիկոսների ձգտումները, էջ 236–237:

²⁷ Տե՛ս **ՄՄ**, ձեռ. 1026, թղ. 213ա–218ա, հմմտ. **Ա. Տէր-Միքելեան**, Միջին դարերի կաթողիկոսների ձգտումները, էջ 140–143:

²⁸ Տե՛ս **ՄՄ**, թ. 1026, թղ. 218բ–221բ:

նախօրինակ բնագիրն ունեցել է որոշ էական թերիներ, իսկ պրակներից մի քանիսն ամենայն հավանականությամբ տեղաշարժված են եղել²⁹: Ներսէս Լամբրոնացին այս մատյանի նախատիպում հավաքել է ԺԲ դարում Հռոմի պապության հետ Հայոց եկեղեցու փոխհարաբերությունների իրեն ծանոթ Իննոկենտիոս Բ, Լուկիոս Գ և Կղեմես Գ պապերի Հայաստան ուղարկած վավերագրերը: Իմ կարծիքով, մեզ չհասած Ներսես Լամբրոնացու ընդօրինակությունից է ընդօրինակված նաև ՄՄ, թ. 500 մատյանում մեզ հետաքրքրող թղթերը: Իննոկենտիոս Բ-ի նամակը ՄՄ, թ. 1026 մատյանում զբաղեցնում է 221բ-231ա էջերը:

Բ 2. Թղթի գրման թվականը.

Հռոմում գրված և միայն հայերեն թարգմանությամբ պահպանված պաշտոնական նամակի թվագրումը կապված է մի շարք դժվարությունների հետ, չնայած ձեռագիր մատյանում վավերագիրը թվագրված է մի քանի անգամ: Առաջին թվագրումը տրված է թղթի վերնագրում. «Թուղթ որ բերաւ ի Հռոմէ առ Գրիգորիոս կաթողիկոսն, որ նախ էր ի թուակ[անն] :ՇՁ: (= 1131/2)»³⁰: Վերնագիրը թերևս ավելացված է այն ժամանակ միայն, երբ նամակը հասել է հայոց կաթողիկոսին և թարգմանվել է հայերեն: Ամենայն հավանականությամբ վերնագիրը գրված է կամ Հայոց կաթողիկոսարանի նոտարական գրասենյակ հասնելու պահին՝ լատիներեն բնագրին կից հայերեն թարգմանությունը գրանցելիս, կամ էլ, ինչն ավելի հավանական է թվում, Ներսես Լամբրոնացու կողմից վավերագրին նոր կյանք տալիս, երբ վերջինս օգտվելով Հռոմկլայի նոտարատան արխիվից, կազմում էր մեզ հետաքրքրող ժողովածուն (ՄՄ, ձեռ. 1026-ի նախատիպը), այսինքն՝ ԺԲ դարի 90-ական թվականներին, երբ արդեն հայերեն էր թարգմանել Հռոմի եկեղեցու պաշտոնական՝ արարողական ծիսարանը: Ինչ ավելի հավանական է թվում երկրորդ վարկածը, թեպետ նամակի թարգմանությունը, կարծում եմ, ամենայն հավանականությամբ պատկանում է Ներսես Դ Շնորհալուն³¹ և վերաբերում է ԺԲ դարի 40-

²⁹ Ձեռագիր այս մատյանը միևնույն բովանդակությունն ունեցող այլ մատյանների հետ միասին, արժանի է ավելի հանգամանալի ձեռագրագիտական և բնագրագիտական քննության ենթարկել, վերականգնելու համար նախօրինակի կառուցվածքը:

³⁰ ՄՄ, ձեռ. 1026, թղ. 221բ, հմմտ. Ա. Տէր-Միքելեան, Միջին դարերի կաթողիկոսների ձգտումները, էջ 133:

³¹ Այս ենթադրության համար լավագույն ապացույց է այն, որ մեզ հետաքրքրող նամակում Իննոկենտիոս Բ-ը Ներսես Շնորհալուն գիտե որպես լատիներենին տիրապետող անձնավորություն («...և թարգման// ճարտար. հմուտ հայոց լեզուի և լատինացուց...»), տե՛ս ՄՄ, ձեռ. 1026, թղ. 230ա-բ), համենայն դեպս Հռոմի պապին այդ մասին ամենայն հավանականությամբ

ական թվականներին: Ենթադրությունս համար հիմք են ծառայում բոլոր այն նկարագրական վերնագրերը, որոնք ունեն ներսես Լամբրոնացու կազմած «Պատճառ խնդրոյ միաբանութեան» ժողովածոյի վավերագրերը³²: Այսօր կարելի է ավելի առաջ գնալ և կատարել նոր ենթադրություն. ներսես Լամբրոնացին է Հռոմկլայի նոտարատան կաթողիկոսական դիվան-նոտարատան (արխիվ) կարգի դնողը, և նաև այս ժողովածոյի կազմողը:

Մյուս ժամանակագրական վկայությունը հաստատապես ներսես Լամբրոնացուն է. «Զայս թուղթ գտաք նախ քան զմեր ծնանելն յաստիս բերեալ առ տէրն (իմա՛ Գրիգոր Գ Պահլավունի – Ա.Բ.) մեր մինչդեռ Միջագետք քրիստոնէից էր, և նա բնակէր ի Ծով դղեակն, քանզի անդ լսէաք ի տղայութիւնն ի տէր ներսեսէ թէ եկն Աղպրի լեկաթն և խաւեցաւ ընդ նոսին. և գրոյն որ զկնի նորա առաքեցաւ պատասխանիս»³³:

Ըստ վերոբերյալ երկու ժամանակագրական վկայությունների, որոնցից առաջինն ամենայն հավանականութեամբ, իսկ երկրորդը հաստատապես պատկանում է ներսես Լամբրոնացու գրչին, տեղեկանում ենք, որ նամակը Հայոց Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսին է ուղարկվել.

ա. այն ժամանակ, երբ ներսես Լամբրոնացին դեռևս ծնված էլ չի եղել, այսինքն՝ մինչև ԺԲ դարի 50-ական թվականները,

բ. Աղպրի (Ալբերիկոս Օստացի) լեկաթի հետ Գրիգոր Գ Պահլավունու ու ներսես Շնորհալու տեսակցությունից, և առաջինի Հռոմ վերադառնալուց հետո: Այս պարամետրը ևս կարծես չի հակասում իսկությանը, քանի որ Իննուկենտիս Բ պապը գահակալել է մինչև 1143 թ.:

պատմել է Մերձավոր Արևելք եկած Աղպրի (Ալբերիկոս) լեկաթը: Այս դեսպանագնացության մասին մանրամասն տե՛ս G. Dédéyan, “Le rôle complémentaire des frères Pahlawuni Grigor III”:

³² Համեմատության համար բերենք միայն մի քանի բնորոշ օրինակ.

- «Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ՝ գրեալ ի ներսիսէ արքեպիսկոպոսէ, յեղբօրէ տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց, ի խնդրոյ գերապատիւ փեսայի ինքնակալ թագաւորին Հռոմոց Մանուէլի՝ Ալէքսի մեծի պոստոստատոսի, յորժամ ել յարեւելս եւ էր ի Մամեստիա մայրաքաղաքին Կիլիկեցւոց, ի թուականութեան Հայոց՝ վեց հարիւր շորեքտասան»: Տե՛ս **Ներսէս Շնորհալի**, ԹԼ (1871), էջ 87):

- «Թուղթ Գրիգորի կաթողիկոսի Հայոց՝ որ զկնի տեառն ներսիսի յաջորդեալ զաթոռն, առ բարեպաշտ թագաւորն Հռոմոց Մանուէլ» (**Անդ**, էջ 166):

- «Թուղթ բարեպաշտ թագաւորին Հռոմոց Մանուէլի, զոր գրեաց պատասխանի Գրիգոր կաթողիկոսի Հայոց» (**Անդ**, էջ 169):

Հայ-բյուզանդական բանակցությունների պահպանված վավերագրերի վերնագրերի բանաձևերի քննությունը տե՛ս **Ա. Բողոյան**, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165–1178) (Երևան, «Գիտություն» հրատ., 1995), էջ 92–97:

³³ ՄՄ, ձեռ. 1026, թղ. 231ա:

գ. այն ժամանակ, երբ Գրիգոր Գ կաթողիկոսը դեռևս բնակվում էր Մոսկոպոլիսում, իսկ Միջագետքը (իմա Եփրատյան մարզը – Ա.Բ.) դեռևս պատկանում էր քրիստոնյաներին³⁴,

դ. վերնագրում վավերագիրը թվագրված է Հայոց :ՇԶ: (=1131/2)-ով:

Չնայած վերոբերյալ ժամանակագրական պարամետրերը միմյանց չեն հակասում, սակայն կասկած է հարուցում չորրորդ՝ ամենակարևոր և ճշգրիտ թվացող մեկնակետը, մատնացուցց արված 1131/2 թվականը, որն անկասկած շփոթի կամ թարգմանական սխալի արդյունք է: Այստեղ պետք է ընդգծել այն հանգամանքը, որ խաչակիրները տարածքային առաջին և ամենամեծ կորուստը Միջագետքում ունեցան միայն 1144 թ., Եդեսիայի անկումից հետո և գ/կետը հուշում է, որ Ներսես Լամբրոնացին նկատի ունի այդ իրադարձությունը նախորդող առավել մոտ տարեթիվ: Մյուս կողմից էլ հայտնի է, որ պապական նվիրակ Ալբերիկոս Օստացին (*Albericus Hostiensis episcopus, natione Francus, de episcopate Belvacensi, a.s. legatus*)³⁵, ըստ սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության համակողմանի քննարկման, ամենայն հավանականությամբ իտալացի Արևելք պետք է գործուղված լինի 1140–1141 թթ., որի ընթացքում էլ ղեկավարել է Անտիոքի և Երուսաղեմի ժողովները³⁶: Այս առաքելությունից հետո, լեկաթ Ալբերիկոսը Հռոմ է տանում Գրիգոր Գ կաթողիկոսի նամակը, որն էլ հիշատակում է Իննոկենտիոս Բ պապը իր գրած՝ հայերենով պահպանված վավերագրի մեջ:

Իննոկենտիոս Բ պապի թղթի վերնագրում հիշատակված թվականը հակասում է նաև Եսայի Նչեցու օգտագործած թվականին, որն ըստ Ղ. Ալիշանի՝ 1141-ն է³⁷: Բայց այստեղ մեր առջև ծառանում է մեկ այլ խնդիր ևս: Քանի որ Եսայի Նչեցու հիշյալ երկի բնագրի Ղ. Ալիշանի օգտագործած ընդօրինակությունն ինձ հայտնի չէ, կարող եմ ենթադրել.

³⁴ Ամենայն հավանականությամբ Ներսես Լամբրոնացին ակնարկում է աթաբեկ Զանգիի կողմից Եդեսիայի գրավմանը նախորդած ժամանակաշրջանի մասին: Այսինքն՝ մինչև 1144 թ. դեկտեմբերի 23-ը տեղի (Եդեսիայի գրավմանը հաջորդած իրադարձությունների և կոմսության տարածքների մոսուլմանական պետությունների կողմից զավթման մասին տե՛ս Ա. Բողոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 153–163:

³⁵ Տե՛ս RHC HOc, t. I, p. 674 և հտև., **Guillaume de Tyr**, *Chronicon*, p. 688, 699, 1091:

³⁶ **P. Pelliot**, “Mélanges sur l'époque des Croisades”, *MIF*, t. 44-1 (1960), p. 2–10.

³⁷ Տե՛ս Ղ. Ալիշան, *Շնորհալի եւ պարագայ իւր*, էջ 172: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ «Երջանիկ ռաբունոյն Եսայեայ ասացեալ, վասն աւանդութեան հաւատոյ, ընդդէմ պարոն Հեթմոյ Կոռիկոսցոյն՝ պատասխանի թղթոյն» երկի, ՄՄ 573 մատյանի ընդօրինակությունում ևս թուղթը թվագրված է Հայոց :ՇԶ: (1131/2) թվականով (տե՛ս թղ. 320բ):

ա/ թվականի սրբագրումը կատարում է հ. Ղևոնդ Ալիշանը³⁸։

բ/ Եսայի Նչեցու ձեռքին եղել է այս թղթի մեկ այլ ընդօրինակություն, ուր այն թվագրված է եղել Հայոց :ՇՂ: , այսինքն՝ Քրիստոսից հետո 1141/2 թվականով³⁹։

Քանի որ մենք որևէ հաստատուն փաստարկ չունենք պնդելու մեր առաջին ենթադրությունը, ապա ավելի հավանական ենք համարում, որ այդ սրբագրումը պատկանում է հ. Ղ. Ալիշանի օգտագործած սկզբնաղբյուրին, որը դեռևս հայտնի չէ, կամ էլ բխում է ԺԹ դ. եվրոպական պատմագրական աշխատություններից⁴⁰։ Համենայն դեպս, Սմբատի «Տարեգրության» ընդարձակ տարբերակում ևս, պապի նվիրակի գալուստը թվագրվում է Հայոց :ՇՂ: , այն է 1141/2 թվականով⁴¹։ Նշանակում է, թե պապական նամակը Հռոմկլա է հասել Իննոկենտիոս Բ-ի կյանքի վերջին տարիներին՝ 1141–1143 թթ. ընթացքում, քանի որ թուղթը պատասխանն է Ալբերիկ եպիսկոպոսի կողմից Հռոմ տարված Հայոց կաթողիկոսի դավանաբանական գրություն։ Այս նամակի մա-

³⁸ Հ. Ղևոնդ Ալիշանը կարող էր հետևել հայ նոր պատմագրության հիմնադիր Միքէայել Չամչյանին, որը Իննոկենտիոս Բ պապի նվիրակ Ալբերիկոս արքեպիսկոպոս Օստիացու հավաքած Անտիոքի ժողովը, ուր քննվելու էր այդ քաղաքի արքեպիսկոպոս Հռատովիոսի ընտրության օրինականության հարցը, թվագրում է 1141 թվականով, թեպետ նաև ավելացնում է. «1143 և ըստ ոմանց 1136, որպէս է տեսանել ի մատենագրութիւնս ժողովոց, հատոր ԺԱ, էրես 506 և 583 ևն.»: Տե՛ս **Միքայել Չամչեանց**, Պատմութիւն Հայոց, հտ. Գ (1786), էջ 53։

³⁹ Այս վարկածը փաստորեն դեռևս չի ապացուցում Երևանի ՄՄ թ. 500 ձեռագրով (տե՛ս թղ. 377ա–380բ)։ Չնայած այս ընդօրինակությամբ հայտնի է դառնում, որ Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսը Եսայի Նչեցուն է ուղարկել նաև Իննոկենտիոս Բ-ի թղթի պատճենը, սակայն այս ընդօրինակության վերնագրում ևս նամակը թվագրված է Հայոց :ՇՁ: (1131/2) թվականով։ Փաստ է, որ այս ընդօրինակությունը եղել է Եսայի Նչեցու ձեռքին։ Այդ է վկայում թղ. 380բ-ում պահպանված հիշատակագրությունը. «Տէր Գրիգորիս ծառայ Աստուծոյ և ողորմութեամբ նորին կաթողիկ[ոս] ամենայն Հայոց՝ ընծայեցի զգիրքս Եսայի վարդապետին ի ձեռն մեր հաւատարիմ լիկատին տէր Կոստանդէ արքեպիսկոպոսին Կեսարու, առաքեալ յարևելս ի թվիս :ՉԾԴ:» (հմմտ. Ա. Տէր-Միքելեան, Միջին դարերի կաթողիկոսների ձգտումները, էջ 238; **ՄՅՀԶՄՄ**, հտ. Բ, սյուն 1018)։ Այս հիշատակարանը Վենետիկի մխիթարյան միաբանության 1970-ական թթ. արահայր Պ. Անանեանը ևս օգտագործում է ապացուցելու համար, որ Եսայի Նչեցին ձեռքին ունեցել է Իննոկենտիոս Բ պապի նամակի բնագիրը, որով ավելի ճշգրիտ է թվագրել այն (տե՛ս Բազմավէպ, 1996, էջ 204, ծան. 10)։ Անկասկած, Եսայի Նչեցին այս ընդօրինակությունն ունեցել է իր տրամադրության տակ, քանի որ ՄՄ թ. 500 մատյանի վերջում պահպանվել է նաև Եսայի Նչեցու հիշատակագրությունը, որով հավաստիացնում է. «Եսայի վարդապետին է գիրքս յաղագս որոյ միշտ յիշել աղաչեմ յողորմութիւնն Աստուծոյ» (թղ. 446ա, հմմտ. **ՄՅՀԶՄՄ**, հտ. Բ, սյուն 1018)։

⁴⁰ Գիտական գրականության մեջ շրջանառված գրեթե բոլոր թվականներն ի մի է բերել Պ. Պելլիոն, տե՛ս P. Pelliot, “Mélanges sur l'époque des Croisades”, p. 2–3։

⁴¹ Սմբատ, Տարեգիրք (Վենետիկ), էջ 161–162։

սին Հռոմի պապն իր պատասխանն թղթում գրում է. «Լուաք զուղղափառ հաւատս ձեր գրոյս, զոր եբեր Աղպրի արքեպիսկոպոսս Աւստոյ, զոր իբրեւ ընթերցաք գոհութեամբ մեծաւ փառս մատուցաք...»⁴²:

Ժամանակակից պատմագրութեան համար ընդունելի է, որ Հռոմի պապ Իննոկենտիոս Գ-ի Ալբերիկոս նվիրակն, ըստ Ֆրանսիացի միջնադարագետ Պ. Պելիոյի հաշվարկների, կարող էր ժամանած լինել Խաչակրաց Արևելք ոչ ուշ քան 1140 թ. վաղ գարնանը. հրավիրելով Անտիոքի ժողովը 1140 թ. նոյեմբերի 30-ին, իսկ Երուսաղեմի ժողովը՝ 1141 թ. Մեծ Զատիկի օրերին⁴³: Վիլհելմ Սուրացու բնագրի նորօրյա հրատարակիչներն ևս, Ալբերիկոսի այցելութունը Խաչակրաց Արևելք թվագրում են 1140–1141 թթ.⁴⁴: ԺԲ դարի հակոբեիկ ասորի եկեղեցու պատրիարք Միքայել Ասորին ևս, անդրադառնալով հիշյալ ժողովներին հակոբեիկ ասորական և Ծով ամրոցում նստող Հայոց կաթողիկոսի մասնակցութեանը, իրադարձութունները թվագրում է Սելևկյան 1454 թ., որն համապատասխանում է Քրիստոսի ծննդյան 1142/3 թ.⁴⁵:

Աղպրի լեկաթը, նույն ինքը՝ Իննոկենտիոս Բ պապի նվիրակ Օստիայի (Օստիոյ կամ Օստոյ) արքեպիսկոպոս Աղպրի-Ալբերիկոսն է, որն ըստ Վիլհելմ Սուրացու ժողովներ է հրավիրել Անտիոքում և Երուսաղեմում: Խաչակրաց Արևելքի կաթողիկ եկեղեցական թեմերի վերևում հիշատակված երկրորդ ժողովին, ըստ լատինական և ասորական սկզբնաղբյուրների վկայութեան, մասնակցել է նաև Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունին⁴⁶:

Բերված վկայութունների և նամակում առկա փաստարկումների համաձայն, մեզ հետաքրքրող նամակը պետք է գրված լինի այն բանից հետո, երբ Արևելքի արքեպիսկոպոս Աղպրին վերադարձել է Հռոմ: Այդ մասին վկայում է Իննոկենտիոս Բ-ի մեզ հասած թուղթը. «Լուաք զուղղափառ հաւատս ձեր ի գրոյս, զոր եբեր Աղպրի արքեպիսկոպոս Աւստոյ...»⁴⁷ կամ «Այլ եղբարս Աղպրի ոչ կարաց զբովանդակն պատմել վասն կենաց ձեր եւ քաղաքավարութեան...»⁴⁸: Ըստ այդ վավերագրի, Իննոկենտիոս Բ-ը ձեռնամուխ է եղել մեզ հասած վավերագրի շարադրմանը այն բանից հետո, երբ Աղպրի արքեպիսկոպոսը իրեն է հանձնել Գրիգոր Գ կաթողիկոսի նամակը: Քանի որ դեռևս

⁴² ՄՄ, ձեռ. 1026, թղ. 221բ :

⁴³ J. Richard, *La Papauté et les missions d'Orient au moyen Age (XIII^e – XV^e siècles)*, deuxième édition (Roma-Paris, 1998), p. 10, n. 31.

⁴⁴ Guillaume de Tyr, *Chronicon*, p. 688–700.

⁴⁵ M.S. t. III, p. 255, col. 1.

⁴⁶ Guillaume de Tyr, *Chronicon*, p. 699: Հմմտ. նաև G. Dédéyan, «Le rôle complémentaire des frères Pahlawuni Grigor III», p. 241:

⁴⁷ ՄՄ թ. 1026, թղ. 221բ:

⁴⁸ Անդ, թղ. 230ա:

անհայտ է Աղպրի արքեպիսկոպոսի Հռոմ հասնելու ճշգրիտ թվականը, կարելի է ենթադրել, որ Իննոկենտիոս Բ-ն իր թուղթը գրել է 1141 կամ ամենաուշը՝ 1142 թվականին, ու եթե վավերագրի վերջում արձանագրված թվականն էլ չի խմբագրված Հայոց կաթողիկոսարանի դիվանում⁴⁹ և չի դրվել նոտարատանը գրանցվելու ամսաթիվը, ապա կարելի է ենթադրել, որ վավերագիրը գրվել է «ի Հռոմ ի լադրանն նախ քան զեւթն կաղանդաց հոկտեմբեր ամսոյ»⁵⁰, ամենայն հավանականությամբ 1142 կամ 1143 թ. հոկտեմբեր ամսով⁵¹: Չի բացավում, որ նամակի թվագրման «զեւթն կաղանդաց հոկտեմբեր ամսոյ» արտահայտությունը Հռոմկլայի նոտարատանը հավելված, վավերագրի մուտքագրման թվականն է: Հռոմկլայի նոտարատանը պահպանված Բյուզանդիայի կայսր Մանուել Ա-ի նամակների հայերեն թարգմանությունները ի տարբերություն հունարեն բնօրինակների, նոտարատուն մուտքագրվելիս, ստացել են նոր թվագրում⁵²: Այս օրինակափոխությունը, կարծում եմ, պետք է տարածել նաև Հռոմից ստացված այս նամակի հայերեն բնագրի թվականի վրա, քանի որ այդ Հռոմկլայի նոտարատան աշխատանքային սկզբունքներից մեկը պետք է լիներ: Կիլիկիայի հայկական նոտարատների աշխատանքի մասին շահագանց քիչ տեղեկություններ ունենք: Համենայն դեպս, կարելի է ենթադրել, որ ինչպես թագավորական նոտարատանը, այստեղ ևս համագործակցում էին լատին նոտարների հետ⁵³:

Բ 3. Վավերագրի կառուցվածքը.

Իննոկենտիոս Բ-ից մեզ հասած թուղթն ունի թղթառաջք, մուտք, բովանդակություն, վերջաբան, հրաժեշտի բանաձև և թվագրում, այսինքն այն բոլոր բաղկացուցիչ տարրերը, որոնք պարտադիր են Հռոմի Պապի կողմից գրված

⁴⁹ Նման գործելակերպ Հռոմկլայի նոտարատան աշխատանքում նկատում ենք, երբ համեմատում ենք 1165–1178 թթ. հայ-բյուզանդական բանակցությունների հունարեն և հայերեն բնագրերը, ուր Կոստանդնուպոլսից ստացված վավերագրերը թվագրվում էին Բյուզանդական վավերագրերին բնորոշ ինդիկտիոնի հաշվարկման համակարգով, սակայն այն տարով ու ամսաթիվով, երբ փաստաթուղթը մուտք է գործել Հռոմկլայի նոտարատուն: Այդ մասին տե՛ս **Ա. Բողոյան**, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 113:

⁵⁰ Տե՛ս **ՄՄ**, ձեռ, 1026, թղ. 230բ – 231ա:

⁵¹ Պ. Հալֆտերը, հետևելով Ռ. Մանսելին և մանավանդ վենետիկի մխիթարյան միաբան հ. Կ. Ամատունուն, նամակը թվագրում է 1141 թ. սեպտեմբերի 25-ով տե՛ս **P. Halfter**, *Das Papstum*, S. 132, Anm. 31:

⁵² **Ա. Բողոյան**, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 114:

⁵³ Այդ մասին տե՛ս **J. Richard**, “La diplomatie royale dans les royaumes d’Arménie et de Chypre (XIIe–XVe siècle)”, *Bibliothèque de l’École des chartes* 124 (1986), p. 69–86, հմմտ. նաև **J. Richard**, “Le plurilinguisme dans les actes latin”, *La langue des actes. Actes du Xie Congrès international de diplomatique (Troyes, jeudi 11 - samedi 13 septembre 2003)* (Paris, 2004).

այդ դարաշրջանի յուրաքանչյուր պաշտոնական նամակի: Այս վավերագրի թղթավերջն ու թղթառաջը գրեթե նույնանուն են Լուկիոս Գ-ի Կղեմես Գ-ի նամակների մեզ հասած հայերեն բնագրերի համապատասխան ձևակերպումների հետ⁵⁴: Դեռևս ԺԲ դարում հայերեն թարգմանված այս վավերագրերը, համեմատության համար դրված են ներկա գլխի հավելվածում:

Բ 4. Նամակի վավերականության հարցը.

1893 թ. Արշակ Տեր-Միքելեանի կողմից վավերագրի հրապարակումից հետո որևէ մեկը կասկածի չի ենթարկել այս փաստաթղթի վավերականությունը: Ինչպես տեսանք, այս նամակի բնագիրը ժամանակին ծանոթ է եղել Ներսես Լամբրոնացուն, որի ժամանակներին է հասնում նաև օգտագործված ձեռագրի նախօրինակը: Ուրեմն՝ առանց վարանելու կարելի է պնդել, որ մեր ձեռքն է հասել Հռոմի պապ Իննոկենտիոս Բ-ի թղթի Հռոմկլայի նոտարական գրասենյակում պահպանվող հայերեն թարգմանության պատճենը: Պիտի հուսալ, որ Հռոմի պապական արխիվներում կատարվելիք հետազոտությունները թույլ կտան հայտնաբերել նաև այս թղթի լատիներեն բնագիրը⁵⁵:

Իննոկենտիոս Գ-ի նամակում կարելի է առանձնացնել երեք կարևոր ծիսադավանական հարց, որոնցից յուրաքանչյուրին Հայոց եկեղեցին և նրա աստվածաբան գործիչները ժամանակ առ ժամանակ անդրադարձել են, սկսած Զ դարում սկիզբ առած մեր եկեղեցու և քույր եկեղեցիների միջև ծայր առած դավանաբանական վեճերի շրջանից: Այս հարցերում, ի տարբերություն քույր եկեղեցիների դիրքորոշման, Հայոց եկեղեցին իր ավանդույթն համարելով ավելի հին, փորձել է սկզբնաղբյուրների օգտագործմամբ ապացուցել սեփական մեկնակետի իրավացիությունը: Անդրադառնանք Հռոմի պապ

⁵⁴ ԺԲ դարի պապական նոտարատան աշխատանքի մասին, տե՛ս **R. Hiestand**, “Die Leistungsfähigkeit der päpstlichen Kanzlei im 12. Jahrhundert mit einem Blick auf den lateinischen Osten”, *Papsturkunde und europäischen Urkundenwesen: Studien zu ihrer formalin und rechtlichen Kohärenz vom 11. Bis 15. Jahrhundert*, hrsg. P. Herde und H. Jakobs (Köln-Weimar-Wien: Böhlau Verlag, 1999), S. 1–26: Հեղինակը փորձում է համակարգել հիշատակված դարաշրջանի պապական նոտարատանից դուրս եկած վավերագրերի հաշվառման և հետազոտման ժամանակակից սկզբունքները:

⁵⁵ Այս վավերագրի լատիներեն պատճենը գտնելու մեր բոլոր փորձերը գրականության պակասի պատճառով անարդյունք են ավարտվել: Ան-Կալկա Բենեդիկտյան վանքի վանական, հայագետ Շառլ Ռոնոն ինձ տեղեկացրել է, որ այն արձանագրված չէ անգամ Յաֆեի կազմած պապական նամակների ցանկում (**Ph. Jaffé**, *Regesta Pontificum Romanorum*):

Իննուկենտիոս Բ-ի թղթում արծարծված հարցերին և հնարավորության սահմաններում ցույց տանք Հայոց եկեղեցու դիրքորոշումը դրանց նկատմամբ: Այդ հարցերն են.

1. Հռոմի տեղը և դերը Տիեզերական եկեղեցու նվիրապետական կառույցում,

2. Պատարագի գինուն ջուր խառնելու հարցը,

3. Քրիստոսի ծնունդը տոնելու օրվա խնդիրը:

Հատկանշական է, որ ԺԲ դարում սկսելով փոխհարաբերությունները Հայոց եկեղեցու հետ, Հռոմի պապությունը առաջ է քաշում միայն այս երեք հարցերը: Հետագայում սրանց են միանում նաև մի շարք այլ խնդիրներ, իսկ ԺԴ դարում դրանց թիվն արդեն հասնում էր 117-ի⁵⁶:

Հիշատակված խնդիրները սերտորեն կապված են թե՛ Հռոմի, և թե՛ Հռոմկլայի նոտարատների գործունեության ծիսադավանաբանական առաջնահերթությունների որոշակի հակամետ ընկալումների հետ: Փորձենք ներկայացնել այդ խնդիրների կարևորությունն ու նշանակությունը Հայոց եկեղեցու և Կիլիկիայի թագավորության մտածողական համակարգում.

1. Ինչպես ասացինք, Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցը մինչև ԺԲ դարը գրեթե չի շփվել Հռոմի պապական եկեղեցու հետ: Արևմուտքի հետ փոխհարաբերությունները իրականացվում էին Կոստանդնուպոլսի եկեղեցու միջնորդությամբ, որն իրեն համարում էր Հռոմի իրավահաջորդն ու ժառանգորդը և իր մայրաքաղաքն անվանում էր Նոր Հռոմ: Քաղկեդոնի ժողովից հետո, Արևելքում առանձնացան մի շարք եկեղեցական նվիրապետական կառույցներ, որոնք չէին ընդունում այդ ժողովում ընդունված «երկու բնութիւն» դավանաբանական ձևակերպումը: Թեպետ Հռոմի եկեղեցին լիովին համաձայն էր այդ ձևակերպմանը, սակայն ընդդիմանում էր Քաղկեդոնի ժողովի ընդունած ԻԸ կանոնական կետին, որով հավասարեցվում էին Կոստանդնուպոլսի և Հռոմի աթոռների իրավասությունները: Գտնվելով կայսրության մայրաքաղաքում, Կոստանդնուպոլսի պատրիարքությունը սկսած Զ դարից, որդեգրեց մի քաղաքականություն, ըստ որի նրան պիտի ենթարկվեին Արևելքի բոլոր պատրիարքական աթոռները և եկեղեցական թեմերը: Կոստանդնուպոլսի աթոռի համեմատությամբ, հետզհետե երկրորդական դերակատարություն ստանձնեցին Անտիոքի, Աղեքսանդրիայի և Երուսաղեմի աթոռները: Այդ աթոռների եկեղեցական կառույցներին հպատակ տեղական ազգաբնակչության հիմնական զանգվածը, չընդունելով կայսերական եկեղեցու դիկտատը, հակադրվեց Քաղկեդոնի դավանաբանությանը և երկդարյա պայքարի

⁵⁶ Տե՛ս Յ. Անասեան, Մանր երկեր (Լոս Անջելես, 1987), էջ 303–317, հատկապես՝ 303–307:

ընթացքում կարողացավ ստեղծել Եփեսոսի ժողովի դավանաբանական սկզբունքներին հավատարիմ նվիրապետական աթոռներ: Այդ աթոռները սկզբում հակադրվեցին Եփեսոսում հերձված ճանաչված նեստորականությանը, հետագայում՝ զուգահեռներ տեսան Քաղկեդոնի դավանաբանական բանաձևի և նեստորական հավատամքի միջև⁵⁷: Բավական ինքնուրույնություն ունեցող Հայոց կաթողիկոսարանը, դաշնակցած հակաքաղկեդոնական ասորի եկեղեցու հետ, հակադրվեց սկզբում Սասանյան Պարսկաստանի նեստորական եկեղեցական կառույցին, իսկ հետագայում իրենց առանձին նվիրապետական կառույցները ստեղծեցին ի հակադրություն բյուզանդական եկեղեցու: Այդ քաղաքականությունը արաբական ռազմարշավներից հետո տվեց իր պտուղները: Մերձավոր Արևելքում պայքար ծավալվեց Կոստանդնուպոլսի կայսերական եկեղեցուն ենթակա թեմերի և Քաղկեդոնի ժողովի դավանաբանությանը հակադրվող, ազգային հիմքի վրա առաջացած նվիրապետական կառույցների միջև: Դպտիներին հաջողվեց Եգիպտոսի տեղական ազգաբնակչությանը համախմբել Ալեքսանդրիայի աթոռի շուրջ, որը երես թեքեց Կ. Պոլսից: Հակոբիկ ասորիներն իրենց առաջնորդին անվանեցին Անտոքի պատրիարք, տիեզերական եկեղեցու կառույցում հավակնելով ժառանգել այդ աթոռի իրավասությունները, պայքարի մեջ մտնելով բյուզանդահայատակ մելքիտ հոգևորականության հետ: Այսրկովկասի եկեղեցիներն էլ Հայոց կաթողիկոսարանի առաջնորդությամբ հետզհետե իրենց կապերը խզեցին Կոստանդնուպոլսից, սակայն այդ միասնությունը խախտվեց կովկասյան եկեղեցական ընտանիքից վրաց եկեղեցու բաժանմամբ: Այդ քայլով Վրաց եկեղեցին է դարի սկզբից հետզհետե վերադարձավ բյուզանդական եկեղեցու հովանավորության ոլորտ: Քաղաքական բաժանումներին տարածաշրջանում ավելացավ նաև հոգևոր-եկեղեցական պայքարը, որն ընթանում էր Քաղկեդոնի դավանաբանությունն ընդունողների և մերժողների միջև: Բյուզանդական և վրացական եկեղեցիների հովանավորության ներքո հայ քաղկեդոնականները երկարատև պայքար սկսեցին Հայոց եկեղեցու և նրա դավանանքի դեմ:

ԺԲ դարի սկզբից Խաչակրաց Արևելքի երկրներում իրեն ենթակա թեմեր սկսեց հաստատել Հռոմի պապական եկեղեցին, որը հիմնականում սեփական թեմերն էր հաստատում՝ Մերձավոր Արևելքի քաղաքներից վճռելով Բյուզանդական եկեղեցուն հավատարիմ բարձրաստիճան հոգևոր պաշտոնյանե-

⁵⁷ Այդ փաստը չեն ժխտում նույնիսկ ուղղափառ եկեղեցու աստվածաբանները. տե՛ս Գ.Յ. Փлоровский, *Византийские Отцы V–VIII, из чтения в православном богословском институте в Париже* (Париж, 1933), с. 27–29:

րին, առաջին հերթին հակադրվելով Բյուզանդական կայսրության եկեղեցական քաղաքականությանը⁵⁸: Հռոմի եկեղեցու այս արշավին սատարում էին տարածաշրջանում ստեղծված խաչակրաց պետությունները: Մերձավոր Արևելքի տեղական եկեղեցիները փորձում էին այդ պայքարի բովանակումը իրենց նվիրապետական աթոռների համար ձեռք բերել առավել նպաստավոր կենսապայմաններ: Հռոմի պապությունը և Մերձավոր արևելքում ստեղծված կաթոլիկ եկեղեցական կառույցը բյուզանդական եկեղեցու դեմ պայքարում փորձում էր իր կողմը գրավել խաչակրաց Մերձավոր Արևելքում նվիրապետական կառույցներ ունեցող աթոռների հոգևոր և աշխարհիկ վերնախավին: Այս միջեկեղեցական հակամարտությանը անդրադառնում են ոչ միայն ժամանակի լատին և հույն պատմագրությունը, այլ նաև հայ, ասորի ու արաբ քրիստոնեական մատենագրությունները:

ԺԲ դարում Հռոմը հսկայական միսիոներական-քարոզչական գործունեություն էր ծավալել Մերձավոր Արևելքում⁵⁹: Ահա այս ժամանակ է, որ Հայոց եկեղեցին առաջին անգամ ստիպված էր հստակեցնել իր դիրքորոշումը պապական աթոռի նկատմամբ: Այս խնդրում, մեզ թվում է, երկրորդական դեր չի ունեցել նաև Խննոկենտրոս Բ-ի թուղթը, որը պահանջում էր անվերապահորեն ընդունել Հռոմի պապական եկեղեցու գերագահությունը և անսխալականությունը, ու հնազանդ լինել Հռոմի եկեղեցուն բոլոր հոգևոր (նաև քաղաքական) հարցերում. «վասն զի Եկեղեցույս Հռոմայ տուաւ պարգեւ ի Քրիստոսէ, հաստատել զամենայն խախտեալ Եկեղեցիս, մոլորեալ են որոշեալքն ի սմանէ, որք ոչ գան զկնի վարդապետութեան սորա, քանզի որպէս մարմին հնազանդի գլխոյ, նոյնպէս և ընթանուր եկեղեցի որ է տաճար Քրիստոսի, հնազանդել պարտի սմա, որ գլուխ եկեղեց[ւ]ոյ հաստատեցաւ ի Քրիստոսէ»⁶⁰:

Տիեզերական եկեղեցու նվիրապետական աթոռների դիրքին ու փոխհարաբերություններին Հայոց մատենագրության մեջ բազմաթիվ տեղեկությունների կարելի է հանդիպել: Սակայն այդ երկերի բազմազան մոտեցումների մեջ տեսական հստակություն են փորձում մտցնել Տիեզերական եկեղեցու պատրիարքական աթոռների փոխհարաբերություններին նվիրված իրենց աշխատանքներով Ժ դարի հեղինակներ Մաշտոց Եղվարդեցին և նրա աշակերտ Հովհաննես Դրասխանակերտցին⁶¹: Մեկ այլ իրականությունից են ծնվել Ներսես

⁵⁸ Cl. Cahen, *La Syrie*, էջ 309–326:

⁵⁹ J. Richard, *La Papauté*, p. 3–16:

⁶⁰ Տե՛ս ՄՄ, ձեռ. 1026, թղ. 223ա–բ:

⁶¹ Ա. Բողոջան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 200–201:

Շնորհալու գաղափարները: Նա առաջին անգամ «Ողբ Եղեսիոյ» պոեմում, հենվելով Մերձավոր Արևելքի և հայ մատենագրական ավանդույթի վրա, անդրադառնում է առանձնակի Երուսաղեմի, Հռոմի, Կոստանդնուպոլսի, Ալեքսանդրիայի և Անտիոքի պատրիարքական աթոռներին: Հետաքրքրություն է ներկայացնում նաև պոեմում պատրիարքական աթոռների թվարկման ինքնատիպ հերթականությունը, որոնց Եղեսիա քաղաքի անունից հերթով դիմում է Պահլավունի կաթողիկոսը⁶²: Աչք է զարնում, որ Ներսես Շնորհալու պատկերացումները պատրիարքական աթոռների վերաբերյալ, բխում են հինգ զգայարանների մասին բյուզանդական պատկերացումներից:

Հռոմի պատրիարքական աթոռին Ներսես Շնորհալին անդրադառնում է նաև Մանուել Կոմնենոսին ուղարկված իր առաջին թղթում, գրելով. «Նա զի և լուաք՝ թէ [սուրբ եւ առաջին ամենայն եպիսկոպոսապետաց] Հայրապետն Հռոմմայ, եւ փոխանորդն Պետրոսի առաքելոյ յիւրոց անտի իմաստնոց խօսել առաջի սուրբ թագաւորութեան ձերոյ վասն միաբանութեան»⁶³:

Պատրիարքական աթոռների առաջնության խնդրին հետագայում անդրադառնում են նաև Ներսես Լամբրոնացին⁶⁴ և Մխիթար Գոշը⁶⁵: Նրանց որդեգրած հայեցակետի մատենագրական առաջին վկայություններն առկա են

⁶² Տե՛ս Ներսէս Շնորհալի, Ողբ Եղեսիոյ, քննական բնագիր, բանասիրական դիտողություններ, ծանոթագրություններ՝ Մ. Մկրտչյանի (Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1973), էջ 22–30:

⁶³ Ներսէս Շնորհալի, ԹԸ, էջ 117: Այս մեջբերման մեջ ուղիղ փակագծերի մեջ հայտնված հատվածը բաց են թողել ՊԽՄ-ի բնագրի գրեթե բոլոր հրատարակությունները՝ հետևելով այդ գրքի առաջին սանկտպետրբուրգյան հրատարակությանը (Անդ, 1788, էջ 110): Այդ մասին տե՛ս Գ. Ներսէս Տէր Ներսեսեան, «Մեր նախնեաց հաւատքը. Ս. Ներսէս Շնորհալի եւ Պետրոս առաքելը», Բազմավէպ (1953), էջ 238–241, հմմտ. նաև Լ. Զէքիեան, «Համամիութենական տրամախօսութիւն մը ԺԲ դարուն. բանակցութիւններ Ս. Ներսէս Շնորհալիի եւ կայսերական նուիրակ Թէորիանոսի միջեւ հայ եւ բիւզանդական եկեղեցիներուն միութեան շուրջ», «Բազմավէպ» (1977), էջ 620, ծան. 47: Իրականությունն այն է, որ լավագույն ձեռագրերն ունեն այս ընթերցումը, սակայն ժողովածոյի հրատարակությունները հետևում են արք. Հովսեփ Արղունթյանի հրատարակությանը:

Հրատարակությունների մեջ նախնական բնագրի հիշյալ հատվածը պահել են միայն այդ թղթի վեներտիկյան հրատարակություններն ու լատիներեն թարգմանությունը: Այնուամենայնիվ, մեզ թվում է, որ գերաշնորհ սրբազան Գ. Ներսես Տէր Ներսէսեանը մեղմ ասած փոքր ինչ շփոթանցեցնում է (հետևելով Կապելետու հրատարակությանը), բացի վեներտիկյանից, այս երկի բոլոր հրատարակությունները համարելով կեղծված: Նման վերաբերմունքը ՊԽՄ-ի նման վավերական բնագրին, չի կարող շանդրադառնալ հայերեն լեզվով պահպանված վավերագրերի նկատմամբ կասկածի քողի ավելացմանը:

⁶⁴ Տե՛ս Ա. Բողոյեան, «Փիլիպոպոլսի հայական բնակչութիւնը եւ հայ-բիւզանդական եկեղեցաքաղաքական փոխհարաբերութիւնները ԺԲ դարի երկրորդ կէսին», էջեր Հայ գաղթավայրերի պատմութեան, խմբ.՝ Վ.Բ. Բարխուդարեան, Զ. Եկաւեան (Երևան, 1996), էջ 143–147:

⁶⁵ Տե՛ս Մատենագիրք Հայոց, ԺԹ հատոր, ԺԲ դար, Մխիթար Գոշ, Գիրք Ա (Երևան, 2014), էջ 345, 514, 830–831:

արդեն ժ դարի հիշատակված սկզբնաղբյուրներում⁶⁶: Հիմնվելով այդ սկզբնաղբյուրների վրա, ուր պատրիարքական չորս Աթոռները հավասար են և հիմնված են ըստ ավետարանիչների հերթականության, Ներսես Լամբրոնացին Հռոմի աթոռի համար կատարում է մի էական հավելում: Բերենք ողջ բնագիրը. «Արդ առաջին աստիճան է յՆկեղեցի դաս պատրիարգաց, որ թարգմանին առաջին հարք, այսինքն հայրապետք. և նստին նոքա ընդ տիեզերս ի չորս մայրաքաղաքաց չորս Աթոռան, ուր ավետարանիչքն գրեցին զԱւետարանն: Եւ վասն զի նախ Մատթէոս գրեաց յԱնտիոք, պատրիարգն Անտիոքու զնախապատուութիւն ունի քան զայլսն. իսկ յետ նորա Մարկոս յԱղեքսանդրիայ, յաջորդ նորա պատրիարգն յետ սորա դասակարգեցաւ. և Ղուկաս ի Հռոմ, որ Հռովմայն և՛ ըստ կարգի երրորդ էր պատուով, թէպէտ և զօրութեամբ առաջին. այլ Յովհաննէս հուսկ յետոյ յԵփեսոս գրեաց, որ նորայն եղև պատրիարգ, վերջին էր Աթոռով քան զերիսն»⁶⁷:

Այս ձևակերպումներից իսկ արդեն երևում է, որ Ներսես Լամբրոնացին, որը հայագիտական մի շարք աշխատանքներում անարդարացիորեն մարտնչող լատինասերի համբավ է ձեռք բերել, բավական հեռացել էր արդեն Հռոմի Աթոռի նկատմամբ Ներսես Շնորհալու բավական հստակ դիրքորոշումից և եկեղեցական նվիրապետական համակարգում երրորդ տեղն էր հատկացնում Հռոմի աթոռին:

Իսկ ԺԳ դարում, միարարական շարժման հակառակորդ հայ հոգևորականները բացահայտորեն պայքարում էին Հռոմի Պապի առաջնության մասին տեսության դեմ: Այդ իմաստով շատ խոստուն են Վարդան Արևելցու⁶⁸, Մխիթար Սկևռացու (Տաշրացու)⁶⁹ և ուրիշների մատենագրական ժառանգությունը, ուր արտահայտված է իրենց ժամանակաշրջանի Հայոց կաթողիկոսարանի և ավանդապահ հայ վարդապետների պաշտոնական կարծիքը: Հիմնականում այս դրույթի դեմ ծավալված պայքարում էր, որ Հայոց եկեղե-

⁶⁶ Տե՛ս Ա. Բողոյեան, «Փրիլպոպոլսի հայական բնակչութիւնը», էջ 139–142:

⁶⁷ Տե՛ս Սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի, Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոյ Պատարագին (Վենետիկ, Ս. Ղազար, 1847), էջ 81–82:

⁶⁸ Գիրք թղթոց. մատենագրութիւն նախնեաց [Սահակ մեսրոպյան մատենագրարան, Ե] (Թիֆլիս, 1901), էջ 503–509 և հատկապես՝ էջ 503–504:

⁶⁹ Տե՛ս Պատասխանիք Մխիթարայ քահանայի Սկևռացւոյ Յաղագս համապատուութեան երկրտասան առաքելոց (Երուսաղէմ, 1860), էջ 5–6, 15–19 և այլն: Հմմտ. նաև աշխարհաբար թարգմանութիւնը Ա. Բողոյեան, «Մխիթար վարդապետ Տաշրացին (Սկևռացին)՝ Հայոց եկեղեցու նվիրապետական կառոյցի պաշտպան», «Գանձասար» աստուածաբանական հանդէս, Ե (1994), էջ 137–157, Զ (1996), էջ 402–420:

ցին ժԴ դարում գրեթե պառակտվեց: Կաթոլիկ եկեղեցին հաստատվեց Նախիջևանում և երկարատև պայքար մղեց տարածաշրջանի Հայոց եկեղեցական կառույցի հետ, հետզհետե քանդելով այն⁷⁰:

2. Քրիստոնեական եկեղեցու սրբագույն արարողություններից է Պատարագի խորհուրդը: Հայոց եկեղեցու պատմական ավանդույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայոց եկեղեցում հնուց ի վեր ջուր չի խառնվել Պատարագի գինուն: Իհարկե կան նաև մի շարք պատմական վկայություններ, որ Կոստանդնուպոլսի եկեղեցու պարտադրմամբ, Հայոց եկեղեցին Պատարագի գինուն երբեմն ջուր է խառնել⁷¹: Սակայն Հայոց եկեղեցին լինելով ավանդապահ, չէր կարող այդքան հեշտ հրաժարվել որդեգրած դարավոր ավանդույթից, որի հաստատման ապացույցները նա տեսնում էր Աստվածաշնչում և Հայրաբանական գրականության մեջ, ինչպես նաև հարևան քույր եկեղեցիների ծեսերում⁷²: Այդ իսկ պատճառով Հայոց եկեղեցին ընդունել էր այդ դարավոր ավանդույթը պաշտպանելու ուղին: Ընդունել հակառակ դիրքորոշում, նշանակում էր բոլորին ասել, որ իր դիրքորոշումը սխալ է եղել պատմական զարգացման ողջ ընթացքում, այն դեպքում, երբ իրեն այդ ավանդույթը, պարտադրող եկեղեցական կազմակերպություններն էլ, ինչպիսիք էին Հռոմի և Կ. Պոլսի եկեղեցիները, ավելի լուրջ հիմք չունեին Պատարագի գինուն ջուր խառնելու համար: Ոչ մի ավանդապահ եկեղեցի երբևէ չի համաձայնի որևէ նորամուծություն կատարել դարեր շարունակ սրբագործված այդ արարողության մեջ: Մանավանդ այնպիսի մի եկեղեցի, ինչպիսին է Հայոցը, որի ակունքները ավանդաբար հասնում են մինչև առաքելական քարոզչության շրջանին: Այնուամենայնիվ, սկսած 9 դարից, բյուզանդական և Հայոց եկեղեցական փոխհարաբերություններում գայթակղության քար է դարձել Պատարագի գինու և Հացի խնդիրը: Իհարկե աշխարհիկ իշխանության ստիպումով մինչև ժԲ դարը բյուզանդական օրթոդոքս եկեղեցուն հաջողվել է երբեմն ստիպել Հայոց բարձր հոգևորական դասի որոշ ներկայացուցիչների Պատարագի գինուն ջուր խառնել, իսկ բաղարջի փոխարեն հաց օգտագործել: Սակայն Հայոց եկեղեցին սակավաթիվ այդ փորձերից հետո կրկին վերագործել է իր սրբագործած հայրերի կողմից ավանդված սովորություններին:

⁷⁰ Այս նահանգի հայկական ազգաբնակչության ճակատագրի մասին տե՛ս **Յովհաննես Բոնեցի**, Յաղագս Քերականին, բնագիրը հրատարակության պատրաստեց Լ.Ս. Խաչիկյանը (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977), էջ 29:

⁷¹ Խնդրի մասին տե՛ս **Ն. Գարսոյան**, «Հաղորդության Սուրբ բաժակի (=սկիհի) անապակ գինին Հայոց եկեղեցում», էջմիածին (2010, է), էջ 12–30 (Թարգմանությունը՝ Ա. Բողոյանի) և **Զ. Վ. Բաղումյան**, Անապակ բաժակի խնդիրը Հայոց եկեղեցում (էջմիածին, 2013), էջ 47–79:

⁷² **Անդ.**, էջ 55–79:

Հետաքրքիր է, որ Իննոկենտիոս Բ-ը չի պահանջում բաղարջը փոխարինել խմորուն հացով, քանի որ Հռոմի եկեղեցին ևս դարավոր ավանդույթ ունի Պատարագի ժամանակ բաղարջ օգտագործել: Այս փաստը գիտեր և Կոստանդնուպոլսի եկեղեցու դեմ պարտադրանքին նրբորեն հակադրվում է Ներսես Շնորհալին, Մանուել Կոմնենոսին ուղղված թղթերից մեկում գրելով. «զոր մեք և հոօմէացիք բաղարջ, և այլ եկեղեցիք՝ խմորուն կատարեն, և իւրաքանչիւր ոք յիւրումն փութայ արդարանալ»⁷³:

Ինչ վերաբերում է գինուն ջուր խառնելու խնդրին՝ Հայոց եկեղեցին այնուհետև ևս շարունակեց իր ավանդույթը: ԺԴ դարում Սսի և Ադանայի ժողովի կապակցութեամբ Մովսէս Երզնկացու կողմից գրված պատարագի անսպական գինու խնդրին վերաբերող երկը մեր եկեղեցու ավանդույթունը պահպանելու համար ուղենիշ հանդիսացավ⁷⁴:

3. Քրիստոսի ծնունդը տօնելու օրվա խնդիրը: Այս հարցը ևս նախորդի նման դարեր ի վեր սնուցել է Հայոց և բյուզանդական եկեղեցիների հակամարտությունը և Հայոց եկեղեցին միշտ փաստարկներ է բերել իր որդեգրած ավանդույթի ճշմարտացիությունը ապացուցելու համար: Այս առումով էլ չափազանց հստակ և խոսուն են Ներսես Շնորհալու պատասխանները Մանուել Ա Կոմնենոսին հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների ընթացքում: Հռոմի եկեղեցին ևս, ինչպես վկայում են փաստերը, առաջ է քաշում այս նույն պահանջը, սակայն հետագայում ևս, տեսնում ենք, որ Հայոց եկեղեցին ամուր է մնում իր ավանդույթը պաշտպանելու խնդրում:

Բ 5. Լուկիոս Գ պապի հայերենով պահպանված նամակը.

Կառուցվածքը. Ձեռագրերում պահպանված Հռոմի Լուկիոս Գ պապի (1181–1185) թղթի վերնագիրն իր կառուցվածքով գրեթե չի տարբերվում Իննոկենտիոս Բ-ի նամակի վերնագրի բանաձևից: **Վերնագրում**, առանց պապի անվան հիշատակության արձանագրված է, այն Հռոմի պապի նամակն է, ուղղված Հայոց Գրիգորիոս կաթողիկոսին: Վերնագրում նաև բացատրվում է, որ այս նամակը ուղեկցել է Հռոմի պապի կողմից Հայոց կաթողիկոսին առաքված եկեղեցու «ձեռնագրութեան եւ կարգաց» գրքին, որի բնագիրն ընդօրին-

⁷³ **Ա.Ա. Բողոյան**, «Հայ-բյուզանդական գիվանագիտական հարաբերությունները XII դարի 60–70-ական թվականներին», ՊՔՀ 2 (1981), էջ 157:

⁷⁴ Այդ վավերագրի մասնակի հրատարակումը տես **Ա. Տէր-Միքելեան**, «Սսի եւ Ատանայի իշխանաժողովը», Լուսայ, գիրք Ա (1901), էջ 306–316:

նակված է ՄՄ ձեռ. 1026 մատյանում: **Թղթառաջքը**. Բաղկացած է երկու մասից: Պապի անվան հիշատակության պարզ բանաձևից («Լըսիոս եպիսկոպոս ծառայ ծառայից») հետո, բերվում է հասցեատիրոջ անունն իր տիտղոսով և նվիրապետական կառույցի կարևորագույն պաշտոնների թվարկումը («...ամենայն պատուական եղբարց, Գրիգորի կաթողիկոսի, և ամենայն արքեպիսկոպոսաց և եպիսկոպոսաց, և աբբայից որդուց սիրելեաց, և ամենայն առաջնորդաց եկեղեցուց, և ամենայն կլերիկոսաց, ամենայն ժողովոյ լրմանդ Հայոց»): Վավերագրի **մուտքը** (Prooimion) սկսվում է ողջունի բանաձևով («Ողջո՛յն և առաքելական արհնութիւն քրիստոնէից ամենեցունց»), ուր շեշտվում է Հռոմի եկեղեցու բացառիկ կարգավիճակը՝ հաստատված հավատո վիմի (իմա՛ Պետրոսի – Ա.Բ.) վրա: Այս աթոռը «վարդապետութեանս է մայր եւ խրատիչ, եւ բաժանէ ամենեցուն հաւատ»: Ըստ վավերագրի մուտքի այս բանաձևի Հռոմի պապն է հովիվը ողջ եկեղեցու «...քանզի հովիւ կարգեցաւ ի վերայ բնաւից եկեղեցիս Հռոմայ»: Վավերագրի մուտքում, որն անմիջապես հետևում է ողջունի բանաձևին, կոչ է արվում Հայոց եկեղեցու ամբողջական նվիրապետական կառույցին հետևել և միաբանել Հռոմի եկեղեցու հետ:

Բովանդակություն. Կաթողիկոսին և Հայոց եկեղեցու պաշտոններին կոչ է արվում 1. հաղորդության գինուն ջուր խառնել, և 2. Քրիստոսի Ծնունդը տոնել Հռոմի եկեղեցու հետ նույն օրը: Այստեղ հիշատակվում է Հայոց կաթողիկոսի բանազնաց՝ Փիլիպպոսի արքեպիսկոպոս Գրիգորի հետ իր հանդիպումը և եզրակացնում է. «Այսուհետև սիրով եւ ճշմարիտ ոգով եւ սրտիւ եկեղեցիս Հռոմայ տեսուչ է ձեր եւ ժողովոց ձերոց»: Ի հավատումն այս փաստի «եղբայր» կաթողիկոսին է առաքում. «...պալիանդրէ, առաջին ամենայն պատուոյ, միգր եւ խոյր գիմոյ գլխոյ...»: Այնուհետև, առաջարկում է կաթողիկոսին Ավագ հինգշաբթու օրը կատարել Սուրբ Օծություն և կնքել մկրտյալներին, օծել Ս. Սեղանի քարը, քահանաների ձեռքերը և եպիսկոպոսների գլուխները, իսկ կիրակի օրը՝ ձեռնադրել եպիսկոպոսներին: Հրահանգում է քահանաներին և ավելի ցածր աստիճանի հոգևորականներին (քահանա, սարկավագ, կիսասարկավագ, կղերիկոս) ձեռնադրել ողջ տարվա ընթացքում՝ շաբաթ օրերին: Հռոմի պապը միայն հիշատակված հրահանգները կատարելուց հետո է երաշխավորում եկեղեցիների միությունը: Պահպանված վավերագիրն ավարտվում է հրաժեշտի բանաձևով:

Թղթավերջ. Հրաժեշտի հստակ բանաձևի և թվականի բացակայությունը թույլ է տալիս ենթադրել, որ նամակի հայերեն թարգմանությունը մեզ է հասել ոչ ամբողջական տեսքով:

**Բ 6. Կղեմես Գ-ի թղթերի հայերենով պահպանված ընդօրինակութ-
յունները.**

«Առ կաթողիկոս Գրիգոր Դ Տղա»

Վերնագիրը. Այն ունի վերևում ներկայացված վավերագրերի նման նկա-
րագրական բնույթ, ուր ընդգծվում է, որ նամակն Հայոց կաթողիկոսին է
ուղարկված խաչակրաց զորքի և թագավորների հետ, Երուսաղեմի փրկութ-
յան համար արշավի ելած բանակի հետ, Քրիստոսի ծննդավայրի (Սալահադ-
դինի կողմից – Ա.Բ.) գրավումից երեք տարի հետո: Նշանակում է, նամակի
մուտքագրումը կաթողիկոսական նոտարատուն կարելի է թվագրել 1190 թ.
հուլիս ամսով, քանի որ Գ խաչակրության գերմանական բանակները Սելև-
կիա գետին են հասել հենց այդ ժամանակ, ուր և խեղդվել է կայսր Ֆրիդրիխ
Շիկամորունը:

Թղթառաջք. Ինչպես մյուս ներկայացված վավերագրերի թղթառաջք-
ները սկսվում են Կղեմեսի եպիսկոպոսի անվամբ, իսկ Հայոց կաթողիկոսին
են դիմում «եղբայր», Ամենայն Հայոց կաթողիկոս Գրիգոր բանաձևերով: Բա-
նաձևի երրորդ բաղկացուցիչը պապի ողջունն է և առաքելական օրհնությու-
նը:

Վավերագիրը Մուտք չունի:

Բովանդակություն. Վավերագրում պապը խոսում է Արևելքի քրիստոնյա-
ների տառապանքների, Երուսաղեմի ողբալի կացության մասին: Կոչ է անում
ամեն ինչով սատար լինել խաչակրաց բանակին, որն օգնության է գալիս:

Թղթավարտ. Բաղկացած է հրաժեշտի բանաձևից և թվականից. «... գրե-
ցաւ ի Հռոմի ի լադրանն, նախ քան զչորս կաղանդաց յունիս ամսոյ, եւ երկու
ամն եպիսկոպոսութեան մերոյ»: Նամակն ամենայն հավանականությամբ
գրվել է 1190 թ. հունիս ամսին, քանի որ Կղեմես Գ պապը ձեռնադրվել է 1187
թ. դեկտեմբերի 19-ին: Վավերագրերի բանաձևերի ամբողջականությունը
այս նամակում պահպանված է փոքր կորուստներով:

Այս նամակին ուղեկցում է նաև մի գրություն, որը թվագրված է ճիշտ
նույն թվականով, ուր հիշատակվում է Ղուկիոս Գ պապի նամակը, որի հետ
Հայոց կաթողիկոսին է առաքվել Հռոմի պապի կողմից եկեղեցու կարգավոր-
ման գիրքը: Հիշելով դրանք, պապն ավելորդ է համարում մեռոնի առաքումը,
քանի որ Հայոց կաթողիկոսին «ճշմարիտ քրիստոնեա» են համարում: Այս զի-
ջումը եղել է հավանաբար կաթողիկոսի խնդրանքով:

Հիշատակված վավերագրերի հետ պահպանվել են նաև մի քանի բանաձե-
լեր և՛ են Բ իշխանին ուղղված նամակից:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ներսես Լամբրոնացու կողմից ի մի բերված Հռոմի պապերի նամակագրությունը վերաբերող փաստաթղթերի այս խումբը, Մաշտոցի անվան Մատենադարանի երկու հնագույն ձեռագրերի համեմատությամբ, հրատարակում ենք այստեղ: Պետք է ընթերցողին տեղեկացնել, որ Լյուսիոս կամ Ղուկիոս Գ (1181–1185) պապի թուղթն ընդօրինակված է միայն ՄՄ-1026-ում, իսկ Կղեմես Գ (1187–1191) և Իննոկենտիոս Բ (1130–1143) թղթերի հայերեն թարգմանությունների պատճեններն ընդօրինակված են երկու հիշատակված ձեռագրերում: Երկու ձեռագրերում էլ վերնագրերն ու վավերագրերի սկիզբն ընդօրինակված է կարմիր թանաքով:

ՄՄ-1026, թղ. 170բ–177բ

//(170բ): Ի: Թուղթ Հայրապետին և պապուն Հռովմայ առ Տէր Գրիգորիոս կաթողիկոս Հայոց: Ընդ որ առաքեցաւ և այս ձեռնադրութեան և կարգաց եկեղեցոյ գիրքս ի նոյն հայրապետէն առ մեզ:

Լըւսիոս եպիսկոպոս ծառայ ծառայիցս Ա[ստուածո]յ. ամենայն պատուական եղբարց, Գրիգորի կաթողիկոսի, եւ ամենայն արքեպիսկոպոսաց եւ եպիսկոպոսաց, եւ արքայից որդւոց սիրելեաց, եւ ամենայն առաջնորդաց եկեղեցւոյ, եւ ամենայն կլերիկոսաց, ամենայն ժողովոյ լրմանդ Հայոց:

//(171ա) Ողջո՛յն եւ առաքելական արհնութիւն քրիստոնէից ամենեցունց, միաբանութիւն[ւն], անապական հաւատոյ խոստովանութիւն[ւն], ո՛չ մարմնոյ եւ արեան յայտնութե[ամ]բ, այլ ի հոգւո՛յն սրբոյ, յոր եկեղեցիս Հռովմայ, որոյ ես կարգեալ եմ ըստ ո՛չ արժանեաց ի պաշտան հաստատեալ է ի վերայ վիմի հաւատոյ զարութե[ամ]բն Ա[ստուածո]յ: Եւ որպէս ինքն սահմանեաց. ունի հրաման ի վերայ ամենայն եկեղեցեաց, եւ ունի իշխանութիւն[ւն] վարդապետել ամենայն եկեղեցեաց, եւ զայլ անդամսն աշակերտել, զի այնմ որ ունի զփականսն ի բարերարութենէն Ա[ստուածո]յ//(171բ) տուաւ այս պարգեաց եւ զարութե[ան] կտակ, զի զոր միանգամ կապեսցէ յերկրի եղիցի կապեալ յերկինս, եւ զոր արձակեսցէ յերկրի եղիցի արձակեալ յերկինս: Արդ՝ ա՛յս մայր ս[ուր]բ եկեղեցւոյ իբրեւ զլեա՛նն ս[ուր]բ հաստատեալ է, եւ հիմն սորա ժողովքն ո՛րք ընդունելի՛ են: Եւ զի իսկ զբանէ ամրացեալ է հիմամբ, զամենայն հերձուածս ընդհանրական խլէ՛, եւ զամենայն պղծութիւն[ւն]ս հերետիկոսաց խափանէ՛. ո՛չ իւրք ի նոցա մոլորութենէն պղծեալ, քանզի ունի զվայելչութիւն[ւն] հաւատոյ զայն որ առաջինն առաքելոցն սմաքա//(172ա)րոգեաց: Եւ սոյն սա ընկալաւ. եւ առանց արատոյ եւ անկրճիմն

տեսաւ, զգեղ վայելչութեանն, զոր յերկնից Ա[ստուա]ծ ետ: Որ եւ այլոց եկեղեցեաց ս[ուր]բ կամաւք զսա իշխան ի հաւատոյ կարգն արար, զարուսթի[ւն], կենդանութի[ւն], եւ ջուր ուրախութեան նոցին յա[ստուա]ծային յայս. աղբերացս առնուլ, զի սո՛ջն է պարտէզ փակեալ, աղբիւր կնքեալ, որ յարտաքին չարեաց ո՛չ երկնչի: Որ եւ ունի ընդ ինքեամբ տունկս բազումս հաւատոյ եւ ճշմարտութե[ան] պտղովք լցեալք, որոյ փեսայէ Ա[ստուա]ծ մեր եւ Տ[է]ր Յ[իսու]ս Ք[րիստո]ս, որ է խնձոր հին առ նորով տուեալ: Եւ սկսաւ զայս շնորհաւք,/(172բ) եւ հաստատեաց ի սկզբանէ, ուր եւ արէնքն նոր հանապազ զարանայ, քանզի այս վարդապետութե[ան]ս է մայր եւ խրատիչ, եւ բաժանէ՛ ամենեցուն հաւա՛տ: Եւ ի սմանէ որպէս ի գլխոյ իջանէ հաւատ քրիստոնէութե[ան] յամենայն մարմին եկեղեցոյ: Որոց ողջոյն եւ խաղաղութի[ւն] ընդհանուր բաշխէ, քղանց հանդերձի սորա զուրախ արար եղն պարարտութե[ան] ի լիութենէ իւրմէ հեղու, սրսկէ՛ եւ պարարէ՛ զընդհանուր անդամն: Յաղագս որոյ եւ որ ո՛չ յառաջանայ ի սմանէ իրաւամբք եւ արհնութեամբ, եւ որ ո՛չ ուղղի յեկեղեցոյս/(173ա) Հոռմայ, ո՛չ հաստատի: Եւ ո՛չ կերակրի եւ ո՛չ յագի, այլ սովի՛ կարաւտեալ բազմացն զար տա սա, քանզի որ զուռկանս որսոյ ձկանցն փոխեաց ի մարդիկ: Եւ ա՞ռ հրաման յԱ[ստուածո]յ արածել զոչխարս իւր, հովուէ՛ զսա, եւ ոք որ ո՛չ սնանի ի փարախ նորա՝ մոլորեա՛լ է, քանզի հովիւ կարգեցաւ ի վերայ բնաւից եկեղեցիս Հոռմայ:⁷⁵ Եւ յարա՛տս հաւատոյ զնոսին արածէ, վասն որոյ եւ դուք եղբարք սիրեցեալքք եւ որդիք, որք հանգչիք ի գիրկս մար ձերոյ, եւ ողջունէ՛ք զսորին հաւատ, եւ սիրէ՛ք յամենայնի զսորա միաբանութի[ւն]ն, եւ յաւդեա՛լ էք յա/(173բ) մենայն ճշմարտութի[ւն], եւ յամենայն գործս բարեաց, աղաչեցէք զբարերարութի[ւն]ն Ա[ստուածո]յ, միանձնանալ ընդ սմա, եւ միանալ յերկնաւոր տուն նորին: Եւ յաւդել ի վէմն գլուխ անկեան, որ զերկոսեան որման խառնեաց ի մի՛: Եւ ի վերայ այսր հիման յոր յաւդեալ էք զհաւատոյ շինուածս, պարտիք ջանալ ի մատնութեամբ եւ արթնութեամբ, զի եւ ամենայնիւ նմանիցիք մեզ ի պաշտան Ա[ստուածո]յ, եւ ըստ որում խոստովանիք զամենայն ուղիղ դաւանութի[ւն] հաւատոյ, ինչ որ թերին է ի կարգաց ուղղեցէ՛ք: Զի ա՛յլ եւ այլ գոյնի/(174ա) միանձնութի[ւն] մարմնոյ սկի՛զբն է բորոտութե[ան], այլ զմիաբանութի[ւն]ն պինդ ունել եւ հաստատուն:

Արդ գիտելի՛ լիցի ձեզ եղբարք, զի մեք եւ որք ընդ մեզ եղբարք մեր, զարմանա՛մք հիացմամբ որք ո՛չ եմք փոփոխեալք ի ճշմարտութենէն, եւ եղբարք

⁷⁵ Զեռագրի հետագա ընթերցողներից մեկն առանձնացրել է. «...հովուէ՛ զսա, և ոք որ ո՛չ սնանի ի փարախ նորա՝ մոլորեա՛լ է, քանզի հովիւ կարգեցաւ ի վերայ բնաւից եկեղեցիս Հոռմայ:» հատվածը, դրա մեջ հավանաբար տեսնելով պապական եկեղեցու՝ բոլորի վրա անխտիր իշխելու մարմաջը:

մեր յառաջնոցն ո՛չ ի մեր հետեւելն զձեզ խրատեցին, այսինքն ի ս[ուրբ] հաղորդութե[ան] բաժակն ջո՛ւր ընդ գինոյ խառնեալ, բայց մեք զկարգ սրբոյ եկեղեցւոյս Հռոմայ, զո՛չ ցուցեալն այժմ յայտնեմք ձեզ: Եւ զբարեկարգութի[ւն] զոր ունիմք ի հարցն մերոց առաջնոց, զի հարկաւո՛ր է կատարել/(174բ) լիապէս եւ երևելի, եւ առ ձեզ անձկալի սիրելիք, մի՛ ինչ երկիւղ մնասցէ, եւ մի՛ ինչ կարծիք վերջացուցէ յայսմանէ զոր ցուցանեմք, այլ դարձարուք ի սովորութենէ ձերմէ ի ճանապարհս ընդ որ մեք ընթանամք, զի ի կալն ընդ մեզ միաւոր յանապական հաւատս, մի՛ ինչ ի մեր պաշտանն եւ ի ձերն լիցի անհամաձայնութի[ւն]: Վ[աս]ն որոյ հաստատուն բուռն հարէք զայս իրաւանցս, եւ առանց ամենայն կեղծաւորութե[ան], եւ գնացէք զկնի սրբոյ եկեղեցւոյս Հռոմայ ի խորհուրդ հաղորդութե[ան]ն⁷⁶, զի որ ո՛չ ներգործէ այսպէս, զրկէ՛/(175ա) զանձն իւր: Նոյնպէս եւ կատարեցէք եւ զՄնունդն ի նոյն արն, յոր մեք տանեմք, յառաջ քան ըզութն յունուարի զմեծահոշակ տանն կատարել, զի որպէս փայլէք պայծառ ի մէջ անաւրինաց ի հաւատս, այսպէս պարտիք լինել եւ ի Ս[ուրբ] պատարագն եւ յամենայն արս տանից առանց թերութե[ան], եւ մի՛ ինչ պակասութիւն զվայելչութի[ւն] հաւատոցն ձերոց տգեղացուցէ: Այլ եւ մեք զսահման կարգաց մերոց եւ զուղղութի[ւն]ս պարտիմք ցուցանել ամենայն քրիստոնէից ուղիղ սրտով. եւ զձեզ յամբիժ հաւատսդ զոր/(175բ) ունիք ողջագուրե՛մք մեծա՛ սիրով: Եւ լրապէս ուրա՛խ եմք հոգւով եւ մարմնով յամենայն ժամս, յորս զգիրս ձեր լսեմք, եւ զպատգամաւոր հրեշտակս տեսանեմք, զուարճացեալ՝ զի մեծանա՛յք եւ բազմանայք հաւատով եւ խաղաղութեամբ: Որպէս եւ լուաք զամենայն գործոց ձեր զճշմարտութի[ւն] պատմեալ ի ճշմարիտ եղբարէս մեր Գրիգորէ ա՛րքեպիսկոպոսէ Փիլիպպոսպապաւսու, որ էր ի ձէնչ առ մեզ առաքեալ, զոր պատուեցաք արժանապէս: Եւ յաղագս ձեր բարեալ լինելու փա՛ռս տուաք գոհութեամբ Ա[ստուածո]յ, այնմ որ ի մէջ անհաւատից եւ ան/(176ա) արինաց ազգաց, բիւրս բիւրուց քրիստոնէից պահէ իւր անուանն երկրպագուս, յաղագս որոյ փառաւորեցաք զնա յերկրի, եւ առաջի հրեշտակաց յաւիտենական խնդութի[ւն] է յերկինս: Այսուհետեւ սիրով եւ ճշմարիտ ոգով եւ սրտիւ եկեղեցիս Հռոմայ տե՛սու է ձեր եւ ժողովոյ ձերոյ: Քեզ եղբայր կաթուղիկոս պալիտունդրէ, առաջին ամենայն պատուոյ, միդր եւ խոյր զիմոյ գլխոյս առաքեցի, զգեստ պայծառութե[ան] եկեղեցւոյ, զորս ընկալալ քո ի մէնչ որպէս վայելչանաս յայսմ աշխարհիս, նոյնպէս զաւրասցիս պայծառանալի/(176բ) հանդերձեալ կեանսն: Յետ այսր զքեզ որ ես բա՛րձր եւ զԸլուիս ամենայն եկեղեցւոյդ աղաչեմք. ի մեծի հինգշաբաթուն, որ է յաւագ

⁷⁶ Ձեռագրի հետագա ընթերցողն առանձնացրել է նաև այս հատվածը. «...և գնացէք զկնի սրբոյ եկեղեցւոյս Հռոմայ ի խորհուրդ հաղորդութե[ան]ն...», ուշադրութիւն հրավիրելով դարձվածքի հրամայական բնույթի վրա:

շաբաթն, զՍ[ուր]բ աւծութի[ւն]ն՝ որպէս մեք նուիրագործեմք, միանգամ յամենայն ամի արհնեցէք, եւ զնոյն հեղէք ի ջուր մկրտութե[ան]ն, եւ կնքեցէք զմկրտեալսն: Եւ աւծէք զքար սրբոյ սեղանւոյն, եւ զձեռնադրեալ քահանայիցն զձեռս, եւ զեպիսկոպոսացն ձեռնադրելոց զգլո՛ւխս, որով զարանան յիւրաքանչիւր պաշտանսն: Կատարեցէ՛ք եւ զձեռնադրութի[ւն] եպիսկոպոսաց կիրակէի, զի յայնմ/(177ա) աւուր էջ Հոգին Ս[ուր]բ ի դասս առաքելոցն, եւ առաքեաց զնոսին քարոզել զաւետարանն յաշխարհս: Իսկ զքահ[ան]այս, եւ զս[ա]րկ[աւա]զս, եւ զկէս սարկ[աւազ], եւ զայլ կլերիկոսս ձեռնադրեցէք յաւուր շաբաթու ի շորս ժամանակս տարւոյն, զի եւ առաքեալքն պահեալ եւ աղաթս արարեալ ձեռն ի վերայ եղին աշակերտելոցն: Արդ՝ յորժամ զայսոսիկ կատարէք, ո՛չ իւրք բաժանիմք ի մերոց կարգացն, եւ մեք ունելով ըզձեզ կցորդս ի պաշտան Ա[ստուածո]յ հաւատոցն, լինի՛ք որդիք երկնաւոր Հաւրն: Ուստի եղբարք սիրեցեալք զվերոյգրեալսդ հաստատուն ընկա// (177բ) լարուք բոլոր հաւատով եւ հնազանդութե[ամ]բ, որպէս զի յայսմ ձեզ մեզ ի հնազանդելն, որք ընդ ձեաւք են ձեզ հնազանդեալք ի բարիոք (կ)արգաւորութի[ւն]ս, եւ ի գործս արդարութե[ան] ժառանգեսցուք միաբան զերկնային արքայութի[ւն]ն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս):

ՄՄ-1026, թղ. 213բ-231ա

ՄՄ-500, թղ. 374ա-380բ

//(213բ) :ԼԳ:⁷⁷ Թուղթ հայրապետին Հոովմայ⁷⁸ զոր գրեաց// ընդ զարսն եւ ընդ թագաւորսն, որք եկին յայսկոյս ծովու փրկել զս[ուր]բ քաղաքն Ե[րուսաղէ]մ յետ երից ամաց գերութե[ան]ն⁷⁹:

Կլեմէս եպիսկոպոս ծառայ ծառայիցն Ա[ստուածո]յ, պատուական եղբար մեր Գրիգորի կաթողիկոսի ամենայն Հայոց:

Ողջո՛յն եւ առաքելական արհնութի[ւն]. Խրատն՝ զոր յԱ[ստուածո]յ արդար դատաստանէն աշխարհդ արեւելից ի ժամանակս մեր ընկալաւ:

Հաւատամք զի առաւել ցա՛ւ է ի սրտի քում մերձաւոր գոլով սրբոյ երկրին եւ ունկնդիր վշտին եւ շարշարանացն զոր կրեն, քանզի ես ողորմութե[ամ]բն Ա[ստուածո]յ ի հաւատ կաթո// (214ա) ղիկէ հաստատելալ, վ[աս]ն այսորիկ ո՛չ կարես հանդուրժել, այլ արտասուաւք զգաս զանարգութի[ւն] քրիստոնէից, նաեւ ոյք են, որք զանուն քրիստոնէութե[ան] ունին քրիստոնէայք են, եւ հանդուրժել կարեն յայդքան անարգութի[ւն] սրբոյ երկրիդ: Որպէս տեսանի դայ այժմ անարինաց գա՛րշ եւ զագիր պղծութե[ամ]բ աղտեղեալ, եւ որ ի

⁷⁷] ՄՄ-500 ;

⁷⁸ հոռմա ՄՄ-500 ;

⁷⁹ գերութեանն+առ կաթո՞ղ գ՞ր տղա+ ՄՄ-500 ;

նմա սրբութիւն]քն որպէս զաղբ անա՛րգ պիղծ⁸⁰ ի նոցին ոտիցն կոխան տո-
ւեալ: Հաւատացեալքն Ք[րիստոս]ի սպանեալք եւ նոցին սրովն ջնջեալք, զոր
եւ մեք առանց սաստիկ ցաւոց սրտից մերոց ո՛չ կարեմք բերել,/(214ա) նա՞
եւս զի ուժգնանայ⁸¹ շարութիւն ամբարտաւանիցն, մինչ զի զպատիւ խաչին
փութան բառնալ յաշխարհէ: Եւ զփոքր ճաճանչ քրիստոնէից, որ մնացեալ են
յայդմ աշխարհի ջանան շիջուցանել եւ ամենեւին յոչ ինչ դարձուցանել: Ո՞հ,
ահա դառն են աւուրքս⁸² մեր, յորս ս[ուր]բ երկիրն Ե[րուսաղէ]մի կորեա՛ւ,
հաւատացեալքն սպանա՛ն, սրբութիւն]ն⁸³ կոխան եղեւ, եւ որ ասացեալ է
նախ ողբք մարգարէութեան]էն⁸⁴ առ մե՛զ լցաւ, Ա[ստուա]ծ մտին հեթանոսք ի
ժառանգութիւն] քո պղծեցին զտաճար⁸⁵ ս[ուր]բ քո: Արդ՝ ա՛յս ամենայն ձեզ
յայտնի է. եւ առանց/(215ա) ստութե[ան] գիտէք վ[աս]ն մերձաւորութե[ան]
գաւառիդ: Այլ եւ մեք փութացեալ վաղվաղակի գտոյն յունկն հաւատացելոց
խաւեցաք, որք պատրաստեցան արիութեամբ եւ գան յաւգնականութիւն]
այդմ աշխարհի, անձամբ⁸⁶, եւ ընչի՛ք, եւ զինուք, դէմ եղեալ գան համբերել
չարչարանաց վ[աս]ն նորա, որ յայդ⁸⁷ ս[ուր]բ երկիրդ ծնաւ, եւ բազում ա-
նարգութե[ան] համբերեաց, եւ ի կատարումն ի նշաւակ խայտառակու-
թե[ան] խաչին զմեղս մեր եթող: Եւ յանմահ մահուանէն զմեզ ազատեաց, առ
որ եւ յուսամք, եթէ խրատելովն ուղղէ՛, եւ դարձեալ մխի/(215բ)թարէ: Եւ այ-
սու ճանաչէն իւրքն զանարգութիւն]ն Ք[րիստոս]ի յինքեանս բերելով, յոր եւ
ա՛կն ունիմք, եթէ ո՛չ է առանց հաշտութե[ան] բարկացեալ իւրոյ ժողովր-
դեանս: Վ[աս]ն զի ի բարկութե[ան]ն յիշէ՛ զողորմութիւն]ն, եւ զկնի լալով
երթալոյն խնդութե[ամբ] դարձուցանէ: Արդ որպէս եդ զքեզ Ա[ստուա]ծ տն-
տէս եւ հաւատացի ի քեզ զտգէտ ժողովուրդդ, եւ զքեզ եդ ճշմարիտ լոյս⁸⁸
այդմ աշխարհացդ, վերակացու լեր այդմ դառն եւ անձուկ պատահմանդ եւ
աւգնական: Եւ աւ[րը]ստարէ զառ ի քեզ հաւատացեալ ժողովուրդդ⁸⁹ քաջա-
լերեա՛/(216ա) եւ զաւրացո՞⁹⁰, զի տեսեալ զքեզ յայս փոյթ ամենայն ժողովք

⁸⁰ +և+պիղծ ՄՄ-500 ;

⁸¹ ուժգնանա ՄՄ-500 ;

⁸² են աւուրքս] նենգաւորքս ՄՄ-500 ;

⁸³ սրբութիւն ՄՄ-500 ;

⁸⁴ մարգարեութեանն ՄՄ-500 ;

⁸⁵ մտին հեթանոսք ի ժառանգութիւն քո պղծեցին զտաճար] մտ՞ հիթ՞ ի ժառ՞. պղծ՞ զտաճ՞
ՄՄ-500 ;

⁸⁶ անձամբ ՄՄ-500 ;

⁸⁷ +ի+յայդմ ՄՄ-500 ;

⁸⁸ լոյս+զի տայցես լոյս+ ՄՄ-500 ;

⁸⁹ ժող[ովուր]դտ ՄՄ-500 ;

⁹⁰ զօրացոյ ՄՄ-500 ;

Հայաստանեայց⁹¹, որք ընդ քեզն, փութացեալ պատրաստեսցին գալ յաւգնականութիւն] ս[ուր]բ տեղեացն, որք զինուք, որք ընչիւք, որք անձամբ⁹²: Ի ս[ուր]բ երկրին դիմեսցեն⁹³ յազատութիւն], զի զամբարտաւան ազգ⁹⁴ անաւրինացն⁹⁵ Ի պատերազմ իւրեանց յաղթահարեսցեն, եւ դոցա Ի միաբանութիւն] մարտակցութեան]է⁹⁶, որ առ քեզ են, եւ արեւմտական զաւրք յայսմ աշխարհէ, Ա[ստուծո]վ փութացեալ գան, որպէս զի ժառանգութիւն]ն Ա[ստուածո]յ ազատեսցի: Եւ նոցա պղծութիւնն առ ոտս կոխան// (216բ) լիցի, որոց տուաւ այժմ զանիծեալ բերանս ձգել⁹⁷ եւ զԱ[ստուա]ծ հայհոյել: Արդ մեք՝ որ յաջորդեմք Ք[րիստոս]ի ամենայն բարեգործաց մեղաց թողութիւն] տալ, զիտասցուք յԱ[ստուածո]յ տուեալ զայս պատճառ ամենայն քրիստոնէից մեղաց ապաշխարութեան]՝ Վ[աս]ն որոյ եւ որք նուիրեն յայս մրցումն զանձանց շարշարանս, կամ զընչից ծախս, յուսամք յողորմութիւն]ն Ա[ստուածո]յ եւ Ի սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պաւղոսի շնորհքն, թէ Ի պատերազմըն մեռանին, եւ թէ մնան կենդանի եւ զխոստումն⁹⁹ իւրեանց կատարեն, զի ամենայն մեղաց որոց// (217ա) խոստովանեալ են զթողութիւն] առցեն: Նոյնպէս եւ թէ¹⁰⁰ Ի ձեր սահմանաց կամ յայլ գաւառաց ընչիւք աւգնութիւն] առնեմք¹⁰¹ որպէս Ա[ստուա]ծ սրտից իւրեանց ետ կամք առատութեան], եւ որպէս արժէ ծախք տրիցն: Եւ տե՛ս զայս զգուշութեամբ] պատուական եղբայր, որպէս Ա[ստուա]ծ ըզքեզ ողորմութեամբ]բն իւրով լուսաւորեալ է, զի անձամբ քո եւ ժողովրդեամբ¹⁰², որք յաշխարհդ արևելից Ի քէն հովուին, Ի ս[ուր]բ տեղեացն յազատութիւն]ն յաւժարեսցիս գրնալ, եւ որպէս կատարի կամք քո, եւ Ա[ստուածո]վ այս խորհուրդս յաջողի փութ// (217բ) թացիր գրով քո մեզ յայտնել: Եւ այս յայտնի լիցի քեզ զի թեպէտ եւ Ի մերս մարմնոյ աչաց տեսութենէ բացակայես, հոգւոյ աշաւք հանապազ զքեզ տեսանեմք, եւ ողջա-

⁹¹ հայաստանեայց ՄՄ-500 ;

⁹² անձամբ ՄՄ-500 ;

⁹³ դիմեսցին ՄՄ-500 ;

⁹⁴ ազգն ՄՄ-500 ;

⁹⁵ անօրինաց ՄՄ-500 ;

⁹⁶ մարտակցութեան ՄՄ-500 ;

⁹⁷ ձգեալ ՄՄ-500 ;

⁹⁸ ապաշխարութիւն ՄՄ-500 ;

⁹⁹ զրխոստումն ՄՄ-500 ;

¹⁰⁰ և թէ] թեև ՄՄ-500 ;

¹⁰¹ առնեն+սրբոյ երկրին թողութիւն առնեմք+ ՄՄ-500 ;

¹⁰² ժողովրդեամբ ՄՄ-500 ;

գուրեմք սրտով եւ սիրով, եւ գիտնորուածս, զոր կամիս հեշտութեամբ կատարեմք: Գրեցաւ ի Հռովմ¹⁰³ ի լադրանն, նախ քան ըզչորս կաղանդաց յունիս ամսոյ, եւ յերկու ամն եպիսկոպոսութեան] մերոյ:

Եւ այս ընդ առաջնոյս բերաւ:

Կլեմէս եպիսկոպոս ծառայ ծառայից Ա[ստուածոյ], Գրիգորի կաթողիկոսի Հայոց, Ողջոյն եւ առաքելական արհնութիւն://(218ա) Հաւատամք եթէ անմոռաց ունիս ի մտի, զի Լւսիոս պապն որոյ յիշատակն երանութեամբ, որ նախ էր քան զմեզ, ըստ խնդրոյ ձեր առաքեաց գիրք զկարգաւորութիւն] եկեղեցւոյս Հռոմայ¹⁰⁴, եւ վ[աս]ն այսր աւելորդ համարեցաք զմիւսոնն որ ի մէջ արհնի ձեր պատուականութեան]դ առաքել, այլ յաւժարութեամբ զբեզ որպէս զճշմարիտ քրիստոնեա պատուեմք, և զձեր խնդրողածսն լսեմք: Գրեցաւ ի Հռոմ ի լադրանն, նախ քան զչորսն¹⁰⁵ կաղանդաց յունիս ամսոյ եւ յ:բ: ամն եպի[սկոպոս]ութեան] մերոյ¹⁰⁶:

:ԼԳ: ¹⁰⁷ Ա՞ռ պ՞տս ¹⁰⁸ մեր Լևոն որ ի սոյն ժամա// (218բ) նակս էր իշխող ¹⁰⁹ Կիլիկիոյ ¹¹⁰ եւ Սաւրիոյ եւ լերանց սոցին:

*Կլեմէս եպիսկոպոս ծառայ ծառայից Ա[ստուածոյ], մեր սիրեցեալ որդւոյ մեծապատիւ իշխանի Լևոնի լեռնցոյ: Ողջոյն եւ առաքելական արհնութիւն]: Խրատն՝ զոր յԱ[ստուածոյ] արդար դատաստանէն աշխարհդ արեւել:

Նոյն է եւ այս թղթիս բանքն անթերի եւ անյաւել, որպէս առաջնոյն որ ¹¹¹ առ կաթողիկոսն ս[ուր]բ, զոր աւելորդ համարեցայ ¹¹² գրել կրկին:

* Ի թուա՞. Հայոց :ՈԻԳ: եկն Գրիգոր...որ է արհնեալ յ՞ա:(Թղ.221բ) (տե՛ս ՄՄ-500-ի նկարագրութիւնը, ուր բերված է այս հիշատակարանը. **ՄՅՀԶՄՄ**, հտ. Բ, Երևան 2004, սյուն 1015-1018: Այստեղ կան մի շարք շեղումներ ձեռագրի բնագրից, որոնցից մեկը արժեր սրբագրել այստեղ: Սյուն 106-ում, «յունկոս» /=Հունգարիա/ բառի փոխարեն վրայմամբ հրապարակվել է «յունկոս» անիմաստ տառակապակցութիւնը):

(Թղ.221բ) Թուղթ որ բերաւ ի Հռոմէ առ Գրիգորիոս կաթողիկոսն ¹¹³ որ նախ էր ի թուակ[ան] :ՇԶ:

¹⁰³ հռոմ ՄՄ-500 ;
¹⁰⁴ հռոմա ՄՄ-500 ;
¹⁰⁵ յ գ:դ:ն ՄՄ-500 ;
¹⁰⁶ մերո ՄՄ-500 ;
¹⁰⁷ յ :ԼԳ: ՄՄ-500 ;
¹⁰⁸ Առ պտս ՄՄ-500 ;
¹⁰⁹ իշխան ՄՄ-500 ;
¹¹⁰ Կիլիկոյ ՄՄ-500 ;
¹¹¹ տ. որ յառաջնոյն ՄՄ-500 ;
¹¹² համարեցա ՄՄ-500 ;
¹¹³ կաթողիկոս ՄՄ-500;

։ԼԵ: Ինտկենտիոս եպ[իսկոպոս]¹¹⁴ ծառայ ծառայից Ա[ստուածո]յ, պատուական եղբար մեր Գրիգորի կաթողիկոսի¹¹⁵ Հայոց եւ ամենայն եպ[իսկոպոս]աց եւ քահ[անայ]ից եւ ս[ա]րկ[աւագ]աց եւ ամենայն Հայաստան(ե)աց արանց եւ կանանց, որք հրամանան Ա[ստուած]ոյ ընդ ձեռամբ ձերով են, ողջոյն եւ առաքելական արհնութիւն]:

Լուա՛ք զուղղափառ հաւատս ձեր ի գրոյս, զոր եբեր Աղպրի արքեպիսկոպոսս Աւստոյ¹¹⁶, զոր իբրեւ ընթերցաք գոհութեամբ մեծաւ փառս մատուցաք Ա[ստուածո]յ. որ//(222ա) զձեզ հաստատուն յուղղափառ հաւատ¹¹⁷ պահէ յայլագգեաց միջի: Նա եւս առաւել ուրախութեամբ գոհացաք, զի զհաւատ եւ զկարգ եկեղեցւոյս Հռոմայ պահիցէ, զի թէպէտ եւ ընտրեցան ի Քրիստոսէ երկոտասանքն, սակայն Պետրոս գլուխ եւ առաջին կարգեցաւ ի նմանէ առաքելոցն: Նոյնպէս եւ այս, որ աթոռ է նորին, վեհագո՛յն է ամենեցուն եւ վասն այնորիկ կոչեցաւ Կեփաս, զի հիմն եւ գլուխ է ամենայն հաւատոց: Եւ//(222բ) այս ս[ուր]բ եւ առաքելական եկեղեցիս մա՛յր է ամենայն եկեղեցեաց Ա[ստուածո]յ եւ հաւատացեալ է ուղղափառ հաւատով յառաքելոյն Պետրոսէ, որ եւ անշարժ եւ անխախտելի մնաց եկեղեցիս Հռոմայ մինչեւ ցայսար: Եւ հերձուած ո՛չ եմուտ յեկեղեցիս յայս իշխանութեամբ ու ո՛չ մոլորումն յառաքելական ճանապարհէն, ա՛յլ է ըստ որում եւ խոստացաւ տէր մեր Յիսուս Քրիստոս գլխաւորի առաքելոյն Պետրոսի. «Սիմոն, ահաւասիկ խնդրեաց սատանայ խարբայել զձեզ իբրեւ զցորեան, այլ ես աղաչեցի զՀայր վասն քո, զի մի՛ պակասեսցեն հաւատք քո, //(223ա) այլ դու երբեմն դարձցիս եւ հաստատեսցես զեղբարս քո»: Նոյն հրամանս աստուածային անշարժ հաստատութեամբ մնաց ի վերայ այսր եկեղեցւոյ: Եւ ի սմանէ հաստատի մետասան ազգաց եկեղեցեաց շարժումն եւ թերութիւն: Եւ հանապազ եկեղեցիս այս Քրիստոսի մանկաղան հնձէ զամենայն որումն եւ զփուշ եւ պատրաստէ հրոյն յաւիտեանի: Եւ վասն զի եկեղեցիցւոյս Հռոմայ տուաւ¹¹⁸ պարգեւ ի Քրիստոսէ հաստատել զամենայն խախտեալ եկեղեցիս, մոլորեալ են որոշեալքն ի սմանէ, որք ո՛չ գան զկնի ի վարդապետութեան սորա: Քանզի որպէս//(223բ) մարմին հնազանդի գլխոյ, նոյնպէս եւ ընթանուր եկեղեցի, որ է տաճար Քրիստոսի, հնազանդել պարտի սմա, որ գլուխ եկեղեցւոյ հաստատեցաւ ի Քրիստոսէ:

¹¹⁴ Եպիսկոպոս+է+ ՄՄ-500;

¹¹⁵ Կաթողիկոս ՄՄ-500;

¹¹⁶ Օտոյ ՄՄ-500;

¹¹⁷ հաւատս ՄՄ-500;

¹¹⁸ սուաւ ՄՄ-500;

Եւ զսոյն գրեաց սուրբ եւ մեծ եպիսկոպոսն Մեկանոյ Ամբրոսիոս¹¹⁹ եւ երեւեցոյց, թէ ամենեքեան իրաւացի է, զի հնազանդ լիցին կարգաց եկեղեցւոյս Հռովմայ¹²⁰: Եւ այն¹²¹ աղագաւ հարկ է եղեւ մեզ զայս յիշատակել, քանզի լուաք եթէ, որ Հայոց եկեղեցիդ է ի Քրիստոսի տնաւրէնութեան խորհրդոյն պատարագն ի սուրբ մարմին եւ արիւնն ընդ գինւոյն ջուր ո՛չ խառնէք, եւ քանզի ամենայն հաւատացել/(224ա)ոց փրկութիւն հոգւոց եւ մարմնոց Քրիստոսի պատարագին խորհուրդն է: Վշտանանձք, յորժամ ո՛չ տեսանեմք զորդիսդ յայսմ հաւրս ընթերցակիցս¹²² եղեալ որպէս հայր, յորժամ տեսանէ զորդի ի կամաց իւրոց անհնազանդ եւ խրատէ զգաստանալ եւ դառնալ: Նոյնպէս եւ եկեղեցիս Հռովմայ¹²³ հայրական գթով տրտմեալ ընդ այս, աղաչէ զձեզ սգաստանալ¹²⁴, զի թէ էք ի հնազանդութիւն առաքելական եկեղեցւոյս՝ պարտիք հրամանաց եւ սովորութեան, որ է ի սմա, հետեւել: Այլ¹²⁵ պա՛րտ է ձեզ հայել ի մետասան ազգս քրիս/(224բ)տոնէից, զի ամենեքեան ի սուրբ խորհուրդն ջուր արկանեն եւ զկարգ եւ զաւրինադրութիւն կաթողիկէ¹²⁶ եկեղեցւոյս ըստ այսմ պահեն: Արդ՝ եթէ դուք որպէս եւ գրեալ էք հնազանդէք այսմ աթոռոյ, պարտիք եւ զայս ուղղել զհետ մերում կարգիս, քանզի վասն այսր խորհրդոյ սուրբն Աղէկսանդրոս հայրապետն Հռովմայ, որ հինգերորդ¹²⁷ էր ի սրբոյն Պետրոսէ, ա՛յսպէս գրեաց. «պա՛րտ է, ասէ, ամենայն քահանայապետի զխորհրդական գործ եկեղեցւոյ ուսուցանել, ա՛յսինքն՝ զմկրտութիւն, զպսակ եւ զպատարագ, որ է/(225ա) խորհրդական շարչարանացն Քրիստոսի յիշատակ: Զի որպէս Քրիստոս պատարագեցաւ ի խաչին մարմնով, եւ արիւն եւ ջուր ել ի կողէն, զնոյն խորհրդոյ յիշատակ պարտիմք կատարել՝ եւ մարմին եւ արիւն եւ ջուր պատարագել»: Զայս հրամայեաց սուրբն Աղէկսանդրոս՝ մեծն եւ փառաւորեալ վկայն, որ զամենայն կանոնս եւ զհաստատութիւն լիապէս ունէր ի սրբոյն Պետրոսէ եւ եցոյց եթէ. արժան է ո՛չ արեամբ միայն պատարագել եւ ո՛չ ջրով միայն, այլ մարմնով՝ արեամբ եւ ջրով: Քանզի զսոյն լուաք եւ ուսաք ի սուրբ Աւետարանէն, զի յորժամ/(225բ) խոցեցին զկողն Տեառն՝ ոչ ջուր միայն ել եւ կամ արիւն միայն, այլ՝ արիւն եւ ջուր: Նաեւ միւս

¹¹⁹ ամբրոսիոս ՄՄ-500;

¹²⁰ հռովմա ՄՄ-500;

¹²¹ այնր ՄՄ-500;

¹²² ընթացակիցս ՄՄ-500;

¹²³ հռովմայ ՄՄ-500;

¹²⁴ զգաստանալ ՄՄ-500;

¹²⁵ եթէ ՄՄ-500;

¹²⁶ կաթողիկէ ՄՄ-500;

¹²⁷ հինգերորդ ՄՄ-500;

հայրապետն սուրբն Յուզիոս այսպէս ասէ. ո՛չ է պարտ բաժակին լինել արեամբ միայն, եւ ո՛չ ջրով միայն, այլ՝ երկոքումքն. ա՛յսինքն արեամբ եւ ջրով: Եւ դարձեալ գրէ սուրբն Յուզիոս եթէ. «ոք զխորհրդական նուէրսն միովն կատարէ առանց միւսոյն, դադարել պարտի մինչեւ ի զղջումն եկեսցէ եւ ապաշխարեսցէ առանց միւսոյն, դադարել պարտի մինչեւ ի զղջումն եկեսցէ եւ ապաշխարեսցէ, ըստ եկեղեցւոյ կանոնադրութեանց»: Եւ Կիպրիանոս մեծ վկայն¹²⁸ եպիսկոպոսն Կարբեդոնոյ, որ յարեւմուտս, յիշատակ վասն բաժակի Տեառն մերոյ Յիսուսի// (226ա) Քրիստոս¹²⁹, այսպէս խաւսեցաւ Հոգին սուրբ բերանովն Սողոմոնի եւ ասաց. «Իմաստութիւն շինեաց իւր տուն եւ կանգնեաց սիւնս եւթն: Զեն¹³⁰ զենլիս¹³¹ իւր եւ խառնեաց ի խառնելիս զգինի իւր եւ պատրաստեաց զսեղան իւր եւ առաքեաց զծառայս իւր՝ կոչել բարձր քարոզութեամբ ի խառնելիս իւր, եւ ասէ. որ ոք իցէ անզգամ եկեսցէ առ իս, եւ ցպակասամիտսն ասէ. «եկայք կերայք ի հացէ իմմէ եւ արբէք զգինի զոր խառնեցի ձեզ»: Այս մարգարէութիւն Սողոմոնի նշակեաց¹³² զփրկական խորհուրդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ խառնեաց ի խաչին եւ ետ ի հաւատացելոցս զ// (226բ) նոյն: Եւ այսու ցուցանէ երանելիս Կիպրիանոս¹³³, թէ. ո՛չ է արէն ջրով միայն աւանդել զխորհուրդն եւ ո՛չ արեամբ լոկով, այլ՝ արեամբ եւ ջրով: Ա՛յսպիսի սրբոց հարցս վկայութեանց երեւի թէ. որ աւանդէ զխորհուրդն տէրունական գինով միայն, բաժանի՛ ի հաւատացելոց Քրիստոսի ժողովոյ, եւ որ ջրով միայն՝ առանց Քրիստոսի է համարեալ խորհուրդն կատարումն: Քանզի եւ խառնումն Բանին Աստուածոյ ընդ մեզ այսու երեւի, զի խառնումն արդարեւ եղեւ աստուածութեանն ընդ մեզ, որոյ¹³⁴ եղաք անդամբ եւ կոչեցաւ նա մեզ գլուխս:// (227ա) Եւ ըստ այսմ զխորհուրդ խաչին ի վերայ սրբոյ սեղանոյն կատարեալ առնումք հաւատացեալքս եւ խառնիմք ընդ Քրիստոս, որպէս եւ գրեաց երանելին Ամբրոսիոս: Դարձեալ որպէս յիշեցուցաք ձեզ վկայութեամբ սուրբ հայրապետացն վասն խառնման արեանն եւ ջրոյն, որ ի խաչին ցուցան, ծանուցանեմք եւ վասն տաւնի ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որպէս գրեցին սուրբ հարքն առաջինք: Եւ զայս, ուսեալք ի սրբոց առաքելոցն եւ հասուցին մինչեւ առ մեզ, քանզի լուաք. թէ դուք ազգքդ¹³⁵ Հայոց, ո՛չ տաւնէք զտաւն ծննդեանն Քրիստոսի զկնի

¹²⁸ վկայն+և+ ՄՄ-500;

¹²⁹ եպիսկոպոս ՄՄ-500;

¹³⁰ գէն ՄՄ-500;

¹³¹ զգէնլիս ՄՄ-500;

¹³² նշանակեաց ՄՄ-500;

¹³³ կիպրիանոս ՄՄ-500;

¹³⁴ որոյ+և+ ՄՄ-500;

¹³⁵ ազգդ ՄՄ-500;

մե//(227բ) տասան ազգաց, եւ պարտ է ձեզ յիշեցուցանել մեզ, եթէ զի՞նչ պատճառաւ զատեալ որոշիք ի մետասան ազգացս, քանզի երանելի հայրապետն Յոհաննէս Ոսկեբերանն, ի ճառ ծննդեանն գրէ. թէ ա՛յս աւր ծնաւ Քրիստոս, երեւեցուցեալ զտաւն ծննդեանն որիշ եւ զտաւն սրբոյ մկրտութեանն յա՛յլ աւր: Վկայէ եւ տաւն ի ծննդեանն Տեառն արեգականն շրջագայութիւնն, քանզի յամսեանն, յորում աւր ծննդեանն է, դարձ արեգականն է՝ տիւն սկսանի յաճել եւ գիշերն՝ ի պակասել, իսկ ի ծննդեանն Յովաննու, որ վեց ամսով յառաջ է//(228ա) քան¹³⁶ զՔրիստոսին¹³⁷, սկիզբն առնուն աւուրքն ի նուազել եւ գիշերն ի յաճել: Վասն զի եւ Յովաննէս քարոզէր ժողովրդեանն. նմա պարտ է աճել եւ ինձ մեղմանալ: Եւ զնոյնս գրեաց երանելին Յոհաննէս Ոսկեբերանն ի ճառին, յորում մեկնէ զյղութիւնն Եղիսաբէթի մարն Յոհաննու¹³⁸ եւ ասէ. եղեալ զնոյնն յամսեանն¹³⁹ Սեպտեմբերի ի քսան եւ երեքն, յորում ամսեան հաւասարի տիւն եւ գիշերն, եւ տիւն սկսանի ի պակասել եւ գիշերն յաճել: Արդ վասն տաւնի ծննդեանն Քրիստոսի բաւական համարիմք այսքան վկայութիւնքս¹⁴⁰, զորս ի սուրբ Գ//(228բ)րոց ածաք ձեզ: Եւ երկրորդեմք դարձեալ եւ ծանուցանեմք ձեր սուրբ եղբայրութեանդ, եթէ ամենեւին արժան է ի խորհուրդ սուրբ¹⁴¹ պատարագին Քրիստոսի զջուրն խառնել, այլ եւ աղաչեմք լսել մեզ եւ յայս խորհուրդ հաւասարել մեզ, որով եւ յայտնի ձեր սէրդ եւ միաբանութիւնդ ընդ սուրբ եկեղեցիս եւ ընդ մեզ: Քանզի եթէ կաթողիկէ¹⁴² եկեղեցիս այս մայր է ձեզ եւ գլուխ, արժան է կամաց մարտ հաւանել եւ առնել: Եւ կամք սորա ա՛յս են. ի տաւն Ծննդեանն եւ ի խորհուրդ պատարագին ընթացակից լինել իւր եւ ո՛չ ի մայրենի ճանապարհ//(229ա)հէս ստերիւրել եւ ո՛չ ի գլխոյ աստի անդամոցդ աւտարանալ: Եւ զայս ի սոյնս աւարտեցաք:

Դարձեալ յիշեցուցանեմք ձեզ եւ աղաչեմք, զի բնակելով ի սահմանս հեթանոսաց պարտիք լուսաւոր երեւել ի մէջ դոցա եւ տալ լոյս գիտութեան խաւարելոցդ, որպէս արեգակն եւ լուսին եւ աստեղք, որք պայծառացուցանեն զնսեմութիւն երկնի եւ երկրի: Վասն զի եթէ բնակի սուրբ այր եւ ուղղափառ, ի հաւասարապատիւ սրբոցն միջի եւ ուղղափառաց, անյա՛յտ մնա նորին բարի վարքն գովասանողաց, այլ՝ մեծարի եւ գովի այն, //(229բ) որ ի խաւարելոց միջի զնշոյլ վարուց իւրոց եւ հաւատոց փայլեցուցանէ:

¹³⁶ ՚ ՄՄ-500;

¹³⁷ Քրիստոսին - ՄՄ-500;

¹³⁸ յովանու - ՄՄ-500;

¹³⁹ ՚ ՄՄ-500;

¹⁴⁰ գվկայութիւնքս - ՄՄ-500;

¹⁴¹ տ. սուրբ խորհուրդ - ՄՄ-500;

¹⁴² կաթողիկէ - ՄՄ-500;

Զնոյնս պատմել եւ երանելին Յոբ¹⁴³ եթէ. եղբայր եղէ վիշապաց եւ ընկեր ջայլեմանց: Գովի՛ եւ Դովտ ի սուրբ առաքելոյն Պետրոսէ եւ յամենայն սրբոց, որ բնակեալ գոլով ի մէջ սողոմայեցւոցն եւ հաճոյացաւ Աստուածոյ, զոր վասն բարեգործութեան իւրոյ հրեշտակքն առաքեալք հանին ի կործանմանէն: Այլ եւ խաւեցաւ Հոգին սուրբ վասն եկեղեցւոյն Պերգամոյ ի Յայտնութեանն¹⁴⁴ Յովհաննու. ճանաչեմ գրեզ թէ ու՞ր իցես յաթոռն սատանայի/(230ա) նստեալ, եւ ունիս զանուն իմ եւ ո՛չ ուրախացար¹⁴⁵ զիս: Եւ Սողոմոն յիշատակէ յԵրգ երգոցն զգովութիւն փեսային, զոր տայ հարսինն՝ որ է եկեղեցի, եւ ասէ. որպէս շուշան ի մէջ փշոց, այնպէս մերձաւորդ իմ ի մէջ դստերաց: Այլ եղբայրս մեր Աղպրի ոչ կարաց զբովանդակն պատմել վասն կենաց ձեր եւ քաղաքաւարութեան եւ յաղագս ա՛յլ քրիստոնէիցդ, որք են յարեւելս: Եւ ցանկամք լսել ի ճշմարիտ եւ ի սուրբ մարդկանէ, վասն այսր եւ խնդրեմք յԱստուածոյ եւ ի ձեր սրբութենէդ, զաստուածահաճոյ սուրբ եպիսկոպոսդ՝ զհարազատ եղբայր ձեր զՆերսէս եւ թարգման/(230բ) ճարտար՝ հմուտ Հայոց լեզուի եւ Լատինացւոց, պատշաճ համարել եւ յղել ի սուրբ տեղիս յայս, զոր ամենայն յաւժարութեամբ ցանկամք տեսանել եւ ընուլ նովաւ զփափագ¹⁴⁶ սրտի մերում: Եւ ահա սպասեմք պատասխանատուութեանն եւ Ներսէսի եպիսկոպոսի եղբար ձեր տեսութեանն: Ապա թէ վասն ճանապարհիդ երկայնութեան երկնչիք, զա՛յլ ոք ի գիտնական¹⁴⁷ ձերոց կլերիկոսաց առաքեցէք եւ թարգման: Եւ աւրհնութիւն Հաւր եւ Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի եւ Հոգւոյն սրբոյ եղիցի ընդ ձեզ յայսմհետէ մինչեւ յաւիտեան¹⁴⁸, ամէն:

Գրեցաւ ի Հռոմ ի լաղրանն նախ/(231ա)քան զեւթն կաղանդաց հոկտեմբեր¹⁴⁹ ամսոյ»:

¹⁴³ յովբ - ՄՄ-500;

¹⁴⁴ վասն եկեղեցւոյն Պերգամոյ ի Յայտնութեանն] ՄՄ+500:

¹⁴⁵ ուրացար - ՄՄ-500;

¹⁴⁶ զփափագ ՄՄ-500;

¹⁴⁷ գիտնականաց ՄՄ-500;

¹⁴⁸ յաւիտեանս ՄՄ-500;

¹⁴⁹ հոգտեմբեր ՄՄ-500;

ՄԱՍ Գ

ԺԲ ԴԱՐԻ ՀԱՅ-ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՒՆԴԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

Գ 1. Եկեղեցական բանակցությունների նախադրյալները.

Ներկա հետազոտության մեջ փորձ կատարենք ներկայացնել միջնադարյան հայկական և բյուզանդական նոտարատներում ստեղծված կամ հայերեն և հունարեն լեզուներով մեզ հասած վավերագրերը: Մեր նպատակն է այդ փաստաթղթերի կառուցվածքային ուսումնասիրության արդյունքները ծանայեցնել ԺԲ-ԺԴ միջազգային փոխհարաբերությունների ոլորտում Հայոց կաթողիկոսարանի տեղը, դերն ու կշիռը որոշելու խնդրին: Նշված ժամանակաշրջանում հայերեն և հունարեն լեզուներով գրված ու պահպանված վավերագրիտական նյութը թույլ է տալիս ընդհանուր պատկերացում կազմել Հռոմ-կլայի կաթողիկոսական դիվանի, Կոստանդնուպոլսի պատրիարքական և կայսերական գրասենյակների նոտարական դիվաններում վավերագիր գրելու ավանդների և փաստաթղթի կազմման և մշակման սկզբունքների մասին¹:

¹ Կոստանդնուպոլսի կայսերական և պատրիարքական նոտարատների գործունեությունը բավական լուրջ հետազոտության է ենթարկվել Ի դարի ընթացքում: Բյուզանդիայի կայսերական նոտարատան աշխատանքներին նվիրված հիմնարար աշխատությունները պատկանում են գերմանացի գիտնական Ֆր. Դյոլգերին և հույն բյուզանդագետ Ի. Կարայանուպոլսին. **F. Dölger, J. Karayannopoulos, Byzantinische Urkundenlehre. Erster Abschnitt: Die Kaiserurkunden** (Handbuch der Altertumswissenschaft, xii. 3) (Munich: Beck, 1968): Ֆր. Դյոլգերն իր կյանքի մեծագույն մասը նվիրել է Բյուզանդական կայսերական նոտարատից դուրս եկած վավերագրերի նկարագրությանը: Տե՛ս **Fr. Dölger, RKOR, Teil 1: von 565–1025** (München-Berlin 1965); **Teil 2: Regesten von 1025–1204** (München: 1925); **Teil 3: Regesten von 1204–1282** (München: 1932); **Teil 4: Regesten von 1282–1341** (München-Berlin: 1960); **Teil 5: Regesten von 1341–1453** (München: 1965): Բյուզանդական կայսերական վավերագրերի հետազոտության ճանապարհի մասին տե՛ս նաև **А.П. Каждан, “F. Dölger, J. Karayannopoulos. Byzantinische Urkundenlehre. Erster Abschnitt: Die Kaiserurkunden. München, 1968”, BB, т. 32 (57) (1971), с. 261–263** (գրախոսություն): Ժամանակին այս բնագավառում ինքնատիպ խոսք է ասել նաև ռուսական բյուզանդագիտությունը: Ի դարասկզբի ռուսական բյուզանդագիտական վավերագրիտության նվաճումների մասին է խոսում **П.А. Яковенко, “Исследование в области византийских грамот. Грамоты Нового монастыря на**

Բյուզանդական կայսրությունը ԺԲ դարի ընթացքում և մանավանդ Մանուել Ա Կոմենենոսի իշխանության տարիներին, ելնելով կայսրության արտաքին նպատակներից, բազմիցս փորձում է սերտ դիվանագիտական փոխհարաբերություններ հաստատել Հռոմի պապական եկեղեցու, Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանի և ասորիների հակոբեի պատրիարքարանի հետ: 1171 թ. Կոստանդնուպոլսի Միքայել Գ Անքիալոս պատրիարքի օրոք, հրավիրվել է Հռոմի-կաթողիկ և բյուզանդական-օրթոդոքս եկեղեցիների միավորման անհրաժեշտությունը հաստատող կղերական ժողով²: Սակայն և՛ Հռոմը, և Կոստանդնուպոլիսը ժամանակի ընթացքում դավանաբանությամբ ու ծեսով այնքան էին հեռացել միմեանցից, որ ծիսադավանական այս տարբերություններին էլ գումարվելով քաղաքական հակամարտությունը, եկեղեցական միության հարցը դրական լուծում չէր կարող ստանալ, քանի որ երկու եկեղեցական կազմակերպություններին հուզող հիմնական հարցը մնում էր գերագահության խնդիրը³: Բյուզանդական կայսրության և Հռոմի պապական եկեղեցու միջև ԺԲ դարի 60-70-ական թթ. բանակցությունների քաղաքական շար-

острове Хиос», *Оттиск из «Ученых Записок Юрьевского Университета»* (Юрьев, 1917) մենագրությունը:

Բյուզանդական պատրիարքական վավերագրերի նկարագրման աշխատանքները ղեկավարել են Վ. Գրյումելը, Վ. Լորանը և Ժ. Դարուցեզը. *Les registes des actes du patriarcat de Constantinople, vol. I: Les actes des patriarches, fasc. I: Les registes de 381 à 715, par V. Grumel, Paris 1972 (1932) ; fasc. II et III: les registes de 715 à 1206, par V. Grumel et J. Darrouzes (Paris, 1936, 1947, 1989); fasc. IV: Les registes de 1208 à 1909, par V. Laurent (Paris, 1947, 1971); fasc. V: Les registes de 1310 à 1376, par J. Darrouzès (Paris, 1977); fasc. VI: Les actes de 1377 à 1410, par J. Darrouzès (Paris, 1979); fasc. VII : Les registes 1410 à 1443, par J. Darrouzès (Paris, 1991) (այսուհետ՝ RAPC): Շարքի Դ հատորը գրախոսել է Ա. Կաժդանը (*ՊԲՁ* 3 (1972), էջ 281–285): Բյուզանդական կայսերական և պատրիարքական վավերագրերի հետազոտման խնդիրների մասի տե՛ս V. Grumel, “Les Regestes des patriarches de Constantinople”, *ÉO*, t. 31 (1932), p. 5–16; V. Laurent, “Les diplômes de la chancellerie impériale de Byzance”, *ÉO*, t. 31 (1932), p. 44–51: Ուշ շրջանի բյուզանդական պատրիարքական վավերագրի հետազոտության խնդիրներին անդրադարձել են նաև ավստրիացի հետազոտողները, տե՛ս O. Mazal, *Die Prooimien der byzantinischen Patriarchenurkunden* (Wien, 1974); *Das Register des Patriarchats von Konstantinopel, Teil 1: Edition und Übersetzung der Urkunden aus den Jahren 1315–1331*, hrsg. H. Hunger und O. Kresten (Wien: 1981); *Teil 2: Edition und Übersetzung der Urkunden aus den Jahren 1337–1350* (Wien: 1995); *Teil 3: Edition und Übersetzung der Urkunden aus Jahren 1350–1363*: Բյուզանդական վավերագրի հետազոտության մերօրյա խնդիրների մասին տե՛ս *The Oxford handbook of Byzantine studies*, ed. by E. Jeffreys, J. Haldon, R. Cormack (Oxford: Oxford University Press), pp. 101–156 (տարբեր հեղինակներ):*

² H.-G. Beck, *Kirche und theologische Litteratur im byzantinischen Reich* (München, 1959), S. 58.

³ Այդ մասին տե՛ս J. Spiteris, *La critica Bizantina del Primato Romano nel secolo XII* (Roma: 1979):

ժառիթը Գերմանական կայսր Ֆրիդրիխ Բարբարոսայի Իտալական պատերազմն էր, որը Բյուզանդական կայսրությանը և Հռոմի պապությանը ակամա դաշնակիցներ էր դարձրել Գերմանական կայսրության դեմ պայքարում⁴:

Եփրատյան գավառի անառիկ ամրոց Հռոմկլայում հաստատված Հայոց կաթողիկոսարանը ժԲ դարի 50-ական թվականներից Հալեպի աթաբեկությանը ստորակա առանձին քաղաքական միավոր էր և տիրում էր կաթողիկոսանիստ բերդաքաղաքին ու նրա շրջակայքին: Երբեմն, նորընտիր կաթողիկոսն աթոռին տիրում էր գերակա Հալեպի աթաբեկության միջնորդությամբ⁵, սակայն այս հանգամանքը չէր խանգարում, որ ժԲ դարի 60–70-ական թթ. Հայոց եկեղեցին փորձեր մտնել եկեղեցական հարաբերությունների միջազգային ոլորտ, բանակցություններ վարեր բյուզանդական, պապական, վրացական և հակոբեիկ ասորիների եկեղեցիների առաջնորդների հետ:

Հայոց կաթողիկոսարանը մեզ հետաքրքրող պատմաշրջանում հայերին միավորող միակ համազգային հոգևոր-եկեղեցական կազմակերպությունն էր, այն փաստորեն կառավարման մի շարք լծակներ պահպանած հաստատություն էր պետականությունը կորցրած և բազմաթիվ քաղաքական միավորումների իշխանության ներքո հանգրվանած ժողովրդի համար: Կաթողիկոսարանը վեր էր կանգնած Կիլիկիայում և այլուր իշխանության հասած բոլոր հայկական իշխանական տներից և երբեմն միջնորդ դատավորի դեր էր ստանձնում՝ միմեանց դեմ կովող հայ իշխանների միջև բորբոքված երկպառակտչական պատերազմները դադարեցնելու մտահոգությամբ: Հռոմկլայի իշխան Հայոց կաթողիկոսը միաժամանակ գերագահ դիրք ուներ հայրենիքում և նրանից դուրս գտնվող բոլոր հայկական իշխանությունների նկատմամբ: Իշխանության մյուս առանձնահատուկ կողմն էլ այն էր, որ կաթողիկոսարանի ազդեցությունը տարածվում էր հայազգի բոլոր հավատացյալների վրա. «որք յարեւելս՝ ի սեփական աշխարհս Հայաստանեայց բնակեալք, և որք յարեւմտեան կողմանսդ սահեալք նշդեհութեամբ, և որք ի Միջերկրայս՝ ի մէջ

⁴ F. Chalandon, *Jean II Comnène (1118–1143) et Manuel I Comnène (1143–1180)*, t. II (Paris: Picard, 1912), p. 563–570, 653–654.

⁵ Գրիգոր Դ Տղայի կաթողիկոս օժվելու իրադարձությունների մասին Միքայել Ասորի հակոբեիկ պատրիարքի հաղորդումը Հռոմկլայի կաթողիկոսարանի հանդեպ Հալեպի աթաբեկության գերակայության փաստարկ է (տե՛ս M.S., t. III, p. 353–354, հմմտ. նաև Ժամանակագրութիւն տեանն Միխայէլի Ասորոց պատրիարքի, հանեալ ի հնագոյն գրչագրէ (Երուսաղէմ, 1871), էջ 472: Ասորի պատմիչի վկայությամբ. «Մլեհն էառ զնա (իմա՛ Գրիգոր Դ Տղային – Ա.Բ.) և տարաւ առ Նորադինն, և նորին օգնականութեամբն եմոյժ զնաք ի Հռոմկլայն. և նստաւ յաթոռ հայրապետության հօրեղբօրն՝ Գրիգոր անուն»: Հայ մատենագրության մէջ այս վկայությունը կրկնվում է ևս երկու անգամ. ժԳ դարի ժամանակագիր Ստեփանոս Եպիսկոպոսի և ժԷ դարի մատենագիր Դավիթ Բաղիշեցու մոտ: Տե՛ս ՄԺ, հտ. I, էջ 35 և հտ. II, էջ 342:

այլալեզու ազանց տարաբերեալք»⁶: Հայաստանում և հայաբնակ շրջաններում Հայոց եկեղեցու և կաթողիկոսարանի միջոցով էին լուծվում հայ ազգաբնակչության և օտարազգի իշխանությունների միջև ծագած վարչական, տնտեսական և նույնիսկ քաղաքական հարցերը⁷: Հռոմկլայի կաթողիկոսարանի հոգաձուլյան առարկան էին նաև համազգային հոգևոր և մշակութային խնդիրները:

Ի հակակշիռ սելջուկ-թյուրքերի ռազմարշավների հետևանքով կորցրած տարածքների, բյուզանդական պետական կառույցները շարունակում էին հարատևել Փոքր Ասիայում, Կիլիկիայում և Կիպրոսում: Կայսրութայունը ժԲ դարի առաջին կեսին՝ մինչև 1176 թ. Միրոկեֆալոնի ճակատամարտում⁸ Իկոնիայի սուլթանության դեմ մղած պատերազմում պարտութուն կրելը, կարողանում էր ռազմարշավներ կազմակերպել Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք: Մերձավոր Արևելքի այս հատվածում (նկատի ունենք Կիլիկիայի, Կիպրոսի, Միջերկրական ծովի ափամերձ լատինական իշխանությունների տարածքը) ստեղծվել էր Բյուզանդական կայսրության գերակայութունն ընդունող իշխանությունների բավական լայն մի ցանց, որն իբրև կանոն գործում էր Տարսոսում նստող բյուզանդական զինվորական հրամանատարի հետ դաշնակցած⁹: Այս առումով կարելի է մասնագետների ուշադրութունը հրավիրել Կիլիկիայում գործող Լամբրոնյան, Նաթանայեցյան և այլ իշխանատների բյուզանդամետ ձգտումների վրա: Նրանց քաղաքական թևին պատկանող հայ իշխանական մյուս տների մասին հետաքրքիր տեղեկութուններ են պահպանել հայկական պատմական սկզբնաղբյուրները¹⁰:

⁶ Տե՛ս **Ներսէս Շնորհալի**, ԹՂ, էջ 1: Հիմնականում օգտագործել ենք այս հրատարակութայունը, իսկ մյուսներից օգտվելու դեպքում նշում ենք թվականը: Հույս ունենք, որ շուտով լույս կնծայենք ժԲ դարի հայերենով պահպանված վավերագրերի գիտական բնագրերը:

⁷ Այդ մասին է վկայում օրինակ Բարսեղ Ա կաթողիկոսի այցը սելջուկյան սուլթան Մելիք Շահին: Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն (Վաղարշապատ, 1898), էջ 240; **Սամուէլ Անեցի**, Հաւաքմունք (1893), էջ 117:

⁸ Միրոկեֆալոնի ճակատամարտի և Բյուզանդական կայսրութայան պատմութայան մեջ այդ իրադարձութայան նշանակութայան մասին տե՛ս **R.-J. Lilie**, “Die Schlacht von Myriokephalon (1176). Auswirkungen auf das byzantinische Reich im ausgehenden 12. Jahrhundert”, *REB*, t. 35 (1977), p. 272–275:

⁹ Այդ մասին տե՛ս **Ա. Բողոյան**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականութայունը, էջ 190–216:

¹⁰ Նշենք այդ իշխաններից միայն ոմանց անունները. ա/ պարոն Սմբատ՝ տեր Պապեոունին, բ/ պարոն Վասիլ՝ տեր Բարձրաբերդի, գ/ պարոն Տերին, դ/ պարոն Տիգրան: Տե՛ս Տարեգիրք արարեալ **Սմբատայ սպարապետի** Հայոց, որդւոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոսոյ (Փարիզ, 1859), էջ 83: ԺԳ դարի հայ ժամանակագիրներից մեկը բյուզանդական գերագահութայունն ընդունած տոհմերին կոչում է. «զՀայկազունսն, զՆաթանեղեանսն, զտեարսն Ասկուռայ...»: Տե՛ս Հայապատում. պատմիչք և պատմութիւնք Հայոց, յօրինեալ և հաւաքեալ ի հ. **Ղեւոնդեայ վ. Ալիշան** աթոռակալ վարդապետէ Մխիթարեան ուխտին (Վենետիկ, Ս. Ղազար, 1901), էջ 345:

Մանուել Ա Կոմնենոս կայսրը 1158–1159 թթ. Կիլիկիայի վրայով Հյուսիսային Ասորիք կատարած ռազմարշավի ժամանակ կարողացավ ստորակայական կախման մեջ դնել անկախության ձգտող Թորոս Բ Ռուբինյանին, նրան տալով սեւաստոսի պատվանուն: Բյուզանդական կայսրությանից Ռուբինյան իշխանության կախվածության մասին հետաքրքիր վկայություններ են պահպանել բյուզանդական պատմիչներ Հովհաննես Կիննամոսը¹¹, Նիկետաս Խոնրատեսը¹², Կիլիկյան Հայաստանի պաշտոնական ժամանակագիր Սմբատ Սպարապետը¹³ և «Պատճառ խնդրոյ միաբանութեան» (այսուհետև՝ ՊԽՄ)¹⁴ վավերագրերի ժողովածուն: Սակայն Ռուբինյան իշխանական տունը Թորոս Բ-ի ղեկավարությամբ ԺԲ դարի 60-ական թվականներին էլ շարունակում է գլխավորել հակաբյուզանդական քաղաքական թևը, որի ծրագրերը և փայփայած հույսերը համահունչ էին ժամանակի պատմական կացությանը: ԺԲ դարի 60–70-ական թթ. Բյուզանդական կայսրության նվաճողական միտումները Կիլիկիայում աներկբա էին, քանի որ չէին դադարում բյուզանդական զորահրամանատարների հետ դաշնակցած հունամետ կողմի և Ռուբինյան իշխանության միջև բորբոքվող ռազմական բխսումները: Նման ընդհարումներ թույլ չտալու միտումով էր, որ 1165 թ. Կիլիկիայի զորահրամանատար նշանակված Ալեքս Աքսուխը և Գրիգոր Գ կաթողիկոսի եղբայր Ներսես Շնորհալին բանակցություններ են սկսում եկեղեցական միության խնդրի շուրջ: Սկսված երկխոսությունը շարունակվեց մինչև 1178 թ.: Այդ ընթացքում Բյուզանդական կայսրությունը փորձում է Հայոց կաթողիկոսարանի վզին փաթաթել եկեղեցական միության մի այնպիսի ծրագիր, որը Հայոց կաթողիկոսական աթոռը կախման

Սմբատի վենետիկյան ձեռագրում հիշատակված Տիգրանը կոչվում է «զտէրն Պռականու գՏիգրանն» (Սմբատ, Տարեգիրք (Վենետիկ), էջ 171): Պետք է նաև նշել, որ Պապեոտնի տեր Սմբատը Լամբրոնի տեր Օշինի եղբայրն է (Անդ, էջ 187): Կիլիկիայում, Կապադովկիայում և Հյուսիսային Ասորիքում ԺԱ դարի երկրորդ կեսին ստեղծված ու մինչև ԺԲ դարի կեսերը գոյատևած բյուզանդամետ հայկական իշխանությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Գ. Dédéyan, *Les Arméniens*, p. 5–359, 647–705, 933–1330 և հմմտ. նաև Մ.-Ե. Քասունի, Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնները Մերձաւոր Արեւելքի քաղաքական հոլովոյթին մէջ (1080–1137) (Պէյրութ, 1974), էջ 17:

¹¹ Ioannis Cinnami *Epitome rerum ab Ioanne et Alexio (sic) Comnenis Gestarum* (Bonnae:1836), p. 186.

¹² Nicetae Choniatae *Historia*, recensuit I.A. van Dieten, pars prior: Praefationem et textum continens; pars altera: Indices continens (Berolini-Novii Eboraci 1975), p. 103–103 (այսուհետ՝ **N.Ch.**):

¹³ Սմբատի տարեգրքի ընդարձակ տարբերակում այս ռազմարշավը թվագրված է 1159 թ.: Տե՛ս Սմբատ, Տարեգիրք (Վենետիկ), էջ 177–178: Այս իրադարձության մասին տե՛ս նաև Մասթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 417–419:

¹⁴ Ներսէս Շնորհալի, ԹԲ, էջ 86:

մեջ կղներ Կոստանդնուպոլսի պատրիարքությունից¹⁵: 1165–1178 թթ. հայ-բյուզնդական եկեղեցական միությանը վերաբերող վավերագրերում բյուզնդական կայսրը և Կոստանդնուպոլսի պատրիարքը հայերի հետ վարվող բանակցությունները և եկեղեցական միության խնդիրը երբեք չեն փորձում կապել Հռոմի պապության հետ կայսրության վարած դիվանագիտական փոխհարաբերությունների հետ: Սակայն հակառակ միտումն է նկատվում Ներսես Շնորհալու թղթերից մեկում, որը 1165 թ. Սմբատ ներքինու Հռոմկլաբերած նամակի պատասխանն է: Հռոմի և Կոստանդնուպոլսի եկեղեցական հարաբերությունների նկատմամբ կաթողիկոսի շահագրգռությունն ակնհայտ է. «Նա զի և լուաք՝ թէ հայրապետն Հռոմայ և փոխանորդն Պետրոսի առաքելոյ յիրոց անտի իմաստնոց առաքեաց խօսել առաջի սուրբ թագաւորութեան ձերոյ վասն միաբանութեան հաւատոյ»¹⁶:

Ինչ վերաբերում է Հայոց եկեղեցուն, ապա նա շահագրգռված էր բանակցությունների ոլորտի մեջ ներգրավել նաև ասորիների հակոբիկ եկեղեցուն, որի մասին Սմբատ ներքինու Հռոմկլայից Կ. Պոլիս տարած թղթում ասվում է. «...առաքեցան առ մեզ երկու եպիսկոպոսք վասն միաբանելոյ ընդ ազգիս մերում, զոր եւ ընկալաք սիրով եւ սահմանեցաք ի պատշաճ ժամու ժողով լինել առաջի մեր եւ խաւսել առ միմեանս յԱստուածաշունչ գրոց, զի թէ գտանիցի աւանդութիւն ինչ ի միջի մերում արտաքոյ աստուածագիր կանոնաց, բարձցուք յերկոցունց կողմանց, եւ զնուազութիւնն լցցուք միաբանական սիրով...»¹⁷:

Հարց է առաջանում, թե ինչով կարելի է բացատրել Հայոց կաթողիկոսարանի նման եկեղեցաքաղաքական վարքագիծը: Մեր կարծիքով, այս հարցի

¹⁵ Այս միտումի լավագույն ասպացույցը 1171 թ. մագիստրոս Թեորիանոսի կողմից Հռոմկլաբերված «Գլխակարգութեան» պահանջներից իններորդն է, որի մասին տե՛ս ստորև:

¹⁶ Անդ, էջ 117: Հայոց եկեղեցին ժԲ դարի սկզբներից բավականին սերտ դիվանագիտական փոխհարաբերություններ է պահպանել Հռոմի պապական եկեղեցու հետ, այս տեսակետից հետաքրքրական է Ինոկենտիոս Բ պապի նամակը Հայոց Գրիգոր Գ կաթողիկոսին (տե՛ս Ա. Տէր-Միքելեան, Միջին դարերի կաթողիկոսների ձգտումները, էջ 133–138, տե՛ս նախորդ գլուխը), սակայն ինչ վերաբերում է անընդմեջ հարաբերություններին, մեր ձեռքի տակ եղած նյութը չափազանց սակավ է և թույլ չի տալիս լրացնել տասնամյակներ ոչ մի տեղեկություն չհաղորդող սկզբնաղբյուրների բացը:

¹⁷ Տե՛ս Ներսէս Շնորհալի, ԹԸ, էջ 117 և հմմտ. Ա. Բողոյան, Հայ-բյուզնդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 42: ԺԲ դարի հայ-ասորական եկեղեցական փոխհարաբերությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Ե. Տէր-Մինասեանց, Հայոց եկեղեցու յարաբերությունները ասուոց եկեղեցիների հետ (Էջմիածին, 1908), էջ 270–280:

լավագույն պատասխան կարող է հանդիսանալ Հռոմկլայի կաթողիկոսարանի հեռու գտնվելը Մեծ Հայքի տարածքից¹⁸: Հայոց հոգևոր բարձրագույն իշխանության նոր նստավայրը շրջապատված էր Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի բազմատարր մուսուլմանական և քրիստոնեական ազգաբնակչությամբ, որոնց հետ առօրյա շփման մեջ էր այս տարածքներում հաստատված հայկական էթնիկ տարրը՝ հասարակ ժողովուրդը, իշխող դասակարգը, զինվորականությունը և եկեղեցին: Շրջապատի հետ հայերի փոխհարաբերությունները, պատմիչների վկայությամբ մերթ քաղաքական էին, մերթ թշնամական: Հայոց եկեղեցու հոգևոր պետերն զգում էին, որ առանց հարևան ժողովուրդների հետ տանելի փոխհարաբերությունների հաստատման անհնար է հասնել եկեղեցաքաղաքական և պետական ինքնուրույնության:

Այս դրությունը Հայոց եկեղեցուն թույլ էր տալիս հանդես գալ ողջ ժողովրդի անունից, միավորել հայկական իշխանությունների ուժերը՝ իրագործելու համար պետականությունը կորցրած ժողովրդի քաղաքական ձգտումները: Կաթողիկոսարանը քրիստոնյա և մահմեդական պետությունների հետ բանակցություններում օգտագործում էր բոլոր հնարավորությունները՝ իր առջև դրված եկեղեցական և քաղաքական խնդիրները լուծելու համար: Այդ քաղաքականության հեռավոր նպատակն էր, ըստ իս՝ պետականության վերականգնումը:

Եկեղեցական միության համար բանակցություններ սկսելով, Բյուզանդական կայսրությունը մտադիր էր Հայոց կաթողիկոսարանը ենթարկել իր իշխանությանը և հետապնդում էր երկու հիմնական նպատակ.

ա/ ձեռք բերել Բյուզանդական կայսրության ներսում ապրող հայերի աջակցությունը (հայտնի է կայսրության սահմաններում հայկական տարրի առկայությունը և նրա դերը երկրի կառավարման հարցերում)¹⁹: Եկեղեցա-

¹⁸ Այս անապահով դրության մասին վկայություն է պահպանել Ներսես Գ Շնորհալու 1166 թ. գրած «Ընդհանրական թողթը». «Եւ քաղաք թագաւորական եւ բազմաժողով ոչ գոյ ազգի մերում, որպէս զի անդանաւր նստելով յաթոռ հայրապետութեան եւ վարդապետութեան՝ ուսուցանէաք ժողովրդեան մերում յաստուածային պատուիրանս ըստ առաջին հայրապետացն և վարդապետաց: Այլ եմք իբրև զայժեամն յորսորդաց և ի շանց փախուցեալք ի քարանձաւս յայս բնակելով. յորում ոչ և մարմնական հարկաւոր պիտոյիւք շատացեալք ի գիւղից, կամ յազարակաց, յորոց ունիմք և ոչ մի: Նաև ոչ անդաստան հողոյ, զի վաստակաւք եւ աշխատութեամբ զպէտս մեր ընուաք, եւ ոչ աւզնութիւն ուստէք՝ որպէս արժանի էր ի թագաւորաց եւ ի իշխանաց ի Քրիստոս հաւատացելոց»: Տէ՛ս **Ներսէս Շնորհալի**, ԹՂ, էջ 6–7:

¹⁹ Տէ՛ս **А. Каждан**, *Армяне в составе господствующего класса византийской империи в XI–XII вв.* (Ереван, Издательство АН Арм. ССР, 1975), с. 167; **նույնի՝** *Социальный состав господствующего класса Византии XI–XII вв.* (Москва, Издательство «Наука», 1974), с. 149–151, 244; **P. Charanis**, *The Armenians in the Byzantine Empire* (Lisboa: Livraria Bertrand, 1963), p. 36–40:

կան միություն հաստատելով՝ համաձայնության գալ կայսրության սահմաններում հաստատված հայական գաղթօջախների բնակչության հետ, որը մինչ այդ հակադրվում էր բյուզանդական պաշտոնական եկեղեցուն և դրա համար մեղադրվում էր աղանդավորության մեջ²⁰։

բ/ հաջորդ և հիմնական նպատակը Բյուզանդիայի արևելյան քաղաքականության հանգուցակետերից մեկում՝ Կիլիկիայում, հայերի աջակցության ձեռքբերումն էր։

ԺԲ դարի Բ կեսին արդեն Հայոց եկեղեցական կազմակերպության մեջ ձևավորվել էր երկու իրարամերժ տեսակետ, որոնց շուրջ բորբոքվում էր տարբեր թեմերի միջև ծայր առած եկեղեցաքաղաքական պայքարը։ Ընդհանուր էր երկու տեսակետների կողմնակիցներն էլ Հայոց եկեղեցին և նրա դավանանքը համարում էին ուղղափառ, սակայն կողմերից մեկի համար դա միակ ուղղափառ եկեղեցին էր, մյուսի համար՝ ուղղափառ եկեղեցիներից մեկը, որին հարկավոր էր վերագտնել իր տեղը Տիեզերական եկեղեցու նվիրապետական կառույցում։ Առաջինները բացահայտորեն մերժում էին Քաղկեդոնի ժողովն ընդունող բոլոր եկեղեցական կազմակերպությունները, իսկ երկրորդները՝ փորձում էին, պահպանելով սեփական եկեղեցու ինքնուրույնությունը և ինքնագլուխ (αὐτοκέφαλη) նվիրապետական կառույցը, հաշտության եզրեր գտնել հարևան եկեղեցիների և մանավանդ բյուզանդական եկեղեցու հետ։ Առաջինները դեմ էին ծիսադավանաբանական որևէ զիջման, իսկ երկրորդները՝ բյուզանդական եկեղեցու հետ միություն հաստատելու համար, պատրաստ էին կատարել որոշ, նույնիսկ էական զիջումներ։

ԺԲ դարի 60-ական թվականներից Հայոց եկեղեցական կազմակերպությունը Հռոմկլայի կաթողիկոսարանի ղեկավարությամբ ընտրեց սեփական եկեղեցու ինքնուրույնության պահպանության, սակայն հարևան եկեղեցիների հետ հաշտության եզրեր գտնելու ճանապարհը։ Նման դիրքորոշումը բխում

²⁰ ԺԲ դարի բյուզանդական մատենագրությունը հարուստ է Հայոց «աղանդի» դեմ գրած երկերով։ Տե՛ս **H.-G. Beck**, *Kirche und theologische Litteratur*, S. 609–663), ինչպես նաև **Պ. Մուրադյան**, «Եվթիմիոս Զիղաբենոսի «ΠΑΝΟΠΛΙΑ ΔΟΓΜΑΤΙΚΗ» երկի հին վրացերեն թարգմանությունը», Մառը և հայագիտության հարցերը (Երևան, ՀՄՄԻ ԳԱ հրատ., 1968), էջ 266–295; **Վ.Ա. Հարությունովա**, «Գրիգոր Պակուրիանը (Բակուրյանը) և Պետրիժիոնում վանք հիմնելու նրա նպատակները», Մառը և հայագիտության հարցերը, էջ 175։

Բյուզանդական կայսրության արևմուտքում հայադավան գաղթօջախներից մեծագույնը Փիլիպոսյան էր (այժմ՝ Պլովդիվ)։ ԺԱ-ԺԲ դդ. Այդ տարածքի հայ բնակչության մասին տե՛ս **Н.Я. Марр**, “Аркауи, монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах”, *ВВ*, т. XI прилож. (1906), с. 17–25; **Հր. Բարթիկյան**, «Մամիկոնյան (?) սուրն Մարիամ նորավկայի († 902–903 թթ.) բյուզանդական վարքը», «Էջմիածին» ԺԲ (1975), էջ 39–44։ ԺԲ դարի հայ-բյուզանդական բանակցություններում այս գաղթօջախի դերին կանդաղաբանական աշխատության երրորդ մասում։

էր կաթողիկոսարանի եկեղեցաքաղաքական ծրագրերից. այն է՝ Կիլիկիայում քիչ թե շատ ամուր հայկական պետութիւն ստեղծելու անհրաժեշտութիւնից, որի համար հարկավոր էր նաև երկրամասը բնակեցնող մյուս, հատկապես քրիստոնյա, ժողովուրդների աջակցութիւնը: Գրիգոր Գ Պահլավունին, Ներսես Դ Շնորհալին, Գրիգոր Դ Տղան և Ներսես Լամբրոնացին ու այդ թևին պատկանող մյուս բարձրաստիճան հայ հոգևորականները ջանք չէին խնայում հաշտեցնելու Կիլիկիայում գործող եկեղեցիներ ունեցող ժողովուրդներին հայկական իշխանութիւնների ու Հայոց եկեղեցու հետ: Այդ նպատակով 1165 թ. Հռոմկլայի կաթողիկոսարանը բանակցութիւններ է սկսում բյուզանդական արքունիքի և Կոստանդնուպոլսի օրթոդոքս պատրիարքարանի հետ:

Ներսես Դ Շնորհալին և նրա հետևորդները ճանաչում էին բյուզանդական եկեղեցու ուղղափառութիւնը և պայքարում՝ երկաբնակութիւն ընդունած հայազգի գործիչների դեմ, որոնք. «...հայրենի աւանդութեանն բամբասանօք, և այն ստութեամբ և ոչ ճշմարտութեամբ, յարգոյ լինել կարծելով ներհակացն ուր շոգաւ, որպէս և բազումք ի յառաջագունից հատուածելոցն ի մէնջ արարիչն այսպիսիս:...և որք նովին ատելութեամբ զգածեալք ի մերասերիցս՝ ախորժելով լսէին զայնոսիկ և հաւատային. և յայսպիսի սերմանեաց աճեցեալ և պտղաբերեալ՝ որպէս թուի իմաստուն քննողաց, այսքան խաւարին ատելութիւն ի մէջ երկուց ազգացս»²¹: Ներսես Շնորհալին, որ տարբեր եկեղեցիների և ժողովուրդների համերաշխութեան գաղափարախոսներից է, բյուզանդական ուղղափառութիւնն ընդունած հայերին նույնացնում է պատերազմի ժամանակ հակառակորդի կողմն անցած դավաճանների հետ: Առ Պողոս քահանա Հայկազն նամակում իր թղթակցին պարսավելով երկաբնակութիւն ընդունելու և Հայոց եկեղեցուն ամեն տեսակ մեղադրանքներ ներկայացնելու մեջ, Ներսես Շնորհալին գրում է. «...նմանող եղեք դուք՝ որպէս ինձ թուի... որպէս թէ երկուց հարազատաց խռովութեամբ պատերազմելով ընդ միմեանս. և եթէ ոք ի զօրսն ի խռովութեանն ժամանակ հատուածեալ յիւրոցն առ օտարն անցանիցէ, ի լինել խաղաղութեանն նախատանս յամենեցուն կրէ դրժողս տերանց...»²²:

Հետևելով բյուզանդական եկեղեցու մարտավարութեանը, որով վերջինս հրաժարվում էր Հայոց եկեղեցին եվտիքեական կոչել, Ներսես Շնորհալին և նրա հետևորդներն էլ նահանջում էին մինչ այդ Հայոց եկեղեցու որդեգրած պնդումից, ըստ որի օրթոդոքս-բյուզանդական հոգևորականութիւնը նեստորականութիւն է քարոզում:

²¹ Ներսէս Շնորհալի, ԹԸ, էջ 207:

²² Անդ, էջ 208:

Ներսես Շնորհալին և նրա հետևորդները կենտրոնացնում են իրենց ուժերը՝ հաշտեցնելու համար միմյանց հարևանությամբ ապրող քրիստոնյա տարբեր եկեղեցիների ներկայացուցիչներին: Ներսես Լամբրոնացին հենց այդ մասին է գրում. «Ընդէ՞ր այսչափ զայլս խոտեալ՝ խորշիմք և խուսափեմք ի միմեանց քրիստոնեայքս, որ այլ ազգաց վիճակեցաք կենակիցս»²³: Ըստ Տարսոնի արքեպիսկոպոսի, քրիստոնյա երկու եկեղեցիների միջև խմորված հակակրանքն այնտեղ է հասել, որ. «Հայն միշտ աղաղակէ. Աստուած իմ, գոհանամ զքեն, որ շարարէր զիս հոռոմ. և հոռոմն զնոյն բանն երկրորդէ, թէ՛ որ ո՛չ արարեր զիս հայ»²⁴: Այս մթնոլորտը առկա է նաև «Թագակիրների պատմությունն գովասանք» աշխատության հեղինակի ներկայացրած ժողովում²⁵: Դավանական հանդուրժողականության քաղաքականությունը, որը որդեգրել էին Հռոմիլյայի կաթողիկոսարանը և Ռուբինյան իշխանությունը, հետզհետե խոր արմատներ էր ձգում Կիլիկիայում և մերձակա հայաբնակ շրջաններում: Սակայն պետք է նկատել, որ Հայոց պաշտոնական եկեղեցու դիրքը որքան լոյալ էր երկաբնակ-քաղկեդոնականների (հույներ, վրացիներ և լատիններ) նկատմամբ, նույնքան էլ մերժողական էր երկաբնակություն ընդունած և հիշատակված եկեղեցիներին ապաստանած հայերի նկատմամբ:

Այդ հանդուրժողականության ընդգծված դրսևորումն էր Հայոց եկեղեցու պահվածքը Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայում գործող հակոբիկ-ասորական, օրթոդոքս-բյուզանդական և կաթոլիկ-հռոմեական եկեղեցիների նկատմամբ: Այդ մասին են վկայում Ներսես Դ Շնորհալու, Գրիգոր Դ Տղայի և Ներսես Լամբրոնացու աշխատություններն ու թղթերը: Տարբեր եկեղեցիների ծիսադավանական տարբերությունները համադրելով դարեր շարունակ իրարից անկախ ապրած ժողովուրդների պատմամշակութային ավանդներից արտածված սովորություններ, Հայոց կաթողիկոսարանը, ի տարբերություն հարևան եկեղեցիների, դրանց վերացման հարցը կտրուկ չէր դնում և կոչ էր անում մեղմացնել միմյանց նկատմամբ դրսևորվող անհանդուրժողական վերաբերմունքը: Հայ մատենագրության մեջ այս գաղափարախոսության հետագա շարունակողները դարձան Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին, որոնք իրենց

²³ Տե՛ս «Տեառն Ներսէսի Լամբրոնացոյ Տարսոնի եպիսկոպոսի Ատենաբանութիւն եւ թողթք եւ ճառք», Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ նամականի [Ընտիր Մատենագիրք. Գրիգոր կաթողիկոս Տղայ, Ներսէս Լամբրոնացի] (Վենետիկ, Ս. Ղազար, 1865), էջ 195:

²⁴ Անդ. էջ 196:

²⁵ Տե՛ս Խ. Թորոսյան, «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» որպէս Զաքարյան Հայաստանի ու Զաքարյանների պատմության սկզբնաղբյուր, բնագրի թարգմանությամբ ու մեկնաբանություններով հանդերձ (Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1992), էջ 419–429:

աշխատություններում հաշտության կոչ էին անում կողք-կողքի ապրող տարբեր եկեղեցիների ներկայացուցիչներին²⁶:

Գ 2. ԺԲ դարի հայ-բյուզանդական վավերագրերի հայերեն ժողովածուն և նրա կազմողը.

Հայ-բյուզանդական եկեղեցական փոխհարաբերություններին վերաբերող ժողովածուներ կազմվել են սկսած Ե դարի առաջին կեսից, սակայն դրանց մեջ իր ծավալով, միասնությամբ և շոշափած հարցերի շրջանակներով առանձնանում է ԺԲ դարի հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների ժողովածուն, ուր ամփոփված են 1165–1178 թթ. երկու եկեղեցիների միջև փոխանակված վավերագրերը:

Այդ ժողովածույի կազմողը ԺԲ դարի երկրորդ կեսի Մերձավոր Արևելքի և Հայոց եկեղեցու պատմության մեջ քաջ հայտնի եկեղեցաքաղաքական գործիչ Ներսես Լամբրոնացին է: Լինելով Կիլիկիայում իր հզորությամբ երկրորդ՝ Լամբրոնի Օշինյան ազնվականական տան զավակը և Հռոմկլայի Ամենայն Հայոց կաթողիկոսների ազգականը, նա մի շարք նշանավոր պատմական իրադարձությունների գործող անձն է: Մասնակցել է Հռոմկլայի եկեղեցական ժողովին, Լևոն Բ Ռուբինյան իշխանի հանձնարարությամբ ուղարկվել է դիմավորելու Ֆրիդրիխ Շիկամորուսի (Բարբարոսա) Արևմտահռոմեական կամ Գերմանական կայսեր գլխավորած խաչակրաց բանակներին, պաշտոնական դեսպանագնացությամբ այցելել է Կոստանդնուպոլիս²⁷: Ներսես Լամբրոնացին նաև բազմաբեղուն մատենագիր է. մի շարք մեկնությունների, ներբողյանների, տաղերի, ճառերի, թղթերի հեղինակ և հունարենից, լատիներենից ու ասորերենից կատարված բազմաթիվ թարգմանությունների խմբագիր և համաթարգմանիչ²⁸: Նրա մատենագրական վաստակի մեջ ուրույն տեղ ունի

²⁶ Տե՛ս **Յ. Անասեան**, Մանր երկեր, էջ 216–220; **Պ. Մուրադյան**, ԺԱ–ԺԳ դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «առ վրացիսն» թուղթը (Ս. էջմիածին, 2011), էջ 171–190:

²⁷ Ներսես Լամբրոնացու եկեղեցաքաղաքական գործունեության մասին ամենաընդգրկուն պատմաաղբյուրագիտական աշխատանքը տե՛ս **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի, էջ 29–56 և հմմտ. **Գր. Հակոբյան**, Ներսես Լամբրոնացի (Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1971), էջ 67–84; **Սմբատ Էպսկ. Սաատէթեան**, Ներսէս Լամբրոնացի, աշխատասիրութիւն պատմական, մատենագրական եւ վարդապետական (Անթիլիաս, 1981); **I. Augé**, *Église en dialogue: Arméniens et Byzantins dans la seconde moitié du XIIe siècle* (Lovanii: Peeters, 2011), p. 39–43:

²⁸ Տե՛ս **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի, էջ 131 և հտև., հմմտ. **L. Zekian**, “Nersès de Lambron”, p. 123–134; **Ա. Բողոյան**, «Այլագգի թարգմանիչները հայ մատենագրության մեջ», Լևոն Խաչիկյան 90: Նյութեր Մատենագրարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին

«Պատճառ ինդրոյ միաբանութեան. թագաւորին Հոռոմոց էմանուէլի եւ սրբոց կաթողիկոսացն Հայոց Ներսիսի եւ Գրիգորիսի թուղթքն, զոր գրեցին առ միմեանս» վավերագրերի ժողովածուն (կամ ինչպէս արդէն կրճատ անվանել ենք՝ ՊԽՄ): Այդ երկի մեջ տեղ են գտել 1165–1178 թթ. եկեղեցիների միութեան հայ-բյուզանդական բանակցութեաններին վերաբերող վավերագրերի²⁹ մեծագույն մասը: ԺԲ դարի վերջում ևս Բյուզանդական կայսրության հետ փոխանակվել են վավերագրեր, որոնցից մեզ են հասել միայն երկուսը³⁰: Այդ բանակցութեանների վերջին փուլի մասնակիցն ու նախաձեռնողներից մեկն էլ Ներսես Լամբրոնացին էր, որը 1197 թ. Լևոն Ա արքայի թագադրման նախօրյակին, ուղևորվեց Կ. Պոլիս, բանակցելու Բյուզանդիայի այդ ժամանակվա պատրիարք Գեորգ Բ Քսեֆրիլինոսի հետ³¹:

ՊԽՄ ժողովածուի կազմողը Հայոց եկեղեցու Կիլիկիայում գտնվող կարևորագույն եկեղեցական թեմերից մեկի՝ Տարսոն «վերադիտակ մայրաքաղաքի» արքեպիսկոպոսն է³²: Ըստ հնագույն քրիստոնեական ավանդույթի, այդ քաղաքն համարվում էր Պողոս առաքյալի հայրենի քաղաքը³³: Քաղաք, որ երկար ժամանակ Կիլիկիայի բյուզանդական կառավարիչների նստավայրն էր³⁴

նվիրված միջազգային գիտաժողովի (9–10 հոկտեմբերի 2008 թ.) (Երևան, «Նաիրի», 2010), էջ 278–280:

²⁹ Այս վավերագրերի ժողովածուին նվիրված ուսումնասիրություններից կարևորներն են. **Aram I** Catholicos of Cilicia, *Saint Nersēs the Gracious and Church Unity. Armeno-Greek Church Relations (1165–1173)* (Anthilias-Lebanon 2010) (այս գրքի մասին տե՛ս իմ գրախոսությունը՝ «էջմիածին» (2014), թ, էջ 138–145); Bishop **Aram Keshishian**, “The problem of Church Unity in twelfth century. The correspondence of Nerses Shnorhali with Manuel Comnenus (1165–1173)”, ՀՀՏ, նոր շրջան, Ա տարի (Անթիլիաս, 1980), էջ 91–106; **Լ. Ջէքիեան**, Համամիութենական տրամախօսութիւն, ինչպէս նաև **Ա. Բողոյան**, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցութեանների վավերագրերը և **I. Augé**, *Église en dialogue*:

³⁰ Այդ մասին մանրամասն տե՛ս **Հ. Բարթիկյան**, «Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին», ԲՄ 4 (Երևան, 1958), էջ 285–290; **Р.М. Бартикян**, “К истории взаимоотношений между Византией и Киликийским Армянским государством в конце XII в.”, ВВ, т. XVII (1960), с. 53–56; **А. Бозоян**, “Новый памятник армяно-византийских церковно-политических и дипломатических сношений второй половины XII века”, *Кавказ и Византия*, вып. 4 (Ереван: 1984), с. 224–230:

³¹ Այդ մասին մանրամասն տե՛ս **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի, էջ 49–52; **I. Augé**, *Église en dialogue*:

³² Տե՛ս **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի, էջ 22: Քրիստոնեական եկեղեցու հնագույն կենտրոն Տարսոնի մասին տե՛ս **Fr. Hild & H. Hellenkemper**, *Kilikien und Isaurien*, S. 428–439:

³³ Այդ հանգամանքը բազմիցս շեշտվում է նաև Ներսես Լամբրոնացու երկերում: Օրինակ. ներքոբերյալ հատվածում Լամբրոնացին Լևոն Բ իշխանին ակնարկում է, որ Անտիոքի հույներն ու լատինները իրեն դիտում են որպէս Պողոս առաքյալի աթոռի ժառանգորդ. «...Պաղոսի անուամբն զմեր նուաստութիւնս բարեհամբաւեն, և նորին աթոռոյն արժանապատիւ լինել յաջորդ վկայեն...»: Տե՛ս **Ներսէս Լամբրոնացի**, *Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ*, էջ 230–231:

³⁴ **Ա. Բողոյան**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 202:

և Կոմնենոս կայսրերի տիեզերական քաղաքականության հենակետը՝ ԺԱ-ԺԲ դարերի ընթացքում Փոքր Ասիայում և Մերձավոր Արևելքի տարածաշրջանում:

Տարսոնը ԺԲ դարի 70–90-ական թթ. հիմնականում հայաբնակ քաղաք էր, սակայն այնտեղ բնակվում էին նաև Անտիոքի պատրիարքությանը հպատակ քաղկեդոնական հայեր ու հույներ, կաթոլիկ լատիններ և հակոբիկ ասորիներ³⁵: Հավանաբար քաղաքում և մերձակա բնակավայրերի ազգաբնակչության մեջ փոքր թիվ չէին կազմում նաև հրեաները, մուսուլման արաբներն ու թյուրքերը³⁶: Բազմազգ բնակչությունը բնորոշ էր նաև այդ տարածաշրջանի՝ Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի³⁷, հայաբնակ մյուս շրջաններին և իր ուրույն դերն է խաղացել ինչպես Ներսես Լամբրոնացու, այնպես էլ Հռոմկլայի կաթողիկոսարանի և Ռուբինյան իշխանության եկեղեցաքաղաքական և դավանական գործունեության ձևավորման ասպարեզում³⁸:

Հայոց եկեղեցու ներսում, Հյուսիսային Հայաստանում և հատկապես Հաղբատ-Սանահինում ձևավորված ընդդիմությունը ևս մասամբ գոյանում էր այս հողի վրա. հիմնականում միատարր հայկական ազգաբնակչություն ունեցող Հյուսիս-արևելյան Հայաստանի տարածքում գործող եկեղեցիները, գտնվելով վրացական պետության իշխանության ներքո, փորձում էին հակադրվել Վրաստանի սահմաններում սկսված ազգային և եկեղեցական համահարթեցման պետական քաղաքականությանը և այդ հողի վրա հակադրվում էին Կիլիկիայում սկիզբ առած ամեն տեսակ եկեղեցական կամ ծիսական բարեփոխման, երկյուղելով, որ դա կարող է առիթ դառնալ օրթոդոքս վրաց եկեղեցուն դավանական զիջում կատարելուն: Հյուսիս-արևելյան Հայաստանի կեցվածքը բխում էր տարածաշրջանում Հայոց դավանական ու մշակութային ինքնությունը պահպանելու շահերից: Դրա լավագույն փաստարկը ԺԲ-ԺԴ դարերում

³⁵ Ներսես Լամբրոնացին հաճախ է հիշատակում իր գլխավորած թեմում Օրթոդոքս-հույների (հելլենացի), կաթոլիկ-եվրոպացիների (լատիններ) և հակոբիկ ասորիների առկայությունը: Տե՛ս **Ներսէս Լամբրոնացի**, Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ, էջ 220: Հմմտ նաև **Fr. Hild & H. Hellenkemper**, *Kilikien und Isaurien*, S. 433:

³⁶ Կիլիկիայում հիշատակված բազմազգ բնակչության առկայության մասին տե՛ս **Անդ**, S. 102–103:

³⁷ **Անդ**, S. 454–467:

³⁸ Այս մասին ամենաընդհանուր գծերով, տե՛ս **Ա. Բողոյան**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 12–18, 164–190:

Հյուսիս-արևելյան Հայաստանի հոգևոր դպրոցներից մեզ հասած բազմաթիվ մշակութային և մատենագրական արժեքներն են³⁹:

Հայոց եկեղեցու կյանքում չափազանց կարևոր նշանակություն ունեցող հայ-բյուզանդական բանակցությունների վավերագրերի ժողովածուի ստեղծումը սովորական խնդիր չէր: Նրա հեղինակը պետք է ելք ու մուտք ունենար կաթողիկոսական դիվան, ուր պահպանվում էին բազմաբնույթ վավերագրեր, որոնցից օգտվելը ոչ միայն լեզուների, այլ նաև մասնագիտական հատուկ պատրաստություն էր պահանջում: Ժողովածուի կազմման հիմնական նպատակը վավերագրերը հասու դարձնելն էր հայ հասարակության բոլոր շերտերին: Ու քանի որ նման ժողովածուն պետք է շրջանառության մեջ մտներ Հայոց եկեղեցու բոլոր թեմերում, կազմողը նպատակ էր հետապնդում ստեղծել գաղափարախոսական պայքարում օգտագործելի և ժամանակի պահանջները բավարարող մի դավանական ժողովածու, քանի որ դիտավորություն ուներ միասնականացնել Հայոց եկեղեցու դիրքը Բյուզանդական (կամ օրթոդոքս) եկեղեցու և դավանանքի հարձակումների դեմահանդիման: Պատահական չէ նաև այն փաստը, որ վավերագրերի այդ ժողովածուի կազմման հովանավորողը և հորդորողը սերում էր բյուզանդամետ նկրտումներ ունեցող Կիլիկիայի իշխանական տնից:

ՊեՄ վավերագրերի ժողովածուն կազմված է Ներսես Լամբրոնացու եղբայր, Լամբրոնի իշխան Հեթումի պատվերով⁴⁰: Այդ է վկայում հայագետների ուշադրությունը դեռևս ԺԹ դարում գրաված Ներսես Լամբրոնացու կազմած ՊեՄ վավերագրերի հավաքածուի հիշատակարանը⁴¹, ուր հեղինակը մեզ հետաքրքրող երկի մասին գրում է. «Այսմ ականատես և ականջալուր եղաք նուսստս հոմանուն նորին տեառն Ներսէսի հայրապետի, ըստ փափագման քո

³⁹ Մատենագրական այդ դպրոցի մշակութային ժառանգությանն է նվիրված **Լ. Մելիքսեթ-Քեկ**, «Վարդապետը Հայոց Հիւսիսային կողմանց» և նրանց ինքնությունը. հայ-վրացական հարաբերություններ (պատմագրական հետազոտության փորձ), վրացերենից թարգմանեց Հր. Բայրամյանը (Էջմիածին, 2016) վրացերեն գրված և հայերեն թարգմանված մենագրությունը:

⁴⁰ Այս գործի մասին հանգամանորեն տե՛ս **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի, էջ 116–130: Հեթում Օշինյանի գործունեության շրջադարձային իրադարձություններից է նաև այն փաստը, որ հետագայում՝ ԺԳ դարի սկզբին, երբ Լեոն Ա թագավորը ստիպել էր նրան հրաժարվել Լամբրոնի իշխանի պարտականություններից, նա ընդունում է կուսակրոնություն և իբրև Դրագարկի վանահայր վանք մտնում, Հեթում անունը փոխելով Հեղիի (տե՛ս **Անդ**, էջ 123): Ա. Մաթևոսյանը վրիպել և չի ընդգրկել այս հիշատակարանը իր կազմած հիշատակարանների հատորում, տե՛ս **ՀԶԶ, Ծ-ԺԹ դդ.**, աշխատասիրությունը Ա.Ս. Մաթևոսյանի (Երևան, 1988):

⁴¹ Այս հիշատակարանը ժամանակին հրատարակել է Գ. Ղ. Ալիշանը: Տե՛ս **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 426–427: Այնուհետև այն տպագրվել է ևս երկու անգամ: Տե՛ս **Գ. Յովսէփեան**, Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա (Ն դարից մինչև 1250 թ.) (Անթիլիաս, 1951), էջ 622; **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի, էջ 210:

(ընդգծումն իմն է՝ Ա.Բ.) իշխան բարեպաշտ. եւ հարազատ եղբայր իմ Հեթում, շարագրեցի համառուտաբար զՊատճառ նամակացն հանդերձ թղթովքն»⁴²:

Վերոբերյալ վկայությունից տեղեկանում ենք, որ վավերագրերի հավաքածուն ստեղծող Ներսես Լամբրոնացին հեղինակն է 1165–1178 թթ. հայ-բյուզանդական բանակցությունների յուրաքանչյուր փուլին հաջորդող լրացուցիչ «պատճառ»-տեղեկությունների, ժողովածոն ամբողջացնող առաջաբանի և վերջաբանի⁴³:

Վավերագրերի միջնադարյան այս ժողովածույում զետեղված են Հայոց կաթողիկոսներ Գրիգոր Գ Պահլավունու (1110⁴⁴–1166), Ներսես Դ Շնորհալու (1166–1173), Գրիգոր Դ Տղայի (1173–1193), Բյուզանդիայի կայսր Մանուել Ա Կոմնենոսի (1143–1180) և Կոստանդնուպոլսի պատրիարք Միքայել Գ Անքիալուսի (1170–1178) միջև փոխանակված նամակների բնագրերը:

ՊԽՄ ժողովածուն պարունակում է 1165–1178 թթ. գրված 17 վավերագիր, որոնցից տասնմեկը վերոհիշյալ Հայոց կաթողիկոսների⁴⁵ դավանական թղթերն են և պաշտոնական գրագրությունները բյուզանդական կայսեր և պատրիարքի հետ, չորսը՝ Մանուել Ա Կոմնենոսի, երկուսը՝ Միքայել Գ Անքիալուսի թղթակցություններն են ուղղված Հռոմկլայի հայրապետներին: ՊԽՄ-ում թղթերը բերված են ըստ ժամանակագրական խիստ հերթականության. երբեմն՝ Ներսես Լամբրոնացին տալիս է այս կամ այն թղթի գրավման հանգամանքներին կամ թվականին վերաբերող ծանոթագրություններ՝ «պատճառներ», որոնց մասին Հեթումին գրած հիշատակարան-թղթում ասվում է. «շարագրեցի համառուտաբար զՊատճառ նամակացն հանդերձ թղթովքն»⁴⁶:

Այդ վավերագրերն ինքնին, Հայոց եկեղեցու ուղղափառ դավանանքի հավաստման վկայագրեր են, իսկ ժողովածույում քննարկված՝ պատմությանը, ծեսին ու քրիստոնեական վարդապետությանը վերաբերող վկայությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս որոշել Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում հաստատված հայկական իշխանությունների ու Հռոմկլայի կաթողի-

⁴² Տե՛ս Անդ, էջ 218:

⁴³ Այդ հատվածներն **Ներսէս Շնորհալի**, ԹԼ, էջ 85–201-ում հրապարակված են այլ տառատեսակով:

⁴⁴ ՊԽՄ ժողովածուի բնագրում (**Անդ**, էջ 861) Ներսես Լամբրոնացին Գրիգոր Գ Պահլավունու գահակալման թվական է համարում «Հայոց հինգ հարիւր յիսուն եւ ինն»-ը, որը համապատասխանում է 1110 թ. փետրվարի 22–1111 թ. փետրվարի 21 ժամանակահատվածին:

⁴⁵ Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի անունով ժողովածու մուծված միակ վավերագրի հեղինակը, ըստ այդ թղթի վերնագրի, Ներսես Շնորհալին է: «Գրեալ ի Ներսիսէ արքեպիսկոպոսէ յեղբորէ տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց»: Տե՛ս Անդ, էջ 87:

⁴⁶ Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 218:

կիրոսարանի փոխհարաբերությունների բնույթը, Բյուզանդական կայսրության և Կոստանդնուպոլսի պատրիարքության վերաբերմունքը Մերձավոր Արևելքում տեղի ունեցող եկեղեցական և քաղաքական իրադարձությունների նկատմամբ⁴⁷:

Ինչպես արդեն նկատել ենք, ժողովածու չեն մտել մի շարք վավերագրեր, որոնք անկասկած լրացնում և անպայմանորեն վերաբերում են փաստաթղթերի այս խմբին⁴⁸: Կարծում ենք, Ներսես Լամբրոնացին ՊԽՄ-ի բնագիր չի մուծել այդ փաստաթղթերը (№ 1, 9, 10, 11, 17, 18, 20⁴⁹), հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

ա/ Այդ վավերագրերի մի մասում շարադրված տեսակետներն արդեն արձանագրված են ՊԽՄ-ում տեղ գտած գրություններում⁵⁰:

բ/ Վավերագրերի մի մասը գաղտնի է եղել և անպատեհ է եղել դրանց հրապարակումը կամ Բյուզանդական կայսրության, կամ էլ Հռոմկլայի կաթողիկոսության գնահատմամբ⁵¹:

գ/ Մի շարք վավերագրեր էլ կամ հաստատված չեն եղել կաթողիկոսների կամ հոգևորականների ժողովների կողմից, կամ էլ ունենալով ծրագրային բնույթ, գրված են եղել Հռոմկլայի նոտարատանը պահվելու նպատակով և չեն առաքվել Կոստանդնուպոլիս⁵²:

Ինչ խոսք, Ներսես Լամբրոնացին ժողովածուն չի ներառել նաև Հայոց կաթողիկոսների նամակագրությունը Հյուսիս-արևելյան Հայաստանի (Արցախ, Հաղբատ, Սանահին) վարդապետների և ասորիների հակոբիկ եկեղեցու պատրիարքարանի հետ⁵³ (փաստաթղթեր, որոնք անմիջականորեն առնչվում

⁴⁷ Հիշատակված հարցերը հնարավորին չափով մանրամասն քննարկված են մեր «Բյուզանդական իրադարձությունները...» մենագրության մեջ:

⁴⁸ Ա. Բողոջյան, «Գրիգոր Գ Փոքր Վկայասերին վերագրված մի թղթի մասին», ԼՀԳ 3 (1978), էջ 98:

⁴⁹ Վավերագրերի թվահամարներն ըստ Ա. Բողոջյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 29–90:

⁵⁰ Ա. Բողոջյան, «Գրիգոր Գ Փոքր Վկայասերին վերագրված մի թղթի մասին», էջ 97:

⁵¹ Զորորինակ. Մանուել Ա Կոմնենոսի կամ Ներսես Դ Շնորհալու գաղտնի թղթերը (№ 9, 11), որոնց մասին տես Ա. Բողոջյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 54–56, 57–59:

⁵² Օրինակ. բյուզանդական կողմի պահանջած ինն ծիսադավանաբանական կետերի պատասխանները, Ներսես Ներսես Լամբրոնացու Ատենաբանությունը և Հռոմկլայի ժողովի նախօրյակին Ներսես Լամբրոնացու և նրա գաղափարակիցների կողմից գրված մյուս երկերը (տես ստորև՝ Հռոմկլայի ժողովի վավերագրերին նվիրված հատվածը):

⁵³ Գրիգոր Գ Տղայի և Հյուսիսային Հայաստանի վարդապետների փոխանակած թղթերը մեզ են հասել առանձին ձեռագրերում և ժողովածու չեն կազմել: Տես Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, աշխատասիրութեամբ Ա.Շ. Մնացականյանի (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1977):

են հայ-բյուզանդական բանակցութիւններին)⁵⁴: Հետագայում՝ արդեն ժԳ դարում, Ներսես Դ Շնորհալու և Գրիգոր Դ Տղայի թղթերի մեծագույն մասը ՊԽՄ ժողովածոյի հետ միասին հավաքվել են մեկ ձեռագրի մեջ և ավանդվել սերնդե-սերունդ⁵⁵: Այդ ավանդույթը շարունակվում էր նաև ժԹ դարում՝ անցնելով գրեթե բոլոր հրատարակութիւններին⁵⁶:

Հայ բանասիրութեան շուրջված խնդիրներից է եղել Ներսես Լամբրոնացու ՊԽՄ ժողովածուի կազմման թվականի ճշտումը: ՊԽՄ վավերագրերի ժողովածուի ստեղծման տարեթիվը ժամանակին փորձել է որոշել Գ. Ներսես Ակինեանը: Նկատի ունենալով Փարիզի ազգային գրադարանի № 179 (տե՛ս Պատկեր 1) և Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) № 2496 հնագույն ձեռագրում պահպանված Ներսես Լամբրոնացու վերոհիշյալ հիշատակարանը, բազմավաստակ հայագետը գրում է. «կից յիշատակարանս, որ թէև թուական չի կրէր, բայց կը վերջանայ Մանուէլ Կայսէր մահուան յիշատակութեամբ, որ տեղի ունեցաւ 1180 սեպտ. 24: Ուստի գրութեան տարին ալ նկատելու է այս տարին»⁵⁷: Հավանաբար Ներսես Ակինեանը նկատի է ունեցել ոչ թէ նշված հիշատակարանը, ուր նման վկայութիւն չկա, այլ ՊԽՄ-ի վերջաբանի՝ «Խսկ երանելիս հանգուցեալ ... յաւիտեանս. ամէն» հատվածը⁵⁸, ուր իսկապես հիշատակվում է Մանուէլ Ա Կոմնենոս կայսեր մահվան լուրը:

ՊԽՄ ժողովածոյի վերջաբանում Ներսես Լամբրոնացին նաև ճշգրիտ թվագրում է Մանուէլ Ա Կոմնենոսի մահվան լուրը Հռոմկլա հասնելու ամսաթիվը. «լուաք զվախճան բարեպաշտ աստուածասէր եւ իմաստուն արքային Հռոմոց յամսեանն սեպտեմբերի քսան եւ եւթն, եւ ի թուականիս Հայոց վեց հարիւր եւ քսան եւ ինն (=1180 թ. սեպտեմբերի 27)»⁵⁹: Ներսես Լամբրոնացին

տ., 1972), էջ 50–52: Հակոբիկ ասորիների հետ փոխանակած վավերագրերից մեկը պահպանվում է Ներսես Դ Շնորհալու առանձին վավերագրերի ժողովածոյում (**Ներսէս Շնորհալի**, ԹԸ, էջ 205–206), իսկ մի քանիսի մասին էլ ակնարկում է Միքայել Ասորին (**M.S.**, t. III, p. 335–336): Ասորի հակոբիկյանների և Հայոց եկեղեցու այս դարաշրջանի փոխհարաբերութիւնների մասին տե՛ս **Ե. Տէր-Մինասեանց**, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները, էջ 271–283:

⁵⁴ Այս հանգամանքը ժամանակին նկատել է Ներսես Ակինեանը: Տե՛ս **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի, էջ 220:

⁵⁵ Ներսես Շնորհալու և Գրիգոր Տղայի նամակների նման ժողովածոյի կազմումը Գ. Ն. Ակինեանը թվագրում է ժԴ դարի սկզբով և վերագրում Թոմաս Հռոմկլայեցուն (**Անդ**, էջ 220):

⁵⁶ Տե՛ս Շնորհալու նամակների (**Ներսէս Շնորհալի**, ԹԸ) 1788, 1825, 1865 և 1871 թվականների հրատարակութիւնները:

⁵⁷ **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի, էջ 219:

⁵⁸ **Ներսէս Շնորհալի**, ԹԸ, էջ 201:

⁵⁹ Տե՛ս **Անդ**, էջ 200: Բյուզանդագիտութեան մեջ Մանուէլ Ա Կոմնենոսի մահվան ամսաթիվ է դիտվում 1180 թ. սեպտեմբերի 24-ը: Տե՛ս **V. Grumel**, *La Chronologie*, p. 358: Միջնադարում հաղորդակցութեան ճանապարհների և լուրերի տարածման ուսումնասիրութեան տեսանկյուն

գիտե նաև Կոստանդնուպոլսում դեպքերի հետագա զարգացման ընթացքի մասին. «եւ ապա՝ զի որդի նորին (սկզբնաղբյուրը նկատի ունի Մանուել Ա Կոմնենոսի որդի Ալեքս Բ Կոմնենոսին – Ա.Բ.) մանուկ տիաւք յաջորդեալ զաթոռն, ոչ կարաց խաղաղութիւն նուաճել զընտանիսն, այլ ցարդ եւս ունի զթագաւորական քաղաքն ամբոխ խռովութեան յիշխանացն եւ յընտանեացն, որք յակառակ նմին յառնէն. յորոց միջի ոչ սակաւ հեղմունք արեանց լինին եւ ամենայն բարեկարգութեանց լուծումն»⁶⁰:

Այս հատվածից ակնհայտ է, որ ժողովածուն կյանքի կոշող Ներսես Լամբրոնացին քաջատեղյակ է Կոստանդնուպոլսում 1180–1183 թթ. տեղի ունեցած ողբերգական իրադարձություններին. Մանուել Ա Կոմնենոսից հետո՝ Ալեքս Բ Կոմնենոսի (1180–1183) գահակալմանը, Մանուել Ա-ի դստեր և փեսայի խռովությանը, Անդրոնիկոս Ա Կոմնենոսի խարդավանքներին (մանկահասակ կայսեր խնամակալի՝ Ալեքս Բ-ի մոր սպանությանը, թագավորին փրկելու խոստումներով Անդրոնիկոսի մուտքին Կոստանդնուպոլիս և Ալեքս Բ-ին գահակից-խնամակալ հռչակմանը)⁶¹: Պես-ի վերջաբանի հեղինակը վկայում է նաև, որ Բյուզանդական կայսրության մայրաքաղաքում. «յերից ամաց սկսեալ՝ դեռ եւս ար ըստ արէ աճէ խռովութիւնն, եւ ի կարծիս ձգի ամենայն միտք առ ի հաստատելոյ վերստին թագաւորական աթոռոյն»⁶²: Վերոհիշյալ իրադարձություններին վերաբերող՝ Ներսես Լամբրոնացու ակնարկները և Ալեքս Բ Կոմնենոսի սպանության և նրա հարազատ՝ Անդրոնիկոս Կոմնենոսի (1183-1185) միահեծան գահակալման իրադարձությունների մասին պահպանած լուրերը և, հիշատակությունն այն մասին, որ Մանուել Ա Կոմնենոսի մահվանից հետո Բյուզանդական կայսրությունում սկսված խռովություններն արդեն երրորդ տարին է ինչ չեն դադարում. թույլ են տալիս մերժել Ներսես Ակինյանի կողմից Պես ժողովածուի ստեղծման վերոհիշյալ թվագրումը:

նից շափազանց արժեքավոր են Ներսես Լամբրոնացու այս վկայությունները, ըստ որոնց սեպտեմբերի 24-ին մահացած կայսեր մահվան լուրը Հռոմկլա (գուցե և Կիլիկյան Հայաստանը նկատի ունի մեր հեղինակը) է հասել սեպտեմբերի 27-ին, այսինքն՝ դեպքից երեք օր հետո, ինչն էլ կարծում եմ բավական լավ ցուցանիշ է տեղեկատվության փոխանցման համար միջնադարում:

⁶⁰ Ներսէս Շնորհալի, ԹԲ, էջ 201:

⁶¹ Այս իրադարձությունների մասին մանրամասն տե՛ս **A.A. Vasilev**, *History of the Byzantine Empire. 324–1453*, vol. II, *Madison and Milwaukee* (Madison: The University of Wisconsin Press, 1964), pp. 433 և հտև.: Իսկ թվագրության հետ կապված խնդիրների պարզաբանումը տե՛ս **P. Schreiner**, *Die byzantinischen Kleinchroniken, 2 Teil: Historischer Kommentar* (Wien: Österr. Akad. D. Wiss, 1977), S. 176:

⁶² Ներսէս Շնորհալի, ԹԲ, էջ 201:

Ելնելով ՊԽՄ-ում պահպանված վկայություններից, ժողովածոյի կազմումը պետք է թվագրել 1182 թ. սեպտեմբերի 24–1183 թ. սեպտեմբեր ժամանակահատվածով: Թվագրման սկիզբ ենք համարում 1182 թ. սեպտեմբերի 24-ը, որովհետև այդ թվականին է սկսվում Ալեքս Բ-ի միանձնյա թագավորության երրորդ տարին⁶³, իր հոր՝ Մանուել Ա Կոմնենոսի մահվանից հետո⁶⁴: Ինչպես ցույց տվեցինք վերևում, Ներսես Լամբրոնացին կայսրության մայրաքաղաքում տեղի ունեցող ներքաղաքական պայքարի սկիզբը թվագրում է իր կողմից ՊԽՄ ժողովածուն կազմելուց երեք տարի առաջ («յերից ամաց սկսեալ»): Այդ իսկ պատճառով, ժողովածուն գրելու վերջին սահման ենք համարում 1183 թ. սեպտեմբերը, քանի որ Ներսես Լամբրոնացին դեռ չգիտէ Ալեքս Բ Կոմնենոսի սպանության և Անդրոնիկոս Ա Կոմնենոսի միահեծան գահակալման լուրը⁶⁵:

ՊԽՄ ժողովածոյի հետ կապված աղբյուրագիտական հարցերը քննարկելիս կարևոր նշանակություն ունի նրա պատմողի պատմագիտական հայացքի և գիրքորոշման բացահայտումը: Ինչպես արդեն նշվեց, ժողովածոյի ստեղծման համար առիթ է ծառայել Հեթում Լամբրոնացու խնդրանքը, սակայն Ներսես Լամբրոնացին բնագրի առաջաբանում իսկ ՊԽՄ-ն հասցեագրել է հետագա սերունդներին. «Յայտ առնելով, զի թէպէտ եւ հասարակական վախճանան փոխի յաստեացս, սակայն արձան մշտնջենաւոր ինքեան թողլու յերկրի զարժանի յիշատակի գործս, որով եւ յազգս ազգաց անյապաղ գովասանական երգով պատուի»⁶⁶: Տարսոնի արքեպիսկոպոսը քաջ գիտակցել է ժողովածոյի մեջ ընտրված վավերագրերի արժեքը և պատմության գիրկն անցած արարքներն ու քաղաքական իրադարձություններն ականատեսի կողմից սերունդների դատին հանձնելու անհրաժեշտությունը. «Չայս տեսեալ մեր՝ ի նուաղեալս ժամանակի Հայաստանեայց եկեղեցւոյ առաջնորդս, ոչ յապաղեմք առ յապա թողուլ զյիշատակ անուանն նոցա պարագրութեամբ բանի ի հանդիպեալ ժողովուրդս՝ որք զկնի լինիցին, զի եւ զսոցայս ախորժելի կարծեմ պատմութիւն քան զնախ եղելոց համապատիւ նոցա սրբոց»⁶⁷: Ուրեմն՝ արդեն վավերագրերի ժողովածոյի առաջաբանում Ներսես Լամբրոնացին հայտնում

⁶³ Նկատի ունեմ ՊԽՄ-ի վերջաբանի հետևյալ հատվածը. «յերից ամաց սկսեալ»: Տե՛ս Անդ:

⁶⁴ Ալեքս Բ Կոմնենոսը գահակալ է հռչակվել դեռևս իր հոր՝ Մանուել Ա Կոմնենոսի իշխանության տարիներին: Այդ մասին տե՛ս Ա. Բոզոյան, «Գրիգոր Գ Փոքր Վկայասերին վերագրված մի թղթի մասին», էջ 92–98; F. Chalandon, *Jean II Comnène*, p. 212; P. Schreiner, *Die byzantinischen Kleinchroniken*, Teil 2, S. 172–173:

⁶⁵ K. Βάρζος, *Ἡ γενεαλογία τῶν Κομνηνῶν*, том. В' (Θεσσαλονικί: 1984).

⁶⁶ Ներսէս Շնորհալի, ԹԸ, էջ 85:

⁶⁷ Անդ:

է, որ այն, ինչ ինքը մատուցելու է ընթերցողին, մեր այսօրվա պատկերացումներով պատմութունն է: Հեղինակի նպատակն է ցույց տալ հայ ժողովրդի եկեղեցաքաղաքական կյանքում Հայոց կաթողիկոսների բացառիկ դերը: Հեղինակը չի մոռանում նաև շեշտել, որ ինքն էլ այդ եկեղեցու բարձրաստիճան պաշտոնյաներից մեկն է⁶⁸: Այդ իսկ պատճառով, Ներսես Լամբրոնացին իր երկը սկսում է Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսին ուղղված ներբողանով, անուշադրուխտյան շնորհներով այն պարագան, որ նրա կաթողիկոսության ժամանակաշրջանը արթնացնող շունչ հաղորդեց Հայոց եկեղեցական և քաղաքական կյանքին, երկարատև ընդարմացումից հետո աշխուժացրեց հոգևոր դասին («Որպես եւ զկնի ամպոյ՝ արեգակն, և յետ ձմերայնոյն՝ գարնանային անուշադրուխտն, այսպէս եւ երանելի հայրս ի նուազեալ ժամանակս՝ յորժամ ձմեռն մեղաց տիրէր ի վերայ աշխարհի. եւ մէզ թշուառութեան պաշարէր զմեզ սրոյ եւ գերութեան, երեւցաւ ջահաւորեալ վարդապետութեամբ եւ լուսակրան վարուք, եւ փարատեաց յաշխարհէ զմրրիկ մեղացն, եւ վերստին կանաչացոյց զմեզ ի ձմերային մեռելութենէն յաճումն հոգևոր չափոյ հասակի կատարմանն Քրիստոսի»)⁶⁹: Տարսնի արքեպիսկոպոսը չի մոռանում հիշատակել նաև, որ խնկարկելի կաթողիկոսը Գրիգոր Լուսաւորչի տոհմից է («Ազգաւ Պահլաւիկ, ի ցեղէ սրբոյն Գրիգորի»)⁷⁰, և երրորդ կաթողիկոսն է նույն տոհմին պատկանող Գրիգոր Բ Վկայասերից հետո⁷¹:

Իրադարձութիւնները, որոնց անդրադարձել է Ներսես Լամբրոնացին, սկսվել են Գրիգոր Բ-ի ազգական և հոգևոր որդի Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի իշխանութիւն վերջին տարում և շարունակվել են վերջինիս հարազատ եղբոր՝ Ներսես Գ Շնորհալու (1166–1173), և ապա՝ նրանց եղբորորդի Գրիգոր Գ Տղայի (1173–1193) կաթողիկոսութիւն տարիներին: Վերջին երկու կաթողիկոսներն էլ ՊԽՄ ժողովածոյի գլխավոր հերոսներն են⁷², հայ-բյուզանդական բանակցութիւնների համերաշխութիւն ոգին:

⁶⁸ «...ի նուազեալս ժամանակի Հայաստանեայց եկեղեցոյ առաջնորդս» (տե՛ս **Անդ**):

⁶⁹ **Անդ**:

⁷⁰ **Անդ**: Ներսես Լամբրոնացին առաքելական է համարում Հայոց կաթողիկոսական աթոռը. «յաշորդ առաքելական աթոռոյ կաթողիկոսութեանս Հայոց» (տե՛ս **Անդ**): Պատմութիւն համար հետաքրքիր է հարցի նման գրվածքի նախապատմութիւնը, քանզի, ինչպես վերևում տեսանք, բյուզանդական կողմը փորձում էր միայն Գրիգոր Լուսավորչի անվան հետ կապել Հայոց եկեղեցու և կաթողիկոսական իշխանութիւն հիմնադրումը:

⁷¹ Գրիգոր Գ Պահլավունու գործունեութիւնը բնութագրելիս Ներսես Լամբրոնացին չի մոռանում հիշատակել, որ Ներսես Շնորհալու դաստիարակն է. «սնոյց զեղբայրն իւր վարժեալ ամենայն աստուածաշունչ տառիք» (տե՛ս **Անդ**, էջ 86):

⁷² ՊԽՄ-ում Ներսես Լամբրոնացու համար Գրիգոր Բ Վկայասերը «երանելի» (**Անդ**, էջ 85), Գրիգոր Գ Պահլավունին՝ «երանելի» (**Անդ**, էջ 86) և «սրբազան» (**Անդ**, էջ 86), Ներսես Գ Շնորհալին՝ «երանելի» (**Անդ**, էջ 165) և «սուրբ» (**Անդ**, էջ 165), Գրիգոր Գ Տղան՝ «սուրբ» (**Անդ**,

ՊԽՄ-ի առաջաբանում պատմվող իրադարձությունների ծավալման վայրը Կիլիկյան Հայաստանն էր⁷³, ուր երկպառակտչական պատերազմ էին վարում երկու հայազգի իշխաններ՝ Օշին Հեթումյանը և Թեոդորոս (մյուս պատմական սկզբնաղբյուրներում՝ Թորոս) Բ Ռուբինյան իշխանը, որոնք. «էին պատուով ի Յունաց արքայէն սեւաստոսութեամբ, եւ էին ընդ ծառայութեամբ եւ հնազանդութեամբ նորա»⁷⁴: Այս դրվագում ականհայտ է Ներսես Լամբրոնացու աշառու վերաբերմունքը Ռուբինյան իշխանական ընտանիքի նկատմամբ⁷⁵: Ելակետ ընդունելով Բյուզանդական կայսրությանը Օշինի և Թորոսի ստորակա համարվելու հանգամանքը, Տարսոնի արքեպիսկոպոսը մեղադրում է երկրորդին, որ նա «թէկն ածէր ընդդէմ թագաւորին Հոռոմոց պէսպէս պատճառաւ, մոռացեալ զերդմնակուռ դաշինսն՝ որ ի միջի, եւ զհնազանդութիւն նորա»⁷⁶, հակադրելով Թորոսի վարքագիծը Օշինի հավատարմությանը դեպի բյուզանդական կայսրությունը («հաւատարմապէս մնացեալ ի հնազանդութիւն արքային Հոռոմոց»)⁷⁷: Ըստ Ներսես Լամբրոնացու երկու հայ իշխանների միջև ծագած պատերազմի հիմնական պատճառն Օշինի հավատարմությունն էր «Հոռոմոց (իմա՛ բյուզանդական – Ա.Բ.) թագաւորին», որի համար «ոչ սակաւ խռովութիւնք լինէր եւ հեղմունք արեան ի մէջ երկուց իշխանացն»⁷⁸:

Ներսես Լամբրոնացին ևս հավաստում է, որ Լամբրոնի տեր Օշին Հեթումյանը բյուզանդական քաղաքականության հետևողական պաշտպանն է, Կոստանդնուպոլսի կայսեր հավատարիմ ստորական: Բյուզանդիայի գերիշխանության դեմ Թորոս Բ Ռուբինյանի յուրաքանչյուր ելույթ Օշինը դիտում էր իբրև սեփական իշխանության դեմ ուղղված, կանխամտածված գործողություն: Լամբրոնին տիրող Հեթումյանների քաղաքական բոլոր նկրտումներն ու

էջ 166) կաթողիկոսներ են: Հետաքրքիր է, որ Գրիգոր Դ Տղան իր կենդանության օրոք սուրբ է անվանվում:

⁷³ Ներսես Լամբրոնացին այդ տարածքը երկու մասի է բաժանում: Թորոս Ռուբինյանին համարում է իշխան «լեոնային կողմանց Փռիւզոց», իսկ իր հայր Օշին Հեթումյանին՝ «լեոնային կողմանց Փռիւզոց եւ բազում գաւառաց, որ ի գահ Կիլիկիոյ» (տե՛ս Անդ):

⁷⁴ Տե՛ս Անդ: Հմմտ. նաև Ա. Բողոչյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 226:

⁷⁵ Այդ վերաբերմունքն ականհայտորեն երևում է երկու քաղաքական գործիչների բնութագրման համար օգտագործված ածականներից: Թորոս Բ Ռուբինյանի անունը տրվում է երկու անգամ. «Րշխանն՝ որոյ անունն Թէոդորոս» և «ամբարտաւան իշխանն Թէոդորոս» ձևով, իսկ Օշին Հեթումյանը հիշատակվում է. «բարեպաշտ իշխանն Օշին» (երկու անգամ), «Օշնի սեւաստոսին» (մեկ անգամ), «գերապատիւ իշխանութիւն Օշնիւ» (մեկ անգամ) բառակապակցություններում: Տե՛ս Ներսէս Շնորհալի, ԹԸ, էջ 86–87, 107:

⁷⁶ Անդ, էջ 86:

⁷⁷ Անդ:

⁷⁸ Անդ:

ձգտումները ԺԲ դարի 60–70-ական թթ. ամբողջովին ու կուրորեն, անմնացորդ կապված են Կիլիկիայում Բյուզանդական կայսրության հետապնդած շահերին: Այդ քաղաքականության գաղափարախոսական դիրքերի վրա է կանգնած նաև ՊԽՄ ժողովածույի կազմող Ներսես Լամբրոնացին, որը Թորոս Բ Ռուբինյանի պայքարը Կիլիկիայի հայկական իշխանությունները միավորելու և քաղաքական անկախություն ձեռք բերելու համար բնութագրում է որպես «խռովություն»⁷⁹:

Ներսես Լամբրոնացու համար Բյուզանդական կայսրությունը համաշխարհային քաղաքականության պահպանման հենասյունն ու ապավենն է⁸⁰: Խոսելով Մանուել Ա Կոմնենոս կայսեր մահից հետո Բյուզանդիայի սահմաններում տեղի ունեցած վերոհիշյալ խռովությունների մասին, Տարսոնի արքեպիսկոպոսը դրանք մատուցում է որպես աշխարհի կործանման բացահայտ նշան. «Թագաւորական աթոռոյն՝ որ սիւն է աշխարհի ըստ ասելոյն Պաւղոսի»⁸¹: Բյուզանդական կայսրության քաղաքական վայրիվերումների հետ է կապում Ներսես Լամբրոնացին ողջ աշխարհի կացությունը. «Արդ ընդ սեանն տատանել՝ շարժի եւ աշխարհ ընդ ամենայն կողմանս սովով եւ սրածութեամբ, որպէս ասաց Քրիստոս յաստուածապատում աւետարանութեանն յաղագս կատարածին»⁸²: Այդ միտումն ընթերցողի մեջ սերմանելու և գաղափարը իր գրքի վերջնական ապացույց դարձնելու համար հեղինակի գրչի տակ քիչ դեր չի խաղում քաղաքական իրադարձությունների հետ միաժամանակ մի շարք բնական երևույթների զուգահեռ նկարագրությունը: Օրինակ՝ Մանուել կայսեր մահվան օրվանից սկսած. «մինչեւ ի նոյն արն հոլովմամբ շաբաթուն, մղտացաւ աւդս ընդ ամենայն աշխարհ, եւ լոյս արեգականն պակասեալ՝ շամանդաղ սիւնէր, այլ եւ անձրեւ մոխրախառն եկն յամենայն երկիր»⁸³: Բնական երևույթի նման նկարագրությունից հետո, Ներսես Լամբրոնացին եզրակացնում է. «յորոց ծանեաք իսկապէս, եթէ ընդ փոխելն մահուամբ բարեպաշտ թագաւորին՝ եղեւ պատուհաս այս ի վերայ աշխարհի. որ եւ է իսկ

⁷⁹ Անդ:

⁸⁰ Անդ, էջ 201:

⁸¹ Անդ:

⁸² Անդ:

⁸³ Անդ:

ճշմարտապէս»⁸⁴: Այլ օրինակ ևս. խոսելով Միրիոկեֆալոնի ճակատամարտում (1176 թ.)⁸⁵ բյուզանդական բանակի ջախջախման մասին՝ ժամանակակից-հեղինակը նկարագրում է նաև 1176 թ. ապրիլի 11-ին տեղի ունեցած արևի խավարումը⁸⁶, որն ըստ Ներսես Լամբրոնացու տեղի է ունեցել ճակատամարտից շորս ամիս առաջ⁸⁷: Ապա Տարսոնի արքեպիսկոպոսը այսպես է գնահատում բնական երևույթի քրիստոսաբանական նշանակությունը. «Եթէ զկորուստ քրիստոնէիցն գուշակեաց՝ ոչ գիտեմ, եւ եթէ զսովոյն սաստկութիւն՝ որ ի նոյն ամն եղեւ, եւ ոչ զայն եւս»⁸⁸:

Ուրեմն՝ Ներսես Լամբրոնացու քաղաքական հավատամքի համաձայն՝ պետք է ամեն կերպ աջակցել Բյուզանդական կայսրության հզորության ամրապնդմանը և դատապարտել ու խանգարել Թորոս Բ Ռուբինյան իշխանի գործունեությունը: Այդ իսկ պատճառով, յուրաքանչյուր հարմար պահի Ներսես Լամբրոնացին ոգևորված ներբողաններ է ձոնում Մանուել Ա Կոմնենոսին՝ ԺԲ դարի 60–70-ական թթ. հայ-բյուզանդական փոխհարաբերություններում բյուզանդական կողմի հիմնական հերոսին⁸⁹: Ներսես Լամբրոնացու համար Մանուել Ա Կոմնենոսը⁹⁰ հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական

⁸⁴ Անդ:

⁸⁵ Ըստ Ներսես Լամբրոնացու՝ ճակատամարտի վայրը գտնվում է. «մերձ յԻկոնիոն, ի տեղոջն՝ որ կոչի Մելիտենի» (Անդ, էջ 168): Այս ոչ ճիշտ տեղեկությունը կրկնում է նաև Սմբատ Սպարապետը: Տե՛ս Սմբատ, Տարեգիրք (Վենետիկ), էջ 193:

⁸⁶ Արեգակի այս խավարման մասին տե՛ս Բ.Յ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն (XIX դ. սկզբից մինչև 1920) (Երևան, 1968), էջ 145 և Հ.Գ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր (Երևան, 1980), էջ 179–180, մասնավորապես՝ ծան. 181: Ներսես Լամբրոնացու հաղորդումն արեգակի այս խավարման մասին ինքնատիպ է նրանով, որ հեղինակը ոչ միայն նկարագրում է բնական երևույթը, այլ նաև ճշգրտում է աշխարհագրական տարածքի սահմանները, որից երևացել է խավարումը. «...յառաւաւտուն պահու ընդ ծագել արեւուն եղեւ խաւար ի վերայ երկրի, զոր ոչ ոք ի մարդկանէ էր տեսեալ այնպիսի, ոչ որպէս զխաւարումն արեգական, այլ որպէս զհասարակ գիշերի՝ յորժամ իցէ առանց լուսնի եւ աստեղաց, ի յաշխարհէն Պաղեստինացոց մինչև ի Բիւզանդիոն եւ յայլ բազում գաւառք: Նաեւ քննեալ եղեւ յիմաստասիրաց բազմաց, եւ գտաւ դիր աստեղաց եւ ընթացք արեգական եւ լուսնի յիւրեանց կայանս իրիք սայթաքման, եւ մնաց այնու աշխարհս ժամ մի եւ ապա եղեւ լոյս յերկրի»: Տե՛ս Ներսէս Շնորհալի, ԹԼ, էջ 168–169:

⁸⁷ Ներսես Լամբրոնացին արեգակի խաւարումը ճշգրտորեն թվագրում է. «ի նոյն ամն (իմա՛ ճակատամարտի տարում – Ա.Բ.) ... յետ սրբոյ Պասեքին, յաւուր նոր Կիւրակէին»: Տե՛ս Անդ, էջ 168:

⁸⁸ Անդ, էջ 169:

⁸⁹ Մանուել Կոմնենոսը ՊԽՄ բնագրում երբեմն կոչվում է արքա, երբեմն՝ թագավոր: Տե՛ս Ա. Բողոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 140:

⁹⁰ Ուշագրավ է նաև այն հանգամանքը, թե ինչ մակդիրների հետ են հանդիպում վերոհիշյալ (թագավոր և արքա) եզրերը: Բյուզանդական կայսրը կոչվում է «Յունաց արքայ», սակայն «Թագաւոր Հոռոմոց», այնուամենայնիվ հանդիպում է նաև «արքայ Հոռոմաց» բանաձևը: «Բարեպաշտ» մակդիրը հանդիպում է և՛ թագավոր, և՛ արքա տիտղոսների հետ: Արքա բառի

փոխհարաբերությունների ամենագործուն մասնակիցն է. չնայած ՊիՄ ժողովածու մտած առաջին վավերագիրը (1165 թ. Ներսես Շնորհալի եպիսկոպոսի թուղթը առ Ալեքս Աքսուխ) Ներսես Լամբրոնացին համարում է Կիլիկիայի բյուզանդական զորահրամանատար-կառավարչի պատվերով գրված փաստաթուղթ⁹¹, այնուամենայնիվ հետագա բանակցությունների ընթացքում Մանուել Ա Կոմնենոսը այդ փոխհարաբերությունների իսկական ոգին է և, ըստ հավաքածուի հեղինակի, միայն նրա մահն է իսանգարում վերջնական համաձայնության կայացմանը:

Իհարկե, ժողովածուում հիշատակվում են նաև բանակցություններին մասնակցած բյուզանդական Միքայել Գ Անքիալոս⁹² և կայսեր թաղման արարողությունը գլխավորած Թեոդոսիոս Ա Բորողիոտես (1179–1183)⁹³ պատրիարքները⁹⁴, սակայն նրանց դերը միջեկեղեցական գործերում ստորադասված են կայսեր կամքին: Այդ են վկայում բյուզանդական պատրիարքների մասին Լամբրոնացու հաղորդած գրեթե բոլոր տեղեկությունները⁹⁵:

Այսպիսով՝ Ներսես Լամբրոնացու կազմած ՊիՄ ժողովածուն ներկայացնում է 1165–1178 թթ. հայ-բյուզանդական փոխհարաբերությունների ոչ

հետ հանդիպում է նաև «բարեացապարտ» և «բարեպաշտ, աստուածասէր եւ իմաստուն», իսկ թագաւորի հետ՝ «արժանագովելի» ածական-մակդիրները: Տե՛ս Ա. Բողոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 97–112, 140, ծան. 64:

⁹¹ Ըստ Ներսես Լամբրոնացու. «որ եւ թախանձեալ զերանելին, զի զդաւանութիւն Հայաստանեայց բանիւ ասացեալն՝ գրով պարունակեալ տացէ նմա»: Տե՛ս Ներսէս Շնորհալի, ԹԸ, էջ 87:

⁹² Ներսես Լամբրոնացին կաթողիկոս Ներսես Գ Շնորհալու առաջին, բյուզանդական կայսերն ուղղված նամակի կապակցությամբ, առանց անունը տալու, ակնարկում է նաև Դուկաս Խրիստերգես (1157–1170) բյուզանդական պատրիարքին. «առեալ զնամակս ի ձեռս թագաւորն ընթանայր ի մեծ եկեղեցին, ցուցանելով տիեզերական հայրապետին» (Անդ, էջ 143):

⁹³ Այս պատրիարքին, ըստ Նիկեոսիոս Խոնիատեսի վկայության, Անդրոնիկոս Ա Կոմնենոսը գահընկեց է անում, ակնարկելով նրա հայկական ծագումը: Տե՛ս Nicetas Choniates, *Historia*, p. 253: Ներսես Լամբրոնացին սխալմամբ Թեոդորոս Ա-ին համարում է Միքայել Գ-ի հաջորդը (Ներսէս Շնորհալի, ԹԸ, էջ 200³⁴), չհիշատակելով նրանց միջև գահակալած Խարիտոն Եվգենիոտեսի (1178–1179) անունը:

⁹⁴ Ներսես Լամբրոնացին օրթոդոքս եկեղեցու պատրիարքներին անվանում է. «տիեզերական հայրապետ» (Անդ, էջ 143³³), «տիեզերական պատրիարք» (Անդ, էջ 154¹⁸), «զարբեպիսկոպոս մեծի քաղաքին» (Անդ, էջ 200¹⁹), «քահանայապետ» (Անդ, էջ 200¹⁹), «հայր սուրբ» (կամ «հայրապետ սուրբ», Անդ, էջ 200³²): Ներսես Լամբրոնացին երկու անգամ հիշատակում է Անտիոքի օրթոթոքս պատրիարքին. մեկ անգամ հոգնակիով՝ անգամ հիշատակվում է Անտիոքի օրթոթոքս պատրիարքին. մեկ անգամ հոգնակիով՝ նրա հետ միասին նկատի ունենալով նաև Կոստանդնուպոլսի եկեղեցու առաջնորդին («պատրիարքացն», Անդ, էջ 168¹²), մյուս անգամ՝ «սրբազան պատրիարքին» (Անդ, էջ 169⁶):

⁹⁵ Օրինակ. հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների առաջին թղթերը Բյուզանդական կայսրության անունից գրում է Մանուել Ա Կոմնենոսը (Անդ, էջ 107, 109, 143–144), իսկ հետագայում կայսերական վավերագրերի հետ Հռոմկլա են ուղարկում նաև Միքայել Գ Անքիալոս պատրիարքի թղթերը Տե՛ս Անդ, էջ 153, 159, 168:

միայն հիմնական վավերագրերը, այլ նաև առաջաբանում, մի շարք թղթերի գրման հանգամանքների պարզաբանմանը նվիրված հատվածներում և վերջաբանում գրառած տեղեկությունների շնորհիվ պատմական աշխատություն է, որը նպատակ ունի հետագա սերունդներին հաղորդակից դարձնել ժԲ սարի 60–70-ական թթ. տեղի ունեցած հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների հետ կապված հիմնական իրադարձություններին: Ինչպես վերևում պարզեցինք, Լամբրոնացին այս երկն ավարտել է 1182–1183 թթ.: Ժողովածույի կազմողը եկեղեցիների միության հայ-բյուզանդական բանակցությունների հետևողական կողմանկից է:

Գ Յ. ԺԲ դարի հայ-բյուզանդական բանակցությունների հունարեն ժողովածուն.

Կոմենենոսների դարաշրջանի բյուզանդական ծիսադավանաբանական և վիճաբանական գրականությունը մեծ է ծավալով, հարուստ՝ ընդգրկած հարցերի ու խնդիրների բազմազանությամբ⁹⁶: Կայսերական աստվածաբանները, երկրի ներքին և արտաքին, քաղաքական ու եկեղեցական իրավիճակից ելնելով, հաճախ նաև կենտրոնական իշխանության ուղղակի միջամտությամբ, պայքար էին մղում դավանական այս կամ այն կրոնական համայնքի դեմ⁹⁷, երբեմն էլ՝ եկեղեցիների միության բանակցություններ էին վարում հարևան ժողովուրդների հետ: Դավանաբանական պայքարը, որը վաղուց ի վեր ներխուժել էր կայսրության ներքին ու արտաքին քաղաքականության ոլորտը, գաղափարախոսական հզոր գեներ էր դարձել միջնադարյան Արևելքի և Արևմուտքի, Բյուզանդիայի և հարևանների փոխհարաբերություններում:

1165–1178 թթ. հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների բնագրերը ավանդված են նաև բյուզանդական մատենագրությամբ: Հունարենով պահպանված փաստաթղթերը մեզ են հասել Թեոբրիանոսի Διάλεξις πρὸς τὸν καθολικὸν τῶν Ἀρμενίων («Տրամախոսություն Հայոց կաթողիկոսի

⁹⁶ Այդ դարաշրջանի բյուզանդական դավանաբանական գրականության մասին բավական հանգամանորեն տե՛ս **Н.-Г. Beck**, *Kirche und theologische Litteratur*, S. 609–629:

⁹⁷ Աննա Կոմենենի պատմությունը լի է նման իրադարձությունների նկարագրություններով: Տե՛ս **Anne Comnenae Alexiadis**, Libri XV, addedit L. Schopenus, t. I–II (Bonnae, 1839–1878), t. I, Lib. VI, 2 (p. 272–274), 4 (p. 278–280), t. II, Lib. X, 1 (p. 1–4), Lib. XIV, 8–9 (295–306), Lib. XV, 8–10 (p. 350–365) և հմմտ. **Анна Комнина**, *Алексиада*, Вступительная статья, перевод, комментарий, Я.Н. Любарского (Москва, 1965), с. 24–25, 177–178, 180–181, 264–265, 394–399, 419–426:

հետ») երկում, ուր ներկայացվում են առաջին և երկրորդ այցելությունների բանակցությունների արձանագրությունները⁹⁸:

ԺԲ դարի հույն փրիստոփա, Թագավորական ծառա (ըստ Մանուել Ա Կոմնենոսի թղթի բնորոշման. *λίξιον τῆς βασιλείας μου*), մագիստրոս Թեորիանոսը բյուզանդական հայտնի մատենագիր է, դիվանագետ և աստվածաբանագիտական⁹⁹: Նրա անունը հայ մատենագրության մեջ հիշատակվում է սկսած 1182/3 թվականից, երբ Ներսես Լամբրոնացին կազմեց ՊԽՄ ժողովածուն: Այստեղ Տարսոնի արքեպիսկոպոսը Թեորիանոսին որակում է իբրև «զայր ոմն ճարտարաբան փրիստոփայ արտաքին գրովք կրթեալ եւ եկեղեցական ուսմամբ ճոխացեալ»¹⁰⁰: Թեորիանոսի անունը կապվում է Կրիլկյան Հայաստանի և Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանի պատմությանը՝ նրա 1169–1170 և 1171–1172 թթ. դեսպանագնացություններով: Բանակցությունների այս երկու փուլերին հունական կողմից մասնակցում էր նաև Փրիլպուպոլսի շրջանի վանքերից մեկի վանահայր Հովհաննես Ութմանը¹⁰¹:

⁹⁸ *Տե՛ս PG*, t. 133, p. 119–298: *Տե՛ս նաև A. Bozoyan*, “Collections of documents concerning Armenian-Byzantine ecclesiastical-political relations”, in *Armenian perspectives, 10th Anniversary Conference of the Association Internationale des Etudes Armenines*, School of Oriental and African Studies, ed. by N. Awde (London, 1995), p. 78–80:

⁹⁹ Թեորիանոսի մատենագրական ժառանգության մասին տե՛ս *Geschichte der byzantinischen Litteratur von Justinian bis zum ende des Oströmischen Reiches (527–1453)*, von **K. Krumbacher**, 2. Auflage, bearbeitet unter Mitwirkung von A. Ehrhard und H. Gelzer (München, 1897), S. 88–89; **H.-G. Beck**, *Kirche und theologische Litteratur*, S. 629; **P.Au. Palmiere**, “La littera del filosofo byzantine Teoriano e un testo polemico inedito di Niceta Picoratus”, *Bessarione* (1912), p. 8–14:

¹⁰⁰ **Ներսէս Շնորհալի**, ԹԸ, էջ 144: Այս ժողովածոյի հեղինակի և գրման թվականի մասին ավելի մանրամասն տե՛ս **Ա.Ա. Բոզոյան**, «Ներսես Լամբրոնացին և XII դարի հայ-բյուզանդական հարաբերությունների վավերագրերի ժողովածուն», ՊԲՀ, № 4 (1989), էջ 109–116, իսկ բանակցություններին մասնակցող կողմերի մասին տե՛ս **Ա.Ա. Բոզոյան**, «Հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական բանակցությունների մասնակիցներն ու վավերագրերի թարգմանիչները (XII դարի 60–70-ական թվականներ)», ՊԲՀ (1990), № 4, էջ 81–93:

¹⁰¹ Այս հոգևորականի գործունեությունը հակասական գնահատականների է արժանացել վերջին տարիների հայագիտական գրականության մեջ: Տե՛ս **Р.М. Бартикян**, “Роль игумена Филиппопольского армянского монастыря Иоанна Атмана в армяно-византийских церковных переговорах при католикосе Нерсесе IV Благодатном (1166–1173)”, *ԼՀԳ* 6 (1984), с. 78–88, **M.B.L. Zekiyan**, “The Armenian Community of Philipopolis and the Bishop Ioannes Atmanos Imperial legat to Cilicia,” in: *Between the Danube and Caucasus*, ed. by G. Kara (Budapest, 1987), pp. 363–373:

Գ 4. Թեորիանոսի առաջին դեսպանագնացության բանակցությունների բնագրում պահպանված վավերագրերը.

1169–1170 թ. դեսպանագնացության ընթացքում Հռոմկլայում տեղի ունեցած վիճաբանությունների բնագիրը վերջնական տեսքի է բերվել և հարյուր օրինակից ավելի քանակով տարածվել Բյուզանդական կայսրության սահմաններում (Թեորիանոսի կողմից և արքունիքի հրամանով), երբ աստվածաբան - փիլիսոփան վերադարձել է Կոստանդնուպոլիս: Երկրորդ դեսպանագնացության արձանագրության մեջ Թեորիանոսին ուղեկցող Հովհաննես Ութմանը (հունարեն բնագրում՝ Աթման) կաթողիկոսի հետ անձնական զրուցում 1170 թ. բանակցությունների արձանագրությունների ճակատագրի մասին տեղեկացնում է. «Ἐγραφε γὰρ τοῦτο ὁ σύντροφός μου ἐν τῇ διαλέξει, ἣ τις ἀνεγνώσθη ἐπὶ συνόδου καὶ ἐπὶ παλατίου, καὶ μετεγράφη ἐν ἀντιγράφοις ἐπέκεινα τῶν ἑκατῶν, καὶ γνωστὸν ἐγένετο ἐφ’ ὄλη τῇ Ῥωμανίᾳ» (Իմ գործակիցը (Իմա՝ Թեորիանոսը – Ա.Բ.) երկխոսության (ժամանակ ասվածը – Ա.Բ.) արձանագրել էր, որն էլ ընթերցվել է եկեղեցական սինոդի և արքունիքի առջև, բազմացվել է հարյուրից ավելի օրինակ և հայտնի է դարձել ամբողջ Ռոմանիայում (Իմա՝ Բյուզանդիա – Ա.Բ.)¹⁰²: Ուրեմն՝ առաջին դեսպանագնացության արդյունքները գրի են առնվել Թեորիանոսի կողմից դեռևս Հռոմկլայում, իսկ Կոստանդնուպոլսում դրանք ընթերցվել են եկեղեցական ժողովում (սինոդ) և արքունիքում: Մինչև երկրորդ դեսպանագնացության ժամանակը Հռոմկլա, Բյուզանդիայում հայտնի էին դարձել առաջին դեսպանագնացության ընթացքում տեղի ունեցած վիճաբանությունները, քանի որ այդ բնագրի հարյուրից ավելի օրինակ էր բազմացվել ու տարածվել կայսրության սահմաններում¹⁰³: Առաջին դեսպանագնացության բանակցությունների արձանագրված բնագրի մասին տեղեկություն կա նաև ՊեՄ ժողովածուում. «Իսկ նորա (Իմա՝ Թեորիանոս – Ա.Բ.) առեալ զթուղթն հանդերձ հարցմամբքն եւ պատասխանեաւքն, վասն զի զամենայնն ի գրի դրաւշմեաց, ընթանայր առ թագաւորն. ապա ի ձեռին ունելով եւ զպէսպէս հարցմանցն նշանագրութիւն եւ զշայատանեայց յաւժարամիտ լինելն ի միաբանութիւնն, յայտնէր զգիրն՝ որ ի սրբոյ հայրապետէն առ թագաւորն»¹⁰⁴:

¹⁰² Տե՛ս PG, t. 133, p. 248C և հմմտ. Ա. Վ. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութեան նոցա ընդ հռոմէական եկեղեցւոյ ի Փլորենտեան սինհոդոսի (Վիեննա, 1878), էջ 244:

¹⁰³ Տե՛ս Ա. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան, էջ 244: Այս տեղեկութիւնը շափազանց ուշագրավ է բյուզանդական արքունական դիվանատան հսկայական շափերի հասնող գրագրության ուսումնասիրության առումով:

¹⁰⁴ Ներսէս Շնորհալի, ԹԼ, էջ 153 (ընդգծումներն իմն են՝ Ա.Բ.):

Մեզ համար ուրույն հետաքրքրություն է ներկայացնում նաև այն պարագան, թե որտե՞ղ է վերջնական տեսքի բերվել Թեորիանոսի առաջին բանակցությունների բնագիրը: «Տրամախօսութիւններում» առկա մի շարք վկայութ-յուններից կարելի է ենթադրել, թե այդ կատարվել է Կոստանդնուպոլսում՝ Թեորիանոսի առաջին դեսպանագնացությունից անմիջապես հետո¹⁰⁵: Այս ենթադրության համար անուղղակի փաստարկ են ծառայել «Տրամախօսութեան» հետևյալ տեղեկությունները.

▪ Թեորիանոսի առաջին «Տրամախօսութեան» բնագիրը համառոտված է Հռոմիլյալում գրի առնված արձանագրությունների հիման վրա: Այս փաստն է հաստատում այն վկայությունը, ըստ որի մեզ հասած բնագիր չեն մտել Քաղկեդոնի ժողովի դավանանքին վերաբերող մի շարք արտահայտությունների բացատրություններ, որոնց շուրջ կաթողիկոսի խնդրանքով խոսել է Թեորիանոսը¹⁰⁶:

▪ Խոսելով Ներսես Դ Շնորհալու հրամանով իր համար ընդօրինակել տված Հովհաննես կաթողիկոսի երկի մասին, Թեորիանոսը գրում է. «...որը և բերեցինք մայրաքաղաք»¹⁰⁷:

▪ Թեորիանոսի երկրորդ այցելության ժամանակ առաջին «Տրամախօսութեան» բնագիրը եղել է բանագնացի ձեռքին¹⁰⁸:

¹⁰⁵ «Ἡμεῖς δὲ ἐπὶ πᾶσι τούτοις εὐξαριστήσαντες τῷ Θεῷ, τῆς πρὸς Κωνσταντινούπολιν φερούσης οὐχόμεθα αἰνοῦντες καὶ εὐλογοῦντες τὸν Θεόν...» («Եւ մեր գոհացալք զԱստուծոյ վասն ամենայն շնորհացս, մեկնեցաք՝ դառնալ անդրէն ի Կոստանդինուպոլիս՝ հանապազորդեալք ի ճանապարհին, օրհնելով եւ փառաբանելով զԱստուած...»): Տե՛ս **ՔԳ**, t. 133, p. 212C_{3.5} և հմմտ. **Ա. Պալճեան**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան, էջ 236, ինչպէս նաև **ՔԳ**, t. 133, p. 208D₇ և հմմտ. **Ա. Պալճեան**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան, էջ 234:

¹⁰⁶ «Ἐπεὶ δὲ ἀνεγνώσθη ὁ ὄρος, καὶ τὰ βιβλία εὐρέθησαν ἐξισάζοντα, τὸ τε Ἀρμενικὸν, καὶ τὸ Ῥωμαϊκὸν, καὶ αἱ τῷ Καθολικῷ δοξοῦσαι ἀσφαφεῖς αὐτοῦ λέξεις μετρίαὶ οἷσαι ἰκανῆς τετυχήκασι σαφηνείας εἶπεν ὁ Θεωριανὸς πρὸς τὸν Καθολικόν» («Յետ ընթեռնելոյ զայս վճիռ ժողովոյն եւ միաբան գտանելոյ ընթերցուածոյ Հայոց ընդ բնագրի Հռոմայեցոց, իբրեւ պարզեցան յստակեցան բանք ժողովոյն, որք մթինք Կաթողիկոսին երեւէին, Թեորիանոս զայս ինչ բարբառեցաւ») տե՛ս **ՔԳ**, t. 133, p. 197D_{1.5}; **Կղեմէս Գալանոս**, Միաբանութիւն Հայոց, էջ 307; **Ա. Պալճեան**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան, էջ 233:

¹⁰⁷ «Καὶ δὲ μεταγραφείσα ἐδόδε ἡμῖν, ἦν καὶ ἀποκομισάμεθα πρὸς τὴν βασιλεύουσαν» («Հնծայեցալ մեզ պատճէն գրոյն, եւ մեր առեալ զայն բերաք ընդ մեզ յարքունական քաղաքն») տե՛ս **ՔԳ**, t. 133, p. 208D₇; **Կղեմէս Գալանոս**, Միաբանութիւն Հայոց, էջ 313; **Ա. Պալճեան**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան, էջ 234:

¹⁰⁸ Այդ է վկայում հետևյալ տեղեկությունը. «Ἦνα τὰς παραχθείσας τότε, χρήσεις ἐν τῇ φθασάσῃ γενέσθαι διαλέξει παραλείψω» («ի բաց թողում զվկայութիւնս, զորս յառաջնում բանակցութեան ընծայեցուցաք»): Տե՛ս **ՔԳ**, t. 133, p. 241D_{4.5}; **Ա. Պալճեան**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան, էջ 241:

▪ «Տրամախօսութեան» բնագիրը վերանայված և համառոտված է Կոստանդնուպոլսում¹⁰⁹: Այս ենթադրությունն կողմնակից է գերապատիվ արք. Լևոն Զեքիեանը. «Կարելի չէ մոռանալ նաև որ Թեորիանոսի տեղագրությունն ալ սղագրական աստեղագրություն մը չէ: Հետեւաբար, բնական է, որ Թեորիանոս զայն խմբագրած ըլլայ՝ այն գաղափարին համաձայն զոր ինք կազմած էր վիճաբանություններու արդիւնքի մասին»¹¹⁰:

Այժմ անդրադառնանք Թեորիանոսի առաջին դեսպանագնացության ժամանակի խնդրին: Բյուզանդական արքունական աստվածաբանը Հռոմկլա է հասել իր հետ բերելով Մանուել կայսեր թուղթը՝ թվագրված երրորդ ինդիքտիոնի նոյեմբեր ամսով (τῷ μηνὶ Νοεμβρίῳ ἰνδικτικῶνος τρίτης)¹¹¹: Այս ինդիքտիոնը համապատասխանում է 1169 թ. սեպտեմբերի 1 – 1170 թ. օգոստոսի 31 ժամանակահատվածին¹¹²: Հետևապես՝ Մանուել Ա Կոմնենոս կայսեր թուղթը գրվել է 1169 թ. նոյեմբեր ամսին: Ուրեմն՝ Թեորիանոսը կարող էր իր դեսպանախմբով Կոստանդնուպոլսից դուրս եկած լինել 1169 թ. նոյեմբերին կամ դրանից հետո: Մինչև Հռոմկլա հասնելը, ենթադրելի է, որ դեսպանախումբը եղել է Քեսունում¹¹³:

¹⁰⁹ «Տրամախօսութեան» բնագրի համառոտման մասին խոսում է այն հատվածը, որտեղ կողմերը քննարկում են Քրիստոսի Մենդեան տոնի խնդիրը: Այդտեղ կաթողիկոսն ասում է, որ հիշատակված հարցը նախորդ բանակցությունների ընթացքում բավականին քննվել է և հարկ չկա կրկին դրան անդրադառնալ («Τὸ κεφάλαιον τοῦτο ἐν τῇ προτέρῳ διαλέξει τρακταῖσθον ἱκανῶς εἰς πέρας ἤθη χρηστόν· οὐ δεῖ γοῦν ἐτι ταυτολογεῖν εἰς κενόν», տե՛ս **PG**, t. 133, p. 268C₁₃): Ակնարկվող հատվածը դուրս է հանվել Թեորիանոսի երկի վերջնական խմբագրման փուլերից որևէ մեկում:

¹¹⁰ **Լ. Զեքիեան**, Համամիութենական տրամախօսութիւն, էջ 30:

¹¹¹ **PG**, t. 133, p. 121A:

¹¹² Տոմարական հաշվումների համար տե՛ս **V. Grumel**, *La Chronologie աշխատությունը*: Հարկ ենք համարում նշել, որ Վ. Գրյումելի աղյուսակում ինդիքտիոնը և բյուզանդական արարչական թվականը դրված են մեր օգտագործած թվականության ոչ թե այն թվականի կողքին, որով սկսվում էր ինդիքտիոնի կամ արարչական թվականի սկիզբը, այլ հաջորդ թվականի դիմաց: Վերևում հիշատակված վավերագրերի թվականի ճշգրտման համար տե՛ս նաև **Fr. Dölger**, *RKOR Teil 2*, Nr. 1489:

¹¹³ Այդ են ուղղակիորեն վկայում առաջին «Տրամախօսութեան» այն տողերը, երբ Թեորիանոսը խոսում է Գրիգոր Աստվածաբանի (Նագիանգացի) «Յաղագս Որդուց, բան երկրորդ» (Περὶ Υἱοῦ δευτέρου λόγου) երկի մի հատվածի մասին, որն այլ թարգմանություն ունի հայերենում և որպես ապացույց հունարեն բնագրի անաղարտության, Թեորիանոսը մատնացույց է անում այդ նույն երկի ասորերեն թարգմանության բնագիրը, որը բյուզանդական աստվածաբանը գտել է Քեսունում. «ἐν τοῖς βιβλίοις τῶν Σύρων ἐν Κενσουνίῳ καὶ πλεῖστον ἐχάρην τοῦτο εὐρών»: Տե՛ս **PG**, t. 133, p. 152B₁₁₋₁₂ և հմմտ. **Ա. Պալճեան**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան, էջ 215): Այս կապակցությամբ կարելի է անել մի այլ հնարավոր ենթադրություն ևս. Թեորիանոսը Հռոմկլա գալուց հետո, հնարավոր է կարճ ժամանակով այցելել է մոտակայքում գտնվող Քեսուն քաղաք:

Հավանաբար դեսպանախումբը Մանուել Ա Կոմնենոսի վերոհիշյալ նամակը գրվելուց բավական հետո է դուրս եկել Կոստանդնուպոլսից, քանի որ առաջին այցի բանակցությունների արձանագրության սկզբում Թեորիանոսը Հռոմկլա կատարած այցելությունը թվագրում է աշխարհի արարչության բյուզանդական ՏՄԾՊ՝ (6678) թվականով, Մանուել Ա Կոմնենոսի թագավորության 28-րդ տարով, և ինդիքտիոնի երրորդ տարվա մայիսի 15-ով¹¹⁴:

Հետևապես Թեորիանոսի առաջին դեսպանախումբը Հռոմկլա է հասել 1170 թ. մայիսի 15-ին: Այս թվականի ճշտությունը հավաստվում է Մանուել Ա կայսեր վերևում հիշատակված թղթի հայերեն տարբերակի թվագրումով, որն ըստ մեր ենթադրության, կրում է վավերագրի կաթողիկոսական դիվանատուն մուտք գործելու տարեթիվն ու ամիսը. «յամսեանս Մայիս, յ՛Ընդիքտիոնին յերեքն»¹¹⁵: Ուրեմն՝ անվիճելի է, որ Թեորիանոսն իր առաջին դեսպանախումբով Հռոմկլա է հասել 1170 թ. մայիսի 15-ին:

Արդյոք քանի՞ անդամից է բաղկացած եղել առաջին դեսպանախմբի անձնակազմը: «Տրամախօսութեան» բնագրում որևէ ուղակի վկայություն այդ մասին չենք գտնում: Վերոհիշյալ՝ Մանուել Ա կայսեր Ներսես Դ կաթողիկոսին ուղղված թղթի թե՛ հունարեն, թե՛ հայերեն տարբերակներում հիշատակվում

Այս կապակցությամբ կարելի է արդյոք պնդել, որ նա Քեսունում հարաբերությունների մեջ է մտել նաև հակոբիկ ասորիների հոգևոր առաջնորդների հետ: Թե ինչպե՞ս է ընթացել դեսպանագնացությունը, ո՞ր ճանապարհներով և քաղաքներով են անցել բյուզանդական դիվանագետները, տեղեկությունների անբավարարության պատճառով դժվարանում ենք պատասխանել:

¹¹⁴ Բերում ենք բնագիրը. «Ἐν ἔτει ἀπὸ κτίσεως κόσμου, ἔσχη, ἔτει δὲ εἰκοστῷ ὀγδόῳ τῆς αὐτοκρατορίας τοῦ ἐν βασιλευσιν εὐσεβεστάτου καὶ φιλοχρίστου, καὶ θεοστέπτου κυροῦ Μανουήλ, τοῦ Πορφυρογεννήτου, καὶ Κομνηνοῦ, ἰνδικτιῶνος τρίτης, κατὰ τὴν δεκάτην πέμπτην τοῦ Μαΐου μηνὸς κατελάβομεν σὺν Θεῷ τῶν Ῥωμαίων κουλά»: Տե՛ս PG, t. 133, p. 121B: Այստեղ կարելի է կատարել մի փոքրիկ ճշտում Կ. Գալանոսի (**Կղեմէս Գալանոս**, Միաբանութիւն Հայոց, էջ 242) և Ա. Պալճեանի (**Ա. Պալճեան**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան, էջ 204) թարգմանությունների մեջ: Հունարենի «εἰκοστῷ ὀγδόῳ»-ն Գալանոսի լատիներեն բնագրում դարձել է «decimo et octavo», իսկ հայերենում՝ «ութևասաներորդի», որը նույնությամբ հայերեն թարգմանության մեջ պահպանել է Ա. Պալճեանը՝ «28»-ի փոխարեն:

Աշխարհի արարչության բյուզանդական 6678 (-5508/9) թվականը համապատասխանում է 1169 թ. սեպտեմբերի 1-1170 թ. օգոստոսի 31 ժամանակահատվածին: Հայտնի է, որ Մանուել Ա Կոմնենոսը պատրիարքի կողմից Կ.Պոլսի Ս. Սոփիայի տաճարում կայսր է օծվել 1143 թ. նոյեմբերի 28-ին: Տե՛ս V. Grumel, *La Chronologie*, p. 358 և հմմտ. նաև K. Βάρζος, *Ἡ γενεαλογία τῶν Κομνηνῶν*, том. А' καὶ Β', Θεσσαλονικη, 1984, p. 424: Ուրեմն՝ նրա թագավորության 28-րդ տարին համապատասխանում է 1170 թ. նոյեմբերի 28-1171 թ. նոյեմբերի 27 ժամանակամիջոցին: Գիտենք նաև, որ Մանուել Ա-ը գահին է բազմել իր հոր մահից անմիջապես հետո, այն է՝ 1143 թ. ապրիլին: Ի լրումն վերոբերյալ փաստարկների, ինդիքտիոնի երրորդ տարվա մայիսի 15-ին համապատասխանում է 1170 թ. մայիսի 15-ը:

¹¹⁵ **Ներսէս Ծնորհալի**, ԹՂ, էջ 145: Այս թուղթը հ. Միքայէլ Չամչեանցը սխալմամբ գրված է համարում 1170 թ. մայիսին: Տե՛ս Միքայէլ Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հտ. Գ, էջ 105-106:

են Թեորիանոսը և Փիլիպպոսի հայ վանահայր Հովհաննես Ութմանը («զլիզիոն թագաւորութեան մերոյ զմայիստո Թէոփանոս առ ձերդ երկիւղածութիւն առաքեաց թագաւորութիւնս մեր, ընդ նմին և զհայր վանաց Հայոց՝ որ ի Փիլիպպոսուսեաց աշխարհէն զՅովհաննէս՝ մականուն Ութման»)՝¹¹⁶: Այս խնդրին վերաբերող մի անուղղակի տեղեկություն էլ հաղորդում է երկրորդ «Տրամախօսութեան» բնագիրը¹¹⁷: Եթե վերապահությամբ ենթադրենք, որ Հովհաննես Ութմանի գործակիցը (ὁ σύντροφος) Թեորիանոսը չէ, պետք է պնդել, որ դեսպանախմբի կազմի մեջ եղել է մի երրորդ անձնավորություն, որն էլ հավանաբար գրի է առել վիճաբանությունները:

Որքա՞ն ժամանակ է Հռոմկլայում մնացել Թեորիանոսն իր դեսպանախմբով: Առաջին դեսպանագնացության արձանագրությունների բնագրում երբեմն նշվում է, թէ ինչ որ ժամանակով բանակցությունները դադարեցվել, սակայն մի քանի օր անց կրկին շարունակվել են¹¹⁸: Բնագրի նմանատիպ ակնարկներից կարելի է ենթադրել, որ վիճաբանությունների գրառումները Կոստանդնուպոլսում «ուղղափառ» տեսքի բերելիս, Թեորիանոսը որոշ հատվածներ է հանել, ապա թերևս կարելի է պնդել, որ վիճաբանություններն ավելի երկար են ընթացել: Համենայն դեպս՝ դեսպանախումբն Հռոմկլայում եղել է մինչև 1170 թ. հոկտեմբերը: Մեր այս ենթադրությունը կարծես հաստատվում է Թեորիանոսի ձեռքով Մանուել Ա Կոմնենոսին առաքված ներսես Դ Շնորհալու ՊԽՄ ժողովածոյում պահպանված թղթի թվականով. «Գրեցաւ ի թուականութեանս Հայոց վեց հարիւր ինն եւ տասն. յամսեանն Հայոց՝ Արեգ և Հռոմոց՝ Հոկտեմբեր»¹¹⁹: Հայոց ՈԺԹ (= 619) թվականը համապատասխանում է 1170 թ. փետրվարի 7 – 1171 թ. փետրվարի 6 ժամանակահատվածին, իսկ Հայոց արեգ ամիսը, ինչպես թղթում է ասված, համընկնում է այդ տարվա հոկտեմբերին՝ միայն նրա առաջին հինգ օրերին: Ուրեմն՝ նամակը գրվել է 1170 թ. հոկտեմբերի 1–5 ժամանակամիջոցին¹²⁰:

Այս բանակցությունների մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար, հետաքրքիր է իմանալ, թե ովքե՞ր են եղել Թեորիանոսի հետ վիճաբանողները, նրա հետ հանդիպած և ժողովներին մասնակցած անձինք.

¹¹⁶ **Ներսէս Շնորհալի**, ԹԼ, էջ 197: Թղթի հունարեն բնագրում դեսպանագնացների մասին ասվում է. «ἐπὶ τοῦτο τὸν παρόντα λίζιον τῆς βασιλείας μου τὸν μαΐστρωρα Θεωριανὸν καὶ φιλόσοφον τὴν ὀμετέραν εὐλάβειαν ἢ βασιλεία ἐξαπέστειλε σὺν, ἅμα τῷ καθηγουμένῳ τῆς Ἀρμενικῆς μονῆς τῆς ἐν Φιλιππουπόλει τῷ Ἀτμάνῳ»: *Տե՛ս* PG, t. 133, p. 120B⁹⁻¹⁴:

¹¹⁷ «Ἐγγραφή γὰρ τοῦτο ὁ σύντροφός μου» (**Անդ**, t. 133, p. 248C⁸):

¹¹⁸ *Նման վկայություններ տե՛ս* PG, t. 133, p. 121C¹⁰, 148D⁶, 149C², 164C⁶, 164C⁸, 165A¹², 197D⁷:

¹¹⁹ **Ներսէս Շնորհալի**, ԹԼ, էջ 153:

¹²⁰ Հմմտ. **Լ. Զէքիեան**, Համամիութենական տրամախօսութիւն, էջ 56:

▪ Հայոց կաթողիկոս Ներսես Դ Շնորհալին, որի հետ վիճաբանությունները կազմում են Թեորիանոսի առաջին «Տրամախօսութեան» ողջ բովանդակությունը:

▪ Ասորերեն իմացող մեկը, որը կաթողիկոսի խնդրանքով հայերեն է թարգմանում Գրիգոր Աստվածաբանի «Յաղագս Որդույ, բան երկրորդ» երկրից մի հատված¹²¹:

▪ Գրիգոր եպիսկոպոսը¹²², որն այս բանակցությունների ժամանակ, ըստ Թեորիանոսի, իբրև թե հայտարարում է, որ ինքն ունի բյուզանդացիների դավանանքը¹²³:

▪ Սափիրայի եպիսկոպոս Պետրոսը¹²⁴:

¹²¹ «Ὁ δὲ καθολικὸς προσκαλεσάμενος ἕνα τῶν ἀναγιγνωσκόντων Συριστί» *Տե՛ս* **PG**, t. 133, p.152B₆₋₇; **Ա. Պալճեան**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան, էջ 215): Այս փաստը ենթադրել է տալիս, որ Հռոմիկայի կաթողիկոսարանի հայ հոգևորականների մեջ կային նաև ասորերենի գիտակներ: Չի բացառվում նաև, որ կաթողիկոսը դիմել է ներկա ասորի հոգևորականներից որևէ մեկին: Գրիգոր Աստվածաբանի այս երկի հայերեն թարգմանությունը ծանոթ է հայագիտությանը: *Տե՛ս* Գ. **Զարբհանալեան**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ-ԺԳ) (Վենետիկ, 1889), էջ 347: Հմմտ. **Կ.Մ. Մուրադյան**, Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ (Երևան, 1983), էջ 79:

¹²² «...ἐπίσκοπος Γρηγόριος, ὁ τοῦ ἀγιωτάτου καθολικοῦ ἀνεψιός» (**PG**, t. 133, p. 148D): Հետաքրքիր է, թէ այս դեպքում Ներսեսի արյունակից հարազատներից ո՞ր Գրիգորին նկատի ունի Թեորիանոսը. Տղային, թե՛ Ապիրատին, քանի որ երկուսն էլ Ներսես Շնորհալու ազգականներն էին: Դ. Ալիշանը (**Դ. Ալիշան**, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 421) և Մ. Օրմանեանը (**Մ. Օրմանեան**, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցույ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը, յարակից ազգային պարագաներով պատմուած, հտ. Ա (էջմիածին, 2001), § 976) կարծում են, որ խոսքը հետագայում կաթողիկոս օձված Գրիգոր Դ Տղայի մասին է: Երկրորդ «Տրամախօսութեան» բնագրում Թեորիանոսն ուղղակի գրում է. «...ἀπέστειλε πρὸς ἡμᾶς τὸν ἐπίσκοπον Γρηγόριον τὸν ἀνεψιὸν αὐτοῦ τὸν Μικρὸν» («մեզ մոտ ուղարկեց իր արյունակցին՝ Գրիգոր Փոքր եպիսկոպոսին»): *տե՛ս* **PG**, t. 133, p. 248D₅ և հմմտ. **Ա. Պալճեան**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան, էջ 244): Գրիգորի այս մականունը ևս խոսում է Գրիգոր Տղայի հիշատակության օգտին:

¹²³ «Ἐγὼ Ῥωμάϊός εἰμι» (**PG**, t. 133, p.148D₃):

¹²⁴ «ὁ εὐλαβέστατος ἐπίσκοπος Σαππυρίου» (**Անդ**, t. 133, p. 114D₆ – 149B₁₂): Դժվարանում եմ աշխարհագրորդներն պատկերացնել այս եպիսկոպոսական աթոռի տեղը: Հենվելով Կ. Գալանոսի հիշյալ տեղի թարգմանության վրա՝ Մ. Օրմանյանը ենթադրում է. «Պետրոս եպիսկոպոս Սափիրիայ, հաւանաբար Սաւրիայ, այսինքն է Իսաւրիոյ»: *Տե՛ս* Մ. **Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, § 976: Ավելի ընդունելի տեղագրություն են առաջարկում **TBI** շարքի Ասորիք հատորի հեղինակներ Կ.-Պ. Թոդտը և Բ.Ա. Վեստը (**Kl.-P. Todt, B.A. Vest, Syria, S. 447**), այդ տեղանունը նույնացնելով հայկական սկզբնաղբյուրներից հայտնի Շափիրին կամ Շալփերին տեղանվան (տե՛ս **Հ.Հ. Ոսկեան**, Կիրիկիայի վանքերը (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1957), էջ 265) հետ, որն էլ ավստրիացի գիտնականները տեղադրում են հայկական Սև լեռների Կարմիր վանքի մտատակաչքում: Սև լեռների տեղագրության շուրջ նոր մոտեցման մասին տե՛ս **Ա. Բոզոյան**, «Սև լեռների վանական համալիրներն ըստ հ. Դ. Ալիշանի տեղագրության», Բազմավեպ, 2019 (հանձնված է հրատարակության):

- *Քեսունի եպիսկոպոս Հովհաննես Ասորին*¹²⁵, իր քահանաների հետ¹²⁶;
- *Վարդան վարդապետ*¹²⁷;
- *Ստեփանոս վարդապետ*¹²⁸;
- *Իսահակ եպիսկոպոսը*¹²⁹։

Սրանք են այն բոլոր անձինք, ում հետ իր առաջին դեսպանագնացության ընթացքում շփվել ու վիճաբանել է բյուզանդական մագիստրոս Թեորիանոսը¹³⁰։

Բյուզանդական դեսպանագնացը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև եկեղեցաքաղաքական այս փոխհարաբերություններում աթոռբարձերի բաժանման սկզբունքների մասին։ Ըստ հույն բանագնացի՝ կաթողիկոսի աջ կողմում նստում էին ասորի եպիսկոպոսը և հայ եպիսկոպոսները, իսկ իրենք նստում էին բոլորից հետո, կաթողիկոսի ձախ կողմում, քանի որ քանի որ ամենաառաջին տեղն էր ընծայվում իրենց¹³¹։

¹²⁵ «ὁ ἐπίσκοπος Κεσσουσιού Ἰωάννης ὁ Σύρος»: *Տե՛ս* PG, t. 133, p. 164C8, 172C1): *Ասորական եկեղեցու այս դեսպանագնացի մասին հիշատակում է նաև Միքայել Ասորին: Հմմտ. M.S., t. III, p. 335:*

¹²⁶ «μετὰ τῶν ἱερέων αὐτοῦ»: *Տե՛ս* PG, t. 133, p. 172D3:

¹²⁷ «ὁ διδάσκαλος Βαρταν» (*Անդ*, t. 133, p. 165A11, B1): *Կղեմես Գալանոսի թարգմանության մեջ՝ վարդապետն Վրթանես (տե՛ս Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն Հայոց, էջ 278 և հմմտ. նաև Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, § 976): Այս գործչին հ. Ն.Ակինեանը նույնացրել է Վարդան Հաղպատեցու հետ: Տե՛ս Ն. Ակինեան, Մատենագրական հետազոտություններ. քննութիւն եւ բնագիր, հտ. Ա (Վիեննա, 1922), էջ 59, 68–70:*

¹²⁸ «Στέφανος ὁ διδάσκαλος» (PG, t. 133, p. 172D8, 172D10-180A7): *Ղ.Ալիշանն այս գործչի մասին գրում է. «Ստեփանոս մը՝ որ թուի թարգման և նուիրակ»: Տե՛ս Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 421:*

¹²⁹ «Ὁ εὐλαβέστατος ἐπίσκοπος Ἰσαάκ» (PG, t. 133, p. 180A12): *Ղ. Ալիշանը նրա մասին գրում է. «Սահակ եպիսկոպոս, որ թուի կաթողիկոսի դրան եպիսկոպոսն»: Տե՛ս Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 421:*

¹³⁰ Ղ. Ալիշանը վերոհիշյալ անձնավորությունների թվին թյուրիմացաբար ավելացնում է նաև Թեոդորոս բար Վահրունին. «ուր Միխայել պատրիարքի գիտնական աշակերտն Թէոդորոս ալ եկեր էր» (տե՛ս Անդ): Հունարեն սկզբնաղբյուրից գիտենք, որ Թեոդորոս բար Վահրունը մասնակցել է հայ-բյուզանդական բանակցությունների հաջորդ՝ երկրորդ փուլին: Իմ իմացած սկզբնաղբյուրներից, իբրև հայ-բյուզանդական բանակցությունների առաջին փուլի մասնակից, նրա անունը տալիս է միայն Բար Հեբրեոսի ժամանակագրության համապատասխան հատվածը: Տե՛ս M.S., t. III, p. 335 և հմմտ. Gregorii Barhebraei Chronicon ecclesiasticum, quod e codice musei britannici descriptum conjuncta opera ediderunt, latinitate donarunt annotationibusque theologicis, historicis, geographicis et archæologicis illustrarunt J.B. Abbeles et Th.J. Lamy, t. II (Parisii-Lovanii, 1874), p. 554: *Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն բնագիրը գիտե Թեորիանոսի միայն մեկ դեսպանագնացության մասին տե՛ս Տեսոն Միխայէլի պատրիարքի Ասորոց ժամանակագրութիւն, ի տպ. Սրբոց Յակովբեանց (Յերուսաղէմ, 1870), էջ 460–461, նույնի՝ ժամանակագրութիւն (1871), էջ 459–460):*

¹³¹ «Καὶ μεθ’ ἡμέρας τινάς, μετακλιθέντες, ἀνέβημεν εἰς τὸ ὑπερφῶν, οὗ καὶ πρόην διελεγόμενα. Εὐρόμεν δὲ τὸν Σύρον ἐπίσκοπον ἐν τῷ δεξιῷ μέρει καθήμενον τοῦ Καθολικοῦ, καὶ

Կարելի է նաև որոշել, թե մոտավորապես ե՞րբ է այս դեսպանախումբը հասել Կոստանդնուպոլիս: Ներսես Դ Շնորհալու քիչ առաջ հիշատակված հավատաբանական թուղթը պահպանվել է նաև հունարեն թարգմանությունում¹³²: Հետաքրքիր է նաև, որ հունարեն թարգմանությունը կրում է հայերենից տարբերվող «μηνὶ Δεκεμβρίῳ ἰνδικτιῶνος τετάρτης» (չորրորդ ինդիկտիոնի դեկտեմբերի ամիս) թվականը¹³³: Այս թվագրումը համընկնում է 1170 թ. դեկտեմբեր ամսվա հետ, որը և կարելի է համարել Թեորիանոսի գլխավորած առաջին դեսպանագնացության Կոստանդնուպոլիս հասնելու ամսվան և տարվան, քանի որ թղթի հունարեն տարբերակը համընկնում է Բյուզանդական կայսերական դիվանատանը վավերագրի արձանագրման ժամանակի հետ¹³⁴:

Հայերենով պահպանված կաթողիկոսի թղթի վերջաբան-ամփոփումը կիվար լիակատար, եթե նույն նամակի հունարեն թարգմանությունը վերջում չունենար մեկ պարբերություն ևս, որը չի պահպանվել հայերեն բնագրով¹³⁵: Այդ հատվածում, ինչպես իրավացիորեն նկատել է բյուզանդագետ Հր. Բարթիկյանը, ասվում է, որ նամակն առաքվում է **Վրախամյանների** (τῶν βραχαμίων) միջոցով, որոնք բերում են նաև կայսերն ուղարկված կաթողիկոսի նվերը՝ երեք արաբական ձի և մոսուլյան աղեղներ (τρία Ἀραβικά ἄλογα καὶ τοξάρια μουσουλιτικά)¹³⁶: Այս վկայությունը հայ-բյուզանդական դիվանագիտական թղթակցության միակ տեղեկությունն է, որով կարելի է ենթադրել, թե ինչպիսի նվերներ էին փոխանակում կողմերը: Այս տեսանկյունից ավելի հարուստ նյութեր են պարունակում մահմեդական վավերագրերը, որոնց մասին առանձին բաժին է պատրաստել սույն գրքի հեղինակներից Գ. Դանիելյանը:

Առաջին դեսպանագնացության բանակցությունների գրառված բնագրում մի շարք հատվածներ են բերվում Ներսես Դ Շնորհալու՝ Մանուել Ա Կոմնենոսին ուղղված ինչ-որ թղթից: Մեզ սկզբում թվում էր, թե այդ հատվածները

τοὺς Ἀρμενίους ἐπισκόπος ἕκαστον ἐν τῷ τόπῳ αὐτοῦ. Καθεσθέντων οὖν ἡμῶν ἐν τοῖς ἀριστεροῖς μέρεσι τοῦ Καθολικοῦ, κατὰ τὸ σύνηθες, εἶτα τῶν ἐπισκόπων καθεσθέντων (προετίμων γὰρ ἡμᾶς εἰς τὸ κάθισμα)...»: *Տե՛ս* PG, t. 133, p. 165C *և հմմտ.* **Կղեմէս Գալանոս**, *Միաբանութիւն Հայոց*, էջ 279; **Ա. Պալճեան**, *Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան*, էջ 223):

¹³² *Տե՛ս* PG, t. 133, pp. 211–224 *և հմմտ.* **Ներսէս Շնորհալի**, ԹԸ, էջ 145–153:

¹³³ PG, t. 133, p. 213A.

¹³⁴ *Հմմտ.* **Ա. Բոզոյան**, *Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը*, էջ 54:

¹³⁵ PG, t. 133, p. 224B.

¹³⁶ Այս դեսպանագնացության մասին տեղեկության քննարկումը տե՛ս **Ա. Բոզոյան**, *Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը*, էջ 55–56:

պետք է փնտրել Սմբատի 1166 թ. դեսպանագնացության հետ Կոստանդնուպոլիս ուղարկված թղթում¹³⁷, սակայն պարզվեց, որ դրանք 1165 թ. Ալեքս Աքսուխ դքսին հանձնված ծիսադավանական նամակից են¹³⁸:

Իր առաջին «Տրամախօսութեան» բնագրում Թեորիանոսը բերել է Մանուել Ա Կոմնենոսի 1169 թ. նոյեմբերին գրված թղթի բնագիրը¹³⁹: Թեորիանոսի առաջին դեսպանագնացության հետ Կոստանդնուպոլիս ուղարկված Ներսես Շնորհալու Մանուել Ա-ին ուղղված պաշտոնական թղթի բնագրի հունարեն թարգմանությունը հրատարակված է երկրորդ «Տրամախօսութեան» սկզբում¹⁴⁰: Մեզ չի հասել Հայոց կաթողիկոսի գաղտնի թուղթը, որի մասին խոսվում է Թեորիանոսի «Տրամախօսութեան» բնագրում¹⁴¹:

Գ 5. Թեորիանոսի երկրորդ դեսպանագնացության «Տրամախօսութիւնների» բնագիրը.

Թեորիանոսի գլխավորած երկրորդ դեսպանախումբը Հռոմկա է հասել աշխարհի արարչագործության բյուզանդական ,ՏՃՄՐ՝ (= 6680) թվականին, Մանուել Ա Կոմնենոսի թագավորության 30-րդ, նրա որդի՝ Ալեքս Բ Կոմնենոսի ծննդյան երկրորդ տարվա երրորդ ամսին, հինգերորդ ինդիկտիոնի երկրորդ ամսվա 20-ին¹⁴²: Ամենայն հավանականությամբ երկրորդ դեսպանագնացութ-

¹³⁷ Այս դեսպանագնացության մասին ավելի մանրամասն տե՛ս **Ա. Բողոյան**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 236–242:

¹³⁸ Տե՛ս **Ա. Բողոյան**, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 151–153:

¹³⁹ Հունարեն բնագրի հրատարակությունը տե՛ս **PG**, t. 133, p. 120–121: ՊևՄ-ի բնագրում մեզ հասած այս վավերագիրն ազատ թարգմանություն է, ուր տեղ-տեղ էական շեղումներ կան հունարեն բնագրի իմաստից: Տե՛ս **Ներսէս Շնորհալի**, ԹԸ, էջ 144–145):

¹⁴⁰ Տե՛ս **Անդր**, էջ 145–153 և հմմտ. **PG**, t. 133, p. 212–224: Այս վավերագրերի երկու (հայերեն և հունարեն) բնագրերի հիմնական տարբերության մասին տե՛ս նաև **Ա. Բողոյան**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 244–245:

¹⁴¹ **PG**, t. 133, p. 248C1–4.

¹⁴² **Անդր**, t. 133, p. 232–233: Աշխարհի արարչագործության բյուզանդական 6680 թ. համապատասխանում է Քրիստոսից հետո 1171 թ. սեպտեմբերի 1 – 1172 թ. օգոստոսի 31 ժամանակահատվածին: Մանուել Ա Կոմնենոսի իշխանության 30-րդ տարին համապատասխանում է 1172/3 թվականին, Ալեքս Բ Կոմնենոսը, ըստ բյուզանդագետ Պ. Վիրտի, ծնվել է 1169 թ. սեպտեմբերի 14-ին (տե՛ս **P. Wirth**, “Wann wurde Kaiser Alexios II Komnenos geboren?”, BZ, Bd. 49 (1956), S. 65–67), թեպետ Կոստանդին Բարձոսն Ալեքս Բ-ի ծննդյան թվականը դեռևս ճշտված չի համարում և գրականության ու սկզբնաղբյուրների վրա հենվելով կայսեր ծնունդը թվագրում է 1169 կամ 1168 թ. սեպտեմբերի 14-ով: Տե՛ս **K. Βάρζος**, *Ἡ γενεαλογία τῶν Κομνηνῶν*, p. 456: Բյուզանդական մանր ժամանակագրություններում Ալեքս Բ-ի ծննդյան ամսաթիվ է համարվում

յունն իր նպատակակետ՝ Հռոմկլա բերդաքաղաքին է հասել 1171 թ. հոկտեմբերի 20-ին: Այս այցելությունն ժամանակ բյուզանդական աստվածաբանը Հռոմկլա է բերել չորս փաստաթուղթ: Դրանցից առաջինը Ներսես Դ Շնորհալու մեզ չհասած գաղտնի թղթի պատասխան՝ Մանուել Ա Կոմնենոսի գաղտնի թուղթն է¹⁴³, որը թվագրված է չորրորդ ինդիքտիոնի միլենույն ամսով (Τῶ μηνὶ αὐτῷ ἰνδ. δ´): Այժմ անհնար է ճշտել այս նամակի գրման ստույգ ամսաթիվը¹⁴⁴: Ըստ հ. Լևոն Զեքիեանի փաստաթուղթը գրված պետք է լինի 1171 թ. օգոստոսի 31-ից առաջ: Թեորիանոսի երկրորդ «Տրամախօսութեան» մէջ պահպանվել է նաև Մանուել Ա Կոմնենոսի պաշտոնական նամակի ընդօրինակությունը¹⁴⁵: Ափսոս, սակայն, որ հունարեն բնագրի թղթառաջը և թղթավարտը բացակայում են: Դրանք կարող են լրացվել միայն ՊԽՄ-ում պահպանված հայերեն թարգմանությունում, որը կրում է թուղթը Հռոմկլայի կաթողիկոսական նոտարատանը արձանագրվելու թվականը. «Գրեցաւ յամսեանն Դեկտեմբերի, յԸնդիքտիոնին ի հինգն»¹⁴⁶: Նշանակում է, այս վավերագիրը Հռոմկլայում թարգմանվել է կաթողիկոսական նոտարատուն է մտել 1171 թ. դեկտեմբեր ամսին¹⁴⁷: Թղթի հայերեն թարգմանությունում պահպանված թղթառաջը գրեթե բառացիորեն կրկնում է կայսեր գաղտնի նամակի թղթառաջը՝ միայն մեկ էական շեղումով. հայերեն թարգմանության մեջ բացակայում է ազոստոս - αὐγούστος պատվանունը, որը թարգմանչի կամ նոտարատան գրչի անփութության հետևանքով հավանաբար ընկել է բնագրից:

Հաջորդ վավերագիրը, որը պահպանվել է Թեորիանոսի երկրորդ «Տրամախօսութեան» բնագրում, Միքայել Գ Անքիալոս պատրիարքի նամակն է,

սեպտեմբերի 10-ը: Տե՛ս P. Schreiner, *Die byzantinischen Kleinchroniken*, Teil 1, S. 146 և նույնի՝ *Die byzantinischen Kleinchroniken*, 2 Teil, S. 171–172:

Հինգերորդ ինդիկտիոնի երկրորդ ամսվա 20-ը համընկնում է 1171 թ. հոկտեմբերի 20-ին (տոմարական այս հաշվումները հմմտ. Լ. Զեքիեան, Համամիութենական տրամախօսութիւն, էջ 15, 56–57):

Վերոբերյալ բոլոր տոմարական հաշվարկներն համապատասխանում են միմյանց, բացի Մանուել Ա Կոմնենոսի իշխանության 30-րդ տարվանից, որը հավանաբար գրիչների կամ Թեորիանոսի սխալ հաշվարկի հետևանք է:

¹⁴³ Նշված երկու գաղափար անվանված վավերագրերի հայերեն բնագրերը մեզ չեն հասել: Հունարենով չի պահպանվել նաև Ներսես Շնորհալու գաղտնի թղթի բնագիրը. տե՛ս PG, t. 133, pp. 233–236, հմմտ. Ա. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան, էջ 237–238:

¹⁴⁴ Վ. Գրյունելը և նրան հետևելով Լ. Զեքիեանը ենթադրում են, որ «միլենույն ամիսը» բացատրությունը վերաբերում է պաշտոնական նամակի թվագրությանը, որը մեզ հասած վավերագրերում չի պահպանվել: Տե՛ս V. Grumel, *La Chronologie*, p. 153 և հմմտ. Զեքիեան, Համամիութենական տրամախօսութիւն, էջ 56:

¹⁴⁵ Տե՛ս PG, t. 133, p. 236, հմմտ. Ներսէս Շնորհալի, ԹԸ, էջ 154–156:

¹⁴⁶ Ներսէս Շնորհալի, ԹԸ, էջ 156:

¹⁴⁷ Լ. Զեքիեան, Համամիութենական տրամախօսութիւն, էջ 156:

ուղղված Հայոց կաթողիկոսին¹⁴⁸: «Տրամախօսութեան» մեջ այն մտել է առանց թղթառաջք բանաձևի: Այս բանաձևը պահպանվել է միայն հայերեն տարբերակով:

Թեորիանոսի երկրորդ «Տրամախալսութեան» բնագրում պահպանվել է ևս մեկ վավերագիր՝ Բյուզանդական եկեղեցու անունից Մանուել Ա Կոմնենոսի ուղարկած ինն պահանջները¹⁴⁹:

Այսպիսով, Թեորիանոսի երկու «Տրամախօսութիւններ»-ում, հունարեն լեզվով պահպանվել են կայսերական նոտարատնից ելած՝ 1165–1178 թթ. հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների հետևյալ վավերագրերի բնագրերը.

- հատվածներ 1165 թ. Ալեքս Աքսուլսին հասցեագրված թղթից¹⁵⁰,
- 1169 թ. նոյեմբերին գրված Մանուել Ա Կոմնենոսի նամակը՝ ուղղված Հայոց կաթողիկոս Ներսես Դ Շնորհալուն, որը մեզ է հասել նաև հայերեն թարգմանությամբ¹⁵¹,
- 1170 թ. հոկտեմբերին Ներսես Դ Շնորհալու գրած թղթի հունարեն թարգմանությունը¹⁵²,
- 1171 թ. ամռանը կայսեր անունից Կ. Պոլսի պատրիարզի գրած նամակը¹⁵³,
- Մանուել Ա Կոմնենոսի գաղտնի թուղթը՝ գրված հավանաբար 1171 թ. ամռանը¹⁵⁴,
- Նույն թվականին գրված կայսեր պաշտոնական նամակը, որն ունի նաև կաթողիկոսական նոտարատանը կատարված հայերեն թարգմանություն¹⁵⁵,
- Նույն ժամանակ գրված Միքայել Գ Անքիալոս Կ. Պոլսի պատրիարքի նամակն ուղղված Ներսես Դ Շնորհալուն: Այս նամակը ևս հայերեն թարգմանությամբ պահպանվել է ՊԽՄ ժողովածոյում¹⁵⁶,

¹⁴⁸ Տե՛ս **ՊԳ**, t. 133, p. 236–240: Այս նամակի հայերեն թարգմանությունը տեղ է գտել նաև ՊԽՄ ժողովածոյի մեջ: Տե՛ս **Ներսէս Շնորհալի**, ԹԸ, էջ 157–159:

¹⁴⁹ Տե՛ս **ՊԳ**, t. 133, p. 269 և հմմտ. **Ներսէս Շնորհալի**, ԹԸ, էջ 156–157: Հունարեն բնագիրը կետերի բաժանված չէ: Հայերեն բնագրում ըստ հերթականության Ե և Ձ կետերի տեղերը փոխված են:

¹⁵⁰ Տե՛ս **Ա. Բողոյան**, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 34–38, № 2:

¹⁵¹ **Անդ**, էջ 45–50, № 7:

¹⁵² **Անդ**, էջ 50–54, № 8:

¹⁵³ **Անդ**, էջ 56–57, № 10:

¹⁵⁴ **Անդ**, էջ 57–59, № 11:

¹⁵⁵ **Անդ**, էջ 60–63, № 12:

¹⁵⁶ **Անդ**, էջ 63–65, N 13:

▪ Բյուզանդական կայսրության կողմից Հայոց եկեղեցուն ներկայացրած ծիսադավանական ինն պահանջները, որոնք պահպանվել են նաև հայերեն բառացի թարգմանությամբ¹⁵⁷ :

*
* * *

Թեորիանոսի առաջին «Տրամախօսութեան» (Διαλέξις) բնագիրը վաղուց ի վեր գրավել է կաթողիկե եկեղեցու ներկայացուցիչների ուշադրությունը¹⁵⁸ : Նախ՝ Թեորիանոսի առաջին «Տրամախօսութեան» բնագիրը հայերեն է թարգմանել թեաթինյան քարոզիչ Կղեմես Գալանոսը¹⁵⁹ : Այս թարգմանությունը կարելի է գտնել նաև հատվածական ձեռագրական ընդօրինակությամբ¹⁶⁰ : ՄՄ 912 մատյանն ընդօրինակվել է Կոստանդնուպոլսում, Ստեփանոս Ղուկասյան գրչի կողմից¹⁶¹ , հայոց եկեղեցու սպասավոր Իսահակ Գեղամացի վարդապետի պատվերով: Ձեռագրին կցված է առաջաբան, ուր բյուզանդական փիլիսոփան մեղադրվում է կեղծարարության մեջ¹⁶² : Առաջաբանի

¹⁵⁷ Անդ, էջ 65–66, № 14:

¹⁵⁸ Հունարեն բնագրի և լատիներեն թարգմանության հրատարակությունների մատենագիտությունը տե՛ս Լ. Զէքիեան, Համամիութենական տրամախօսութիւն, էջ 11–12, ծան 5:

¹⁵⁹ Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն Հայոց, էջ 242–322:

¹⁶⁰ Գալանոսի երկից համապատասխան հատվածն ընդօրինակված է Երուսաղեմի Ս. Յակոբեանց մատենադարան (այսուհետ՝ **ԵՅՄ**), թ. 858 (1677–1679 թթ.), Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետ՝ **ՄՄ**) թ. 1784 (Ժէ դար), **ՄՄ 664** (1723 թ.), **ԵՅՄ 641** (1779 թ.), Ջմառի մատենադարան, թ. 156, **ՄՄ 8044** (1780 թ.), **ՄՄ 912** (1784/5 թ.): Լ. Զէքիեանին հայտնի են այս ձեռագրերից միայն երկուսը: Տե՛ս Լ. Զէքիեան, Համամիութենական տրամախօսութիւն, էջ 12, ծան. 5: Ինչպես տեսնում ենք, Թեորիանոսի «Տրամախօսութիւն»ների բնագիրն առաջին անգամ հայերեն ձեռագրերում ընդօրինակվել է Կղեմես Գալանոսի երկի հրատարակությունից քսանյոթ տարի հետո: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ մեր ձեռքի տակ եղած ձեռագրերից և ոչ մեկում չի հիշատակվում թարգմանության հեղինակը. «Թարգմանեալ եղեւ ի հելլենական լեզուէ ի հայկական բարբառ, յումեմնէ բանասիրէ, Յամի տեառն 1648. մայիսի Ժէ»: Թվականը հուշում է միայն Գալանոսի գրքի հրատարակության տարեթիվը:

¹⁶¹ Այս նույն գրչի գործունեության արգասիքն է նաև **ԵՅՄ 641** մատյանը: Այս երկու ձեռագրերում Թեորիանոսի առաջին «Տրամախօսութեան» բնագրի հետ միասին ընդօրինակվել են Ներսես Շնորհալու Թուղթ ընդհանրականը, Պետրոս Ժողովածուն և ԺԲ դարի մի շարք թղթեր:

¹⁶² Թեորիանոսի Տրամախօսության դեմ գրված սույն առաջաբանը հեղեղված է «լի է ստութեամբ», «սուտ է ուրեմն», «ստաբան Թէորիանէ» և նմանաբնույթ այլ արտահայտություններով: Իսահակ Գեղամացին մեղադրում է Թեորիանոսին հիմնականում երկու անճշտության մեջ.

ա/ «...գիրս (Տրամախօսութեան մեջ – Ա.Բ.) մերձ ի վախճանսն և յայլ հարցմունսն ասէ զարքոյն Ներսիսէ՝ թէ հաւանեցաւ բանիցս և վկայութեանցսն, և յանձն էառ երկու բնութիւն ասել ի Քրիստոս՝ յետ անճառ միաւորութեանն, յայտնապէս սուտ ասէ զնմանէ և զբաբանէ: Քանզի բանք և դաւանութիւնք և թուղթք նորին որք յայսմ գրքոջ և յայլ գիրս իւր զնոյն ցուցանէ

հեղինակը, ամենայն հավանականությամբ, Իսահակ Գեղամացի վարդապետն է¹⁶³։ Այդ է վկայում առաջաբանի հետևյալ հատվածը. «Եւ վասն այսպիսոյ ստույթեան բանից նորին, այն էր թէպէտ վայելուչ զի այրէի զանկեալն ի ձեռս՝ քան թէ սատանայի, այլ զի բազումք ունին զսա ի մերազնեաց հերձուածողաց, զոր իբրև զբան ճշմարիտ զսուտն զայն կարծելով՝ պաշքարին ընդ մեզ նովաւ, որով և զպարզամիտսն մեր խաբին։ Վասն որոյ հարկաւոր գիտացի զսա ունիցին, ընթերցեալ գիտասցուք զի՞նչ ժայթքեալն ի նմանէ, և ըստ այնմ զքարինս Աստուածայնոց բանից պատրաստեալ՝ ըստ Դաւթի ճակատս նմանեացն Գողիթու, նախատողացն զժողովս մեր ուղղափառ և միաբնադաւան»¹⁶⁴։ Իսահակ Գեղամացին ընդօրինակել է տվել այս ձեռագիր ժողովածուն՝ ցույց տալու համար Ներսես Շնորհալու մասին Թեորիանոսի վկայությունների եղծվածությունը. «Քանզի բանք և դաւանութիւնք և թուղթք նորին որք յայսմ գրքոջ և յայլ գիրս իւր, որ զնոյն ցուցանեն, զոր նա ստույթեամբ գրէ. այլ մանաւանդ ներհակն նմին»¹⁶⁵։

Իսահակ Գեղամացու և ընդհանրապես ժԸ դարի Հայոց եկեղեցու և հասարակական տարբեր հոսանքների շահագրգռությունների տեսանկյունից չափազանց կարևոր է նաև պատվիրատուի հիշատակարանը, որտեղ հեղինակն ավելի է կոնկրետացնում, թե ինչու է իրեն պետք հենց այս գրությունը. «զի բազումք ի մերազնեայ հերձուածողաց, որք կոչին Ախթարմայք, ստացեալ են զսա, և շարամտութեամբ ծեքեն և թիւրեն ըստ ախորժակաց իւրեանց զբանս և զդաւանութիւնս երանելոյն Ներսիսի Կլայեցոյ»¹⁶⁶։

Փաստորեն այս մատյանը Թեորիանոսի և ՊԽՄ-ի վավերագրերի բնագրերի ուսումնասիրության առաջին փորձն է հայ բանասիրության մեջ։

զոր նա ստույթեամբ գրէ, զի ոչ ուրէք ի բանս սրբոյն գտանի ինչ այնպիսի ասացեալ, այլ մանաւանդ ներհակն նմին» (ՄՄ 912, թղ. 185ա)։

բ/ «Տէս ահա, զի Միխայէլ (իմա՛ Ասորի – Ա.Բ.) պատրիարքն գրէ թէ խօսեցաւ ընդ նմա աշակերտն իմ, և պապանձեցոյց, նա (իմմա՛ Թեորիանոսը – Ա.Բ.) գրեթէ Ասորոց եպիսկոպոսն ոչ ինչ խօսեցաւ։ Ահա յայտնի ստույթիւն երևի անուանեալ իմաստնոյն» (ՄՄ 912, թղ. 185թ.)։ Նկատելի է, որ ժԸ դարի հեղինակն Թեորիանոսի տեղեկությունները համեմատում է իրեն հայտնի մյուս մատենագրական երկերի՝ տվյալ դեպքում Միքայել Ասորու ժամանակագրութեան հայերեն թարգմանության հետ։

¹⁶³ Հեղինակը հիշատակվում է **G. Bardakjian**, *A Reference Guide to Modern Armenian Literature*, 1500–1920, with an Introductory History (Detroit: Wayne State University Press, 2000), p. 91 գրքում։

¹⁶⁴ ՄՄ 912, թղ. 185բ։

¹⁶⁵ ՄՄ 912, թղ. 185ա։

¹⁶⁶ ՄՄ 912։

Գ 6. Միութենական բանակցությունների մասնակիցներն ու վավերագրերի թարգմանիչները.

ԺԲ դարի երկրորդ կեսի տարբեր քրիստոնեական եկեղեցիների միջև տեղի ունեցող բանակցությունների մեջ առանձնանում են 1165–1178 թթ. հայբյուզանդական երկկողմ փոխհարաբերությունները: Նույն ժամանակաշրջանում բյուզանդական արքունիքը և եկեղեցին երբեմն առանձին-առանձին բանակցում էին Հռոմի պապական¹⁶⁷ և հակոբիկ-ասորական¹⁶⁸ եկեղեցիների հոգևոր առաջնորդների հետ, սակայն Կոստանդնուպոլսի կայսրն ու պատրիարքը ջանում էին չմիահյուսել բոլոր այս երկխոսությունները: Նման դիրքը բխում էր Բյուզանդական կայսրության ներքին և արտաքին քաղաքականության էությունից ու շահերից. Կոստանդնուպոլսի հոգևոր և քաղաքական գործիչները ոչ թե փորձում էին միասնություն ստեղծել քրիստոնեական եկեղեցիների և պետությունների գործողություններում և հոգևոր կյանքում, այլ հնարավորության սահմաններում նրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին կլանել կամ օգտագործել կայսրության արտաքին և ներքին քաղաքական ծրագրերում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր եկեղեցաքաղաքական կազմակերպության հետ Կոստանդնուպոլսում մշակվում էր երկխոսության և հարցերի բարձրացման յուրօրինակ մեխանիզմ:

Ինչ վերաբերում է Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ փոխհարաբերություններին, ապա բյուզանդական կայսրության հիմնական նպատակն էր թույլ չտալ պապական եկեղեցու հզորացումը, փոխադարձ դաշնակցային փոխհարաբերություններ ստեղծել այդ հոգևոր կազմակերպության հետ, հարուցած դավանաբանական վեճերն օգտագործել՝ կասեցնելու համար կաթոլիկ եկեղեցու օրավուր աճող միջազգային հեղինակությունը, պահպանել Բյուզանդական կայսերական եկեղեցու դիրքերը ստեղծված քաղաքական իրադրության պայմաններում:

Եկեղեցաքաղաքական հակամետ ծրագրերի և նպատակների ոգեկոչող էր Հռոմի պապական եկեղեցին, որը ուղղություն էր տալիս արևմտաեվրոպական երկրների քաղաքական և գաղափարախոսական նկրտումներին, մշակում և օրհնում էր խաչակրաց ռազմարշավների մեկը մյուսից նվաճողական և

¹⁶⁷ Տե՛ս F. Chalandon, *Jean II Comnène*, p. 652–653; Dölger, *RKOR*, Teil I., S. 81, Nr. 1480, S. 86, Nr. 1520, S. 87, Nr. 1533; *RAPC*, Teil II., p. 548–549, Nr. 1121, 1122, p. 552–553, Nr. 1125a; J. Spiteris, *La critica Byzantina*:

¹⁶⁸ Հակոբիկ-ասորական եկեղեցու հետ Բյուզանդական կայսրության ժԲ դարի 60–70-ական թթ. փոխհարաբերությունների մասին տե՛ս M.S., t. III, p. 334–336, *PG*, t. 133, p. 280–298, հմմտ. F. Chalandon, *Jean II Comnène*, p. 657; Fr. Dölger, *RKOR*, Teil. I, S. 82, Nr. 1487, 1490, S. 84–85, Nr. 1507, 1508:

արկածախնդիր ծրագրերը: Կաթոլիկ եկեղեցին համակողմանի հարձակում էր սկսել ոչ միայն քաղաքականության, այլ նաև դավանաբանության ոլորտում¹⁶⁹, հիմնական թիրախ ունենալով իր ճանապարհին կանգնած Բյուզանդական պետությունը և օրթոդոքս եկեղեցու վարդապետությունը: Քրիստոնեական եկեղեցու մյուս ինքնագլուխ աթոռների հետ փոխհարաբերություններում Հռոմի պապական եկեղեցին փորձում էր հասնել, իր առջև դրված հետևյալ խնդիրների իրագործմանը.

- խթանել կաթոլիկ եկեղեցու հեղինակության հետագա աճը,
- դավանական վեճերն օգտագործել՝ գցելու համար Կոստանդնուպոլսի եկեղեցու միջազգային հեղինակությունը,
- վերանայել միջազգային եկեղեցաքաղաքական փոխհարաբերություններում դարերի ընթացքում ստեղծված կարգավիճակը, ուժերի հաշվեկշիռը փոխել կաթոլիկ եկեղեցու օգտին¹⁷⁰. Բյուզանդական եկեղեցու հետ դաշնակցել, իրեն վերապահելով մեծ եղբոր իրավունքը:

Ամբողջովին այլ բնույթ ունեն ղ բյուզանդական եկեղեցու փոխհարաբերությունները հակոբիկ-ասորական եկեղեցու հոգևոր առաջնորդների հետ: Ինչպես հայտնի է, ի սկզբանե չստեղծվեց միասնական ասորական ազգային եկեղեցի, քանի որ այն սկսած Ե դարից տրոհվեց մի քանի ինքնիշխան կազմակերպությունների: ԺԲ դարում հյուսիսային Ասորիքի ասորական շորս եկեղեցիներից երկուսը՝ մարոնի և մելքիտ, իրենց եկեղեցական կարգերով կամաց-կամաց ձուլվում էին և շարունակում էին սերտաճել Հռոմի պապական և Կոստանդնուպոլսի օրթոդոքս եկեղեցիների կառուցվածքի մեջ¹⁷¹: Նեստորական եկեղեցին հակոբիկ և մյուս բոլոր քրիստոնեական համայնքների կողմից շարունակվում էր աղանդ դիտվել և մերժվել միջազգային եկեղեցա-

¹⁶⁹ Այդ մասին են վկայում. «Հայր իմ մեծ է քան զիս» (ὁ πατήρ μου μείζων μου ἐστίν) ավետարանական հատվածի (Յովհ. ԺԳ, 28) շուրջ ծավալված վեճերը, որոնց գագաթնակետն էր 1166–1167 թթ. Կոստանդնուպոլսի եկեղեցական ժողովը և 1170 թ. բանակցությունները Հռոմում: Տե՛ս **F. Chalandon**, *Jean II Comnène*, p. 567; **H.-G. Beck**, *Kirche und theologische Litteratur*, S. 342–343, 622–629; **P. Classen**, “Das Konzil von Konstantinopel 1166 und die Lateiner”, *BZ*, Bd. 48 (1955), H. 2, S. 338–368:

¹⁷⁰ Բյուզանդական կայսրության և Հռոմի պապության քաղաքական հակամարտության մասին ավելի հանգամանորեն տե՛ս **W. Norden**, *Das Papstum und Byzanz. Die Trennung der beiden Mächte und das Problem ihrer Wiedervereinigung bis Untergang des byzantinischen Reichs* (1453) (Berlin, 1903), S. 89–102:

¹⁷¹ Այդ մասին տե՛ս **A. Baumstark**, *Geschichte der syrischen Literatur mit Ausschluß der christlich-palästinische Texte* (Bonn, 1922), S. 335–336: Քրիստոնյա Արևելքի գրականության մասին տե՛ս նաև **M. Albert**, **R. Beylot**, **R.-G. Coquin**, **B. Outtier**, **Ch. Renoux**, *Christianismes Orientaux: Introduction à l'étude des langues et littératures*, Introduction par A. Guillaumont (Paris, 1993), p. 297–372 և այս գրքի մասին տես իմ գրախոսությունը՝ ՊԲՀ 1 (1995), էջ 239–243:

քաղաքական փոխհարաբերություններում հավասարազոր դաշնակից լինելով իրավունքից: Ուստի սեփական հոգևոր և քաղաքական գործունեությունը ստիպված էր ծավալել հիմնականում Միջագետքում, Միջին, Կենտրոնական և Հեռավոր Ասիայի երկրներում, իր ծաղկման գագաթնակետին հասնելով մոնղոլների տիրապետության ժամանակաշրջանում: Մերձավոր Արևելքում, Ասորիքում և Կիլիկիայում իր դիրքերը դեռևս քիչ թե շատ կայուն էր պահում միայն հակոբիկ-ասորական եկեղեցին, որը փոխհարաբերությունների մեջ էր մտնում այդ տարածաշրջանում գործող մյուս ժողովուրդների եկեղեցաքաղաքական կազմակերպությունների հետ ու փորձում պահպանել իր եկեղեցական կազմակերպության ունեցվածքը և ապահովել սեփական վարդապետության քարոզը երկրամասում: Բյուզանդական կայսրությունն ու եկեղեցին հակոբիկ եկեղեցու հետ փոխհարաբերություններում ձգտում էր դաշնակցային կապեր հաստատել, ապահովել հակոբիկ եկեղեցու չեզոքությունը Մերձավոր Արևելքում՝ բյուզանդական և տարածաշրջանում գործող մյուս եկեղեցիների միջև ծավալված փոխհարաբերություններում, աջակցություն գտնել թշնամի ուժերի դեմ քաղաքական բախումների ընթացքում, կայսրության շահերի համար օգտագործել հակոբիկ եկեղեցու առաջնորդների փոխհարաբերությունները և կապերը մահմեդական Մերձավոր Արևելքի քաղաքական առաջնորդների հետ¹⁷²:

Բյուզանդական կայսրության հետ Հայոց եկեղեցու փոխհարաբերությունները շոշափում էին երկու ինքնանկախ կազմակերպությունների եկեղեցաքաղաքական թե՛ արտաքին, և թե՛ ներքին շահերը: Բյուզանդական կայսրությունը դեռևս իր տարածքի անքակտելի մասն էր համարում Փոքր Ասիան, Հյուսիսասյին Ասորիքը, Կիլիկիան և Կիպրոսը, նշված տարածաշրջան էր ուղարկում հոգևոր առաջնորդներ, պաշտոնական դիտորդներ, զինվորական հարամանատարներ և կառավարիչներ¹⁷³: Կայսրությունը Սելջուկյան և Մերձավոր Արևելքի մյուս մուսուլմանական և քրիստոնեական պետությունների և իշխանությունների հետ փոխհարաբերություններում մեծ նշանակություն էր տալիս այդ տարածաշրջանում ապրող հայկական բնակչությանը, իսկ Բալկաններում ազգամիջյան և միջեկեղեցական փոխհարաբերությ-

¹⁷² P. Kawerau, *Die jakobitische Kirche im Zeitalter der syrischen Renaissance* (Berlin, 1960), S. 90–98.

¹⁷³ Բյուզանդական կայսրության քաղաքական ձգտումների մասին տե՛ս Ա. Բոզոյան, *Բյուզանդական արևելյան քաղաքականությունը*, էջ 190–217:

յուններ կառուցելիս ստիպված էր հաշվի նստել Փիլիպոսպոլսի և նրա մերձակայքի հայ ազգաբնակչության հետ¹⁷⁴: Այդ իսկ պատճառով, Բյուզանդական կայսրության արտաքին-քաղաքական ծրագրերում ԺԲ դարի 60-ական թվականներին հայտնվեց Կոստանդնուպոլսի օրթոդոքս և Հայոց Առաքելական եկեղեցիների միջև միություն հաստատելու ծրագիրը:

Իհարկե, Հայոց կաթողիկոսները գիտակցում էին նաև այդ ճանապարհը խոչընդոտող դժվարությունները և այն զիջումները, որ ստիպված կլինեին կատարել դավանաբանության և եկեղեցական կազմակերպության կառավարման բնագավառում:

Հայոց եկեղեցու հետ վարվող երկկողմանի բանակցությունների արդյունքներից անկասկած փորձում էր օգտվել նաև Բյուզանդական կողմը, որն իր շահերն ու հետևալ քաղաքական նկրտումներն ուներ.

- միության խնդրի քողի ներքո հետզհետե իրեն ենթարկել Բյուզանդական կայսրության տարածքի վրա գործող բոլոր հայկական եկեղեցական թեմերը,

- վերացնելով երկու քրիստոնեական եկեղեցիներն անջրպետող ծիսադավանական տարբերությունները, հայերի զինական ուժերը և տնտեսական հնարավորությունները անմնացորդ օգտագործել սեփական ներքին և արտաքին քաղաքական ծրագրերում,

- ապագայում՝ Կոստանդնուպոլսի օրթոդոքս եկեղեցու կառուցվածքի մեջ ամբողջովին ձուլել հայկական եկեղեցական ողջ կազմակերպությունը,

- խաչակրաց իշխանությունների և մահմեդական տերությունների դեմ մղվող պատերազմներում ավելի լիարժեք օգտագործել հայկական զինական ուժերը,

- հայոց եկեղեցու հետ դաշինքն հակադրել Մերձավոր Արևելքում գյուլիս բարձրացրած Հռոմի պապական եկեղեցու նվաճողական քաղաքականությունը:

Բանակցությունների սկզբում Բյուզանդական կայսրության կողմից պարտադրվող պայմաններից շատերը երկխոսության ընթացքում և քաղաքական իրադրության փոփոխության հետևանքով դուրս եկան շրջանառությունից ու եկեղեցական բանակցությունների նյութ լինելուց. օրթոդոքս բյուզանդական եկեղեցու բռնած դիրքի մեջ հսկայական նշանակություն

¹⁷⁴ Փիլիպոսպոլսի և նրա շրջակայքի հայ ազգաբնակչության մասին տե՛ս Ա. Բողոյեան, Փիլիպոսպոլսի հայկական բնակչությունը եւ հայ-բիւզանդական եկեղեցաքաղաքական փոխհարաբերութիւնները ԺԲ դարի երկրորդ կէսին», էջեր Հայ գաղթավայրերի պատմութեան, խմբագրութեամբ՝ Վ.Բ. Բարխուդարեան, Զ. Նկաւեան (Երեւան, 1996), էջ 68 և հտե.:

ունեցավ Միրիոկեֆալոնի ճակատամարտում Մանուել Ա Կոմնենոսի պարտությունը (1176 թ. սեպտեմբեր): Բյուզանդական կողմը, ելնելով ուժերի իրական հարաբերակցությունից, հետզհետե հրաժարվեց Հայոց եկեղեցուն մինչ այդ ներկայացրած գրեթե իր բոլոր հիմնական պահանջներից, չափազանց թույլ կերպով պարտադրելով ընդունել «երկու բնութիւն» դավանական բանաձևի ուղղափառությունը: Միաժամանակ, կայսրը և պատրիարքը գնացին մի շատ կարևոր և էական զիջման. 1176 թ. Կոստանդնուպոլսի եկեղեցական ժողովում (որին մասնակցում էին օրթոդոքս եկեղեցու 20 բարձրաստիճան հոգևորական) ընդունված և Հռոմկլա ուղարկված իրենց պաշտոնական թղթում հաստատեցին, որ Հայոց եկեղեցու դավանանքը եղել ու մնում է ուղղափառ, գրելով. «ծանեաք զՁեր ուղղափառութիւնդ»¹⁷⁵:

Հայոց եկեղեցու հոգևոր առաջնորդները, սակայն եկեղեցիների միություն բանակցությունները պատկերացնում էին այլ կերպ, քան դրանք կազմակերպում և ծարագրավորում էր Բյուզանդական կայսրությունը: Ներսես Շնորհալին իր թղթերից մեկում նույնիսկ ակնարկում է, որ ինքը սեփական նախաձեռնությամբ բանակցություններ է սկսել հակոբեիկ-ասորական եկեղեցու նորընտիր պատրիարք Միքայել Ասորու հետ և ինչ-ինչ լրատուներից գիտե, որ Բյուզանդական եկեղեցին բանակցություններ է վարում Հռոմի պապական եկեղեցու հետ¹⁷⁶: Այնուամենայնիվ, Հայոց եկեղեցուն չհաջողվեց երկու (բյուզանդական և հայոց) եկեղեցիների միութենական շարժումը վերածել միջազգային համամիութենական շարժման¹⁷⁷:

Սկզբնաղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ բյուզանդական կողմը նախընտրում էր հայերի, ասորիների և լատինների հետ բանակցել առանձին-առանձին: Այդ մասին են վկայում Թեոփրանոսի երկրորդ դեսպանագնացությունից վերջին մասը և Միքայել Ասորի պատրիարքի և Բար Հեբրեոս մափրիանի

¹⁷⁵ Ներսես Շնորհալի, ԹԸ, էջ 177:

¹⁷⁶ Ա. Բողոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 40–43:

¹⁷⁷ Շարժման «համամիութենական» որակումը պատկանում է հ. Լևոն Զեքիեանին: Տե՛ս Լ. Զեքիեան, Համամիութենական տրամախօսություն, էջ 5 և հմմտ. նաև Լ. Zekiyan, “St. Nersès Shnorhali en dialogue avec les Grecs: un prophète de l’oecumenisme au XII^e siècle”, *Études Arméniennes in memoriam Haiğ Berberian* (Lisboa, 1986), p. 861: Միայն Ներսես Դ Շնորհալի և Գրիգոր Դ Տղա կաթողիկոսների նման ակնկալիքներով կարելի է բացատրել նաև այն պարագան, որ երբ Հռոմկլայում հայտնվում էին բյուզանդական դեսպանագնացները, շուտով այնտեղ էին ժամանում նաև հակոբեիկ ասորական եկեղեցու ներկայացուցիչները, որոնք, փաստորեն, Հայոց կաթողիկոսարանի հյուրերն էին, հակոբեիկ պատրիարքի գիտորդները:

ժամանակագրությունների մեջ պահպանված վկայությունները¹⁷⁸, բյուզանդական և լատին մատենագրությունների մեջ այս խնդիրը լուսաբանող երկերն ու վավերագրերը¹⁷⁹։

Նկատի ունենալով վերոբերյալ փաստարկները, 1165–1178 թթ. հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական բանակցությունները պետք է դիտել որպես երկկողմ փոխհարաբերություններ, որոնք տեղի են ունեցել բյուզանդական օրթոդոքս եկեղեցու և կայսեր, մյուս կողմից՝ Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանի, մասնավորապես հայրապետների միջև։

Իսկ ինչ վերաբերում է ԺԲ դարի հայ-բյուզանդական եկեղեցական միություն բանակցությունների մասնակիցներին, ապա պետք է նշել, որ դրանց ընթացքին տարբեր մակարդակներում մասնակցում և իրենց անմիջական միջամտություն էին ցույց տալիս Բյուզանդիայի քաղաքական գործիչները, օրթոդոքս եկեղեցու պաշտոնյաները, Հռոմկլայի կաթողիկոսարանի և Հայոց եկեղեցու այլ թեմերի հոգևորականները, աշխարհիկ պաշտոնյաները, հակոբիկ-ասորական եկեղեցու ներկայացուցիչները։

ՊԽՄ ժողովածուից հայտնի է, որ բանակցությունների նախաձեռնությունը պատկանում է Կիլիկիայի բյուզանդական դուքս Ալեքս Աքսուխին և այն ժամանակ դեռևս եպիսկոպոս, Հայոց կաթողիկոսի եղբայր Ներսես Շնորհալույն¹⁸⁰։ Մինչև 1170 թ. եկեղեցական միության խնդրի վերաբերյալ մի քանի վավերագրեր են փոխանակում կայսր Մանուել Ա Կոմնենոսը և կաթողիկոս ձեռնադրված Ներսես Դ Շնորհալին։ Հայտնի է նաև, որ կայսեր ուղարկած առաջին թուղթը Հռոմկլա է հասցրել կայսրության քաղաքացիական պաշտոնյա Սմբատը¹⁸¹, որը նաև բանակցություններ վարելու կայսերական արտոնություն է ունեցել։ Թեորիանոսի «Տրամախոսություններ»-ի մեզ հասած բնագրի¹⁸² ընձեռած հնարավորությունների շնորհիվ քիչ ավելի ընդարձակ և մանրակրկիտ վկայություններ ունենք հետագա երկու բանակցությունների մասնակիցների մասին։ Ըստ այդ երկի տեղեկությունների, 1170 թ. Հռոմկլայում տեղի ունեցած բանակցություններին բյուզանդական կողմից մասնակցում էին մագիստրոս Թեորիանոսը, Հովհաննես Աթմանը, իսկ հայկական

¹⁷⁸ M.S., t. III, p. 334–336.

¹⁷⁹ F. Chalandon, *Jean II Comnène*, p. 652–653; Fr. Dölger, *RKOR*, S. 81, Nr. 1480, S. 86, Nr. 1520, S. 87, Nr. 1533; R.A.P.C., t. II, p. 548–549, Nr. 1121, 1122, p. 552–553, Nr. 1125a; J. Spiteris, *La critica Byzantina*.

¹⁸⁰ Ա. Բողոջան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 34–38։

¹⁸¹ Անդ, էջ 38–40։

¹⁸² P.G., t. 133, p. 120–298.

կողմից՝ Ներսես Շնորհալին, նրա ազգական Գրիգոր եպիսկոպոսը¹⁸³, Ստեփանոս վարդապետը, Սահակ եպիսկոպոսը, Վարդան վարդապետը¹⁸⁴ և Սոփիոյի Պետրոս վարդապետը¹⁸⁵, հակոբիկ-ասորական եկեղեցու կողմից՝ Քեսունի Հովհաննես եպիսկոպոսը¹⁸⁶: Թեորիանյոսի առաջին «Տրամախօսութեան» մեջ հիմնական երկխոսությունն ընթանում է կաթողիկոսի և Թեորիանոսի միջև, ժամանակ առ ժամանակ բանակցությունների ընթացքին միջամտում են նաև հիշատակված մյուս մասնակիցները: Եկեղեցական բանակցությունների հաջորդ փուլին՝ 1171–1172 թթ. դեսպանագնացությանը բյուզանդական կողմից մասնակցում էին վերոհիշյալ Թեորիանոս մագիստրոսը, Հովհաննես Աթմանը և Միքայել երեց թարգմանիչը, իսկ հայկական կողմից՝ Ներսես Դ Շնորհալին, Գրիգոր եպիսկոպոս «կրտսեր»ը (Տղա), Սահակ եպիսկոպոսը, Ստեփանոս վարդապետը, ասորական կողմից՝ Թեոդորոս Բար-Վահբունը¹⁸⁷:

ՊԽՄ ժողովածոյից հայտնի է, Գրիգոր Դ Տղա (1173–1193) կաթողիկոսի հովվապետության առաջին տարիներին Կոստանդնուպոլիս է այցելել Հայոց հայրապետի պատվիրակ Կոստանդին քահանան և այնտեղ՝ Անտիոքի պատրիարքի ձեռքով՝ ձեռնադրվել Հյուսիսային Ասորիքում գտնվող Բյուզանդական եկեղեցուն ենթակա Հիերապոլսի (Մամբիջ) աթոռի մետրոպոլիտ: Այս դեսպանագնացության մասին մանրամասներ է հաղորդում միայն Ներսես Լամբրոնացին: Տարսոնի արքեպիսկոպոսը Գրիգոր Դ Տղայի ՊԽՄ ժողովածու մտած առաջին թղթի¹⁸⁸ վերջում դրված «պատճառ»-ժանոթագրության սկզբում գրում է. «Առեալ զայս գիր քահանայն Կոստանդին եւ ընդ նմա իշխանք ի տիրական աթոռոյն, եւ եհաս առ թագաւորն»¹⁸⁹: Ուրեմն՝ դեսպանագնաց-

¹⁸³ Թեորիանոսի բնագրից կարելի է ենթադրել, որ այս Գրիգոր եպիսկոպոսը հետագայում կաթողիկոս ձեռնադրված Գրիգոր Դ Տղա կաթողիկոսն է, որովհետև բյուզանդական աստվածաբանը նրա վերաբերմամբ օգտագործում է «τὸ μακρόν» («փոքր», «կրտսեր») մականուն-ածականը (Անդ, t. 133, p. 248D):

¹⁸⁴ Հստ հ. Ներսես Ակինյանի, խոսքը Դավիթ Քոբայրեցու ուսուցիչ Վարդան Հաղբատեցում ասին է, տե՛ս Ն. Ակինյան, Ներսէս Լամբրոնացի, էջ 61, 68 ևն.:

¹⁸⁵ Գ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 421; Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, § 976:

¹⁸⁶ Քեսունի Հովհաննես եպիսկոպոսի մասնակցության մասին տե՛ս նաև Լ.Յ. Տէր-Պետրոսեան, Ասորիների դերը հայկական Կիլիկիոյ մշակութային կեանքում ԺԲ-ԺԳ դերերում (Հայագիտական Մատենադարան «Բազմավէպ» 28) (Վենետիկ, Ս. Ղազար, 1989), էջ 8, 63:

¹⁸⁷ Թեոդորոս Բար-Վահբուն քահանայի մասնակցության մասին վկայում են ինչպես ասորական, այնպես էլ հայկական սկզբնաղբյուրները: Հմմտ. Լ.Յ. Տէր-Պետրոսեան, Ասորիների դերը, էջ 8, 63:

¹⁸⁸ Ա. Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 71–74:

¹⁸⁹ Ներսէս Շնորհալի, ԹԼ, էջ 168:

նամակաբերը իր ուղեկիցներով կայսրին հանդիպել է Իկոնիայի սուլթանուլթյան դեմ Մանուել Ա Կոմնենոսի մղած պատերազմի ընթացքում: Ընթացելով Գրիգոր Դ Տղայի թուղթը, կայսրը դեսպանագնացին առաքում է Կոստանդնուպոլիս. «մինչեւ ի դարձն իւր ի պատերազմէն Իսմայէլական ազգին»¹⁹⁰: Իկոնիայի սուլթան Դլիճ Արսլանի դեմ պատերազմը երկարաձգվում է մեկ տարի, և Կոստանդինն այդ ընթացքում մնում է Կոստանդնուպոլսում, ուր կաթողիկոսի դեսպանագնացը «ծանոյց պատրիարքացն՝ զոր ի Հայս ճշմարտութիւն հաւատոյ եւ վարուց: Եւ քանզի էր ազգաւ Հոռոմ եւ քահանայի ի նոցանէ, տեղեակ եւ Հայոց արինաց, հաւանեցուցանէր զբարեսէրն եւ յամաւթ առնէր զտկարամիտ շարախաւսսն»¹⁹¹: Ամենայն հավանականութեամբ խոսքն այստեղ վերաբերում է Անտիոքի և Կ.Պոլսի պատրիարքների հետ Հայոց կաթողիկոսի պատվիրակ Կոստանդին Հիերապոլսեցու բանակցությունների մասին:

Ավելի մեծաքանակ մասնակիցներ են ունեցել 1177 թ. Կոստանդնուպոլսի և 1178 թ. Հռոմկլայի եկեղեցական ժողովները, որոնցից մեզ հասած վավերագրերը ստորագրված են այդ հավաքներին ներկա եղած բարձրաստիճան հոգևորականների կողմից¹⁹²:

Հարկ է նշել, որ եկեղեցական բանակցությունները վարելու և վավերագրերը հունարեն կամ հայերեն թարգմանելու նպատակով երկխոսությանը մասնակցում էին նաև թարգմանիչներ: Օրինակ. Թեոդորանոսի երկրորդ «Տրամախօսութեան» բնագրից հայտնի է, որ 1171/2 թթ. Հռոմկլայում տեղի ունեցած բանակցություններին բյուզանդական կողմից մասնակցել է թարգմանիչ Միքայել երեցը¹⁹³: Կամ Ներսես Դ Շնորհալու հունարեն թարգմանված թղթերից մեկի¹⁹⁴ վերնագրից հայտնի են դառնում, որ այդ վավերագրի թարգմանիչն է Հովհաննես Ութմանը, իսկ խմբագիրը՝ մագիստրոս Թեոդորանոսը¹⁹⁵: Հայերեն թարգմանված վավերագրերը նմանատիպ ուղղակի վկայություններ

¹⁹⁰ Անդ, էջ 168:

¹⁹¹ Անդ, էջ 168–169: Հմմտ. նաև Ա. Բողոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 247–250:

¹⁹² Ա. Բողոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 80–82, 86–89: Միքայել Գ Անքիալոսի թղթի տակ ստորագրած բյուզանդական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներից յուրաքանչյուրի նույնականացման փորձը կատարված է RAPC, fasc. II, p. 558–559-ում:

¹⁹³ PG, t. 133, p. 236: Հմմտ. Ա. Բողոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 215:

¹⁹⁴ Ա. Բողոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 50–54:

¹⁹⁵ PG, t. 133, p. 213.

չեն պահպանել, սակայն նկատի ունենալով, որ ժԲ դարի երկրորդ կեսին Բյուզանդական եկեղեցու հետ միության կողմնակից և Կիլիկիայում իր գործունեությունը ծավալած ամենաբեղմնավոր թարգմանիչներից մեկը Ներսես Լամբրոնացին է, որևէ կասկած չունենք, թե նա է մասնակցել վերոհիշյալ վավերագրերի թարգմանությանը: Այս վարկածը հիմնավորելու միտումով փորձենք անդրադառնալ Տարսոնի եպիսկոպոսի վաղ շրջանի թարգմանական գործունեության որոշ խնդիրների քննարկմանը:

Եթե Ներսես Լամբրոնացու մատենագրական վաստակը, կապելով նրա բովանդակալից եկեղեցաքաղաքական գործունեությանը, կարելի է բաժանել մի քանի բեկումնային փուլերի, ապա թարգմանական գործունեությունն ունի երեք ընդգծված շրջան.

1. 1176–1179 թթ.: Հունարեն և լատիներեն լեզուներից հայերենի փոխադրված երկերի հիշատակարաններում թեև Ներսես Լամբրոնացին իրեն հաճախակի անվանում է թարգմանիչ, սակայն այդ բառը պետք է հասկանալ «սրբագրող»՝ «խմբագիր», «երկը հայացնող» իմաստներով¹⁹⁶: Թարգմանական գործունեության այս շրջանում Ներսես Լամբրոնացին համագործակցում է հայ և ալյազգի թարգմանիչներ Գրիգոր դպիր Լամբրոնացու (1176/7 թ.)¹⁹⁷, Հիերապոլսի մետրապոլիտ հույն Կոստանդինի (1179/80 թ.)¹⁹⁸, Կիլամ Լատին

¹⁹⁶ Այս տերմինը մեր հասկացած իմաստով օգտագործում է նաև Ներսես Լամբրոնացին: Տե՛ս Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 287:

¹⁹⁷ Ըստ «Հաւաքումն մեկնութեան եւթանեսունց թղթոցն կաթողիկէից» երկի Ներսես Լամբրոնացու հիշատակարանի, թարգմանությունը կատարվել է 1163/4 թ. Գրիգոր դպիր Լամբրոնացու կողմից: Սակայն այս փոխադրությունը չի հղվվել և երկար ժամանակ անմշակ է մնացել, քանի որ մահացել է Դրագարկի առաջնորդ Բարսեղ վարժապետը՝ այդ երկի թարգմանության մեկենասը: Ներսես Լամբրոնացին ձեռնամուխ է եղել և աշխատանքն ավարտել է 1176/7 թ. (հիշատակարանը տե՛ս Անդ, էջ 278):

¹⁹⁸ «Արեթաս Կեսարիոյ եպիսկոպոսի Մեկնութիւն Յայտնութեան Յովհաննոս» երկը Ներսես Լամբրոնացին թարգմանել է Կոստանդին Հերապոլսեցու հետ համատեղ: Թարգմանական հիշատակարանում Ներսեսն այսպես է տարանջատում իրենց անելիքները. «...նա ի թարգմանել է եւ ես ի գրել...»: Ապա անդրադառնալով թարգմանության վերջնական աշխատանքներին, գրում է. «...սրբաբանեցաւ ի նշանագրութենէն քերթողական արհեստի...ձեռամբ նուստ եպիսկոպոսի նորին մայրաքաղաքի Տարսոնի՝ տառապելոյն Ներսիսի» (Անդ, էջ 267–273, և հատկապես՝ էջ 270): Այս նույն թվականին Կոստանդին Հերապոլսեցի մետրոպոլիտի հետ Ներսես Լամբրոնացին թարգմանել է նաև Նեղոս Դոքսապատոի և Եպիփան Կիպրացու «Կարգադրութիւնք մայրաքաղաքաց» երկերը (Անդ, էջ 289–294, հատկապես՝ էջ 292):

վանականի (1179/80 թ.)¹⁹⁹: Այս թարգմանական աշխատանքների հիմնական մեկենասը Հռոմկլայի կաթողիկոսարանն է²⁰⁰:

2. Ներսես Լամբրոնացու թարգմանական գործունեության երկրորդ շրջանը հակված ենք պարբերացնել 1185–1191 թթ. միջև: Այս ժամանակահատվածում Տարսոնի արքեպիսկոպոսը թարգմանում է միայն լատիներենից, իսկ փոխադրված երկերը սերտորեն առնչվում են Հռոմկլայի կաթողիկոսական նոտարատան գործունեության հետ: Թարգմանության նյութերը Հռոմի պապեր Լուսիոս Գ-ի (1181–1185)²⁰¹ և Կղեմես Գ-ի (1187–1191)²⁰² Հռոմկլայի կաթողիկոսներին ուղարկած նամակներն են և կաթողիկ եկեղեցու ծիսարանի և թագավորօրհնների ծեսին վերաբերող մատենագրական երկերը: Թարգմանական գործունեության այս փուլում, ի տարբերություն առաջինի, Ներսես Լամբրոնացին չի հիշատակում որևէ գործակցի: Նշանակում է, թե բառացի փոխադրող-թարգմանչի կարիք այլևս չի զգում: Թարգմանական այս երկերի մեկենասը կրկին Գրիգոր Դ Տղա կաթողիկոսն է, իսկ նամակների թարգմանության պատվիրատուն՝ Հռոմկլայի կաթողիկոսական նոտարատունը:

¹⁹⁹ Նշված թվականին (ՌԸ=1179/80) Ներսես Լամբրոնացին Կիլամ լատին կրոնավորի հետ միասին թարգմանում է Գրիգոր Մեծ պապի (590–504) «Վասն քաղաքավարութեան զանազան հարցն» և «Բենեդիքտիոսի սահմանք» երկերը: Հատկապես առաջին թարգմանության մասին Ներսես Լամբրոնացին գրում է իր հիշատարանում. «...թարգմանեցի... ի լատին լեզուէն ի փռանգ վանս սուրբ Պաւղոսի որ ի Անտիոք, ի ձեռն հասակակից միոյ ի նոցանէ, Կիլամ անուն: Իսկ ապա եկեալ ի վանսն, որ Սիմանկլա կոչի հուպ Անարզաբոյ, յորում բազում գրեանք ի յունական գիրս աւանդեալ է, ...գտի զայս գիրս... Առեալ գնացի ի հայրապետական աթոռն որ կոչի Հռոմկլա... թարգմանեցի զսա... ի ձեռն առաքինի մետրապոլտին Յերապոլսի Կոստանդեայ. եւ իմովանս տկարութեամբ յեղեղեալ եւ ուղղեալ թողի զսոյն յեկեղեցի Հայոց...»: Տե՛ս Անդ, էջ 281–289, հատկապես՝ էջ 287–288: Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս Ներսես Լամբրոնացին դիմել է Կոստանդին Հերապոլսեցու օգնությանը:

²⁰⁰ Բացի Կաթողիկեայ թղթերի մեկնությունից, մնացած բոլորը կատարվել են Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի պատվերով:

²⁰¹ Լուսիոս կամ Ղուկաս Գ-ի թուղթը և լատին «Մաշտոցը» Հռոմկլա էր բերել Գրիգոր Գ կաթողիկոսի հատուկ հանձնարարությամբ 1185/6 թ. Հռոմ այցելած Փիլիպոպոլսի եպիսկոպոս Գրիգորը: Ենթադրում ենք, որ պապի նամակը Հռոմկլայի նոտարատան համար պետք էր թարգմանել շատ շտապ, բանագնացի հասնելուն պես: Այդ պատճառով էլ Ներսես Լամբրոնացու թարգմանական գործունեության այս շրջանի սկիզբ ենք համարում Գրիգոր եպիսկոպոսի Հռոմկլա հասնելու թվականը. «Ի թուականութեանս Հայոց ՈՒԴ (1185/6) եկն Գրիգոր եպիսկոպոս ի հայրապետէն Հռոմայ Լիւսիոյ...» (Անդ, էջ 299):

²⁰² Կղեմես Գ պապի թղթերը Հայոց կաթողիկոս Գրիգոր Դ Տղային և Ռուբինյան իշխան Լևոն Բ-ին, ինչպես նաև թագավորօրհնների կարգը Կիլիկիա էին հասել Մյունստեր քաղաքի եպիսկոպոսի հետ միասին, որը ժամանել էր Գերմանական կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսի երրորդ խաչակրաց ռազմարշավի բանակների հետ: Թեև Լևոն Ռուբինյանին թագադրելու խոստում տված գերմանական կայսրն արդեն խեղդվել էր Սելևկիա գետում, Լամբրոնացին շուտափույթ թարգմանում է թագավորօրհնների կարգը և տեղադրում մի քանի տարի առաջ իր իսկ թարգմանած Լատին Մաշտոցի մեջ. «...են գթարգմանեալ արհնութիւն թագաւորիս ոչ կամեցայ աղաւղել. եղի ընդ նախաթարգմանեալ կարգսդ, վերստին յարմարմամբ» (Անդ, էջ 301):

3. Թարգմանական գործունեության երրորդ շրջանում ևս (1193–1198 թթ.) Ներսես Լամբրոնացին և՛ թարգմանիչ էր, և՛ «սրբագրող»-խմբագիր, և մեկենաս: Հիշյալ տարիներին նա վերաշարադրել, վերախմբագրել ու առանձին ժողովածուներ է կազմել տարիների ընթացքում իր աշխատասիրած մատենագրական երկերից: Լամբրոնացին մեր մատենագրության այն երջանիկ ու բացառիկ դեմքերից է, որը հասուն տարիքում կրկին անդրադարձել է պատանեկան հասակում գրած երկերին ու վերախմբատավորել դրանք²⁰³: Թեպետ չեն պահպանվել ուղղակի վկայություններ, այնուամենայնիվ կարելի է ենթադրել, որ գրական գործունեության այս փուլում թարգմանված երկերը ծառայում են ավելի շատ քաղաքացիական իշխանությունների կարիքներին: Դրանք հիմնականում²⁰⁴ Բյուզանդական կայսրության տարածքում և Մերձավոր Արևելքում մինչև ԺԲ դարը գործած իրավաբանական ժողովածուներ են, որոնք թարգմանվել են ասորերենից²⁰⁵ և հունարենից²⁰⁶:

²⁰³ Այդ իմաստով բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում «Պատարագի մեկնութեան», «Օրենսգրքերի» և «Յովհաննու Յայտնութիւն» երկերի հիշատակարանները: Այս փաստը ժամանակին նկատել է նաև Ն. Ն. Ակինեանը. «...1198: Այս այն տարին է, երբ Ներսէս աչքէ անցուց իր բոլոր գրաւոր աշխատութիւնները, դասուրեց զանոնք եւ յաւանդ յանձնեց ապագային: Զգացած էր որ այս տարին վերջին տարին էր» (Անդ, էջ 274):

²⁰⁴ Ըստ Ն. Ներսես Ակինեանի 1197 թ. Կոստանդնուպոլսում Լամբրոնացին թարգմանել է Բառնաբաս Առաքյալի պարականոն թուղթը (Անդ, էջ 316–317): Եթե թվագրումը ճիշտ է, ապա այս երկը կազմում է միակ բացառությունը: Ն. Ակինեանի սույն կոահումը խարսխված է Վատիկանի մատենադարանի թ. 859 մատյանի հիշատակարանի տեղեկության վրա. «Ես Ներսէս թարգմանեցի զթուղթս զայս ի հայ բարբառ ի թագաւորական քաղաքս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է արհնեալ յաւիտեանս. ամէն» (Անդ, էջ 316): Ընդգծված արտահայտության մեջ Ներսես Լամբրոնացու նկատի ունեցած քաղաքը եթե նույնացնենք Կոստանդնուպոլի հետ, ապա կարելի է համաձայնել արդյունաշատ բանասերի հետ. «Այս թարգմանութիւնը, որ մեզ հասած չէ, պետք է կատարուած ըլլայ 1197ին Կ.Պոլիս, ուր առիթ ունեցած էր աչքէ անցնել Պատրիարքարանի յոյն ձեռագիրները» (Անդ, էջ 317):

²⁰⁵ Ասորերենից կատարված թարգմանություն ասելով նկատի ունենք «Ասորա-հոմեական օրէնսգիրքը» և «Համառօտ ժողովումն օրինաց վերստին» երկերը, որոնց թարգմանությունը Ն. Ն. Ակինեանը թվագրում է 1173 թ.: Նա առաջարկում է այս երկերի թարգմանական հիշատակարանը սրբագրել այսպէ՛ս. «ՈՆԲ»-ն կարդալ «ՈՒԲ», «Ժ ԺԸ ամի»-ն՝ «յԱ ամի» կամ «յԺԸ. աւուր», այսինքն 27 սեպտեմբերի 1173 թ. (Անդ, էջ 250): Զ. Ն. Ակինեանի վարկածի համաձայն, Ներսես Լամբրոնացուն այս երկերի ասորորեն խմբագրությունների հետ ծանոթացրել է հակոբիկ-ասորական եկեղեցու նշանավոր գործիչ Թեոդորոս Բար-Վահբունը, որը 1193 թ. չէր կարող հիշատակվել որպէս «կիրթ իմաստութեան քահանայ», քանի որ նա այդ թվականին Կիլիկիայի սահմաններում գործող հակոբիկ եկեղեցու հակաթոռ պատրիարքն էր: Այս հարցերի մասին տե՛ս Անդ, էջ 250–251: Լ.Յ. Տէր-Պետրոսեան, Ասորիների դերը, էջ 8–9: Միքայել Ասորին աստվածային արդարադատության վերականգնում է համարում նրա մահը: Տե՛ս M.S., t. III, p. 388):

²⁰⁶ Բյուզանդական իրավական ժողովածուներ «Էկլոզան», «Զինուորաց օրենսգիրքը» և մյուսները Ներսես Լամբրոնացին թարգմանել է իր եղբայր Շահնշահի վերանորոգած Լուլուս

Ներկա ուսումնասիրության մեջ մեզ հետաքրքրում է Ներսես Լամբրոնացու թարգմանական գործունեության առաջին փուլի կարճ, սակայն չափազանց բեղմնավոր ժամանակահատվածներից մեկը, երբ Հռոմկլայի կաթողիկոսարանի հովանու ներքո և Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի հրամանով, Կոստանդին Հիերապոլսեցու օգնությամբ և աշխատակցությամբ, հունարենից հայերեն էին թարգմանվում մի շարք երկեր: Սկզբնաղբյուրների միաբերան վկայությամբ նրանք միմյանց հետ թարգմանության բնագավառում համագործակցել են Հայոց Տոմարի ՈԻԸ (=5 փետրվարի 1179–4 փետրվարի 1180) թվականին²⁰⁷:

Կոստանդին Հիերապոլսեցու անունը հայոց մատենագրության մեջ առաջին անգամ հիշատակվում է 1175 թ. գրված և ՊԽՄ ժողովածու մտած Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի «առ Մանուէլ»²⁰⁸ առաջին թղթում²⁰⁹, որպես Հայոց կաթողիկոսարանի կողմից Կոստանդնուպոլիս ուղարկված դեսպանախմբի ղեկավար²¹⁰: Նրան հանձնարարված է եղել կայսերական արքունիքի և օրթոդոքս եկեղեցու պատրիարքարանի աստվածաբանների հետ վիճաբանություններում պաշտպանել մինչ այդ Կոստանդնուպոլիս ուղարկված կաթողիկոսական նամակների և Հայոց եկեղեցու դավանանքի ուղղափառությունը և հաշտության եզրեր գտնել երկու եկեղեցիների փոխհարաբերություններում²¹¹: Պատահական չէ, որ կաթողիկոսն այդ առաքելության համար ընտրել էր հենց Կոստանդին հուլյն կրոնավորին: Կաթողիկոսն հարմար է նկատում նամակում ներկայացնել իր ուղարկած դեսպանագնացի արժանիքները. «որ ամենայնին հասու է, որ առ ի սուրբ աթոռս խորհրդոց, առ որս սրբոց հարցն անեալ եւ զիս ինքն դաստիարակեալ»²¹²: Նույն նամակում Գրիգոր Դ Տղան Մանուէլ Ա Կոմնենոսին խնդրում է միջնորդել, որ Անտիոքի օրթոդոքս-բյուզանդական եկեղեցու պատրիարքը, որն այդ ժամանակ գտնվում էր Կոստանդնուպոլսում, Կոստանդին կրոնավորին ձեռնագրի Հիերապոլսի և Եփրատամերձ տարածքների մետրապոլիտ:

ամրոցում գտնված մի շատ հին հունարեն մատյանից: Տե՛ս Ն. Ակինեան, Ներսես Լամբրոնացի, էջ 257–267, հատկապես՝ էջ 265 և հմմտ. Bozoyan 1993, p. 56–57:

²⁰⁷ Թարգմանված երկերի հիշատակարանները հավաքված տե՛ս Անդ, էջ 268–271, 286–288, 291, 292:

²⁰⁸ Տե՛ս Ա. Բողոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 71–74:

²⁰⁹ Ներսես Շնորհալի, ԹԸ, էջ 166–168, մասնավորապես՝ էջ 167:

²¹⁰ Նման ենթադրության հնարավորություն է տալիս ՊԽՄ ժողովածոյում Ներսես Լամբրոնացու հետևյալ արտահայտությունը. «Առեալ զայս զիր քահանայական, Կոստանդին եւ ընդ նմա իշխանք ի տիրական աթոռոյն, եւ եհաս առ թագաւորն...» (Անդ, էջ 168):

²¹¹ Այդ դեսպանագնացության մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Բողոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 247–251:

²¹² Ներսես Շնորհալի, ԹԸ, էջ 167:

Քանի դեռ շարունակվում էր պատերազմը Իկոնիայի սուլթանության դեմ, Կոստանդին քահանայի շուրջ մեկ տարի մնում է Բյուզանդիայի մայրաքաղաքում: Այդ ընթացքում նա լայն գործունեություն է ծավալում. «ծանոց պատրիարքացն, զոր [է] ի Հայս ճշմարտութիւն հաւատոյ եւ վարուց».- գրում է Ներսես Լամբրոնացին²¹³: ՊԽՄ ժողովածուի հիշատակված վավերագրերի գրման և առաքման պարագաների մեկնաբանության մեջ Ներսես Լամբրոնացին ընդգծում է, որ Կոստանդինն «էր ազգաւ Հռոմ եւ քահանայ ի նոցանէ»²¹⁴, որն անշուշտ պետք է հասկանալ այսպես. «ազգութեամբ հույն և նրանց կողմից հոգևորական ձեռնադրված»: Ինչպես հաղորդում է Տարսոնի արքեպիսկոպոսը, Միրիոկեֆալոնի ճակատամարտում պարտություն կրած Մանուել Ա Կոմնենոսը վերադառնալով մայրաքաղաք, կատարում է կաթողիկոսի խնդրանքը. «ես ձեռնադրել սրբազան պատրիարքին գքահանայն Կոստանդին արքեպիսկոպոս [ի] խնդրոյ կաթողիկոսին...»²¹⁵: Այս արարողությունից հետո, Հերապոլիս-Մմբեջի արքեպիսկոպոս ձեռնադրված Կոստանդինն իր հետ վերցնելով կայսեր Կոստանդնուպոլսի Միքայել Գ Անքիալոս պատրիարքի նամակը, վերադառնում է Հռոմկլա:

Սրանք են հիմնականում այն վկայությունները, որոնք պահպանվել են հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական փոխհարաբերություններում Կոստանդին Հիերապոլսեցու մասնակցության մասին:

Ներսես Լամբրոնացու և Կոստանդին Հիերապոլսեցու թարգմանական համագործակցությունն ուներ ծրագրային բնույթ և ծառայում էր այդ ժամանակ Հայոց եկեղեցու առջև ծառայած եկեղեցաքաղաքական հիմնական խնդրին՝ Բյուզանդական և Հայկական եկեղեցիների փոխհարաբերությունների նորմալացմանը: Գրիգոր Գ Տղա կաթողիկոսի հրամանով և խնդրանքով, Կոստանդնուպոլսում գտնվող Անտիոքի հունական պատրիարքի կողմից Հերապոլսի մետրապոլիտ ձեռնադրված Կոստանդինը կայսրության մայրաքաղաքում և Հռոմկլայում, անկասկած, իր լուծման է ներդրել երկու եկեղեցիների միջև սկսված բանակցությունների ընթացքում գրված վավերագրերի վերջնական ձևակերպման և թարգմանության գործում: Մեր կարծիքով նա է եղել նշված վավերագրերի նախնական հայերեն թարգմանությունների հեղինակը, որը հավանաբար թարգմանչի դեր է ստանձնել Գրիգոր Գ Տղայի վարած բանակցություններում և Հռոմկլայի կաթողիկոսական նոտարատանը: Այդ մասին են անուղղակիորեն վկայում Ներսես Լամբրոնացուց մեզ հասած թարգմանական հիշատակարանները:

²¹³ Անդ, էջ 168:

²¹⁴ Անդ:

²¹⁵ Անդ, էջ 169:

Իհարկե, Հռոմկլայի եկեղեցական ժողովից (1178 թ.) հետո ևս երկու կողմերը համաձայնություն չեկան, քանի որ այդ ժողովում հաստատված վավերագրերը նույնիսկ Կոստանդնուպոլիս չհասան: Նշանակում է՝ Հայոց և Բյուզանդական եկեղեցիների միություն խնդրում որևէ առաջընթաց չարձանագրվեց: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Հռոմկլայի ժողովում Ներսես Լամբրոնացին փորձ է կատարել քննարկման դնել մի շարք ծիսադավանական և եկեղեցաքաղաքական որոշումներ: Տարսոնի երիտասարդ արքեպիսկոպոսն առաջին անգամ այս ժողովին է ներկայացրել իր հեղինակած մի շարք ծրագրային երկերը²¹⁶: Հռոմկլայի ժողովում Ներսես Լամբրոնացու նախաձեռնությամբ պատասխաններ գրվեցին բյուզանդական եկեղեցու ինը պահանջներին²¹⁷, որոնք Հայոց եկեղեցուն էին ներկայացվել դեռևս 1171 թ.²¹⁸: Հռոմկլայում նստող Հայոց կաթողիկոսի հաստատումը բյուզանդական կայսրին վերապահելու օրթոդոքս-հունական եկեղեցու պահանջին ի պատասխան, Ներսես Լամբրոնացին Հռոմկլայի եկեղեցական ժողովի քննարկմանը ներկայացված այս վավերագրում առաջարկում է Հայոց կաթողիկոսարանը վերանվանել Անտիոքի պատրիարքական աթոռ²¹⁹, նրան վերապահելով վերջինիս բոլոր իրավասությունները:

Հռոմկլայի ժողովում քննարկվելիք այս դրույթին ապացույցներ գտնելու միտումով է, թերևս, որ Ներսես Լամբրոնացին և Կոստանդին Հիերոպոլսեցին²²⁰ թարգմանում են հետևյալ երկերը.

▪ «Գիր որ եղեւ Նեղոսէ կրանաւորէ մակակոչեցեալ Դոքսապատիո ի խնդրոյ եւ հրամանաւ պարեպաշտ մեծի թագաւորին Ֆռանկաց ի Սիկիլեայ

²¹⁶ Հռոմկլայի ժողովին ներկայացված երկերի թվում էին Ներսես Լամբրոնացու «Ատենաբանութիւն»ը և «Պատարագի մեկնութիւն»ը: Այս երկերին վերաբերող հիշատակարաններից հստակ երևում է, որ դրանք գրված են եղել հասարակության իշխող խավերի քննարկմանը ներկայացնելու համար. «Միանգամ եւ երկիցս հանի զսա յատեան եւ ի ժողովս եպիսկոպոսաց, եւ ոչ եղեւ պարապումն գոնէ ընթերցման կամ ունկնդրութեան»: Տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 467): Այս տողերից կարելի է ենթադրել, որ Ներսես Լամբրոնացին Հռոմկլայի ժողովի նախօրյակին գրած երկերում առկա դրույթները փորձել է քննարկման առարկա դարձնել այդ ժողովում և դրանից հետո էլ, սակայն նրա ջանքերն ապարդյուն են անցել, քանի որ համախոհներ գրեթե չի ունեցել:

²¹⁷ Տե՛ս Ներսէս Ծնորհալի, ԹԸ, էջ 156–157 և հմմտ. Ա.Ա. Բոզոյան, «Հայ-բյուզանդական դիվանագիտական հարաբերությունները, էջ 159:

²¹⁸ Տե՛ս Ա. Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 65–66:

²¹⁹ Վավերագր լավագույն հրատարակությունը տե՛ս Ա. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան, էջ 260–266:

²²⁰ Այս Հիերոպոլիս-Մմբեջի այս արքեպիսկոպոսի մասին տե՛ս Kl.-P. Todt und B.A. Vest, Syria, S. 392:

կղզին Ռուսների վասն հինգ պատրիարզացն աթոռոց եւ որ նոցունց են արքեպիսկոպոսք ի մայրաքաղաքան, եւ մայրաքաղաքացն եպիսկոպոսք, եւ որք ինքնագլուխք են արքեպիսկոպոսք, եւ իւրաքանչիւրոցն վիճակք ըստ պատրիարզացն աթոռոց սահմանեալ: Նայ թէ եւ ե՞րբ կամ որպե՞ս հաստեցաւ իւրաքանչիւր պատրիարզացն աթոռ, եւ վասն կարգացն նոցա եւ յատկական իւրաքանչիւրոցն անուանց. եւ գծագրեցաւ ի թուին ՅՈԾԱ»²²¹:

▪ «Եպիփանու եպիսկոպոսի Կիպրացոց՝ Վասն նախապատիւ եկեղեցեաց իւրաքանչիւր աթոռոց մայրաքաղաքաց»²²²:

▪ «Կարգադրութիւն Աստուծով սրբոց մայրաքաղաքաց եւ մետրապոլտաց եւ արհեպիսկոպոսաց: Եւ եղաւ այս կարգ աստիճանացս քահանայապետից ըստ տիեզերական ժողովոց արինաց»²²³:

Նշված երկերից միայն երրորդն է բառացի թարգմանություն, ուր մի քանի էջի մեջ անցողակի կերպով շարադրված են հինգ պատրիարզական աթոռներից յուրաքանչյուրի իրավասությունները և տարածքային սահմանները:

Նեղոս Դոքսապատոի և Եպիփան Կիպրացուն վերագրված երկերի թարգմանության ժամանակ կիրառված է բոլորովին այլ սկզբունք: Այստեղ, իհարկե, պետք է շեշտել, որ այս երկերի հունարեն բնագրերը գիտությունը հայտնի չեն այն տեսքով, որով դրանք մեզ են հասել հայերեն թարգմանությամբ: Գերմանացի հայագետ Ֆրանց Նիկոլաուս Ֆինկի կատարած համեմատությունը արդեն իսկ ցույց է տալիս, որ մեզ հասած հունարեն բնագրերը պակասներ ունեն: Միաժամանակ կարելի է հաստատաբար պնդել, որ Նեղոս Դոքսապատոի և Եպիփան Կիպրացու աշխատություններում թարգմանիչներն ավելացրել են հատվածներ, որոնք, մեր կարծիքով, պետք է բխեին

²²¹ Հայերեն թարգմանությունը և զուգահիշ հունարեն բնագրի հրատարակությունը տե՛ս Նեղոս Դոքսապատոի կարգադրութիւն պատրիարքական աթոռոցն, հայերէն եւ յունարէն հրատարակեց Ֆ.Ն. Ֆինկ (Վաղարշապատ, 1902): Այս բնագրի և նրա ձեռագրերի մասին մանրամասն տե՛ս Ն. Ակիւնեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 290–292: Հունարեն բնագրի հրատարակությունն ու ուսումնասիրությունը տե՛ս Notitiae episcopatum ecclesiae Constantinopolitanae, texte critique, introduction et notes par J. Darrouzès (Paris, 1981), p. 154–158, 373–377:

²²² Միջնադարյան հայերեն թարգմանությունը և զուգահիշ հունարեն բնագիրը տե՛ս **Եպիփան Կիպրացու** «Ἐκθεσις πρωτοκλησιῶν πατριαρχῶν τῆ καὶ μητροπολιτῶν», հայերէն եւ յունարէն, հրատարակեց՝ Ֆ.Ն. Ֆինկ (Թիֆլիս, 1902) (այսուհետ՝ Եպիփան 1902): Այս բնագրի և նրա հայերեն ձեռագրերի մասին տե՛ս Ն. Ակիւնեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 289–290: Հունարեն բնագրի նորագույն մասնակի հրատարակությունն ու ուսումնասիրությունը տե՛ս J. Darrouzès, Notitiae episcopatum ecclesiae Constantinopolitanae, p. 3–9, 203–213:

²²³ Միջնադարյան հայերեն թարգմանությունը և զուգահիշ հունարեն բնագիրը տե՛ս F.N. Fink, “Kleine mittelalterliche Texte”, Zeitschrift für armenische Philologie, Bd. I, H. 3 (1902), S. 198–200: Այս բնագրի վերաբերյալ մատենագիտական տեղեկանքը տե՛ս Ն. Ակիւնեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 289:

Հոռոմկլայի եկեղեցական ժողովի նախօրյակին Ներսես Լամբրոնացու և Հոռոմկլայի Հայոց կաթողիկոսարանի հոգևորականների որոշ շրջանների որդեգրած սկզբունքներից: Նման հատվածներից թվին ենք դասում Եպիփան Կիպրացու երկում տեղ գտած «Իշխանութիւն Հայոց Մեծաց» կտորը²²⁴ և Նեղոս Դոքսապատոսի երկում Անտիոքի պատրիարքական աթոռի և Հայոց կաթողիկոսարանի կարգավիճակը բանաձևող մի շարք հատվածները²²⁵:

Եպիփան Կիպրացու երկ մուծված «Իշխանութիւն Հայոց Մեծաց» գլուխը համառոտ շարադրանքն է Նեղոս Դոքսապատոսի հայերեն թարգմանված երկի նույն բովանդակությունն ունեցող հատվածի²²⁶, ուր թարգմանիչները շեշտում են Հայոց եկեղեցական թեմի ինքնուրույնությունը: Ե՛վ Եպիփան Կիպրացու, և՛ Նեղոս Դոքսապատոսի երկերի թարգմանություն մեջ Հայոց կաթողիկոսարանի անկախ դիրքը համեմատված է Կիպրոսի ինքնագլուխ աթոռի նույնանման կարգավիճակի հետ, միայն այն տարբերությամբ, որ Նեղոս Դոքսապատոսի երկում վերոհիշյալ երկու անկախ եկեղեցիների շարքում հիշատակվում է նաև Բուղարիայի վիճակը (թեմը): Նեղոս Դոքսապատոսի երկի հունարեն բնագրի համապատասխան կտորում թեև խոսվում է Կիպրոսի և Բուղարիայի եկեղեցական թեմերի մասին²²⁷, սակայն որևէ ակնարկ չկա տիեզերական եկեղեցու աստիճանակարգում Հայոց կաթողիկոսի և նրա գլխավորած թեմի վերաբերյալ:

Այս հանգամանքը, այնուամենայնիվ, չի խանգարել Ներսես Լամբրոնացուն Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի հունադավան գործիչներից մեկի՝ Յուսկան արգելական ճգնավորի Հայոց եկեղեցու դեմ ծավալած գաղափարախոսական պայքարի դրույթներին հակադրել սեփական հավելումը, նշելով, թէ. «եւ տաքտիկոնն, յորում կարգ եպիսկոպոսացն սահմանի գրեալ է՝ որ Հայոց կաթողիկոսն պատուեցաւ վասն սրբոյն Գրիգորի, որպես եւ կղզին Կիպրոսի վասն առաքելոյն Բառնաբայ եւ յիւրեանցն եպիսկոպոսաց առնուն արքեպիսկոպոսքն զձեռնադրութիւն: Եւ զայս ի Ձեր գրոց ունիմք՝ հաստատեալ եւ ոչ ի Հայոց»²²⁸:

Հայբյուզանդական եկեղեցաքաղաքական բանակցությունները Մանուել Ա Կոմնենոսի մահից հետո լճացման փուլ են մտնում և ընդհատվում են բավական երկար ժամանակով: Բյուզանդական կայսրությունն այլևս հույս

²²⁴ Եպիփան 1902, 52–54:

²²⁵ Նեղոս Դոքսապատոս, Կարգաւորութիւն, էջ 1016–1124, 1316–1622 և այլուր:

²²⁶ Տէ՛ն Եպիփան 1902, էջ 52–54 և հմմտ. Նեղոս Դոքսապատոս, Կարգաւորութիւն, էջ 10:

²²⁷ Անդ, էջ 1035–1119:

²²⁸ Տէ՛ն Խորհրդածութիւնք սրբազան պատարագի, բացատրութիւն տեառն Ներսէսի Լամբրոնացու արքեպիսկոպոսի Տարսնի Կիլիկեցոց (Երուսաղէմ, 1842), յաւելուած, էջ 21:

չունենր նոր ռազմարշավներ կազմակերպելով վերականգնել սեփական պետության հեղինակությունը Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում: Սակայն այս ասպարեզում կայսրերը և նրանց կամակատարները փորձում էին շրջանցել Հայոց եկեղեցու հետ վարվող բանակցությունները, բռնի կերպով կամ համոզման ճանապարհով հունադավանություն տարածելով Հայոց կաթողիկոսարանին ենթակա Փիլիպուպոլսի (այժմ՝ Պլովդիվ) և Փոքր Ասիայի որոշ թեմերում²²⁹: Ի տարբերություն այս ոտնձգությունների, Հայոց եկեղեցու հայբյուզանդական բանակցությունների հետագա շարունակումը դեռևս պահպանում էր կենսունակությունը: 1197 թ. Ներսես Լամբրոնացու այցը Կոստանդնուպոլիս և բանակցություններում քննարկված հարցերը այդ մասին են վկայում²³⁰: Այդ բանակցություններն ընթանում էին Կ. Պոլսի Ս. Գէորգ եկեղեցում²³¹, իսկ ծիսադավանական վեճերին մասնակցում էին Ալեքս Գ Անգելոս կայսրը (1195–1202)²³², Գեորգ Բ Քսեֆիլինոս պատրիարքը, արքունիքի և եկեղեցու գործիչներ²³³: Դրանով կաթողիկոսարանը ձգտում էր Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի բազմատարր բնակչության առկայության պայմաններում դաշինք հաստատել Բյուզանդական կայսրության և օրթոդոքս եկեղեցու ու բնակչության հետ, նպաստել նշված տարածքներում Հայոց եկեղեցու դիրքերի ամրապնդմանը: Ամենայն հավանականությամբ, այդ բանակցությունների նպատակներից էր նաև Բյուզանդական կայսրության կողմից պաշտոնական ճանաչման արժանացնել Կիլիկիայում ստեղծված հայկական թագավորությունը և նրանից զլխավորությամբ:

ԺԲ դարի ընթացքում, մասնավորապես 80-ական թվականներից օրթոդոքս-հունադավան հոգևորականությունը, որոնց մեջ կային նաև հայազգի գործիչներ, բացահայտ պայքար է ծավալում հայկական եկեղեցու դեմ: Նրանց կողմից ոչ միայն հերձվածողական է համարվում «մի բնութիւն» Հայոց դավանաբանական բանաձևը, այլև հիմք ընդունելով Ս. Սահակի «Տեսիլքը»,

²²⁹ Այդ մասին է վկայում Իսահակ Անգելոսի նամակի քննությունը: Տե՛ս Հ. Բարթիկյան, «Նոր նյութեր», էջ 287; Р.М. Бартикян, “К истории взаимоотношений”, с. 53–56:

²³⁰ Ներսես Լամբրոնացու կոստանդնուպոլսյան բանակցությունների բնագիրը տե՛ս Խոսակցութիւնք Ս. Ներսէսի Լամբրոնացոյ ընդ պատրիարքին Յունաց (Կ. Պոլիս, 1861), էջ 3–24 և հմմտ. I. Augé, *Église en dialogue*, p. 257–268:

²³¹ Կարելի է ենթադրել, որ բանակցությունները տեղի էին ունենում հետագայում հայերին հանձնված Սուլու մանաստիք շինությունում:

²³² Գիտությունը հայտնի է նաև մինչև 1197 թ. այս կայսերն ուղարկված Գրիգոր Զ Ապիրատ (1194–1203) կաթողիկոսի մի նամակը տե՛ս А. Бозоян, “Новый памятник”, с. 227–230:

²³³ Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 201: Հմմտ. I. Augé, *Église en dialogue*, p. 257–258:

պնդում էին. «Ոչ է առ Հայոց ազգիս եկեղեցի քահանայութեան շնորհ»²³⁴: Ներսես Աղիսեանը այսպես է բացատրում Յուսկան ճգնաժամի և նրա հետևորդների տեսակետը. «Ս. Սահակի Տեսիլքին համաձայն դադրած էր Հայոց քահանայապետութիւնը, ուստի նաեւ ձեռնադրութիւն տալու իրաւունքը»²³⁵: Ուստի, եթէ հոգևորականն է ընդունում բյուզանդական օրթոդոքսութիւնը՝ պետք է կրկին ձեռնադրվի, եթէ շարքային քրիստոնյան՝ հրահանգվում էր «մեռոնիւ կնքել»²³⁶: Ինչպես երևում է վերոբերյալից, Բյուզանդական եկեղեցին և նրա հետևորդներն այդ պայքարում չափազանց կարևոր դեր են հատկացրել Ս. Սահակի «Տեսիլքին»²³⁷: Բյուզանդական հոգևորականութեան գաղափարախոսական պայքարի այս լծակի խոտանման ակնկալութեամբ է, որ Ներսես Լամբրոնացին և Կոստանդին Հերապոլսեցին դեռևս ժԲ դարի 70-ական թթ. ձեռնամուխ են լինում Անդրեաս և Արեթաս Կեսարացիների «Յովհաննու Յայտնութեան մեկնութիւն» աշխատութեան թարգմանութեանը²³⁸:

Հռոմկլայի կաթողիկոսարանի նոտարատանը աշխատող թարգմանիչներ Կոստանդին Հերապոլսեցու և Ներսես Լամբրոնացու այս աշխատանքը ևս բառացի թարգմանութիւնն է: Այստեղ դժվար է հետևել թարգմանիչների հավելումներին, քանի որ հայերեն բնագրի գլխակարգութիւնը ամբողջովին համապատասխանում է հունարենի հետ: Այնուամենայնիւ, մասնագետների ուշադրութիւնը կարելի է հրավիրել միայն մեկ կարևոր հանգամանքի վրա. հունարենով պահպանված առաջաբանը չի կրկնվում հայերեն թարգմանութեան մեջ, որը շատ տեղերում համառոտաբար վերապատմում է հունարեն բնագրի բովանդակութիւնը: Թարգմանութիւնը գրեթէ բառացի է դառնում այն հատվածներում, ուր մեկնվում է «Յովհաննու Յայտնութեան» մեջ կանխատեսվող բարքերի ապականութեան և քաղաքի զարհուրելի աղտեղութեան մասին գլուխը²³⁹: Այս հատվածն Արեթասն ու Անդրեասը մեկնում են որպէս Կոստանդնուպոլսի կործանման մասին գուշակութիւն²⁴⁰:

²³⁴ Ներսէս Լամբրոնացի, Խորհրդածութիւն սրբազան պատարագի, էջ 21:

²³⁵ Ն. Աղիսեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 217:

²³⁶ Ներսէս Լամբրոնացի, Խորհրդածութիւն սրբազան պատարագի, էջ 21:

²³⁷ Երկի հունարեն բնագիրը տե՛ս PG, t. 132, p. 1155–1238: Այս երկի մասին տե՛ս Л.М. Меликсет-Бек, “К вопросу о датировке псевдоисаковских памфлетов в греко-византийской литературе”, ВВ, т. VIII (1956), с. 208–222:

²³⁸ Հունարեն բնագրի հրատարակութիւնը տե՛ս PG, t. 106, p. 494–786: Հայերեն թարգմանութեան հրատարակումը՝ Մեկնութիւն Յայտնութեան Ս. Աւետարանչին Յովհաննու արարեալ Տ. Անդրէի եւ Արեւտասայ Եպիսկոպոսացն Կեսարու (Երուսաղէմ, 1855) (այսուհետ՝ Մեկնութիւն Յայտնութեան): Տե՛ս նաև Ն. Աղիսեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 267–273:

²³⁹ Յովհ. Յայտն., ԺԸ:

²⁴⁰ PG, t. 106, p. 720–725: Հմմտ. Մեկնութիւն Յայտնութեան, էջ 234–244:

Թարգմանելով այդ մեկնությունը, Ներսես Լամբրոնացին և Կոստանդին Հիերապոլսեցին փորձել են Ս. Սահակի «Տեսիլքին» հակադրել «Յովհաննու Յայտնութեան» կանխագուշակությունը: «Առ Յուսկան» թղթում, Ներսես Լամբրոնացին այդ առիթով գրում է. «Եւ զայս Յօհաննէս կանխաւ ի վերայ Կոստանդնուպալսի ետես, եւ մեկնիչքն Անդրէաս եւ Թէտալիոս (այսպե՛ս) մանրամասնաբար հելլենացի բարբառով եւ գրով ի վերայ նորին լուծին, որ կայ առ իս նոյն գրովն եւ հայ թարգմանութեամբ: Զոր ինձ թուի թէ իմաստունքն, որ ըստ Սահակայ տեսլեանն զգուշացեալ խորշեցան ի Հայոց Կոստանդին Ուռհայեցին, եւ Գերամարտիկ Կլայեցին, եւ յՆաւաք երէց Վահկացին, ոչ էին ընթերցեալ. զի այս կարի սոսկալի եւ քստմնելի նախատինք է քան զՍահակայ ջնջեալ գիրն վարուց եւ հաւատոց. եւ արեան հեղման եւ կախարդութեան, բաւական էին համարեալ զփոքր շարեացն հաղորդութիւն յորում էին՝ քան զմեծամեծացն առ որ ընթացան»²⁴¹:

Ելնելով վերոհիշյալ փաստերից, Կոստանդին Հիերապոլսեցու և Ներսես Լամբրոնացու համատեղ թարգմանական աշխատանքների թվում կարելի է դասել նաև ՊԽՄ ժողովածու մտած կայսր Մանուել Ա Կոմնենոսի և Միքայել Գ Անքիալոս պատրիարքի նամակների հայերեն թարգմանությունների վերջնական բնագրերը, որոնց նախօրինակները պետք է պահպանվեն Հոռոմկլայի նոտարատան պահպանում:

Համագործակցելով ազգությամբ հույն, Հիերապոլսեցի մետրապոլիտ Կոստանդինի հետ, Ներսես Լամբրոնացին 1179–80 թթ. հունարենից հայերեն են թարգմանել վերոհիշյալ աշխատությունները՝ Հայոց կաթողիկոսի աջակցուն մեկենասությամբ²⁴²: Այդ համատեղ թարգմանությունների իրագործման աշխատանքանակի մասին Ներսես Լամբրոնացին գրում է. «Նա ի թարգմանել եւ ես ի գրել»²⁴³: Այնուամենայնիվ, Տարսոնի արքեպիսկոպոսի այս վկայությունը չպետք է տառացիորեն հասկանալ, քանի որ մեկ այլ հիշատակարանում իր կատարածի մասին նա գրում է. «...իմովսանս տկարութեամբ յեղջեղեալ եւ ուղղեալ թողի...»²⁴⁴: Հետևապես պետք է ընդգծել, որ Ներսես Լամբրոնացին հետագայում մեկ անգամ ևս խմբագրել ու հայացրել է Կոստանդին Հիերապոլսեցու հետ ժամանակին հայերեն թարգմանած երկերը:

²⁴¹ **Ներսէս Լամբրոնացի**, Խորհրդածութիւն սրբազան պատարագի, էջ 26:

²⁴² Այդ նամակների վերաբերմամբ էլ կարելի է ասել. «Կաթողիկոս... Գրիգորիոս... հրամայեաց թարգմանել ի ձեռն մետրապալտին Յերապալսի Կոստանդեայ» (տե՛ս **Ն. Ակիւնեան**, Ներսէս Լամբրոնացի, էջ 269), «Կամաւն... կաթողիկոսին Գրիգորոյ թարգմանեցի զսա...ի ձեռն մետրապալտին Յերապալսի Կոստանդեայ» (**Անդ**, էջ 288):

²⁴³ **Անդ**, էջ 270:

²⁴⁴ **Անդ**, էջ 288:

Կաթողիկոսարանի և հայ հոգևորականության եկեղեցաքաղաքական շահերը պաշտպանող հիշյալ թարգմանությունները և պահպանված պատմական վկայությունները խոսում են այն մասին, որ Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի հույն հոգևորականության շարքերում հայկական կաթողիկոսարանն ունէր իր դաշնակիցները, որոնց համար Հայոց եկեղեցու հետ բյուզանդական եկեղեցու դաշինքն անհետաձգելի խնդիր էր: Կոստանդին Հիերապոլսեցին այն հոգևոր գործիչներից է, որը փորձել է նպաստել հույն և հայ ժողովուրդների եկեղեցաքաղաքական և մշակութային մերձեցմանը:

Կոստանդին Հերապոլսեցու և ԺԲ դարի ասորի, հույն և լատին թարգմանիչների համատեղ գործունեությունը խոսում է այն մասին, որ հարևան ժողովուրդները ևս այդ դարաշրջանում գիտակցում էին Հայոց մշակույթի ինքնուրույն դերը²⁴⁵: Կոստանդին Հերապոլսեցու մատենագրական ժառանգության ուսումնասիրությունը կարևոր է նրանով, որ հույն եկեղեցական գործիչը, հակադրվելով բյուզանդական եկեղեցու վարած քաղաքականությանը, դաշնացում է Հայոց կաթողիկոսարանի հետ:

Կոստանդին Հերապոլսեցու և Ներսես Լամբրոնացու թարգմանական համագործակցությունը մի նոր, չափազանց կարևոր փուլ է Կիլիկիայի հայկական պետության ստեղծման համար մղվող գաղափարախոսական պայքարում:

Գ 7. 1178 թ. Հռոմկլայի եկեղեցական ժողովը և ՊԽՄ ժողովածու չմտած նրա վավերագրերը.

ՊԽՄ-ի ծանոթագրություններից մեկում, որը վերաբերում է Մանուել Ա Կոմնենոս կայսեր առ Հայոց կաթողիկոս գրած թղթին²⁴⁶ և Կոստանդնուպոլսի եկեղեցական ժողովի մասնակիցների ստորագրած պատրիարքական նամակին²⁴⁷, Ներսես Լամբրոնացին անդրադառնում է նշված վավերագրերի պատասխանների գրման պարագաներին: Ըստ ՊԽՄ-ի կազմողի՝ ընդառաջ գնալով Հայոց կաթողիկոսարանին, բյուզանդական կողմն. «փոխան ինն գլխոցն՝ զոր ի ժամանակս երանելոյն տեառն Ներսիսի խնդրէին, որ ծանր թուէր յաչս մեր, միայն զսա խնդրեցին զհաւատոյս բան՝ նիւթ միաբանութեան, եւ քննեալ զսոյն գտին ուղղափառ եւ համաձայն սրբոց հարցն»²⁴⁸:

²⁴⁵ Այդ թարգմանական գործունեության մասին տե՛ս նաև Ա. Բոզոյան, «Այլազգի թարգմանիչները»:

²⁴⁶ Ա. Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 78–80:

²⁴⁷ Անդ, էջ 80–82:

²⁴⁸ Ներսէս Շնորհալի, ԹԼ, էջ 180:

Իրոք, Մանուել Ա Կոմնենոսի և Միքայել Գ Անքիալոսի 1176 թ. գրված նամակներում Բյուզանդական եկեղեցին այլևս չէր պահանջում անվերապահորեն հրաժարվել բանավեճի առարկա դարձած ծիսական անհամաձայնությունները վերացնելու պահանջից և, ճանաչելով Հայոց դավանանքի ուղղափառությունը, խնդրում էր, որ հավաքվելիք եկեղեցական ժողովը Հռոմկլայի սրբազան քահանայապետի՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ համատեղ կրկին գրի հավատո խոստովանություն և ժողովին մասնակցող եպիսկոպոսների ձեռքով ստորագրելուց հետո, առաքի Կոստանդնուպոլիս: Մանուել Ա կայսրն առաջարկում էր կաթողիկոսին գլխավորել դեսպանագնացությունը: Բյուզանդական կայսեր պաշտոնական և պատրիարքի ժողովական նամակները Հռոմկլա են հասել 1177 թ. հունվար ամսին²⁴⁹: Բյուզանդական կայսրությունից ստացված նամակները քննարկելով, կաթողիկոսը և իր մերձավորները. «զսոյն գտին ուղղափառ եւ համաձայն սրբոց հարցն»²⁵⁰, որից հետո թագավորական հրամանին և խնդրանքին համաձայն կաթողիկոսը. «հրաւէր եհան ժողովոյ ի Մեծն Հայք եւ յԱրեւելս եւ ի քաղաքն Երուսաղէմ եւ ի Սուրբ լեառն, որ Սեաւ կոչի ժողովել յամենայն կողմանց եպիսկոպոսացն ի Հայրապետականն աթոռ վասն այսր խնդրոյ, որպէս տեսցեն զառաքեալ բանքս խոստովանութեան եկեղեցւոյն Հռոմոց»²⁵¹: Ժողովի նախապատրաստությունները հավանաբար սկսվել են 1177 թ. հունվարից հետո, քանի որ կայսեր և պատրիարքի նամակները Հռոմկլա կարող էին հասնել ամենաշուտն այն ժամանակ:

Գ 8. Ժողովի հրավիրման տեղն ու ժամանակը.

Ն. Լամբրոնացու «Ատենաբանություն» վերնագրի ուշ շրջանի խմբագրությունները հայագետներին տարակարծությունների առիթ են տվել: Մասնագետների մի մասը կարծում է, թե հուշարձանը գրվել է Տարսոնի եկեղեցական ժողովում ընթերցվելու համար²⁵², մյուս մասը՝ Հռոմկլայում: Միասնական

²⁴⁹ Կայսերական նամակը թվագրված է. «Գրեցաւ յամսեանն ի Յունուարի եւ յընդիքտինին ի տասն» (Անդ, էջ 175): Ինչպես նկատել ենք, սա նամակի Հռոմկլա հասնելու կամ հայերեն թարգմանվելու թվականն է: Տե՛ս Ա. Բողոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 78–80:

²⁵⁰ Ներսէս Շնորհալի, ԹԸ, էջ 180:

²⁵¹ Անդ:

²⁵² Ժողովի գումարման տեղը Տարսոնն է համարում, իսկ թվականը՝ 1177 թ. Կղեմես Գալանոսը, հիմնվելով Ներսես Լամբրոնացու «Ատենաբանության» ուշ շրջանի ձեռագրերի վրա: Տե՛ս Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն Հայոց, հտ. Ա, էջ 333:

կարծիք չկա նաև ժողովի հրավիրման թվականի վերաբերյալ²⁵³: Այդ մասին ամենահին պատմական վկայությունը պահպանել է ՊեՄ ժողովածուն. «Եւ ժողովեցան յամենայն գաւառաց եպիսկոպոսք ի սուրբ Պասքայն, ի Հայրապետական աթոռն Հռոմկլայ՝ որ է առ ափն Եփրատայ...»²⁵⁴: Ակնհայտ է, որ ժողովը գումարվել է կաթողիկոսանիստ Հռոմկլա բերդաքաղաքում, սուրբ Զատկի տոնակատարության օրերին: Հռոմկլայի ժողովի թվականը պարզելու ամենակարևոր տեղեկությունը այդ հավաքի կողմից Բյուզանդական պատրիարքին ուղղված ժողովական նամակի խորագրի հետևյալ հատվածն է. «...պատասխանի թղթոյն Միքայելի պատրիարզին՝ որ նախ քան զայս փոխեցաւ յաշխարհէ ի Քրիստոս»²⁵⁵: Հայտնի է, որ Միքայել Գ Անքիալոս պատրիարքը մահացել է 1178 թ. մարտ ամսին²⁵⁶: Ուրեմն՝ սկզբնաղբյուրում հիշատակված Պասքի տոնակատարությունը համապատասխանում է 1178 թ. ապրիլի իննին²⁵⁷: Ելնելով այս իրողությունից, Հռոմկլայի եկեղեցական ժողովը կարելի է թվագրել 1178 թ. ապրիլի 9-ից հետո ընկած մոտակա շաբաթվա

²⁵³ Ըստ հ. Միքայելի (*Միքայել Զամչեանց*, Պատմութիւն Հայոց, հտ. Գ, էջ 123) և նրան հետևող հ. Ղևոնդի (*Ղ. Ալիշան*, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 439) ժողովը գումարվել է 1179 թ. Հռոմկլայում: Հ. Ալեքսանդրն այդ մասին գրում է. «գումարեցաւ Հռոմկլայ կամ Տարսոն 1178-ին»: Տե՛ս Ա. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան, էջ 44): Թեև Մաղաքիա արքեպիսկոպոսը (*Մ. Օրմանեան*, Ազգապատում, հտ. Ա, § 1008–1014) և Պ. Թեքեանն էլ են հետևում այս թվականին (տե՛ս P.P. Tekeyan, *Controverses Chronologiques en Arméno-Cilicie dans la seconde moitié du XII^e siècle (1165–1198)* (Roma, 1939), p. 39, 59), այնուամենայնիվ, չեն բացառում 1197 թ. Տարսոնի ժողովի հրավիրման փաստը: Ժողովի Հռոմկլայում կամ Տարսոնում հրավիրվելու խնդիրը պատմաբանասիրական առանձին քննության է ենթարկել հայագետ Ներսես Ակինեանը և, հետագոտելով հարցի վերաբերյալ պահպանված բոլոր սկզբնաղբյուրները, եկել է այն համոզման, որ ժողովը հրավիրվել է Հռոմկլայում, ուր և ընթերցվել է Ներսես Լամբրոնացու Ատենաբանությունը: Տե՛ս Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 29–35, 193–194:

²⁵⁴ *Ներսէս Շնորհալի*, ԹԸ, էջ 180: Աբել արք. Մխիթարեանցը մատնացույց է անում Հռոմկլայում գումարված երեք ժողով.

ա/ Առաջին ժողովն ըստ նրա տեղի է ունեցել 1165 թ.: Այստեղ Ամենայն Հայոց կաթողիկոս է ընտրվել Ներսես Գ Շնորհալին,

բ/ Երկրորդ ժողովը թվագրում 1172 թ. հետո ընկած ժամանակաշրջանով: Ըստ Մխիթարյանցի այս ժողովում պետք է քննարկվեին բյուզանդական եկեղեցու ինը պահանջները,

գ/ Երրորդ ժողովը նա թվագրում է 1179-ով, ուր ըստ նրա հավաքվել էին երեք հարյուր երեսունվեց եպիսկոպոս: Այս ժողովին չեն մասնակցել Արևելյան եպիսկոպոսները (տե՛ս Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցոյ հանդերձ կանոնադրութեամբք ի պէտս ժառանգաւորաց, աշխատասիրեաց Աբեուլ արքեպիսկոպոս Մխիթարեանց (Վաղարշապատ, 1874), էջ 111–117:

²⁵⁵ *Ներսէս Շնորհալի*, ԹԸ, էջ 192:

²⁵⁶ V. Grumel, *La Chronologie*, p. 436.

²⁵⁷ Անդ, p. 257 և Հ.Ս. Բաղայան, *Օրացույցի պատմություն* (Երևան, 1970), էջ 439:

ժամանակահատվածով²⁵⁸, քանի որ ըստ նույն սկզբնաղբյուրի. «կատարեալ փրկագործ աւուրս շարշարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի միասին, եւ յետ այսորիկ պարապեցին ի քննութիւն գրեցելոց թղթոցս ի թագաւորէն Հռոմոց եւ յեկեղեցւոյն»²⁵⁹:

Հռոմկլայի ժողովի մասին հանգամանորեն խոսող Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, թվագրելով այս իրադարձութիւնը 1179 թ. Զատիկով, գրում է. «Ժողովին տեւողութիւնն ալ ճշդուած չէ, բայց երկարատե եղած պետք է ընդունիլ, վասն զի մինչեւ որ համաձայնութիւն մը գոյանայ եւ ժողովական գիրքեր պատրաստուին եւ թղթատարը ճամբայ ելլէ Մանուէլի մահը տեղի ունեցաւ 1180 թ. սեպտեմբերի 27-ին, կամ 25-ին, որ է ըսել ժողովին բացուելէն 18 ամիս ետքը»²⁶⁰: Մ. Օրմանյանի պնդումն արդարացի չէ: Վերևում տեսանք, որ ժողովը գումարված պետք է լինի 1178 թ. ապրիլի 9-ին հաջորդող շաբաթվա ընթացքում: Նշանակում է, թէ մինչև Մանուէլ Ա Կոմնենոսի մահը կար գրեթե երկուս ու կես տարի: Այդ իսկ պատճառով պետք է ենթադրել, որ կաթողիկոսը մեծ ջանքեր չի գործադրել նամակները ժամանակին հասցենաւորոջը հասցնելու համար:

Ներսես Լամբրոնացին Հռոմկլայի ժողովում գրված թուղթ-վավերագրերի ճակատագրի մասին գրում է. «Եւ աղաչեցին ամենայն ժողովն՝ փութապէս առաքել զգրեալս, զի մի, ասեն, պատահեցէ յարքայէն մահուամբ խափանումն առաջարկեալ խորհրդոյս: Իսկ կաթողիկոսն սուրբ պատրաստեաց վաղվաղակի թղթտարս՝ ընթանալ ի թագաւորականն քաղաք, եւ հասեալ նոցա ի Կեսարիա՝ արգելական վասն խռովութեան ճանապարհի եւ դարձան յետս, ընդ որ վշտացաւ ոչ սակաւս, եւ հնարէր վերստին զընթացսն: Յայնժամ եհաս համբաւ դառնագոյն, եւ լուաք զվախճան բարեպաշտ աստուածասէր եւ իմաստուն արքային Հռոմոց, յամսեանն սեպտեմբերի քսան եւ եւթն, եւ ի թուականիս Հայոց վեց հարիւր եւ քսան եւ ինն»²⁶¹:

²⁵⁸ Ժողովի գումարման թվականը ճշտելիս ընտրել ենք հ. Ներսես Ակինյանի որդեգրած ճանապարհը, սակայն բազմավաստակ հայագետը կարծում է, թե Միքայել Գ Անքիալոս պատրիարքը մահացել է 1177 թ. մարտ-ապրիլին: Նա հղում է բյուզանդագետ Լըբոյի վաղուց հնացած աշխատանքը: Հետևաբար, ըստ հ. Ներսեսի, ժողովն էլ գումարվել է 1177 թ. ապրիլի 24-ից հետո (տե՛ս Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 33):

²⁵⁹ Ներսէս Շնորհալի, ԹԸ, էջ 180:

²⁶⁰ Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, § 1010:

²⁶¹ Ներսէս Շնորհալի, ԹԸ, էջ 200:

Գ 9. Հռոմկլայի ժողովի հետ առնչությունն ունեցող փաստաթղթեր.

Ժողովից մեզ հասած վավերագրերը կարելի է բաժանել երկու խմբի՝ պաշտոնական և ոչ պաշտոնական: Պաշտոնական վավերագրերը երկուսն են. Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի անունից պատասխաններ են գրվել Մանուել Ա Կոմնենոս կայսրին²⁶² և Միքայել Գ Անքիալոս պատրիարքին²⁶³: Վավերագրերից երկրորդի տակ ստորագրել են 33 ժողովականներ²⁶⁴:

Այժմ հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել Ներսես Լամբրոնացու մատենագրական մի քանի երկերի վրա, որոնք առնչություն ունեն քննարկվող ժողովի հետ: Նկատի ունենք նրա գործունեության վաղ շրջանին պատկանող երկերի ժողովածուն, որը վերաբերում է հայ-բյուզանդական բանակցություններում արծարծված խնդիրներին: Այդ ժողովածուի մեզ հասած ձեռագրերն ընդօրինակվել են 1205–6 թ. Ներսես Լամբրոնացու քրոջ որդու՝ Ներսես քահանայի մեկենասություն արտագրված մատյանից²⁶⁵: Վերջինս այս հավաքածուի վերջում ընդօրինակել է տվել նաև Գրիգոր Սկևռացու²⁶⁶ գրած՝ Ներսես Լամբրոնացուն ձեռնված. «Ներբողեան պատմագրաբար ասացեալ ի վարս մեծի քահանայապետին սրբոյն Ներսէսի արհիեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցոց» վարձագրական երկը²⁶⁷, որը ստեղծվել է

²⁶² Տե՛ս Ա. Բողոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 82–85: Կայսերն ուղղված թղթով կաթողիկոսը հավաստում է իր համաձայնությունը միության խնդրի վերաբերյալ, նամակում խոսվում է երեք կարևոր հարցերի մասին.

ա/ Հայոց եկեղեցին ընդունում է Նիկիայի, Կոստանդուպոլսի, Եփեսոսի Տիեզերական ժողովները: Հետաքրքիր է, որ չի հիշատակվում Քաղկեդոնի ժողովը,

բ/ Հայոց եկեղեցին նգովում է գլխավոր աղանդավորներին՝ Արիոսին, Մակեդոնին, Կոռոս Սամոսատցուն, Նեստորին, Եվտիքեսին,

գ/ Տրվում է Հայոց եկեղեցու դավանանքի բանաձևը, ուր ոչ մի տեղ չի հանդիպում երկու բնությունն արտահայտությունը:

²⁶³ Տե՛ս Ա. Բողոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 86–89: Բյուզանդական պատրիարքին ուղղված թղթում տրվում է Հայոց եկեղեցու դավանաբանության բանաձևը, ուր այս բանակցությունների պաշտոնական գրազրույթունների մեջ առաջին անգամ, միայն մեկ դարձվածքով հանդիպում ենք. «Խոստովանիմք համաձայն ձեզ ի Քրիստոսի անճառ միություն երկու բնութեան տեսություն»: Տե՛ս Ներսէս Շնորհալի, ԹԷ, էջ 196:

²⁶⁴ Հմմտ. Ա. Բողոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, էջ 82–89:

²⁶⁵ Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 165–167; ՀԶԷ, ԺԳ դար, էջ 48–53:

²⁶⁶ ԺԲ դարի երկրորդ կեսի և ԺԳ դարի սկզբի վանական այս գործի գործունեության մասին տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 100–101: Գրիգոր Սկևռացու մատենագրական վաստակի մասին տե՛ս Գր. Հակոբյան, Սկևռայի գրական-մշակութային դպրոցը (Երևան, 1988), էջ 34–35:

²⁶⁷ Գրիգորի Սկևռացուց Ներբողեան ի սուրբն Ներսէս Լամբրոնացի (Վենետիկ, 1854), էջ 5–90:

մատյանի ընդօրինակումը ապահովող մեկենասի՝ Ներսես քահանայի խնդրանքով²⁶⁸: Ձեռագրերի այս խմբին են պատկանում Վատիկանի գրադարանի Բորգյան հավաքածուի թիւ 84 (1325 թ.)²⁶⁹, Երուսաղեմի Սուրբ Յակովբեանց Մատենադարանի թիւ 146 (1551 թ.)²⁷⁰ և Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի թիւ 10509 (1618 թ.)²⁷¹ մատյանները: Բոլորն էլ ունեն նախօրինակի՝ 1205/1206 թ. արտագրված ձեռագրի հիշատակարանները: Միայն ՄՄ, ձեռ. 10509 մատյանում Գրիգոր Սկևռացու «Ներբողեանը» և դրա հիշատակարանն ու 1205 թ. Ներսես քահանայի մեկնության միջնամասում՝ «Օրէնք արկանելոյ սպաս եկեղեցոյ» գլխից առաջ: Մեր կարծիքով, ՎՀԲ, ձեռ. 84 և ԵՅՄ, ձեռ. 146 մատյանները, հարազատորեն են պահպանել նախօրինակի նյութերի դասավորությունը.

- Ատենաբանութիւն²⁷²,
- Գլխակարգութիւն հոռոմոց... եւ լուծմունքն առննթեր եղեալ²⁷³,
- Խնդիրք Հայոց²⁷⁴,
- Խորհրդածութիւն ... և Պատարագի մեկնութիւն²⁷⁵:

Ձեռագրերի այս խմբում պահպանված հիշատակարաններից երևում է, որ Ներսես Լամբրոնացին վերոհիշյալ երկերը գրել է 1177/8 կամ 1178/9 թվականին²⁷⁶: 1189/90 թ., հիշյալ երկերը պատունակող անձնական մատյանը

²⁶⁸ Ն. Ակիւնեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 9:

²⁶⁹ Այս ձեռագրի նկարագրությունը տե՛ս Codices Armeni Bibliothecae Vaticanae Borgiani, Vaticani, Barberiani, Chisiani, Schedis Fr.C. Conybeare adhibitis, ecensuit Ev. Tisserant (Romae: Bibliothecae Vaticanae scriptor, 1927), p. 177–185 (այսուհետև՝ ՎԲՄ-84):

²⁷⁰ Նկարագրությունը տե՛ս ՄՅՁՄՅ, հտ. Ա, էջ 417–419 (այսուհետև՝ ԵՅՄ-146):

²⁷¹ Տե՛ս Միւրմէեան 1950, էջ 45–51 (այսուհետև՝ ՄՄ, ձեռ. 10509): Ըստ Ա. արք. Միւրմէյանի՝ դեռևս 1949 թ. օգոստոսի երեքին ձեռագիրը պատկանել է փարիզաբնակ Jean Pozzi-ին: 1971 թ. ապրիլի 30-ին մատյանը Փարիզում աճուրդի է հանվել: Այն գնել են Երուսաղեմի Հիւսեանը (Միլան), Մուշեղ Ճիլերճեանը (Մոնակո), Մուշեղ և Պետրոս Մելքոնեան եղբայրները (Դելատուր), Արծրուն Զրբաշեանը (Մարսել) և հանձնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանը ստացել է ձեռագիրն Ամենայն Հայոց կաթողիկոս, երջանկահիշատակ Վազգեն Ա-ից: Այս տեղեկությունները քաղել ենք մատյանի կազմի վրա սոսնձված հիշատակագրությունից:

²⁷² Ներսես Լամբրոնացի 1838, էջ 91–202:

²⁷³ Տե՛ս Ա. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան, էջ 260-266: Ուշ շրջանի որոշ ձեռագրերում այս բնագրին հաջորդում է հետևյալ հիշատակագրությունը. «Կատարեցաւ պատասխանիսն Թ՝ գլխոց խնդրոցն Հոռոմոց. և ընդ նմին է խնդիրս ևս ի կողմանէն Հայոց ժողովոյն, զոր հանդերձ թղթիւք և խոստովանութեամբ առաքեցին առ արքայն և պատրիարգն՝ կաթողիկոսն Հայոց Գրիգոր ձայնակցութեամբ ընդհանուր ժողովոյն» (ՄՄ, ձեռ. 3062, թղ 122ա):

²⁷⁴ Տե՛ս Ա. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան, էջ 266:

²⁷⁵ Այս երկի կառուցվածքի մասին ավելի մանրամասն տե՛ս Ն. Ակիւնեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 159–162: Նյութերի մեզ հետաքրքրող հերթականությամբ հրատարակությունը տե՛ս Ներսէս Լամբրոնացի, Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ, էջ 1–555:

²⁷⁶ ՎԲՄ-84, թղ 49բ, 373ա:

գերի է ընկնում և միայն 1192/3 թ. է հաջողվում այն ազատագրել գերովթյունից²⁷⁷: 1193/4 թ. Ներսես Լամբրոնացին կրկին վերանայում և արտագրում է մատենագրական երկերի այդ խումբը առանձին մատյանի մեջ, որից էլ մեծ բարեխղճությամբ ընդօրինակում են Սկևռայի վանական Ավետիքը և Ս. Զորավար եկեղեցու քահանաներից²⁷⁸ մեկը. «Ընդարինակեցաւ գիրքս այս ըստ առաջին գրեալսն ձեռամբ սրբոյ առնն Աստուծոյ եւ հաւատարիմ պաշտանէի Քրիստոսի Ներսիսի: Վասն որոյ զգուշասցի իւրաքանչիւր ոք, թէ ո գիտէ, եւ առցի ի գաղափար բանի եւ գրոյ՝ հրամանի եւ ստորատի եւ տան»²⁷⁹:

Հիշատակարանից հստակ երևում է, որ երկերը գրված են եղել հասարակության կողմից քննարկվելու համար. «միանգամ եւ երկիցս հանի զսալատեան եւ ի ժողովս եպիսկոպոսաց եւ իշխանաց, եւ ոչ եղեւ պարապումն գոնէ ընթերցման կամ ունկնդրութեան»²⁸⁰, բողոքում է Տարսուսի արքեպիսկոպոսը: Այս տողերից կարելի է կուսակցել, որ Ներսես Լամբրոնացին Հռոմկլայի ժողովի նախօրյակին գրած այս երկերում առկա դրուժները փորձել է քննարկման առարկա դարձնել ժողովում, սակայն ապարդյուն են անցել նրա բոլոր ջանքերը, և նա 1193/4 թ. վերստին արտագրում է դրանք սերունդներին պահ տալու մտահոգությամբ²⁸¹: Այս ենթադրությունը հաստատվում է նաև Ներսես Լամբրոնացու հետևյալ տողերով. «Ձկանխաւ լռութեան պտուղն ի թուին ՈՒԷ (=1178/9). աստ վերստին շարադրեալ թողի զկնի եկելոցդ նուաստ Ներսէս ի թուականիս ՈՒԵ եւ Բ (=1193/4)»²⁸²:

Ձեռագրերի այս խումբն է ավանդում նաև Ներսես Լամբրոնացու «Ատենաբանութեան» խորագրի²⁸³ հնագույն տարբերակը. «Սուրբ եւ տիեզերական ժողովոյն, որ եղեւ ի շրջան ընթացից ՈՒԶ (=1177/8) թուականէ»²⁸⁴. հրամանաւ Գրիգորիսի՝ յաջորդի առաքելական աթոռոյ²⁸⁵ Գրիգորի: Համաձայնութիւն

²⁷⁷ Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, սյուն 467:

²⁷⁸ Հմմտ. Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 166:

²⁷⁹ ՀԶՀ, ԺԳ դար, էջ 53:

²⁸⁰ Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, սյուն 467:

²⁸¹ Անդ:

²⁸² ՎՔՄ-84, թղ. 49ա:

²⁸³ Մ. Օրմանյանն անդրադառնալով Հռոմկլայի ժողովից մեզ հասած վավերագրերին, ընդգծում է. «Ժողովական գործեր չգտնուելուն վրայ, ոմանք այդ ժողովին պատշաճեցուցին Լամբրոնացիի նշանաւոր Ատենաբանութիւնը...»: Տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, § 1010: Մ. Օրմանեանին պարզապէս հայտնի չի եղել «Ատենաբանութեան» վերոթվարկյալ ձեռագրերում առկա խորագիրը: Վաստակաշատ հայագետի կարծիքը ճշմարիտ է այնքանով, որքանով որ «Ատենաբանութիւնը» գրվել է Հռոմկլայի ժողովում ընթերցվելու նպատակով, սակայն ամենայն հավանականությամբ, ինչպէս վկայում է հեղինակը՝ չի ընթերցվել:

²⁸⁴ Թուականի] – ԵՅՄ-146, ՄՄ-10509:

²⁸⁵ սրբոյ] աթոռոյ – ՄՄ-10509:

Ներսէսի նուաստ նոցին պաշտանակցի»²⁸⁶: Ինչպէս վերևում տեսանք, Հռոմ-կլայի եկեղեցական ժողովի նախապատրաստական աշխատանքները սկսվել են 1177 թ. հունվարից հետո, ըստ այդմ էլ Ներսէս Լամբրոնացին «Ատենաբանութիւնը» և վերոթվարկյալ մյուս երկերը ավարտել է 1177 թ. հունվար – 1178 թ. ապրիլ ժամանակամիջոցին²⁸⁷: Ակնհայտ է, որ այդ երկերը գրելու պահին Ներսէս Լամբրոնացին դեռևս Տարսոնի արքեպիսկոպոսը չէր, քանի որ միայն. «յետ ամաց ինչ դարձեալ ածայ յեկեղեցական պաշտան եւ ի մարմնական գործոց զբաղանք»²⁸⁸: Ներսէսն իբրև Տարսոնի արքեպիսկոպոս, առաջին անգամ հիշատակվում է Հռոմկլայի եկեղեցական ժողովի՝ Կոստանդնուպոլսի պատրիարքին հասցեագրված թղթում. «Ներսէս արքեպիսկոպոս մայրաքաղաքին Կիլիկեցոց Տարսոնի»²⁸⁹:

Գ 10. Հռոմկլայի եկեղեցական ժողովի մասնակիցները.

Այս ժողովը 1165–1178 թթ. հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական փոխհարաբերությունների բարձրակետն է: Այնտեղ քննարկված ծիսական և դավանական խնդիրների հանդեպ Հայոց եկեղեցու վերաբերմունքը պիտի

²⁸⁶ ՎՔՄ-84, թղ. 3ա: ԺԴ դարի սկզբի մի այլ ձեռագրում նույն երկն արդեն վերնագրված է. «Յաստուածախումբ եւ ի տիեզերական ժողովն Տարսոնի, որ եղեւ ի համահրեշտակ կաթողիկոսէն Հայոց Գրիգորէ՝ եղբարորդոյ սրբոյն Ներսէսի Կլայ(ե)ց(ւ)ոյն եւ ի քրիստոսապսակ արքայէն Հայոց Լեւոնէ, սակս միութեան եկեղեցոյ: Ատենական խաւսք մեծին եւ սրբոյն Ներսէսի՝ այնմ աստուածապահ քաղաքի աթոռակալի եւ աստուածախաւս վարդապետի» (տե՛ս ՄՄ, ձեռ. 500, թղ 381ա, ըստ Օ. Եգանեանի նկարագրության): Մեր կարծիքով այս երկու վավերագրերի միաձուլումից է ստացվել նույն երկի վերնագրի ավելի ընդարձակ տարբերակը, որը հանդիպում է ԺԵ-ԺԹ դարերի մի շարք ձեռագրերում. «Յաստուածախումբ եւ ի տիեզերական ժողովոյն Տարսոնի, որ եղեւ ի շրջան ընթացից ժամանակի ՈՒԶ թուականի Հայոց, հրամանաւ համահրեշտակ կաթողիկոսին Հայոց Գրիգորիսի եղբորորդոյ սրբոյն Ներսիսի յաջորդի առաքելական աթոռոյ սրբոյն Գրիգորի եւ քրիստոսապսակ արքային Հայոց Լեւոնի, սակս միութեան եկեղեցոյ (Հայոց եւ Հռոմոց) ատենական խաւսք մեծի Ներսէսի այնմ քաղաքի աթոռակալի եւ աստուածախաւս վարդապետի» (ավելի մանրամասն տե՛ս Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 189–190):

²⁸⁷ Ձեռագրական այս ժողովածոյում հիշատակված ավանդույթը պահպանել է նաև Ներսէս Լամբրոնացու գրած 1177/8 թ. հիշատակարանը. «Գրեցաւ ի թուականիս ՈՒ և Զ յանապատս սուրբ Գէորգ, ի մէջ լերինս Տաւրոսի, ի գահ Կիլիկիոյ և ի սկիզբն Պանփիլեայ, ի կաթողիկոսութեան տեառն Գրիգորի և իշխանութեան Հեթմոյ սեւաստոսի» (ՎՔՄ-84, թղ. 373ա, ԵՅՄ, ձեռ. 146, թղ. 572բ):

²⁸⁸ Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, սյուն 467: Տարօրինակ է, որ հ. Ներսէս Ակինեանն առանց որևէ հիմնավոր ապացույցի պնդում է, որ 1175 թ. Ներսէս Լամբրոնացին. «ստացաւ կաթողիկոսին աջէն եպիսկոպոսական օծումը, իբրև արքեպիսկոպոս Տարսոնի թեմին» (Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 22):

²⁸⁹ Ներսէս Շնորհալի, ԹԼ, էջ 199:

անուղղակիորեն ազդեր հայ-բյուզանդական եկեղեցական և քաղաքական փոխհարաբերությունների հետագա ընթացքի վրա: Այս ժողովում հավաքվել էին Մեծ Հայքի և մերձակա հայաբնակ գավառների ու Մերձավոր Արևելքի մի շարք պետությունների Հռոմկլայի աթոռին ենթակա եպիսկոպոսները, ինչն արդեն խոստովանում է ժողովի կարևորության մասին: Փորձենք աշխարհագրորեն տարազատել այն քաղաքական միավորները, որտեղից ժամանել էին ժողովականները.

- Հալեպի աթաբեկություն-Հայոց կաթողիկոս [Հռոմկլա], Եղեսիայի արքեպիսկոպոս և Ապամեայի եպիսկոպոս²⁹⁰,
- Ատրպատական (Ելկտուզյաններ) – Աղվանից կաթողիկոս [Զարեք բերդ²⁹¹], Այունյաց արքեպիսկոպոս [Տաթև], Դվինի արքեպիսկոպոս, Նախճավան, Հեր և Զարեանդ, Սալմաստ և դրանն Պարսից եպիսկոպոսներ,
- Վրաստան-Տփլիսի արքեպիսկոպոս [Հաղբատի վանահայր]²⁹²,
- Անտիոքի դքսություն Անտիոքի արքեպիսկոպոս, և Լատոլիկիսյի (կամ Լատակիսյի) եպիսկոպոս²⁹³,
- Երուսաղեմի թագաւորություն – Երուսաղեմի արքեպիսկոպոս,
- Իկոնիայի սուլթանություն – Կապադովկյան Կեսարիայի, Մելիտենեի, Սեբաստիայի և Նեոկեսարիայի եպիսկոպոսներ,
- Կիլիկիայի հայկական իշխանություններ – Տարսոնի արքեպիսկոպոս, Անարզաբայի, Սելևկիայի, Մամեստիայի, Կոկիսոնի եպիսկոպոսներ,
- Շաղաղայան ամիրայություն – Անիի արքեպիսկոպոս և Կարսի եպիսկոպոս²⁹⁴,

²⁹⁰ Հյուսիսային Ասորիքի հիշատակված տարածքների վրա Հալեպի աթաբեկությունը հաստատվել է 1144–1151 թվականներին: Տե՛ս Cl. Cahen, *La Syrie*, p. 368–377; N. Elisséeff, *Nûr ad-Dîn, un grand prince musulman de Syrie au temps des croisades (511–569 H. / 1118–1174)*, t. 1 (Damas: Institut français de Damas, 1967), p. 165: ԺԲ դարի 70-ական թվականներին Հռոմկլայի ենթակայությունը Հալեպի աթաբեկությանը կասկած չի հարուցում: Այդ են վկայում Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի ընտրությանը նախորդած իրադարձությունները: Տե՛ս M.S., t. III, p. 353–354:

²⁹¹ Աղվանից կաթողիկոսների նստավայրն այս շրջանում Կիրակոս Գանձակեցին համարում է Զարեք բերդի մոտակայքում գտնվող քարայրը: Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 178 և հմմտ. Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, Ա հատոր (Վաղարշապատ, 1902), էջ 189:

²⁹² Այս եպիսկոպոսական աթոռի նստավայրը Հաղբատն էր: Տե՛ս Հ.Գ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, էջ 213–214, ծան. 274:

²⁹³ Cl. Cahen, *La Syrie*, p. 325.

²⁹⁴ Ըստ Վ. Բարթոլդի և Կ. Հեյվուդի՝ 1161–1206 թթ. քաղաքը պատկանել է Շաղաղայաններին: Տե՛ս W. Barthold-[C.J. Heywood], “Kars,” in: *EL2*, t. IV p. 679:

▪ Սալդուխյան ամիրայություն-Թեոդուսոպոլիս-Կարինի արքեպիսկոպոս²⁹⁵,

▪ Խլաթի ամիրայություն (Շահի-Արմեններ) – Բզնունիքի, Սամոսատի, Աշմուշատի (Արշամաշատ), Նփրկերտի եպիսկոպոսներ²⁹⁶,

▪ Արտուքյան ամիրայություն – Ծոփքի, Սամոսատի, Աշմուշատի (Արշամաշատ), Նփրկերտի եպիսկոպոսներ,

▪ Բյուզանդական կայսրություն – Կիպրոսի եպիսկոպոս:

Այսպիսով, Հռոմկլայի ժողովին մասնակցող 33 բարձրաստիճան հոգևորականները ներկայացնում էին Մերձավոր Արևելքի տասներկու քաղաքական միավոր:

Բացի Հայոց եկեղեցու սպասվորներից, Հռոմկլայի ժողովին մասնակցել են նաև հակոբեիկ-ասորական եկեղեցու ներկայացուցիչներ, որոնց մասին ՊեՄ-ում ընթերցում ենք. «ընդ նոսին (իմա՝ հայ հոգևորականներ – Ա.Բ.) և յեպիսկոպոսապետէն Ասորոց վարդապետք և իմաստուն արք»²⁹⁷:

²⁹⁵ Հատ Ինալչիկի 1178 թ. քաղաքը գտնվել է Սալդուխյանների ձեռքին: Տե՛ս **H. İnalçık**, “Erzurum,” in: *EI2*, t. II, p. 730 և հմմտ. նաև **Հ.Ս. Էփրիկեան**, Պատկերագարո՞ղ բնաշխարհիկ բառարան, հտ. Բ (Վենետիկ, 1907), էջ 311: Այս մասին տե՛ս նաև Սալդուքյան ամիրաների ժամանակագրությանը նվիրված հրապարակման մեջ. **Ա. Խաչատրյան**, «Կարնո Սալդուխյանների ժամանակագրությունը և տոհմաբանությունն ըստ արաբական վիմագիր աղբյուրների», ԱՍ 1 (1988), էջ 116, 124:

²⁹⁶ Աղբյուրների սակավության պատճառով դեռևս լիովին ճշգրտված չեն այս և հաջորդ ամիրայության սահմանները:

²⁹⁷ **Ներսէս Շնորհալի**, ԹԼ, էջ 180:

ՄԱՍ Դ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԸ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԸ

Դ 1. Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգը ԺԳ դարի սկզբներին.

Ամենայն Հայոց կաթողիկոսության նվիրապետական կառույցի սահմանները ԺԲ դարի ընթացքում արդեն տարածվում էին Բյուզանդիայի արևմտյան սահմաններից մինչև Կասպից ծով, Վրաստանից մինչև Եթովպիա. այսպես կարելի է հասկանալ՝ մյուս սկզբանղբյուրների հետ բաղադատելով, նաև Ներսես Դ Շնորհալու հետևյալ տեղեկությունը. «...որք յարևելա՝ ի սեփական աշխարհս Հայաստանեայց բնակեալք, և որք յարևմտեան կողմանսդ սահեալք նժդեհութեամբ, և որք ի Միջերկրայս...»¹: Հայոց եկեղեցու ազդեցության ոլորտի աշխարհագրական լայն ընդգրկումը Փոքր Ասիայում և դրա արևելքում, արդեն արձանագրված է ԺԲ դ. Բ կեսի խաչակրաց պատմիչ Վիլհելմ Սուրացու աշխատության մեջ, ուր խոսելով շուրջ կես դար առաջ տեղի ունեցած դեպքերի մասին, կաթողիկոսին խաչակրաց պատմիչն անվանում է հայերի գլխավոր քահանայապետ, որի իշխանությունը տարածվում էր Կապադոկիայի, Մեդիայի, Պարսկաստանի և երկու Հայաստանների վրա²: Ստեփանոս Օրբելյանն էլ ԺԴ դարի սկզբում այսպես է դիմում Գրիգոր է Անավարզեցի կաթողիկոսին. «...հայր հանուրց սեռից Հայկայ և կաթողիկոս տիեզերական ի դրան է Հոնաց և Լինաց, ի ծով է Կասպից և ի լեռն է Կովկասեաց մինչ ի սահմանս եգիպտական և ի ծովն արևմտային, ուր գիշերն ագանի ակն

¹ Տե՛ս Անդ, էջ 1 և հմմտ. Ա. Բոգոյան, «Կաթողիկոս Հայոց» տիտղոսի նորովի ընկալումը Բագրատունեաց թագավորության անկումից հետո», Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը (Երևան, 2000), էջ 82–84:

² «Cui synodo interfuit maximus Armeniorum pontifex, immo omnium episcoporum Capadocie, Medie, Persidis et utriusque Armenie princeps et doctor eximius, qui Catholicus dicitur»: Տե՛ս Guillaume de Tyr, *Chronicon*, p. 699. 15.18¹⁵⁻¹⁸:

տու[ու]նչենային»³: Միևնույն ժամանակ կենտրոնախույս քաղաքական նկրտումներին հարմարված Հայոց եկեղեցու տարբեր գործիչներ էլ, նոր կաթողիկոսական աթոռներ էին ստեղծել Հոնիում, Մարաշում, Աղթամարում և նույնիսկ Եգիպտոսում: ԺԲ դարի 30-ական թթ. ապրած պատմիչ Մատթեոս Ուռհայեցու տեղեկությամբ Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռների վրա ժամանակ առ ժամանակ կարելի էր հաշվել շորսից ավելի կաթողիկոս⁴: Այդ աթոռները կարևոր դեր էին կատարում Կիլիկիայի և Վրաց թագավորությունների, խաչակրաց պետությունների, Իկոնիայի սուլթանության, ինչպես նաև Դանիշմանյան, Շահի Արմենների, Դվինի և Շաքիի Շաղղաղյան, Այուբյան և Ատրպատականի Ելիսուզյան ամիրայությունների հայկական ազգաբնակչության հոգևոր-եկեղեցական կյանքում: Հակաթոռ կաթողիկոսությունների վերացման կամ Հայոց եկեղեցու հետ վերամիավորման համար սկսված պայքարում կարևոր դեր կատարեցին Բարսեղ Ա-ին (1105–1113) և Գրիգոր Գ (1113–1166) հայրապետները, մանավանդ աննախադեպ էր Կարմիր վանքում 1113/4 թ. տեղի ունցած ժողովը⁵, որի բացառիկության մասին «Ընդհանրական թղթում» ակնարկում է Ներսես Շնորհալին⁶:

Հայոց եկեղեցում հակաթոռ կաթողիկոսական աթոռների բազմացման միտումը, որը նկատելի է ԺԱ դարի վերջին և ԺԲ դարի սկզբին, նոր տարածում է ստանում Լևոն Բ Ռուբինյան իշխանի (1187–1198), այնուհետև՝ թագավորի (1198–1219) իշխանության տարիներին: Այսպես օրինակ, սկսած 1193 թ., երբ մահացավ Գրիգոր Տղա կաթողիկոսը, վիմագիր արձանագրություններում իրեն Հայոց կաթողիկոս է անվանում Անիի արքեպիսկոպոս Բարսեղը⁷, որի թեկնածությունը կաթողիկոսական գահին տիրանալու համար, ըստ Ներսես Լամբրոնացու, առաջարկել են Արևելից կողմանց վարդապետները Գրիգոր Ե Քարավեժի (1193–1194) ողբերգական մահվան ժամանակներից⁸: Եթե ԺԱ դարի վերջի և ԺԲ դարի սկզբին առաջացող կաթողիկոսական աթոռները ձևավորվում էին տարբեր հայկական քաղաքական ուժերի թելադրանքով, ապա ԺԲ դարի վերջին կաթողիկոսական իշխանության գործերին միջամտելու գործընթացը հայկական էկոմենեոսում փորձում է ամբողջովին իր

³ Տե՛ս **Ստեփաննոսի** Մրենեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սրական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին (Մոսկվա, 1861), էջ 330:

⁴ **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, էջ 205–206, 210–211, 215–216, 220–222, 228–230:

⁵ Տե՛ս **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, § 1581–1584:

⁶ **Ներսէս Շնորհալի**, ԹՂ, էջ 2:

⁷ **Կ. Մաթևոսյան**, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը (Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997), էջ 66–68:

⁸ RHC d.a., t. I, p. 594.

ձեռքը վերցնել Կիլիկիայի հայկական թագավորությունը, որին հիշյալ դեպքում հակադրվում են Հյուսիս-արևելից կողմանց Հայոց եկեղեցու հոգևորականները: Միակ բացառությունը Սեբաստիա քաղաքում Անանիա հակաթուկաթողիկոսի օժուժն էր⁹, որն էլ ամենայն հավանականությամբ պայմանավորված էր հզորացող Իկոնիայի սուլթանության քաղաքական նկրտումներով: Կիրակոս Գանձակեցին անդրադառնալով ժԳ դարասկզբին, Գրիգոր Ապիրատի մահից հետո Հայոց կաթողիկոսական աթոռի մասնատվածության խնդրին, ամփոփում է. «...բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի յերիս՝ մի բունն, զոր էառն Յովհաննէս, որ ի Հռոմկլայն, և միւսն ի Սեւաստ, զոր ապստամբեցաւ Անանիա, և միւս եւս ի կղզւոջն, որ կոչի Աղթամար, Դաւիթ անուն»¹⁰:

Դ 2. Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգի հիմնական կաթողիկոսական աթոռները.

Մատթեոս Ուռհայեցին խոսելով ժԱ դարավերջի Հայոց եկեղեցու վիճակի մասին գրում է. «...ի շորս բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի (Լուսաւորչի – Ա.Բ.). զի ահա Տէր Վահրամ յեգիպտոս, և Տէր Թէոդորոս ի Հոնին, և Տէր Պաւղոս ի Մարաշ քաղաքն. և սոքա իւրաքանչիւր ոք առնէին ձեռնադրութիւնս և աւժանէին եպիսկոպոսունս և տային արհնութիւնս սուրբ ձիթոյն, և ի նոցանէ արհնէին քահանայք, և լինէր պատարագ և մկրտութիւն և պսակն կուսանաց: Եւ էր այս ամենայն սուգ մեծ ի վերայ եկեղեցւոյն Աստուածոյ, վասն զի մի փարախն ոչխարաց ընդ շորս հաւտապետութիւնս բաժանեցաւ, և գայլք եղեն պահապանք հաւտին Քրիստոսի»¹¹: Հետագայում, պատմությունը որոշ սրբագրությունների ենթարկեց կաթողիկոսական աթոռների այս ցանկը: 1092 թ. Բարսեղ Ա-ը գահընկեց արեց Հոնիի կաթողիկոս Տեր Թեոդորոսին¹², 1093 թ. մահացավ մինչ այդ կաթողիկոսական իշխանությունից հրաժարված, Մարաշի Տեր Պողոսը¹³: 1113 թ. նոր կաթողիկոսական աթոռ հայտարարվեց Աղթամարը, որի պատմությունը շարունակվեց մինչև Ի դարասկզբի ողբերգական իրադարձությունները, իսկ Եգիպտոսի տեղական աթոռի

⁹ Հ. Պէրպէրեան, «Անանիա հակաթուկաթողիկոս 1201–1211 (1223 Վ)», Միտն 10 (1964), էջ 286–289, թ. 11–12, էջ 360–363: Հմմտ. H. Berbérian, “Le patriarcat arménien du sultanat de Roum”, REArm., N.S., t. III (1966), p. 233–243:

¹⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 149:

¹¹ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 229–230:

¹² Անդ, էջ 240–241:

¹³ Անդ, էջ 244:

մասին ժԲ դարում և դրանից հետո հայ պատմագրության մեջ այլևս տեղեկություններ չեն պահպանվել: Այդ իսկ պատճառով անդրադառնանք հիմնական եկեղեցական կենտրոններին, որոնք ժԲ դարի սկզբից նշանակալի դեր են կատարել ազգային եկեղեցու նվիրապետական կառույցում:

Դ 3. Ամենայն Հայոց կաթողիկոսը.

Խաչիկ Բ-ը գահը ժառանգելով Բյուզանդիա արքայազն Պետրոս Գետադարձից, ժամանակավորապես հաստատվեց Սեբաստիայում՝ Արծրունիների կալվածքում, իսկ վերջինիս մահից հետո՝ Գագիկ Կարսեցի թագավորի միջնորդությամբ և Բյուզանդական կայսրության թուլյտվությամբ կաթողիկոսական գահ բարձրացավ Գրիգոր Բ Վկայասերը, որն սկզբում հաստատվեց Մամնդավում, ապա՝ Կարմիր վանքում: Նրանից հետո, շուրջ մեկ դար, Ամենայն Հայոց կաթողիկոսական գահին էին բազմում իր տոհմի՝ Պահլավունի ազնվական տան ներկայացուցիչներ: Սկսած Գրիգոր Գ-ի ժամանակներից, շուրջ 150 տարի, Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի նստավայր դարձավ Եփրատի ափին գտնվող Հոռմկլա ամրոցը: Կաթողիկոսարանը Մերձավոր Արևելքում ձեռք բերեց հսկայական եկեղեցաբաղադրական հեղինակություն, ստեղծեց եպիսկոպոսական աթոռների մի խիտ ցանց, որի գլխին էր կանգնած Հոռմկլայում նստող Ամենայն Հայոց կաթողիկոսը: Մահմեդական տերություններն այս շրջանից սկսեցին Հոռմկլայում նստող Ամենայն Հայոց կաթողիկոսին անվանել Հայոց խալիֆա¹⁴: Սկսած Բարսեղ Ա-ից, Հայոց կաթողիկոսը փորձում էր միասնական դարձնել այս հոգևոր աթոռը Մերձավոր Արևելքում ցրված ողջ հայ ազգաբնակչության համար: Բարսեղ Ա-ը կարողացավ խնդիրը լուծել մասամբ, կաթողիկոսական իշխանությունից զրկելով Հոնիի Թեոդորոս և Մարաշի Պողոս գահակալներին, որոնք աթոռ էին բարձրացվել դեռևս Փիլարտոս Վարաժնունու իշխանության տարիներին: Այս քայլով Բարսեղ Ա-ը

¹⁴ Տիտղոս, որի արձագանքը հասնում է մինչև ժԸ դար. տե՛ս Ա. Բողոյան, «Կաթողիկոս Հայոց» տիտղոսի նորովի ընկալումը», էջ 83–85; Գ. Դանիելյան, «Հոռմկլայի կաթողիկոսական աթոռի պատմության արաբական սկզբնաղբյուրները», Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում (պատմաբանասիրական ակնարկներ), հեղինակներ՝ Ա. Բողոյան, Ռ. Շուքուրով, Վ. Տեր-Ղևոնդյան, Գ. Դանիելյան (Երևան, 2016), էջ 200–285; Ք. Կոստիկեան, «Պարսից գրագրության մէջ Հայոց կաթողիկոսներին տրուած տիտղոսն ու պատուանունները», ՀԱ 1–12 (2019), էջ 122–132: Ղաթի մատենագիր Իբն Աբի ալ-Ֆադալի կողմից Ամենայն Հայոց կաթողիկոսին տրված այս տիտղոսի օգտագործման յուրահատկությունների մասին տե՛ս նաև G. Cecere, “A Coptic historian and “The Caliph of the Armenians”: Cross-cultural dynamics and rhetorical strategies in al-Mufaddal ibn Abi l-Faḍā’il”, ԱԱ 2 (2020), էջ 209–256:

Կարմիր վանքի կաթողիկոսարանում կարողացավ միավորել երեք կաթողիկոսական ճյուղերի՝ Պահլավունի (Գրիգոր Բ), Պետրոս Գետադարձի (Թեոդորոս) և Վարագավանքի առաջնորդության (Պողոս) ժառանգորդների սրբությունները, դրանք դարձնելով համահայկական¹⁵: Դրա շնորհիվ ամրապնդվեց Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի դիրքերը, ավելացնելով Ամենայն Հայոց հայրապետի պահպանության ներքո գտնվող սրբազան մասունքների թիվը: Այնուամենայնիվ, հիշատակված դեպքերը դեռևս մասնակի քայլեր էին Հայոց կաթողիկոսի իշխանությունը ողջ հայկական ազգաբնակչության կողմից ճանաչել տալու ճանապարհին: ԺԲ դարի ընթացքում ինչպես տեսնում ենք Մատթեոս Ուռհայեցու շարադրանքից, Հայոց կաթողիկոսական իշխանություններ կային Հռոմկլայում, Աղուանքում, Եգիպտոսում, Աղթամարում: Սկսած Գրիգոր Գ-ից Ամենայն Հայոց կաթողիկոսությունն ակտիվ քաղաքականություն սկսեց վարել, որի հիմնական նպատակներից մեկն էլ միմյանց թշնամացած հայկական իշխանությունների հաշտեցումն էր, միասնական պետական համակարգում կիրիկյան իշխանական տների քաղաքական միավորումը: Երրորդական դատավորի այս գործառույթը, պարզվեց, կարելի է ավելի արդյունավետ կատարել հեռվից. այդ իսկ պատճառով կաթողիկոսական աթոռը 1148/1149 թ., ավելի քան մեկ հարյուրամյակ հաստատվեց կաթողիկոսների սեփական ամրոց Հռոմկլայում, որը ենթակա չէր Հայոց իշխանական տներից որևէ մեկին: Այն գտնվում էր Հալեպի աթաբեկության վերահսկողության գոտում: ԺԲ-ԺԳ դարերի ընթացքում Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և եկեղեցին հսկայական դեր կատարեցին թե՛ Կիրիկիայի հայկական պետության կայացման, և թե՛ Վրաց պետության կառուցվածքում գտնվող Զաքարյան իշխանության ամրապնդման գործում: Եթե Կիրիկիայի տարածքում Հայոց կաթողիկոսներն հնարավորություն ունեին միջամտել գործերին ուղղակի, ապա Զաքարյաններին հպատակ իշխանական տարածքներում Հռոմկլայի ազդեցությունը մինիմալ էր: Միայն հատուկ դեպքերում էին տեղի եպիսկոպոսները դիմում Ամենայն Հայոց կաթողիկոսական իշխանության միջամտությանը:

Դ 4. Աղուանից կաթողիկոսությունը.

Նվիրապետական այս աթոռը հիմնադրվել է Դ-Ե դարերում, այն՝ Վրաց և Հայոց կաթողիկոսությունների հետ մասն էր կազմում Տիեզերական եկեղե-

¹⁵ Հմմտ. Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, § 1536–1538:

ցու: է դարից հետո, երբ Վրաց կաթողիկոսական աթոռը բաժանվեց Այսրկովկասի հակաքաղկեդոնական «կոալիցիայից» և անբաժանելի մաս դարձավ օրթոդոքս եկեղեցու բյուզանդական թևի, Հայոց և Աղուանից կաթողիկոսությունները հետագա նվիրապետական գործունեությունը շարունակեցին միևնույն եկեղեցական կազմակերպության շրջանակներում, ուր դարերի ընթացքում Հայոց կաթողիկոսությունը ձեռք էր բերել հավասարների մեջ առաջինի կարգավիճակ: Այս իրավիճակը շարունակվեց մինչև Բագրատունյաց թագավորության կործանումը¹⁶: Վավերագրերով և սկզբնաղբյուրային վկայություններով ապացուցված է, որ ԺԱ դարի ընթացքում Աղուանից կաթողիկոսությունը սերտաճել է Հայոց եկեղեցու ստեղծած նվիրապետական համակարգի մեջ. իբրև Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցի անդամ՝ շարունակելով կարևոր դերակատարություն ունենալ Հյուսիս-արևելյան Հայաստանի և անդրկուրյան Կովկասի եկեղեցաքաղաքական կյանքում: Բագրատունիների կործանումից հետո, Կյուրիկյան իշխանապետության տարածքում կարևոր նշանակություն ստացավ Աղուանից կաթողիկոսությունը, որը դիտվում էր այդ պետական միավորման տարածքում ամենաբարձր հոգևոր իշխանություն: ԺԱ-ԺԲ դարերում, երբ Կյուրիկյանները ստանձնեցին Հայոց թագավորության շարունակողի կարգավիճակ, փորձ կատարվեց նվիրապետական համակարգում ընդգծել Աղվանից կաթողիկոսի ինքնավար կարգավիճակը: Ի դեպ Մատթեոս Ուռհայեցին Կյուրիկյաններին անվանում է Աղուանից թագավորներ¹⁷, թեպետ հայտնի է, որ Տաշիր-Ձորագետը մինչ այդ երբեք չի մտել Աղվանից նվիրապետական աթոռին ենթակա տարածքների մեջ: Անի մայրաքաղաքից Հայոց կաթողիկոսարանը դուրս բերելուց հետո, Աղուանից կաթողիկոսի ձայնը մի կարճ ժամանակ կարևոր նշանակություն ստացավ Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում: Այս երևույթը հաստատագրվեց Լոռեում՝ Կյուրիկյանների մայրաքաղաքում, Բարսեղ Ա-ի օժոնմով, որի ժամանակ Աղուանից կաթողիկոսի ձեռամբ կատարվեց վերջինիս գահակալությունը, իհարկե Ամենայն Հայոց կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերի համաձայնությամբ: Այս գործառույթով հայկական էկումենեյում բավական բարձրացավ թե՛ Կյուրիկյանների, և թե՛ Աղուանից կաթողիկոսի հեղինակությունը: Վրաստանում թագավորական իշխանության հզորացմամբ և Կյուրիկյանների թուլացմամբ, ԺԲ դարի սկզբներից հետո հետե երկրորդական պլանի մղվեց Աղվանից կաթողիկոսների իշխանությունը

¹⁶ A. Bozoyan, “L’eglise et l’identité Arménienne”, p. 404–405:

¹⁷ Կյուրիկյաններն այս տիտղոսով հայտնի են նաև ԺԲ-ԺԳ դարերի մի շարք պատմագրական երկերում. տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 80, 145 և հմմտ. Ռ. Մաթևոսյան, Տաշիր-Ձորագետ (X դ. – XII դ. սկիզբ) (Երևան, 1982), էջ 100–104:

տարածաշրջանում: Բարսեղ Ա կաթողիկոսն իր հետագա գործունեությամբ փորձեց կրկին, Ամենայն Հայոց կաթողիկոսարանի կողմը իջեցնել Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում կշեռքի նժարը, իր իշխանությունը հաստատել տալով սելջուկ սուլթան Մելիք Շահից ստացած հրովարտակով: Աղվանից կաթողիկոսությունը ԺԲ–ԺԳ դդ. գրեթե բոլոր սկզբնաղբյուրներում դիտվում է Ամենայն Հայոց կաթողիկոսության ստեղծած նվիրապետական կառույցի անքակտելի մաս: Մեզ հետաքրքրող դարաշրջանում Աղվանից կաթողիկոսը Հովհաննեսն էր, որին Կիրակոս Գանձակեցին գահակալ է համարում մոտավորապես 1196–1236 թթ.¹⁸: Հովհաննեսի սկզբնական նստավայրն է եղել Չարեք բերդի մոտակայքում գտնվող քարայրը, որը ժառանգել էր նախորդ՝ Բեժգեն և Ստեփաննոս կաթողիկոսներից¹⁹: Այլազգիների կողմից հալածվելով, Հովհաննեսն ապաստանել էր Զաքարե և Իվանե իշխանների տարածքում, իսկ վերջինս նրան բնակեցրել էր Միափոր գավառի Խամշի վանքում²⁰:

Դ 5. Աղթամարի կաթողիկոսությունը.

Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցը նոր ցնցման ենթարկվեց 1113 թ.: Բարսեղ Ա-ի կողմից ձեռնադրված 13-ամյա կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու դեմ ապստամբելով, Աղթամարում հակաթուռ կաթողիկոս հռչակվեց Խեղենեկ Արծրունու որդի Դավիթ եպիսկոպոսը՝ հիմք դնելով մի նոր, հայրապետական աթոռի²¹: Խեղենեկ-Արծրունիների իշխանական տոհմը²² Աղթամար կղզու և Ամյուկ անառիկ ամրոցի վրա պահպանեց իր ավա-

¹⁸ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 291:

¹⁹ Անդ, էջ 178:

²⁰ Անդ, էջ 182:

²¹ Տե՛ս Ն. Ակինեան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ. պատմական ուսումնասիրութիւն (Վիեննա), 1920, էջ 34–35: Վարդան Արևելցին, խոսելով այս իրադարձության մասին, հիշատակում է, որ Դավիթին կաթողիկոս են ձեռնադրել հինգ եպիսկոպոսներ, պատճառաբանելով որ Վահանիկին ևս Գագիկի որդի Աբուսահլի օրոք ձեռնադրել են Ձորո վանքում, ուր գտնվում են Ս. Գրիգորի պատարագի սեղանը, գաւազանը, մաշկեղեն գոտին, Ս. Հռիփսիմեի հողաթափը, արյունոտ պերոզոտը (ժապավեն) և շղարշ-դաստառակը: Հիշատակված մասունքները հին ժամանակներից ի վեր պահպանվել են Արծրունիների թագավորության և հոգևոր իշխանության կենտրոն Աղթամարում, որը տեղի ազգաբնակչությունն արժանի էր համարում դարձնել պատրիարքական նստավայր: Տե՛ս Վարդան Բարձրաբերդցի [Արեւելցի], Պատմութիւն Տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին (Մոսկուա, 1861), էջ 153:

²² Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, խմբ. Բ. Առաքելյան, Լ. Բաբայան, Ա, Մնացականյան, Ա, Տեր-Ղևոնդյան (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.), 1976, էջ 482–483:

տական իշխանությունը մինչև ժե դարի սկիզբը, ամուսնական կապ հաստատելով Սեֆեդին-Արծրունիների ճյուղի հետ²³, ամեն անգամ իրենց հարազատների միջավայրից օծել տալով նաև Աղթամարի կաթողիկոսական աթոռի նոր գահակալներին: Թեպետ Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցը 1114 թ. Սև լեռան Կարմիր վանքում տեղի ունեցած ժողովում մերժեց ստեղծված հակաթոռ Աղթամարի կաթողիկոսական աթոռը²⁴, այնուամենայնիվ, այն իր մեկուսացված կարգավիճակը պահպանեց մինչև ժե դար, իսկ հետագայում՝ իբրև առանձին նվիրապետական աթոռ ճանաչվեց Վաղարշապատ տեղափոխված կաթողիկոսների կողմից²⁵: Մինչև 1207 թ. Աղթամարի կաթողիկոսական աթոռը գտնվում էր Շահի Արմենների իշխանության տարածքում²⁶, որը դրանից հետո անցավ Այլուբյաններին, ապա՝ մոնղոլներին: Թեպետ այս աթոռը ժԲ դ. չէր ճանաչվում Ամենայն կաթողիկոսարանի կողմից, այնուամենայնիվ հայտնի է, որ 1178 թ. Շահի Արմենների իշխանության տարածքներում գտնվող Բզնունիքի, Մանազկերտի և Տարոնի եպիսկոպոսական աթոռները, որոնք ամրագրված էին Աղթամարի կաթողիկոսական գահին, մասնակցել են Հռոմկլայի եկեղեցական ժողովին: Միաժամանակ պարզված չէ եպիսկոպոսական այն աթոռների թիվը, որոնք տարբեր ժամանակներում ենթարկվել են Աղթամարի գահակալներին: Աղթամարի կաթողիկոսարանը ժԲ-ժԳ դարում չէր ճանաչում Ամենայն Հայոց կաթողիկոսի գերագույն իշխանությունը, այնուամենայնիվ՝ առօրյա գործունեության ընթացքում համալրվում էր նաև Հռոմկլային մոտ կանգնած կամ նրանց դպրոցներում կրթություն ստացած «կադրերով»²⁷: Շահի Արմենների պետության սահմաններից դուրս բնակվող հայ ազգաբնակչությանը կաթողիկոսական այս աթոռի ինքնագլխությունն (ավտոկեֆալություն) ընդունելի չէր: Այնուամենայնիվ, ըստ Ստեփանոս Օրբելյանի, Աղթամարի հետ ժամանակ առ ժամանակ համագործակցում էին Այունիքի որոշ եպիսկոպոսական թեմեր,

²³ Ն. Ակինեան, Գալազանագիրք, էջ 42 և շար.:

²⁴ Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, § 1581-1584:

²⁵ Ն. Ակինեան, Գալազանագիրք, էջ 71 և շար.:

²⁶ Շահի Արմենների պետության սահմանների մասին տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, էջ 487-490; R. Hewsen, Armenia. A Historical Atlas (Chicago-London: The University of Chicago Press, 2001), p. 129, maps 108, 110:

²⁷ Տե՛ս Ներսես Լամբրոնացու վկայությունը «առ Լեւոն» թղթում. RHC d.a., t. I, p. 592:

որոնց առաջնորդները ձեռնադրություն էին ստանում Աղթամարի Ս. Խաչում²⁸: Կիրակոսը ոգևորություն է խոսում Վասպուրականի սրբանուն հոգևորականների մասին²⁹: Այնուամենայնիվ, Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում միակ հակաթոռ կաթողիկոսական աթոռը մնացել էր Աղթամար, որը միայն ժե դարի կեսերից հետո է մեծ եռանդով ձեռնամուխ եղել համահայկական խնդիրների լուծմանը³⁰:

Դ 6. Լևոն Ա-ը և Հռոմկլայի կաթողիկոսարանի գործերը.

Լևոն Բ իշխանապետի կառավարման տարիներին, մանավանդ նրա թագավոր օժվելուց հետո, վերջինս տարբեր դրդապատճառներով մի քանի անգամ փորձեց միջամտել Հռոմկլայի կաթողիկոսարանի գործերին, նաև բռնի կերպով կաթողիկոսներին Հռոմկլայից Միս կամ Տարսոն բերելով, փորձեց պետության քաղաքական շահերին ենթարկել բարձրագույն հոգևոր իշխանությունը: Թագավորը նման գործելակերպ էր ցուցադրում նաև ասորի եկեղեցու նկատմամբ³¹, փորձում էր իր քաղաքական ծրագրերում օգտագործել Անտիոքի և Կիլիկիայի հույն³² և լատին պատրիարքություններն ու զանազան եպիսկոպոսական աթոռներ: Այդ մասին առաջին ահազանգը տալիս է ժԲ դարի վերջի ժամանակագիր Միքայել Ասորին, որը պատմում է Գրիգոր Ե Քարավեժ (†1193) կաթողիկոսի ընտրության և մահվան պարագաների մասին³³: Այս կաթողիկոսի ընտրության և ձերբակալման հանգամանքների մասին տեղեկանում ենք նաև Ներսես Լամբրոնացու «Առ Լևոն» թղթից (գրված՝ 1193/4 թ.)³⁴: Վերջին վավերագրից գիտենք նաև, որ Գրիգոր Ե Ապիրատի հետ միաժամանակ, կաթողիկոսական իշխանության հավակնորդներից է եղել նաև Բարսեղ Անիի արքեպիսկոպոսը: Պիտի ենթադրել, որ Անիի

²⁸ **Ստեփաննոս**, Պատմութիւն Տանն Սիսական, էջ 251: Հմմտ. **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա. Աբրահամյանի (Երևան, 1986), էջ 285:

²⁹ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, էջ 183–185:

³⁰ **Ա. Ութուջյան**, «Հայոց պետականության վերականգնման փորձերը XV դարի 60-ական թթ.», Հայոց պատմություն, հտ. II. Միջին դարեր, գիրք Երկրորդ (IX դարի կես – XVII դարի առաջին կես) (Երևան, «Զանգակ», 2014), էջ 588–596:

³¹ **Լ.Յ. Տէր-Պետրոսեան**, Ասորիների դերը, էջ 8–9:

³² **Անտիոքի մելքիտ աթոռի Հայաստանի պատմության ԺԱ -ԺԳ դդ.** խաղացած դերի մասին տե՛ս **Գ. Ղազարյան**, Անտիոքի պատրիարքության հայկական թեմերը (Ե-ԻԱ դդ.), ԱԱ 2 (2020), էջ 400–404:

³³ **M.S.**, t. III, p. 411–412, 413.

³⁴ **RHC d.a.**, t. I, p. 589.

Բարսեղ արքեպիսկոպոսի, իբրև կաթողիկոսական գահի հավակնորդի և ժառանգորդի գաղափարն ամենայն հավանականությամբ հարազատ է եղել Կյուրիկյանների տարածքներին տեր դարձած Զաքարյաններին, ինչպես նաև Անի քաղաքի հոգևոր գործերում կարևոր դերակատարություն ունեցող Ապիրատյանների կամ Հասանյանների իշխանական ընտանիքին, որոնք ևս իրենց համարում էին Պահլավունիների հետնորդներ³⁵։ Ըստ Ներսես Լամբրոնացու՝ այս գաղափարների կողմնակից էին Հյուսիս-արևելյան Հայաստանի վարդապետները, որոնց Տարսոնի եպիսկոպոսն անվանում է Ձորագետցիներ։ Ներսես Լամբրոնացին չի մոռանում նաև Լևոն ինքնակալին հիշեցնել, Քարավեժի ընտրության օրերին Հռոմկլայում տիրող իրավիճակը. «Գիտէաք, և մեք զի մարդիկ էին մեռեալ ի Կլայն, և արծաթ էիք առեալ անտի և ոսկի...»³⁶։ Լևոն թագավորի կողմից կաթողիկոսական աթոռի նկատմամբ ոտնձգությունները շարունակվեցին նաև ԺԳ դարի առաջին տասնամյակներին։ Յեսուանց անապատի վանահայր և Սսի արքեպիսկոպոս Հովհաննեսը, որը նպաստել էր Լևոն Ա-ին Գրիգոր Ե Քարավեժի գահազրկման գործում³⁷, Լևոն Ա-ի հովանավորությամբ 1203 թ. կաթողիկոս օձվեց՝ Հովհաննես Զ Սսեցի (Մեծաբարո) անունով։ Հայրապետական գահի համար պայքարում նրա հակառակորդն էր Սեբաստիայի եպիսկոպոս Անանիան, որին սատար էր կանգնել Իկոնիայի սուլթանությունը։ 1203 թ. ստանալով Ռուքն աղ-Դին սուլթանի օժանդակությունը, Անանիան Սեբաստիայում օձվում է հակաթոռ կաթողիկոս³⁸։ Շուտով, 1204/5 թ. Լևոն Ա-ը գժտվում է նաև Հովհաննես Սսեցու հետ և փորձում նրան վճռել հայրապետական աթոռից³⁹։ Այս բախումն ուներ ամենայն հավանականությամբ նաև լուրջ քաղաքական դրդապատճառներ, քանի որ դրանից առաջ Լևոն Ա-ը հաշվեհարդար էր տեսել կաթողիկոսի փեսայի՝ Հեռի սեբաստոսի և նրա ընտանիքի հետ։ Նրանց պաշտպանությամբ հանդես եկած կաթողիկոսը, օգնության էր կանչել Իկոնիայի սուլթանությանը։ Այս դեպքերից հետո, Հովհաննես Զ Մեծաբարոն ստիպված էր քաշվել Հռոմկլա, իսկ Կիլիկիայի իշխանության տարածքում Լևոն Ա թագավորը կաթողիկոս օձել տվեց

³⁵ Կ. Մաթևոսյան, Անի, էջ 58–70:

³⁶ RHC d.a., t. I, p. 589:

³⁷ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 148:

³⁸ Տե՛ս Հ. Պէրպէրեան, «Անանիա հակաթոռ կաթողիկոս, էջ 286–289, թ. 11–12, էջ 360–363 և հմմտ. H. Berberian, “Le patriarcat arménien”, p. 233–243:

³⁹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 157–158; Վարդան, Պատմութիւն Տիեզերական, էջ 182: Հմմտ. Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, § 1833–1834:

Արքակաղնի առաջնորդ, Մամեստիայի արքեպիսկոպոս Դավթին⁴⁰: Հիշատակված թվականից հետո էլ, հավանաբար, Դավիթ կաթողիկոսի ընտրությունից առաջ, Զաքարե ամիրսպասալարը Մխիթար Գոշի խորհրդով, դիմում է Կիլիկիայի Հայոց թագավորին և Հովհաննես Զ կաթողիկոսին, խնդրելով թույլ տալ օգտագործել շարժական սեղան և օգտվել համապատասխան եկեղեցական բարենորոգումներից⁴¹: Լևոն Ա-ը և Դավիթ Արքակաղնեցին Սիս մայրաքաղաքում, ամենայն հավանականությամբ, 1204/5⁴² և 1207/1208⁴³ թթ. միջակայքում գումարած իրենց ժողովում⁴⁴ հաստատում են ութ կետանոց մի կանոնախումբ և ուղարկում են Զաքարիային, իսկ Հովհաննես Զ Մեծաբարոն Լոռե է առաքում «եպիսկոպոս մի Մինաս անուն, և սարկաւագս և դպիրս, և քահանայս գեղեցկաձայնս, ասացողս պատարագին», ինչպես նաև. «վրան մի գմբեթարդ եկեղեցաձև և կազմողս և յօրինողս նմին, և սեղան մարմարեայ, և այլ սպաս պատարագաց»⁴⁵: 1211 թ. Դավիթ Արքակաղնեցու մահից հետո, Հովհաննես Զ Մեծաբարոն կրկին վերականգնեց իր իշխանության ամբողջականությունը Ամենայն Հայոց կաթողիկոսական գահի վրա, ամենայն հավանականությամբ հաշտվելով Լևոն Ա-ի հետ⁴⁶: Ահա Հովհաննես Սսեցու և Դավիթ Արքակաղնեցու հակամարտության տարիներին էլ տեղի են ունեցել Հյուսիս-արևելյան Հայաստանում Զաքարե ամիրսպասալարի նախաձեռնած եկեղեցական ժողովները:

⁴⁰ **Սմբատ**, Տարեգիրք (Վենետիկ), էջ 215; **Կ. Մաթևոսյան**, Հեթում պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը (Երևան, 2011), էջ 49 (հետայսու՝ Հեթում, ժամանակագրություն); **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, § 1834–1836:

⁴¹ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, էջ 167–168:

⁴² Այս իրադարձությունը մենք հակված ենք թվագրել Հեռի սեբաստոսի ապստամբության ժամանակներով:

⁴³ 1208 թվականն է առաջարկում Մաղաքիա արքեպիսկոպոսը: Տե՛ս **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, § 1843:

⁴⁴ Դ. Գևորգյանը, հետևելով Վարդան Արևելցուն, հակված է այս ժողովը թվագրել 1198 թ.: Տե՛ս **Դ. Գևորգյան**, «Հայ-վրացական եկեղեցական հարաբերությունները կարգավորելու Զաքարե սպասալարի փորձերը», Պատմություն և մշակույթ, հտ. Գ (Երևան, 2018), էջ 221: Հեղինակն հաշվի չի առել այն հանգամանքը, որ ըստ Կիրակոսի մանրամասն նկարագրության, ժողովի հրավիրողն է Դավիթ Արքակաղնեցի կաթողիկոսը: Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, էջ 169: Քիչ անց նույն հեղինակն այդ իրադարձությունը կապում է հայ պատմագրության մեջ խաչակիրների կողմից Կ. Պոլսի գրավման սխալ թվագրման հետ և հետևեցնում, որ Դավիթ Արքակաղնեցին իբրև թե գահ է բարձրացել 1207 թ.: Տե՛ս **Դ. Գևորգյան**, «Հայ-վրացական եկեղեցական հարաբերությունները», էջ 222–223:

⁴⁵ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, էջ 169–170:

⁴⁶ **Սմբատ**, Տարեգիրք (Վենետիկ), էջ 217, **Մաթևոսյան 2011**, էջ 49; **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, ժամանակագրություն, էջ 237: Հմմտ. **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, § 1853–1854: Դրազարկի առաջնորդ Հեթում-Հեղիի միջնորդությամբ հաշտվելով Հովհաննես կաթողիկոսի հետ, Լևոն Ա-ն ամենայն հավանականությամբ պայման է դրել նրա առջև, կաթողիկոսական նստավայր դարձնել Դրազարկի վանքը, որը գտնվում էր Կիլիկիայի թագավորության սահմաններում:

Դ 7. Հյուսիս-արևելյան Հայաստանը Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում.

ԺԲ-ից մինչև ԺԳ դ. առաջին կեսը Վրաստանն Այսրկովկասի ամենահզոր թագավորությունն էր և փորձում էր իր սահմաններն ընդլայնել Կարինի Սալդուխյան, Դվինի և Գանձակի Շաղաղոյան, Շահի Արմենների, Գանձակի և Առանի էլիտուզյան ամիրայությունների հաշվին⁴⁷: Վրացական պետության զինուժը դեպի իրենց ավատական տարածքներն ուղղորդելու գործում կարևոր դեր էին կատարում Բարձր Հայքի, Տայքի, Գուգարքի, Վանանդի, Շիրակի, Զավախքի, Այրարատի, Ուտիք-Արցախի, Սյունիքի դեռևս իրենց հողերի վրա մնացած հայկական իշխանական տները, որոնք ԺԲ դարի վերջից համագործակցում էին վրացական արքունիքում հաջողությունների հասած Զաքարյան և այլ իշխանական տների հետ: Վրաստանի հարավային սահմաններում և դրանց մոտակայքում էին գտնվում Աղվանից կաթողիկոսարանն իր ողջ կառույցով, Հայոց եկեղեցու ավելի քան մեկ տասնյակի հասնող արքեպիսկոպոսական (Կարին, Անի, Տփխիս, Դվին ևն.) և եպիսկոպոսական աթոռներով (Կարս, Կեչառիս, Բջնի ևն.), վանքերով (Հաղբատ, Սանահին, Մարմաշեն, Հին և Նոր Գետիկ, Քոբայր, Թեղենիք, Դաղիվանք ևն.) ու եկեղեցիներով, որոնք կարևոր դեր ունեին ազգային եկեղեցու նվիրապետական համակարգում և ամրագրված են ԺԲ դարի գրավոր և վիճակագրական վավերագրերում⁴⁸: Այս տարածաշրջանի վարդապետների դերը բացառիկ էր Այսրկովկասի Հայոց եկեղեցու հոգևոր-մշակութային կյանքում: Այդ մասին են վկայում Ներսես Դ Շնորհալի, Գրիգոր Դ Տղա կաթողիկոսների նամակները, ուղղված հենց այս տարածաշրջանի հոգևորականներին⁴⁹: Վրաց պետության ներկայացուցիչ Զաքարյանները ստիպված էին հաշվի առնել այդ հսկայական ուժի առկայությունը տարածաշրջանում, վրաց արքունիքում իրենց տեղն ապահովելու համար նրանք միջնորդի դեր պիտի խաղային երկու եկեղեցիների նվիրապետական կառույցների միջև: Զաքարյանները, Վաչուտյանները, Սաղունյանները, Օրբեկյանները, Պոռոյանները, Խաղբակյանները և տարածաշրջանի մյուս

⁴⁷ Վրաց պետության այդ շրջանի պատմության մասին տե՛ս **Հ. Գ. Մարգարյան**, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր և Տաթևաշենի Կաթողիկոսության Կառույցները, Երևան, 1979, ԳԳ. 263–348:

⁴⁸ Այս տարածաշրջանում Հայոց եկեղեցու հոգևոր գործունեության մասին տե՛ս **Լ. Մելիք-սեթ-Քեկ**, «Վարդապետ Հայոց Հիւսիսային կողմանց»:

⁴⁹ Տե՛ս **Գրիգոր Տղա**, Բանաստեղծություններ և պոեմներ, աշխատասիրությամբ Ա.Շ. Մնացականյանի (Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1972), էջ 50–52, 60–63:

ավատատերերն իրենք էին սեփական ավատներում կառուցվող եկեղեցիների մեկենասները, եկեղեցական հաստատությունների հիմնական նվիրատուները: Հայկական եկեղեցիների նվիրատուների շարքում հաճախ հայտնվում էին նաև քաղկեդոնական դավանանք ընդունած ավատատերերը, ինչպես օրինակ Իվանե Զաքարյանը և իր սերունդները, որոնք կարծես փորձում էին հավասարակշռել տարբեր դավանական ավանդություններ ունեցող եկեղեցիների դերը տարածաշրջանում, մի շարք դեպքերում քաղկեդոնականներին հանձնելով նրանց հակառակորդների կառուցած եկեղեցիները⁵⁰: Հայոց եկեղեցու նշանավոր հոգևորականներից ոմանք էլ, ինչպես օրինակ Հովհաննես Սարկավազը՝ արժանանում էին վրաց թագավորական ընտանիքի հատուկ ուշադրությանը⁵¹: Մեծ Հայքի հյուսիս-արևելյան գավառները կառավարելու համար Վրաց թագավորությունն ու տարածքների ավատական վերնախավն ամեն գնով փորձում էին բավարարել եկեղեցու կարիքները: Եկեղեցին էլ իր հերթին համագործակցում էր տարածաշրջանի ավատատիրական վերնախավի և Վրաստանի պետական հաստատությունների հետ: Վրաց եկեղեցու հետ փոխհարաբերությունների հստակեցման միտում ունի նաև Մխիթար Գոշի ողջ գործունեությունը⁵²:

Այնուամենայնիվ, ԺԳ դարի սկզբին Զաքարյանների և եկեղեցու միջև առաջացան խնդիրներ, որոնց լուծման համար կողմերից զիջումներ էր պահանջվում: Տարածաշրջանի եկեղեցական կազմակերպության կարևոր պահանջներից մեկը հայոց դավանանքի անաղարտ պահպանությունն էր իր ծիսակարգով և ավանդություններով: Հյուսիս-արևելյան Հայաստանում Հայոց եկեղեցու գլխավոր նպատակներից մեկն էլ հայ ազգաբնակչության բոլոր խավերի կողմից Հայոց եկեղեցու հավատամքի և ծիսադավանական ավանդությունների անսակարկ կատարումն էր: Հայոց եկեղեցին իր ունեցած

⁵⁰ Տե՛ս Պ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները. աղբյուրագիտական քննություն (Երևան, ԵՊՀ հրատ., 1977), էջ 199–213; նույնի՝ Կովկասյան մշակութային աշխարհը և Հայաստանը, պրակ Բ (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012), էջ 84–105:

⁵¹ Լ. Մելիքսեթ-Քեկ, «Վարդապետը Հայոց Հիւսիսային կողմանց», էջ 142–147:

⁵² Անդ, էջ 237–245, հմմտ. Պ. Մուրադյան, Կովկասի մշակութային աշխարհը և Հայաստանը, պրակ Ա (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2008), էջ 325–332; նույնի՝ ԺԱ–ԺԳ դարերի հայ վրացական դավանական խնդիրները, էջ 171–266: Նմանատիպ գործունեության լավագույն ասպեկտը Մխիթարի թուղթն է, որը ձեռագրերից մեկում ունի հետևյալ պաշտոնական վերնագիրը. «Թուղթ հաւատոյ ընդհանրական ի դիմաց Հայաստան[եաց] եկեղեցւոյ առ ազգն Վրաց եւ առ մեծ թագուհին Քամար եւ առ այլ մեծամեծ դէդէփալս (sic) եւ առ կաթողիկոսն եւ առաջնորդք եկեղեցւոյ վասն նախատանաց մերոյ աւանդութեանս եւ վասն ազգացն միաբանութեան, որում ի խնդիր ելեալ էին մեծ սպասալարն Զաքարէ եւ Իւանէ աթաբակն հրամանաւ թագուհւոյն եւ կամեցան մեծ ժողովք միաբանել, առ որս ըստ արժանւոյն գրէ լայն թուղթ պատասխանույ եւ հաւանութեան մեծ եւ աշխարհալոյս վարդապետն Մխիթար, եւ մականուն Գօշ կոչեցաւ, ի Գետիկ» (Անդ, էջ 195, ծան. 1):

միջոցներով փորձում էր պայքարել վրացադավանություն ընդունած գործիչների քաղաքականության դեմ և կանգնեցնել վրաց պաշտոնական եկեղեցու դյութանքի ներքո հավատափոխ լինելու գործընթացը: Մխիթար Գոշի թղթի հիմնական ասելիքներից մեկը՝ կրկնակի մկրտության սովորույթի վերացումն է, որով «քույր» եկեղեցիները ոչ միայն ստորացնում են Քրիստոսի բուն հավատքը, այլև հակառակ են գնում Մեկ եկեղեցու համաքրիստոնեական նախնական ավանդությանը⁵³:

Դ 8. Վրաց թագավորության տարածքում տեղի ունեցած ժողովները և դրանց մասնակիցները.

Բագրատ Դ (1027–1072) և Դավիթ Դ Շինարար (1089–1125) թագավորների օրոք, բարձրացող թագավորական իշխանության պայմաններում, երբ դրվում էին հայ-վրացական ապագա ռազմական դաշնության հիմքերը, առաջին քայլերը կատարվեցին երկու եկեղեցիների միջև է դարից հետո առաջացած հակամարտությունը հարթելու ճանապարհին: Այնուամենայնիվ, վրաց եկեղեցին օգտվելով պետական աջակցությունից, հայ քաղկեդոնականների հետ միասին ընտրեց ծիսադավանական հակամարտությունը խորացնելու ուղին, հակաճառական երկերի իրենց զինանոցը համալրելով հունարենից կատարված մի շարք թարգմանություններով⁵⁴: Սրան ի պատասխան, Հյուսիս-արևելքի հակաքաղկեդոնական հայ վարդապետները հանդես եկան հակաճառական նոր գրվածքներով, պաշտպանելով սեփական եկեղեցու ծիսադավանաբանական ուղղությունը⁵⁵: Վրաց եկեղեցու հրավիրած պաշտոնական ժողովներից հիշատակելի են Արտիլայի (1046 թ.)⁵⁶ և Ռուխ-Ուրբնիսիի (1105

⁵³ Անդ, էջ 196, սյուն 2, 254, սյուն 2262 սյուն 2:

⁵⁴ Վրաց մատենագրության մեջ ԺԱ-ԺԲ դարերում գրված հակահայկական հակաճառական գրվածքներին վերջերս անդրադարձել և հայերեն է թարգմանել Պ. Մուրադյանը (Անդ, էջ 37–170):

⁵⁵ Դարաշրջանի հայկական հակաճառական գրականության հուշարձանների մասին տե՛ս Անդ, էջ 15–36, 171–274: Կուզենայի մասնագետների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ ի տարբերություն հայկականի, վրաց միջնադարյան պատմագրությունն ու հակաճառական գրականությունը լի է Հայոց եկեղեցին ու հավատամքը ստորացնող պատմություններով և արտահայտություններով: Տե՛ս թեկուզ Մխիթար Գոշի թղթում այդ երևույթի դեմ բողոքող հետևյալ հատվածը՝ Անդ, էջ 247, սյուն 1:

⁵⁶ Անդ, էջ 42: Այս ժողովին մասնակցած Մարմաշենի Սոսթենես վարդապետն հիշատակվում է ինչպես վրաց մատենագրական հուշարձաններում (Անդ, էջ 37–51) և Գրիգոր Մագիստրոսի թղթերում (Մատենագիրք Հայոց, հտ. ԺԶ (Երևան, 2012), էջ 277–278, 328), այնպես էլ հայերեն վիմագիր վավերագրերում (Մ.Ա. Օրբելի, “Надписи Мармашена”, Памятники армянской эпиграфики, I, Издание армянского музея древностей (Петроград, 1914) (переиздание: И.А. Орбели, Избранные труды (Ереван, Изд. АН Арм. ССР, 1963), с. 442, 444:

թ.)⁵⁷ հավաքները, ուր քննարկվել և շրջանառության մեջ են դրվել վրաց նվիրապետության ծեսի ու հոգևոր կեցվածքի համակեղեցական կանոններ: Հայոց եկեղեցական գործիչների հետ ևս Դավիթ Դ Շինարարի կառավարման վերջին տարիներին (1123–1125 թթ.)⁵⁸, ինչպես նաև ԺԳ դարի սկզբին՝ Թամարի (1184–1213) իշխանության տարիներին, տեղի են ունեցել համատեղ եկեղեցական ժողովներ վրաց թագավորների մասնակցությամբ, որոնց ընթացքում քննարկվել են երկու կողմերին հուզող ծիսադավանաբանական խնդիրներ:

ԺԱ–ԺԳ դարերի ընթացքում Վրաց բանակում երկարատև պատերազմներին մասնակցող հայկական ստորաբաժանումներում զգացին, որ վրաց զինվորականները հնարավորություն ունեն պատերազմական ռազմարշավների ընթացքում և մանավանդ ճակատամարտերից առաջ մասնակցել պատարագին և հաղորդվել, իսկ հայոց եկեղեցու հոգևորականներն ավանդական կանոնագրքի համաձայն իրավունք չունեին շարժական բեմի վրա պատարագ մատուցելու⁵⁹: Հայոց եկեղեցու ծիսակարգում տոների մեծամասնությունն ըստ կանոնակարգի չունեի իր օրացուցային օրը, քանի որ դրանց հիմնական մասը շարժական էր և նույն քրիստոնեական տոներ նշվում էր հայոց և վրաց եկեղեցիներում տարբեր օրերի: Այս տարբերությունը եկեղեցական հողի վրա բախումների պատճառ էին դարձել Հայոց և Վրաց եկեղեցիների հավատացյալների միջավայրում⁶⁰: Բանակի հայոց զորամասերի հրամանատարությունը, մանավանդ Զաքարե ամիրսպասալարը փորձեց

⁵⁷ Հայագիտական աշխատանքներում միջև այժմ շրջանառության մեջ է դրվում 1103 թվականը: Տե՛ս Պ. Մուրդյան, ԺԱ–ԺԳ դարերի հայ-վրացական դավանական խնդիրները, էջ 34, 53; Գ. Գևորգյան, «Հայ-վրացական եկեղեցական հարաբերությունները, էջ 218: Այս ժողովը և նրա հրավիրման թվականը է. Գաբրիելյանի կապում է Դավիթ Շինարարի կողմից Կախեթ–Հերեթի գրավման և այդ տարածքները Վրաց թագավորության սահմանների մեջ ներգրավելու իրադարձությունների հետ: Այդ մասին տե՛ս Ե. Գաբրիելյան, Երևան–Մոսկվա, 1978, ԳՅ. 14–19:

⁵⁸ Այս վիճաբանությունների մասին տե՛ս Լ. Մելիքսեթ-Քեկ, «Վարդապետը Հայոց Հիւսիսային կողմանց», էջ 142–147 և հմմտ. Գ. Գևորգյան, «Հայ-վրացական եկեղեցական հարաբերությունները», էջ 219:

⁵⁹ Այս դրույթն ամրագրված է Հովհաննես Օձնեցու կանոնախմբի ԺԲ հոդվածում. «Ոչ է արժան սեղանն, յորոյ վերայ պատարագն Քրիստոսի մատչի, փայտեղէն կանգնել և շարժուն, այլ քարեղէն և անշարժ հիմնացուցանել: Իսկ եթէ ոք հակառակեսցի, և ոչ արասցէ ըստ հրամանիս մերում և ըստ աւանդութեան կաթողիկէ եկեղեցու՝ եպիսկոպոսն լուծեալ եղիցի ի պատույն, և սեղանն արհամարհեալ և անգործ մնասցէ»: Տե՛ս Կանոնագիրը Հայոց, Ա, աշխատասիրության մ. Կ. Հակոբյանի (Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964), էջ 520–521:

⁶⁰ Հայոց եկեղեցում օգտագործվող անշարժ տոմարը և սրբերի հարգման տոնացույցը հաճախ չէր համապատասխանում թե՛ քաղկեդոնական, և թե՛ ո՛չ քաղկեդոնական եկեղեցիների օրացույցների հետ: Տե՛ս V. Grumel, *La Chronologie*, p. 320–343:

վերացնել այդ հակասությունները, քանի որ նախատինքի էր արժանանում վրաց եկեղեցու սպասավորների կողմից: Տարածաշրջանի հայ հոգևորականությունը նման բարեփոխումներն համարում էր զիջում վրաց եկեղեցուն, քանի որ ճշմարիտ էր համարում Հայոց եկեղեցու դարավոր ավանդությունը: Ըստ Կիրակոսի՝ խնդիրը լուծելու համար Զաքարեն դիմում է իր խոստովանահայր Մխիթար Գոշին, որն էլ խնդիրը վերջնականապես լուծելու համար առաջարկում է դիմել Ամենայն Հայոց կաթողիկոսին և Կիլիկիայում նորերս թագադրված Լևոն Ա արքային, որոնց որոշումը կարող էր բեկումնային լինել ողջ հայ հոգևորականության համար: Այդ բարենորոգումները սատարող Զաքարե ամիրսպասալարի և նրան մոտ կանգնած հոգևորականության հիմնական կուվանն այն էր, որ դեռևս Տրդատ Մեծի և Վարդանանց պատերազմների դարաշրջանում հայ հոգևորականները բանակում, շարժական սեղանի վրա կատարում էին թե՛ մկրտություն, և թե՛ հաղորդություն⁶¹: Բարենորոգումներին հակառակորդ հայ հոգևորականներն, արդարացիորեն, դրանք համարում էին զիջում վրաց եկեղեցուն⁶² և քայլ՝ դեպի Քաղկեդոնի դավանանքի ընդունում:

Դ 9. Լոռեի ժողովի մասնակիցները, թվականն ու պարագաները.

Լոռեի ժողովին մասնակցած հոգևոր գործիչների մասին խոսելիս Կիրակոս Գանձակեցին հենվելով Վանական վարդապետի Պատմության վրա, հետևյալ հերթականությամբ է ներկայացնում ժողովին մասնակցած տարածաշրջանի եպիսկոպոսների ցանկը. «...զեպիսկոպոսն Հաղբատայ զԳրիգորես, զԻրեանց ազգական, և զեպիսկոպոսն Անույ, և զեպիսկոպոսն Բջնոյ, և զԴունայ, և զԿարուց», շեշտելով Հաղբատի եպիսկոպոս Գրիգորի հեղինակության ընդունումը Զաքարյանների և հիշյալ աթոռների կողմից⁶³: Նկատելի է, որ Անին վրաց թագավորության իշխանության տակ անցնելուց հետո (1199 թ.)⁶⁴, կտրուկ նվազել է այդ քաղաքի եպիսկոպոսական իշխանության նշանակությունը և բարձրացել է Հաղբատի եպիսկոպոսի դերը տարածաշրջանում: Այդ է վկայում նաև նվիրապետական աթոռների ցանկի նույն խնդրին վերա-

⁶¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 167:

⁶² Հայոց Կանոնագրքը շարժական սեղանի վրա կատարված պատարագը դիտում էր կանոնակարգին դեմ և սպառնում էր այն կիրառող եպիսկոպոսին՝ լուծարում: Տես Կանոնագիրք Հայոց, էջ 520–521:

⁶³ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 171:

⁶⁴ საქართველოს ისტორიის ნარკვევები, ტ. III, 33. 325:

բերող երկրորդ հիշատակութիւնը, ուր հավելված են առաջին վկայութիւնում չհիշատակված մի շարք եպիսկոպոսների անուններ: Հատկանշական է նաև, որ այստեղ երկրորդից երրորդ տեղ է փոխադրվել Անիի եպիսկոպոսի հիշատակութիւնը. «Գրիգորէս եպիսկոպոս Հաղբատայ, Վրթանես Բջնոյ և Դունայ, Սարգիս աթոռակալ Անույ, Յովհաննես Կարուց...»⁶⁵: Եթե համեմատենք այս ցանկերը շուրջ 30 տարի առաջ տեղի ունեցած Հռոմկլայի 1178 թ. ժողովի կաթողիկոսի նամակը ստորագրած հոգևորականների ցանկի հետ, կնկատենք, որ Լոռեի ժողով հրավիրվածներից որևէ մեկն արքեպիսկոպոսական աստիճան չունի: Այն դեպքում, երբ Անիի, Տփխիս-Հաղբատի, Դվինի աթոռակալները Հռոմկլայի ժողովի փաստաթղթերում անվանված են արքեպիսկոպոսներ⁶⁶, որոնցից մի քանիսի իշխանութիւնն ներքո էլ, ենթադրվում է, պիտի գործէին այլ եպիսկոպոսական աթոռներ: Հիշարժան է նաև այն փաստը, որ Հաղբատի եպիսկոպոս Գրիգորը, հիշատակված հոգևորականների գլխավորը՝ Զաքարյանների ազգականն է, ինչն էլ ցույց է տալիս՝ ինչ նշանակութիւն էին վերագրում այս աթոռին Զաքարյանները, գերադասելով Հաղբատի եպիսկոպոսութիւնն Անիի աթոռից: Ամենայն հավանականութեամբ, իր նախորդ Բարսեղի⁶⁷ նման Հաղբատի աթոռակալը նաև Վրաստանի մայրաքաղաք Տփխիսի եպիսկոպոսն էր:

Լիովին տրամաբանական է Մաղաքիա արք. Օրմանյանի այն ենթադրութիւնը, որ ժողովի հրավիրման պահին Անիի արքեպիսկոպոս Բարսեղը, որը Շիրակում գտնված երեք վիմագիր արձանագրութիւններում (1161⁶⁸, 1193, 1195) անվանված է հայրապետ կամ Հայոց կաթողիկոս. «...մեռած ենթադրել, թէպէտ ստոյգ յիշատակութիւն մը չենք գտներ»⁶⁸: Կիրակոսի վերոբերյալ հատվածներից պետք է եզրակացնել նաև, որ Բարսեղ Անիի եպիսկոպոսի՝ «Հայոց կաթողիկոս» անվանումը չի անցել աթոռի հաջորդ գահակալ Սարգսին:

ԺԳ-ԺԴ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, Գրիգոր է Անավարզեցուն ուղղված իր թղթում խոսելով Զաքարե ամիրսպասալարի և Իվանե աթաբեկի ժամանակներում տեղի ունեցած ժողովների մասին, գրում է. «Իսկ յաւուրս վերջին՝ ի ժամանակս Զաքարիայի սպասալարի և Իվանեի աթաբեկին Վրաց,

⁶⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 172:

⁶⁶ Հմմտ. Ա. Բողոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցութիւնների վավերագրերը, էջ 88, 190-191:

⁶⁷ Այս Բարսեղի մասին տե՛ս Դիվան հայ վիմագրութիւն (այսուհետև՝ ԴՀՎ), պրակ IX. Լոռու մարզ, կազմեցին Ս.Գ. Բարխուդարյան, Կ.Գ. Ղաֆադարյան, Ս.Տ. Սաղումյան (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն», հրատ., 2012), էջ 129, 144, 159:

⁶⁸ Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, § 1844: Այս խնդրի, և Բարսեղ Անեցու անվան հիշատակումով հայտնի վիմագիր արձանագրութիւնների մասին տե՛ս Կ. Մաթևոսյան, Անի, էջ 63-70:

դարձեալ ժողով սուրբ հարցն եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից ի Գետականն մերձ Սևան կղզւոյն և միանգամ յԱնի՝ և շարաշար նգովիւք բարձին և հեռացուցին զամենայն համախոհան Վրաց և Հոռոմոց»⁶⁹: Ինչպես տեսնում ենք, այստեղ Սյունյաց պատմիչը ոչինչ չի ասում Լոռեում տեղի ունեցած ժողովի մասին, դրա փոխարեն հիշատակելով Գետականում տեղի ունեցած ժողովը⁷⁰: Գ. Գևորգյանը հետևելով լեզվաբան Ա. Աբրահամյանի ենթադրությանը⁷¹, կարծում է, թե խոսքը վերաբերում է մի բնակավայրի, որն իբրև թե կարելի է տեղադրել. «Հրազդան գետի ափին՝ Գոմաձորի մոտ, որն այժմ գտնվում է Սևան քաղաքի տարածքում»⁷²: Կարծում եմ, խոսքն այստեղ վերաբերում է Նոր Գետիկին, ուր իր վանքն էր կառուցել Մխիթար Գոշը: Ըստ Կիրակոսի՝ Լոռեի ժողովի հրավիրմանը իր բացառիկ մասնակցությունն է ունեցել Նոր Գետիկի վանահայրը, Լոռեի ձախողված ժողովից հետո, նրա դուռն են բախել հակառակորդ կողմերը և նրա հետ բանակցություններ վարել: Այնպես որ, այդ հավաքները ժամանակակիցների մոտ կարող էին պատրանք ստեղծել, թե ժողով է տեղի ունեցել նաև Նոր Գետիկում, ինչն էլ արտացոլվել է, ամենայն հավանականությամբ Ստեփանոս Օրբելյանի թղթում և ժամանակագրության մեջ:

Թվարկելով Լոռեի ժողովին մասնակցած վարդապետների և վանահայրերի ցանկը՝ Կիրակոսն անում է մի ճշտում, որը վրիպել է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի ուշադրությունից: Գանձակեցին շեշտում է, որ Լոռեի ժողովին հրավիրվել է, ոչ թե Սանահնի վանահայր Գրիգոր Տուտեորդին (ըստ Օրմանյանի Հաղբատի առաջնորդ), որն արդեն մահացած է եղել, այլ նրա հաջորդ՝ Յովհաննեսը⁷³: Այնուամենայնիվ, սկսած Ս. Զալալյանից, Հով-

⁶⁹ **Ստեփանոս**, Պատմութիւն Տանն Սիսական, էջ 333:

⁷⁰ Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության մեջ հիշատակված ժողովը թվագրվում է Հայոց ՈԿԱ (1212) թվականով, գրելով. «Յայսմ ամի Զաքարէ և Իւանէ կամեցան միաբանել զՀայս և զՎիրս և ժողովք արարին ի Գետակն բազում հարանց և վարդապետաց, ընդ որս էին աշխարհալոյս և աստուածազգեաց վարդապետքն՝ Գոշ Մխիթարն, Մոնօնիկն և Տուրքիկն: Եւ ոչ կարացին միաբանել, այլ հաստատուն մնացին Հայք յուղղափառ հաւատս, որ և խորխտացեալ Զաքարէ վարդապետացն, նգովեցաւ ի նոցանէ. և գնաց յԱրտաւէլ և կոտորեաց...»: Տե՛ս ՄԺ, հտ. 1, էջ 38:

⁷¹ **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն (1986), էջ 531, ծան. 1534:

⁷² **Գ. Գևորգյան**, «Հայ-վրացական եկեղեցական հարաբերությունները», էջ 225: Տեղանունների քառահատոր բառարանի հեղինակները ևս չեն կողմնորոշվել, և նույնանուն բնակավայրերը, չբերելով սկզբնաղբյուրների վկայությունները, տեղադրում են կամ Սյունիքի Գեղարքունիք (տե՛ս «Գետական», **Թ.Խ. Հակոբյան**, **Ստ. Մելիք-Բախչյան**, **Հ.Խ. Բարսեղյան**, ՀՀՇՏԲ, հտ. 1, էջ 842, սյուն 3) գավառում կամ էլ Սևանի ավազանում, Իջևանի, Վայոց ձորի, Գուգարքի Չորոփոր և այլ շրջաններում: Տե՛ս «Գետիկ», ՀՀՇՏԲ, հտ. 1, էջ 847, սյուն 2, էջ 848, սյուն 3:

⁷³ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, էջ 171:

հաննես Մեծաբարոյի բանագնաց Մինաս եպիսկոպոսին ծեծող Գրիգոր Հաղբատի եպիսկոպոսին, որը Ջաքարյանների ազգականն էր. Մ. Չամչանցը, Մ. Օրմանյանը, Հր. Աճառյանը թյուրիմացությամբ նույնացնում են Տուտեորդու հետ⁷⁴:

Կիրակոս Գանձակեցին Լոռու ժողովին հրավիրված հոգևորականներից հիշատակում է Գետկավանքի շինող Մխիթար Գոշին, Հաղբատից՝ Իգնատիոսին, Վարդանին և Դավիթ Քոբայրեցուն, Սանահնի վանահայր Հովհաննեսին, Կեչառուլքից՝ Գրիգոր Մոնոնիկին, Թեղենիսից՝ Տուրքիկին, Հավուց Թառից՝ Եղիային, Գրիգոր Դվնեցուն, Սևանից՝ Սարգսին: Ամենայն հավանականությամբ, Լոռեի ժողովի կապակցությամբ հիշատակված եպիսկոպոսներն ու մենակյացները Ջաքարյան իշխանական տանը պատկանող ավատական տիրույթում ծառայության մեջ եղած բարձրագույն հոգևորականության սերույցն է: Պետք է ուշադրություն դարձնել, որ թվարկվածների մեջ չեն հիշատակվում Սյունիքի Օրբեյանների և Արցախի իշխանական տների հոգևորականության, ինչպես նաև Աղվանքի կաթողիկոսության ներկայացուցիչները: Այս դիտարկումից էլ կարելի է բխեցնել հետևյալ հարցադրումը. ի՞նչ կարգավիճակ ունենին Վրաց պետության կազմում Ջաքարյանների հովանավորության ներքո գտնվող հիշյալ ավատական իշխանությունները: Իմ կարծիքով Ջաքարյանների և նրանց հարակից տիրույթների կարգավիճակը Վրաց թագավորության սահմաններում, հայ ժամանակակից պատմագրական երկերում դեռևս լիովին լուսաբանված չէ⁷⁵:

Լոռեի ժողովի մասին բավական մանրամասն պատմող Կիրակոս Գանձակեցին չի թվագրում այդ իրադարձությունը⁷⁶: Այնուամենայնիվ, կան մի քանի չափորոշիչներ, որոնցով հնարավոր է ճշտել Լոռեի ժողովի հրավիրման թվականը:

Բացի վերևում հիշատակվածներից (Անիի աթոռակալ Բարսեղ Անեցու և Գրիգոր Տուտեորդու բացակայությունն այդ հավաքին), կարևոր է նաև Կիրակոսի այն տեղեկությունը, ըստ որի Ջաքարեն նամակ է ուղարկել ինչպես Հայոց կաթողիկոս Հովհաննես Զ Մեծաբարոյին, որն այդ պահին ապստամբ էր,

⁷⁴ Ա. Բողոջեան, «Գրիգոր Տուտեորդ վարդապետին վերաբերող վկայությունների քննութ-յուն», Շողակաթ (1995), էջ 55–62:

⁷⁵ Նման փորձ վերջերս կատարել են Հ. Մարգարյանն ու Գ. Կիրակոսյանը (տե՛ս Հայոց պատմություն, հտ. II. Միջին դարեր, գիրք Երկրորդ (IX դարի կես – XVII դարի առաջին կես), էջ 219–239 և էջ 551–575), սակայն գլխավոր եզրակացությունները դեռևս ի մի բերված չեն:

⁷⁶ Ըստ Գ. Գևորգյանի՝ Լոռեի ժողովը հրավիրվել է 1208 թ. (հեղինակը հետևում է Ի. Ղարիբյանի մենագրությանը, որը ցավոք իմ ձեռքի տակ չէ): Տե՛ս Ի. Ղարիբյան, Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները (Երևան, 2009), էջ 39 և հմմտ. Գ. Գևորգյան, «Հայ-վրացական եկեղեցական հարաբերությունները», էջ 223:

այնպես էլ Կիրիկիայի թագավոր Լևոնին և նրա պետության կողմից ընդունելի Դավիթ Արքակաղնեցուն. «Ապա գրէ թուղթ և առաքէ դեսպանս առ կաթողիկոսն Հայոց, Յովհաննէս անուն, որ ընդ այն ժամանակս ապստամբ էր ի թագաւորէն Լևոնէ ի Հռոմկլայն և ծանուցանէ նմա զխնդիրն: Եւ նա նստուցեալ էր զտէր Դաւիթ կաթողիկոս փոխանակ Յովհաննիսի, որ ապստամբն էր յաշխարհէն Կիրիկեցոց, ի վանքն, որ կոչի Արքակաղին»⁷⁷:

Կիրակոսի աննդակից Վարդան Արևելցին Կիրիկիա ուղարկած Զաքարեի դեսպանագնացության մասին գրում է. «Բայց Իւանէ խաբեալ ի թագուհւոյն թամարայ՝ տկարացաւ ի հաւատոյն և/(էջ 182) անյաջողեալ նմա՝ ընմոնեցաւ գերի իլաթ, և եղբօրն արիական անուամբ ազատեցաւ դարձեալ՝ տալով ի կնութիւն զգոլատր Մելիք Աշրափուն՝ տեառն իլաթայ: Իսկ Զաքարէ՝ աւագ եղբայրն, մնաց յաւագ և ի սեպհական հաւատն. սակայն կամեցաւ զտօն Տիրամօրն և զխաչին⁷⁸ ի պատկեր աւուրն⁷⁹ տօնել, և զճրագալոյցսն շրուծանել, և կրօնաւորաց միս շուտել, և կենդանեաց պատարագ մատուցանել, և վրանաւ պատարագել ի բացեայ դպրօք և սարկաւագօք: Վասն որոյ առաքեաց առ Լևոն, որ այն ինչ օծեալ էր թագաւոր ի Փռանկաց և ի Յունաց՝ առաքելով նմա թագ ի վեց հարիւր քառասուն և վեց թուին»⁸⁰: Վարդանի բերած թվականը՝ Հայոց 647 (1197/8), Լևոնի թագադրման թվականն է և կապ չունի Լոռէի ժողովի հետ:

Սմբատի «Տարեգրքի» ընդարձակ տարբերակից հայտնի է, որ Հովհաննէս կաթողիկոսն ապստամբել է Լևոն արքայի դեմ, չհանդուրժելով վերջինիս կողմից Նորբերդի իշխան՝ իր փեսա Հեռի սեբաստոսի և նրա որդիների (Կոստանց Կումարտիաս, Զոսլին, Պաղտին) բանտարգելութիւնը⁸¹: Նորբերդ ամրոցի պաշարումն ու տերերի «յաղագս պատճառի ինչ» ձերբակալումը, հավանաբար կապված էր լատինների կողմից Կոստանդնուպոլսի գրավման հետ, քանի որ պատմիչը հենց այդ իրադարձության արձանագրումից հետո է անդրադառնում Հեռիի ձերբակալութիւնը: Այս իշխանի սեբաստոս տիտղոսը հուշում է, որ նա սերտ կապեր պիտի ունենար բյուզանդական իշխանութիւնների հետ: Այնուամենայնիվ Սմբատը սխալմամբ Կոստանդնուպոլսի գրավումն էլ խաչակիրների կողմից թվագրում է ոչ թե 1204, այլ 1207 թվականով (Հայոց՝ ՈԾԶ): Կարծում ենք, հենց Կ. Պոլսի առման ճշգրիտ 1204 թվականն

⁷⁷ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 168:

⁷⁸ Այլ օր. զխաչն:

⁷⁹ Այլ օր. աւուր:

⁸⁰ Վարդան, Պատմութիւն Տիեզերական, էջ 181–182:

⁸¹ Սմբատ, Տարեգիրք (Վենետիկ), էջ 215:

էլ Նորբերդի պաշարման և Հեռիի ձերբակալման թվականն է՝⁸²։ Նշանակում է՝ Լոռեի ժողովի նախապատրաստական աշխատանքները սկսվել են 1204–1207 թթ. միջև, Սսի ժողովից և Հոռմկլայի կաթողիկոսից բերված վավերագրի հասնելուց հետո, և ոչ թե հատկապես 1204 կամ 1205 թ., ինչպես ենթադրվում է վրաց պատմագրության մեջ՝⁸³։

Եկեղեցական հակամարտության հետևանքով՝ Կիլիկիայի, թագավորը, եպիսկոպոսներն ու իշխանները, որոնցից էլ հավանաբար կազմված էր երկրի կառավարման խորհուրդը 1204/5 թ.⁸⁴ էլ նոր կաթողիկոս է օծում. «...եղին հակառակ նմա զարքեպիսկոպոսն Մսսայ և առաջնորդ Արքակաղնուոյն զտէր Դաւիթ կաթողիկոս Հայոց»⁸⁵։ Հովհաննես Զ կաթողիկոսը կարողանում է դիմագրավել Լևոն Ա թագավորին, փակվելով Հոռմկլա ամրոցում. ըստ ընդարձակ Սբատի՝ օգնության համար նույնիսկ դիմում է Իկոնիայի սուլթան Քայ Խոսրովին, որն էլ 1208 թ. գրավում է Բերդուս ամրոցը, գերելով իշխան Գրիգորին⁸⁶, որն հավանաբար մասնակցություն էր ունեցել Նորբերդի իշխան Հեռիի ձերբակալմանը։ Ժողովի հրավիրման թվականի ճշտմանը կարող է օգնել նաև Զաքարիայի և վրացական զորքերի կողմից Կարս քաղաքի գրավման

⁸² Հետևելով Սմբատին՝ 1207 թ. Հեռիի և նրա որդիների ձերբակալության և Դաւիթ Արքակաղնեցու օծման թվական են համարում ինչպես Հեթում թագավորը (տե՛ս ՄԺ, հտ. I, էջ 78), այնպես էլ Հեթում Կոռիկոսցին (Հեթում, Ժամանակագրություն, էջ 49)։

⁸³ ԺԳ դարի Բ կեսի մատենագիր Մխիթար Այրիվանեցու պատմագրական երկում Լոռեում տեղի ունեցած ժողովի մասին պատմվում է Հայոց ՈՄ (=1191/2) թ. դեպքերի շարադրանքում, գրելով. «Եղև ժողովի Լոռի վասն վրանաւ պատարագի և ոչ հաճեցան»։ Տե՛ս Մխիթար Այրիվանեցուց Պատմութիւն ժամանակագրական, ի լոյս ընծայեաց Ք[երովբէ] Պ[ատկանեան], Ս. Պետերբուրգ (ՄՊբ., ի տպարանի կայսերական ճեմարանի գիտութեանց, 1867), էջ 80 և հմմտ. *Histoire chronologique* par Mkhithar d'Aïrivank, XIII^e s., traduite de l'arménien, sur le manuscrit du Musée Asiatique par M. Brosset (St.-Petersburg, 1869), p. 104–105։ Ֆրանսիացի կովկասագետ Մ. Բրոսսեն Լոռեի ժողովը թվագրում է 1204 թ., որն էլ անցել է վրաց ժամանակակից պատմագրություն։ Տե՛ս Л.М. Меликсет-Бек, Источниковедческие заметки, составил и редактировал П.М. Мурадян (Ереван, «Гитутюн», 2010), с. 99; Ջ. մասեղյանց, յնտոջցլո զա սոմցիո ինտոջցլոս շրտոցրտոճ XIII–XVIII սաշջշնցցճճճ, տճոլոսո, 1982, թց. 90։

⁸⁴ Ազգված Սմբատի Կ. Պոլսի առման թյուր (1207) թվագրությունից՝ Դաւիթ կաթողիկոսի օծման այս թվականը կրկնում են և՛ Հեթում թագավորը, և՛ Հեթում Կոռիկոսցին։

⁸⁵ Սմբատ. Տարեգիրք (Վենետիկ), էջ 215։ Հմմտ. Հեթում, Ժամանակագրություն, էջ 49; ՄԺ հտ. I, էջ 78։

⁸⁶ Սմբատ, Տարեգիրք (Վենետիկ), էջ 216, հմմտ. նաև Հեթում Կոռիկոսցու և Հեթում թագավորի ժամանակագրությունների հետ։ Իկոնիայի սուլթանության այս ռազմարշավին անդրադառնում են նաև մուսուլման կատմիչները։ Տե՛ս Վ. Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145–1226 թվականներին (Երևան, 1994), էջ 122–123 և հմմտ. P.M. Шукуров, «Образ киликийской Армении в мусульманских источниках», Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում (պատմա-բանասիրական ակնարկ), խմբագիր՝ Ա. Բոզոյան (Երևան, 2016), էջ 93–94։

փաստը, որն էլ ըստ Ստեփանոս Օրբեկյանի՝ տեղի է ունեցել 1206/7 թ.⁸⁷: Իմ կարծիքով, քաղաքի գրավումով է բացատրվում Կարսի եպիսկոպոսի անվան հիշատակությունը Կիրակոսի կողմից Լոռեի և Անիի ժողովներին հրավիրված և մասնակցած հոգևորականների թվում:

Ահա այս իրադարձություններին տեղյակ Ջաքարե ամիրսպասալարն էլ շուրջ 1204 թ. ուղարկում է իր դեսպանագնացներին Հովհանես Զ կաթողիկոսի և Լևոն Ա թագավորի մոտ, խնդրելով նրանց թույլ տալ Հայոց եկեղեցում կատարել որոշ ծիսատոնական բարեփոխումներ, որոնք անհրաժեշտ էին Մեծ Հայքի Հյուսիսարևելյան գավառների հայ ազգաբնակչության համար: Ջաքարիայի դիմումին շատ արագ արձագանքում են թե՛ Հովհանես Զ Մեծաբարո հայրապետը, և թե՛ Լևոն Ա թագավորն ու Դավիթ կաթողիկոսը: Լևոն թագավորը ժողով է հրավիրում Սիս քաղաքում, ուր Կիլիկիայի հոգևորականներն ընդառաջ գնալով Ջաքարիա ամիրսպասալարին, ութ կանոններից բաղկացած մի փաստաթուղթ են ձևակերպում⁸⁸:

Հետաքրքիր է, որ բերված կետերի մեջ հիշատակում անգամ չկա գլխավոր խնդրի, որը Կիրակոսը ձևակերպել է իբրև վրացիների կողմից հայերին ուղղված գլխավոր պահանջ: «Եւ նախատէին վիրք զՀայք՝ ոչ ունել եկեղեցի ի ճանապարհի և անհաղորդ մնալ նոցա, և ոչ տօնել զտօնս վկայիցն Աստուածոյ յիւրաքանչիւր աւուր կատարման»⁸⁹: Հատկանշական է, որ հիշված «նախատինքի» միայն երկրորդ՝ տոներին վերաբերող մասն է ներառնված Սսում հաստատված ութ կանոնների երկրորդ կետում: Թե՛ Մխիթար Գոշը, ով Ջաքարեի խոստովանահայրն էր, և թե՛ այլ վարդապետներ ամիրսպասալարին հավատացնում էին, որ միշտ Հայոց թագավորները և իշխանները, ինչպես Տրդատը և Վարդանանց վկաները, ունեցել են շարժական սեղան, սակայն ժամանակի ընթացքում այդ ավանդույթները մոռացություն է մատնվել: Այդ իսկ պատճառով Մխիթար Գոշը խորհուրդ է տալիս Ջաքարեին դիմել Հայոց կաթողիկոսին և թագավորին⁹⁰: Մխիթար Գոշի առաջարկի հիմնական գաղափարն այն էր, որպեսզի կարողանա եկեղեցական խնդիրների լուծումը բարձրացնել Վրաստանի և Հայաստանի (տվյալ դեպքում՝ Կիլիկյան) միջև փոխհարաբերությունների միջպետական մակարդակի, ինչն էլ մեր կարծիքով պաշտպանություն է գտել թե՛ Լևոն Ա արքայի և

⁸⁷ Ստեփանոս Օրբեկյանի ժամանակագրության մեջ դեպքը թվագրված է Հայոց Մեծ թվականի ՈԾԵ (655=1206/7) Քրիստոսի Մննդյան 1208, Լևոն առաջինի թագավորության ժ (1198+10=1208) և Հովհանես Զ կաթողիկոսի գահակալման Ե (1203+5=1208) տարիներով: Տե՛ս ՄԺ, հտ. 1, էջ 37 և հմմտ. Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ, ժամանակագրութիւն, էջ 236:

⁸⁸ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 169–170:

⁸⁹ Անդ, էջ 167:

⁹⁰ Անդ, էջ 167–168:

Դավիթ Արքակաղնեցի կաթողիկոսի, այնպե՛ս էլ Հովհաննես Մեծաբարո կաթողիկոսի արագ արձագանքներում: Իսկ Զաքարեի կողմից, կարծում եմ, այդ քայլն հետապնդել է միջազգային առումով սեփական իշխանության լեգիտիմացման ձգտում:

Ընդառաջ գնալով Զաքարե ամիրսպասալարին, Հովհաննես Զ Մեծաբարո կաթողիկոսը Հռոմկլայից Լոռե է ուղարկում. «...վրան մի գմբեթարդ եկեղեցածև և կազմողս և յօրինողս նմին, և սեղան մարմարեայ, և այլ սպաս պատարագաց, և եպիսկոպոս մի, Մինաս անուն, և սարկաւագս և դպիրս, և քահանայս գեղեցկաձայնս, ասացողս պատարագին»⁹¹: Հիշյալ դեսպանության հետ Հովհաննես կաթողիկոսն ուղարկում է նաև գրավոր հրահանգներ և նամակներ: Հիշատակված ութ կետից բաղկացած կանոնական որոշումների հետ, Լևոն Ա թագավորն ու Դավիթ կաթողիկոսն ուղարկում են իրենց դեսպաններին և հրամանաբերներին⁹²: Ստանալով թագավորի և կաթողիկոսների օրհնությունը՝ Զաքարեն հրամայում է իր ազգական, Հաղբատի եպիսկոպոս Գրիգորին ժողով հրավիրել Լոռե քաղաքում⁹³: Ժողովն անմիաբանություն է դրսևորում, մասնակիցներից շատերը լքում են ժողովատեղը: Ըստ Կիրակոսի, ժողովականները երկու մասի են բաժանվում և ժողովական փաստաթուղթը չի ընդունվում⁹⁴: Իր իշխանության տակ գտնվող հոգևորականներին Զաքարեն ստիպում է Աստվածածնի Վերափոխումը և Սուրբ Խաչի վերացումը տոնել նշանակված ամսաթվերին, և ոչ թե հին սովորությամբ՝ մոտակա կիրակին⁹⁵: Այս արարողության կատարումն այնքան է սրում ատելությունը կողմերի միջև, որ սկսում են միմյանց սրով ահաբեկել: Հովհաննես կաթողիկոսի դեսպան Մինաս եպիսկոպոսին Զաքարե ամիրսպասալարն ուղարկում է Հաղբատ, որ պարտադրի վանքի կրոնավորներին ընդունել բարենորոգումները: Հաղբատի եպիսկոպոս Գրիգորի ուղարկած մարդիկ դաժան ծեծի են ենթարկում կաթողիկոսական նվիրակ Մինաս եպիսկոպոսին: Այս դեպքն այնքան է բարկացնում Զաքարեին, որ նա սպառնում է Գրիգորին պատժել: Վերջինս փախչում է Մխիթար Գոշի մոտ, խնդրելով նրա հովանավորությունը, սակայն որոշ ժամանակ անց, Կեչառիսում Զաքարեն Գրիգորին ձերբակալում և նրա փոխա-

⁹¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 170:

⁹² Անդ, էջ 171:

⁹³ Անդ, էջ 173:

⁹⁴ Անդ, էջ 172:

⁹⁵ Նշանակում է, թե ժողովը տեղի է ունեցել ամենայն հավանականությամբ 1208 թ. օգոստոս և սեպտեմբեր ամիսներին, քանի որ Աստվածածնի վերափոխման տոնն անշարժ տոմարով տոնվել է օգոստոսի 15-ին, իսկ Խաչվերացը՝ սեպտեմբերի 14-ին:

րեն Հաղբատի եպիսկոպոս է նշանակում մինչ այդ Խաչեն փախած Հովհաննես-սին⁹⁶, որին Կիրակոսն անվանում է Հաղբատի հռչակավոր գավթի կառուցող⁹⁷: Լոռեի ժողովից հետո, եկեղեցում սկսված այս շփոթը Կիրակոսը կապում է մահմեդականների բազմադարյան տիրապետության հետևանքների հետ, իր կողմից թվարկելով Հայոց եկեղեցու ավանդույթյան մի քանի կետեր, որոնք անհրաժեշտ էր համարում բարենորոգման համար. 1. տոները չէին կատարում իրենց ամսաթվին, 2. տոնի պատճառով պահքը չէին լուծում, 3. պատարագը մատուցում էին միայն քահանաներով, առանց դպրի և սարկավագի, 4. խորհրդի (նկատի ունի պատարագը) ժամանակ եկեղեցու դռները բաց չէին թողնում, վախենալով մահմեդականների թշնամական գործողություններից⁹⁸: Նմանատիպ և բարենորոգման կարոտ մի շարք խնդիրներ էլ հիշատակում է Ներսես Լամբրոնացին «առ Լեւոն» հռչակավոր թղթում դեռևս 1194 թ., իհարկե, ելնելով կրիլիկյան իրականությունից⁹⁹:

Դ 10. Անիի ժողովի պարագաները.

Լոռու ժողովի տապալումից հետո, Զաքարեն հրամայում է ժողովի հրավիրել Շիրակի Անի մայրաքաղաքում, ուր հավաքվում են նախորդ ժողովի մասնակիցները «և ևս յոլովք»¹⁰⁰: Ժողովի հրավիրման թվականը Գանձակեցին կրկին չի հայտնում, սակայն տեղեկացնում է. «Եւ էր աւուրքն ձմեռնային, և տօն Մննդեան և Յայտնութեան Յիսուսի Քրիստոսի մերձեալ»¹⁰¹: Նկատի ունենալով այս տեղեկությունը, ժողովի հրավիրման թվական, իմ կարծիքով, կարելի է համարել 1208 թ. հունվար ամիսը: Նշանակում է, որ Անիի ժողովից հետո Մխիթար Գոշն ապրել է շուրջ հինգ տարի, քանի որ Ստեփանոս Օրբելյանի «ժամանակագրության» մեջ նրա մահը թվագրվում է հայոց ՈՄԲ (=1213/4) թվականով¹⁰²: Այնուամենայնիվ ըստ Կիրակոսի՝ Մխիթար Գոշը մեր-

⁹⁶ Անդ, էջ 173–174:

⁹⁷ Անդ, էջ 174:

⁹⁸ Ըստ Վարդանի, Զաքարե ամիրսպասալարի Հայոց եկեղեցու բարենորոգման կարոտ խնդիրներն հետևյալներն էին. «...դտօն Տիրամօրն և զխաչին ի պատկեր աւուրն տօնել, և զճրագարոյցսն չլուծանել, և կրօնաւորաց միս չուտել, և կենդանեաց պատարագ մատուցանել, և վրանաւ պատարագել ի բացեայ, դպրօք և սարկաւագաւք»: Տե՛ս Վարդան, Պատմութիւն Տիեզերական, էջ 182:

⁹⁹ RHC d.a., t. I, p. 579–603:

¹⁰⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 174:

¹⁰¹ Անդ, էջ 175:

¹⁰² Մժ, 4տ. I, էջ 38:

ժուժ է Զաքարիա սպասալարին հիվանդության և ծերունական անկարողության պատճառով մասնակցել Անիի ժողովին: Թեպետ Նոր Գետիկի վանահայրը նախորդ նամակով տեղեկացնում է, որ համաձայն կլինի ժողովում ընդունված բոլոր որոշումներին, սակայն մասնակիցների պնդմամբ նրան Ս. Ծննդյան և Յայտնության (հունվարի 6) տոնի նախօրերին ստիպմամբ Անի են բերում: Մինչ այդ, ժողովականների մի մասը համաձայնում է ընդունել բարենորոգումները, մյուս մասը՝ դրանք կրկին մերժում է: Ժողովական հոգևորականների մեծ մասը սեփական աթոռից զրկվելու վախից է համաձայնում բարենորոգումներին, իսկ բարենորոգումների հակառակորդ վնահայրերն ու վարդապետները բանտարգելված Զաքարե սպասալարի կողմից, սպասում էին, որ իրենց աքսորելու են երկրից:

Ըստ Կիրակոսի՝ Զաքարեի հրամանով, քաղաքի դարպասի մոտ, իշխաններից մեկը բռնելով քաղաք մտնող վարդապետի ձիու սանձերը, ստիպմամբ նրան տանում է զորավարի արքունիք: Մխիթար Գոշը տեղեկանալով Անիի ժողովում տեղի ունեցածի մասին՝ մեղադրում է զորավարին բռնություն գործադրելու մեջ: Ապա դիմում է ժողովականներին. «Դուք հոգայք վասն ազգիս, զի մի՛ այդպիսի սովորությամբ խառնեսցին ընդ Վիրս, և ես հոգամ վասն զօրավարիս, զի մի՛ լիցի սա վրացի, իբրև եղբայր իւր, որում սպասեն Վիրք: Արդ՝ թէ այսպէս է, ապա զի՞ մեղադրէք ինձ, զի հրաման ունի ի կաթողիկոսէն և ի թագաւորէն Լևոնէ առնել զայս. և մեք թէ կամիմք և թէ ոչ, սա ոչ դադարէ զայս առնելոյ: Արդ դուք դարձիք յիւրաքանչիւր բնակութիւնս և մեք աղաչեսցուք զսա ոչ հանել զձեզ յեկեղեցեաց ձերոց և ի տեղեաց. և մեք զպաշտօնն, զոր մինչև ցայսօր պաշտեալ եմք, զնոյն պաշտեսցուք»¹⁰³: Կիրակոսի մեջբերած Մխիթար Գոշի այս խոսքը շատ նման է երկու տասնյակ էջ առաջ նույն պատմիչի իսկ մեջբերած մեկ այլ խոստումի. Լևոն արքան էլ լատիներների կողմից ուղարկված թագն ընդունելուց առաջ, 1198 թ. խոստանում է ընդունել նրանց ծիսական պայմանները, այսպես հանգստացնելով կաթողիկոսին և եպիսկոպոսներին. «Դուք մի՛ ինչ հոգայք վասն այդորիկ, ես հաճեցից զմիտս նոցա առ անգամ մի կեղծավորութեամբ»¹⁰⁴: Այնուամենայնիվ, ինչպես վկայում է Կիրակոսը, հոգևորականներից որևէ մեկը չաքսորվեց, և՛ Զաքարեն և՛ Իվանեն ամեն ինչ արեցին, որ նրանք վերադառնան իրենց ծառայության

¹⁰³ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 177:

¹⁰⁴ Անդ, էջ 157: Դավանական գիշման այս դրվագն առկա է թե՛ հայկական և թե՛ լատին մատենագրական երկերում, տե՛ս Cl. Mutafian, “Jérusalem et les Arméniens jusqu’à la conquête Ottomane (1516) (Paris: Les Belles Lettres, 2022), chapitre 7 (3-4), p. 212-229:

վայրերը, իսկ ծեսը Հայոց եկեղեցում շարունակվեց կատարվել առանց փոփոխության, ավանդական ձևով¹⁰⁵:

Դ 11. Տփխիսի(՞) ժողովը.

Ամենայն հավանականությամբ Անիի և Լոռեի հիշատակված ժողովների հրավիրման ժամանակներին՝ 1205–1207 թթ. է վերաբերում, նաև «Քարթլիս Ցխովրեբայի» մաս կազմող «Թագակիրների պատմություն և գովասանք» վրացերեն երկի տեղեկությունը: Վրաց հեղինակը պատմում է, որ Զաքարիա ամիրսպասալարի դավանանքը թույլ չէր տալիս նրան հաղորդվել վրաց հոգևորականի կողմից, չնայած վրաց արքունիքում զբաղեցրած նրա բարձր պաշտոնին: Հայոց և Վրաց եկեղեցիների փոխհարաբերությունները տանելի դարձնելու միտումով, Զաքարիան Վրաց կաթողիկոս Հովհանի (1205/1206–1210) իշխանության տարիներին բանավիճելու համար արքունիք է հրավիրում Հայոց կաթողիկոսին և բարձրագույն հոգևորականության ներկայացուցիչներին (...Յաթարոն Մարազլոնն զաճ զատալոճոսն միմարտ մատոնս, տանն-դա յճոնկոճոստա, զոճելոտա զարձաճեճտա զա մեճնիերտա...)¹⁰⁶: Ամենայն հավանականությամբ խոսքը վերաբերում է 1204/1205 թ. Հռոմկլա և Սիս ուղարկված դեսպանագնացությանը, որին արդեն անդրադարձել ենք վերևում: Սակայն քիչ անց վրաց Անանուն պատմիչը տեղեկացնում է, որ արքունիքում հրավիրված ժողովին ներկայացել է Վանի կաթողիկոսն իր վարդապետներով (Մոջոճա զատալոճոսն զճճոնսս զա զոճելոնն զարձաճեճնն)¹⁰⁷: Այս վկայությունը, իրավամբ, կասկածելի է թվացել Ֆրանսիացի գիտնական, ռուսական ակադեմիայի անդամ Մ. Բրոսեին, քանի որ ըստ նրա Ամենայն Հայոց կաթողիկոսի պաշտոնական նստավայրը եղել է Հռոմկլայում, իսկ Աղթամարի կաթողիկոսությունը միջնադարյան հեղինակների կողմից երբեք չի անվանվել Վանի կաթողիկոսություն¹⁰⁸: Վերջինիս կասկածի մասին տեղյակ է եղել Լ. Մելիքսեթ-Բեկը, սակայն պնդում է, որ Վանի կաթողիկոսը «Կիրակոսի

¹⁰⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 177–178:

¹⁰⁶ Տե՛ս յարտոլոս ցեռոճրեճա / Ն. Կալուխիճջոլոս ռեճ., Գ. II (տճոլոսն, 1959) (պսուհեա՝ յ.ճ.), Գ. II, ք. 82 և հմմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի յեճ հայերի մասին. քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն-ծանոթագրություններով յեճ հավելվածներով, հտ. Բ (ԺԳ–ԺԸ դար) (Յերևան, 1936), էջ 17; Խ. Թորոսյան, «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը», էջ 420:

¹⁰⁷ Տե՛ս յ.ճ., Գ. II, ք.83 և հմմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, էջ 17; Խ. Թորոսյան, «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը», էջ 421:

¹⁰⁸ Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX siècle, traduite du Géorgien par M. Brosset, 1^{re} Partie: Histoire ancienne, jusqu'au 1469 de J.-C. (S.-Petersbourg, 1849), p. 451, n. 1.

հիշատակած Դավիթ Աղթամարցին պիտի լինի»¹⁰⁹: «Թագակիրների պատմություն և գովաբանություն» երկի բնագրը հայերեն փոխադրած Խ. Թորոսյանը, մերժելով Լ. Մելիքսեթ-Բեկի տեսակետը, անհավանական է համարել այս տեղեկությունը, և առաջարկել՝ վրացերեն բնագիրը սրբագրել. «կաթողիկոսի արվանիսս» (= კათოლიკოსი ალვანისა) բառակապակցությամբ¹¹⁰: Վրացերեն բնագրի այս սրբագրությունը կարծում եմ կոռեկտ չէ, քանի որ վրաց մատենագրության մեջ Աղվանքն¹¹¹ հայտնի է ალვანეთი(+სა) ձևով և դժվար թե վրացերեն երկի ընդօրինակողներից որևէ մեկը դրանից կարողանար դուրս բերեր ვანისა տառակապակցությունը: Բացի այդ, Աղվանքի կաթողիկոսը թեպետ այդ ժամանակ, հավանաբար, գտնվում էր Զաքարյանների տիրույթում, չէր կարող փոխարինել Հայոց կաթողիկոսին: Այդ է վկայում նաև այն հանգամանքը, որ ո՛չ Լուռեի, ոչ էլ Անիի ժողովների նկարագրություններում Կիրակոսը և Ստեփանոս Օրբելյանն Աղվանքի կաթողիկոսի անունն իսկ չեն հիշատակում: Աղթամարի հակաթու կաթողիկոսներին բազմիցս անդրադարձած Կիրակոսը չի հիշատակում նաև Աղթամարի Դավիթ կաթողիկոսի անունն այս կապակցությամբ:

Ըստ «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» երկի՝ վրաց արքունիքում հայոց և վրաց եկեղեցիների համատեղ եկեղեցական ժողով հրավիրել է Զաքարիա ամիրսպասալարը վրաց աշխարհիկ և հոգևոր իշխանությունների համաձայնությամբ, իր վրա վերցնելով հայոց հոգևոր դասի ներկայացուցիչների մասնակցության ապահովման գործը: Անհայտ է ժողովի հրավիրման վայրը, թեպետ վրաց թագուհու և թագավորի ներկայությունը, վրաց պատրիարքի և «Վրաստանի նշանավոր մարդկանց» հետ միասին, հուշում է, որ հավաքը կարող էր տեղի ունենալ հենց Տփղիսում: Տփղիսի վրաց արքունիքում տեղի ունեցած եկեղեցական ժողովը ղեկավարում էր վրաց կաթողիկոս Հովհանն (1205/6–1210), ներկա էին նաև Թամար թագուհին (1184–1213), նրա ամուսին Դավիթ Սուսան արքան (1189–1207)¹¹² ու Վրաստանի նշանավոր մարդիկ (...დაჯდა დედოფალი... დავით მეფე და წარჩინებულნი

¹⁰⁹ Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, էջ 31:

¹¹⁰ Խ. Թորոսյան, «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը», էջ 421, ժան. 280, էջ 552–554 (հատկապես՝ էջ 553):

¹¹¹ Վրաց միջնադարյան պատմագրության մեջ Աղվանքն ավելի շատ հայտնի է րան անվամբ, որը ևս դժվար թե շփոթվեր Վան քաղաքանվան հետ:

¹¹² Նրա մասին տե՛ս օգ. Ջաֆարիձե, Վրացական պատմություն, Երևան, 1965, էջ. 259–291:

Նախարարները ... մոլորակները կատալոգիսա օրանջել)¹¹³, որոնք արարողական կարգի համաձայն պատշաճ ընդունելություն են ցույց տվել Հայոց եկեղեցու հոգևորականներին¹¹⁴: Վերոբերյալ վրացական կառավարական եռյակի անվանական հիշատակությունը թույլ է տալիս ենթադրել, որ «Թագադիրների պատմություն և գովաբանություն» երկում հիշատակված ժողովը կարող էր տեղի ունենալ ոչ ավելի ուշ, քան 1207 թ., ինչպես ենթադրել էինք Լոռեի ժողովի թվագրման մասին խոսելիս, քանի որ ժողովին մասնակցած Դավիթ Սոսլանի մահվան թվականն էլ ըստ Ի. Զավախիշվիլու կարող է հանդիսանալ թվագրման վերջին տարեթիվ: Վրաց Անանուն պատմիչն իր երկում նպատակ է դրել ցույց տալ վրաց եկեղեցու առավելությունը Հայոց դավանանքի նկատմամբ, ինչը քրիստոնեական հակաճառական գրականության հիմնական հատկանիշներից է և իր մեջ պատմական գիտելիքի առումով ոչ մի նորություն չի պարունակում:

Իմ կարծիքով՝ Լոռեի ժողովին ներկա Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհաննես Զ Մեծաբարյու պատվիրակ Մինաս եպիսկոպոսին էլ իբրև Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամաբեր, ինչպես նաև Լևոն Ա արքայի դեսպանագնացներին Զաքարյանները կարող էին ներկայացնել Վրաց արքունիքին եկեղեցական բանակցություններ վարելու համար: Կարծում եմ, հետագա պրպտումները և բնագրագիտական հետազոտությունները թույլ կտան բացահայտել վրաց պատմագրության հիշյալ հուշարձանի անթեղած գաղտնիքը: Այն, որ այս հանդիպման ժամանակ առաջին անգամ Վրաց վարչակարգը թագավորների և կաթողիկոսի ներկայությամբ խնդիր է քննարկել Կիլիկյայի Ամենայն Հայոց թագավորի և Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչների հետ, խոսում է նկարագրված դեպքերի կարևորության մասին թե՛ Վրաստանի, և թե՛ Կիլիկիայի Հայոց թագավորության պատմության համար:

Դ 12. Գրիգոր Տուտեորդի վարդապետին վերաբերող վկայությունների քննություն.

«Գրիգոր Որդի Տուտայ» անունով յայտնի վանականը Սանահին վանքի ԺԲ դարի նշանավոր վարդապետներից է, հիշատակված Կիրակոս Գանձակեցու «Հայոց Պատմութեան» մեջ, Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի և Ներսես

¹¹³ Խ. Թորոսյան, «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը», էջ 421, հմմտ.

Չ.Յ., Ծ. II, p.83:

¹¹⁴ Խ. Թորոսյան, «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը», էջ 421:

Լամբրոնացու թղթերում, Սանահնի և Հաղարծնի վիմագիր արձանագրու-
վելուներում, հիշատակարաններում և ավանդապատում գրույցներում:
Այստեղ նպատակ ունենք առանձնացնել և քննել միայն այն վկայություն-
ները, որոնք հաստատապես վերաբերում են Գրիգոր Տուտեորդուն, և ուր
հիշատակվում են վարդապետի թե՛ անունը, և թե՛ հայրանունը՝ չձեռնարկելու
համար իրեն ժամանակակից և անվանակից այլ վանական գործիչների հետ:

1. Գրիգոր Տուտեորդու անունն առաջին անգամ արձանագրված է Հայոց
ՈԳ (1154 փետրվ. 11–1155 փետրվ. 10) թվականին՝ իր իսկ ձեռքով Հովհաննա-
վանքում գրված հիշատակագրության մեջ¹¹⁵.

«Ես Գրիգոր նուսատ ի մակս քանակութեանց ուսումնական. ար-
տադրութեանց, ազատ տանէ. ստացա զմարգարիտս հաւատոյ. յավերժ
ցնծութիւն անձին. եւ յիշատակ հոգ[ւ]ոյ ի :ՈԳ: թույ. կազմեցի ձեռամբ իմով.
յաշխարհս Արարատեան ի վանս Յովհանու. ի դուրս սրբոյ Կարապետիս:
Աղաչեմ, որք ակտիք յիշել աղաւթիւք. և զենմամբ մարմնոյն Քրիստոսի: Գրի-
:ա :ճ :ն :վարդապե:ն :ճ :ա :ժ :սս :զճ:է:ս:ս:այ:
Սա վարժ արտադրողաց. ներսնախորան արտադրական»¹¹⁶: Ձեռագրում օգ-
տագործված փակագիրն ընթերցվում է. «Գրիգոր վարդապետ որդի Տու-
տայ»¹¹⁷:

Այս հիշատակարանից հայտնի է դառնում, որ 1154/5 թ. Գրիգոր Տուտե-
որդին արդեն վարդապետ էր և հիշատակագրությունը գրելու պահին
գտնվում էր Արարատյան աշխարհի Հովհաննավանք մենաստանում¹¹⁸: «Յա-
զատ տանէ» բանաձևով նա մասնավորեցնում է իր սոցիալական ծագումը:

¹¹⁵ Այդ հիշատակարանն ըստ Ղ. Ալիշանի գրված է Վենետիկում պահպանվող հայերեն
հնագույն ձեռագրի (ընդօրինակված՝ նե՛Ը=999/1000 թ.) կողմից: Տե՛ս Այրարատ. բնաշխարհ Հա-
յաստանեայց, տեղագրեաց հ. **Ղևոնդ վ. Մ.** Ալիշան (Վենետիկ, 1890), էջ 166–167:

¹¹⁶ Հիշատակագրության նմանահանությունը տե՛ս **Ղ. Ալիշան**, Այրարատ, էջ 167; **նույնի՝**
Հայապատում, էջ 310: Վենետիկի Մխիթարյան մատենադարանում պահպանվող թղթե հնա-
գույն ձեռագրի մասին տե՛ս **նույնի՝** Այրարատ, էջ 497–498: Մեզ հետաքրքրող հիշատակարանն
առանց ծածկագրի հատվածի հրատարակել են հ. Գ. Զարբհանյանը (**Գ. Զարբհանյան**,
Մատենադարան, էջ 455), գերաշնորհ Գ. Հովսեփյանը (**Գ. Յովսեփյան**, Յիշատակարանք
ձեռագրաց, էջ 365–366) և Ա. Մաթևոսյանը (**ՀԶԶ, Ե-ԺԲ դդ.**, էջ 173):

¹¹⁷ Հիշատակարանն ամբողջությամբ վերծանել է երջանկահիշատակ Կարո Ղաֆադար-
յանը: Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները (Երևան, 1957),
էջ 51: Ծածկագրի առանձին վերծանությունը տե՛ս նաև **Հր. Աճառեան**, Հայոց գրեր (Վիեննա,
1928), էջ 467:

¹¹⁸ Պետք է նաև արձանագրել, որ այս ձեռագրի դեգերումների պատմությունը մինչ այդ
ևս կապվում է Սանահնի վանական հաստատության հետ, քանի որ ըստ Ղ. Ալիշանի այն 1141/2
թ. գրվել է Անիի արքունական գանձատանը. «Ի Սարգսէ վարդապետէ Սանահնեցոյ»: Տե՛ս **Ղ.**
Ալիշան, Այրարատ, էջ 497, ծան. 1, բ. սյուն: Պետք է միայն այստեղ նշել, որ Ղ. Ալիշանը իր մյուս
ԺԳ դարի կեսին մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական քարտեզը ևս մի անգամ է վերածվում՝ արդեն հյուսիս-արևելքից: Իրանի տարածքում ասպարեզ է իջնում ևս մի հզորագույն ուժ՝ Մոնղոլական Իլխանությունը (1256–1335 թթ.), որը դառնում է Մամլուքյան սուլթանության արժանի հակառակորդն ու գլխավորագույն հակակշռող ուժը: Կիլիկիո հայոց թագավորությանը հաջողվում է դիվանագիտական միջոցներով խուսափել կործանարար ներխուժումից և, իր քաղաքական ստորակայությունն ու մոնղոլների սյուզերենությունն ընդունելով, տեղ գտնել մոնղոլական ճամբարում: Քաղաքական սույն կուրսով պայմանավորված՝ Կիլիկյան Հայաստանն այդուհետ հայտնվում է երկու տերությունների բախման առաջնագծում՝ ժամանակ առ ժամանակ «քավության նոխագ» դառնալով Սուլթանության հակամոնղոլական գործողությունների համար և իր վրա կրելով նրա ծանրագույն հարվածները: Մամլուք-մոնղոլական հակամարտությունը, հրադադարի և «սառը պատերազմի» փուլերով ընդմիջվելով, ձգվում է շուրջ 60 տարի: Եվ թեև 1323 թ. հակառակորդների երկարամյա կոնֆլիկտը եզրափակվում է հաշտությամբ², Մամլուքյան սուլթանությունը շարունակում է մնալ Կիլիկյան Հայաստանի գոյության հիմնական սպառնալիքը: Հզոր դաշնակցի բացակայության պարագայում՝ մուսուլմանական քաղաքական ուժերի շրջափակման մեջ միայնակ մնացած քրիստոնյա պետության ճակատագիրը կանխորոշված էր: Մամլուքյան ավերիչ և ավարառուական արշավանքների արդյունքում շարունակ բզկտվելով՝ Կիլիկյան Հայաստանը, այնուամենայնիվ, կարողացավ դեռ կես դար պահպանել իր գոյությունը:

Այսպիսով, Կիլիկյան Հայաստանը, որը մինչ այդ ստիպված էր եղել վերածվել իր արտաքին քաղաքական հայեցակարգը Իկոնիայի Սելջուկյան

² R. Amitai, “The Resolution of the Mongol-Mamluk War”, in: *Mongols, Turks and Others: Eurasian Nomads and the Sedentary World*, ed. by R. Amitai and M. Biran (Leiden-Boston: Brill, 2005), pp. 359–390.

սուլթանության և մոնղոլների հետ գոյակցության համար, այժմ արդեն հարկադրված էր հաշտվել նոր՝ ավելի վտանգավոր հարևանի ներկայության հետ և վերջինիս հետ հարաբերությունների հարցը մեկընդմիջտ ամրագրել իր արտաքին քաղաքականության օրակարգում: Հայոց պետության համար ստեղծված այս գրեթե անելանելի վիճակն իր *Liber secretorum fidelium crucis* («Խաչին հավատարիմների գաղտնիքների գիրքը») երկում պատկերավոր կերպով է ներկայացրել վենետիկցի հայտնի ճանապարհորդ և պետական գործիչ Մարինո Սանուդո Տորսելլոն (մահ. 1343 թ.). «Հարկ է, որ քո ամենաբարեպաշտ գթությունը հարգես հավատացյալ հայերի թագավորությունը, քանզի այն գտնվում է շորս գազանների երախում: Նրա մի կողմում՝ գետնի տակ (, լատիներեն բնագրում՝ *ab una parte infra terram*), առյուծ է՝ այն է թաթարները, որոնց հայոց արքան հսկայական հարկ է վճարում: Մյուս կողմում հովազ է՝ այն է [Եգիպտոսի] սուլթանը, ով ամեն օր ավարառության է ենթարկում քրիստոնյաններին և թագավորությունը: Երրորդ կողմում գալլ է՝ այն է թուրքերը, ովքեր ավերում են երկիրն ու թագավորությունը: Չորրորդ կողմում վիշապ է, որ Միջերկրական ծովի ծովահեններն են, ովքեր մշտապես կրծում են Հայաստանի քրիստոնյանների ոսկորները»³:

Մամլուք-մոնղոլական երկարամյա հակամարտությունը դրամատիկ ընթացք ունեցավ երկու տերությունների բախման առաջնագծում հայտնված Հայոց թագավորության համար, որը, մոնղոլների մշտական դաշնակիցը լինելով, վերջիններիս ամեն մի անհաջողությունից և նահանջից հետո հարկադրված էր կանգնել մամլուքների «դամոկլյան սրի» առաջ: Հայոց պետության ռազմական ներուժը բավարար չէր առանց մոնղոլների օգնության Սուլթանության հզոր հարվածներին հակադարձելու համար, ուստի իր հետագա գոյությունն ապահովող կենսակա հարցերի լուծման նպատակով հայոց արքաները հարկադրված էին ապավինել սոսկ խաղաղ բանակցություններին և դիվանագիտությանը: ԺԴ դարի հեղինակ՝ մոնղոլ իլխանների պաշտոնական պատմիչ Ռաշիդ ալ-Դինն (մահ. 1318 թ.) իր «Ֆրանկների պատմություն» երկում լավագույնս է բացատրել հայոց թագավորության և Մամլուքյան սուլթանության հարաբերությունների այս յուրահատկությունը. «Այս երկրի (իմա՝ Կիլիկյան Հայաստանի) բնակիչների՝ քրիստոնյա լինելու պատճառով Եգիպտոսի և Ասորիքի մուսուլմանական զորքերը [մշտապես] ասպատակում են

³ *St'ua Marino Sanutus dictus Torsellus*, "Liber secretorum fidelium crucis," in: *Gesta Dei per Francos*, t. 2 (Hanoviae: Typis Wecheliani, apus heredes Ioannis Aubrii, 1611), p. 32 և **Marino Sanudo Torsello**, *The Book of the Secrets of the Faithful of the Cross (Liber Secretorum Fidelium Crucis)*, tr. by P. Lock (Farnham-Burlington: Ashgate, 2011), p. 65:

Հայոց երկիրը (welāyat-e Arman): Թաքֆուրը⁴ (կիրառված է որպես հատուկ անուն), որ Փոքր Հայաստանի (Armīnya Suġrā) արքան է, թողնում է երկիրը և նավով գնում ծովը: Ռեյ-դը-Ֆրանսը (Raydāfrāns, այն է՝ «Ֆրանսիայի արքան»)⁵, որ ֆրանկների երկրի մեծագույն արքան է, սուրհանդակ ուղարկեց Թաքֆուրի մոտ՝ ասելով. «Դու մեծ երկիր ունես. ամեն մի գյուղից հանի՛ր [ընդամենը] երեք հեծյալ և մուսուլմանների դեմ կռի՛վ տուր, մինչև որ նրանք փախչեն: Թաքֆուրը պատասխանեց. «100 հազար հեծյալ կազմուպատրաստ պահելու համար մեծ գումար է հարկավոր, մինչդեռ, երբ եգիպտացիներն են ասպատակում, երկրին 10 հազար դինարից ավելի վնաս չեն պատճառում, և շնորհիվ ամուր բերդերի՝ նրանց ձեռքը ոչինչ չի ընկնում»⁶: Մամլուքների յուրաքանչյուր հարվածից հետո կրիկյան իշխանությունները փորձում էին դիվանագիտական միջոցներով եթե ոչ ամբողջությամբ վերականգնել Սուլթանության հետ հարաբերություններում եղած status quo-ն, ապա գոնե մասամբ հետ բերել կորցրածը և պարպել ստեղծված պատերազմական լարվածությունը: Հայ-մամլուքյան հակամարտության այս յուրահատկությունը լավագույնս բացատրել է մամլուքյան մատենագիր ալ-Ումարին, ով իր Masālik al-absār երկում գրում է. «Նրա («Սաի երկրի») արքան հավատարիմ է «Իրաքի և Պարսկաստանի տիրոջը» (իմա՝ իլխանին) և ծառայության մեջ է նրա մոտ (muntazam fi silkīhi): Ամեն անգամ, երբ վերջինիս զորքերը Ասորիք էին ելնում Եգիպտոսի տիրոջը սպանելու, նա էլ նրանց հետ էր դուրս գալիս: Նրա զորքերի բազմությունն աստիճանաբար շատացավ, ահագնացավ նրանց շարովյունը (nikāya) իսլամի և նրա «ժողովրդի» (մուսուլմանների) նկատմամբ: Դրա հետ մեկտեղ նա շողոքորթում էր Եգիպտոսի տիրոջը և քծնում՝ ամենամյա սահմանված չափով հարկ վճարելով: Յուրաքանչյուր անգամ, երբ Եգիպտոսի և Ասորիքի զորքերն ալ-Բիրայով (բնագրում փոքր-ինչ անհասկանալի՝ fi ‘uqr al-Bīra) այնտեղ են արշավում, գրավում են երկիրը, գերեվարում կանանց և

⁴ «Թաքֆուր» տիտղոսը ծագում է հայերեն «թագավոր» բառից: Այն Մերձավոր Արևելքի դիվանագիտական հարաբերությունների բառապաշար է թափանցել ԺԳ դարի սկզբներից՝ վերագրվելով ոչ միայն կրիկիո հայոց արքաներին, այլ երբեմն նաև Բյուզանդիայի և Տրապիզոնի կայսրերին, ինչպես նաև տարածաշրջանի որոշ այլ տիրակալների: Տե՛ս ներքևում ծնթգր. 90:

⁵ Roi de France արտահայտության տառադարձումն է:

⁶ K. Jahn, *Die Frankengeschichte des Rašīd ad-Dīn* (Wien: Verlag der Österreichischen Akademie der Wissenschaften, 1977), S. 44, 45; Tafel 42, *ինչպես նաև Rašīd al-Dīn Faḡl Allāh Hamadānī*, *Ġāmī’ al-tawārīḥ* (Tārīḥ-e Afranġ, Pāpān wa-Qayāsera), ց. 1, tašḥīḥ-e Moḥammad Rowšān (Tehrān, Mīraṭ Maktūb, 2005), 42 (հետայսու՝ **Rašīd al-Dīn**, Tārīḥ-e Afranġ): Տե՛ս նաև **Հ.Գ. Փափազյան**, «Լաշիդ-էդ-Դինը կրիկյան Հայաստանի մասին», ՊԲՀ, № 2 (1978), էջ 135–137:

երեխաների»⁷: ԺԳ դարի առաջին տասնամյակից սկսած՝ հայ-մոնղոլական դաշնակցությունը սոսկ ձևական երանգներ է ստանում և կորցնում իր կարևորությունը: Սրան զուգահեռ աստիճանաբար սկսում են ջերմանալ մամլուք-իլխանական հարաբերությունները՝ վերջնականապես հարթվելով 1323 թ., երբ ալ-Նասիր Մուհամմադի և իլխան Աբու Սաիդի (կառ. 1316–1335 թթ.) միջև հաշտություն կայացավ և խաղաղություն հաստատվեց⁸: Աբու Սաիդի մահից հետո իլխանությունը թևակոխեց կործանման շրջան: Հայոց թագավորությունը հետագույն ստիպված էր միայնակ դիմագրավել Մամլուքյան պետության հյուժիչ ճնշմանը:

Հայ-մամլուքյան շուրջ 115-ամյա հակամարտությունն ուղեկցվել է ոչ միայն արշավանքներով և ռազմական գործողություններով, այլև դիվանագիտական ակտիվ հաղորդակցությամբ, երկուստեք դեսպանագնացություններով, քաղաքական միջնորդության, խաղաղության, զինադադարի, գերիների փոխանակության, տարանցիկ առևտրի շուրջ բանակցություններով և նամակագրությամբ: Պատահական չէ, որ ԺԳ–ԺԵ դարերի արաբալեզու պատմական սկզբնաղբյուրներում այդքան շատ են Մամլուքյան իշխանություններին ուղղված հայկական դիվանագիտական առաքելությունների մասին հիշատակությունները՝ մի դեպքում հաշտություն խնդրելու, մյուս դեպքում սահմանված հարկը վճարելու, մեկ այլ դեպքում սուլթանին հայոց արքայի նամակը հանձնելու, այլ դեպքում մոնղոլ իլխանի և մամլուք սուլթանի միջև միջնորդության պատրաստակամության, մեկ ուրիշ դեպքում վերջինիս տարածքային պահանջների կամ ռազմագերության մեջ գտնվող հայ ազնվականների ազատության շուրջ բանակցելու և այլ նպատակներով:

Գաղտնիք չէ, որ երկու պետությունների քաղաքական փոխհարաբերությունների թաքնված ծալքերը երևակելու տեսանկյունից անգնահատելի նշանակություն ունեն պաշտոնական դիվանագիտական նամակագրության պահպանված վավերագրերը, քանի որ դրանք, միջմշակութային հաղորդակցության չմիջնորդավորված արտահայտությունը լինելով, ուղղակիորեն են արտահայտում որևէ պատմական գործընթացի կամ իրադարձության էությունը՝ անհամեմատ ավելի ցայտուն, քան նույն ժամանակի պատմական սկզբնաղբյուրներում նույն իրադարձության մասին եղած հիշատակություններն ու վկայությունները: Ի տարբերություն եվրոպական պետությունների (Արագոն, Ֆլորենցիա, Վենետիկ, Ֆրանսիա, Կիպրոս, Զենովա, Նեապոլ, Պի-

⁷ Al-‘Umārī, Masālik al-abṣār fī mamālik al-amṣār, ǧ. 3, bi-taḥqīq Kāmil Salmān al-Ġubūrī (Bayrūt, Dār al-kutub al-‘ilmiyya, 2010), ǧ. 316.

⁸ Տե՛ս վերևում՝ ծնթղթ. 2:

զա և այլն), որոնց և Մամլուքյան սուլթանության դիվանագիտական հարաբերություններին և առևտրական կապերին վերաբերող որոշ քանակության վավերագրեր (եթե ոչ բնօրինակ փաստաթղթեր, ապա գոնե դրանց թարգմանություններ), հասել են մեզ և պահվում են արդի Եվրոպայի տարբեր քաղաքների արխիվներում և ձեռագրատներում⁹, նույնը չի կարելի ասել Կիրիկյան Հայաստանի մասին: Ցավալի է, բայց փաստ, որ հայ-մամլուքյան փոխհարաբերությունների հետազոտության համար կարևորություն ներկայացնող՝ հայոց արքայական դիվանատնից դուրս եկած ոչ մի պաշտոնական վավերագիր չի պահպանվել: Համենայն դեպս որևէ նման փաստաթուղթ ցայսօր հայագիտությանը հայտնի չէ: Սա, անշուշտ, խիստ բարդացնում է խնդիրը: Այնուամենայնիվ, ուրախալի է, որ խնդրո առարկայի վերաբերյալ որոշ արժեքավոր նյութ կա պահպանված ԺԳ-ԺԵ դարերի մամլուքյան սկզբնաղբյուրներում՝ ինչպես ժամանակագրական բնույթի երկերում ու տարեգրություններում, այնպես էլ պաշտոնական գրագրության ու քարտուղարության ձեռնարկների ժանրի (al-inšā) աշխատություններում¹⁰: Հետագա շարադրանքում մեր ուշադրության կենտրոնում կլինեն քարտուղարության հիշյալ ձեռնարկների

⁹ **Fr. Bauden**, “Mamluk diplomatics: The Present State of Research,” in: *Mamluk Cairo, a Crossroads for Embassies. Studies on Diplomacy and Diplomatics*, ed. by F. Bauden & M. Dekkiche (Leiden-Boston: Brill, 2019), pp. 10–26.

¹⁰ Եգիպտոսի Մամլուքյան սուլթանության և այլ պետական միավորների հարաբերությունների համար մամլուքյան վավերագրերի ներկայացրած կարևորությունը մի շարք հետազոտողների ուսումնասիրության առարկա է դարձել: Թվարկենք նրանցից մի քանիսին: Առաջին քայլերից մեկն այս ուղղությամբ կատարել է Ս. դը Սասին: Տե՛ս **S. de Sacy A.I.**, “Lettre du sultan Mélic-alaschraf Barsébaï, à Mirza Schahrokh, fils de Timour”, *Chrestomathie arabe ou, Extraits de divers écrivains arabes*, t. 2 (Paris: Imprimerie Impériale, 1806), p. 322–329 (երկրորդ լրամշակված հրատարակությունը՝ t. 2, 1826, p. 71–87): Հաջորդ ավելի վճռական քայլերից մեկը կատարել է Հենրի (Անրի) Լամմենսը՝ քննության առնելով Մամլուքյան սուլթանության և հարակից քրիստոնեական երկրների միջև դիվանագիտական նամակագրության թեման՝ բացառությամբ Կիրիկյան Հայաստանի: Տե՛ս **H. Lammens**, “Relations officielles entre la cour romaine et les Sultans Mamlouks d’Égypte”, *ROC*, t. 8 (1903), p. 101–110 (Հռոմի պապերի հետ նամակագրության մասին) և հատկապես “Correspondances diplomatiques entre les Sultans Mamlouks d’Égypte et les puissances chrétiennes”, *ROC*, t. 9 (1904), p. 151–187 և p. 359–392: Մամլուքյան դիվանատնի և առհասարակ ալ-Կալկաշանդիի Ֆսիհ al-ašā աշխատության վերաբերյալ առաջին հիմնարար աշխատության հեղինակը եվրոպական իրականության մեջ գերմանացի Վ. Բյորկմանն էր: Տե՛ս **W. Björkman**, *Beiträge zur Geschichte der Staatskanzlei im islamischen Ägypten* (Hamburg: De Gruyter, 1928): Մարիուս Կանարի ուշադրության կենտրոնում են եղել նախ բյուզանդա-մամլուքյան (**M. Canard**, “Une lettre du Sultan Malik Nâsir Hasan à Jean VI Cantacuzène (750/1349)”, *AIÉO*, t. 3 (1937), p. 27–52; **նույնի**՝ “Les relations diplomatiques entre Byzance et l’Égypte dans le Subh al-A’shâ de Qalqashandî”, *Atti del XIX Congresso Internazionale degli Orientalisti* (Rome: 1935), p. 579–580 և **նույնի**՝ “Le traite de 1281 entre Michel Paleologue et le sultan Qalâ’un (al-Qalqašandî, Subh al-A’shâ, XIV, 72 sqq.)”, *Byzantion*, t. 10 (1935), p. 669–680), իսկ ապա՝ Մամլուքյան սուլթանության և Մարոկկոյում կառավարած Մարինիների (1244–1465 թթ.) դինաստիայի հետ հարաբերությունների վավերագրերը (**նույնի**՝ “Les relations entre les Mérinides et les Mamelouks au XIVe siècle”, *AIÉO*, t.

5 (1939–1941), p. 41–48): Գիտնականը հայ-մամլուքյան հարաբերություններին՝ սկզբից մինչև 1285 թ., անդրադարձել է առանձին հոդվածով, որում, ինչպես սույն գրքի «Ներածություն» մեջ ենք նշել, ֆրանսերեն է թարգմանել 1285 թ. հայ-մամլուքյան պայմանագիրը: Տե՛ս «Ներածություն», ծնթգր. 15: Ոսկե Հորդայի (Ջոշի ուլուսի) խաների հետ քաղաքական-դիվանագիտական հարաբերությունների և պաշտոնական գրագրության թեման առանցքային էր Ս. Զաքիրովի հետազոտության համար: Տե՛ս **С. Закиров**, *Дипломатические отношения Золотой Орды с Египтом (XIII–XIV вв.)* (Москва, «Найка», 1966) (հատկապես՝ с. 98–143): Թեման իր արդիականությունը չի կորցրել նաև մեր օրերում: Տե՛ս **M. Favereau**, “Comment le sultan mamlouk s’adressait au khan de la Horde d’Or. Formulaire des lettres et règles d’usage d’après trois manuels de chancellerie (1262-v. 1430)”, *AnIsl*, t. 41 (2007), p. 59–95:

Մամլուքյան Բալբարս և Կալավուն սուլթանների՝ հարակից երկրների (այդ թվում՝ Կիլիկյան Հայաստանի) հետ կնքած պայմանագրերի վերաբերյալ ուսումնասիրությունից (*Early Mamluk Diplomacy (1260-1290). Treaties of Baibars & Qalāwūn with Christian Rulers*) զատ՝ Պ. Հոլտն ուսումնասիրել է մամլուքյան սուլթան ալ-Նասիր Մուհամմադի (կառ. 1293–1294, 1298–1308, 1310–1341 թթ.) կողմից Իսպանիայի թագավորին ուղղված մի նամակ, որ նախկինում արդեն հրատարակվել էր Ա. Սուրյալ Ատիլայի կողմից: Տե՛ս **A.S. Atiya**, *Egypt and Aragon: Embassies and Diplomatic Correspondence between 1300 and 1330 A.D.* (Leipzig, 1938) և **P. Holt**, “Al-Nāsir Muhammad’s letter to a Spanish ruler in 699/1300”, *Al-Masāq*, vol. 3.1 (1990), pp. 23–29: Մոնղոլ իլխանների հետ մամլուքյան սուլթանների նամակագրության թեման մշտական է հրեա հետազոտող, երկու տերուլթանների ամենահմուտ մասնագետներից մեկի՝ Ռ. Ամիտայի ուսումնասիրություններում: Տե՛ս **R. Amitai-Preiss**, “An Exchange of Letters in Arabic between Abaya Ilkhan and Sultan Baybars (A.H. 667/A.D. 1268- 9)”, *CAJ* 38 (1994), pp. 11–33: Բյուզանդա-մամլուքյան դիվանագիտական նամակագրությանն անդրադարձել է նաև Դ. Կորոբեյնիկովը: Տե՛ս **D.A. Korobeinikov**, “Diplomatic Correspondence between Byzantium and the Mamluk Sultanate in the Fourteenth Century”, *Al-Masāq*, vol. 16 (2004), pp. 53–74: Տրապիզոնի կայսրության և Մամլուքյան սուլթանության դիվանագիտական շփումներն ուսումնասիրության առարկա են դարձել Ռ. Շուքուրովի համար: Տե՛ս **P.M. Шукуров**, *Великие Комнины и Восток (1204–1461)*, под редакцией С.П. Карпова (Санкт-Петербург, «Алетейя», 2001), с. 170–183: Ֆ. Բողենն ուշադրություն է հրավիրել Ֆրանսիայի ազգային գրադարանի *MS. Arabe 4440* ձեռագրի վրա, որը «Բուրջի» Մամլուքյան դինաստիայի սուլթանների և հարակից մուսուլման ինքնակալների պաշտոնական գրագրության ժողովածու է: Տե՛ս **Fr. Bauden**, “Les relations diplomatiques entre les sultans mamlouks circassiens et les autres pouvoirs du Dār al-islām: l’apport du ms. ar. 4440 (BNF, Paris)”, *AnIsl*, t. 41 (2007), p. 1–29: Նույն ձեռագրում Մամլուքյան սուլթանների և Թիմուրյանների, ինչպես նաև Կարա-Կոյունլուների և Կարամանների դիվանագիտական նամակագրության վերաբերյալ նյութն էլ առանցքային է եղել Մ. Դեկկիչեի դեռ անտիպ ատենախոսության և նույն թեմայով տպագրված մի շարք հոդվածների համար: Տե՛ս **M. Dekkiche**, *Le Caire: Carrefour des ambassades. Étude historique et diplomatique de la correspondance échangée entre les sultans mamlouks circassiens et les souverains timourides et turcomans (Qara Qoyunlu-Qaramanides) au XVes. d’après le BnF ms.ar. 4440*, 2 vols., PhD dissertation (University of Liege, 2011), **ինչպես նաև նույնի՝** “Correspondence between Mamluks and Timurids in the Fifteenth Century: An Unpublished Corpus of Official Letters (Bnf, Ms. Ar. 4440)”, *ES*, vol. XI/1–2 (2013), pp. 131–160; **նույնի՝** “The Letter and Its Response: The Exchanges between the Qara Qoyunlu and the Mamluk Sultan: MS Arabe 4440 (BnF, Paris)”, *Arabica*, vol. 63 (2016), pp. 579–626; **նույնի՝** “Crossing the line: Mamluk response to Qaramanid threat in the fifteenth century according to MS ar. 4440 (BnF, Paris)”, *BSOAS*, vol. 80/2 (2017), pp. 253–281: Ֆլորենցիայի և Մամլուքյան սուլթանության 1422-1510 թթ. ընդգրկող ժամանակաշրջանի քաղաքական և առևտրատնտեսական հարաբերությունների՝ իտալական արխիվներում պահպանված վավերագրերն իր դոկտորական ատենախոսության թեմա է դարձրել Ալ. Ռիցցոն՝ լրացնելով և ամբողջացնելով Մ. Ամարիի

ժանրի երկերը, որոնց հայտնաձեռնված տեղեկությունները կհամեմատենք հայ-մամլուքյան դիվանագիտական նամակագրության վերաբերյալ ԺԳ-ԺԶ դարերի արաբալեզու (և ոչ միայն արաբալեզու) պատմական գրականության մեջ պահպանված վկայությունների և անգամ բացառիկ վավերագրերի հետ¹¹: Հաշվի առնելով այն փաստը, որ նշված ձեռնարկները քիչ ծանոթ կամ գուցե առհասարակ անծանոթ են հայագետներին և Կիլիկյան Հայաստանի պատմության մասնագետներին, ուստի հայ-մամլուքյան դիվանագիտական շփումների վերաբերյալ նրանցում առկա նյութի քննությանն անցնելուց առաջ հարկ է, որ անդրադառնանք դրանց հեղինակների կյանքի ու գործունեության որոշ մանրամասների:

Ա 2. Մամլուքյան քարտուղարության ձեռնարկների ժանրը.

Ընդունված է Մամլուքյան դարաշրջանի արքունի գրագրության ձեռնարկների ժանրի անդրանիկ երկը համարել Շիհաբ ալ-Դին Մահմուդ ալ-Հալաբիի (մահ. 1325 թ.) *Husn al-tawassul fi sinā at al-tarassul-ը* («Նամակագրության

և Ջ. Վանսբրոուի կատարած աշխատանքները: Տե՛ս վերևում՝ «Ներածություն», ծնթգր. 53: Ռիցցոյի հետազոտությունը՝ արդեն որպես գիրք, այժմ հրատարակության է հանձնված Բրիլ հրատարակչատանը: Տե՛ս **Al. Rizzo**, *Florence et le sultanat mamelouk: les documents de la diplomatie (début XVe - début XVIe siècle)* (Leiden: Brill, 2023):

Ուրում կատարված աշխատանքների ամբողջացումն ու ամփոփումն էր Ֆր. Բոդենի և Մ. Դեկկիչեի խմբագրությամբ 2019 թ. լույս տեսած հոդվածների մեծածավալ (ավելի քան 900 էջանոց) ժողովածուն: Տե՛ս **Mamluk Cairo, a Crossroads for Embassies: Studies on Diplomacy and Diplomatics**, ed. by F. Bauden & M. Dekkiche (Leiden-Boston: Brill, 2019) (*հետախու՝ Mamluk Cairo*): Այն սկսվում է խմբագիրների պատրաստած և մամլուքյան վավերագրության հետազոտության պատմությանը նվիրված երկու շատ արժեքավոր ակնարկներով, որոնց հետևում են ոլորտի մասնագետների՝ կահիրյան դիվանատան և այլ պետական միավորների պաշտոնական գրագրության արարողակարգին և դիվանագիտական շփումներին նվիրված 26 հոդված: Մամլուքյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի միապետների պաշտոնական գրագրության արարողակարգի հարցին այս ժողովածուի հեղինակներից և ոչ մեկը չի անդրադարձել:

¹¹ Օրինակ, մամլուք սուլթան ալ-Աշրաֆ Խալիլը 1291 թ. Աքրայի գրավումից հետո սպանալից նամակ է գրել հայոց արքային՝ տեղեկացնելով քաղաքի առման մասին և ահաբեկելով հայոց թագավորությունն Աքրայի բախտին արժանացնել՝ որպես Մամլուքյան սուլթանության սահմանակից մնացած վերջին քրիստոնյա պետության: Մամլուքյան պատմիչներից ԺԴ դարի Անանուն հեղինակը («Ջետտերշտայնի ժամանակագրություն») և Իբն ալ-Դավադարին (մահ. 1335 թ. հետո) պահպանել են Հեթում Բ-ին (կառ. 1289–1307 թթ. ընդհատումներով) նրա գրած նամակը: Տե՛ս **K.V. Zettersteen**, *Beiträge zur Geschichte der Mamlukensultane in den Jahren 690–741 der Hagra nach arabischen Handschriften* (Leiden: E.J. Brill, 1919), §. 8 (*հետախու՝ պայմանակալորեն կանվանենք al-Mu'allif al-mağhūl, այն է՝ «Անանուն հեղինակ»*): **Ibn al-Dawādārī**, *Kanz al-durar wa-ğāmi' al-ğurar*, §. 8 (*Al-Durra al-zakiyya fi ahbār al-dawla al-turkiyya*), bi-tahqiq Ūlriḥ Hārman (al-Qāhira, 1971), §. 230–321: Այս մասին ներքևում ավելի մանրամասն կխոսենք:

արվեստին լավագույնս տիրապետելու մասին»)¹² երկը: Նրա կյանքի և գործունեության որոշ դրվագների մասին տեղեկանում ենք ժամանակի կենսագրական բառարաններից: Շիհաբ ալ-Դինը ծնվել է հիշրայի 644 թ. (1246 թ.) Հալեպում (այստեղից էլ՝ մականունը)՝ դատավորի ընտանիքում: Ստացել է փայլուն ավանդական կրթություն՝ կրոնագիտության, լեզվի ու գրականության բնագավառում՝ աշակերտելով ասորիքցի նշանավոր ուսուցչապետերի: Ժամանակակիցների շրջանում հայտնի է դարձել իր գեղագրության (գեղեցիկ, համաչափ ձեռագրի՝ արաբ. al-ḥatt al-mansūb) և բանաստեղծական ձիրքի համար: Սկզբում զբաղվում էր ձեռագիր մատյանների գաղափարմամբ՝ դրանով հոգավոր իր ապրուստը: Այսպես մեծ համբավ ձեռք բերելով՝ հրավիրվել է Դամասկոսի դիվանատանը գրագիր աշխատելու: Այնուհետև, մասնագիտական առաջընթացը շարունակել է Կահիրեում: Կահիրյան սուլթանական նոտարատան դիվանապետ Ֆաթհ ալ-Դին իբն Աբդ ալ-Ջահիրի (1292 թ.) և նրա հայր՝ հուշակավոր Մուհի ալ-Դինի մահից հետո (1293 թ.) նա գրավել է ալ-Աշրաֆ Խալիլ սուլթանի վեզիր Շամս ալ-Դին Մուհամմադ ալ-Թանուխիի կամ, ինչպես որ ավելի շատ հայտնի էր, Իբն Սալուսի ուշագրությունը, ով նրան առաջարկել է տեղափոխվել Կահիրե: Շիհաբ ալ-Դինը համաձայնել է և իր կյանքի հետագա ավելի քան 20 տարիներն ապրել է Սուլթանության մայրաքաղաքում՝ գրագիր աշխատելով պետության գլխավոր դիվանատանը: Իր մասնագիտական գործունեության բարձրակետին ալ-Հալաբին հասել է հիշրայի 717 թ. (1317 / 1318 թ.), երբ Դամասկոսի դիվանապետ Շարաֆ ալ-Դին Իբն Ֆադլ Ալլահի մահից հետո կրկին տեղափոխվել է Ասորիք և նշանակվել վերջինիս պաշտոնում՝ որպես «գլխավոր քարտուղար» (kātib al-sirr): Այս պաշտոնը նա զբաղեցրել է մոտ 8 տարի՝ մինչև իր մահը (հիշրայի 725 թ.՝ 1325 թ.)¹³:

¹² Երկը մի քանի անգամ է հրատարակվել: Այն երկու անգամ լույս է տեսել դեռ ժԹ դարի վերջերին: *Տե՛ս Šihāb al-Dīn Maḥmūd al-Ḥalabī*, Ḥusn al-tawassul ilā šināʿat al-tarassul (al-Qāhira, al-Maḥbaʿa al-Wahabiyya, 1881) և *նույնի՛* Ḥusn al-tawassul (al-Qāhira, Maḥbaʿat Amīn Afandī, 1897/1898): Աշխատության քննական հրատարակությունը լույս է տեսել միայն 1980 թ: *Տե՛ս նույնի՛* Ḥusn al-tawassul, bi-taḥqīq Akram ʿUṭmān Yūsuf (Baġdād, Dār al-Rashīd, 1980): Հետագա շարադրանքում կօգտագործենք հենց այս վերջին հրատարակությունը:

¹³ Շիհաբ ալ-Դին կյանքի ու գործունեության մասին մահախոսական հոգվածներ են պահպանվել մամլուքյան կենսագրական բառարաններում և ժամանակագրություններում: *Տե՛ս Ibn al-Ṣuqāʿī*, *Tālī kitāb wafāyāt al-aʿyān / Ibn al-Ṣuqāʿī*, édition et traduction par Jacqueline Sublet (Damascus, 1974), §. 195; *al-Dahabī*, *Duwal al-Islām*, §. 2, bi-taḥqīq Ḥasan Ismāʿīl Marwa (Bayrūt, Dār Ṣādir, 1999), §. 267; *նույնի՛* *Al-Duyūl al-ibar fi ḥabar man ḡabara*, §. 4, bi-taḥqīq Abū Hāḡīr Muḥammad al-Saʿīd b. Basyūnī Zaġlūl (Bayrūt, Dār al-kutub al-ilmīyya, 1985), §. 73-74; *Ibn Kaṭīr*, *Al-Bidāya wa-l-nihāya*, §. 18 (Bayrūt, Dār al-Kutub al-Ilmiyya, 2004), §. 259-260; *al-Kutubī*, *Fawāt al-Wafayāt wa-l-dayl ʿalayhā*, §. 4, bi-taḥqīq Iḥṣān ʿAbbās (Bayrūt, Dār Ṣādir, 1974), §. 82-96: *Ալ-Հալաբիի մասին տես նաև A.F., Broadbridge*, “Diplomatic conventions in the Mamluk Sultanate”, *AnIsl*, t. 41 (2007), p. 99:

Ինչ վերաբերում է Husn al-tawassul երկին, ապա հարկ է նշել, որ նրանում շեշտն ավելի շատ դրված է գրագրի հոետորական ձիրքի վրա, այլ ոչ թե գործնական ունակությունների: Այնուամենայնիվ, աշխատության վերջնամասում ընդգրկված են մի քանի փաստաթղթեր կամ գուցե դրանց սևագրություններ, ինչպես օրինակ Հայոց արքային ուղղված մի այսպես կոչված «հնազանդության հորդոր» և մի «նշանակման կարգադրություն» (taqlīd li-mutamallik Sīs), որոնց կանգրագառնանք ներքևում:

Մամուլքյան մատենագրության մեջ քարտուղարության ձեռնարկների ժանրը զարգացման որակական նոր աստիճանի է հասել Շիրահ ալ-Դին Ահմադ Իբն Ֆադլ Ալլահ ալ-Ումարիի շնորհիվ (մահ. 1349 թ.): Վերջինս ծնվել է Դամասկոսում՝ տեղի դպրատան գլխավոր քարտուղար (kātib al-sirr) Յահյա Իբն Ֆադլ Ալլահի ընտանիքում: 1329 թ., երբ Յահյան կանչվել է Եգիպտոս և նշանակվել Կահիրեի սուլթանական դիվանատան գլխավոր գրագիր, Շիրահ ալ-Դինն ուղեկցել է հորը՝ նշանակվելով գլխավոր գրագրի տեղակալի պաշտոնում: Հոր՝ ծեր և հիվանդ լինելու պատճառով Շիրահ ալ-Դինը փաստացիորեն ինքն է ղեկավարել դիվանատան աշխատանքը՝ մեծ դիրք և հարգանք ձեռք բերելով արքունիքում: Մի անախորժ միջադեպ, սակայն, խաթարել է նրա մասնագիտական գործունեության առաջընթացը: Նա վիճել է սուլթան ալ-Մալիք ալ-Նասիրի (կառ. 1293-1294, 1299-1309, 1310-1340 թթ.) հետ և հեռացվելով պաշտոնից, գրկվել է սեփականությունից և բանտարկվել: 1337 թ. Յահյա Իբն Ֆադլ Ալլահի մահից հետո նրա զբաղեցրած պաշտոնում նշանակվել է նրա մյուս որդին՝ Ալա ալ-Դին Ալին: Ազատ արձակվելուց հետո Շիրահ ալ-Դինը շուրջ երկու տարի գլխավոր գրագրի պաշտոն է զբաղեցրել Դամասկոսում՝ հետզհետե վերականգնելով երբեմնի հեղինակությունը: Կյանքի վերջին տարիները նվիրել է իր երկու հիմնարար աշխատությունները գրելուն¹⁴: Ալ-Ումարիի առաջին երկը Masālik al-absār fi mamālik al-amṣār («Երկրների թագավորությունները ճանաչելու ուղիներ») մեծահատոր հանրագիտարանային աշխատությունն է¹⁵: Այն ունի նաև պատմությանը նվիրված գլուխ, որ ընդգրկում է հիջրայից մինչև 1342/1343 թվականի իրադարձությունները: Այն գերազանցապես հիմնված է նախորդ սերնդի և ժամանակակից այլ պատմիչների պատմական երկերի վրա:

¹⁴ K.S. Salibi, “Ibn Faḍl Allāh al-‘Umārī,” in: *EI2*, vol. 3 (H-IRAM) (Leiden: E.J. Brill, 1986), p. 758; И.Ю. Крачковский, *Избранные сочинения*, т. 4 (Арабская географическая литература) (Москва-Ленинград, изд. АН СССР, 1957), с. 405–411.

¹⁵ Al-‘Umārī, *Masālik al-absār fi mamālik al-amṣār*, 27 ց., bi-taḥqīq Kāmil Salmān al-Ġubūrī (Bayrūt, Dār al-kutub al-‘ilmiyya, 2010).

Ալ-Ումարիի մյուս երկը՝ *Al-Taʿrīf bi-l-muṣṭalah al-ṣarīf* («Ծանոթացում բարձր տերմինաբանության (ոճի) հետ»)՝¹⁶ արքունական գրագրության ու քարտուղարության բացառիկ կարևորության ձեռնարկ է՝ իր տեսակի մեջ առաջիններից մեկը մամլուքյան մատենագրության մեջ: Նրանում հեղինակը ներկայացնում է Սուլթանության վարչական կառուցվածքի և կառավարման առանձնահատկությունները, բացատրում է արքունի գրագրության բնույթը, տալիս է Սուլթանության տեղական կառավարիչների, ցեղապետների, զանազան կրոնաէթնիկական խմբերի ղեկավարների, հարակից երկրների տիրակալների (այդ թվում՝ հայոց արքաների) հետ պաշտոնական նամակագրության բանաձև-կաղապարների օրինակներ: *Kitāb al-Taʿrīf*-ը գրվել է 1343–1345 թվականների միջակայքում¹⁷: Ալ-Ումարիի անունով մեզ են հասել նաև երկու փոքրածավալ երկեր՝ *ʿUrf al-taʿrīf և Al-Nubḍa al-kāfiya fi maʿrifat awḍāʾ al-kitāba* վերնագրերով¹⁸, որոնք հրատարակել են Ռ. Վեսելին, Սամիր ալ-Դուրուբին և Ալի Մուհամմադ Զինուն¹⁹:

Մամլուքյան դիվանատան ձեռնարկների ժանրի երևելի հեղինակներից է Թակի ալ-Դին Աբդ ալ-Ռահման [ի]բն Մուհամմադ ալ-Թայմին՝ ավելի հայտնի Իբն Նազիր ալ-Ջայշ (մահ. 1384 թ.) անունով: Մատենագրի անունը հուշում է, որ նրա հայրը զբաղեցրել է մամլուքյան «բանակի ֆինանսական վերատեսուչի» (*nāzir al-ḡayṣ*) բարձր պաշտոնը: Իսկ հենց ինքը՝ հեղինակը, 1347–1377

¹⁶ Երկը հրատարակվել է մի քանի անգամ: Տե՛ս **al-ʿUmārī**, *Kitāb al-Taʿrīf bi-l-muṣṭalah al-ṣarīf* (al-Qāhira, Maṭbaʿat al-ʿĀshima, 1894), *ինչպես նաև երկի՝ Սամիր ալ-Դուրուբիի քննական հրատարակությունը: Տե՛ս Samir Mahmūd al-Durūbī, “A Critical Edition of and Study on Ibn Faḍl Allāh’s Manual of Secretaryship “Al-Taʿrīf bi’l-Muṣṭalah al-Sharīf” (Karak: Mu’tah University, 1992): Սուլյն աշխատանքը գրելիս ձեռքի տակ ունեցել և օգտագործել ենք Հուսեյն Շամս ալ-Դինի 1988 թ. հրատարակությունը, որը մի անգամ արդեն հղել ենք վերևում (ծնթգր. 1):*

¹⁷ Ալ-Ումարիի երկի «հայկական նյութի» վրա առաջինն ուշադրություն է դարձրել Վիկտոր Լանգլուան իր “Le trésor des chartes d’Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupénides” (Venise, 1863) աշխատության մեջ: 1285 թ. Հայ-մամլուքյան դաշնագրի տեքստից բացի՝ նա իր գրքի հավելվածում ներառել է նաև ալ-Ումարիի երկի՝ «Ստի իշխողին» վերաբերող շարադրանքից մի հատվածի՝ միայն նամակագրության բանաձևի և այսպես կոչված «ըղձական աղերսների» թարգմանությունը: Լանգլուան չի տալիս ոչ երկի վերնագիրը և ոչ էլ նրա հեղինակի անունը: Միայն նշված է, որ հատվածը քաղվածք է անհատական հավաքածուի մի արաբերեն ձեռագրից (extrait d’un msc. Arabe, appartenant à M. Scheffer, à Paris): *Լանգլուայի ձեռքի տակ եղած գրչագիրն այժմ գտնվում է Ֆրանսիայի ազգային գրադարանի* (Bibliothèque nationale de France-BnF) *արաբերեն ձեռագրաֆոնդում* (MS. Arabe 5872): Տե՛ս **H. Derenbourg**, *Les manuscrits arabes de la collection Schefer a la Bibliothèque Nationale* (Paris: Imprimerie Nationale, 1901), p. 66:

¹⁸ **F. Bauden**, “Mamluk Diplomats: the Present State of Research,” in: *Mamluk Cairo*, p. 29.

¹⁹ **R. Vesely**, “Zwei Opera Cancellaria Minora des Šihābuddīn Aḥmad b. Faḍlullāh al-ʿUmārī”, *AO*, vol. 70 (2002), p. 513–557; **al-ʿUmārī**, *ʿUrf al-taʿrīf fi al-mukākabat, awwal dastūr fi al-alqāb al-tašrīfiyya fi luḡat al-ʿarab, bi-tahqīq Samīr al-Durūbī* (ʿAmmān, 2008); **al-ʿUmārī**, *Al-Nubḍa al-kāfiya fi maʿrifat awḍāʾ al-kitāba, bi-tahqīq ʿAlī Muḥammad Zīnū* (ʿAmmān, 2017).

թթ. աշխատել է Կահիրեի սուլթանական դիվանատանը: Հոր մահից հետո (1377 թ.) թողել է դիվանատան աշխատանքն ու ստանձնել վերջինիս պաշտոնը: 1384 թ. սուլթան Բարկուկի կողմից մեղադրվել է պաշտոնեական դիրքը վերազանցելու մեջ և դաժան ծեծի ենթարկվել, ինչի հետևանքով մի քանի օր անց մահացել է²⁰: Նա լրամշակում է գրել ալ-Ումարիի գրագրության ձեռնարկի համար՝ *Tatqīf al-Taʿrīf bi-l-muṣṭalah al-šarīf* վերնագրով, որը հրատարակել է Ռ. Վեսելին: Երկը գրվել 1376–1379 թթ. միջակայքում²¹: Այս աշխատությունը Կիլիկիայի հայոց արքաների հետ նամակագրության վերաբերյալ որոշ հավելյալ նյութ է պարունակում, որ բացակայում է ալ-Ումարիի մոտ:

Քարտուղարության ձեռնարկների ժանրի ամենավառ հեղինակությունը Շիհաբ ալ-Դին Աբու ալ-Աբբաս Ահմադ իբն Աբդ Ալլահ ալ-Կալկաշանդին (մահ. 1418 թ.) է: Մնվել և ապրել է Եգիպտոսում, որտեղ և ստացել է դասական կրոնական կրթություն՝ վաղ երիտասարդության տարիներին իրեն նվիրելով շաֆիական կրոնաիրավագիտություն (fiqh), ինչպես նաև հադիսագիտություն ուսումնասիրելուն և դասավանդելուն: Սուլթան Բարկուկի օրոք՝ 1389 թ., նա արքունի դիվանատան կրտսեր գրագրի (kātib al-dast) պաշտոն է ստացել, ինչը և կանխորոշել է նրա հետագա գործունեության ուղղությունը՝ ընդհուպ մինչև մահը: Հատկանշական է, որ այդ ժամանակ սուլթանական դիվանատան գլխավոր քարտուղարը (kātib al-sirr) հայտնի իբն Ֆադլ Ալլահ ալ-Ումարիի զարմիկն էր՝ Բադր ալ-Դին իբն Ֆադլ Ալլահը²²: Ալ-Կալկաշանդին հեղինակ է բազմաթիվ աշխատությունների՝ կրոնաիրավագիտության և *adab*-ի բնագավառներում²³, բայց նրա «գլուխգործոցը» Կահիրեի դիվանատանը նրա երկարամյա աշխատանքի արգասիքը դարձած գրագրության և քարտուղարության հանրագիտարանային ձեռնարկն է՝ *Ṣubḥ al-aʿšā fi šināʾat al-inšāʾ* («Կուլյրի լուսաբացը գրագրության արվեստում») վերնագրով²⁴: Հենվելով մասնավորապես

²⁰ Տե՛ս **Ibn Nāzīr al-Ġayš**, *Tatqīf al-Taʿrīf bi-l-muṣṭalah al-šarīf*, bi-tahqīq Rūdulf Fasalī (al-Qāhira, al-Maʿhad al-ʿilmī al-Faransī li-l-aṭār al-šarqīyya, 1987), p. X (Introduction), ինչպես նաև **A. Broadbridge**, “Diplomatic conventions”, pp. 102–104; **F. Bauden**, “Mamluk Diplomacy”, p. 30:

²¹ **Ibn Nāzīr al-Ġayš**, *Tatqīf*, xiv–xv (Introduction).

²² Ալ-Կալկաշանդիի կյանքի և գործունեության մասին տե՛ս Ք. Բուվորթի հոդվածը «Բուլամի հանրագիտարանում»: Տե՛ս **C.E. Bosworth**, “Al-Kalkashandī,” in: *EI2*, vol. 4 (IRAN-KHA) (Leiden: E.J. Brill, 1997), pp. 509–511, ինչպես նաև **И.Ю. Крачковский**, *Избранные сочинения*, т. 4, с. 411–412 և **Muḥammad Kamāl al-Dīn ʿIzz al-Dīn**, *Abū al-ʿAbbās al-Qalqashandī muʿarriḥan* (Bayrūt, ʿĀlam al-kutub, 1990), §. 24–26:

²³ Մատենագրի մյուս երկերի մասին տե՛ս **Անդ**, §. 29–30 և **C.E. Bosworth**, “Al-Kalkashandī”, pp. 509–511:

²⁴ **Al-Qalqashandī**, *Ṣubḥ al-aʿšā fi šināʾat al-inšāʾ*, 14 ց. (al-Qāhira, al-Maṭbaʿa al-amīriyya 1913–1920): *Ṣubḥ al-aʿšā-ի ներքին կառուցվածքի նկարագրությունը տե՛ս M. van Berkel, “The Attitude Towards Knowledge in Mamluk Egypt: Organisation and Structure of the Subḥ al-Aʿshā by al-Qalqashandī (1355–1418)”, in: *Pre-Modern Encyclopaedic Texts. Proceedings of the Second COMERS Congress*, Groningen,*

ալ-Ումարիի և Իբն Նազիր ալ-Ջալջի վերևում հիշված երկերի վրա՝ ալ-Կալկա-
 շանդին գրել է մամլուքյան պաշտոնական գրագրության ամենամեծ ու հա-
 մապարփակ աշխատությունը: Նրանում հեղինակը ժողովել է արքունի գրա-
 գրին անհրաժեշտ բոլոր գիտելիքները՝ սկսած գրագրության մեջ օգտագործ-
 վող թղթի, թանաքի և գեղագրության տեսակներից, տերմինաբանությունից,
 Մամլուքյան սուլթանության վարչական կառուցվածքի, կառավարման հա-
 մակարգի աստիճանակարգության և հարակից երկրների մասին աշխարհա-
 գրական տեղեկություններից մինչև պաշտոնական փաստաթղթերի, հարևան
 երկրների տիրակալներին ուղարկվող պաշտոնական նամակների, նրանց
 բանաձև-կաղապարների, միջազգային պայմանագրերի բազմաթիվ նմուշ-
 ներ: Ալ-Կալկաշանդին իր երկը հարստացրել է Կահիրեի դիվանատան վավե-
 րագրական արխիվներից քաղված բազմաթիվ արժեքավոր փաստաթղթերով,
 որ օգնում են բացահայտելու մամլուքյան պաշտոնական դիվանագիտության
 բազմաթիվ թաքնված նրբերանգներ²⁵: Այնուամենայնիվ, Կիրիկիո հայոց ար-
 քաների հետ նամակագրությանը վերաբերող հատվածում ալ-Կալկաշանդին
 միայն հղում է կատարում ալ-Ումարիի և Իբն Նազիր ալ-Ջալջին՝ գրեթե ոչինչ
 չհավելելով, քանզի նրա գործունեության օրոք հայոց թագավորությունն ար-
 դեն կործանված էր: Մեզ է հասել նաև Տսի al-ašā-ի համառոտագրությունը՝
 Daw' al-šubh al-musfir wa-ğanā al-dawh al-muṭmir վերնագրով²⁶:

Ալ-Կալկաշանդին, իր այս երկի՝ խալիֆաների հետ գրագրությանը վերա-
 բերող հատվածները համառոտելով և տեղ-տեղ լրացումներ կատարելով, վե-
 րաշարադրել է որպես առանձին աշխատություն՝ Ma'āṭir al-ināfa fī ma'ālim al-
 hilāfa վերնագրով²⁷:

Հիշյալ չորս հեղինակների երկերով մամլուքյան արքունական քարտու-
 ղարության ժանրի գրականությունը չի սահմանափակվում: Առավել կարևոր-
 ներից հիշատակության է արժանի Շամս ալ-Դին ալ-Հալաբիի (մահ. 1377 թ.,
 հետո) Al-Tibyān fī iṣṭilāh ahl al-zaman («Ժամանակի [երևելի] մարդկանց հետ
 գրագրության բացատրություն») երկը, որը մինչ օրս անտիպ է: Ալ-Հալաբին

1–4- July 1996, ed. by Peter Binkley (Brill's Studies in Intellectual History, vol. 79) (Leiden-New York:
 E.J. Brill, 1997), pp. 159–168:

²⁵ Стéу И.Ю. Крачковский, *Избранные сочинения*, т. 4, с. 412; D. Little, “Historiography of the Ayyūbid and Mamlūk epochs,” in: *The Cambridge History of Egypt. Vol. 1: Islamic Egypt 640–1517*, ed. by C.F. Petry (Cambridge: Cambridge University Press 1998), p. 444; A. Broadbridge, “Diplomatic conventions”, pp. 105–107 և *հատկապես 'Izz al-Dīn*, Abū al-'Abbās al-Qalqašandī, ք. 31–49:

²⁶ Al-Qalqašandī, Daw' al-šubh al-musfir wa-ğanā al-dawh al-muṭmir (al-Qāhira, Maṭba'at al-Wā'iz, 1906).

²⁷ *Նույնի՝ Ma'āṭir al-ināfa fī ma'ālim al-hilāfa*, 3 ց., bi-tahqīq 'Abd al-Sattār Aḥmad Farrāğ (Bayrūt, 'Ālam al-kutub, 1980).

Իբն Նագիրը ալ-Ջալջի ժամանակակիցն էր: Նրա մասին կենսագրական տվյալներ չկան: Երկի՝ Բեռլինի ազգային գրադարանի արաբական հավաքածուի MS. 8641 միակ պահպանված գրչագրի տիտղոսաթերթին եղած գրառումը սոսկ վկայում է, որ հեղինակը եղել է մամլուքյան «արքունական դիվանատան գրագիրներից մեկը» (ahad al-muwaqqi'īn bi-l-dast al-šarīf)²⁸: Ալ-Հալաբին իր ձեռնարկը սկսում է մամլուքյան սուլթանի²⁹ մինչև «հիշրայի 778 թվականի վերջերը» (1377 թ. սկզբներ) կրած տիտղոսների թվարկմամբ: Այս թվականը հավանաբար պետք է համարել նաև մամլուքյան դիվանատանը հեղինակի ծառայության ավարտի տարեթիվը³⁰: Հեղինակը, ինչպես երևում է, չնայած իբն Նագիրը ալ-Ջալջի ժամանակակիցը լինելուն՝ ծանոթ չէ վերջինիս երկին և չի հիշատակում նրա անունը: Սրան հակառակ՝ ցայտուն է ալ-Ումարիի Al-Ta'rif երկի ազդեցությունը նրա Al-Tibyān երկի վրա, ում անունը նա հաճախ հիշատակում է: Կարելի է եզրակացնել, որ նրա ձեռնարկի գրության ժամանակ դեռ պատրաստ չէր իբն Նագիրը ալ-Ջալջի Kitāb Taṭqīf al-Ta'rif-ը:

Աշխարհի տարբեր գրադարաններում պահվող այս ժանրի այլ երկեր էլ կան: Օրինակ՝ Ֆրանսիայի ազգային գրադարանի արաբալեզու ձեռագրաֆոնդի թիվ 4440 անանուն ձեռագիրը մամլուքյան պաշտոնական գրագրության ժողովածու է: Նրա սկզբնամասում ներկայացված են inšā'-ի նախորդ սերնդի հեղինակների երկերից քաղված վավերագրեր, հատվածներ իբն Հիշրայի Qahwat al-inšā' աշխատությունից: Երկի վերջին մասում արձանագրված են սուլթան ալ-Աշրաֆ Կայսրայի (1468–1496 թթ.) և նախորդ մի քանի սուլթանների և հարակից երկրների կառավարողների պաշտոնական գրագրության ավելի քան 6 տասնյակ վավերագրեր³¹:

Ի տարբերություն ալ-Հալաբիի երկի՝ այժմ արդեն հրատարակված է Շամս ալ-Դին Մուհամմադ ալ-Սահմավիի (մահ. 1464 թ.) գրչին պատկանող Al-Ṭagr al-bāsim fī sinā'at al-kātib wa-l-kātim աշխատությունը («Ժպտուն բերան գրագրի և քարտուղարի արվեստում», երկար ժամանակ սխալմամբ ոմն «ալ-Խալիդիին» վերագրված): Նրանում փոքր հատված կա նվիրված նաև «Հայոց

²⁸ Տե՛ս **Šams al-Dīn al-Ḥalabī**, Al-Tibyān fī ištīlāh ahl al-zaman, Staatsbibliothek zu Berlin, MS. 8641: Աշխատության թվաչնացված տարբերակը մեզ է փոխանցել Բեռլինի գրադարանի աշխատակից Մելինե Փեհլիվանյանը, ինչի համար հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

²⁹ Խոսքը 1363–1377 թվականներին Մամլուքյան սուլթանության գահը զբաղեցրած ալ-Աշրաֆ Շա'բանի մասին է:

³⁰ **Al-Ḥalabī**, Al-Tibyān (MS. 8641), էջ 1բ:

³¹ Հիշյալ ձեռագրում ներառված վավերագրերն իր թեկնածուական ատենախոսության մեջ և հոդվածներում մանրամասն ուսումնասիրել է Մ. Դեկկիչեն: Տե՛ս **M. Dekkiche**, “The Letter and Its Response: The Exchanges between the Qara Qoyunlu and the Mamluk Sultan: ms Arabe 4440 (BnF, Paris)”, *Arabica*, vol. 63, issue 6 (2016), pp. 579–626:

թագավորությանը» (mamlakat al-arman), բայց այն գրեթե ամբողջովին հիմնված է ալ-Ումարիի և Իբն Նագիր ալ-Ջալի երկերի վրա և որևէ հավելյալ տեղեկություն չի պարունակում³²: Թեև սույն հետազոտության համար ոչ այնքան կարևոր, բայց մամլուքյան դարաշրջանի ծնունդ են ու գոնե հիշատակության արժանի նաև ալ-Կալկաշանդիի որդի Նաջմ ալ-Դին ալ-Կալկաշանդիին վերագրվող (մահ. 1476 թ.) Qalā'id al-ǧumān fī muṣṭalah mukātabat ahl al-zamān և Իբն Հիջլայի Qahwat al-inšā' երկերը, որոնցից առաջինը դեռ անտիպ է, երկրորդը՝ արդեն խմբագրված և հրատարակված³³:

Այժմ անցում կատարենք հետազոտության հիմնական մասին՝ սկսելով Շիհաբ ալ-Դին ալ-Հալաբիի Ḥusn al-tawaṣṣul երկից և նրանում պահպանված երկու բացառիկ վավերագրերից:

Ա. Յ. Երկու անհայտ վավերագիր.

Մամլուքյան սուլթանի անունից հղվող նամակների տեսակների մեջ ալ-Կալկաշանդին առանձնացնում է մեկը՝ «հնազանդության անհրաժեշտության դրդման և անհամաձայնության պախարակման վերաբերյալ»: Որպես, այս տեսակին պատկանող գրագրության օրինակ նա ներկայացնում է Շիհաբ ալ-Դին ալ-Հալաբիի կողմից գրված մի նամակ՝ հասցեագրված «Սուր կառավարող»-ին (mutamallik Sīs)³⁴: Սույն նամակը պահպանվել է նաև հենց ալ-Հալաբիի Ḥusn al-tawaṣṣul երկում³⁵: Իր Nihāyat al-arab fī funūn al-adab («Գրագրության համար խիստ ցանկալի գիտությունների մասին») հսկայածավալ հանրագիտարանային աշխատության՝ գրագրությանը վերաբերող հատորում Հայոց արքային ուղղված այս նամակի տեքստն արձանագրել է նաև Շիհաբ ալ-Դին ալ-Նուվայրին (մահ. 1332 թ.)³⁶:

³² *Sels Sams al-Dīn Muḥammad ibn Ḥasan al-Sahmāwī, Al-Taǧr al-bāsim fī sinā at al-kātib wa-l-kātim*, ǧ. 2, bi-tahqīq Ašraf Muḥammad Anas (al-Qāhira, 2009), ǧ. 814: *Sels նաև W. Ahlwardt, Verzeichniss der Arabischen Handschriften*, T. VII (Berlin, 1895), S. 577:

³³ Qalā'id al-ǧumān-ը Բրիտանական թանգարանի OR.3625 ձեռագիրն է: Վերջերս այս երկի արժանիքներն ու կարևորության ասպեկտները գնահատելու հիմնավոր փորձ է կատարել Ֆրեդերիկ Բոդենը: *Sels F. Bauden*, "Like father, like son. The chancery manual (Qalā'id al-ǧumān) of al-Qalqašandī's son and its value for the study of mamluk diplomatics (ninth/fifteenth century)", *ES*, vol. XI (2013), pp. 181–228: Իսկ երկրորդի մասին տես *F. Bauden*, "Mamluk diplomatics", p. 37, հրատարակությունը՝ *Ibn Hiǧǧa al-Ḥamawī, Kitāb Qahwat al-inšā'*, bi-tahqīq Rūdulf Faysaylī (Bayrūt, 2005): Երկու անանուն հեղինակների և եմենցի Մուսա իբն ալ-Հասան ալ-Մաուսիլիի գրչին պատկանող երեք այլ ձեռնարկների մասին տես *F. Bauden*, "Mamluk diplomatics", p. 35:

³⁴ *Al-Qalqašandī, Ṣubḥ al-a'šā*, ǧ. 9, ǧ. 256–259.

³⁵ *Al-Ḥalabī, Ḥusn al-tawaṣṣul*, ǧ. 340–343.

³⁶ *Al-Nuwayrī, Nihāyat al-arab fī funūn al-adab*, ǧ. 7 (Bayrūt, Dār al-Kutub al-'ilmiyya, 2004), ǧ. 161–163.

Շիհաբ ալ-Դինն իր գրած նամակն օժտել է հետևյալ մեկնաբանությամբ. «Եվ եթե նամակի հասցեատերը մեղավոր է թշնամուն օժանդակելու համար, նրան հարկավոր է գրել լուտանքներով, ծաղրուծանակով, սպառնալիքներով լի շարագրանքով: Օրինակ, Սսի կառավարողին, ով թշնամու հետ ականատես էր եղել ընդհարմանը, այդպիսի մի նամակ էր գրվել, որ պարունակում էր հիշոցներ, ծանակ ու սպառնալիք»³⁷:

Մինչ նամակի բուն բովանդակությանն անցնելը, հարկ ենք համարում նշել, որ ի տարբերություն գեղարվեստական և ճարտասանական արժանիքների՝ այն պատմական առումով որևէ արժեք չի ներկայացնում, քանի որ չի պարունակում որևէ իրադարձության կամ դեպքի մասին կոնկրետ փաստ կամ տեղեկություն, որ հնարավորություն կտային հստակեցնել նրա գրության պատմական համատեքստն ու հանգամանքները: Գրությունը միջնադարյան արաբական արձակի իսկական նմուշ է՝ օժտված լեզվական և ոճաբանական արտահայտչամիջոցների առինքնող գունապնակով: Տեքստը շատ հարուստ է գեղարվեստական պատկերավորության այլազան միջոցներով՝ այլաբերություններով և այլաբանություններով, փոխաբերություններով և համեմատություններով: Մակդիրների, հոմանիշների և հականիշների առատությունը, շրջադասությունների կիրառումը՝ հաճախ զուգորդվելով հանգավորման հետ, շատ դեպքերում բավական խրթին իմաստային նրբերագներ են հաղորդում տեքստին: Հետևաբար զերծ կմնանք նամակն ամբողջությամբ թարգմանելուց՝ սահմանափակվելով առավել կարևոր հատվածներով: Նամակի հիմնական ասելիքը նախատինքն է հայոց արքայի նկատմամբ մոնղոլամետ դիրքորոշման և նրանց ցուցաբերած աջակցության համար: Մոնղոլներին արքունական գրագիրը համեմատում է նեոի հետ՝ նրա հետ զորակցությունը համարելով պարզապես գայթակղություն: Ստորև հիմք կընդունենք *Husn al-tawassul*-ի 1980 թ. բաղդադյան հրատարակությունը՝ դիտարկելով այն ալ-Կալկաշանդիի և ալ-Նուվայրիի պահպանած տեքստերին զուգահեռ: Վավերագրի նախաբանում մասնավորապես ասվում է. «Թո՛ղ Ալլահը խրատի նրան (նկատի է առնված հայոց թագավորը – Գ.Դ.) իր ողջամտությամբ, թո՛ղ ցույց տա նրան իր [տված] երդման զանցառման և թերակատարման մեղսանքները, իր հոգու խաղաղությամբ սփոփի նրա կորուստը՝ իսլամական սուլեթների սարսափից: [Այս նամակը] հղվել է՝ իրազեկելու նրան, որ հաստատվել է կանխագուշակումը թշնամու (նկատի են առնված մոնղոլները – Գ.Դ.) վերաբերյալ, ով մոլորեցրել է նրան իր գայթակղությամբ և կառչեցնելով խաբեությունը՝ հե-

³⁷ Al-Ḥalabī, *Husn al-tawassul*, s. 340–343.

ուացրել ճշմարտությունից: Նրանք օժանդակություն էին հայցել բոլոր ժողովուրդներից և շարժվել դեպի իսլամական երկրներ՝ կրքոտ հոգիներով, բայց վախեցած սրտերով: Եվ սա այն բանից հետո, երբ որոշ ժամանակ էին ծախսել խաբեությամբ հաշտություն ձեռք բերելու և հարաբերություններում հաստատված խաղաղությամբ ուրախանալու վրա: Արտաքուստ մի բան էին անում, բայց ներքուստ լրիվ ուրիշը, կրոնին թշնամի բոլոր ազգերին [խոստումներ էին տալիս և նրանց հույս ներշնչում: Սակայն սատանան նրանց ոչինչ չի խոստանում գայթակղությունից բացի]³⁸: Բայց մենք տեղյակ էինք նրանց խորամանկությունը և զբաղվում էինք նրանց հարցով: Սակայն, երբ նրանց ցանկությունն ակնհայտ դարձավ, և ավարտվեց նրանց զորաշարժը, մենք մղեցինք նրանց իրենց իսկ մարտադաշտերը և քարշ տվեցինք, որպեսզի սպանվելու ժամանակ մոտ լինեն իրենց անկողիներին, իսկ փախուստի ժամանակ հեռու իրենց դիրքերից: Մենք նրանց հարվածեցինք Ալլահի ուժով, որպիսին որ նրանք երբեք չէին ստացել, և գրոհեցինք նրանց մի այնպիսի գրոհով, որի փոթորիկը հարկադրեց նրանց ապաստան գտնել այդ լեռան վրա: Սակայն, ի՞նչ լեռ կարող է պաշտպանել Ալլահի ձեռքից: Այդ լայնարձակ տարածության մեջ օղակեցինք նրանց և ճնշեցինք, ինչպես որ տեսնվել է և ջախջախեցինք նրանց, ինչպես որ լավել է: Նրանց դրեցինք [մեր] սրի իշխանության տակ, որ հազեցրեց իր պապակը նրանց արյունով, մինչև որ հազեցավ և նրանց մտով կերակրվեց, մինչև որ կշտացավ: Մեր հաղթական բանակները հետապնդեցին ՝ իրենց նիզակներով հասնելով նրանց և բռնելով իրենց կողերով, իրենց սարսափով անապատներում ցիրուցան արեցին նրանց՝ անդու զարկով և հարվածով նրանց ցաք ու ցրիվ անելով տափաստաններում: Իսկ ով նրանցից խուսափել էր սրերից, մեռան ծարավից և սովից, և ողջերին թվում էր, թե իր երկիրը³⁹ մի աշխարհ է, որտեղ մեռյալը վերադարձ չունի...:

... Եվ թո՛ղ հասնի ներման աղերսանքի դռանը, մինչ այն կփակվի իր առջև, թո՛ղ պաշտպանի իրեն և իր ժողովրդին, նախքան իսլամական սրերը չեն խաթարել նրանց պաշտպանությունը: Թո՛ղ փուլթա [ընդունել] հպատակությունը, քանի դեռ այն շռայլվում է իրեն, այլ ոչ թե ստիպվում ընդունել, թո՛ղ մեղքերի համար ներում հայցի, քանի դեռ [նման հնարավորություն] դրվում է նրա առաջ և ոչ թե խլվում: Եվ թո՛ղ արագացնի հարկազումարների վճարումը, քանի դեռ իր ժողովրդից և որդիներից չի վճարել մեզ որպես հարկ, թո՛ղ հանձնի ամենի բանալիները, որ իր ձեռքին է՝ բացի մեր նվաճումներից,

³⁸ Մեջբերում է Ղուրանից. *Al-Qurān*, 4/120 (Sūrat al-Nisā).

³⁹ Բնագրում և ալ-Կալիլաշանդիի մոտ՝ *al-dunyā*, իսկ ալ-Նուվայրիի մոտ՝ *al-mawḍiʿ* (իմս՝ «դիրք», «գտնվելու վայր»): Տե՛ս *al-Ḥalabī*, Ḥusn al-tawassul, ք. 340-343 և *հմմտ. al-Qalqašandī*, Ṣubḥ al-aʿšā, ց. 9, ք. 256-259; *al-Nuwayrī*, Nihāyat al-arab, ց. 7, ք. 161:

հակառակ դեպքում չի էլ իմանա, թե [ինչպես] դրանք կամ թե ինչ-որ ուշացրել է, արդեն մեր ձեռքին է հայտնվել, և նա պատճառ կդառնա իր երկրի բզկտմանը, ժողովրդի ցրմանը, տան հիմնահատակ ավերումին, եկեղեցիների քանդմանը, իր հողու և իր համար թանկագինի սրբապղծմանը, իր ծառաների առաջ իր կանանց և որդիների ստրկացմանը, բերդերի քակմանը, տների և ունեցվածքի հրկիզմանը, շտապողականությունը՝ տեսնել այն, ինչն սպառնում է իրեն, նախքան այդ մասին լսելը: Նա ով Ղազանի հետ է, թո՛ղ պատասխան տա սրան, կամ էլ մեր թրերի անվտանգությունն անբեր նրան կթողնվեն նրա ձեռքում եղած շրջանների մի մասը, և թո՛ղ բավարարվի ձիերի և անասունների այն մասով, որ մեր ուժգին բանակները նրա ձեռքին են թողել և ապրի անվտանգություն մեջ այն մասով, որ նրան թույլ կտանք, նույնն է, թե շուրջուն՝ մեկաչքանու համար⁴⁰:

[Մեր] թրերն այժմ նրա պատասխանն են լսելու. կզսպվեն, եթե բարեպաշտության ճամփան տեսնեն, կամ էլ փոխարենը կգոհանան նրա պաշտպանների և կտրիճների գլուխները կտրելով, եթե շարունակի արատավորությունը: Ու թո՛ղ բարին լինի»⁴¹:

Այսպիսով, բովանդակային առումով հիշյալ վավերագիրը կարծես թե պատմական բնույթի հատակ տեղեկություններ չի պարունակում, որ հնարավորություն կտային ճշտելու նրա ստեղծման հանգամանքները: Սկզբի համար կարելի է ենթադրել միայն, որ սուլթանի անունից հիշյալ նամակը գրվել է ալ-Հալաբիի՝ կահիրյան դիվանատանն աշխատած ժամանակաշրջանում (1293–1317 թթ.): Ղազան խանի անվան հիշատակումից էլ մակաբերելի է, որ փաստաթուղթը թվագրելի է 1295–1304 թվականների միջակայքով: Սրա հետ մեկտեղ, լեռան կամ բլրի վրա մոնղոլներին շրջափակման մեջ գցելու և նրանց սրի ու փախուստի, գերեվարության մատնելու մասին նամակում նկարագրված դրվագը շատ նման է թվում 1303 թվականի ապրիլի 20-22-ին տեղի ունեցած Մարջ ալ-Սաֆֆարի (ալ-Սուֆֆարի) կամ Շակհաբի ճակատամարտի ընթացքին⁴²: Այս մարտը, որին Կուտուբ-շահ գորապետի գլխավորած մոնղոլական բանակի շարքերում մասնակցություն են ունեցել նաև Կիլիկիո հայոց արքա Հեթում Բ-ի գորամիավորումները, դժբախտ վերջաբան ունեցավ Իլխանության համար և ըստ էության դարձավ Ասորիքի տարածք ներխուժելու մոնղոլների վերջին լուրջ փորձը: Ճակատամարտը լայն արձագանք է գտել

⁴⁰ Նկատի ունի՝ շուրջունն ավելի լավ է, քան միաչքանի լինելը, այսինքն ավելի գերադասելի է համաձայնել սուլթանի ներկայացրած պահանջներին և բավարարվել տվածով, քան թե գրկվել ամեն ինչից:

⁴¹ Al-Halabi, Husn al-tawassul, s. 343.

⁴² R. Irwin, *The Middle East in the Middle Ages: The Early Mamluk sultanate 1250–1382* (Carbondale and Edwardsville: Southern Illinois University Press, 1986), p. 101.

մամլուքյան պատմագրության մեջ: Մարջ ալ-Սուֆֆարի ճակատամարտին նվիրված առանձին երկ կա անգամ՝ Մուհի ալ-Դին իբն Աբդ ալ-Ջահիրի թոռ՝ Ալա ալ-Դին իբն Աբդ ալ-Ջահիրի (մահ. 1317 թ.) փոքրածավալ Al-Rawḍ al-zāhir fī ḡazwat al-Malik al-Nāṣir-ը⁴³: Այստեղ, սակայն, մարտի և նրան հայերի բերած մասնակցության մասին վկայող բոլոր աղբյուրների հաղորդումները չենք քննարկի՝ թողնելով մի առանձին ուսումնասիրության⁴⁴: Ուշագրություն հրավիրենք ընդամենը մի քանի վկայության վրա: Այսպես, մամլուքյան պատմիչներից Բայբարս ալ-Մանսուրին գրում է, թե մոնղոլական զորքը շուրջ 100 հազարանոց էր՝ բաղկացած «մոնղոլներից, վրացիներից, հայերից և այլն»⁴⁵: Բաղր ալ-Դին ալ-Այնին իր 'Iqd al-ḡumān երկում պահպանել է ալ-Յուսուֆիի (մահ. 1358 թ.) երկից կորած քաղվածքը ճակատամարտի մասին: Մի մեջբերում կատարենք. «Բեդվիները նույնպես նրանց կողոպուտի ենթարկեցին և սպանեցին անհամբեր ջանակությանը, իսկ մի մեծ խումբ էլ մահացավ անպատենքում ծարավից, ինչպես նաև նրանց հեծկան անասունները (նկատի ունի՝ ձիերը, ուղտերը և այլն – Գ.Գ.): Նրանց մեջ կային նրանք, ովքեր ապաստան էին գտել Դամասկոսի պարտեզներում, և մարդիկ իրենց պարտեզն էին գնում և այնտեղ երկուսին-երեքին գտնելով՝ սպանում էին: Եվ նրանցից ոչ մեկը չէր կարողանում դիմադրել՝ վախից, սովից և հոգնածությունից [հյուծված լինելով]: Երբ այս մասին իմացան էմիրները, հայտարարեցին Դամասկոսում. «Եթե ինչ-որ մեկը գտնի հայի կամ մոնղոլի և չբերի նրան Ասորիքի փոխարքայի մոտ, ապա թուլատրելի է նրան սպանելը: Բայց այնպես էր պատահում, որ ինչ-որ մեկը բռնում էր նրանցից մի հոգու կամ ավելի և բերում

⁴³ 'Alā' al-Dīn 'Alī ibn 'Abd Allāh ibn Abd al-Zāhir, Al-Rawḍ al-zāhir fī ḡazwat al-Malik al-Nāṣir wa-bi-ḡaylihi al-Manāqib al-Muzaffariyya, bi-taḥqīq 'Umar 'Abd al-Salām Tadmurī (Ṣaydā-Bayrūt, al-Maktaba al-'Aṣriyya, 2005): *Հստ հրատարակչի՝ սա երկի միակ պահպանված ձեռագիրն է: Մինչդեռ մեզ հայտնի է, որ այս երկի մի գրչագիր էլ կա Սանկտ Պետերբուրգի Արևելյան ձեռագրերի ինստիտուտի արաբալեզու ձեռագրաֆոնդում՝ B. 623 (532)/9643 համարի ներքո: Նկարագրությունը տե՛ս Ա.И. Михайлова, Каталог арабских рукописей Института народов Азии и Африки, Выпуск 3 (Москва, изд. «Наука», 1965), с. 59–60:*

⁴⁴ Մասնագիտական գրականության մեջ մարտի մասին պատմիչների հաղորդումների քննարկումներ եղել են: Տե՛ս С. D'Ohsson, *Histoire des Mongols, depuis Tchinguiz-Khan jusqu'à Timour Bey, ou Tamerlan*, t. 4 (Amsterdam: Les frères Van Cleef, 1835), p. 330–336: Ա. Սայուարսը Հեթում Բ-ին նվիրված իր գրքում հպանցիկ է անդրադարձել ճակատամարտին: Տե՛ս A.D. Stewart, *The Armenian Kingdom and the Mamluks: War and Diplomacy during the Reigns of He'tum II (1289–1307)* (Leiden: Brill, 2001), p. 149:

⁴⁵ Baybars al-Manṣūrī, *Zubdat al-fikra fī tāriḥ al-hiḡra*, bi-taḥqīq Dunāld Rītšārdz (D.S. Richards) (Berlin-Bayrūt, 1998), §. 376.

նրան փոխարքայի մոտ, որպեսզի նա ինքը կամ սպանի նրան կամ փրկություն կշնորհի»⁴⁶ :

Այսպիսով, կարծում ենք, որ վերոբերյալ «նշանակման կարգադրության» մեջ ակնարկված բախումը Մարջ ալ-Սուֆֆարի ճակատամարտն է, և որ վավերագիրը սուլթան ալ-Մալիք ալ-Նասիրի անունից ուղարկվել է հայոց արքա Հեթում Բ-ին անմիջապես ճակատամարտից հետո՝ այսինքն 1303 թ.։ Դժվար է ասել՝ հայոց արքան ինչ պատասխան է հղել սուլթանին կամ պատասխանել է արդյոք, այնուամենայնիվ, հետագա իրադարձությունների տրամաբանությունից հետևում է, որ ալ-Մալիք ալ-Նասիրը վճռական է եղել՝ պատժելու հայերին մոնղոլներին ցուցաբերած օժանդակության համար։ Պատահական չէ, որ 1304–1305 թթ. ընթացքում նա երկու ավարառուական արշավանք է կազմակերպում Կիլիկյան Հայաստանի դեմ⁴⁷ :

Այժմ անցնենք հայոց արքայի համար գրված տաղիճ-ին⁴⁸ : Նախ պարզաբանենք, թե ինչ է տաղիճ-ը և ում էր տրվում⁴⁹ : Ալ-Ումարիի և Իբն Նազիր ալ-Ջալջի ձեռնարկներից տեղեկանում ենք, որ տաղիճ-ը սուլթանի անունից տրված հրովարտակ էր, հրաման կամ կարգադրություն, որով բարձրագույն պաշտոնի (al-maqarr al-karīm) էր նշանակում։ Խոսքը մասնավորապես Ասորիքի և Եգիպտոսի փոխարքաների, վեզիրների, բեդվիհների գերագույն էմիրների և Ալ Ֆադլի ցեղապետերի նշանակման կարգադրությունների մասին է⁵⁰ : Ալ-Կալկաշանդին, լրացնելով և ամփոփելով ալ-Ումարիի և Իբն Նազիր ալ-Ջալջի գրածը, մանրամասնում է, թե առանձին սուլթանական փոխարքաներին (Դամասկոսի, Հալեպի, Տրիպոլիի, Համայի և այլն) ինչպես և ինչպիսի կադապարով էր անհրաժեշտ գրել։ Այնուհետև շարունակում է, որ տաղիճ կոչվող կարգադրությամբ էին նշանակվում նաև վեզիրները, սուլթանի անձնական քար-

⁴⁶ Al-ʿAynī, ʿIqd al-ğumān fi tāriḥi ahl al-zamān, ց. 4, bi-taḥqīq Muḥammad Muḥammad Amīn (al-Qāhira, al-Hayʾa al-miṣriyya al-ʾāma li-l-kitāb, 1992), ց. 245.

⁴⁷ Այս երկու արշավանքներին մենք հանգամանորեն՝ հայալեզու և արաբալեզու բոլոր սկզբնաղբյուրների վկայությունների ընդգրկմամբ արդեն անդրադարձել ենք։ Տե՛ս Գ. Դանիելյան, Ալ-Մակրիզիի Kitāb al-sulūk երկը Կիլիկյան Հայաստանի 1250–1310 թթ. պատմության սկզբնաղբյուր (աղբյուրագիտական քննություն), թեկնածուականատենախոսություն (Երևան, 2013), էջ 176–186 (անտիպ)։ Այս արշավանքների մասին տե՛ս A. Stewart, *The Armenian Kingdom*, pp. 159–170:

⁴⁸ Al-Ḥalabī, Ḥusn al-tawaṣṣul, ց. 369–373, ինչպես նաև al-Qalqaṣandī, Ṣubḥ al-aʾšā, ց. 12, ց. 265–269.

⁴⁹ W. Bjorkman, “Diplomatic,” in: *EJ2*, vol. II (C-G) (Leiden: E.J. Brill, 1991), p. 303.

⁵⁰ Al-ʿUmārī, *Al-Taʾrīf*, ց. 122–123.

տուղարները կամ դիվանապետները (kātib al-sirr), մագհաբների (կրոնաիրավագիտական դպրոցների) գերագույն դատավորները (qāḍī al-quḍāt)⁵¹, ինչպես նաև Մեքքայի և Մեդինայի էմիրները⁵²:

Հետևաբար ինչու՞ պետք է Նգիպտոսի սուլթանը «նշանակման կարգադրություն» գրեր հայոց արքայի համար: Իբն Ֆադլ Ալլահ ալ-Ումարին իր Masālik al-amṣār երկում գրում է, որ նշանակման կարգադրություն տրամադրվում էր նաև այն դեպքերում, երբ այդ մասին հայց էր ներկայացվում: Նա մասնավորապես խոսում է Ռումի իլխանական կառավարիչ Սուլամիշին տրված taqlīd-ի մասին: Այս մոնղոլ հրամանատարը 1298–1299 թթ. թուրքմեն կարամանների օգնությամբ ապստամբել էր իլխանական իշխանությունների դեմ՝ օժանդակ ուժեր և «իշխանության տվչություն» հայցելով մամլուքներից: Կահիրեում Սուլամիշի խնդրանքը չեն մերժում, և տրամադրում են ինչպես զինական, այնպես էլ քաղաքական աջակցություն՝ պաշտոնապես ճանաչելով Սուլամիշի իշխանությունը Իկոնիայում⁵³: Ըմբոստությունը խեղդելու համար Ղազան իլխանը պատժիչ զորք է ուղարկում Ռում՝ Կուտուհ-շահի հրամանատարությամբ: Հակառակորդների միջև վճռական ճակատամարտն ավարտվում է Սուլամիշի պարտություն: Վերջինս փախչում է Ասորիք, այնտեղից էլ Կահիրե, որտեղ լավ ընդունելության է արժանանում մամլուքյան արքունիքում: Սակայն նա շուտով ստիպված է լինում վերադառնալ Ռում՝ իր ընտանիքին գտնելու համար: Կիլիկիայի տարածքով անցնելիս բռնվում է հայերի կողմից և փոխանցվում իլխանական իշխանություններին: Ղազան խանը հրամայում է հրապարակավ մահապատժի ենթարկել, ապա այրել ապստամբ էմիրին⁵⁴: Հատկանշական է, որ Սուլամիշի համար իր ձեռքով գրված taqlīd-ի տեքստն

⁵¹ Կադիների նշանակման վերաբերյալ տե՛ս Y. Rapoport, “Legal Diversity in the Age of Taqlid: the Four Chief Qadis Under the Mamluks”, *ILS*, vol. 10, issue 2 (2003), pp. 210–228:

⁵² Al-Qalqaṣandī, *Ṣubḥ*, ց. 11, ց. 101–107.

⁵³ Սուլամիշը հայտնի Բաշու-նոյինի թոռն էր: Նրա ապստամբության և դրա անհաջող ելքի մասին տե՛ս Cl. Cahen, *La Turquie pré-ottomane (Varia Turcica VII)* (Istanbul: Institut Français d’Études Anatoliennes, 1988), p. 293–294; J.A. Boyle, “Dynastic and political history of the Īl-Khāns,” in: *The Cambridge history of Iran, vol. 5 (The Saljuq and Mongol Periods)* (Cambridge: Cambridge University Press, 1968), pp. 386–387; Ch. Melville, “Anatolia under the Mongols,” in: *The Cambridge History of Turkey, vol. 1 (Byzantium to Turkey 1071–1453)*, ed. by K. Fleet (Cambridge: Cambridge University Press, 2009), pp. 84–85; A. Stewart, *The Armenian kingdom*, pp. 129–131:

⁵⁴ Այս մասին մանրամասն պատմում է Ռաշիդ ալ-Դինը, թեև Սուլամիշի ձերբակալման գործում հայոց արքայի ունեցած դերի մասին չի հիշատակում: Տե՛ս Рашид-ад-Дин, *Сборник летописей*, том III, пер. А.К. Арендса, под ред. А.А. Ромаскевича (Москва-Ленинград, изд. Академии Наук СССР, 1946), с. 180–182: Հմմտ. ՄԺ XIII–XVIII դդ., կազմեց Վ.Ա. Հակոբյան (*Նետախու՛ ՄԺ*), հտ. II (Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1956), էջ 151 (Անանուն Սեբաստացու տարեգրությունը): Տե՛ս նաև Aqsarayyī, *Musāmarat al-ahbār wa-musāyarat al-ahyār / Mūsāmeret ül-ahbār: Moğollar zamanında Türkiye Selçukluları tarihi*, mukaddime ve haşiyelerle tashih ve neşreden Osman Turan (Ankara: Türk Tarih Kurumu Basimevi, 1944), ց. 270–271; al-Nuwayrī, *Nihāyat al-arab*, ց. 31, 236–237:

ալ-Հալաբին նույնպես պահպանել է հայոց արքային տրված «նշանակման կարգադրության» հետ մեկտեղ՝ նույն Husn al-tawaşşul աշխատության մեջ⁵⁵: Վերևում «հնազանդության հորդորի» համար ներկայացված գեղարվեստական նույնպիսի հատկանիշներով է օժտված նաև այս վավերագիրը: Ստորև թարգմանաբար ներկայացնենք նրա բովանդակային առումով կարևոր հատվածները.

«Փա՛ռք Ալլահին, ով մեր բարգավաճ օրերը նշանավորեց ժողովուրդների արքաների ստեղծմամբ և գերադասեց դրական պատասխան տալու [հենց] մեր կահիրյան պետությանը [բոլոր] նրանցից, ովքեր իրենց համար ինչոր բաներ էին հայցում՝ սրերով ու նետերով հասանելի, [փա՛ռք Ալլահին], ով մեր թագավորության բնութագրիչը դարձրեց [այլ] թագավորություններին ազատություն շնորհելը և իշխանության տվչությունը և պարգևատրեց [բոլոր] այն ստրուկների հոգիներով, որոնց հաղթանակը մերը դարձրեց: Գայթակղեց մեր զգացմունքները՝ բավարարելու այն բոլոր հուսաբեկվածների ակնկալիքը, ովքեր ձգտում են ունեցել՝ վաստակելու մեր պարգևները, մեր բարօրության շնորհներով անվտանգության հանդերձներ հեղեց բոլոր նրանց վրա, ովքեր, վախից դրդված, հպատակություն հայցեցին, և բոլոր նրանց, որոնց ենթակաների հոգիները կառչած են եղել մեր հանդեպ հավատարմությանը, ազատեց օրհասի բռունցքից...»:

Եվ հետո, երբ Ալլահը մեզ պարգևեց հողագնդի իշխանությունը և մեր կարգախոսը դարձրեց բոլոր շրջապատող երկրների թագավորություններին օգնելը, մեզ կարողություն տվեց երկրի վրա և հանուն իրեն «սրբազան պատերազմի» հանեց՝ օրենքներին և պատվիրաններին համապատասխան: Նա ամեն օրը մեր բանակների համար դարձրեց Դատաստանի օրվա պես նշանակալի, նվաճումների նախագուշակները մեզ իրենց հովանու տակ առան, Նոյի կոչն⁵⁶ առան մեր սրերը՝ ընդդեմ նրանց, ովքեր անհավատություն են ցուցաբերել Ալլահի և [նրա] բարերարության նկատմամբ, նա օգնեց մեզ հրեշտակներով և հոգով՝ [պայքարելու] ընդդեմ նրանց, ովքեր փառավոր Մեկին երեք են դարձրել, սատարեց հորով, որդով և հոգով և երկրների արքաները սկսեցին խաղաղություն խնդրել, և իրենց երկրների ամենաթանկ բաները և ստացվածքները տալ՝ [դրդված] մեր ներողությունից լեռան բարձր ստվերում ապաստան գտնելու ցանկությամբ: Եվ նրանք, ովքեր [մի ժամանակ] կոպ-

⁵⁵ Al-ʿUmārī, Masālik al-absār, ǧ. 3, ʃ. 234–235.

⁵⁶ Հավանաբար նկատի է առնված Ղուրանի «Նոյի սուրայի» (Sūrat Nūh) հետևյալ հատվածը. «Wa qāla Nūh Rabbi, la taḍar ʿalā al-ard min al-kāfirīn dayyāran» («Եվ ասաց Նոյը՝ Տեր մի թող երկրի վրա ոչ մի անհավատ բնակիչ»): Sūʿu al-Qurān, 71/26:

տուժյուն էին ցուցաբերում, սկսեցին հպատակություն և հնազանդություն ուղորմել, բոլոր նրանք, ովքեր ուժ էին ցուցադրում, հասան ազնվության, որն իրենց համար համարեցին ամենաուժեղ ասպարը և ամենապաշտպանիչ զրահը: Բարձրյալ Ալլահը մեզ պարտավորություն տվեց, որ չվանենք հույս ունեցողներին և հետ չմղենք մեր մեծահոգության առուններում բնակվողներին, հուսախաբ չանենք մեր բարերարությունը խնդրողներին և չհեռացնենք մեր բարեգործության հովանու ներքո ապաստանածներին՝ իմանալով, որ դա շնորհակալություն է այն կարողության համար, որն Ալլահը մեզ է տվել այդ հուսացողների համար...:

Նախորդած ոմն թագավորի⁵⁷ իշխանության օրոք սատանան սովորություն ուներ նրա գործերը զարդարելու՝ գայթակղության պարաններով հանգուցելով նրա ակնկալիքները: Նա շատագուվեց թաթարներին, որոնք մեզնից ունեցած վախից փակված էին իրենց տներում, խճճված իրենց փախուստի ցանցերում, անկարող՝ պահպանելու իրենց ունեցածը, տկար՝ պահելու այն, ինչ որ [մեր] հաղթական փաղանգները խլել էին նրանցից, և չկա նրանցից մեկը, որի նկատմամբ մեր սրերը վրեժ չունենան և որի պարանոցին [հարվածի] հետքեր չունենան, մեկը, որ չգիտի, որ պետք է ընտրություն կատարել ստորացման երկու ճանապարհների միջև՝ կամ սպանվել կամ գերվել:

Երբ հիշյալ [արքան] երկար ժամանակ տրվեց մոլորությանը, գայթակղություն ունեցավ հեծնելու իր բռնապետի (իմա՝ մոնղոլների) նժույզը, մենք կարգադրեցինք մեր [հաղթական] բանակներին, և նրանք այդ թագավորությունները ծայրեիծայր անցան, նրանց ձիերի սմբակները ոտնակոխ արեցին այնտեղ եղածը՝ հավասարապես սպանելով և գերելով ինչպես անազատների, այնպես էլ ազատների, ինչպես ստրուկների, այնպես էլ իշխողների: Նրանց լեռների գագաթները հասցրեցին սարահարթերին՝ նրանց պաշտպաններին դարձրին, ինչպես նրանց տափաստանների բույսերը՝ մի մասին դեռ կանգուն, մի մասին հնձված: Իսկ սատանան, որ հնազանդեցրել էր նրանց, անցավ-զնաց, լքեց նրանց և փախավ, խաբեց, բայց չհարձակվեց և հայտնեց, որ [դա նրանց Դատաստանի ժամն է, և այդ ժամն ամենադժինն է և ամենադառը]⁵⁸, դրժեց այն օգնությունը, որ երաշխավորել էր նրանց համար՝ ասելով նրանց. [«Արդ, ես կապ չունեմ ձեզ հետ, և ես տեսնում եմ այն, ինչը դուք չեք տեսնում»]⁵⁹:

⁵⁷ Բնագրում՝ lammā kāna man taqaddama bi-l-mamlaka al-fulāniyya: Շիհաբ ալ-Դինը հայոց արքայի անունը բաց է թողել՝ փոխարինելով «ոմն» բառով: Պատճառն այն է, որ նա խնդրո առարկա վավերագիրն իր երկում բերում է որպես taqlīd-ի նմուշօրինակ, և ոչ թե պարզապես որպես բնօրինակ փաստաթղթի կրկնօրինակ:

⁵⁸ Al-Qurān, 54/46.

⁵⁹ Al-Qurān, 8/48.

Այդ ոմն արքան, որ փրկության ուղիներ էր մտմտում, այլ ճանապարհ չտեսավ, քան հպատակությունը, մտորում էր հաջողության պատճառների մասին, և ազնվությունից բացի ոչինչ չգտավ իրեն ուղեցույց, և հասկացավ, որ իր ողջամիտ դիրքորոշումը ծառայությունն է (իմա՝ ծառայելը), գիտակցեց, որ իր հաջողության հիմքն իր ճիգն է: Նրա առաջ քաշվեց այն հարցը, թե ինչպես պիտի խիզախի իր ոտքն ամրապնդել մի իշխանության մեջ, որից սպառնալիք էր իր նախորդի ոտքը, գթասրտությունը նրա ենթականերին իցույց դրեց այն մարդկանց վախճանը, որը հետևանքն էր նրա եղբոր մահաբեր և սխալ կառավարման, մեր բարեգործությանն ապավինելը նրան բացատրեց, թե այդ ինչպես պատահեց, որ իր ձեռքում մնաց այն, ինչը [նախկինում] մեր զայրույթը նրա եղբոր ձեռքում չէր թողել՝ բացառությամբ, թերևս, ցավի և վշտի...:

Արդ, թո՛ղ ընդունի այս բարերարությունը՝ Ալլահին շնորհակալություն հայտնելով, ով իրեն հնազանդության ուղիով առաջնորդեց, անկեղծ հավատարմությամբ պահպանեց կորստից իր հոգին և ինչ որ թանկ է իր երկրի համար, թո՛ղ համատեղի դա համակրության պարզեցնելի հետ, հավելի դրան հնազանդության հանդերձներ կրելը, որ կամրապնդվի միայն հավատարմությամբ, կշարունակի ընկերական խորհուրդ տալ՝ թե՛ ծածուկ և թե՛ հրապարակավ, հեռու կմնա խարդախությունից՝ թե՛ բացահայտ և թե՛ գաղտնի, հավատարիմ կմնա նրան, ինչն իրեն դաշինքով է վերապահված, հեռու կմնա նրանից, ինչը որ սպառնում է պախարակման դեմքին նայելով, թո՛ղ երկարատև լինի բարերարությունը նրա պայմանների պահպանմամբ, թո՛ղ հետևի այս բարեհաճության հանգամանքներին՝ մերժելով պղտոր շարժառիթները և խուսափի դրանցից՝ այն անկեղծ մտադրությամբ, որը համարվում է բարենպաստ գոյավիճակի միակ գրավականը»⁶⁰:

Այսպիսով, վերոբերյալ «նշանակման կարգադրության» առանցքային միտքն այն է, որ մամլուքյան սուլթանները Ալլահից տրված լիազորություն և առաքելություն ունեն կամ իշխելու և կամ հովանավորելու մնացյալ բոլոր պետություններին, նրանց ներողամտության կամ վախճանի արժանացնելու: Վավերագրում կենտրոնական է հպատակության, մոնղոլների (սատանայի) հետ դաշնակցությունից հրաժարվելու, «կահիրյան իշխանությունների» գերակայությունն ու գերագահությունն ընդունելու կոչը, որին շանսալու դեպքում դաժան հաշվեհարդարի սպառնալիք է հնչեցվում:

Ինչպես ասացինք, փաստաթուղթն ինքն իրենով պատմագրական արժեքավոր տվյալներ չի բովանդակում, բայց պատմական բնույթի ոչ պակաս

⁶⁰ Al-Ḥalabī, Ḥusn al-tawaṣṣul, ք. 373.

կարևոր եզրակացությունների կարող է հանգեցնել այն հարցի պարզաբանումը, թե ե՞րբ, ինչու՞ և ի՞նչ պայմաններում կարող էր գրվել այս վավերագիրը: Մամլուքյան սկզբնաղբյուրներում հիշյալ «նշանակման կարգադրության» տրամադրման պատմական հանգամանքների բացահայտմանն ուղղված մեր պրատունները տանում են մեզ 1307 թվական: Այդ թվականին (նոյեմբերի 17) տեղի է ունեցել շատ ցավալի մի իրադարձություն, ինչպիսին էր մոնղոլ զորապետ Բիլարդուլի կողմից «ավագ պարոն» կամ թագավորահայր Հեթումի (- Հեթում Բ, կառ. 1289–1307 թթ.՝ ընդմիջումներով), հայոց մանկահասակ արքա Լևոն Գ-ի (1301–1307 թթ.). ինչպես նաև մի խումբ այլ հայ ազնվականների սպանությունը: Այս դեպքը մեծ արձագանք է գտել ժամանակի հայկական, լատին, պարսկական (իլխանական) և արաբական (մամլուքյան) պատմագրության մեջ: Հարցը բավական լավ արծարծված է նաև հայ և օտարալեզու պատմագրության մեջ, և վերհանված են այդ պատմական անցքի մասին հաղորդող կարևորագույն պատմական սկզբնաղբյուրների վկայությունները: Հայ և օտար հետազոտողներից իրենց հայտնի աղբյուրների լույսի տակ իրադարձությանն առավել հանգամանորեն անդրադարձել են Աբրահամ Մ. ԴՕսսոնը, Հենրի Հովորթը, Մաղաբիա Օրմանյանը, Հակոբ Նալբանդյանը⁶¹, Գրիգոր Միքայելյանը⁶², Կլոդ Մուլթաֆյանը⁶³, Անգուստոլարտը⁶⁴, Լևոն Տեր-Պետրոսյանը⁶⁵ և Դ. Բայարսայխանը⁶⁶: Բայց մի աղբյուր կա, որ ցայժմ դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից: Խոսքը դեպքի մասին ալ-Յուսուֆի պատմիչի պատումի մասին է: Նրա վկայությունը, սակայն, մեզ միջնորդավորված է հասել, քանզի նրա երկը՝ *Nuzhat al-nāẓir fī sīrat al-Malik al-Nāṣir* («Ականատեսի զբոսանքն ալ-Մալիք ալ-Նասիրի կյանքի ընթացքով»), որը, ինչպես վերնագրից է երևում, ալ-Մալիք ալ-Նասիրի կենսագրությունն է, մեզ մասամբ է հասել: Երկից պահպանվել է 1332–1338 թթ. ընդգրկող մի հատված

⁶¹ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին (Յակուտ ալ-Համավի, Աբու-Յիդա, Իբն Շադդադ), կազմեց **Հ.Թ. Նալբանդյան** (Երևան, ՀՍՄԻ ԳԱ հրատ., 1965), էջ 282–284:

⁶² **Г.Г. Микаелян**, *История Куликуйского Армянского государства* (Ереван, Изд. АН АССР, 1952), с. 436–437.

⁶³ **Cl. Mutafian**, *Le royaume arménien de Cilicie: XIIe–XIVe siècle* (Paris: CNRS Editions, 1993), p. 466–467, ինչպես նաև **նույնի՝ L'Arménie du Levant (XIe–XIVe siècle)** (Paris: Les Belles Lettres, 2012), p. 194.

⁶⁴ **Լ. Տեր-Պետրոսյան**, *Խաչակիրները և հայերը, հտ. Բ, Պատմա-քաղաքագիտական հետազոտություն (Հայկական մատենաշար Գալուստ Կիլիկյենկեան հիմնարկութեան)* (Երևան, 2007), էջ 368–383:

⁶⁵ **A. Stewart**, *The Armenian kingdom*, pp. 171–180 և **նույնի՝** «The Assassination of King Het‘um II: The Conversion of the Ilkhans and the Armenians», *JRAS*, vol. 15, № 1 (2005), pp. 45–61.

⁶⁶ **D. Bayarsaikhan**, *The Mongols and the Armenians (1220–1335)* (Leiden-Boston: Brill, 2011), pp. 205–206.

միայն⁶⁷: Ալ-Յուսուֆիի ժամանակագրությունը լայնորեն օգտագործվել է ինչպես ժամանակակից (օրինակ՝ ալ-Շուշաի), այնպես էլ հաջորդ սերնդի պատմիչների՝ մասնավորապես ալ-Այնիի կողմից, ով բազմաթիվ մեջբերումներ է կատարել նրանից: Լևոնի և Հեթումի սպանության մասին ալ-Յուսուֆիի հաղորդումը ևս մեզ հասանելի է ալ-Այնիի շնորհիվ: Այնուհանդերձ, հատկանշական է, որ ալ-Յուսուֆիի պատումում հայոց արքայի սպանության միջադեպը ոչ միայն դրված է հիշրայի 708 թ. (1308 թ. հունիսի 21–1309 հունիսի 10) ներքո, այլև պարունակում է մյուս մամլուքյան աղբյուրներում չհանդիպող և անգամ խիստ հակասող մանրամասներ: Տարօրինակ անուններով են ներկայացված նաև գործող անձինք: Օրինակ, հայոց արքային դավադրորեն սպանած մոնղոլ զորապետն անվանված է Կազան-Ջուկ (Qāzān-Ǧūq), իսկ Բուրղալին (Burgālī, այսպես է բնագրում – Գ.Դ.) սոսկ նրան ուղեկցող մոնղոլ էմիրներից մեկն է, հայոց արքայի եղբայրներից մեկն անվանված է Qiryāqus (Գիրակոս), մյուսը՝ Haryund (՝), նրանց մորաքրոջ որդուն՝ Ğirǧis (Գևորգ), հիշվում է հայոց արքունիքի Իսա (Īsā) անունով ինչ-որ սենեկապետ (mihmandār) և այլն: Ալ-Յուսուֆիի պատումի մանրամասներին մենք անդրադարձել ենք առանձին հետազոտությամբ⁶⁸, ուստի այստեղ կսահմանափակվենք ներկա ուսումնասիրության համար կարևոր մի վկայության արձանագրմամբ, որով ալ-Յուսուֆին ավարտում է իր պատումը.

«Նա (հայոց արքան) պատրաստել տվեց Սսի հարկը, կանչեց Ալա ալ-Դին Այդուղդին և հարկը նրան հանձնեց: Նույնն ուղարկեց նաև Կարա Սունկուրին: Ուղարկեց նաև իր մի խումբ զինակիցների՝ Իսա միհմանդարի ուղեկցությամբ՝ սուլթան ալ-Մալիք ալ-Նասիրից իր երկրում նրա անունից նշանակման կարգադրություն խնդրելով... Հետո երբ Այդուղդին հասավ Հալեպ, Հարյունդի դեսպանները բերվեցին Կարա-Սունկուրի մոտ, ով լսեց նրանց խոսքը: Նա նրանց հարկերով ճանապարհեց սուլթանի մոտ: Երբ Կահիրե հասան և ներկայացան սուլթանի առաջ՝ բանակցելով նրա հետ Սսի և երկրի կառավարման համար նշանակման կարգադրություն գրելու հարցով: Նա նրանց պատվո հանդերձներ հագցրեց և հետ ուղարկեց: Երբ նրանք Հարյունդի մոտ հասան, վերջինիս մտահոգությունը փարատվեց»⁶⁹:

⁶⁷ Al-Yūsufī, Nuzhat al-nāzīr fī sīrat al-Malik al-Nāšir, bi-tahqīq Aḥmad Ḥuṭayṭ (Bayrūt, ‘Ālam al-Kutub, 1986).

⁶⁸ Գ. Դանիելյան, «Հայտնի իրադարձության անհայտ պատումը. Հեթում Բ-ի սպանության ալ-Յուսուֆիի տարբերակը» (անտիպ):

⁶⁹ Al-Aynī, ‘Iqd al-ǧumān fī tāriḥi ahl al-zamān, ǧ. 5, bi-tahqīq Muḥammad Muḥammad Amīn (al-Qāhira, Maṭba‘at Dār al-kutub wa-l-waṭā‘iq al-qawmiyya, 2009), ք. 35–36.

Գուցե հորինված են այս պատումի գործող անձանցից շատերի անուները, այնուամենայնիվ, հիշյալ մոնղոլ հրամանատարի անունը կրող «գորապետ» գտնում ենք նաև հայկական մի աղբյուրում: Սմբատ Սպարապետի երկի համառոտ տարբերակի շարունակողներից մեկը հայոց 748 թվականի՝ այսինքն Գրիգորյան 1299 թվականի տակ գրում է. «Ի սորա աւուրքն կոտրեցին զօրքն Հայոց եւ պարոն Հոռոմոց Խազանճուխն զգօրքն Մարայ ի մօտ յԱյաս. Որ էր թիւ հեծելին Մարայ շորեքտասան հազար այր»⁷⁰: Այսպիսով, եթե ալ-Յուսուֆիի հիշատակած Կազան-շուկ զորապետն իսկապես գոյություն ունեցած պատմական անձ է, ապա հնարավոր է, որ Սմբատի շարահարողի նշած նույն «Խազանճուխ»-ն է:

Փաստորեն, այն «նշանակման կարգադրություն»-ը, որի տեքստը Շիհաբ ալ-Դին ալ-Հալաբին է պահպանել, նրա կողմից գրվել է հայոց Օշին արքայի համար՝ ենթադրաբար նրա իշխանության սկզբում՝ 1308 թ.: Ընդամին, taqlid-ի վերոբերյալ տեքստում «Սսի իշխողի» ոմն եղբոր մասին ակնարկը վերաբերվում է Հեթում Բ-ին, ով ակտիվ մասնակցություն է ունեցել մամլուքների դեմ ուղղված բոլոր մոնղոլական ռազմական ձեռնարկումներին: Այս ենթադրությունը հաստատում է նաև Իբն Ֆադլ Ալլահ ալ-Ումարին իր Al-Ta'rif bi-l-mustalah al-sarif-ը («Ծանոթացում բարձր տերմինաբանության (ոճի) հետ» երկում: Նա վկայում է, որ իր ձեռքով Օշինին տրված taqlid-ի նմանությամբ՝ «նշանակման կարգադրություն» է գրվել նրա որդի Լևոն Դ (1320–1342 թթ.) մանկահասակ արքայի համար՝ առանց բովանդակությունը մեջբերելու. «Մեր սուլթանը Սսի իշխողի հորից (իմա՝ Օշինի – Գ.Դ.) մի կտակ էր ստացել, կտակ, որի վրա երգվել էր նրա թագավորության ժողովուրդը՝ որպես միջոց իր պետության գոյության համար: Ուստի և իմ ձեռքով (իմա՝ ալ-Ումարիի –Գ.Դ.) հոր փոխարեն նշանակման կարգադրություն (taqlid) գրվեց նրա որդու համար: Նրա համար հաշտության պայմանագիր պատրաստվեց, և հաշտություն կնքեց, նրան պատվո հագուստներ հագցրեցին, և հագավ, նա համբուրեց հողն ու սկսեց ծառայել»⁷¹:

Ալ-Ումարիի հիշատակած «կտակի» մասին դույզն-ինչ մանրամասն: Օշինը մահացել է 1320 թ. հունիսի 19-ին՝ մամլուքների հերթական ավարառուական արշավանքներից մեկից անմիջապես հետո: Այնուամենայնիվ, նա մահվանից առաջ ստեղծել էր խնամակալների խորհուրդ, որոնց հսկողությամբ մինչև չափահասություն հասնելը պիտի կառավարեի իր տակավին մանկահասակ որդի Լևոնը: ԺԴ դարի արաբագիր հեղինակներին՝ օրինակ Աբու ալ-

⁷⁰ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, ի լույս ընծանեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ Վարդապետ Շահնազարեանց (Փարիզ, 1859), էջ 127:

⁷¹ Al-'Umārī, Al-Ta'rif, s. 80–83.

Ֆիդային (մահ. 1331 թ.) և ալ-Նուվայրիին (մահ. 1332 թ.), հայտնի է, որ Լևոնը կառավարել է խնամակալների միջոցով⁷²: Բայց որ Օշինը մահվանից առաջ նաև կտակ է ուղարկել սուլթան ալ-Մալիք ալ-Նասիրին (կառ. 1293–1294, 1299–1308, 1309–1341 թթ.)՝ իր որդու իշխանության համար վերջինիս հավանությունը ստանալու նպատակով, վկայում է միայն ալ-Ումարին, ով, ինչպես տեսանք, պնդում է, թե հենց ինքն է գրել Լևոնի «նշանակման կարգադրությունը», որի տեքստն, ինչպես նշեցինք, ցավոք, իր երկում չի պահպանել: Հայկական աղբյուրներն այս մասին նույնպես լռում են: Հետևապես ալ-Ումարին ամենայն հավանականությամբ նկատի ունի 1329 թվականի դեպքերը, երբ Լևոնը սպանեց իր խնամակալ Օշին պայլին և նրա եղբայր Կոստանդին Գոնդատաբլին և վերջիններիս գլուխները համապատասխանաբար Եգիպտոսի մամլուքյան սուլթանին և իլխան Աբու Սայիդին ուղարկելով՝ ստանձնեց պետության միանձնյա կառավարումը⁷³: Հարկ է նշել, որ ալ-Մալիք ալ-Նասիրից իշխանության տվչություն ստանալը կրում էր ձևական, սիրաշահողական բնույթ և թելադրված էր անվտանգության որոշակի երաշխիքներ ստանալու նկատառումներով:

Ի պատասխան այս արարքի՝ մամլուքյան սուլթանն իր հերթին, ինչպես Աբու ալ-Ֆիդային է վկայում հիջրայի 729 թվականի դեպքերի շարադրանքում, «...էմիր Շիհաբ ալ-Դին Ահմադի՝ Բարձր դռան (իմա՝ սուլթանական) արքունի միհմանդարի (սենեկապետ) հետ պատիվներ, սուր, նժույգ՝ իր թամբով և սանձով ուղարկեց: Շիհաբ ալ-Դինը դրանցով ճանապարհ ընկավ Սաի պատանի տիրոջ մոտ: Սաի տերը հագավ «պատվո հանդերձը» (hūl‘ā), բարձրացրեց սուրն ու համբուրեց հողը: Նա հեծնեց իրեն ողորմված երիվարը, և նրա հոգին դրանով զորեղացավ»⁷⁴:

Աբու ալ-Ֆիդայի այս նկարագրությունը կարծես թե հարմարում է ալ-Ումարիի պատումին, ուստի նրա ակնարկած taqlīd-ը Լևոն Դ-ի համար գրվել է

⁷² Տե՛ս **al-Nuwayrī**, *Nihāyat al-arab fi funūn al-adab*, ց. 33, bi-tahqīq Ibrāhīm Šams al-Dīn (Bayrūt, Dār al-Kutub al-‘Ilmiyya, 2004), ց. 28 (Աբու ալ-Ֆիդայի վկայության հղումը տե՛ս ներքևում):

⁷³ Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք* (1859), էջ 131 (Սմբատի շարունակող); **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, *Ժամանակագրություն*, աշխատասիրություն 4. Մաթևոսյանի (Երևան, Նաիրի, 2014), էջ 275–276 (դրված է 21թ / 1330 թ. տակ); ՄԺ, հտ. I, ՀՄՄՌ ԳԱ հրատ. (Երևան, 1951), էջ 88 և *Tārīḥ Abī al-Fidā’ al-musammā al-Muḥtaṣar fi aḥbār al-bašar*, ց. 2, bi-tahqīq Maḥmūd Dayyūb (Bayrūt, Dār al-kutub al-‘ilmiyya, 1997), ց. 449, *ինչպես նաև Զ. Նալբանդյան*, *Արաբական աղբյուրները*, էջ 248:

⁷⁴ Տե՛ս **Abū al-Fidā’**, *Al-Muḥtaṣar*, ց. 2, ց. 449, *ինչպես նաև Զ. Նալբանդյան*, *Արաբական աղբյուրները*, էջ 248:

հենց 1329 թ.: Ընդ որում, ալ-Ումարին ճիշտ այս թվականին է հոր հետ Դամասկոսից Կահիրե տեղափոխվել. սուլթանի հրամանով հայրը նշանակվել է «գլխավոր քարտուղար», իսկ ալ-Ումարին՝ նրա օգնական⁷⁵:

Դառնալով Օշինին՝ նշենք, որ նրա գահակալության առաջին տարիները համեմատաբար խաղաղ ընթացք ունեցան: Հավանաբար ալ-Մալիք ալ-Նասիրից ստացած taqlīd-ը հարաբերական խաղաղություն մտցրեց հայ-մամլուքյան հարաբերություններում: Մի այնպիսի արտակարգ իրավիճակում, ինչպիսին էր մոնղոլ աստիճանավորի կողմից հայոց կառավարող վերնախավի սպանությունը և երբ դեռ հաստատապես պարզ չէր, թե արդյոք տեղի ունեցածն իլխանական իշխանությունների պաշտոնական վերաբերմունքի փոփոխության արդյունք էր, անհրաժեշտ էր ամեն (անգամ իշխանության տվյալություն հայցելու) գնով արգելակել Մամլուքյան սուլթանության հետ հարաբերությունների սրումը և անվտանգության որոշ երաշխիքներ ձեռք բերել թշնամական պետությունից: Հայ-մամլուքյան հարաբերությունների ջերմացման մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ մամլուքյան աղբյուրներում այս շրջանի համար խիստ նվազում են Կիլիկյան Հայաստանին վերաբերող վկայությունները: Արդի արաբ պատմաբան Շաուքաթ Ռամադան Հուջջան սրա պատճառ է համարում այն, որ Հեթում Բ-ի մահից հետո հայերը սկսում են քիչ թե շատ կանոնավոր կերպով վճարել իրենց երկրի վրա դրված հարկերը⁷⁶: Սա գուցե ընդհանուր առմամբ ճիշտ է, քանզի, օրինակ, ալ-Մակրիզին 1308–1311 թթ. իրադարձությունների շարադրանքում ընդամենը երկու անգամ է հիշում հայերին՝ երկու դեպքում էլ նկարագրելով հարկերով և թանկագին նվերներով («ոսկեձուլ տարա՝ պատված թանկագին քարերով», «ոսկեձուլ տարա և մի հախճապակե կուժ՝ թանկագին քարերով պաճուճագարդ») մամլուք սուլթանի արքունիք ներկայացած «Սսի դեսպաններին» (1308 թ.)⁷⁷: Երկրորդ դեսպանության մասին խոսելիս (1310 թ. հունիս) Kitāb al-sulūk-ի հեղինակը գրում է, որ բացի նվերներից դեսպանները հանձնեցին նաև հայոց թագավորի շնորհավորական նամակը՝ ուղղված ալ-Նասիր Մուհամմադին

⁷⁵ Al-Qalqaṣandī, Ṣubḥ al-aʿšā, ց. 1, ք. 98.

⁷⁶ Šawkat Ramadān Huǧǧa, Al-ʿĀlqāt bayna Dawlat al-Mamālīk al-ūlā wa-Dawlat Ilhāniyya fāris fi ʿahd al-sultān al-Zāhir Baybars, 648–736 h. / 1250–1335 m. (ʿAmān, 2011), ք. 375.

⁷⁷ Տե՛ս al-Maqrīzī, Kitāb al-sulūk li-maʿrifat duwal al-mulūk, ց. 2.1, bi-taḥqīq Muḥammad Muṣṭafā Ziyāda (al-Qāhira, 1941), ք. 43, 86: Տե՛ս նաև Baybars al-Mansūrī, Zubdat al-fikra, ք. 402, 413, ինչպես նաև նույնի՝ Kitāb al-Tuḥfa al-mulūkiyya fi al-dawla al-turkiyya, bi-taḥqīq ʿAbd al-Ḥamīd Ṣāliḥ Ḥamdān (al-Qāhira, al-Dār al-Miṣriyya al-Lubnāniyya, 1987), ք. 193; al-Nuwayrī, Nihāyat al-arab, ց. 32, bi-taḥqīq Ibrāhīm Ṣams al-Dīn (Bayrūt, Dār al-Kutub al-ʿIlmiyya, 2004), ք. 102.

(կառավարման երրորդ շրջան՝ 1310–1341 թթ.)⁷⁸ «Իշխանությունը վերադառնալու առթիվ, որին պատասխանեցին շնորհակալություններ»⁷⁹:

Այնուամենայնիվ, մյուս արաբալեզու աղբյուրների հետ համեմատությունից եզրահանգում ենք, որ իրականում ամեն ինչ այնքան հարթ չի եղել, ինչպես որ ալ-Մակրիզին է ներկայացնում իր այս վկայության մեջ: Բայցարս ալ-Մանսուրին իր *Al-Tuhfa* երկում գրում է, որ 710 թ. Հալեպ ներկայացած հայ դեսպանները սահմանված հարկը մասամբ էին բերել, ինչը զայրացրել է սուլթանին, և նա հրամայել է Հալեպի «փոխարքա» Ասանդամուր Քուրջիին նոր արշավանք կազմակերպել դեպի Կիլիկիա⁸⁰:

Հայոց արքան, ինչպես երևում է, այդ մասին իմանալով, շտապել է ուղարկել հարկի մնացած մասը: 1311 թ. Համայի փոխարքայությունն ստանձնած Աբու ալ-Ֆիդան հաստատում է, որ ինքն ստացել է իր մասնաբաժինը («չորիններ և կերպասեղեն»)՝⁸¹:

Իսկ ալ-Յունինի պատմիչի երկում՝ հիշրայի 711 թ. տակ, մեկ այլ վկայություն ենք գտնում հարկերով Կահիրե շտապող հայկական դեսպանության մասին՝ հավելյալ անհավանական ու հորինածին թվացող տեղեկությամբ. «Ռաբի առաջին ամսի երեքին Դամասկոս հասան Սսի տիրոջ դեսպանները, Սսի տիրոջ քրոջ և նրա հորեղբոր դստեր հետ, որպեսզի սուլթանի մոտ հարեմ մտնեն (, ընդծումը մերն է- Գ.Դ.) իրենց հետ տանելով ձիեր, ջորիներ, նվերներ, ընծաներ և այլն, և հայտնեցին նզովյալ թշնամու (մոնղոլների - Գ.Դ.) շարժի մասին»⁸²: Մի՞թե Օշինը չէր խորշի նաև այսօրինակ արարքից՝ Եգիպտոսի և Ասորիքի սուլթանի բարյացակամությունը շահելու համար: Համենայն դեպս, սկզբնաղբյուրային այլ տեղեկությունների բացակայության պատճառով դժվար է պարզել այս դեսպանագնացության մանրամասներն ու իրական նպատակները, թեև ալ-Այնին նույնպես նույն 711 թ. ներքո գրում է Կահիրե

⁷⁸ Սուլթան ալ-Նասիրի կառավարման երրորդ շրջանին նվիրված առանձին ուսումնասիրություն կա: *St' u A. Levanoni, A Turning Point in Mamluk History: The third reign of al-Nāṣir Muḥammad ibn Qalāwūn (1310–1341)* (Leiden: E.J. Brill, 1995):

⁷⁹ *Al-Maqrīzī*, *Al-Sulūk*, ց. 2.1, ց. 86.

⁸⁰ *St' u Baybars al-Mansūrī*, *Al-Tuhfa*, ց. 217–218: Հմմտ. *al-Maqrīzī*, *Al-Sulūk*, ց. 2.1, ց. 90–91; *Ibn Tagrī Birdī*, *Al-Nuǧūm al-zāhira fī mulūk Miṣr wa-l-Qāhira*, ց. 9, bi-tahqīq Muḥammad Ḥusayn Šams al-Dīn (Bayrūt, Dār al-kutub al-‘ilmiyya, 1992), ց. 21–22:

⁸¹ *St' u Abū al-Fidā*, *Al-Muḥtaṣar*, ց. 2, ց. 407, *ինչպես նաև Հ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները*, էջ 246:

⁸² *St' u al-Yūnīnī*, *Dayl Mirāt al-zamān (Tārīḥ al-sanawāt 696–711 h./1297–1312 m.)*, ց. 2, bi-tahqīq Ḥamza ‘Abbās (Abū Zabī, 2007), ց. 1430: Հմմտ. *al-Birzālī*, *Al-Muqtafi li-tārīḥ al-šayḥ Šihāb al-Dīn Abī Šāma al-ma'rūf bi-tārīḥ al-Birzālī*, ց. 4, bi-tahqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī (Šaydā-Bayrūt, al-Maṭba‘a al-‘Aṣriyya, 2006), ց. 13 (*ընդգծված հատվածը բացակայում է*):

ժամանած «Սսի տիրոջ» դեսպանների մասին, «որոնց հետ էր նաև նրա մորաքույրը, քանի որ եկել էր Երուսաղեմ այցելելու»⁸³ :

1311 թ. Օշինը սուլթան ալ-Նասիրի բարյացակամությունը շահելու ևս մի առիթ փնտրեց: Ըստ ալ-Նուվայրի պատմիչի՝ այդ թվականին Ոսկե Հորդայի խան Տոկտայի (կառ. 1291–1312 թթ.) մոտ ուղարկված մամլուք բանագնացները (որոշ մոնղոլ բանագնացների հետ՝ ընդհանուր թվով մոտ 60 հոգի) հետդարձի ճանապարհին գերի ընկան ֆրանկներին: Նրանց վաճառելու նպատակով տեղափոխեցին Միջերկրականի ծովեզրյա շրջաններ: Նախ տարան Տրիպոլի, որտեղ նրանց դիմաց պահանջեցին 60 հազար դինար, բայց գնորդ չգտնվեց, ապա տեղափոխեցին Կիլիկիո Այաս նավահանգիստ, որտեղ «Սսի տիրոջն» առաջարկեցին այդ գնով փրկագնել մուսուլմաններին, բայց վերջինս հրաժարվեց⁸⁴ : Ըստ ալ-Մակրիզիի պատումի՝ սուլթանին մուսուլման դեսպանների գերեվարության մասին հայտնել է հենց հայոց արքան, և այն մասին, որ «ինքը 60 հզ. դինար է ուղարկել նրանց փրկագնելու համար, որպեսզի այդ կերպ ձեռք մեկնի սուլթանին, սակայն չեն կարողացել [նրանց ազատել]»⁸⁵ :

Սակայն, Օշինի՝ հայ-մամլուքյան հարաբերությունները մեղմելուն ուղղված այս քայլերը երկարատև արդյունք չապահովեցին: Արևմտյան պետությունների և Հռոմի պապության հետ շարունակվող կապերը, մոնղոլների հետ թեև թուլացած, բայց դեռևս կենսունակ գործակցային հարաբերություններն ալ-Մալիք ալ-Նասիրի ուշադրությունից չէին վրիպում⁸⁶: Արդեն 1315 թ. Եգիպտոս

⁸³ Al-ʿAynī, ʿIqd al-ǧumān, ǧ. 5, ʃ. 35–36.

⁸⁴ Ի վերջո, գերիներին տեղափոխում են Էգեյան ծովի ալ-Մաստաբա (Քիոս) կղզի: Այս մասին իմանալով՝ սուլթան ալ-Նասիրը կարգադրում է ձերբակալել Ալեքսանդրիայում գտնվող ֆրանկ վաճառականներին և առգրավել նրանց ունեցվածքը: Բանն ավարտվում է նրանով, որ Sakrān անունով մի ջենովացի վաճառականի միջնորդությամբ մուսուլման դեսպանները վերադարձվում են Եգիպտոս, որից հետո ազատ են արձակվում նաև Ալեքսանդրիայի լատին վաճառականները: Տե՛ս al-Nuwayrī, Nihāyat al-ʿarab, ǧ. 32, ʃ. 132: Ալ-Նուվայրիի պատմածը նույնությամբ կրկնում է նաև Մուֆադդալ իբն Աբի ալ-Ֆադալիլը: Տե՛ս Mufaḍḍal ibn Abī al-Faḍāʿil, Al-Nahǧ as-saḍīd wa-durr al-farīd fīmā baʿda tāriḥ ibn al-ʿAmīd (Moufazzal ibn Abil-Fazaʿil, Histoire des sultans mamlouks, Texte Arabe publié et traduit en Français par E. Blochet, PO, t. 20 (Paris, 1929) (հետագու՝ Mufaḍḍal, Al-Nahǧ as-saḍīd (PO, t. 20)), ʃ. 199 [705].

⁸⁵ Al-Maqrīzī, Al-Sulūk, ǧ. 2.1, ʃ. 101–102.

⁸⁶ Օշինն ամեն դեպքում շարունակում էր կատարել իր ենթակայական պարտականությունները մոնղոլների նկատմամբ: Նա ամենայն հավանականությամբ մասնակցություն է ունեցել իլխան Օլջայթուի (կառ. 1304–1316 թթ.)՝ Ասորիքի նվաճման նպատակ հետապնդող մոնղոլական վերջին ռազմական ձեռնարկմանը, որը տեղի է ունեցել 1312–1313 թթ.՝ վերստին անփառունակ վախճան ունենալով: Այս մասին հաղորդում կա Իբն ալ-Դավադարիի ժամանակագրության մեջ: Տե՛ս Ibn al-Dawādārī, Kanz al-durar wa-ǧāmiʿ al-ǧurar, ǧ. 9 (Al-Durr al-fāḥir fī sirat al-Malik al-Nāṣir), bi-taḥqīq Hāns Rūbirt Ruymir (Hans Robert Roemer) (al-Qāhira, 1960), ʃ. 253–255: Այս

տոսի և Ասորիքի սուլթանն արշավանք կազմակերպեց Մալաթիայի դեմ՝ կոտորածի և գերեվարության ենթարկելով քաղաքի հոծ հայ բնակչությանը: Ընդհանուր է՝ հայոց արքային բանակցությունների գնով հաջողվեց հասնել նրան, որ Կիլիկյան Հայաստանի սահմանների մատուցներով անցնող մամլուքյան բանակները չներխուժեն երկրի տարածք և դրանով իսկ խուսափեց տարածքային կորուստներից, այնուհանդերձ, հարկադրված եղավ մի ոչ պակաս նվաստացուցիչ զիջում կատարել մամլուքյան իշխանություններին՝ ընդունելով նոր էլ ավելի ծանր հարկաչափ՝ 1 միլիոն դիրհամ⁸⁷:

Ա 4. Քարտուղարության ձեռնարկների նյութը, ալ-Ումարի

Այժմ անդրադառնանք մամլուքյան քարտուղարության մյուս ձեռնարկներին՝ ի մասնավորին ալ-Ումարիի, Իբն Նազիր ալ-Ջայշի և ալ-Կալկաշանդիի երկերին: Պետք է նշել, որ սրանցում, ցավոք, չեն պահպանվել հայ-մամլուքյան դիվանագիտական նամակագրության ամբողջական վավերագրեր (եթե չհաշվենք ալ-Հալաբիի ձեռքով գրված և նրա, ինչպես նաև ալ-Նուվայրիի և ալ-Կալկաշանդիի երկերում պահպանված վերոհիշյալ երկու վավերագրերը), այլ միայն դրանց գրության նմուշօրինակ-կաղապարների ու կառուցվածքի օրինակներ, որոնք նպատակ ունենին՝ ուղեցույց ծառայելու մամլուքյան դիվանատան մյուս քարտուղար-գրագիրներին համար: Օրինակ, Իբն Նազիր ալ-Ջայշին իր ձեռնարկը գրել է որդու համար, ով նույնպես գրագիր (kātib al-darġ) էր աշխատում մամլուքյան դիվանատանը: Այնուամենայնիվ, այդ մի քանի նմուշները մեզ պատկերացում են տալիս հայոց արքաներին վերագրված տիտղոսների և պատվանունների, մամլուքյան իշխանությունների վերաբերմունքի որոշ թաքնված երանգների մասին, ինչպես նաև հնարավորություն տալիս պարզել հիշյալ նամակների ուղարկման պատմական համատեքստը, մոտավոր ժամանակը և նպատակները:

Այսպես, ալ-Ումարիի Al-Ta'rif-ում քրիստոնյա տիրակալների հետ նամակագրության բանաձևերը տրված են մուսուլման տիրակալներին վերաբերող բանաձևերից հետո: Նա հայոց արքաների հետ նամակագրությանն անդրադառնում է «սերբերի և բուլղարների տիրոջ» (ṣāhib al-bulġār wa-l-sarb), «Ռումի արքա Կոստանդնուպոլսի տիրոջ» (malik al-Rūm ṣāhib al-Qusṭantīniyya) ու «Վրաց

մասին ավելի մանրամասն կիսոսենք ներքևում՝ իլխաններին հայոց արքաների մատուցած նվերներին վերաբերող բաժնում (Բ 3):

⁸⁷ Այս դեպքերին նվիրված մի առանձին հոդված ունենք: Տե՛ս Գ. Դանիելյան, «Մալաթիայի գրատուժը մամլուքների կողմից 1315 թ. եւ Կիլիկեան Հայաստանը», ՀԱ, թիւ 1–12 (Վիեննա-երեւան, 2017), էջ 85–146:

արքայի» (malik al-kurğ) հետ նամակագրությանն անդրադառնալուց հետո: Այս հերթականությունը, կարծես թե չի արտահայտում այս տիրակալների իրական հիերարխիկ աստիճանակարգությունը: «Սերբերի և բուլղարների տերը» Բյուզանդիայի կայսրից առաջ է ներկայացված այն պատճառով, որ նա Ոսկե Հորդայի (mamlakat şāhib al-Sarrāy) տիրոջ ստորական էր: Բացի այդ, նրան ուղղված նամակի դիմումում (rasm al-mukātaba) բերված տիտղոսներից պարզ է դառնում, որ նա նաև մուսուլման է եղել⁸⁸: Ուստի, նա այստեղ դասված է մուսուլման տիրակալների շարքին, իսկ քրիստոնյա միապետների (երկում՝ mulūk al-kuffār, իմա՝ «անհավատների արքաներ») շարքն իրականում սկսվում է հենց Բյուզանդիայի կայսրից⁸⁹, և այդ տրամաբանությամբ հայոց արքային տրված է երրորդ տեղը՝ Կոստանդնուպոլսի կայսրից և վրաց արքայից հետո: Հայոց թագավորին նվիրված հատվածը կրում է Mutamallik Sīs վերտառությունը, որ թարգմանվում է որպես «Սաի իշխող»: Պետք է նշել, որ Կիրիկիո Հայոց արքաներին ժԳ-ԺԵ դարերի մուսուլմանական մատենագրության (արաբալեզու և պարսկալեզու) մեջ վերագրված տիտղոսներին՝ մասնավորապես «թագավոր»-ին կամ «թագֆուր»-ին, մի առանձին հոդված ենք նվիրել⁹⁰: Ուստի, որքան էլ, որ խուսափելու լինենք կրկնությունից, այնուամենայնիվ այդ հետազոտության մեջ արտահայտված որոշ դրույթներ կօգտագործենք նաև այստեղ՝ պաշտոնական նամակների բանաձև-կաղապարներում հայոց արքաներին տրված տիտղոսների և պատվանունների նշանակությունն ու տրամաբանությունը հասկանալու համար: Նախ և առաջ, հետաքրքիր է մուսուլմանների կողմից հայկական «թագավոր» տիտղոսի փոխառումն

⁸⁸ Տե՛ս **al-ʿUmāri**, *Al-Taʿrīf*, §. 75–76: Իբն Նազիր ալ-Ջայշի երկում «սերբերի և բուլղարների տերը» ներկայացված է արդեն որպես քրիստոնյա միապետ՝ օժտված ժամանակի այլ քրիստոնյա տիրակալների համար սովորական տիտղոսներով: Տե՛ս **Ibn Nāzīr al-Ġayš**, *Taʿrīf*, §. 30: Հմմտ. **al-Qalqašandī**, *Šubh al-ašā*, §. 8, §. 26: Տե՛ս նաև **D.A. Korobeinikov**, “Diplomatic Correspondence”, p. 57:

⁸⁹ **Անդ**:

⁹⁰ Այն նախ հրատարակվել է անգլերեն՝ *Revue des Études Armeniennes*-ի էջերում: Տե՛ս **G. Danielyan**, “The Title Tʿagavor/Takfūr in the Medieval Muslim Historiography”, *REArm*, vol. 36 (Paris, 2015), pp. 61–80: Ապա մի քանի գործընկերների հետ հեղինակած կոլեկտիվ մենագրության մեջ լույս է տեսել վերջինիս փոքր-ինչ ընդլայնված հայերեն տարբերակը: Տե՛ս **Գ. Դանիելյան**, «Թագավոր/թագֆուր» տիտղոսը միջնադարյան մուսուլմանական մատենագրության մեջ», Ա. Բողոյան (խմբագիր), Ռ. Շուքուրով, Վ. Տեր-Ղևոնդյան, Գ. Դանիելյան, Կիրիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում (պատմաբանասիրական ակնարկներ), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. (Երևան, 2016) (հետագու՝ Կիրիկյան Հայաստանը (2016)), էջ 163–198: Վերջերս էլ հիշյալ կոլեկտիվ ժողովածուն թարգմանվել է անգլերեն: Տե՛ս **G. Danielyan**, “The Title Tʿagavor/Takfūr in Medieval Muslim Historiography,” in *Cilician Armenia in the Perceptions of Adjacent Political Entities (Historical-Philological Essays)* (հետագու՝ Cilician Armenia, 2019), by A.A. Bozoyan (editor), V.A. Ter-Ghevondian, R.M. Shukurov, G.G. Danielyan (tr. from Armenian by A. Martirosyan) (Yerevan: “Gitutyun”, 2019), pp. 151–182:

ու օգտագործումը հայոց արքայի վերաբերմամբ, և ոչ միայն հայոց արքայի, այլև Տրապիզոնի և Բյուզանդիայի կայսրերի, ինչպես նաև Փոքր Ասիայի և Թրակիայի որոշ այլ մանր քրիստոնյա տիրակալների վերաբերմամբ նույնպես⁹¹։ Բանն այն է, որ մուսուլմանները չէին կարող հաշտվել հայոց արքայի իշխանության օրինականության հետ մի երկրամասում, որ արաբա-բյուզանդական հակամարտության ամբողջ ընթացքում համարվել է *dār al-islām*-ի («Իսլամի տուն») անբաժանելի մասն ու նրա պաշտպանողական պատվարը։ Մուսուլմանների այս վերաբերմունքի բացատրությունը լավագույնս արտահայտել է ալ-Կալկաշանդին. «Արդ, այն (Կիլիկիան) խալիֆաների օրոք սահմանային ամրությունների երկիր (*bilād al-tuǧūr wa-l-ʿawāsim*) էր կոչվում և մուսուլմանների ձեռքում էր, այսպես է սկսում մատենագիրն իր խոսքն ու հետևյալ կերպ եզրափակում,- և նրան *mutamallik Sīs* («Սսի իշխող») էին անվանում, այլ ոչ թե *malik Sīs* («Սսի արքա») նախ և առաջ այն պատճառով, որ այն (Սսի երկիրը) ի սկզբանե մուսուլմանների ձեռքում էր, և հետո միայն հայերի վերոհիշյալ ղեկավարը նետվեց (հարձակվեց) նրա վրա և գրավեց այն մուսուլմանների ձեռքից։ Եվ, Աստուծոն փառք, որ [Նա] այն մուսուլմանների ձեռքը վերադարձրեց և ամրապնդեց (հաստատեց) իսլամական թագավորությունների կազմում»⁹²։ Այստեղից հետևում է, որ Հայոց արքայի իշխանության լեգիտիմության մերժողական դիրքերից ավելի ձեռնառու էր հայոց արքային ցանկացած այլ կերպ, քան *malik* («արքա») անվանելը։ Հենց այստեղ էլ, ըստ էության, մուսուլման մատենագիրներին օգնության է եկել *takfūr* տիտղոսը, որը յուրատեսակ գեղադրիտակ է ծառայել մուսուլմանական պետությունների կողմից Հայոց թագավորության նկատմամբ ունեցած պաշտոնական վերաբերմունքի

⁹¹ Այս մասին տե՛ս **A. Savvides**, “On the Origins and Connotation of the Term “Tekfur” in Byzantine-Turkish Relations”, *Byzantion*, t. 71.2 (2001), pp. 451–461 և **նույնի՝** “Tekfur,” in: *EI2*, vol. 10 (T-U) (Leiden: E.J. Brill, 2000), pp. 413–414 և **P. Шукров**, *Великие Комнины*, с. 48–50:

⁹² Տե՛ս **al-Qalqaṣandī**, *Ṣubḥ al-aṣā*, ց. 8, ք. 33: Հմմտ. **նույնի՝** ց. 4, ք. 130–131: Պատահական չէ, որ ալ-Ումարին իր ձեռնարկում Բյուզանդիայի կայսրին և վրաց արքային համապատասխանաբար *malik al-Rūm* և *malik al-Kurğ* է անվանում, իսկ հայոց արքային՝ *mutamallik Sīs*: Տե՛ս **al-ʿUmārī**, *Al-Taʿrīf*, ք. 76, 78: Վրաց արքայի վերաբերյալ ալ-Կալկաշանդիի արած մեկնաբանությունը բացատրում է *malik* և *mutamallik* տիտղոսների տարբերությունը: Նա գրում է. «Այսպես է, որովհետև ալ-Շիհաբ իբն Ֆադլ Ալլահի (իմա՝ ալ-Ումարիի-Գ.Գ.) կենդանության օրոք նա վայելում էր թաթարների աջակցությունը և միացել էր Չոբանին, ինչի մասին արդեն հիշատակել ենք: Եվ հետևաբար նրա հետ նամակագրության մակարդակն ավելի բարձր էր և առավել պատվելի: Սակայն, երբ թաթարների պետությունը վերացավ Իրանում, նրանց գորությունը նվազեց և [ըստ այդմ] իջավ վրաց արքայի հետ նամակագրության մակարդակը: ... Եվ երբ արտահայտվում էին նրա տիրոջ մասին, կոչում էին Թիֆլիսի իշխող (*mutamallik Tiflis*), ինչպես որ հայերից Սսի վրա կառավարողին էին կոչում Սսի իշխող, իսկ Կիպրոսի վրա կառավարողին՝ Կիպրոսի իշխող»: Տե՛ս **al-Qalqaṣandī**, *Ṣubḥ al-aṣā*, ց. 8, ք. 29:

կեղծ պատկերը՝ առերևույթ լրջալուծյունն ու հանդուրժողականությունը ցուցադրելու և իրականում դրա հուզական կողմը, այլ կերպ ասած՝ խտրական ու ստորադասական էությունը քողարկելու համար: Վերոհիշյալ takfūr, mutamallik և malik տիտղոսներից բացի՝ մամլուքյան մատենագրության մեջ հայոց արքաները նաև ṣāhib («տեր») և անգամ sulṭān են անվանվել («սուլթան»): Ի տարբերություն mutamallik-ի՝ ṣāhib-ը ստորադասական ենթատեքստից զուրկ տիտղոս էր և հավասարապես վերագրվում էր նաև մուսուլման տիրակալներին: Ինչ վերաբերում է sulṭān բարձր տիտղոսին, որ գերազանցապես վերագրվում էր մուսուլման տիրակալներին, ապա հայոց արքայի վերաբերմամբ նրա գործածության ընդամենը մեկ-երկու դեպքեր են գտնվում ԺԳ–ԺԵ դարերի մուսուլմանական (մեծամասամբ իլխանական) մատենագրության մեջ⁹³:

Ըստ ալ-Ումարիի՝ պաշտոնական գրագրության և դիվանագիտական փաստաթղթերում «թաքֆուր» տիտղոսը համարժեք էր malik-ին և կարող էր կիրառվել վերջինի փոխարեն: Նա մասնավորապես գրում է. «Իսկ նրանց արքաներին թաքֆուր անունով են կոչել, որ նրանց է վերագրվել, ինչ նրանք կան և ընդհուպ մինչև օրս»⁹⁴: Իր մյուս՝ Masālik al-absār աշխատության մեջ նույն հեղինակը գրում է. «Տրապիզոնի արքան, ինչպես որ Հայոց արքան, «թաքֆուր» է կոչվում»⁹⁵:

Հատկանշական է, որ մամլուքյան դիվանատներից դուրս եկած և մասնավորապես քրիստոնյա տիրակալներին հասցեագրված նամակները սովորաբար բաղկացած են եղել ստորև ներկայացվող հիմնական կառուցվածքային մասերից: Թղթառաջքի հատվածը սկսվում էր սուլթանի կրած տիտղոսների թվարկումից, basmala-ից⁹⁶, նամակի հասցեատիրոջն ուղղված դիմումից (unwān, rasm al-mukātaba), որը ներառում էր ողջունի արտահայտություն (taslīm), նշվում էր փաստաթղթի հրապարակման փաստը (արտահայտված՝ asdarna[hā]՝ «հրապարակեցինք այն», usdirat ilā՝ «հրապարակվեց [մեր կողմից]»), sadarat hazihi al-mukātaba՝ «[ինքն իրենով] հրապարակվեց» կամ պարզապես sadarat՝ «[ինքն իրենով] հրապարակվեց»)՝ կախված հասցեատիրոջ վարկից և հեղինակությունից: Այնուհետ թվարկվում էին հասցեատիրոջ պարզ կամ մեկ բառով արտահայտված տիտղոսները (laqab < alqāb) և բարդ պատվանունները կամ պատիվ արտահայտող կապակցությունները (naʿt < nuʿūt): Թղթառաջքին

⁹³ Այս բոլոր տիտղոսների և նրանց բանաձևերի կիրառության օրինակները՝ քաղված միջնադարյան մուսուլմանական մատենագրությունից, տե՛ս մեր վերը հիշատակված հոդվածում:

⁹⁴ Al-ʿUmārī, Al-Taʾrīf, §. 80.

⁹⁵ Տե՛ս նույնի՝ Masālik al-absār, §. 3, §. 258:

⁹⁶ Խոսքն իսլամական bi-[i]sm Allāh al-rahīm al-rahīm (թարգ.՝ «հանուն բարեգութ և բարեսիրտ Աստծո») հայտնի արտահայտության մասին է: Նրանով են սկսվում Դուրանի բոլոր սուրաները (բացառությամբ իններորդի):

հետևում էր գրության բուն բովանդակությունը (matn): Ի տարբերություն «արևելյան հզորագույն տիրակալներին»՝ օրինակ խաներին, ուղղված նամակների՝ որոնցում basmala-ի բանաձևին հետևում էր huṭba («քարոզ») կոչվող հատվածը՝ իսլամական կրոնական բանաձևերի (ḥamdala, taṣāḥḥud, tasliyya) ներառմամբ⁹⁷, քրիստոնյա գահակալներին հասցեագրված նամակներում տեղ ունեին հասցեատիրոջն ուղղված [բարե]մաղթանքները, վերջինիս բարեկեցության կամ բարօրության համար Ալլահին ուղղված ըզձական աղերսները (du‘ā’ < ad‘iyya): Du‘ā’-ները սովորաբար նախորդում և հաջորդում էին նամակի հասցեատիրոջ անվան հիշատակությանը⁹⁸: Դիվանագիտական նամակը սովորաբար եզրափակվում էր թվագրությամբ (al-tārīḥ): Հայոց արքաներին մամլուքյան իշխանություններից ուղղված նամակները, ինչպես ներքևում ենք համոզվելու, համենայն դեպս Իբն Ֆադլ Ալլահ ալ-Ումարիի և Իբն Նազիր ալ-Ջալշի գործունեության օրոք, սովորաբար սկսվում էին sadarāt hazīhi al-mukātaba արտահայտությամբ, որը հատուկ էր «երրորդ» կամ «չորրորդ» դասի տիրակալների (այս դասակարգման մասին տե՛ս ստորև) հետ նամակագրությանը⁹⁹:

Սուլթանական դիվանատնից դուրս եկած դիվանագիտական փաստաթղթերը վավերացվում էին սուլթանի ստորագրությամբ (al-‘alāma) կամ էլ հատուկ տարբերակիչ նշաններով (al-ḥaṭṭ al-ṣarīf), որ դրվում էին փաստաթղթի սկզբում՝ basmala-ից հետո¹⁰⁰: Հարկ է նշել, որ միշտ չէ, որ սուլթանն անմիջապես փաստաթղթի պատրաստման ժամանակ իր ձեռքով գետեղում էր իր ստորագրությունը վավերագրի վրա: Սուլթանի ստորագրության նմուշները՝ նախատեսված տարբեր վարկի և հեղինակության միապետների համար, երբեմն

⁹⁷ Al-Qalqaṣandī, Ṣubḥ al-a‘šā, ց. 6, ք. 224–231.

⁹⁸ Նույնի՝ ց. 8, ք. 25–26:

⁹⁹ Մամլուքյան պաշտոնական գրագրության ձևակառուցվածքային հատկանիշներն ալ-Կալիլաշանդիի և ալ-Սահմավիի ձեռնարկների հիման վրա մանրամասն վերլուծության է ենթարկել Մ. Դեկկիչեն: Տե՛ս M. Dekkiche, “Correspondence”, pp. 144–153 և հատկապես նույնի՝ “Diplomatics, or Another Way to See the World,” in: *Mamluk Cairo*, pp. 185–213:

¹⁰⁰ Պաշտոնական նամակները երբեմն հաստատվում էին նաև կնիքով՝ «տուղրայով» (tuḡrā), մի բան, որ մամլուքյան դիվանատունը փոխառել էր թյուրք-մոնղոլական պաշտոնական գրագրության արարողակարգից: Տե՛ս D. Aigle, “Rédaction, transmission, modalités d’archivage des correspondances diplomatiques entre Orient et Occident (XIII^e-début XVI^e siècle)”, dans *La correspondance entre souverains. Approches croisées entre l’Orient musulman, l’Occident latin et Byzance (XIII^e-début XVI^e s.)*, ed. D. Aigle et S. Péquignot (Brepols: Turnhout, 2013), p. 15; F. Bauden, “Mamluk diplomatics”, p. 53: Իլխաններին և նրանց իրավահաջորդ մոնղոլ տիրակալներին ուղղված նամակները սովորաբար կրում էին tuḡrā: Տե՛ս M. Dekkiche, “Correspondence”, p. 153 և նույնի՝ “Diplomatics, or Another Way”, 206–207.

նախօրոք պահպանվում էին արքունի դիվանատանը և գրության պատրաստման ժամանակ արքունի քարտուղարը դրանք պարզապես փակցնում էր թղթագլանի առաջին թերթին՝ համապատասխան տեղում¹⁰¹ :

Մամլուքյան գրագրության արարողակարգային պահանջների համաձայն՝ քրիստոնյա արքաներին՝ այդ թվում հայոց թագավորներին հղված նամակներն՝ ի տարբերություն մուսուլման տիրակալներին ուղղվածների, չէին կարող կրել սուլթանի ստորագրությունը կամ որևէ այլ տարբերակիչ նշան: Դրա փոխարեն արքունական գրագիրը կամ քարտուղարը basmala-ի վերևում պարզապես գրում էր սուլթանի անունը և թվում նրա կրած տիտղոսներն ու պատվանունները¹⁰² :

Մամլուքյան պաշտոնական գրագրության մյուս կարևոր առանձնահատկությունը նամակագրության մեջ օգտագործվող թուղթն էր, որի չափսը համեմատական էր նամակի հասցեատիրոջ վարկին ու հեղինակությանը: Դիվանագիտական գրությունը կազմող թերթերը (wasl < awṣāl) փակցվում էին իրար՝ կազմելով թղթագլան: Ըստ ալ-Կալկաշանդիի՝ Կահիրյան դիվանատանն օգտագործվող թուղթն ունեցել է 9 ձևաչափ (maqādīr qaṭ' al-waraq), որոնք մեկ ամբողջական թղթագլանի (darğ)՝ տումարի (al-tūmār) կամ Ֆարխայի (al-farḥa) լայնությունն արտահայտող չափսերն էին¹⁰³՝ արտահայտված «եգիպտական կտորի կանգուն» (dirā' al-qumāsh al-misrī) կոչված չափման միավորով, որը հավասար էր մոտավորապես 58.15 սանտիմետրի¹⁰⁴: Կահիրյան դիվանատան ամենամեծ թղթաչափսը կոչվում էր «Բաղդադյան ամբողջական չափս» (qaṭ' al-bağdādī al-kāmil), որն ըստ Կալկաշանդիի՝ ուներ 1 կանգուն լայնություն և 1.5 կանգուն երկարություն (այսինքն՝ 87.225 սմ. երկարություն և 58.15 սմ. լայնություն): Այս չափի թղթով նամակներ էին գրվում ամենաբարձր վարկ ունեցող արևելյան տիրակալներին (al-tabaqa al-'ulyā min al-mulūk), օրինակ՝ խաներին: «Բաղդադյան թերթի չափսը» (qaṭ' al-bağdādī al-nāqīṣ' 1 կանգուն՝ հանած 4 մատնաչափ) նույնպես երբեմն կիրառվում էր հզորագույն արքաներին գրելու համար՝ բացառությամբ խաների, «երկու երրորդ չափսը» (qaṭ' al-tulūṭayn՝

¹⁰¹ A. Rizzo, “Three Mamluk Letters Concerning the Florentine Trade in Egypt and Syria: a New Interpretation,” in: *Mamluk Cairo*, pp. 791–792.

¹⁰² Al-Qalqaṣandī, *Ṣubḥ al-ā'šā*, ց. 8, ք. 25–26.

¹⁰³ Տե՛ս Անդ՝ ց. 6, ք. 189: Մամլուքյան թղթաչափերն իր ձեռնարկում թվարկել և նկարագրել է նաև ալ-Սահմաւին, բայց վերջինիս նկարագրությունը փոքր-ինչ տարբերվում է ալ-Կալկաշանդիի ներկայացրածից: Ամենամեծ թղթաչափը, օրինակ, նրա մոտ անվանված է qaṭ' al-tūmār al-kāmil: Տե՛ս al-Sahmāwī, *Al-Tağr al-bāsim*, ց. 2, ք. 549–551:

¹⁰⁴ W. Hinz, *Islamische Masse und Gewichte: Umgerechnet ins metrische System* (Leiden-Köln: E.J. Brill, 1970), S. 56; *Measures and Weights in the Islamic World: An English Translation of Walther Hinz's Handbook Islamische Masse und Gewichte*, tr. by M.I. Marcinkowski, foreword by C.E. Bosworth, F.B.A (Kuala Lumpur: ISTAC, 2003), p. 82.

«2/3 կանգուն») շատ հազվադեպ էր օգտագործվում դիվանատանը, «կես շափսը» (qaṭ al-niṣf «կես կանգուն») նախատեսված էր «երկրորդ դասի» արքաների հետ գրագրության համար, «մեկ երրորդ շափսը» (qaṭ al-tult) «երրորդ դասի» տիրակալների¹⁰⁵: Սրանց հետևում էին «Մանսուրյան» կոչված շափսը (al-qaṭ al-manṣurī «1/4 կանգուն»), «սովորական» կամ «փոքր» կոչված շափսը (al-qaṭ al-āda կամ al-qaṭ al-ṣaḡīr` «1/6 կանգուն»), որով նամակագրական կապ էին պահում «չորրորդ դասի» տիրակալների հետ, «ասորիքյան ամբողջական» (al-qaṭ al-šāmī al-kāmil` «ասորիքյան մեկ tūmār-ի լայնության») ձևաչափը, որը նույնպես հազվադեպ էր օգտագործվում գրագրության մեջ և վերջապես «փոքր շափսը» (al-qaṭ al-ṣaḡīr) կամ այսպես կոչված «թռչնի թուղթը» (waraq al-tayr, ալ-Սահմավիի մոտ` waraq al-baṭā'iq¹⁰⁶, 3 ծալած մատի լայնության), որ գլխավորապես նախատեսված էր «աղավնու փոստի» համար¹⁰⁷:

Ալ-Ումարին մոռանում է մատնանշել, թե իր գործունեության օրոք վերոհիշյալ թղթաշափսերից մասնավորապես որով էին մամլուքյան սուլթանները գրում հայոց արքաներին: Այնուամենայիվ, դատելով քրիստոնյա օտար միապետների հետ Մամլուքյան իշխանությունների նամակագրության վերաբեր-

¹⁰⁵ Al-Qalqaṣandī, Ṣubḥ al-ā'šā, ց. 6, ք. 190–191:

¹⁰⁶ Al-Sahmāwī, Al-Ṭaḡr al-bāsim, ց. 2, ք. 551:

¹⁰⁷ Տե՛ս al-Qalqaṣandī, Ṣubḥ al-ā'šā, ց. 6, ք. 190–193 և հմմտ. **Նույնի՝** ց. 8, ք. 20: Ալ-Ումարին, ի տարբերություն ալ-Կալիաշանդիի, իր Al-Ta'rif-ում շատ հպանցիկ է խոսում թղթաշափսերի մասին: Հմմտ. al-ʿUmārī, Al-Ta'rif, ք. 126: Ավստրիացի արևելագետ Յ. Կարաբացեկը, «եգիպտական կանգունը» 48.8 սմ. համարելով, հաշվարկել է ալ-Կալիաշանդիի արձանագրած թղթաշափսերի համարժեքները: Հետագա հետազոտողներից շատերը հետևել են նրա հաշվարկներին: Տե՛ս J. von Karabacek, *Das Arabische Papier* (Wien: Verlag der Kaiserl. Königl. Hof- und Staatsdruckerei, 1887), S. 66–72; **G. Humbert**, “Le manuscrit arabe et ses papiers,” dans *La tradition manuscrite en écriture arabe (Revue des Mondes Musulmans et de la Méditerranée, t. 99–100)* (2002), p. 55–77; **G. Bosch, J. Carswell, G. Petherbridge**, *Islamic Bindings & Bookmaking* (The University of Chicago, 1981), p. 31; **A. Gacek**, *The Arabic Manuscript Tradition: A Glossary of Technical Terms and Bibliography – Supplement* (Leiden: Brill, 2008), pp. 63–64, 118–119 (մատենագիտություն); **Նույնի՝** *Arabic Manuscripts: A Vademecum for Readers* (Leiden-Boston: Brill, 2009), p. 192: Մինչդեռ Լիեժի համալսարանի պրոֆեսոր Ֆրեդերիկ Բոդենը, հիմնվելով ալ-Կալիաշանդիի և ալ-Սահմավիի ձեռնարկներում նկարագրված թղթաշափսերի համեմատական վերլուծության վրա, կարծիք է հայտնել, որ Կարաբացեկի հաշվարկները սխալ են եղել և կարիք ունեն վերանայման: Տե՛ս **Fr. Bauden**, “Manuscript Paper Formats of the Mamluk period: the Contribution of Mamluk Chancery Paper” (մինչ օրս չի հրատարակվել): Տե՛ս նաև **Նույնի՝** “Ikhwāniyyāt Letters in the Mamluk Period: A Document (Muṭāla‘a) Issued by al-Mu‘ayyad Shaykh’s Chancery and a Contribution to Mamluk Diplomatics,” in: *Egypt and Syria under Mamluk Rule: Political, Social and Cultural Aspects*, ed. by A. Levanoni (Leiden-Boston: Brill, 2021), pp. 185; **M. Dekkiche**, “Diplomatics, or Another Way”, pp. 200–201: Հարկ է ավելացնել, որ Սուլթանության ասորիքյան շրջանների դիվանատներում գրված փաստաթղթերը ևս ունեին իրենց առանձին ձևաչափերը, որոնք ալ-Կալիաշանդին նույնպես ներկայացնում է:

յալ ալ-Ումարիի և Իբն Նագիր ալ-Ջալշի վկայություններից և մեկնաբանություններից՝ կարելի է եզրակացնել, որ նրա գործունեության ժամանակներից մինչև 1360-ականները հայոց արքային ընդունված էր գրել «մեկ երրորդ շափս»-ով (qaṭ al-tūl): Հետագայում այս շափսը, ինչպես ներքևում ենք տեսնելու, փոխվել է՝ դառնալով «փոքր շափս» (al-qaṭ al-‘āda): Տեսականորեն հնարավոր է, որ հայոց թագավորության հզորության շրջանում (Հեթումի, Լևոն Բ-ի կառավարման շրջաններ) Մամլուքյան իշխանությունները, ինչպես որ Բյուզանդիայի կայսեր և վրաց արքայի դեպքում, սովորություն են ունեցել հայոց արքաներին գրելու «բաղդադյան թղթի» կես շափով, եթե, իհարկե, մամլուքյան դիվանատանը գործել է գրագրության մեջ գործածվող թղթերի այն դասակարգումը, որ նկարագրել են Իբն Նագիր ալ-Ջալշը և ալ-Կալկաշանդին: Նման փաստեր, ցավոք, մեզ հայտնի արաբալեզու աղբյուրները չեն հաղորդում:

Ըստ ալ-Կալկաշանդիի՝ հասցեատիրոջ վարկի և հեղինակության մյուս ցուցիչը թղթագլանում նամակի բուն տեքստից (մասնավորապես՝ basmala-ից) առաջ եղած մաքուր էջերի (awṣāl) քանակն էր, որը Էւրա էր կոչվում: Կանոն էր, որ qaṭ al-bağdādī al-kāmil-ի դեպքում մաքուր թերթերի թիվը պետք է լիներ 6, qaṭ al-tuluṭayn-ի դեպքում՝ 5, qaṭ al-niṣf-ի դեպքում՝ 4, qaṭ al-tūl-ի դեպքում՝ 3, al-qaṭ al-‘āda-ի դեպքում՝ 2–3: Այս կանոնը, ինչպես Մ. Դեկկիչեն է արձանագրել, միշտ չէ, որ սուլթանական գրագիրները պահպանում էին: Ալ-Կալկաշանդին գրում է, որ սուլթանի անունից գրվող նամակները կրում էին նրա ստորագրությունը (‘alāma), որը մի քանի տեսակ էր լինում՝ «եղբոր անունից», «հոր անունից» և իր «սեփական անունից»: Սուլթանի եղբոր (ahūhu) կամ հոր (wāliduhu) անունից ստորագրված նամակները սկզբից առաջ սովորաբար ունենում էին 3 մաքուր թերթ, անձամբ սուլթանի անունից ստորագրվածները՝ 2 թերթ¹⁰⁸:

Կիլիկիո հայոց միապետերի հետ նամակագրության բանաձևային համակարգի նկարագրությանն անցնելուց առաջ ալ-Ումարին նախ մի ակնարկ է կատարում (մասամբ շարադրված հանգավորված արձակով՝ sağ-ով) Կիլիկիո հայոց թագավորության պատմությանը, բացատրում հայ-մամլուքյան հակամարտության սկզբնավորման և զարգացման հիմնական պատճառներն ու բնութագրական գծերը՝ ընդհուպ մինչև իր ապրած օրերը: Հաշվի առնելով հատվածի ներկայացրած կարևորությունը հայ-մամլուքյան հարաբերությունների ուսումնասիրության համար ընդհանրապես և սուլյն հետազոտության հետագա շարադրանքի համար մասնավորապես՝ հարկ ենք համարում այն ներկայացնել ամբողջական թարգմանությամբ: Մատենագիրը գրում է. «Նա

¹⁰⁸ Տե՛ս al-Qalqaṣandī, Ṣubḥ al-‘āṣā, ց. 8, ք. 21 և հմտ. նույնի՝ ց. 6, ք. 314: Տե՛ս նաև M. Dekkiche, “Correspondence”, p. 147:

(«Ասի իշխողը» – Գ.Դ.) արքաների սերունդների շատ հին արքա է, ով հավաստիացնում է, թե ինքը սերում է կոստանդինյան տնից (գինաստիայից՝ al-bayt al-Qusṭanīnī): Նրանց արքաներին թաքֆուր (takfūr) անունով են կոչել, որ նրանց է վերագրվել, ինչ նրանք կան և ընդհուպ մինչև օրս: Ես իմ տեսակետն ունեմ կոստանդինյան հարստությունից լինելու նրանց պնդման առնչությամբ: Եթե այս տանը պատկանողները հոռոմական ծագման (salībat al-rūm) լինեին, ապա նրանք մելքիտյան (mal[i]kāniyya) դավանանք կունենային: Մինդեո «Թաքֆուրի տունը» հայկական է, իսկ նրանց դավանանքը «հակոբիկյան» (ya‘āqība) կամ դրան մոտ մի դավանանք է. ընդամին երկու դավանանքների միջև մեծ հեռավորություն և [ակնհայտ] տարբերություններ կան: Ամենն, ինչ գիտենք այս տան մասին, այն է, որ նրանց մեծ պապը հնում՝ առաջին արքաների վաղեմի ժամանակներում, այս երկրների քրիստոնյաների (naṣāra > nasrānī, այն է՝ «նազարեթյի») առաջնորդն է եղել: [Այս] քրիստոնյաները կավաշեն տների մարդիկ են (ahl al-madara)¹⁰⁹, և նրանց զանազան զբաղմունքներից են հյուանի (naḡḡār), «ձեռագործ վարպետի» և հողագործի (akara) արհեստները: Եվ վերջապես նրանց (հայերի) հպատակությունը Ռումի սելջուկյան արքաների մնացած մասի նկատմամբ էր (li-baqiyyat al-mulūk al-salāḡīqa bi-l-Rūm), և նրանց վրա [գլխա]հարկ ու [բոլորին] հայտնի հնազանդություն կար սահմանված, և սելջուկյան արքայի կողմից երկրի վրա գործակատար-վերակացուներ (al-‘ummāl wa-l-šihānī ‘alā al-bilād) կային կարգված, մինչև որ թուլացավ այդ [սելջուկյան] պետությունը, և շաղակրատությունը փոխարինելու եկավ գորությունը, և նրանցից (իմա՝ «սելջուկներից») ոմանք իրենց լիազորություն տվեցին սպանել մյուսներին: Այդպես խոսքը խորհրդակցություն դարձավ (ṣārat al-kalīma šūrā), հպատակների մեջ քառս սկսվեց, ամրոցների բարձունքները ավերածության ենթարկվեցին, և [մի ժամանակ] հովանու տակ եղած երկրները հեռացան իրարից՝ գայլերի համար երե (բնագրում՝ al-ḡanam) դառնալով: Այս ամենն այն էր, ինչին տենչում էր այդ անիծյալը (իմա՝ Հայոց արքան- Գ.Դ.), և նրա թռչնակն արծվի վերածվեց (istansara buḡāṭuḥu), ու հաճախացան նրա երդմնազանցությունները. առանց պահապան մնացած հոտ տեսնելով՝ [իր մոտ] քշեց-տարավ, առանց հսկիչ մնացած ապրանքներ տեսնելով՝ դրանցով իր ծանրոցը լցրեց (matā‘ān la ḥāmiyata lahu fa-mala‘a minhu awṣāqahu), և նա գրավեց այս երկրներն ու տիրեց դրանց և [աստիճանաբար] նվազեցնելով սելջուկների ժառանգությունը (mawārīt banī Salḡūq)՝ [վերջնականապես] յուրացրեց այն¹¹⁰:

¹⁰⁹ Հավանաբար հակադրում է բեդվին վրանաբնակներին:

¹¹⁰ Al-‘Umārī, Al-Ta’rīf, s. 81: Ալ-Կալիլաշանդին այս հատվածն ալ-Ումարիից մեջբերելիս հղում է կատարում նրա մյուս երկին՝ Masālik al-abṣār-ին՝ հավելելով, որ «նրանց [այդ] առաջնորդը

Այս երկրների մի մասին *al-ʿawāšim* են անվանում («սահմանապահ բերդամրոցներ»), մյուս մասին հնում *al-tuǧūr* (եզ. *al-taǧr*) էին կոչում, քանի որ դրանք սահմանակցում էին հոռոմներին («բյուզանդացիներին») ¹¹¹: Դրանց հարավային սահմանը սկսվում է Բաղրասի և հարակից մյուս շրջաններից,

Կիրիշ իբն Լաունն էր»: *Stʿu al-Qalqašandī*, *Ṣubḥ al-ʿāšā*, ց. 8, ք. 30: Հմմտ. *al-Sahmāwī*, *Al-Taǧr al-bāsim*, ց. 2, ք. 814: «Կիրիշ» (قيليش) բառը, որ թյուրքական ծագում ունի, թրի մի տեսակ էր, բայց օգտագործվում էր նաև որպես հատուկ անուն և հատկապես տարածված էր Ռումի սելջուկյան սուլթանության տիրակալների շրջանում, որոնցից 4-ը «Կիրիշ Արսլան» (բառացի՝ «թուր առուծ») անունն են կրել: «Կիրիշ իբն Լաունն» արտահայտության կիրառության ևս մի դեպք էլ գտնում ենք Իբն Նադդունի պատմության մեջ (բնագրում՝ *Qilīš ibn Alyūn ḍalīl*): *Stʿu Ibn Ḥaldūn*, *Al-ʿIbar wa-dīwān al-mubtadaʿ wa-l-ḥabar fī ayyām al-ʿArab wa-l-Barbar*, ց. 5, bi-taḥqīq Ḥalīl Šiḥāda wa-Suḥayl Zakkār (Bayrūt, Dār al-Fikr, 2000), ք. 444: Պետք է նշել, սակայն, որ բոլոր այս դեպքերում «Կիրիշ իբն Լաունն» արտահայտությունը պարզապես գրչագրական սխալագրություն է, որն իրարից փոխառել են արաբագիր հեղինակները: Սա ապացուցվում է ալ-Ռումարիի *Masālik al-abṣār* երկում ալ-Կալկաշանդիի մատնանշած հատվածը գտնելով. «Այստեղ հարկ է, որ հիշատակենք Սահի երկրի մասին, որ գտնվում է Հալեպի և Ռումի միջև: Հայերն այն հնուց են գրավել: Նրանց թագավորությունը վաղուց ի վեր Լաունն իբն Մալիհի Հալի դինաստիայի իշխանության տակ է»: *Stʿu al-ʿUmārī*, *Masālik al-abṣār*, ց. 3, ք. 316: Ինչպես տեսնում ենք, խոսքն այստեղ Մլեհ իշխանի (կառ. 1170-1175 թթ.) մասին է, որի անունը ինքը՝ ալ-Ռումարին, սխալմամբ շրջված է տալիս (*Malīh ibn Lāwun-ի փոխարեն Lāwun ibn Malīh*): *Malīh* և *qilīš* բառերն իրենց արաբերեն գրությունները (قيليش < قَلِيش >) որոշակի նմանություն ունեն, ինչը և շփոփության պատճառ է դարձել նրա երկից օգտված մատենագիրների համար: Պատահական չէ, որ արաբագիր պատմիչները Կիրիշիչալում թագավորության հաստատումը կապում են Մլեհ իշխանապետի (կառ. 1170–1175 թթ.) անվան հետ: Չէ՞ որ Հալեպի աթաբեկ Նուր ալ-Դին Զանգիի (կառ. 1146–1174 թթ.) հետ նրա կռած ռազմավարական դաշինքի և հետո նաև բյուզանդացիների (մասնավորապես դուկ Կոստանդին Կալոմանի) նկատմամբ հենց նրա տարած վճռական հաղթանակի և Դաշտային Կիրիշիայի քաղաքների ազատագրման շնորհիվ է, որ դրվեցին հայոց թագավորության կայացման փաստական հիմքերը: Մլեհ իշխանի գործունեության մասին արաբական մատենագրության մեջ պահպանված վկայություններն ի մի ենք բերել մեր այլ հոդվածներում: *Stʿu Գ. Դանիելյան*, «Մլեհ իշխանի գործունեությունը ԺԲ–ԺԵ դարերի արաբ պատմագիրների գնահատմամբ», Հայաստանը և արաբական աշխարհը: Պատմություն և արդի խնդիրներ (Արամ Տեր-Ղևոնդյանի 85-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու) (Երևան, 2014), էջ 74–93 և *նույնի*՝ «Թագավոր/թագֆուր տիտղոսը», էջ 170–172, ծնթգր. 22; *նույնի*՝ “The Title Tʿagavor/takfūr”, p. 158, n. 22:

¹¹¹ Արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների գոտիների մասին մանրամասն տե՛ս **C.E. Bosworth**, “Al-Thughur. 1. In the Arab-Byzantine frontline region,” in: *EI2*, vol. 10 (T-U) (Leiden: E.J. Brill, 2000), pp. 446–447, *ինչպես նաև նույնի*՝ “The city of Tarsus and the Arab-Byzantine Frontiers in Early and Middle ‘Abbasid Times”, *Oriens*, vol. 33 (1992), pp. 268–286; **M. Bonner**, “The Naming of the Frontier: ʿAwāšim, Thughūr, and the Arab Geographers”, *BSOAS*, vol. 57.1 (1994), pp. 17–24; **Ṣābir Muḥammad Diyāb**, *Al-Muslimūn wa ḡihādūhum ḍidda al-Rūm fī Armīnya wa al-tuǧūr al-Ġazariyya wa-l-Šāmiyya ḥilāla al-qarn al-rābiʿ al-ḡirī* (al-Qāhira, Maktabat al-Salām al-ʿĀlamiyya, 1984), *ինչպես նաև Զ.Թ. Նալբանդյան*, Արաբական աղբյուրները, էջ 151–152; **А. Тер-Гевондян**, *Армения и Арабский Халифат* (Ереван, Изд. АН АССР, 1977), с. 153–154, *ինչպես նաև նույնի*՝ «Արաբական սահմանային ամրությունների գոտին (Սուղուր)», *ՊԲՀ*, № 2 (1981), էջ 134–149 և **Saʿīd Abd al-Fattāḥ ʿĀšūr**, *Buḥūt wa dirāsāt fī tāriḥ al-ʿuṣūr al-wustā* (al-Qāhira, 1977), ք. 225–227:

արևելքում ձգվում մինչև al-Darbandāt-ի լեռներ¹¹², հյուսիսում՝ մինչև Կարամանների երկիր (բնագրում՝ bilād Ibn Qaramān), իսկ արևմուտքում մինչև Ռումի [երկրի] ծովափնյա շրջանները՝ հասնելով մինչև ալ-Ալաիյա¹¹³ և Անտալիա: Նրա և «խալամի երկրների» միջև բաժանարարն էր Ջահան գետը (նույն է, թե Պիրամոսը): Ալ-Նասիր սուլթանի կառավարման վերջին օրերին գրավվել են նրանից անդին ընկած մի շարք շրջաններ՝ այդ թվում նրանցից կարևորագույնը՝ Այասը: Դրանց որոշ մասը գրավվել էր տակավին ալ-Մանսուր Լաջինի իշխանության օրոք, որոնց վրա փոխարքա էր կարգվել Ասանդամուր ալ-Քուրջին: [Սակայն] այն բանից հետո, երբ սպանվել էր Լաջինը, իսկ երկիրը թուլացել, այդ հողերը հետ էին վերագարծվել հայերին Ասանդամուրի [նենգ] համաձայնությամբ: Հայերի վրա հարկ կա սահմանված, որ հասել էր 1.200.000 դիրհամի, որը սակայն հետո նվազեցվել է: Նրանք այժմ մերթ հնազանդության և մերթ ըմբոստության մեջ են:

Նրանց վրա բռնի իշխանություն և ազդեցություն ունեին «Հուլադույան տան» արքաները (իմա՝ մոնղոլ իլխանները – Գ.Գ.), քանի դեռ չէր թուլացել նրանց գործնականը, նվազել նրանց սաստկությունը, նրանց (հայերի – Գ.Գ.) անտառը չէր դատարկվել նրանց առյուծներից (բնագրում՝ qabla... huluwwi ğābihim min qaswaratihim): Արդ, նրանք իսլամի ամենավտանգավոր թշնամիներն են: Ալ-Սալահիյայում նրանց գործածի խարանը դեռ մնում է¹¹⁴, և եթե

¹¹² Հավանաբար նկատի են առնված Տավրոսյան լեռներն առհասարակ:

¹¹³ Ալ-Ալաիյան (Կալոնորոս, այժմ՝ Ալանյա) հին բերդաքաղաք էր Փոքր Ասիայի հարավային շրջանում՝ Միջերկրական ծովի ափին: ԺԲ դարի վերջերին և ԺԳ դարի սկզբներին պատկանել է Կիո Վարդ անունով հայազգի իշխանին, ումից 1221 թ. այն խլել է Ռումի սելջուկյան սուլթան Քալկուբադ Ա-ն (կառ. 1220–1237 թթ.): 1292–1427 թթ. եղել է Կարամանների պետության կազմում, ապա անցել Մամլուքյան սուլթանությանը և վերջապես 1471 թ. նվաճվել Օսմանյան պետության կողմից: Ամրոցի և Կիո Վարդի մասին տես **T.S.R. Boase**, “Gazetteer,” in: *The Cilician Kingdom of Armenia*, ed. by Boase T.S.R. (Edinburgh & London: Scottish Academic Press, 1978), pp. 149–150; **Fr. Taeschner**, “Alanya,” in: *EI2* (A-B), vol. 1 (Leiden: E.J. Brill, 1986), pp. 354–355; **Cl. Cahen**, *La Turquie*, p. 74, 136 (Կիո Վարդին «հույն» է համարել); **A. Eastmond**, “Gender and Patronage between Christianity and Islam in the thirteenth century,” in: *Change in the Byzantine world in the twelfth and thirteenth centuries*, eds. A. Ödekan, E. Akyürek, N. Necipoğlu, First International Sevgi Gönül Byzantine Studies Symposium (Istanbul, 2010), p. 78; **Cl. Mutafian**, *L’Arménie*, p. 118–119:

¹¹⁴ Խոսքը 1300 թ. իլխան Ղազանի (կառ. 1295–1304 թթ.) և նրա դաշնակիցների կողմից Դամասկոսի գրավման ժամանակ ալ-Սալահիյա (al-Ṣalāhiyya) արվարձանի ավարառության և դրանում հայոց Հեթում Բ արքայի մասնակցության մասին է: Եվ քանի որ Ղազանն ու մոնղոլներն այդ ժամանակ արդեն պաշտոնապես մուսուլման էին, Դամասկոսում կատարված շարագործությունների ամբողջ մեղքը մուսուլման մատենագիրների մեծ մասը բարդել է հենց հայերի (և վրացիների) վրա: Ալ-Սալահիյայի գրավմանը վերջինն ու առավել հանգամանալից անդրադարձած հետազոտողն Անգուս Սոյուարտոն է իր *The Armenian Kingdom and the Mamluks: War and Diplomacy during the Reigns of Het’um II (1289–1307)* գրքում: Իր շարադրանքը նա խարսխել է հիմնականում երեք-չորս պատմիչների՝ ալ-Յունինիի, ալ-Մակրիզիի, ալ-Այնիի, Ղաթի Մուֆադդալի հաղորդումների վրա: Ալ-Սալահիյա թաղամասի ավարառության մասին նրա

կարողանային, ապա կշնչեին Դամասկոսի բոլոր հուշարձանները և մոռացութեան կտային նրա մասին [բոլոր] վկայութիւնները: Նրա (Կիլիկիո) արքան այժմ խնամիութիւն է հաստատել Կիպրոսի տիրոջ հետ մի բանի համար, որ իրենց համար [մինչ այդ] անհասանելի էր, և մի նպատակի համար, որ իրենց համար անթույլատրելի էր (li-amrin la balagāhu, wa-qasḍin la suwwigāhu)¹¹⁵:

Մեր սուլթանը Սսի իշխողի հորից (խոսքն Օշինի մասին է, կառ. 1308–1320 թթ. – Գ.Գ.) մի կտակ էր ստացել, կտակ, որի վրա երգվել էր նրա թագավորութեան ժողովուրդը՝ որպէս միջոց իր պետութեան գոյութեան համար: Ուստի և իմ ձեռքով (իմա՝ ալ-Ումարիի – Գ.Գ.) հոր փոխարեն նշանակման կարգադրութիւն (taqlīd) գրվեց նրա որդու համար: Նրա համար հաշտութեան պայմանագիր պատրաստվեց, և հաշտութիւն կնքեց, նրան պատվո հագուստներ հագցրեցին, և հագավ, նա համբուրեց հողն ու սկսեց ծառայել»¹¹⁶:

քննարկումն անշուշտ կշահեր, եթէ նա անդրադառնար նաև մյուս մամլուքյան պատմիչների մոտ դեպքի առնչութեամբ պահպանված ոչ պակաս ուշագրավ վկայութիւններին: Նրա աչքից վրիպել է նաև իլխանների պաշտոնական պատմիչ Ռաշիդ ալ-Դինի արժեքավոր վկայութիւնը հիշյալ միջադեպի վերաբերյալ. «[699 թ. Ռաբի ալ-ախիր] ամսի 18-ին (1300 թ. հունվարի 12-ին) երեքշաբթի օրը, ի կատարումն սուլթանի (իմա՝ Ղազանի-Գ.Գ.) այն հրամանի, թէ գնան այգիներն ու գերաններ կտրեն ամրոցի գրավման համար քարանետ մեքենաներ պատրաստելու համար, հայերի, վրացիների, ինչպէս նաև իսլամից հրաժարված մի խումբ հեծյալներ սուրացին Ջաբալ ալ-Սալահիլյա և այնտեղ սպանող, թալան և գերեվարութիւններ կազմակերպեցին: Այս դեպքի պատճառով «Իսլամի միապետը» (բնագրում Padešāh-e Islām) մեծ գայրույթ ապրեց անհապաղ հրամայեց Քիթբուլայի որդի Կոնիչիի որդի Արաղին, որ [քաղաքի] բնակչութեանը պաշտպանի, իսկ ավարառուներին մահապատժի ենթարկի: Երբ վերջինս այնտեղ եկավ, զինվորներն արդեն ամայացրել էին ամեն ինչ և հեռացել: Ուստի ստիպված հետո փնտրում էին հայերի և վրացիների կացարանները և նրանցից գերիներին խլելով՝ ազատ արձակում: Տե՛ս Rašīd al-Dīn, Ġāmī al-Tawārīḥ, ց. 2, be-kūšē-e Bahmān Karīmī (Tehrān, Eqbāl, 1960), ց. 942, ինչպէս նաև Рашид-ад-Дин, Сборник летописей, том III, с. 185: Կարելի էր անդրադառնալ նաև Դարդելի հիշատակութեանն ալ-Սալահիլյալում տեղի ունեցած դեպքերի մասին: Տե՛ս Ch. Köhler, “Chronique d’Arménie par Jean Dardel”, RHC d.a, t. 2, Paris, 1906, p. 12 (հետալսու՝ Jean Dardel, Chronique d’Arménie), ինչպէս նաև Յովհաննու Դարդելի ժամանակագրութիւն Հայոց (Ս. Պետրբուրգ, տպարան Ի. Ն. Սկորոխոդովի, 1891), էջ 20: Ուստի կարծում ենք, որ Ստյուարտի գրքի՝ Ղազան խանի ասորիքյան արշավանքներին հայերի մասնակցութեանը նվիրված մասերի շարադրանքը կարելի է լրացնել մյուս մամլուքյան աղբյուրներից քաղված տեղեկութիւններով:

¹¹⁵ Նախադասութեան վերջնամասը դուշմն-ինչ անորոշ է: Ըստ երևութիւն ցանկանում է ասել, որ երկու քրիստոնյա արքաները խնամիութիւն են հաստատել որևէ միասնական նպատակի կամ շահի համար: Իզուր չէ, որ ալ-Կալկաշանդիի մոտ համապատասխան տեղում պարզապէս «...Կիպրոսի տիրոջ հետ, որպէսզի այդ կերպ ուժեղանա» է (li-yataqawwiya bihi): Հետևաբար, կամ ալ-Ումարիի երկի՝ ալ-Կալկաշանդիի օգտագործած օրինակում իսկապէս այսպէս է եղել, կամ էլ նա ինքն է վերաձևակերպել նախադասութիւնը՝ փորձելով փոքր-ինչ պարզեցնել այն:

¹¹⁶ Տե՛ս al-ʿUmārī, Al-Tārīḥ, ց. 80–83: Այս կտակի և «նշանակման կարգադրութեան» (taqlīd) տրման հանգամանքներին վերևում արդեն արդրադարձել ենք:

Այս ներածական ակնարկից հետո մատենագիրը վերջապես անցնում է հայոց արքաների հետ մամուլքյան սուլթանների նամակագրությանը: Ալ-Ումարիի, Իբն Նագիր ալ-Ջալչի և ալ-Կալկաշանդիի ձեռնարկներում, ինչպես արդեն վերևում ենք մի քանի անգամ ակնարկել, հայոց արքային և մյուս քրիստոնյա տիրակալներին ուղղված նամակների բուն տեքստերը բերված չեն, այլ միայն նրանց ուղղված դիմումների (rasm al-mukātaba) ու մաղթանքների (ad'iyya) օրինակները: Այսպես, ըստ ալ-Ումարիի՝ Հայոց արքային հղված նամակներն իր գործունեության օրոք սկսվել են հետևյալ դիմումով. «Այս նամակը հղված է մեծարգո արքային (ḥaḍrat al-malik)՝ պատվարժան (al-ḡalīl), արի (al-batal), խիզախ (al-bāsil), քաջակորով (al-humām), կտրիճին (al-samayda'), առյուծին (տեքստում նույնիմաստ երկու բառ՝ al-ḍirḡām, al-ḡaḍanfār)՝ Օշինի որդի Լևոնին (Lifūn ibn Ūšīn¹¹⁷)՝ քրիստոնեական համայնքի փառք (fahṛ al-milla al-masīḥiyya), քրիստոնեական համայնքի ապաստան (ḍuḥr al-umma al-naṣrāniyya), կնքավորության հենասյուն (imād banī ma'mūdiyya՝ կնքված կամ մկրտված մարդկանց), սուլթանների ու արքաների ընկեր (ṣadīq al-mulūk wa-l-salāṭīn) ...»¹¹⁸: Այստեղից նախ և առաջ, պարզ է դառնում, որ դիվանագիտական նամակագրության այս բանաձևն օգտագործվել է «Օշինի որդի Լևոնին»՝ Լևոն Գ արքային (կառ. 1320–1342 թթ.) գրելու համար: Աչքի զարնոզ երկրորդ հանգամանքն այն է, որ ըստ ալ-Ումարիի՝ հայոց արքայի հետ նամակագրության հիշյալ բանաձևը որոշ մասնակի փոփոխություններով օրինակ է ծառայել նաև որոշ այլ քրիստոնյա արքաների հետ նամակագրության համար՝ ինչպես օրինակ «Մինուպի տիրոջ» (malik Sīnūb, որ Տրապիզոնի կայսրն է)¹¹⁹, «Հոռոսի արքայի» (malik Rūdis) և «ալ-Մաստաքա կղզու տիրոջ» (ṣāḥib ḡazīrat al-Maṣṭaka)¹²⁰: Նույնը վերաբերում էր նաև «Դունկուլայի տիրոջը» (կամ որ նույնն է՝ Նուբիայի արքային), միայն եթե վերջինս քրիստոնյա էր¹²¹: Ուշագրավ է, որ Հոռոսի արքայի մասին խոսելիս ալ-Ումարին, նշելով, որ վերջինիս դիմումաձևը

¹¹⁷ Ալ-Կալկաշանդիի մոտ գրչագրական սխալով՝ Lifūn ibn Ūšīn: Տե՛ս al-Qalqašandī, Ṣubḥ al-ā'šā, ց. 8, ց. 31:

¹¹⁸ Տե՛ս al-'Umārī, Al-Ta'rif, ց. 83: Ալ-Կալկաշանդիի և ալ-Սահմավին պարզապես մեջբերում են ալ-Ումարիին՝ ոչինչ չավելացնելով: Հմմտ. al-Qalqašandī, Ṣubḥ al-ā'šā, ց. 8, ց. 31 և al-Sahmāwī, Al-Ṭaqr al-bāsim, ց. 2, ց. 814:

¹¹⁹ Տե՛ս al-'Umārī, Al-Ta'rif, ց. 84, ինչպես նաև P. Шукуров, Великие Комнины, с. 170–177:

¹²⁰ Խոսքն ամենայն հավանականությամբ էգեյան ծովում գտնվող Քիոս կղզու մասին է, որը հնուց հայտնի էր մագոսաքյան պիստակենի կամ մաստիկենի (լատ.՝ Pistacia lentiscus, հայերեն այլ կերպ՝ նաև «հերձի») կոչված ծառերից ստացվող կաշուն նյութի արտադրությանը: Հմմտ. al-'Umārī, Al-Ta'rif, ց. 85, ի. 4: Ի դեպ, այստեղից է ծագում նաև հայերեն «մաստակ» բառը: Տե՛ս նաև Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. Գ (2-2) (Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1977), էջ 223:

¹²¹ Al-'Umārī, Al-Ta'rif, ց. 48.

կազմվում է «Սսի իշխողի» դիմումաձևի նմանությամբ, հավելում է. «... այն տարբերությամբ, որ նրանում չի նշվում mu'izz Bābā Rūmīyya («Հռոմի պապի աշակից») տիտղոսը, ինչպես նաև կրճատվում են մի քանիսը նույնպես, որովհետև նա չի կրում դրանք»¹²²: Ալ-Կալկաշանդին բժախնդրորեն արձանագրել է ալ-Ումարիի այս ակներև վրիպումը՝ գրելով. «[Սակայն] նա Ta'rif-ում՝ Սսի իշխողի հետ գրագրության մեջ, չի հիշատակել «Հռոմի պապի աշակից» տիտղոսը, հետևաբար նա այդ ասելու կարիքն [այստեղ] առհասարակ չուներ»¹²³:

Այժմ հիմք ընդունելով ալ-Ումարիի բերած վերոհիշյալ բանաձևը՝ քիչ ավելի մանրամասն անդրադառնանք մամլուքյան պաշտոնական նամակներում հայոց արքային վերագրված տիտղոսներին և պատվանուններին¹²⁴.

• al-ḥaḍra («մեծարգո») տիտղոսը մամլուքյան ժամանակաշրջանում գործածական էր ինչպես քրիստոնյա արքաներին, այնպես էլ մուսուլմաններին դիմելու համար: Ալ-Կալկաշանդին տարբերակում է al-ḥaḍra տիտղոսի հինգ մակարդակ, որ արտահայտվում էին նրան հավելված հատուկ մակդիրների միջոցով (առաջին՝ al-ḥaḍra al-‘āliyya «գերարգո», երկրորդ՝ al-ḥaḍra al-‘iliyya «վսեմափառ», երրորդ՝ al-ḥaḍra al-sāmiyya «մեծափառ», չորրորդ՝ al-ḥaḍra al-mukarrama «հարգամեծար», հինգերորդ՝ al-ḥaḍra al-muwaqqara «մեծապատիվ»), որոնցով էլ արտահայտվում էր նրանց գերազանցությունը նույն տիտղոսը կրող մյուս տիրակալների նկատմամբ¹²⁵: Հայոց արքային ուղղված rasm-ում այս կապակցություններից ոչ մեկը գործածված չէ:

• al-malik-ը («արքա»), չնայած takfūr տիտղոսին համարժեք լինելու վերաբերյալ ալ-Ումարիի վերոբերյալ պնդմանը, այնուամենայնիվ գերադասելի էր համարվում պաշտոնական փաստաթղթերում՝ հայոց միապետի նկատմամբ մամլուքյան իշխանությունների կեղծ լոյալությունը ցույց տալու արարողակարգային պահանջը բավարարելու համար: Սրա մեկ այլ վառ օրինակը իբն Աբդ ալ-Ջահիրի Tašrif al-ayyām երկում պահպանված 1285 թ. հայ-մամլուքյան հաշտության պայմանագիրն է: Մատենագիրը հաշտությանը նախորդած իրադարձությունների մասին խոսելիս Լևոն Բ-ին (կառ. 1269–1289 թթ.) անվանում է al-takfūr ṣāhib al-Sīs («Սսի տեր թաքֆուր»), բայց պայմանագրի բուն

¹²² Անդ, §. 85:

¹²³ Al-Qalqaṣandī, Ṣubḥ al-‘āṣā, ց. 8, §. 50.

¹²⁴ Արաբական տիտղոսների և պատվանունների համար հայերեն ճշտգրիտ համարժեքներ գտնելը բարդ խնդիր է: Այնուհանդերձ, փորձել ենք ընտրել հնարավորության սահմաններում այնպիսի բառեր և մակդիրներ, որ քիչ թե շատ հարազատորեն կվերարտագրեին արաբերեն բնօրինակների (մասնավորապես համանիշ տիտղոսների) իմաստային նրբերանգները:

¹²⁵ Անդ, ց. 6, §. 174–176, ինչպես նաև Ḥasan al-Bāṣā, Al-Alqāb al-islāmiyya fī al-tārīḥ wa-l-watā‘iq wa-l-aṭār (al-Qāhira, Dār al-fanniyya, 1989), §. 260–264:

տեքստում Կիրիկիո միապետի համար գործածված է malik տիտղոսը՝ malik al-arman (այն է՝ «հայոց արքա») բանաձևով¹²⁶։

- al-ğalīl-ը նույնպես կիրառվում էր, ինչպես մուսուլման, այնպես էլ քրիստոնյա տիրակալներին դիմելու համար։ Հայոց արքայից բացի՝ ալ-Ումարիի Al-Taʿrīf-ում այդ տիտղոսով են բնորոշված նաև «Թաքրուրի արքան» (ներկայիս Սենեգալի տարածքում), «Բարնուի արքան» (ներկայիս Չադի տարածքում), «Քանեմի արքան» (ներկայիս Մալիի տարածքում), «Դունկուլայի արքան» (Նուբիան է կամ Սուդանը), ինչպես նաև Բյուզանդիայի կայսրը, վրաց արքան, «Սինոպի արքան» և այլոք։

- al-baṭal-ը, al-bāsil-ը, al-humām-ը, al-samayda'-ը և առհասարակ «քաջություն» կամ «խիզախություն» արտահայտող տիտղոսները, ընդհակառակը, առավելապես օգտագործվում էին ոչ մուսուլման տիրակալների վերաբերմամբ¹²⁷։ Ավելին՝ ալ-Ումարիի ձեռնարկում al-baṭal-ը գործածված է սոսկ հայոց արքայի համար, բայց և ենթադրվում է, որ կիրառվել է նաև այն տիրակալների դեպքում, որոնց ուղղված նամակների դիմումաձևերի համար օրինակ էր ծառայում «Սսի իշխողի» հետ գրագրության բանաձև-կաղապարը։ Al-bāsil-ը և al-humām-ը հայոց արքայից բացի վերագրված են նաև «Եթովպիայի արքայից արքային» (malik muluk al-Ḥabaša կամ ṣāhib Amhara), բյուզանդական կայսրին, վրաց արքային, ինչպես նաև Անդալուսի կամ Իսպանիայի (Azfunš malik al-Andalus) և Ֆրանսիայի արքաներին (al-Raydafrans), al-samayda'-ը՝ միայն Եթովպիայի և վրաց արքաներին։

- al-ḡirgām և al-ğaḍanfar տիտղոսները, որ հոմանիշներ են և «առյուծ» են նշանակում (ալ-Կալկաշանդիի մոտ՝ min asmā' al-asad), նույնպես նախատեսված էին «անհավատների հետ նամակագրության» (fi mukātabāt al-kuffār) համար¹²⁸։ Դրանք Հայոց արքայից բացի վերագրված են բոլոր այն տիրակալներին, որոնց վերևում արդեն թվել ենք որպես al-bāsil և al-humām տիտղոսների կրողներ։

Վերոբերյալ պարզ տիտղոսներից (alqāb) բացի՝ հայոց արքային տրված են նաև 4 բարդ կամ բաղադրյալ պատվանուններ (nu'ūt)։ Դրանցից առաջին երեքը նախատեսված էին բացառապես քրիստոնյա միապետներին դիմելու համար, իսկ վերջինը՝ ṣadiq al-mulūk wa-l-salāṭīn-ը, կիրառելի էր առհասարակ ոչ մուսուլման տիրակալներին դիմելու դեպքում։

¹²⁶ Ibn 'Abd al-Zāhir, Taṣrīf al-ayyām wa-l-'uṣūr fi sīrat al-Mālik al-Manṣūr, bi-tahqīq Murād Kāmil, Muḥammad 'Alī al-Naḡḡār (al-Qāhira, 1961), ք. 92, 94.

¹²⁷ Ḥasan al-Bāṣā, Al-Alqāb al-islāmiyya, ք. 225.

¹²⁸ Տե՛ս al-Qalqaṣandī, Ṣubḥ al-a'šā, ց. 6, ք. 81։ Այս կանոնը հավանաբար ուժի մեջ է մտել ԺԳ դարի վերջերին, քանի որ, ինչպես ներքևում ենք տեսնելու, պաշտոնական գրություններում իրեն al-ḡirgām տիտղոսով է բնորոշել, օրինակ, ալ-Աշրաֆ Նալիլ սուլթանը։

Հայոց արքային ուղղված նամակների դիմումաձևից զատ՝ ալ-Ումարին պահպանել է նաև նրան ուղղված այսպես ասած «ըղձական աղերսների և [բարե]մաղթանքների» (al-du'ā) բանաձևերի օրինակներ՝ ընդհանուր հաշվով յոթը: Շատ հնարավոր է, որ այդ բոլորը քաղված լինեն Լևոն Դ-ին իրապես ուղարկված յոթ տարբեր նամակներից: Հարկ ենք համարում դրանք բոլորը ներկայացնել թարգմանությամբ:

«Թո՛ղ Ալլահը նրան հնազանդության բախտին արժանացնի, որի պարտավորությունը թո՛ղ պաշտպանի նրան և պահպանի վատ ծառայելու վտանգներից, և թո՛ղ նրա իշխանությունը նրան հոգու խաղաղություն և հարստություն բերի:

Մեկ ուրիշը: Թո՛ղ որ նա, ով մեր մեջ է, չկորցնի իր բարեհոգությունը, որն օգնում է նրան, իր անվտանգությունը, որով երաշխավորում է իր հարևանի անվտանգությունը, իր ապահովությունը, որով ընդարձակում է իր որջը, և ներողությունը, որ նրան կպաշտպանի [երկրային] աշխարհում նախքան Դատաստանի օրը, երբ կրակի համար վառելիք կլինեն մարդիկ և քարերը:

Մեկ ուրիշը: Թո՛ղ Ալլահը պահպանի նրան իր հավատարմության համար, որ արտահայտում է, ծառայելու նրա պարտականության համար, որ կատարում է, ապահովության այն պարտքի համար, որ տալիս է որպես հարկ¹²⁹ [զանազան] թանկագին ընծաների (բնագրում՝ taxā'if) հետ միասին:

Մեկ ուրիշը: Թո՛ղ Ալլահը ցույց տա նրան այն, ինչը նրան հեռու կպահի սրաշեղբերի փորձությունից, երբ այն կգա, և այն նիզակից, որն անգամ ծովը չի կլլում և այն հեղեղից, որի ճանապարհին ոչինչ չի կանգնում և ոչ էլ դանդաղ քայլում:

Մեկ ուրիշը: Թո՛ղ Ալլահն ամեն կերպ նրա իսկ շողոքորթությամբ պաշտպանի նրա հավատի ժողովրդին, ամեն միջոցով ապահովագրի նրան սայթաքումներից՝ մեր հաղթական զորքերի վախից, և իր ճշմարիտ անաչառությամբ թույլ չտա մեր անկասելի զորքերի ուղարկումը, որոնց սկիզբը Յփրատի մոտ է, վերջը՝ Նեղոսի:

Մեկ ուրիշը: Թո՛ղ նա շարունակի իրեն պաշտպանել իր հպատակությանամբ, առաջապահ նժույզները զարդարված լինեն սանձերով, և խուսափի [մեր] բանակի մոլեգնությունից, քանզի այդժամ էլ չի մնա ոչինչ, քան երեք ընտրություններից մեկը՝ սպանվել, գերվել կամ հեղինակագրկվել:

¹²⁹ Այստեղ «հարկ» թարգմանվածը բնագրի al-qatī'a է, որի տեղում ալ-Կալկաշանդիի մոտ al-wazīfa է, որը նշանակում է «պաշտոն»:

Մեկ ուրիշը: Թո՛ղ Ալլահը հեռու պահի նրան վատ մտքերից և շարիքից, որի համար օրինակ է ծառայում սատանան, [և թույլ չտա], որ գրավվեն նրա ամրոցները՝ առաջին հերթին Սիսը»¹³⁰:

Հայոց արքաների հետ նամակագրության ալ-Ումարիի բերած բանաձևը գործածական է եղել մինչև ԺԴ դարի 60-ական թվականները¹³¹: Բայց թե երբ է այն «ուժի մեջ մտել» և գործել է արդյոք, ևևոն Դ-ից առաջ՝ օրինակ նրա հայր Օշինի թագավորության շրջանում: Իր որդու համար Օշինի գրած և սուլթանին ուղարկած կտակի վերաբերյալ վկայությունից բացի ալ-Ումարին ոչինչ չի հաղորդում: Այստեղ մեզ օգնության են գալիս մամլուքյան դարաշրջանի պատմագրական երկերը, որոնք, ինչպես նշել ենք, նույնպես արժեքավոր նյութ են

¹³⁰ *Տե՛ս al-‘Umāri, Al-Ta’rīf, ֆ. 83-84: Հմմտ. Վ. Լանգլուայի թարգմանության հետ. V. Langlois, Le trésor, p. 234-235:*

¹³¹ Բացի հայոց արքաների հետ նամակագրության վերաբերյալ հատվածից, ալ-Ումարիի երկում «Սսի իշխողի» վերաբերյալ մեկ այլ հիշատակություն ևս կա: Խոսելով *mufāsahā-ների* (այն է՝ հաշտության պայմանագրի կամ պայմանավորվածության շեղարկման, գրոցացման, անվավեր ճանաչման մասին գրություններ) տեսակների մասին մասին՝ հեղինակը մի օրինակ է բերում: «Իմ հորեղբայր Շարաֆ ալ-Դին Աբու Մուհամմադ Աբդ ալ-Վահհաբը, Ալլահը ողորմի նրան, իսլամական զորքերի Մալաթիա մտնելու տարում՝ [հիշրայի] 714 թ. (1314/1315 թթ.), մի *fasḥ* («միակողմանի շեղարկում») է գրել «Սսի իշխող» թաքֆուրի համար, ինչի պատճառը նրա հարկաչափի ավելացումն էր (*lianna zāda qatī‘atuhā*)», - գրում է ալ-Ումարին, բայց, ցավոք, չի մեջբերում այդ գրության տեքստը: Տե՛ս Անդ, ֆ. 214-215, ինչպես նաև *al-Qalqaṣandī, Ṣubḥ al-a‘šā, ǧ. 14, ֆ. 108: Աբդ ալ-Վահհաբի կենսագրությունը տե՛ս Ibn al-Suqāṭī, Tālī Kitāb wafayāt al-a‘yān, bi-tahqīq Ğaklīn Sublit (Jacqueline Sublet) (Dimašq, 1974), ֆ. 181: Հայաշատ Մալաթիայի կամ Մելիտինեի դեմ ուղղված այս արշավանքը գլխավորում էր Դամասկոսի փոխարքա էմիր Սալֆ ալ-Դին Թանկիլը: Հայկական աղբյուրներից արշավանքի և քաղաքի հայ բնակչության ճակատագրի մասին ակնարկում են միայն Սամվել Անեցու մի շարունակող («Յասմ ամի առաւ մայրաքաղաքն Մելտենի ի Հայոց եւ ի Հագարացոց եւ խոտոր գերութեամբ վարեցան լճգիպտոս») և ԺԴ դարի մի անանուն ժամանակագրություն («Ի թվին ՉԿԴ ի մայիսին եկն Շամին հեծելն և էառ զՄէլգիին և սպան բազում և տարաւ գերի»): Տե՛ս Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ, ժամանակագրութիւն, էջ 273 և 430 (ծնթգր. 555) և ՄԺ, հտ. 1, էջ 110: Իսկ մամլուքյան պատմիչները՝ Աբու ալ-Ֆիդան (անմիջական մասնակից է), ալ-Նուվայրին, Իբն ալ-Դավադարին, ալ-Բիրզալին, Իբն Հաբիբը, ալ-Մակրիզին և այլոք հետաքրքրական և բավական մանրամասն տեղեկություններ են հաղորդում արշավանքի պատճառների, քաղաքի առման և հաջորդած անցքերի մասին, որոնց լուսաբանմանը մենք առանձին հոդված ենք նվիրել (Գ. Դանիէլեան, «Մալաթիայի գրաւումը»), որը մի անգամ արդեն հղել ենք վերևում: Աբու ալ-Ֆիդայի պատմութունից ծաղկաքաղ թարգմանություն կատարած Հակոբ Նալբանդյանի աչքից այս խիստ կարևոր հատվածը վրիպել է: Խորամուտ չլինելով արդեն իսկ քննարկված հարցերի մեջ՝ միայն հարկ կհամարենք նշել, որ Մալաթիայի գրավման մասին պատմում է նաև իլխանական պատմիչ պարսիկ Քաշանին, ում հաղորդած տեղեկությունը նույնպես բացահայտում է Աբդ ալ-Վահհաբի գրած *fasḥ*-ի էությունը: Ըստ նրա՝ արշավանքից հետո մամլուքները Օշին արքային (բնագրում՝ *takfūr-e Sīs wa-Ayās*, այն է՝ «Սսի և Այասի թաքֆուրին») կիլիկիա չմտնելու դիմաց «բռնությանը և ճնշումով» (*be-qāhr wa-zaǧr*) պարտադրել են նոր հարկաչափ՝ «մեկ միլիոն դիրհամ»: Տե՛ս *Kāšānī, Tārīḥ-e Ūlǧāyūtū, be-ehtemām Mahīn Hamblī (Tehrān, 2005), ֆ. 172:**

պարունակում հայ-մամլուքյան դիվանագիտական նամակագրության վերաբերյալ:

Ա 5. Մամլուքյան ժամանակագրությունների նյութը.

Կիրիկյան Հայաստանի և Մամլուքյան սուլթանության դիվանագիտական շփումների վերաբերյալ պահպանված հիշատակությունները մամլուքյան պատմագրության մեջ բազմաթիվ են: Դրանց բոլորի քննարկումն այս հետազոտության ծիրում տեղավորել հնարավոր չէ: Հետևապես դրանցից կառանձնացնենք կարևորագույն մի վավերագիր, որը մամլուքյան պատմական գրականության մեջ միակ քիչ թե շատ ամբողջական տեսքով պահպանված նամակն է: Այն մեզ պատկերացում կտա Լևոն Դ-ից առաջ հայոց արքաների հետ մամլուքյան իշխանությունների վարած նամակագրության կաղապարների մասին՝ հնարավորություն տալով տեսնել դրանց և Լևոն Դ-ին ուղղված նամակների դիմումաձևերի տարբերությունները, նմանությունները և պատմական զարգացումը: Խոսքը, ինչպես վերևում մի անգամ արդեն ակնարկել ենք, մամլուք սուլթան ալ-Աշրաֆ Խալիլի 1291 թ.՝ Աքրայի գրավումից հետո, հայոց արքա Հեթում Բ-ին ուղարկած մի նամակի մասին է, որ իրենց երկերում մամլուքյան շրջանի հեղինակներից պահպանել են ԺԴ դարի մի անանուն ժամանակագիր, Իբն ալ-Դավադարին և Իբն ալ-Սարրաջ ալ-Դիմաշկին (մահ. 1346 թ.):

Նամակում (բնագիրն ու թարգմանությունը տե՛ս հավելված Բ-ում) ալ-Աշրաֆը տեղեկացնում է «հայոց թաքֆուր արքային» (բնագրերում՝ al-malik takfūr al-armān կամ գրչագրական սխալով՝ Arṣūn Sarmān) քաղաքի առման մասին և ահաբեկում, որ հայոց թագավորությունն Աքրայի բախտին կարժանացնի՝ որպես Մամլուքյան սուլթանությանը սահմանակից մնացած վերջին քրիստոնյա պետության: «Բե՛ր առաջին և երկրորդ հարկերը (նկատի ունի երկու տարվա հարկը միանգամից - Գ.Դ.) և ինքդ անձամբ ներկայացի՛ր մեզ (բնագրում՝ ilā abwābina al-‘āliya, այն է՝ «մեր բարձր դուռ» - Գ.Դ.),- ասվում է այդ նամակում,-ու թե հնազանդվեցիր սատանայի հետ դաշնակցությանը, ապա սուզդ կտարածվի Սսի երկրի վրա»¹³²: Բայց հատկանշական է, որ հիշյալ հեղինակներից Անանուն հեղինակի և Իբն ալ-Դավադարիի պահպանած տեքստերն իրենց

¹³² Տե՛ս al-Mu‘allif al-maḡhūl, ք. 8; Ibn al-Dawādārī, Kanz al-durar, ց. 8, ք. 320-321: 1292 թ. գրված մի հիշատակարան վկայում է. «Ժսկ անուն սուլդանին որ զայս գործեաց աղէտ և սուզ քրիստոնէից՝ Մէլիք Աշրաֆ, որդին Ալճե (պետք է լինի Ալֆէ - Գ.Դ.), և առաւել գոռայր, իբրեւ զամպ կարկտածին լցեալ բարկութեամբ կայծակամբ, և ահաբեկեալ դողացուցանէր երկիրս Հայոց,

ձևով և կառուցվածքով մի տեսակ թերի են: Մասնավորապես արձանագրված չէ նամակի դիմումաձևը (‘unwān). Թվարկված չեն ո՛չ սուլթանի և ո՛չ էլ հասցեատիրոջ՝ Հեթում Բ-ի տիտղոսներն ու պատվանունները (alqāb, nu’ūt): Այս բացը մասամբ լրացվում է երրորդ սկզբնաղբյուրով, որում հայոց արքային ուղղված նամակի առկայությունը փոքր-ինչ տարօրինակ կարող է թվալ:

Խոսքն Իբն ալ-Սարրաջի՝ Մուհամմադ Իբն Ալի Իբն Աբդ ալ-Ռահման ալ-Կուրաշիի¹³³ “Tuffāh al-arwāh wa-miftāh al-arbāh” («Խնձոր հոգիների համար և բանալի օգուտի») գրքի մասին է, որն իրականում նրա Tašwīq al-arwāh wa-l-qulūb («Հոգիների և սրտերի հետաքրքրաշարժություն») երկի հատորներից մեկն է: Tuffāh al-arwāh-ը սուֆի սրբերի և դերվիշների գործունեության և նրանց վերագրվող հրաշքների մասին ավանդությունների և պատմությունների ժողովածու է: Աշխատությունը հատկապես արժեքավոր է հեղինակի կյանքի օրոք ապրած և գործած ալ-Ռիֆայյա (al-Rifā‘iyya) միաբանության (ṭarīqa) ներկայացուցիչ սուֆի գործիչների մասին կենսապատում տեղեկությունների առումով: Նրանցից մեկի մասին պատմում էլ Իբն ալ-Սարրաջը խոսում է Աբրայի առման և դրանից հետո Հեթում արքային ուղարկված նամակի մասին՝ մեջբերելով դրա տեքստը՝ առանց իր սկզբնաղբյուրը նշելու¹³⁴:

Ոչ պակաս զարմանալի է, բայց փաստ, որ մեզ հասել է ալ-Աշրաֆ Խալիլի այս նամակի ևս մի տարբերակ՝ նրա լատիներեն թարգմանությունը (տե՛ս Պատկեր 2): Այն իր *Historia Anglicana* («Անգլիայի պատմություն») երկում պահպանել է Բարդուղեմեոս Կոտտոն (կամ Նորիչցի՝ *Bartholomaei de Cotton, Monachi Norwicensis*) անունով անգլիացի ժամանակագիրը¹³⁵: Երկը գրվել է 1292 թ.՝ որոշ հետագա հավելումներով: Այն բաղկացած է երկու մասից. առա-

և ներքին բազում հարկապահանջութեամբ զթագավորն Հայոց Հեթում, խնդրելով երկիր եւ գավառ եւ բերդորայան»: Տե՛ս **ՀԶԶ, ԺԳ դար**, կազմեց **Ա.Ս. Մաթևոսյան** (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984), էջ 702, ինչպես նաև՝ **Անդ**, էջ 746 (Հեթում Բ-ի ձեռքով գրված մի հիշատակարան):

¹³³ Իբն ալ-Սարրաջի մասին կեսագրական տեղեկությունները շատ սուղ են: Հայտնի է ու հաստատ, որ նա ալ-Քախթա (Հալեպից հյուսիս-արևելք) ամրոցի կադին է եղել, իսկ իր Tašwīq al-arwāh աշխատությունն ավարտին է հասցրել մոտ 1315 թ. Բեհեսնա (Բեհեսնի, Պեհեսնի) ամրոցում, որը մինչև 1293 թ. պատկանում էր հայոց թագավորությանը: Հեղինակի կենսամատենագիտությունը տե՛ս Tuffāh al-arwāh-ի վերջերս կատարված հրատարակության նախաբանում՝ **Ibn al-Sarrāğ**, Tuffāh al-arwāh wa-miftāh al-arbāh, bi-tahqīq Muḥammad b. ‘Abd Allāh Aḥmad (Bayrūt, 2020), թ. 5–24, ինչպես նաև թուրք հետազոտող էյուպ Օզթուրքի հետազոտության մեջ, որը մեզ անհասանելի է եղել: Տե՛ս **E. Öztürk**, Velilik ile Delilik Arasında; İbnu’s-Serrâc’ın Gözünden Muvellâh Dervişler (İstanbul, 2013):

¹³⁴ **Ibn al-Sarrāğ**, Tuffāh al-arwāh, թ. 303–306.

¹³⁵ **Bartholomaei de Cotton**, *Monachi Norwicensis, Historia Anglicana* (A.D. 449–1298), *Necnon Ejusdem Liber de Archiepiscopis et Episcopis Angliae*, ed. by H.R. Luard (London: Longman, Green Longman and Roberts, 1859).

չինն ընդգրկում է 455-1066 թթ., երկրորդը՝ 1066 թ.-ից մինչև ԺԳ դարի վերջերի Անգլիայի պատմությունը: Երկի առավել մեծ կարևորություն ունեցող հատվածը 1264 թվականից հետո ընկած իրադարձությունների շարադրանքն է, որում հեղինակը պահպանել է այլ աղբյուրներում չպահպանված նյութ՝ այդ թվում եկեղեցական և արքայական մի շարք փաստաթղթեր: Դրանց թվում է նաև մեզ հետաքրքրող նամակը (լատիներեն բնագիրն ու թարգմանությունը տե՛ս հավելված Ա-ում), և ուրախալիորեն ոչ միայն այն, քանզի երկում ներառված է նաև հայոց արքային նույն սուլթանի հղած մի այլ նամակ ևս՝ գրված նույն 1291 թ.՝ արդեն Տյուրոսի (Սուր) գրավումից հետո՝ որպես հայոց թագավորին ուղղված վերջին նախագգուշացում (լատիներեն բնագիրն ու թարգմանությունը տե՛ս հավելված Գ-ում)¹³⁶: Հարց է ծագում. ինչպե՞ս են մամլուքյան սուլթանի նամակները հայտնվել Անգլիայում և մաս կազմել Բարդուղեմեոս Նորիջցու ժամանակագրության: Ամենահավանական տարբերակն այն է, որ այս նամակները Հեթումն անձամբ է ուղարկել Անգլիայի արքա էդվարդ Ա-ին (կառ. 1272–1307 թթ.) նրան իր երկրի շուրջը ստեղծված բարդ իրավիճակը ներկայացնելու և օգնություն ստանալու ակնկալիքով: Պատահական չէ, որ նույն երկում Աքրայի և Տյուրոսի գրավման մասին երկու նամակներից հետո ներկայացված է նաև Հեթումից էդվարդին հասցեագրված մի նամակ ևս, որը, փաստորեն, ուղեկցել է հիշյալ երկուսին: Նամակի վերջում նշված են Հեթումի բանագնացների անունները՝ Անգելոս և Մարկոս Ֆրանցիսկյան միաբան հայրեր (*fratres Angelus et Marcus de ordine Minorum*) և հատուկ հանձնարարություններով ղեսպաններ Վասակը՝ արքայի ազգականներից, և ոմն կոմս Գոգֆրուան (*Vasaac de cognatione nostra et Gifredus Countisse (sic), nostri nuncii speciales*)¹³⁷:

¹³⁶ Տե՛ս Անդ, pp. 215–217, 217–219: Այս երկու նամակների հետազոտությանը տարիներ առաջ անդրադարձել ենք մեր մի հոդվածում: Տե՛ս Գ. Դանիելյան, «Հայ-մամլուքյան դիվանագիտական նամակագրությունն ըստ ալ-Ումարիի, Իբն Նազիր ալ-Ջալի և ալ-Կալկաշանդիի ձեռնարկների», Բազմավէպ, 1-2 (2016), էջ 44-98: Այն ժամանակ, սակայն, հրատարակված չի եղել և ոչ էլ ինձ հայտնի է եղել Իբն ալ-Սարրաջի երկը: Հետևաբար, նամակի թղթառաջքն այն ժամանակ փորձել եմ ամբողջությամբ վերականգնել՝ այլ սկզբնաղբյուրների միջոցով՝ ընդունված տեքստի փոփոխության սկզբունքներով: Հիմա, երբ արդեն ձեռքի տակ ունենք Իբն ալ-Սարրաջի երկը, կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ վերականգնումը հաջող է եղել: Իսկ որոշ անհամապատասխանություններ կմեկնաբանենք ստորև՝ անհրաժեշտ լրացումներ կատարելով:

Հարկ եմ համարում նաև նշել, որ հայոց արքային մամլուքյան իշխանություններից հղած այս երկու նամակների՝ Բարդուղեմեոս Կոստոնի երկում պահպանված լատիներեն բնագրերը հայերեն փոխադրելը մեր ուժերից վեր կլինեի առանց Մատենադարանի մեր ավագ գործընկեր Գոհար Մուրադյանի սիրալիր աջակցության, ինչի համար մեր անկեղծ երախտագիտությունն ենք հայտնում նրան: Բոլոր անճշտությունները, եթե այդպիսիք կան, անշուշտ իմն են:

¹³⁷ Տե՛ս Անդ, pp. 219–223 և *Chronicon de Lanercost*, ed. by Joseph Stevenson, Bannatyne Club (Edinburgh: Impressum Edinburgi, 1839), p. 487–489 (էդվարդին ուղղված նամակը): Աքրայի առման

Սա հաստատվում է մեկ այլ աղբյուրով ևս: Նիկողայոս Դ պապի (1288–1292 թթ.) ռեգեստներում տեղեկություն կա, որ 1292 թ. սկզբներին Հռոմ են ժամանել մի խումբ ֆրանցիսկյան միաբաններ՝ Թոմաս Տոլենտինացու և Մարկոս Մոնտելուպոնացու գլխավորությամբ: Վերջիններս, որ 1289 թ. Կիլիկիա էին ուղարկվել՝ միսիոներական գործունեություն իրականացնելու, այժմ, արդեն որպես հայոց արքա Հեթումի բանագնացներ, վերադառնում էին Եվրոպա: Հռոմի պապի տված երաշխավորագրերով՝ նրանք պետք է ներկայանային Ֆրանսիայի և Անգլիայի միապետներին՝ Հեթումի նամակները հանձնելու: Այս գրությունների մեջ վստահաբար եղել են նաև ալ-Մալիք ալ-Աշրաֆի հիշյալ երկու նամակները: Մակածվում է նաև, որ Թոմաս Տոլենտինացուն այս դեսպանագնացության ժամանակ փոխարինել է Անգելոս Տոլենտինացին¹³⁸:

Historia Anglicana-ում պահպանված Աքրայի և Տյուրոսի առման մասին տեղեկացում-նամակները, չնայած թարգմանական անճշտություններին, իրենց կառուցվածքային հատկանիշներով համապատասխանում են մամլուքյան պաշտոնական նամակագրության կանոններին: Երկու նամակների թարգմանություններում ալ-Աշրաֆին և նրանց հասցեատիրոջը՝ հայոց արքային, ներկայացնող տիտղոսներն ու պատվանունները հարազատ են մամլուքյան դիվանագիտական գրագրության եզրութաբանությանը և բանաձևային համակարգին, ինչը կասկած չի թողնում դրանց իսկույթյան մասին: «Աքրայի նամակի» արաբերեն բնօրինակի հետ համեմատությունը հավաստում է սա: Փորձենք ալ-Աշրաֆ խալիլի օրոք գրված ու մեզ հասած այլ փաստաթղթերի¹³⁹ և մամլուքյան

մասին նամակի լատիներեն թարգմանության տեքստը պահպանվել է նաև Վինչեսթրի եպիսկոպոս Հովհաննես Պոնտիսսարացու (Johannis de Pontissara, մահ. 1304 թ.) ժամանակագրական ցանկերում: Տե՛ս **Th. Hearne**, *Adami de Domerham Historia de rebus gestis Glastoniensibus*, vol. 2 (Oxford, 1727), p. 727–729 և հատկապես՝ *Registrum Johannis de Pontissara, episcopi Wyntoniensis AD MCCLXXXII-MCCCXIV*, ed. C. Deedes, vol. II (Londres, 1924), p. 481–482:

¹³⁸ Միսիոներական առաքելության և նրա ճակատագրի մասին տե՛ս նաև **G. Golubovich**, *Biblioteca Bio-Bibliografica della Terra Santa e dell'Oriente Francese*, t. 1 (1215–1300) (Quaracchi, 1906), p. 330–331, 341, ինչպես նաև **Cl. Mutafian**, “Franciscains et Arméniens (XIIIe – XIVe siècle)”, *SOCC*, vol. 32 (1999), p. 240–241:

¹³⁹ Իբն Աբդ ալ-Ջահիր (մահ. 1292 թ.) պատմիչը, որ Բալբարս և ալ-Մանսուր Կալավուն սուլթանների օրոք զբաղեցրել է Կահիրեի դիվանապետի *ṣāhib dīwān al-inṣāʾ* բարձր պաշտոնը, հեղինակ է երեք սուլթանների վարքագրությունների: Ալ-Աշրաֆ խալիլին նվիրված երկը կրում է *Al-Altāf al-hafīyya min al-sīra al-ṣarīfa al-sultāniyya al-Malikiyya al-Ašrafīyya* («[Գիրք] սուլթան ալ-Մալիք ալ-Աշրաֆի ազնվազարմ կյանքի թաքնված բարեհաճությունների մասին») անվարտ է մնացել: Նրանից պահպանված մասը նախորդ դարի սկզբին հրատարակել է Ա. Մոբերգը՝ ուղեկցելով շվեդերեն թարգմանությամբ: Տե՛ս **Ibn ʿAbd al-Zāhir**, *Al-Altāf al-hafīyya min al-sīra al-ṣarīfa al-sultāniyya al-Malikiyya al-Ašrafīyya / Ur ʿAbd Allah b. ʿAbd ez-Zāhir’s biografi över Sultanen el-Melik al-Ašraf Halil*, hrsg. von Axel Moberg (Lund: Gleerupska Universitetsbokhandeln, 1902): Այս հրատարակության մեջ, սակայն, անտեսված է ձեռագրի վերջին կարևոր մասը, որը պարփակում է ալ-

և այլ օտարալեզու¹⁴⁰ պատմագրության մեջ պահպանված վկայությունների, ինչպես նաև ալ-Ումարիի և ալ-Կալկաշանդիի քարտուղարության ձեռնարկների օգնությամբ «Աքրայի նամակի» թղթառաջի լատիներեն թարգմանությունը համեմատել արաբերեն բնօրինակի հետ: Եվ եթե Իբն ալ-Սարրաջի երկի շնորհիվ մեզ է հասել ալ-Աշրաֆ սուլթանի տիտղոսաշարը, ապա Հեթում արքային վերագրված տիտղոսները կփորձենք վերականգնել լատիներեն թարգմանության միջոցով:

Աշրաֆ իսլի սուլթանի անունից գրված մի շարք արժեքավոր փաստաթղթեր (հրովարտակներ, կալվածագրեր և այլն): Վերջերս ենք իմացել, որ Մոբերգն առանձին հոդվածով հրատարակել է նաև երկի հատորի մնացյալ մասից մի հատված՝ երկու կալվածագիր: Տե՛ս **A. Moberg**, “Zwei ägyptische Waqf-Urkunden aus dem Jahre 691/1292”, *LMO* 12 (1918), S. 1–64: Հիշյալ հրատարակությունից բացի մեզ հասանելի է եղել նաև երկի միակ պահպանված՝ Բավարիայի պետական գրադարանի արաբական հավաքածուի *Cod.Arab* 405 ձեռագրի լուսապատճենը, ուստի և հասանելի են եղել հատորում ներառված մյուս փաստաթղթերը: Վերջերս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի շրջանակներում լույս է տեսել Իբն Աբդ ալ-Ջահիրի երկերից մեր կատարած քաղվածական թարգմանություններն ընդգրկող հատորը: Տե՛ս Կիրիկյան Հայաստանի պատմության մամուլքյան սկզբնաղբյուրները (I): Իբն Աբդ ալ-Ջահիր (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 20, Արաբական աղբյուրներ Դ), թարգ. բնագրերից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ պ.գ.թ. **Գագիկ Դանիելյանի** (Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2021, հետալսու՝ Գ. Դանիելյան, Իբն Աբդ ալ-Ջահիր): Հատկանշական է, որ որոշ հաղորդումների համաձայն՝ Բայբարսի և Կալավունի սուլթանության օրոք արքունի դիվանատան մյուս խոշոր հեղինակությունը (երբեմն նա է անվանվում դիվանապետ) Ֆախր ալ-Դին իբն Լուկմանն էր (մահ. 1291 թ.), ով Կահիրյան դիվանատանը ծառայում էր դեռ Ալլուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Բամիլի ժամանակներից (1218–1238 թթ.): Տե՛ս **Van Den Bossche G.**, *Literary Spectacles of Sultanship. Historiography, the Chancery, and Social Practice in Late Medieval Egypt* (Berlin/Boston: Walter de Gruyter, 2023), pp. 117–119: Հմմտ. **P.M. Holt**, “A Chancery Clerk in Medieval Egypt”, *EHR*, vol. 101, № 400 (Jul., 1986), pp. 671–672: Համենայն դեպս, Կալավունի օրոք կահիրյան նոտարատան ղեկավարությունը կարծես թե ստանձնել է Մուհի ալ-Դինի որդի Ֆաթհ ալ-Դինը (մահ. 1292 թ.): Ֆաթհ ալ-Դինից սկսած՝ ալ-Մանսուր Կալավունի որոշմամբ դիվանապետի՝ *šāhib dīwān al-inšāʿ*-ի պաշտոնը վերանվանվել է *kātib al-sirr*-ի (բառացի՝ «գաղտնիքի դպիր»)՝ այժմ ստանալով սուլթանի «անձնական քարտուղարի» ավելի բարձր կարգավիճակ: Տե՛ս **L.S. Northrup**, *From slave to sultan: The career of al-Mansūr Qalāwūn and the consolidation of Mamluk rule in Egypt and Syria (678–689 A.H. / 1279–1290 A.D.)* (Stuttgart: Franz Steiner Verlag, 1998), pp. 239–242, ինչպես նաև նաև **Գ. Դանիելյան**, Իբն Աբդ ալ-Ջահիր, էջ 106:

¹⁴⁰ «Գործք կիպրացուց» երկում (*Les Gestes des Chipriots*) պահպանված է Տաճարական ասպետների մագիստրոս Գիլոմ դը Բուժեին (*Guillaume de Beaujeu*) 1290 թ. ալ-Աշրաֆ իսլիմի գրած մի նամակի բանաձևը նույնպես: Տե՛ս **Les gestes des Chipriots**, ed. G. Raynaud (Publications de la Société de l’Orient Latin. Série historique 5) (Geneva, 1887), p. 242, ինչպես նաև P. Crawford, *The ‘Templar of Tyre’, Part III of the ‘Deeds of the Cypriots’* (հետալսու՝ *Deeds of the Cypriots*) (Aldershot: Ashgate, 2003) (repr. London & New York: Routledge, 2016), pp. 104–105:

Աբրայի առման մասին նամակը	
Հատիներեն թարգմանություն	Արաբերեն բնագիր և մասամբ վերականգնված տեքստ
<p><i>Nos Soldanus Mellec et (sic) Asseraph, magnus dominus, sapiens, rectus, fortis, potens, sollicitus, bonus seculo et fidei, Soldanus Sarracenorum et perfectorum salvandorum, vivificator juris seculo, faciens justitiam oppressis et opprimentibus, aedificator dominationis. Soldanus Arabum, Turcorum, et Persarum, conquisitor terrarum et provinciarum, debellator et victor exercituum</i></p>	<p>Min al-sultān al-Malik al-Ašraf al-sayyid al-ağall, al-‘ālim, al-‘ādil, al-mu’ayyad al-mudāffar, al-manşūr, şalāh al-dunyā wa-l-dīn, sultān al-islām wa-l-muslimīn, muhyī al-‘adl fi al-‘ālamīn, munşif al-mazlūmīn, min al-zālimīn, wāriṭ al-mulk, sultān al-‘arab, al-‘ağam wa-l-turk, fātiḥ al-amşār, mubīd ğuyūš al-ff[a]ranğ wa-l-arman wa-l-tatar¹⁴¹, Iskandar al-zamān,</p>

¹⁴¹ *Debellator et victor exercituum Francorum, Armenorum, et Tartarorum բարդ պատվանվան տեղում* Իբն ալ-Սարրաջի տեքստում masadd ğuyūš al-ff[a]ranğ wa-l-arman wa-l-tatar է: Պատվանման առավել հայտնի տարբերակներն են mubīd al-kuffar wa-hāzīm ğuyūš al-ff[a]ranğ wa-l-arman wa-l-tatar («անհավատներին ոչնչացնող և ֆրանկների, հայերի և թաթարների բանակները պարտության մատնող») կամ պարզապես mubīd al-ff[a]ranğ wa-l-arman wa-l-tatar («ֆրանկներին, հայերին և թաթարներին ոչնչացնող»): Ինչպես տեսնում ենք, արաբերեն բնագրում իրականում mubīd («ոչնչացնող») բառի փոխարեն masadd («պատվար») է: Բայց պատվանվան այդ տարբերակը չենք գտնում մեզ հայտնի արաբական սկզբնաղբյուրներում: Հավանական ենք համարում, որ Tuḥfāh al-arwāh-ի համապատասխան հատորի մեզ հասած միակ գրչագրում, որից կատարվել է նաև 2020 թ. հրատարակությունը, masadd բառը սխալագրության հետևանք է, մանավանդ եթե հաշվի առնենք երկու բառերի գրության նմանությունը արաբերենում: Մամլուքյան սուլթաններն այս պատվանունը կրել են ալ-Ջահիր Բայբարսից սկսած՝ ի նշանավորում մոնղոլների, ֆրանկների և հայերի նկատմամբ տոնած հաղթանակների: Առաջինը հենց նա 1266 թ. Կիլիկյան Հայաստանի դեմ ուղղված արշավանքի ճանապարհին՝ Հոմսից ոչ հեռու գտնվող Մուհամմադ մարգարեի զինակից և զորավար Խալիդ Իբն ալ-Վալիդի (մահ. 642 թ.) դամբարանում թողած արձանագրության մեջ, ներառեց «ֆրանկների, հայերի և մոնղոլների ոչնչացնող» մակագրությունը: Տե՛ս **Hasan al-Bāšā**, *Al-Alqāb al-islāmīyya*, թ. 448: Հմմտ. **C. Hillenbrand**, *The Crusades: Islamic Perspectives* (New York: Routledge, 2000), p. 230: Սուլթան ալ-Աշրաֆն իրեն այդպես է կոչել, օրինակ, Քիլոմ դը Բուֆեին հղած իր նամակում (բնագրում՝ *le chaffeur des Frans & des Tatars & des Ermins*) և մի շարք այլ փաստաթղթերում, որոնք իր Al-Alqāf al-hafīyya երկում պահպանել է Իբն Աբդ ալ-Ջահիրը: Տե՛ս *Les gestes des Chiprois*, p. 242, ինչպես նաև *Deeds of the Cypriots*, p. 104; **ibn ‘Abd al-Zāhir**, *Al-Alqāf al-hafīyya / Cod.Arab 405*, թերթ 135, 163; **A. Moberg**, “Zwei ägyptische Waqf-Urkunden”, S. 5: Ալ-Աշրաֆ Խալիլն իրեն hāzīm ğuyūš al-ff[a]ranğ wa-l-arman wa-l-tatar («ֆրանկների, հայերի և թաթարների բանակները պարտության մատնող») տիտղոսով է բնորոշել նաև Հալեպի միջնաբերդի պատին իր թողած արձանագրության մեջ: Տե՛ս **E. Herzfeld**, *Matériaux pour un Corpus Inscriptionum Arabicarum, Deuxième Partie: Syrie Du Nord Inscriptions et Monuments D’Alep*, tome 1-volume 1 (Texte) (Caire: L’imprimerie de l’Institut français d’archéologie orientale, 1955, p. 89–91): Պատվանունը երբեմն կիրառվել է առանց «հայերի» բաղադրիչի՝ «ֆրանկների և մոնղոլների ոչնչացնող» ձևով: Տե՛ս **R. Amitai**, “Some Remarks on the Inscription of Baybars at Maqam Nabi

<p><i>Francorum, Armenorum, et Tartarorum, rex et dominator in gemmo (sic) et gemmis maris, dominus duarum adorationum, orientis scilicet et meridiei, servus duarum grandium domorum, scilicet Mechae et Ierusalem, dominus regum et Soldanorum, participator ammiralium fidelium, filius Soldani Melec Monossorii, ensis fidei, Calaon Salathi.</i></p> <p><i>In nomine Dei misericordis misericordiam.</i></p> <p><i>Istae nostrae literae nobili et honorabili sapienti, simili leoni, Haytono, de stirpe Christi, gloria[m] nationis crucis, lumen sequentium Jesum, amicum regum et Soldanorum, faciat eum Deus.</i></p>	<p><i>muwallī al-iḥsān, malik al-baḥrayn¹⁴², ṣāhib al-qiblatayn¹⁴³, ḥādim al-ḥaramayn al-ṣarīfayn, sayyid al-mulūk wa-l-salāṭīn, Abī al-Faṭḥ Ḥalīl b. al-sulṭān al-malik al-Mansūr Sayf al-dunyā wa-l-Dīn Qalāwūn al-Ṣāliḥī¹⁴⁴, qasīm amir al-mu'minīn, a'azza Allāh anṣārahu.</i></p> <p><i>Bi-[i]sm Allāh al-raḥmān al-raḥīm.</i></p> <p><i>[Ṣadirat] hazīhi al-mukātaba ilā ḥaḍrat al-malik, al-ḡalīl, al-‘ālim [fi millatihi], al-ḍirḡam, [al-ḡaḍanfar], Haytūm, kabīr al-milla al-masīḥiyya, faḥr al-umma al-ṣalībiyya, ‘izz al-ṭā’ifa al-‘isāwiyya, ṣadīq al-mulūk wa-l-salāṭīn.</i></p>
<p><i>«Սուլթան ալ-Մալիք ալ-Աշրաֆից՝ գերապատիվ տեր, իմաստուն, արդարամիտ, [Աստծո կողմից] լիազորված (աստվածապահ), հաղթակիր, հաղթական, աշխարհի և կրոնի բարօրութուն, իսլամի և մուսուլմանների սուլթան, աշխարհներում արդարութունը վերականգնող, կեղեքվածներին կեղեքիչներից արդարացնող, արքայական իշխանության ժառանգորդ, արաբների, պարսիկների և թյուրքերի սուլթան, երկրներ գրավող, ֆրանկների, հայերի և թաթարների</i></p>	

Musa,” in: *Mamluks and Ottomans: Studies in honour Michael Winter*, ed. by D.J. Wasserstein and A. Ayalon (Routledge: London-New York, 2006), p. 47:

¹⁴² Malik al-baḥrayn՝ «երկու ծովերի տիրակալ»: Նկատի են առնված Միջերկրական և Կարմիր ծովերը:

¹⁴³ Qibla-ն այն ուղղությունն է, դեպի որը մուսուլման հավատացյալները պետք է դեմքով ուղղվեն աղոթքի (salāt) ժամանակ: Մուհամմադի մարգարեական գործունեության սկզբնական շրջանում այդ ուղղությունն էր համարվում Երուսաղեմը (al-Aqṣā մզկիթը), բայց 624 թ. սկսած որպես qibla է սահմանվել Մեքքան՝ ավելի ճիշտ այնտեղ գտնվող al-Kā’ba (բառացի՝ «խորանարդ») կոչվող սրբատեղին: Տե՛ս A.J. Wensinck, “Qibla,” in: *EI2*, vol. 5 (KHE-MAHI) (Leiden: E.J. Brill, 1986), p. 82:

¹⁴⁴ Տե՛ս Ibn ‘Abd al-Zāhir, Al-Altāf al-ḥafiyya, ք. 67 և հատկապես նույնի՝ *Cod.Arab 405, թերթ 102–104, 117–120, 135–137, 163–164 (ալ-Աշրաֆի տիտղոսներից հետո տրված են նաև նրա հայր ալ-Մանսուր Կալվալունի տիտղոսները): Տե՛ս նաև M. Van Berchem, *Materiaux pour un Corpus Inscriptorium Arabicarum*, p. 1 (Egypte), fasc. 1 (Caire) (Paris, 1894), p. 141–142 (արձանագրություն ալ-Աշրաֆ Խալիլի դամբարանում):*

բանակաները ոչնչացնող, [մեր] ժամանակի Ալեքսանդր, երկու ծովերի տիրակալ, երկու ուղղութիւնների տեր, երկու սրբավայրերի սպասավոր, արքաների և սուլթանների գերակա, հավատացյալների վեհապետի (իմա՝ խալիֆայի) գործակից, Աբու ալ-Ֆաթհ խալիլ՝ սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուր Սայֆ ալ-Դին¹⁴⁵ Կալվալուն ալ-Սալիհիի որդի: Թո՛ղ Ալլահը զորացնի նրա հաղթանակները:

Հանուն բարեգութ և ողորմած Աստծո:

Այս նամակը հղվել է մեծարգո արքային՝ պատվարժան, [իր համայնքի գործերում] իմաստուն, առյուծ Հեթումին՝ քրիստոնեական համայնքի գլխավոր, խաչակրաց ժողովրդի փառք, քրիստոնեական (բառացի՝ «հիսուսյան») համայնքի գործութուն, Թո՛ղ Աստված դարձնի նրան արքաների և սուլթանների ընկեր»:

Նամակի լատիներեն թարգմանության քննությունից պարզ է դառնում, որ նրանցում հիշատակված և ալ-Աշրաֆ խալիլ սուլթանին վերագրված տիտղոսների մի մասը հեշտությամբ նույնացվում են Իբն ալ-Սարրաջի պահպանած արաբերեն բնագրում առկա տարբերակներին, բայց ոչ բոլորը: Ակնհայտ է, որ լատին թարգմանիչը որոշ դժվարությունների առաջ է կանգնել արաբերեն տիտղոսներն ու պատվանունները լատիներենի փոխադրելիս: Օրինակ, լատիներեն բնագրի *aedificator dominationis* (բառացի՝ «գերիշխանություն կամ տերություն կառուցող») արտահայտությունը հավանաբար թարգմանությունը պիտի լինի արաբերեն բնագրի *wārit al-mulk*-ին («թագավորության ժառանգորդ»): Տպավորություն է ստեղծվում նաև, որ թարգմանիչը երբեմն միտումնաբար միջամտել է տեքստին: Օրինակ, *malik al-baḥrayn* («երկու ծովերի արքա») տիտղոսը լատիներեն տարբերակում «թանկարժեք քարերի ու ծովերի արքա և տիրակալ» է¹⁴⁶, *ṣāhib al-qiblatayn*-ը (այն է՝ «երկու ուղղությունների տեր»)՝ «երկու երկրպագության տեր՝ արևելյան և հարավային», *ḥādīm al-ḥaramayn al-šarīfayn*-ը (այն է՝ «երկու սրբավայրերի ծառա»)՝ «երկու մեծ տների՝ Մեքքայի և Երուսաղեմի սպասավոր» է, չնայած նրան, որ այս արտահայտությունը իսլամական ավանդույթի համաձայն սովորաբար նկատի են առնվում Մեքքան և Մեդինան¹⁴⁷:

Դժվար է լատիներեն տեքստից լիովին վերականգնել Հեթում Բ-ին ուղղված դիմումաձևը: Օրինակ, *simili leoni* («առյուծակերպ») արտահայտությունը մենք վերականգնեցինք որպես *al-dirḡam*, բայց ամենայն հավանականությամբ

¹⁴⁵ Sayf al-dīn բառացի նշանակում է «կրոնի թուր», ինչպես որ լատիներեն տարբերակում է թարգմանված:

¹⁴⁶ Տյուրոսի գրավման մասին նամակում ճիշտ է թարգմանված: Տե՛ս ներքևում:

¹⁴⁷ *Al-Qalqaṣandī*, *Ṣubḥ al-āṣā*, ց. 6, ք. 46.

արաբերեն բնագրում դրա կողքին եղել է «առյուծ» նշանակություն ունեցող ևս մի տիտղոս՝ *al-ğadanfar*-ը (ինչպես որ Լևոն Դ-ին ուղղված *ʿunwān*-ում) կամ *al-asad*-ը¹⁴⁸, որոնցից մեկը կրկնությունից խուսափելու նկատառումով բաց է թողնվել լատիներեն տարբերակում: Լատիներեն տեքստի *sapienti* («իմաստուն», «գիտակ» «ողջամիտ») բառը նույնացրինք *al-ʿālim* տիտղոսի հետ, որն օգտագործված տեսանք նաև ալ-Աշրաֆ Խալիլի տիտղոսաշարում: Բանն այն է, որ այս տիտղոսը սուլթանական տիտղոս էր համարվում, ինչպես գրում է ալ-Կալկաշանդին (*min alqāb al-sulṭān*)¹⁴⁹: Բայց երբ այն վերագրվում էր քրիստոնյա տիրակալներին, նրանից հետո ավելացվում էր *fi millatīhi* կամ *fi ʿumūr dīnīhi* (այն է՝ «իր համայնքի համար» կամ «իր կրոնի գործերում») կապակցություններից մեկը, ինչը զգալիորեն նվազեցնում էր տիտղոսի կշիռը՝ ստորադասելով նրան մամլուքյան սուլթանին¹⁵⁰:

Ուշադրություն է արժանի լատիներեն տեքստի *de stirpe Christi* արտահայտությունը (այն է՝ «Քրիստոսի սերնդից»)՝ *Hayton* անունից հետո, որը մամլուքյան նամակագրությանը հատուկ բաղադրյալ պատվանման ձևակերպում չէ: Իրա տեղում արաբերեն տեքստում կարող է եղած լինել, օրինակ, *kabīr al-milla al-masīhiyya* (քրիստոնեական համայնքի գլուխ կամ գլխավոր), ինչպես որ, օրինակ, 1268 թ. Անտիոքի առումից հետո Բայբարս ալ-Բունդուկտարի (կառ. 1260–1277 թ.) սուլթանի՝ Բոհեմունդ Զ-ին ուղարկած նամակում¹⁵¹: Իսկ գուցե՞ լատին թարգմանիչը միտումնաբար է խուսանավել Հեթումին վերագրված այս պատվանունը «քրիստոնեական համայնքի գլուխ» թարգմանելուց:

Դիմումաձևի թարգմանություն մյուս աչքի զարնող հատկանիշը Հեթումին հասցեագրված «ուժ» կամ «խիզախություն» արտահայտող տիտղոսների բացակայությունն է, որոնք հավանաբար թագմանիչը նույնպես բաց է թողել: Սա ապացուցվում է երկրորդ՝ Տյուրոսի գրավման մասին նամակի միջոցով, որի արաբերեն տարբերակը չենք գտնում մեզ հայտնի սկզբնաղբյուրներում:

Նախքան երկրորդ նամակին անցնելը, նշենք, որ «Աքրային նամակի» լատիներեն թարգմանությունը, մեկ այլ առանձնահատկություն ևս ունի. այն

¹⁴⁸ Ինչպես, օրինակ, նույն ալ-Աշրաֆ Խալիլ սուլթանի և Արագոնի արքա Զեյմա Բ-ի (կառ. 1291–1327 թթ.) միջև կնքված դաշնագրում: *Stʿu M. Amari*, “Trattato stipolato da Giacomo II di Aragona col Sultano d’Egitto il 29 gennaio 1293”, *Atti della R. Accademia dei Lincei*, Anno CCLXXX (Serie Terza) (Roma, 1883), p. 436:

¹⁴⁹ *Al-Qalqaṣandī*, *Ṣubḥ al-ʿāšā*, ց. 6, ք. 19–20.

¹⁵⁰ *Stʿu P. Holt*, “Al-Nāṣir Muḥammad’s letter”, p. 26 (վերագրված Կաստիլիայի արքային); *al-ʿUmārī*, *Al-Taʿrīf*, ք. 77 (վերագրված Բյուզանդիայի կայսրին), ք. 79 (վերագրված վրաց արքային); *Ibn Nāṣir al-Āyāṣ*, *Tatqīf*, ք. 28 (վերագրված Բյուզանդիայի կայսրին), ք. 30 (վերագրված Եթովպիայի արքային) և այլն:

¹⁵¹ *Ibn ʿAbd al-Zāhir*, *Al-Rawḍ al-zāhir fī sīrat al-Mālik al-Zāhir*, bi-taḥqīq ʿAbd al-ʿAzīz al-Ḥuwayṭī (al-Riyāḍ, 1976), ք. 309; *al-Nuwayrī*, *Nihāyat al-arab*, ց. 30, ք. 196; *Ibn al-Dawādārī*, *Kanz al-durar*, ց. 8, ք. 128:

որոշ դեպքերում ոչ միայն իմաստային առումով է զգալիորեն շեղվում արաբերեն տեքստից, այլև պարունակում է որոշ տողեր, որ առհասարակ բացակայում են արաբերեն տարբերակում (հմմտ. Հավելված 1-ը և Հավելված 2-ը): Մասնավորապես խոսվում է քաղաքի եկեղեցիների քակման, «Անտիոքի պատրիարքի» շարչարանքների, հարուստ ավարի, բազմաթիվ գերիների և անհամար կանանց ստրկացման մասին: Դժվար է ասել, թե ինչու են այս տողերն ընկել արաբ հեղինակների պահպանած տեքստերից: Մյուս հարցը, որ անպատասխան է մնում, վերաբերում է այս և հաջորդ նամակի թարգմանությունների հանգամանքներին: Հավանական է, որ ալ-Աշրաֆ Խալիլի նամակները Սիսուղարկված լինեն միայն արաբերեն բնօրինակներով, որոնք լատիներեն են թարգմանվել կամ հայոց կամ անգլիական դիվանատանը: Թերևս, հաշվի առնելով լատիներեն տարբերակում առկա թարգմանական ակնհայտ սխալները՝ կարելի է բացառել, որ նամակը Հեթումը ստացած լինի ինչպես արաբերեն բնօրինակով, այնպես էլ կահիրյան արքունի դիվանատան դպիրների պատրաստած լատիներեն ուղեկցական թարգմանություններ: Իսկ Հեթումի տիտղոսաշարում թարգմանչի դիտավորյալ թվացող միջամտությունները գուցե վկայում են, որ նամակների մեզ հասած թարգմանությունները կատարվել են Անգլիայում, և կամ դրանք Եվրոպա հասցնելու հանձնարարություն ստացած լատին դեսպանների կողմից: Հատկանշական է, որ, ինչպես Իբն ալ-Սարրաջն է ավելացնում, այս նամակի արաբերեն բնօրինակը գրվել է անձամբ արքունի դիվանապետ Ֆաթհ ալ-Դին իբն Աբդ ալ-Ջահիրի ձեռամբ¹⁵²:

Տյուրոսի առման մասին նամակը	
<i>Լատիներեն թարգմանություն</i>	<i>Վերականգնված տեքստ</i>
<p><i>Nos Soldanus Mellec Asseraph, magnus dominus, sapiens rectitudine, potens, laboriosus, bonus seculo et legi, Soldanus Sarracenorum et salvandorum, vivificator juris seculo, faciens justitiam oppressis et opprimentibus, haereditator regnorum, Soldanus Arrabum, Persarum, Sarracenorum, et Turcorum, conquistator</i></p>	<p>Min al-sultān al-Malik al-Ašraf al-sayyid al-ağall, al-‘ālim, al-‘ādil, al-mu‘ayyad, al-muğāhid, [al-maṣṣūr], ṣalāh al-dunya wa-l-dīn, sultān al-islām wa-l-muslimīn, muhyī al-‘adl fī al-‘ālamīn, munṣif al-mazlūmīn min al-zālimīn, wārit al-mulk, sultān al-‘arab, al-‘ağam wa-l-turk, mālik al-bilād wa-l-aqālīm wa-l-tuğūr, mubīd al-kuffar</p>

¹⁵² Հստ Իբն ալ-Սարրաջի՝ երբ նամակը հայոց արքային է հասել, նա երեք օր շարունակ լաց է եղել: Հետո նա ներողություն է խնդրել նամակը բերած դեսպանից երկար սպասեցնելու համար և հարցրել. «Եթե թշնամիները Եգիպտոսը վերցնեին մուսուլմաններից, արդյո՞ք նրանք անտանելի տառապանք չէին կրի: [Դեսպանն] ասել՝ «Այո՛»: [Արքան] ասել է. «Այդպես էլ և մենք»: Տե՛ս **Ibn al-Sarrāğ**, *Tuffāh al-arwāh*, s. 305: Ֆաթհ ալ-Դինի մասին տե՛ս վերևում՝ ծնթղթ. 139:

<p><i>terrarum et mundi convictor, triumphator et debellator exercituum Francorum, Armenorum, et Tartarorum, Alexander temporis praesentis, tributor bonorum, rex in gemmis maris, dominus duarum adorationum, minister duarum grandium domorum, dominus regum et Soldanorum, participator amiralium fidelium, filius Soldani Mellec Monossorii, ensis fidei, Calalon Salathi.</i></p> <p><i>In nomine Dei misericordiosi.</i></p> <p><i>Istae literae nostrae magno forti regi Haytono, bautaura(°). Idem laus nationis Christi, liberum (°) a regibus et Soldanis.</i></p>	<p>wa-hāzim ğuyūš al-f[ā]ranġ wa-l-arman wa-l-tatar, Iskandar al-zamān, šalāḥ al-ġumhūr, malik al-baḥrayn, šāḥib al-qiblatayn, ḥādīm al-ḥaramayn al-šarīfayn, sayyid al-mulūk wa-l-salāṭīn, qasīm amir al-mu`minīn, [Abī al-Faṭḥ Ḥalīl] b. al-sultān al-Malik al-Manšūr Sayf al-Dīn Qalāwūn al-Šālīḥī.</p> <p>Bi-[i]sm Allāh al-raḥmān [al-raḥīm].</p> <p>Şudirat hazīhi al-mukātaba ilā al-malik al-bāsil al-humām Haytūm, al-baṭal (°), faḥr al-umma al-masīḥiyya, šadīq al-mulūk wa-l-salāṭīn.</p>
<p>«Սուլթան ալ-Մալիք ալ-Աշրաֆից՝ գերապատիվ տեր, իմաստուն, արդարամիտ, [Աստծո կողմից] լիազորված, սրբազան մարտիկ («խալամի համար կռվող»), [հաղթական], աշխարհի և կրոնի բարօրություն, իսլամի և մուսուլմանների սուլթան, աշխարհներում արդարությունը վերականգնող, կեղեքվածներին կեղեքիչներից արդարացնող, արքայական իշխանություն ժառանգորդ, արաբների, պարսիկների և թյուրքերի սուլթան, երկրների և շրջանների տիրակալ, [անհավատներին] ոչնչացնող և ֆրանկներին, հայերին և թաթարներին պարտություն մատնող, [իր] ժամանակի Ալեքսանդր, ժողովրդի բարօրություն, երկու ծովերի արքա, երկու ուղղությունների տեր, երկու սրբավայրերի սպասավոր, արքաների և սուլթանների գերակա, հավատացյալների վեհապետի գործակից Աբու ալ-Ֆաթհ իսախլից՝ սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուր Սայֆ ալ-Դին Կալավուն ալ-Սալիհիի որդի:</p> <p>Հանուն բարեգութ [և ողորմած] Աստծո:</p> <p>Այս նամակը հղվել է [մեծարգո] արքային՝ խիզախ, քաջակորով, արի Հեթումին՝ քրիստոնեական համայնքի փառք, արքաների և սուլթանների ընկեր»:</p>	

«Տյուրոսի նամակի» լատիներեն տեքստից արաբերեն թղթառաջքը վերականգնելը որոշ խնդիրներ է հարուցում, քանզի այն ավելի թերի է, քան

«Աքրայի նամակը», և արաբերեն տարբերակն էլ մեզ հայտնի աղբյուրներում չի պահպանվել: Նախ լատիներեն *laboriosus* («աշխատասեր») բառը նույնացրինք իսլամական *al-muḡāhid* («հանուն իսլամի կռվող», «սրբազան պատերազմի մարտիկ») տիտղոսին, որը բառացի «ջանք թափող», «ջանասիրություն ցուցաբերող», «հանուն ճշմարտության կռվող» է նշանակում: Սրա կողքին հավանաբար եղել է նաև *al-manṣūr* տիտղոսը, որը դուրս է մնացել լատիներեն թարգմանությունից: Անհաջող թարգմանության հետևանք են *bonus seculo et legi* (հավանաբար արաբերեն բնագրում եղել է՝ *ṣalāh al-dunya wa-l-dīn*) և *tributor bonorum* (հավանաբար բնագրում եղել է՝ *ṣalāh al-ḡumhūr*) արտահայտությունները:

Հեթումին հասցեագրված արաբերեն դիմումաձևն ավելի դժվար է դուրս բերելը: Նախ, այստեղ էլ բաց են թողնված «հարգանք» արտահայտող տիտղոսները: *Magno forti regi* կապակցությունը Լևոն Դ-ին ուղղված դիմումաձևի նմանությունը վերականգնեցինք որպես *al-malik al-bāsil al-humām* («խիզախ, քաջակորով արքա»): Չի ստացվում մեկնել Հեթումի անվան կողքին եղած *bautaura* բառը: Գուցե թարգմանիչը չի հասկացել ու փորձել է տառադարձել արաբերեն *al-baṭal* (այն է՝ «արի») բառը: Ինչ վերաբերում է բաղադրյալ պատվանուններին, ապա թարգմանված են միայն երկուսը: Նրանցից խնդրահարույց է *liberum a regibus et Soldanis faciat eum Deus* կապակցությունը (բառացի՝ «թող Աստված դարձնի նրան արքաներից և սուլթաններից անկախ» կամ «ազատ»), հետևաբար այն փոխարինեցինք մեզ արդեն հայտնի *ṣadīq al-mulūk wa-l-salāṭīn* («արքաների և սուլթանների ընկեր») պատվանունով: Այժմ զուգադրելով երկու նամակներում Հեթում Բ-ին վերագրված տիտղոսները՝ ստանանք մամլուքյան իշխանությունների կողմից նրան հասցեագրված նամակների դիմումաձևերի մոտավոր պատկերը.

«[Ṣadarat] hazīhi al-mukātaba ilā ḥaḍrat al-malik, al-ḡalīl, al-‘ālim [fi millatihi], al-bāsil al-humām al-baṭal al-ḍirḡam, al-ḡaḍanfar Haytūm, kabīr al-milla al-masīhiyya, faḥr al-umma al-ṣalībiyya, ‘izz al-ṭā’ifa al-‘isāwiyya, ṣadīq al-mulūk wa-l-salāṭīn»:

Այս բանաձևը, ըստ էության, շատ չի զանազանվում Լևոն Դ-ի օրոք կիրառության մեջ եղած բանաձևից: Միայն թե *al-‘ālim* [fi millatihi] տիտղոսը փոխարինվել է քաջություն արտահայտող ևս մեկ *samayda’* («կտրիճ») տիտղոսով, իսկ բաղադրյալ պատվանուններից մեկի փոխարեն սկսել է գործածվել *‘imād banī ma’mūdiyya* («կնքավորության հենասյուն») պատվանունը: Նամակների արաբերեն ամբողջական բնագրերի մեզ հասած լինելու դեպքում կկարողանայինք հստակ տարբերություններ մատնանշել և առավել վստահ լինել մեր եզրակացություններում, բայց ներկա պարագայում ստիպված ենք բավարարվել այնքանով, որքանով որ մեզ թույլ են տալիս վերականգնել դրանց լատիներեն թարգմանությունները:

Ա 6. Իբն Նազիր ալ-Ջալշ, ալ-Կալկաշանդի, ալ-Սահմավի.

Այժմ դառնանք արդեն Լևոն Դ-ից հետո մամլուք-հայկական դիվանագիտական նամակագրության արարողակարգում տեղի ունեցած փոփոխություններին: Կիլիկիո հայոց արքա Կոստանդին Բ-ի (կառ. 1364–1373 թթ.) թագավորության շրջանում արդեն Մամլուքյան սուլթանության դիվանատներում գործածության մեջ է դրվել հայոց բարձրագույն քաղաքական իշխանությունների հետ նամակագրության մի նոր բանաձև, որը տարբերվում է ալ-Ումարիի Al-Taʿrīf երկում եղածից: Կոստանդին օրոք հայոց թագավորությունը գտնվում էր ծանրագույն քաղաքական կացության մեջ: 1347 թվականից թագավորությունը վերջնականապես կորցրել էր Այաս նավահանգիստը: Երկրի տարածքի զգալի մասը՝ գրեթե ողջ Դաշտային Կիլիկիան (Տարսոն և Ադանա քաղաքներով հանդերձ), 1360 թվականից արդեն նվաճված էր Մամլուքյան սուլթանության կողմից, և այնտեղ նշանակված էին մամլուք կառավարիչներ¹⁵³: 1361 թվականից Կոռիկոսը բռնակցված էր Կիպրոսի թագավորությանը: Կոստանդինի թագավորական իշխանությունը, փաստորեն, սահմանափակված էր միայն Կիլիկիո լեռնային հատվածով:

Այս պատմական իրադարձություններն իրենց անմիջական արտահայտությունն են գտել նաև մամլուքյան իշխանություններից հայոց արքային ուղարկված նամակների բանաձևերում, որ պահպանել է Իբն Նազիր ալ-Ջալշն իր Taṭqīq al-Taʿrīf ձեռնարկում: Վերջինիս երկում արդեն քրիստոնյա արքաները ներկայացված են հետևյալ հերթականությամբ: Նախ Հոռոմի պապն է (al-Bāb), որին հետևում են «Կոստանդնուպոլսի տերը» (Բյուզանդիայի կայսրը),

¹⁵³ Այս մասին առավել մանրամասներից մեկն արաբագիր հեղինակներից պատմում է Իբն Հաբիբը: Ըստ նրա՝ սուլթանի հրամանի համաձայն մամլուքյան զորքերը «Սսի երկիր» ուղղվեցին Հալեպի էմիր Սայֆ ալ-Դին Բայդեմուրի հրամանատարությամբ: Նրանք Ադանան և Տարսոնն «անվտանգության երաշխիքով» (amān) գրավելուց հետո շարժվեցին դեպի Մսիս, գրավեցին նրա միջնաբերդն և սպանեցին ու գերության քջեցին բնակչությանը: «Հետո, շարունակում է պատմիչը, գրավեցին Քիլան բերդը (Qalʿat al-Kilān), ալ-Ջադիդան (կամ Ջուդեյդան՝ al-Ġadīda կամ al-Ġudayda), Սունբատկալան, Նամրունը (հավանաբար Լամբրոնն է), «Վադի Լիֆունը» (Wādī Līfūn, բառացի՝ «Լևոնի հովիտ», գուցե Մոլեվոնն է): Սուլթանական հրամանագրով էմիր Ալա ալ-Դին Ալի իբն ալ-Շալբանին ստանձնեց Տարսոնի, նրա եղբայր էմիր Բահա ալ-Դին Դաուդը՝ Ադանայի «փոխարքայությունը», իսկ հաղթանակած զորքերը հետ դարձան ողջառողջ և [մեծ] ավարով»: Տե՛ս **Ibn Ḥabīb**, Taḍkirat al-nabīh fi ayyām al-Manṣūr wa-banīhi, bi-taḥqīq Muḥammad Muḥammad Amīn, ց. 3 (al-Qāhira, Al-Hayʿa al-misriyya al-ʿamma li-l-kitāb, 1986), ց. 230–231: Ըստ Իբն Քասիրի՝ Ադանայի գրավումից հետո Եգիպտոս նավերով տեղափոխվեցին Ադանայի եկեղեցու դռները, որոնք իբր իլխան Դազանի 1300 թ. արշավանքի ժամանակ հայոց արքան գողացել էր: Տե՛ս **Ibn Katīr**, Al-Bidāya, ց. 18, ց. 609: Իբն Կադի Շուհբան և ալ-Մակրիզին հպանցիկ են խոսում մամլուքների այս արշավանքի մասին: Տե՛ս Tarīḥ **Ibn Qāḍī Šuhba**, ց. 3, bi-taḥqīq ʿAdnān Darwīš (Dimašq, 1994), ց. 160–161; **al-Maqrīzī**, Al-Sulūk, ց. 3.1, ց. 50:

«վրաց արքան», «Բարսելոնայի տերը» (Արագոնի արքան՝ *ṣāhib Barḡalūna*), «բուլղարների և սերբերի տերը», «Եթովպիայի արքայից արքան» (*malik mulūk al-Ḥabaša*), «Ջենովայի կառավարողներն» (*al-ḥukkām bi-Ġanūh*) ու «Վենետիկի տերը» (*ṣāhib al-Bunduqīyya*) և հետո միայն «Սաի տերը», «Կիպրոսի տերը» (*mutamallik Qubrus*), «Մոնֆերատի արքան» (*malik Munfarrād*), «Նեապոլի տիրուհին» (*ṣāhibat Nābul*), «սերբերի տերը» և այլն: Քրիստոնյա տիրակալների նշված հերթականության մեջ, թվում է, որոշակի հիերարխիկ տրամաբանություն կա՝ համապատասխան մամուլքյան արքունիքի գիվանագիտական արարողակարգին: Նախ և առաջ, ի տարբերություն ալ-Ումարիի, Իբն Նազիր ալ-Ջալջի արդեն Հոմերի պապին է անվանում «անհավատների մեծագույն արքա»¹⁵⁴: Երկրորդ, ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ առաջին չորս տիրակալներին ըստ հեղինակի ընդունված էր գրել «կես չափսի» թղթով (*qaṭ' al-nisf*), հաջորդողներին՝ ավելի փոքր չափսի թղթերով: Հետևապես, հայոց արքայի անվան այսպիսի հետադաս հիշատակությունը իսկապես վկայությունն է 1360-ական թվականներին հոգևարք պարող հայոց թագավորության խիստ նվաղած հեղինակության: Հեղինակը ներկայացնում է «Հեթումի որդի Կոստանդին թաքֆուրին» ուղղված նամակի նմուշօրինակ-բանաձևը, որն ըստ նրա հաստատուն է մնացել ընդհուպ մինչև նրա նվաճման ժամանակը՝ հիշրայի 776 թ. (1375 թ.): Իբն Նազիր ալ-Ջալջի թղթի ձևաչափ է նշում «սովորական» կոչված չափսը՝ շարունակելով. «Այս նամակը հղվել է մեծարգո արքային (*ḥaḍrat al-malik*)՝ պատվարժան (*al-ḡalīl*), հարգելի (*al-mukarram*), պատվելի (*al-mubaḡḡal*), ակնածելի (*al-mu'azzaz*), քաջակորով (*al-humām*), խիզախ (*al-bāsil*) Կոստանդին իբն Հեթումին (*Kustandīn ibn Ḥayṭūm*)՝ քրիստոնեական հավատի զորություն (*'izz al-dīn al-naṣrāniyya*), խաչակրաց համայնքի գլուխ (*kaḇīr al-tā'ifa al-ṣalībiyya*), կնքավորության հենասյուն (*'imād banī ma'mūdiyya*), սուլթանների և արքաների ընկեր (*ṣadīq al-mulūk wa-l-salāṭīn*)...»¹⁵⁵:

Ինչ վերաբերում է ալ-Կալկաշանդին և ալ-Սահմավին, ապա վերջիններս կրկնում են Իբն Նազիր ալ-Ջալջի ներկայացրած բանաձևը՝ մեկ տարբերությամբ: Նրանցից ալ-Կալկաշանդին *al-mubaḡḡal* և *al-mu'azzaz* տիտղոսների միջև ավելացնում է ևս մեկը՝ *al-mu'azzam*-ը, որը նշանակում է «մեծափառ»: Շատ հնարավոր է՝ Իբն Նազիր ալ-Ջալջի երկի նրա օգտագործած օրինակում իսկապես այդպես է եղել, ինչը չի պահպանվել մեզ հասած ընդօրինակություններում: Վերջին հաշվով ալ-Ումարիի պահպանած բանաձևում Լևոն Դ-ին

¹⁵⁴ *Ibn Nāzīr al-Ġayš*, *Tatqīf*, ք. 27.

¹⁵⁵ *Անդ*, ք. 44:

(ինչպես նաև Հեթումին Բ-ին ուղղված դիմումաձևի մեր վերականգնած տարբերակում) տրված են ինը պարզ տիտղոսներ և չորս բաղադրյալ պատվանուններ, իսկ Իբն Նազիր ալ-Ջալջի կողմից արձանագրված և Կոստանդին Բ-ին ուղղված դիմումաձևում՝ ութ պարզ և կրկին չորս բաղադրյալ պատվանուններ: Գուցե ալ-Կալկաշանդին ա՛յս տրամաբանությունը է բանաձևում ավելացրել ևս մեկ տիտղոս: Վերջում *Ṣubḥ al-āšā*-ի հեղինակը հավելում է նաև հետևյալը. «Գրագրության այս բանաձևը դադարել է գործածվել Սսի առումով, երբ այն վերոհիշյալ թվականին (իմա՝ հիշրայի 776 թ.) գրավվել է [սուլթան] Շաբան իբն Հուսայն ալ-Աշրաֆի¹⁵⁶ կառավարման օրոք Հալեպի փոխարքա եղած Կուշթումուր ալ-Մանսուրիի կողմից, և վերածվել Տրիպոլիի փոխարքայության մակարդակի փոխարքայության»¹⁵⁷:

Ալ-Ումարիի և Իբն Նազիր ալ-Ջալջի բերած բանաձև-կաղապարների համեմատությունը երևան է հանում 1340–1370-ական թվականներին հայոց արքաների հետ դիվանագիտական նամակագրության արարողակարգում տեղի ունեցած ակնառու փոփոխությունները՝ պայմանավորված ինչպես հայոց թագավորության միջազգային վարկի ու հեղինակության նվազմամբ, այնպես էլ առհասարակ մամուլքյան դիվանատան արարողակարգում տեղի ունեցած փոփոխություններով: Այդ փոփոխությունների մասին մեկնաբանություն է տալիս ինքը՝ Իբն Նազիր ալ-Ջալջը. «Ողորմած կադի Շիհաբ ալ-Դինը (նկատի ունի ալ-Ումարիին-Գ. Դ.), Ալլահը ողորմին նրան, քիչ այլ կերպ է գրել նրա (իմա՝ հայոց արքայի – Գ.Դ.) հետ նամակագրության մասին՝ որոշ հավելումներով և կրճատումներով, սակայն հենց սա է այն ձևը, որով [այժմ] ընդունված է գրել: Ես ինքս, ինչպես նաև իմ գործընկերներն առիթ ենք ունեցել քանիցս նրան այս բանաձևով գրելու»¹⁵⁸: Չնայած Իբն Նազիր ալ-Ջալջի այս մեկնաբանությանը՝ որոշ հարցեր դեռ մնում են: Նախ և առաջ պետք է նկատել, որ ի տարբերություն Լևոն Դ-ին ուղղված դիմումի՝ Կոստանդին Բ-ին հասցեագրված նամակների դիմումներում «քաջություն», «խիզախություն», «զորություն» արտահայտող տիտղոսներից մի քանիսը (*al-baṭal*, *al-samaydaʿ*, *al-ḍirgām*, *al-ğadānfar*) հանվել են, և դրանց փոխարինելու են եկել «հարգանք» արտահայտող պատվանունները՝ *al-mukarram*-ը, *al-mubaḡḡal*-ը, *al-muʿazzam*-ը (պահպանված ալ-Կալկաշանդիի մոտ), *al-muʿazzaz*-ը, որոնք ալ-Կալկաշանդիի կողմից բնութագրված են որպես «Արևմուտքի արքաների տիտղոսներ» (*min*

¹⁵⁶ Եգիպտոսի և Ասորիքի մամուլքյան սուլթան 1363–1377 թվականներին:

¹⁵⁷ *Ṣeʿ al-Qalqaṣandī*, *Ṣubḥ al-āšā*, ց. 8, ք. 33 և *al-Sahmāwī*, *Al-Ṭağr al-bāsim*, ց. 2, ք. 814 (գրում է՝ «Սում հաստատվեց Ղազայի փոխարքայության մակարդակի փոխարքայություն»):

¹⁵⁸ *Ibn Nāzīr al-Ġayṣī*, *Tatqīf*, ք. 44.

alqāb mulūk al-Mağrib)¹⁵⁹: Բանաձևի վերջնամասը բովանդակային առումով փոփոխություններ չի կրել. կրոնական երանգ ունեցող բաղադրյալ պատվանունները գրեթե համարժեք են Լևոն Դ արքային ուղղված դիմումաձևում եղած կապակցություններին:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ հեղինակը հայոց արքայի հետ նամակագրության թղթի ձևաչափ է նշում «սովորական» չափսը (qaṭ al-āda)՝ մի ժամանակ եղած «կես չափսի» (qaṭ al-tult) փոխարեն: Qaṭ al-āda-ն, ինչպես վերևում ենք նշել, օգտագործվում էր «չորրորդ դասի» քրիստոնյա միապետներին գրելու համար: Հայոց արքայից բացի՝ այս ձևաչափի թղթով էր նամակագրություն տարվում նաև «Մոնֆերատի տիրոջ» և բոլոր նրանց հետ, որոնց հետ գրագրությունը տարվում էր «Սսի իշխողի» հետ գրագրության նմանությունամբ («ալ-Մաստաբա կղզու տեր», «Կիպրոսի իշխող»): Սրան հակառակ՝ Tatqif-ում մյուս քրիստոնյա տիրակալների՝ օրինակ, «Եթովպիայի արքայից արքայի», «Ջենովայի կառավարողների», «Վենետիկի տիրոջ» և այլոց հետ նամակագրության թղթի ձևաչափ է նշված «մեկ երրորդ չափսը» (qaṭ al-tult), որը, ինչպես գիտենք, գործածվում էր «երրորդ դասի» միապետներին գրելու համար: Սակայն այլուր՝ «սերբերի տիրոջ» մասին հատվածում, նույն հեղինակը գրում է. «Սերբերի տիրոջ՝ Աստեֆանոս Ֆրաքսի¹⁶⁰ հետ նամակագրությունը տարվում է «մեկ երրորդ» չափսով՝ Սսի իշխողի նմանությունամբ¹⁶¹: Նշանակում է այստեղ ինչ-որ շփոթմունք կա. կամ մատենագիրը թյուրիմացաբար է հայոց արքայի հետ նամակագրության թղթի ձևաչափ նշել «սովորական»-ը, կամ էլ հիշյալ Աստեֆանոսի հետ նամակագրության ժամանակ հայոց արքային ուղղված նամակները դեռ գրվում էին «մեկ երրորդ չափսով»: Այս հակասությունը, թերևս, արտահայտված է 1350–60-ական թթ. «մեկ երրորդ չափսից» «սովորական չափսին» տեղի ունեցած աստիճանական անցումը:

Կիրիկիո հայոց վերջին արքաների հետ նամակագրության՝ Իբն Նազիր ալ-Ջալչի կողմից ներկայացված դիմումաձևերի իսկությունը ստուգելու համար կղիմենք մեզ հասած ևս մի եզակի վավերագրի, ավելի ճիշտ՝ դրա լատիներեն թարգմանությանը, որն իր հին ֆրանսերենով գրված *Chronique d'Arménie* երկում արձանագրել է Հայոց վերջին արքա Լևոն Ե-ի խոստովանահայր, քարտուղար և վարքագիր ժան (Հովհաննես) Դարդեղը: Խոսքը հայոց

¹⁵⁹ Al-Qalqaṣandī, *Ṣubḥ al-āṣā*, ց. 6, ք. 29–30.

¹⁶⁰ Tatqif al-Ta'rif երկի խմբագիր Ռուզուֆ Վեսելին չի պարզաբանում այս տիրակալի ինքնությունը: Մեր կարծիքով խոսքն այստեղ Սերբիայի արքա (ցար) Ստեֆան Ե Ուրոշի (կառ. 1355–1371 թթ.) մասին է:

¹⁶¹ Ibn Nāẓir al-Ġayṣ, *Tatqif*, ք. 36; al-Qalqaṣandī, *Ṣubḥ al-āṣā*, ց. 8, ք. 49.

արքային, հայոց թագուհուն և նրանց զավակներին 1375 թ. Հալեպի փոխարքա Աշիկթամուրի կողմից սուլթան ալ-Աշրաֆ Շաաբանի անունից տրված «անվտանգության երաշխիքի»՝ amān-ի մասին է: Այս փաստաթղթի տրման հանգամանքների մասին Իբն Հաջար ալ-Ասկալանին, օրինակ, գրում է. «[Այդ թվականին] Աշիկթամուր ալ-Մարդինիի՝ Հալեպի փոխարքայի ձեռքով գրավվեց Սիսը, որը շարունակում էր մնալ հայ քրիստոնյաների ձեռքին: Նա Հալեպի գորքն այնտեղ էր առաջնորդել և երկու ամիս պաշարել, մինչև որ նրանց մոտ սակավացավ պարենը: Նա քարանետ մեքենաներ ուղղեց նրա վրա և կռվի մեջ ներգրավեց թուրքմեններին՝ բոլոր զարմերից՝ ավաջուկներին և բուզակներին: Նա, ով քարանետ մեքենաներ էր ուղղել, ալ-Մուալլիմ Խալիլ ալ-Այնթաբի անունն ուներ, ով հայտնի էր դրանց մասին իր գիտելիքներով և փայլուն օգտվում էր: Կոտորած կազմակերպեցին. և նրա տերը՝ թաքֆուրը, «ապահովության երաշխիք» խնդրեց և հանձնեց բերդը: Տևական դարաշրջանից հետո այդ բերդում բարձրացավ «միաստվածության ժողովրդի» (բնագրում՝ ahl al-tawhīd, նկատի ունի՝ մուսուլմաններին) խոսքը: Աշիկթամուրը Սսի տիրոջն ու նրա զինվորներին պատրաստեց՝ Կահիրե ուղարկելու նպատակով, և այդ առիթով ուրախության ծնծղաներ հնչեցվեցին»¹⁶²:

Սույն փաստաթուղթը, հայոց արքայի կյանքի անձեռնմխելիության գրավականը լինելով, հավանաբար մշտապես նրա ձեռքին է եղել, անգամ երբ վերջինս գերության մեջ է գտնվել Կահիրեում: Ուստի Դարդելը գրում է, որ ապահովագրի տեքստն արաբերեն բնօրինակից է թարգմանվել ֆրանսերեն: Արքային սուլթանի անունից տրված փաստաթուղթը Դարդելն այսպես է թարգմանել, և քանի որ բնագիրն այնքան էլ երկարաշունչ չէ, այն ամբողջությամբ կմեջբերենք.

<p><i>“En nom de Dieu le misericors des misericordieux, moy Mellec Lassarasier (sic) Aschechamour, c’est la fiancé de Dieu le hault et la fiancé de son messaige Mahomet, Dieu fist</i></p>	<p>«Հանուն բարեպաշտ և բարեգութ Աստծո: Ես՝ ալ-Մալիք ալ-Աշրաֆ Աշիկթամուրն եմ, և սա է ապահովագիրը Բարձրյալ Աստծո և ապահովագիրը նրա</p>
---	---

¹⁶² **Ibn Ḥaḡar al-Asqalānī**, *Inbā’ al-ġumr fī abnā’ al-‘umr*, bi-taḥqīq Ḥasan Ḥabaṣī, ց. 1 (al-Qāhira, 1969), ց. 74–75: Հմմտ. **Ibn al-Šihna**, *Rawḍ al-manāẓir fī ‘lm al-awā’il wa-l-awāḥir*, bi-taḥqīq Sayyid Muḥammad al-Muḥannā (Bayrūt, Dār al-kutub al-‘ilmiyya 1997), ց. 288–289; **Ibn Taġrī Birdī**, *Al-Nuġūm al-zāhira*, ց. 11, ց. 51; **Ibn al-‘Irāqī**, *Al-Ḍayl ‘alā al-‘ibar fī ḥabar man ‘abara*, ց. 2, bi-taḥqīq Šāliḥ Maḥdī ‘Abbās (Bayrūt, 1989), ց. 375; **al-Maqrīzī**, *Al-Sulūk*, ց. 3, ց. 237–238; **al-Saḡāwī**, *Al-Ḍayl al-tāmm ‘alā Duwal al-Islām li-l-Ḍahabī*, ց. 1, bi-taḥqīq Ḥasan Ismā’īl Marwa (al-Kuwayt-Bayrūt, 1992), ց. 272; **Ibn Iyās**, *Badā’i’ al-zuhūr fī waqā’i’ al-duhūr*, ց. 1.2, bi-taḥqīq Muḥammad Muṣṭafā (al-Qāhira, Dār iḥyā’ al-kutub al-‘arabiyya, 1975), ց. 139–140:

<p><i>oration et salut sur luy, et la fiancé nostre seigneur le puissant soudan des Arables et des Persiens, et le grant de la foy des des moussoulmans, et le justicier de tout le monde, et l'interfecteur des mescreans de nostre loy et des adversaires, le roy Mellec Lassarap, le grant du monde et de la foy, Syabban, le filz de nostre sire le soudan Jamaldin Hosseney, le filz de nostre seigneur le soudan et garantisieur Melech Massare, Mahammat, le filz de nostre seigneur garantisieur Mellech Mansour Gallahomi. Dieu lui doinst puissance sur ces heritaiges et le faice seigneur sur tout le terrien. C'est la fiancé du roy qui est le tres puissant de toute creature, le lyon tres fort, le baptisie en eaue de fons, le gardier des commandemens de l'euvangille, le roy du lignaige des Armins, et ly grant de ceulx de la creance de la Croix, Le capitainne de l'ost de Crist, et le fondement de la foy crestiens, amy des roys et des soudans, roy Luon, filz de Jehan, le prince que Dieu vous maintiengne en longue vie, a ce que il descende jus du donjon et</i></p>	<p><i>մարգարե Մուհամմադի, Աստ- ված օրհնի նրան և ողջունի, և ապահովագիրը մեր հզոր տիրոջ՝ արաբների և պարսիկների սուլթանի՝ մու- սուլմանական դավանության գլուխ, համայն աշխարհի դատավոր, անհավատների և մեր թշնամիների ոչնչացնող, արքա ալ-Մալիք ալ-Աշրաֆի՝ աշխարհի և հավատի գլուխ, Շաբանի՝ որդու մեր տեր Ջա- մալ ալ-Դին Հուսայնի՝ որդու մեր տեր և երաշխավոր ալ- Մալիք ալ-Նասիր Մուհամ- մադի՝ որդու մեր տեր և երաշ- խավոր ալ-Մալիք ալ-Մանսուր Կալավունի: Թո՛ղ Աստված նրան զորություն տա իր ժառանգության վրա և իշխանություն ամենայն երկրայինի վրա:</i></p> <p><i>Այս է ապահովագիրն ար- քայի՝ բոլոր արարածների մեջ հզորագույնի, զորեղագույն առյուծի, ավազանի ջուրը մկրտողի, Ավետարանի պատվիրանները պահպանողի, հայոց արքայի՝ խաչի երկրպագուներից մեծագույ- նի, քրիստոնեական բանակի գլուխ, քրիստոնեական հա- վատի հիմք, արքաների և սուլթանների ընկեր արքա Լևոնի՝ իշխան Ջեհանի որդու, որին թո՛ղ Աստված երկար</i></p>
---	--

que il le rende au puissant Soudan, et que voise la ou il vouldra. Et ceste fiancé luy vault a luy, a sa royne et a ses enffans, a son avoir et a toute se gent, et que il soit assureur et honnoure de toute creature. Et a ce que il saiche ceste presente cartre estre de creance, c'est pour luy, pour sa royne, pour ses enfans et pour son avoir.

Esript le mois d'avril, en l'an Mahommet VII LXXVII, Graces a Dieu, car fist oration sur Mahommet et sur ses disciples¹⁶³”:

օրերի կյանք տա: Այս ապահովագիրը տրվում է առ այն, որ եթե դուրս գա իր միջնաբերդից և հանձնվի մեր հզոր սուլթանին, կարող է գնալ, ուր կկամենա: Այս ապահովագրով երաշխավորվում են նրա, նրա թագուհու, նրա զավակների անձերը, նրա իչքն ու մարդիկ, ինչպես նաև նրա նկատմամբ հարգանքը բոլորի կողմից: Եվ թո՛ղ իմանա, որ այս ապահովագիրը հաստատուն է նրա համար, նրա թագուհու համար, նրա որդիների և ստացվածքի համար:

Գրված է հիշրայի 777 թ. ապրիլին: Գոհուլյուն Աստծո, ով գթասրտուլյուն ցուցաբերեց Մուհամմադի և նրա հետևորդների նկատմամբ:

Ցավոք, ապահովագրի արաբերեն բնագրից Դարդելի (կամ այլ թարգմանչի) կատարած թարգմանությունը չի արդարացնում մեր սպասելիքները: Թե՛ սուլթանին և թե՛ հայոց արքային վերագրված տիտղոսների և բաղադրյալ պատվանունների («ավագանի ջուրը մկրտող», «Ավետարանի պատվիրանները պահպանող») թարգմանական համարժեքների մի մասը հարազատ չէ մամլուքյան դիվանատան պաշտոնական գրագրության եզրութաբանությանը և միայն ենթադրաբար ենք դրանք նույնականացնում Իբն Նագիր ալ-Ջալչի արձանագրած բանաձևի տիտղոսների և պատվանունների հետ: Ալ-Աշրաֆ Շաբբանի անունից գրված և մեզ հասած այլ վավերագրերի համեմատությունից պարզ է դառնում, որ նրա թարգմանությունը խիստ մոտավոր է, անստույգ և բացթողումներով լի: Մասնավորապես բաց են թողնված հար-

¹⁶³ Jean Dardel, *Chronique d'Arménie*, p. 80–81: Հայերեն թարգմանությունը տե՛ս Յովհանն Դարդել, Ժամանակագրություն Հայոց, էջ 141–142 և Կ.Յ. Բասմաջեան, *Լեոն Ե Լուսինեան վերջին թագավոր Հայոց* (Պարիս, 1908), էջ 51:

զանք արտահայտող տիտղոսները: Օրինակ, մեզ է հասել 1366 թ. նույն սուլթանի անունից Վենետիկի դոժին ուղղված մի նամակի թարգմանությունը, որի դիմումաձևում առկա է սուլթան Շաբանի տիտղոսաշարը. «*Lo soldan grandissimo, lo regnador del regname honorabilissimo, lo signor nobele, prouezudo, lo iusto, lo estudiante, lo vitorioso, mantegnador de V uniuerso et de la fe, soldan de la saluation e di saluadi, procededor de la iusticia in li siegoli, saluador de l'inzuriadi de la man de quelli che iniuria, suceedor del regname, soldan de Arabi, de Persi e de Turchi, Alexandro del tempo, signor de le gratie, congregador del uerbo de la fe, posesor de le secrete e de le corone, conquistior de li centri, reposador de li regnami e de li aclimi e de li confini, regnador de li do mari, viador de le vie a li do inclinamenti, seruidor de li do templi reuerentissimi, ombria de Dio in la soa terra, mantegnador di so statuti e de i so comandamenti, soldan del plan de la terra, confidador de la terra pouolada, signor de li re e di soldani, procurador di fedeli, Saban, flo del re releuado, Ozain fio del soldan martira, Melechenacer, vardador de l'uniuerso e de la fe, Maamet, fio del soldan martira, Elmelich Almansor Chalaun; perpetua lo altissimo Dio lo so regname e dia vitoria a le suo caualarie e li so aiutori!*»¹⁶⁴: Նկատելի է, որ ի տարբերություն Դարդելի արձանագրած amān-ի տեքստի՝ Վենետիկի դոժին հասցեագրված նամակում սուլթանի տիտղոսների և պատվանունների թարգմանական համարժեքները շատ ավելի ներդաշնակ են մամլուքյան դիվանատան գրագիրների կիրառած տերմինաբանությանը:

Սուլթան ալ-Աշրաֆ Շաբանի տիտղոսաշարի ներկայացմամբ է սկսվում Շամս ալ-Դին ալ-Հալաբիի (մահ. 1377 թ. հետո) Al-Tibyān fī iṣṭilāḥ ahl al-zaman երկը, որին մի անգամ արդեն անդրադարձել ենք վերևում¹⁶⁵: Իսկ ալ-Կալկաշանդին իր Ṣubḥ al-aṣṣā երկում պահպանել է amān-ի մի նմուշօրինակ՝ գրված Շաբանի իշխանության օրոք՝ Հալեպի փոխարքայի պաշտոնում Աշիկթամուրին նախորդած Կաշթամուր ալ-Մանսուրիի կողմից¹⁶⁶: Հիշյալ փաստաթղթերի համադրական քննությունը (չնայած սուլթանին վերագրված նույնարժեք տիտղոսների որոշ տարբերությանը) թույլ է տալիս մոտավորապես վերականգնել հայոց արքային տրված ապահովագրի թղթառաջը:

هذا أمان الله سبحانه وتعالى وأمان نبيه سيدنا محمد صلى الله عليه وسلم وأمان مولانا السلطان الأظم العادل الجاهد المرابط المठाغر المؤيد المالك الملك الأشرف ناصر الدنيا والدين سلطان الإسلام والمسلمين محيي العدل في العالمين منصف المظلومين من الظالمين قاصع الكفرة والمشركين قاهر الطغاة والمعتدين مؤمن قلوب الخائفين والتائبين ملك البحرين صاحب القبلتين خادم الحرمين الشريفين وارث الملك سلطان العرب والعجم

¹⁶⁴ R. Predelli, *Diplomatarium Veneto-levantinum Sive Acta Et Diplomata Res Venetas Graecas Atque Levantis Illustrantia. 1351–1454* (Venetiis: Sumptibus Societatis, 1899), p. 113.

¹⁶⁵ Ṣams al-Dīn al-Ḥalabī, *Al-Tibyān* (MS. 8641), թ. 2բ:

¹⁶⁶ Al-Qalqaṣandī, Ṣubḥ al-aṣṣā, ց. 13, ք. 350–351.

ընծաների փոխանակման, բանակցային գործընթացում և զանազան քաղաքական հարցերի լուծման նպատակով ընծաների օգտագործման, դրանց դերի և նշանակության մասին միջնադարյան սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունները՝ օժտված համապատասխան պատմական մեկնաբանությամբ¹⁶⁸:

Հատկանշական է, որ ինչպես դիվանագիտական նամակագրության դեպքում, հայոց արքաներից մամլուքյան իշխանություններին հղվող ընծաների մասին հայկական աղբյուրների պարունակած վկայությունները նույնպես խիստ սահմանափակ են, և ինչպես դիվանագիտական նամակագրության դեպքում, այս դեպքում նույնպես երկու երկրների տիրակալների միջև ընծաների փոխանակության վերաբերյալ տեղեկությունների հիմնական աղբյուրը մամլուքյան մատենագրության հուշարձաններն են: Դիվանագիտական նվերների վերաբերյալ հիշատակությունները երբեմն հետաքրքիր փաստեր են պարունակում հայկական միջնադարյան նյութական մշակույթի ինքնատիպության մասին: Ստորև կառանձնացնենք հայ-մամլուքյան հարաբերությունների որոշ առանցքային դրվագներում ընծաների մատուցման կամ նվերների փոխանակության առնչությամբ հայ և արաբալեզու մատենագրության մեջ պահպանված ամենահիշարժան վկայությունները:

Բայց նախ պարզաբանենք, թե ինչ նկատի ունենք՝ «դիվանագիտական ընծա» ասելով: Ինչպես մարդկային առօրյա հարաբերություններում, այնպես էլ դիվանագիտության մեջ նվերը կամ ընծան այն մատուցողի վերաբերմունքի, ուշադրության, մտերմության նյութեղեն, առարկայական արտահայտությունն է, խորհրդանիշը՝ միտված ստացողի մոտ առաջացնելու այն հույզերն ու զգացողությունները, որոնք կանխամտածվել են այն տվողի կողմից: Եվ ինչպես առտնին հաղորդակցման մեջ, բայց առավել դիվանագիտության մեջ, նվերները, հուզաարտահայտչական բովանդակություն ունենալուց՝ այն է՝ հարգանքի, մտերմության, անկեղծ համակրանքի առհավատյա լինելուց զատ, կարող են ունենալ նաև ծածուկ նպատակներ, շահադիտական մտայնություններ կամ ենթատեքստ: Դիվանագիտական նվիրաբերումը պետական-քաղաքական միավորների կամ ժողովուրդների, նրանց հոգևոր-քաղաքական առաջնորդների, այլ բարձրաստիճան իշխանավորների հարաբերությունների անբաժանելի մաս է եղել դեռևս հնագույն ժամանակներից՝ որպես

¹⁶⁸ Դիվանագիտական ընծաների վերաբերյալ արաբալեզու մատենագրության մեջ պահպանված վկայություններն ուսումնասիրելիս՝ կսահմանափակվենք դրանց փոխանակման քաղաքական հանգամանքների և իրադրության համառոտ ներկայացմամբ և զերծ կմնանք հայ-մամլուքյան քաղաքական հարաբերությունների և ռազմական առձակատման միջադեպերի վերաբերյալ մեզ հայտնի բոլոր սկզբնաղբյուրային փաստերի մանրամասն քննությունից:

երկու կողմերի բարեկամական, դաշնակցային, ուժի և հզորության առումով միահավասար կամ ստորակայական հարաբերությունների խորհրդանիշ: «Արքաների միջև եղբայրություն, դաշինք, խաղաղություն և լավ [հարաբերություններ] կլինեն, եթե [նա] (իմա՝ ինքը) հարուստ լինի [թանկագին] քարերով, հարուստ լինի արծաթով և հարուստ լինի [ոսկով]».- ասվում է «Թելալ-Ամարնայի արխիվի» հինեգիպտական մի վավերագրում¹⁶⁹՝ հղված Բաբելոնի արքա Բուրնա-Բուրիաշ Բ-ից (կառ. մոտ մ.թ.ա. 1359–1333 թթ.) Եգիպտոսի էխնաթոն փարավոնին (կառ. մ.թ.ա. 1353–1336 թթ. միջակայքում): Այն բացահայտում է երկու կառավարողների հարաբերություններում նվերների փոխանակության մասին ընկալումների առանձնահատկությունն անտիկ հասարակության մեջ:

Համապատասխան ընծաների ընտրությունից բացի՝ միջպետական դիվանագիտության մեջ ոչ պակաս կարևոր դեր ու նշանակություն է տրվել բանավոր կամ գրավոր ուղերձն ու ընծան հասցեատիրոջը հասցնող բանագնացների՝ դեսպանների, նվիրակների և սուրհանդակների ընտրությունը, քանզի վերջիններս ըստ էության կատարում էին ոչ միայն քաղաքական-դիվանագիտական, այլև քաղաքակրթական և մշակութային երկխոսության գործառույթ: Ընդ որում, որքան ազդեցիկ էր բանագնացի անձից և նրա մատուցած ընծայից հասցեատիրոջ ստացած տպավորությունը, և որքան թիրախային էր նրա բովանդակած ուղերձը, այնքան ավելի իրատեսական էին «նվիրաբերի» հետապնդած քաղաքական նպատակի կենսագործման հնարավորությունները: Զուր չէ, որ միջնադարում դիվանագիտական ընծան հաճախ կապվել է կաշառքի, դահամունքի հետ:

Այժմ մի քիչ խոսենք դիվանագիտական նվիրաբերման մամուլային արարողակարգի մասին առհասարակ: Մամուլային աղբյուրներում դիվանագիտական ընծաները նկարագրելու համար մի քանի եզրույթներ են օգտագործվել՝ *hadiyya* (հգն. *hadāya*), *taqdima* (հգն. *taqādim*) և *tuhfa* (հգն. *tuhaf*): Ընդ որում, *taqdima*-ն սովորական ընծան չէր, այլ մամուլային տիրակալից ստորակայական կախման մեջ գտնվող միապետի կողմից մատուցումն էր՝ նվիրաբերումը՝ որպես հարկային պարտավորության բաղադրիչ: Հետևապես, ընծաների այս

¹⁶⁹ *Sté J. Aruz*, “The Art of Exchange,” in: *Beyond Babylon: Art, trade, and Diplomacy in the Second Millennium B.C.*, ed. by J. Aruz, K. Benzel, J.M. Evans (New York: The Metropolitan Museum of Arts, 2008), pp. 392–393 և հատկապես՝ *The El-Amarna Correspondence: A New Edition of the Cuneiform Letters from the Site of El-Amarna based on Collations of All Extant Tablets*, vol. 1, collated, transcribed and trans. by Anson F. Rainey Z⁷L, ed. by William M. Schniedewind (Leiden-Boston, Brill, 2015), pp. 100–105:

տեսակը սուլթանի կողմից փոխադարձ նվեր չէր ենթադրում¹⁷⁰։ Tuḥfa-ն նույն-պես սովորական նվերը չէր, այլ յուրահատուկ կամ արտասովոր իր, առարկա՝ շատ հաճախ գեղարվեստական արժեք ունեցող զարմանալիք, որը կարող էր իր արժանի տեղը գտնել պետական գանձարանի համապատասխան հավաքածուում։ Վերևում՝ որպես բնաբան ներկայացված քաղվածքում, ինչպես տեսանք, ալ-Ումարին գործածում է taṣīfa (հօն, taṣā'if) բառը, որը հար և նման նշանակություն ունի՝ «արտասովոր իր», «հազվագյուտ առարկա»։ Սուլթանի պատասխան նվերը նրան ենթակա կամ դիրքով ավելի ցածր համարվող տիրակալին in'ām էր կոչվում՝ «պարգև», «պարգևատրում», «շնորհ» նշանակությամբ¹⁷¹։

Մամլուքյան իշխանություններն Արևելքում տարածված սովորության համաձայն շատ մեծ դեր և նշանակություն են տվել դեսպանագնացությանը և դիվանագիտական առաքելությունների ընդունելության արարողակարգին։ Օտարերկրյա պաշտոնական պատվիրակությունների անդամներին՝

¹⁷⁰ Մամլուքյան սուլթանության և այլ պետական-քաղաքական միավորների հետ դիվանագիտական ընձանների փոխանակման թեման վերջին երկու տասնամյակում է հայտվել պատմաբանների ուշադրության կենտրոնում, չնայած որ Մամլուքների պատմությանը վերաբերող ուսումնասիրություններում դիվանագիտական նվիրաբերության առանձին հարցեր վաղուց են քննարկվել։ Թեմայի շրջանակներում կատարված հետազոտություններից էր Մ.Մ. ալ-Վակիազի հոդվածը Բահրինների դինաստիայի կառավարման շրջանում դիվանագիտական նվիրաբերման մամլուքյան արարողակարգի վերաբերյալ։ Տե՛ս **Mahāsin Muḥammad al-Waqqād**, “Al-Hadāya wal-tuḥaf zamana salāṭin al-mamālīk 648-784 h./1250–1382 m.”, Ḥawliyyāt kulliyat al-adāb (ṣāmi‘at ‘Ayn Ṣams), ց. 28 (al-Qāhira, 2000), ց. 185–240։ Մամլուքյան սուլթանների և Իրանի մոնղոլ իլխանների միջև դիվանագիտական ընձանների փոխանակությանը հոդված ունի նվիրված Դ. Լիթլը։ Տե՛ս **D.P. Little**, “Diplomatic Missions and Gifts Exchanged by Mamluks and Ilkhans,” in: *Beyond the Legacy of Genghis Khan*, ed. by Linda Komaroff (Leiden-Boston: Brill, 2006), pp. 30–42։ 2014 թ. Դ. Բեհրենս-Աբուսեյֆի հեղինակությամբ լույս տեսավ բնագավառի հետազոտությունների արդյունքներն ամփոփող մի կարևոր աշխատություն։ Աշխատությունը դիվանագիտական ընձանների մամլուքյան արարողակարգի առաջին համապարփակ ուսումնասիրությունն է։ Նրանում մասնավոր ուշադրության են արժանացել մամլուքյան սուլթանների և Կարմիր ծովի, Հնդկական օվկիանոսի տարածաշրջանի (Եմեն, Հնդկաստան), Աֆրիկայի (Եթովպիա, Նուբիա, Մադրիբ, Մալի, Բոռնո), Իրանի, Փոքր Ասիայի, Սևծովյան տարածաշրջանի, Կենտրոնական Ասիայի (Ոսկե Հորդա, Իլխանություն, Զալարյաններ, Թիմուրյաններ, Անատոլիայի թուրքմենական իշխանություններ, Սեֆյաններ, Օսմաններ), Եվրոպայի (Կաստիլիա, Արագոն, Կիպրոս, Վենետիկ, Ֆլորենցիա, Ֆրանսիա) միապետների միջև ընձանների փոխանակության մասին միջնադարյան արաբալեզու աղբյուրներում պահպանված նյութը՝ ներկայացնելով դրանց պատմական և աշխարհաքաղաքական համատեքստը։ Տե՛ս **D. Behrens-Abuseif**, *Practising Diplomacy in the Mamluk Sultanate: Gifts and Material Culture in the Medieval Islamic World* (London-New York: I.B. Tauris, 2014)։ Գրքում հայ-մամլուքյան դիվանագիտական նվիրաբերումն արծարծված չէ, և ներկայացված է ընծայաբերման ընդամենը մեկ դրվագ։ Տե՛ս **Անդ**, էջ 111։ Հիշարժան է նաև դիվանագիտական նվիրաբերման թեմայով հրատարակված ևս երկու հոդված։ Տե՛ս **Y. Frenkel**, “Embassies and Ambassadors in Mamluk Cairo,” in: *Mamluk Cairo*, pp. 238–259; **N. Coureas**, “The Exchange of Gifts between Christians and Muslims on Lusignan and Venetian Cyprus 1192–1517”, *Religions*, vol. 14, iss. 9 (2023)։

¹⁷¹ Տե՛ս նաև **D. Behrens-Abuseif**, *Practising Diplomacy*, 17–26։

դեսպաններին և սուրհանդակներին, պատվով և հյուրընկալության բոլոր սկզբունքների պահպանմամբ ընդունումը մամլուքյան միապետի առատաձեռնության, բարեպաշտության և իմաստնության ցուցիչ էր: Դիվանագիտական կարևոր այցելությունների ժամանակ մայրաքաղաք Կահիրեն անգամ զարդարվում էր, օտարերկրա դիվանագետների համար շքերթներ և այլ միջոցառումներ էին կազմակերպվում՝ օրինակ, այցելություն բուրգեր¹⁷²: Օտարազգի պաշտոնական հյուրերի, օտարերկրյա դեսպանությունների ընդունելության համար պատասխանատու էմիրը կոչվում էր *mihmāndār*¹⁷³: Արքունիքի բարձրաստիճան հյուրերի և դեսպանությունների հյուրընկալության արարողակարգով արդեն զբաղվում էր *hājib al-hājib* կոչվող պաշտոնյան՝ «գլխավոր սենեկապետը», որը գրեթե համապատասխանում էր կիրիկյան «ջամբուլայ»-ին:

Արարողակարգային առումով շարքային համարվող դեսպաններն ընդունվում էին Կահիրեի միջնաբերդի՝ *Qal'at al-ğabal*-ի ստորոտում գտնվող *Dār al-ḍiyāfa* կոչվող հյուրընկալության տանը: Իսկ ամենաբարձրաստիճան հյուրերն ընդունվում էին սուլթանական դղյակներին հարող արշավարանում, և նրանց ողջունելու էր գնում և ընդունելության էր հրավիրում «գլխավոր սենեկապետը»: «Հյուրընկալության տան» (*Dār al-ḍiyāfa*) գործունեության դեսպաններին ձեռքով, պարենով և օրապահիկով ապահովելու հետ կապված աշխատանքները գտնվում էին հատուկ պաշտոնյայի հոգածության ներքո, որը կոչվում էր «հյուրատան և շուկաների վերատեսուչ» (*nāzir dār al-ḍiyāfa wa-l-aswāq*)¹⁷⁴:

Այլ-Կալկաշանդին իր *Ṣubḥ al-a'šā* երկում այս և այլ խիստ արժեքավոր տեղեկություններն է հաղորդում օտարերկրյա դեսպանների ընդունելության մամլուքյան արարողակարգի մասին. «Սովորությունն է, որ երբ որևէ արքայի դեսպան է գալիս Սուլթանության սահմանային շրջաններ, այդ կողմերի փոխարքան գրում է սուլթանին՝ տեղեկացնելով դեսպանության մասին: Վերջինս թուլատրում է, որ իրեն անձամբ ներկայանա, պարզաբանվում է հանդիպման սուլթանական հանդիսակարգը, և նա ներկայանում է: Եթե ընդունելությունն ի վերջո կայանում է, և եթե ուղարկողը մեծ դիրք ունեցող արքա էր՝ դիցուք, «Արևելքի խաներից» մեկը, նրան դիմավորելու էին դուրս գալիս մեծագույն էմիրներից ոմանք, ինչպես օրինակ՝ փոխարքան, սենեկապետը և այլն: Նրան իջևան են տալիս սուլթանական այն ապարաններում՝ մերձ այն հրապարակին, որտեղ նա գնդակ է խաղում: Այն բարձր էր դեսպանների կեցավայրերից: Իսկ եթե [ուղարկողն] այդպիսին չէր, նրան դիմավորում էր

¹⁷² Անդ, pp. 13–14:

¹⁷³ *Al-Qalqaṣandī*, *Ṣubḥ al-a'šā*, ց. 4, ք. 187; *al-Sahmāwī*, *Al-Tağr al-bāsim*, ց. 1, ք. 339.

¹⁷⁴ *Al-Qalqaṣandī*, *Ṣubḥ al-a'šā*, ց. 4, ք. 32; *al-Sahmāwī*, *Al-Tağr al-bāsim*, ց. 1, ք. 416.

mihmāndār-ը և dawādār-ի¹⁷⁵ թուլլտվությամբ նրան տեղավորում էր «հյուրընկալության տանը» կամ որևէ այլ վայրում՝ համապատասխան նրա [պաշտոնեական] դիրքին: Հետո սպասում է հանդիպման օրվան, երբ սուլթանը նստում է «ընդունելության դահլիճում» (īwān), ներկա են գտնվում պետական երևելիները՝ սրի և գրի այրեր (իմա՝ ռազմական գործիչներ և գրագիր-քարտուղարներ-Գ.Գ.), որոնք պետք է ներկա լինեն ի պաշտոնե: Ներկայանում է այդ դեսպանը՝ իր հետ ունենալով բերած գրությունը: Նա համբուրում է հողը, և dawādār-ն ընդունում է նամակը նրանից և հպում դեսպանի դեմքին: Ապա փոխանցում է այն սուլթանին, ով բացում է այն և փոխանցում գլխավոր քարտուղարին, որպեսզի նա ընթերցի այն սուլթանի համար, [որից հետո վերջինս] արձակում է դրա վերաբերյալ իր հրամանը¹⁷⁶:

Այս մեկնաբանությունից եզրակացնելի է, որ Կիլիկիո հայոց արքաների դեսպաններն ակներևաբար դասվել են երկրորդ կարգին, և նրանց ընդունելությունն սուլթանական արքունիքում կազմակերպել են mihmāndār-ները:

Այլուր նույն հեղինակը գրում է, որ ընդունելությունների համար նախատեսված հանդիսասրահում մարմարիոնն ամբիոնի տեսքով բարձրադիր գահ կար, որ նման էր մզկիթներում դրվող ամբիոններին՝ պատին հենված: Սուլթանն այնտեղ նստում էր կարևոր օրերին՝ օրինակ դեսպանների ժամանման ժամանակ¹⁷⁷:

Դեսպանընկալության մամլուքյան արարողակարգի որոշ կանոնների մասին էլ կարելի է պատկերացում կազմել ևս մի հեղինակի՝ ալ-Հասան իբն Աբդ Ալլահ ալ-Սաֆադիի (մահ. մոտ 1317 թ.) Aṭār al-uwwal fī tartīb al-duwal երկրից¹⁷⁸: Սա այսպես կոչված «արքայազների հայելիներ» (*specula principum*)

¹⁷⁵ Բառացի՝ «սուլթանական թանաքամանը բռնող»: Այս պաշտոնյան, իր հիմնական գործառույթից զատ, պատասխանատու էր դիվանատան հետ սուլթանի կապի համար, նրան էր փոխանցում ստացված նամակները, տեղեկացնում էր արքունական պալատ ներկայացած հյուրերի և այցելուների մասին: Տե՛ս D. Ayalon, “Dawādār,” in: *EI2*, vol. 2 (C-G) (Leiden: E.J. Brill, 1991), p. 172; L.S. Northrup, *From slave to sultan*, pp. 241–242:

¹⁷⁶ Al-Qalqaṣandī, *Ṣubḥ al-a’šā*, ց. 4, ց. 58–58: Տե՛ս նաև ‘Abd al-Munīm Mağid, *Naẓm dawlat salāṭīn al-mamālīk wa-rusūmuhum fī Miṣr (dirāsa šāmīla li-l-naẓm al-siyāsīyya)*, ց. 1 (al-Qāhira, Maktabat al-Anğlū-al-Miṣriyya, 1979), ց. 154–155; al-Waqqād, “Al-Hadāya”, ց. 194–196; D. Behrens-Abouseif, *Practising Diplomacy*, pp. 14–15:

¹⁷⁷ Al-Qalqaṣandī, *Ṣubḥ al-a’šā*, ց. 4, ց. 6–7.

¹⁷⁸ Տե՛ս Al-Ḥasan b. Abī Muḥammad ‘Abd Allāh al-Ṣafadī, *Aṭār al-uwwal fī tartīb al-duwal*, bi-taḥqīq ‘Abd al-Raḥman ‘Umayra (Bayrūt, Dār al-ğayl, 1989): Հատկանշական է, որ ալ-Սաֆադիի նաև *Nuzhat al-mālīk wa-l-mamlūk վերնագրով ժամանակագրության հեղինակ է: Aṭār al-uwwal-ի հրատարակիչ Աբդ ալ-Ռահման Ումայրան այդ երկը ներկայացրել է որպես հեղինակի միակ աշխատություն: Նրա բացթողումը լրացրել է Nuzhat al-mālīk երկրի հրատարակիչ Ումար Աբդ ալ-Սալամ Թադմուրին՝ հրատարակությունն օժտելով հեղինակի կյանքի, գործունեության և մատենագրական ժառանգության մասին ներածական ակնարկով: Տե՛ս նույնի՝ Nuzhat al-mālīk wa-*

ժանրի աշխատությունն է՝ պետական արդյունավետ կառավարման ուղեցույց բարձրաստիճան իշխանավորների համար: Ինքը՝ ալ-Սաֆադին, մամլուքյան դիվանատան գրագիր էր, ուստի նրանում շարադրված շատ դրույթներ անկասկած կարելի է մամլուքյան արարողակարգի իր կյանքի օրոք արդեն իսկ գործառնված նորմեր համարել: Օրինակ, «Արքաների դեսպանների, նրանց տեսակների, նվերների և ընծաների մասին» գլխում հեղինակը գրում է, որ եթե անհնար է լինում արքայի հանդիպումը դեսպանի հետ, նա իր ենթականերից մեկին է ուղարկում՝ նրան տեսակցելու և նրա խնդրով զբաղվելու՝ ըստ նրա և նրան ուղարկողի դիրքի և հեղինակության: Եթե դեսպանը տիրակալի մոտ էր ուղարկված սահմանային ամրությունների կամ ռազմական շրջանների կառավարիչների կողմից, նա, հարկ է, որ անհապաղ զբաղվեր նրանց խնդրով, քանզի շտապողականությունը կարող էր օգտակար լինել, իսկ դանդաղումը՝ վնասաբեր: Հակառակ դեպքում միապետը դեսպանին առնվազն երեք օրով պետք է կեցավայր տար «հյուրընկալության տանը» և արգելեր որևէ մեկին հանդիպել նրան: Սրանից հետո միայն դեսպանը պետք է հրավիրվի արքունիք և հանդիպի սուլթանին՝ նրան ենթակա մեծամեծ իշխանավորների ներկայությամբ¹⁷⁹: Հստ խալիլ իբն Շահինի (մահ. 1468 թ.) օտարերկրացի պատվիրակի հետ հանդիպումը սովորաբար անցկացվում էր երկուշաբթի և հինգշաբթի օրերին և կոչվում էր *mawkib al-īwān* («ընդունելության սրահի թափոր»)՝¹⁸⁰:

Ալ-Սաֆադիի երկից հասկանում ենք նաև, որ նամակին ուղեկցող նվերները դեսպաններն իրենց հետ չէին տանում «ընդունելության դահլիճ»: Այս դեպքում սենեկապետը հայտնում էր սուլթանին, որ ոմն արքա նվեր է հղել նրան, որոնք անհրաժեշտ է ընդունել: Դեսպանը նվերները թողնում էր արքունյաց ապարանքների ամենամոտ դռան մոտ և ուղեկցվում դեպի «ընդունելության դահլիճ»: Եվ միայն այն ժամանակ, երբ սուլթանը թույլ էր տալիս ընդունել նվերները, ներս էին բերում և ցուցադրում՝ բացի հարձերից, որոնց

l-mamlūk fī muḥtaṣar sīrat man waliya Miṣr min al-mulūk, bi-taḥqīq ʿUmar ʿAbd al-Salām Tadmurī (Ṣaydā-Bayrūt, al-Maktaba al-ʿAṣriyya, 2003), §. 7–16: *Բեհրենս-Աբուսեյֆն իր գրքում ալ-Սաֆադիին սխալմամբ անվանում է «Իբն ալ-Աբբաս»՝ ձեռքի տակ ունենալով նրա աշխատության ժի՞ դարավերջի հրատարակությունը: Տե՛ս D. Behrens-Abouseif, Practising Diplomacy, pp. 19–20:*

¹⁷⁹ *Al-Ṣafadī, Aṭār al-uwwal, §. 193–194.*

¹⁸⁰ *Ḡaras al-Dīn Ḥalīl [i]bn Ṣāhīn al-Zāhīrī, Kitāb zubdat kaṣf al-mamālik wa-bayān al-ṭuruq wa-l-masālik / Zoubdat kachf el-mamālik: tableau politique et administratif de l’Egypte, de la Syrie et du Hidjāz sous la domination des Sultans mamloûks, du XIIIe au XVe siècles, texte arabe publié par P. Ravaisse (Paris: Imprimerie Nationale, 1894), §. 86: Սրանով էլ երևի կարելի է բացատրել դեսպաններին «հյուրընկալության տանը» երեք օր պահելու մասին ալ-Սաֆադիի մեկնաբանությունը:*

սուլթանի թուլլտվությամբ տեղափոխում էին Dār al-ḥarīm («սուլթանական հարեմ»)՝¹⁸¹ Ալ-Սաֆադին գրում է, նաև, որ արքաները շատ հաճախ այնպիսի նվերներ էին փոխանակում, որ ինչ-որ բան էին խորհրդանշում, որևէ թաքնված միտք (alǧāz) ունեին: Զորքորինակ, որպես նվեր ուղարկված գենքը կարող էր ընկալվել որպես սպառնալիք¹⁸²: Կարծես թե միջազգային արարողակարգային պրակտիկայում ընդունված էր, որ նամակները կից ցանկ ունենային՝ առդիր նվերների թվարկումով: Ցանկերը որպես ներդիր դրվում էին նամակների թղթագլանների մեջ¹⁸³: Արաբալեզու աղբյուրներից հայտնի է, որ ստացված նվերների համար մամլուքյան արքունիքում առանձին հաշվառում էր իրականացվում: Վարվում էին նվերների գրանցման համար նախատեսված հատուկ մատյաններ, որտեղ նշումներ էին կատարվում «նվիրատուի», նրա ուղարկած «նվերների», գրանց գնահատված արժեքի վերաբերյալ: Մատյաններում նվերների վերաբերյալ կատարված նշումներն անհրաժեշտության դեպքում կարող էին համեմատվել, իսկ ցածրարժեք նվերները կարող էին քաղաքական լուրջ սկանդալների պատճառ դառնալ¹⁸⁴:

Մեզ հասած քարտուղարության ձեռնարկներից իմանում ենք, որ մամլուքյան արքունիքի դիվանատանը նաև օտար լեզուների (al-luǧāt al-ʿaǧamiyya) թարգմանիչներ են եղել: Մասնավորապես ալ-Կալկաշանդիի աշխատությունից պարզ է դառնում, որ մամլուքյան նոտարատանը ծառայել են ինչպես բանավոր խոսքի համաժամանակյա, այնպես էլ գրագրության թարգմանիչներ: Ստացված պարսկերեն, հունարեն, ֆին ֆրանսերեն և լատիներեն գրությունների համար գործել են առանձին թարգմանիչներ, որոնք այնուհետև արաբերենով գրված բնօրինակ պատասխան գրությունները վերստին թարգմանել են հիշյալ լեզուներով: Իսկ այն լեզուների դեպքում, որոնց համար դիվանատանը մասնագիտացված թարգմանիչներ չկային, պատասխանները սովորաբար հղվում էին արաբերենով (bi-l-lafz al-ʿarabī wa-l-ḥaṭṭ al-ʿarabī)¹⁸⁵:

Թարգմանիչների գործունեության մասին հավելյալ տեղեկություններ է հաղորդում Շամս ալ-Դին Մուհամմադ ալ-Սահմալին (մահ. 1464 թ.) իր Al-Taǧr

¹⁸¹ Al-Ṣafadī, *Atār al-uwwal*, ք. 195.

¹⁸² Անդ:

¹⁸³ Fr. Bauden, “Lists of Gifts in the Mamluk Diplomatic Tradition,” in: *Culture matérielle et contacts diplomatiques entre l’Occident latin, Byzance et l’Orient islamique (XIe–XVIe siècle)*, ed. Fr. Bauden (Leiden-Boston: Brill, 2021), 329–405:

¹⁸⁴ Al-Waqqād, “Al-Hadāya”, ք. 198; D. Behrens-Abouseif, *Practising Diplomacy*, pp. 19–20.

¹⁸⁵ Al-Qalqaṣandī, *Ṣubḥ al-aʿšā*, ց. 1, ք. 167: Մամլուքյան դիվանատանը թարգմանիչների գործունեության, դիվանագիտության մեջ ու պետական կառավարման համակարգում լեզուների իմացության և կիրառության մասին տե՛ս նաև Սամիր ալ-Դուրուբիի գիրքը: *Šeʿu Samīr Maḥmūd al-Durūbī*, *Muqaddima fi dirāsāt al-tarǧama wa-l-tarāǧima fi dīwān al-inšāʾ al-mamlūkī* (ʿAmmān, 2007):

al-bāsim քարտուղարության ձեռնարկից: «...Տարբեր լեզուների թարգմանիչներ կան: Մեր օրերում պետական ծառայության մեջ են երեք հոգի՝ «Ֆրանկյան լեզուն» արաբերեն թարգմանելու նպատակով: Ալ-Նասիր Ֆարաջից¹⁸⁶ առաջ երկուսն էին, որոնցից մեկը [համաժամանակորեն] արաբերեն էր թարգմանում խոսքը, իսկ մյուսը կրկնության ժամանակ նրան սրբագրում էր»¹⁸⁷: Ջեռքի տակ փաստ շունենալով՝ դժվարանում ենք հստակեցնել, թե սուլթանական արքունիք հայ դեսպանների կողմից փոխանցվող պաշտոնական նամակների բնօրինակներն ունենում էին արդյոք ուղեկցող «ոչ պաշտոնական» արաբերեն թարգմանություններ, թե դրանք արաբերեն էին թարգմանվում մամլուքյան դիվանատանը: Ամեն դեպքում շենք կարծում, որ սուլթանի մոտ Կիլիկյան Հայաստանից ուղարկվող դեսպաններն արաբերենի իմացություն են ունեցել կամ մշտապես թարգմանիչ ուղեկից են ունեցել: Համոզված ենք, որ ինչպես «Ֆրանկյան լեզուների» դեպքում, հայերենի դեպքում նույնպես թարգմանության հետ կապված հարցը լուծվել է դիվանատանը: Շատ հավանական է, որ լեզվական այս խոչընդոտը կարող էր հաղթահարվել երրորդ՝ ինչպես ալ-Սահմավին է կոչում, «Ֆրանկյան» լեզվի՝ Կիլիկյան Հայաստանից ժամանած դեսպանների և ստացված պաշտոնական նամակների դեպքում՝ լատիներենի միջոցով, որը տվյալ պարագայում ծառայում էր որպես *lingua franca*: Ալ-Սահմավին գրում է նաև, որ թարգմանիչների համար պարտադիր պայման էր, որ մուսուլման լինեին: Նա այնուհետ գրում է, որ երբ «Ֆրանկյան համայնքից» դիվանատուն նամակ էր ստացվում, այն համապատասխան գրագրի կողմից արաբերեն էր թարգմանվում, և բովանդակությունը ներկայացվում էր դիվանապետին (*kātim al-sirr*), ով ընթերցում էր այն սուլթանի համար: «Անհավատների» (*ahl al-kufr*) նամակների թարգմանությամբ պետք է զբաղվեին առնվազն երկու հոգի, մուսուլմանների համար՝ մեկն էլ բավական էր: Թարգմանիչները գտնվում էին դիվանապետի վերահսկման և վերադիտման ներքո, և նա էր լիազորված հեռացնել նրանց աշխատանքից և մեկ ուրիշով փոխարինել¹⁸⁸:

Կիլիկիայից ուղարկված դեսպանագնացությունների նկարագրություններում մամլուքյան պատմիչները հաճախ են գրում հայոց արքաներին և դեսպաններին շնորհ տրված «պատվո հանդերձների» (*hil'a > hilā*) մասին: Մամլուքյան պաշտոնական դիվանագիտական արարողակարգի համաձայն *hil'a*-ն

¹⁸⁶ Նասիր ալ-Դին Ֆարաջ իբն Բարկուկ՝ Եգիպտոսի և Ասորիքի սուլթան 1399–1405, 1405–1412 թթ.:

¹⁸⁷ Al-Sahmawī, Al-Taqr al-bāsim, ց. 1, ք. 339.

¹⁸⁸ Անդ, ք. 339–340:

նախատեսված էր ստորակա ինքնակալին և նրա դեսպաններին պարզևատրելու համար: Օրինակ, իրենք՝ մամլուքյան սուլթանները, ինչպես ստանալը համարում էին խիստ նվաստացուցիչ և անընդունելի իրենց համար¹⁸⁹: Մամլուքյան պատմագրական երկերում Կիլիկյան Հայաստանից ժամանած դեսպանությունների մասին վկայությունների մյուս առանձնահատկությունն այն է, որ մուսուլման հեղինակներն ակնհայտ աչառություն մեծ և գրեթե առանց բացառության խուսափում են հիշատակել սուլթանի կողմից հայոց արքային տրված պատասխան նվերը՝ լավագույն դեպքում սահմանափակվելով «պատվո հանդերձների» հիշատակությամբ:

Դիվանագիտական հյուրընկալության անքակտելի նորմերից էր նաև դեսպանների կյանքի և անվտանգության անձեռնմխելիության ապահովումը: Ալ-Սաֆադին այս առիթով գրում է, որ միապետն իր իշխանությանը ենթակա բոլոր պաշտոնատար անձանց պետք է կարգադրի, որ դեսպանների և սուրհանդակների հարցն իրենց հոգածու վերաբերմունքի տակ պահեն՝ նրանց արժանի կեցավայրեր տան, վճարեն նրանց ապրուստի համար անհրաժեշտ ծախսերի և սնունդի համար, հարկ եղած դեպքում լուծեն նրանց փոխադրամիջոցների՝ հեծկան անասունների և երբեմն նույնիսկ պարեկային ուղեկցման հարցը¹⁹⁰:

Այս դրույթը խախտման էր ենթակա միայն բացառիկ դեպքերում, երբ սուրհանդակ հղած միապետը ինքն էր մեղադրվում դիվանագիտական էթիկայի կանոնների զանցառման մեջ, կամ երբ ըստ դեսպանընկալ կողմի՝ առաքելության անդամները պատշաճ վարքագիծ չէին դրսևորում: Փաստորեն, բանակցային կողմերից մեկը լիազորված էր անտեսելու դիվանագիտական անձեռնմխելիության նորմը, երբ մյուս կողմն արդեն համարվում էր նորմ, դաշինք կամ պայմանավորվածություն խախտած: Այդ դեպքերում սուլթանը կարող էր ոչ միայն շքանշաններ նրանց բերած նվերներն ու նամակը, այլև պատժել դեսպաններին: Այսօրինակ անհաջող դիվանագիտական առաքելություններից մեկի մասին հետաքրքրական վկայություն ունի Շաֆի իբն Ալին (մահ. 1330 թ.), ով արքունի դիվանատան գրագիրներից էր: Ըստ նրա՝ 1265 թ. սուլթան Բայբարս ալ-Բունդուկդարին թանկագին նվերներով և հաշտության առաջարկով ներկայացած հայ դեսպաններից երկուսի միջև վեճ է ծագել, և նրանցից մեկը դանակահարել է մյուսին, իսկ Բայբարսն էլ հրամայել է կախաղան բարձրացնել առաջինին: Մյուս դեսպանները խնդրել են խնայել նրան, բայց սուլթանը մերժել է: Դիվանագիտական այս անախորժ միջադեպի հարթ-

¹⁸⁹ D. Behrens-Abouseif, *Practising Diplomacy*, pp. 23–24.

¹⁹⁰ Al-Şafadī, *Atār al-uwwal*, §. 193.

ման համար նրանք հայցել են որոշ էմիրների միջնորդությունը՝ խոստանալով, որ մեղսագործն իր արժանի պատիժը կստանա իր երկրում, որից հետո միայն Բայբարսը համաձայնել է¹⁹¹։

Ինչպես երևում է, այս պատվիրակությունը սուլթան Բայբարսի հետ բանակցության սեղանի շուրջ նստելու Հեթումի միակ փորձը չի եղել։ Ալ-Յունինի պատմիչից տեղեկանում ենք, որ 1265 թ. ամռանը (663 թ. Շավվալ ամսին) Սսի տերը (ṣāḥib Sīs) դեսպանություններ է հղել՝ տեղեկացնելու սուլթանին «Հուլաղուի մահվան, ինչպես նաև այն մասին, որ նրա զորքերը համախմբվել են նրա որդու՝ Աբաղայի շուրջ, և որ Բերքեն հարձակվել է նրա վրա և պարտության մատնել»¹⁹²։ 1266 թ. մայիս-հունիս ամիսներին, երբ Բայբարսն արդեն պաշարման օղակի մեջ էր առել Սաֆաղը, կրկին նրան են ներկայանում «Սսի տիրոջ» դեսպանները՝ նվերներով, որոնք նա մերժում է և հրաժարվում անգամ նրանց բերած նամակն ընդունել¹⁹³։ «Եւ բազում անգամ թագաւորն առաքեաց առ սուլտանն արս պատուաւորս գերագոյն պարգեւօք զի արասցե սէր, և սուլտանն ոչ առնոյր յանձն», - հաստատում է Սմբատը մամլուքյան պատմիչների վկայությունները։ Ակնհայտ էր, որ խաչակիրների ծովափնյա տիրույթները (Կեսարիա, Հայֆա, Արսուֆ, Սաֆաղ և այլն) գրավելու ծրագրերում՝ Եգիպտոսի տիրակալն անխուսափելիորեն ներառել էր նաև հայոց թագավորությանը հարվածելու օրահարցը¹⁹⁴։

Սսի արշավանքը տեղի է ունենում արդեն 1266 թ. օգոստոսին։ Իր երկրի սահմանները հատող մամլուքյան զորքերը դիվանագիտական հնարներով կանգնեցնելու Հեթում Ա-ի բոլոր փորձերը դատապարտված էին ձախողման։ Շաֆի իբն Ալին գրում է, որ երբ մամլուք հրամանատարները «Սսի երկրի» կենտրոնական մասերն էին հասել (tawassatāhā), նրանց ևս մի հայկական դեսպանություն է ընդառաջ գնացել, որի անդամներին, սակայն, շղթայել են ու բանտ նետել՝ հրաժարվելով լսել Սսի արքայի հնազանդության խոստումները։ «Ալ-Մալիք ալ-Մանսուրը,- գրում է նա,- սկսեց ավելի խորանալ և ավերել Սսի [երկրի] հողերը (al-bilād al-Sīsiyya)՝ շրջան առ շրջան, բերդ առ բերդ, ամրոց առ

¹⁹¹ Šāfi' ibn 'Alī, Ḥusn al-manāqib al-sirriyya al-muntaz'a min al-sira al-Zāhiriyya, bi-tahqīq 'Abd al-'Azīz ibn 'Abd Allāh al-Ḥuwaytīr (al-Riyāḍ, 1989), §. 208.

¹⁹² Al-Yūnīnī, Dayl Mirāt al-zamān, al-tab'a al-ūlā, ց. 2 (Ḥaydārābad, Maṭba'at Dā'irat al-Ma'ārif al-'Uṭmāniyya) (հետախուսու՝ Dayl (Ḥaydārābad), 1955, §. 322.

¹⁹³ Տէ՛ս Անդ, §. 343, *ինչպես նաև* Ibn Taḡrī Birdī, Al-Nuḡūm al-zāhira, ց. 7, §. 125:

¹⁹⁴ Հմմտ. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, աշխատասիրութեամբ Հ. Սերովբէ Ազըլեանի (Վենետիկ, 1956), էջ 245:

ամրոց, կողոպտեց հարստութիւնները (al-amwāl), գերութեան քէց երեխաներին (al-iyāl), մինչև որ հասավ Սիս»¹⁹⁵: Նույնքան անհաջող էին նաև մամլուքյան զորքերին զինական դիմադրութիւն ցույց տալու հնարավորութիւնները: Երկիրը ենթարկվում է համատարած թալանի և կողոպուտի, ավերվում և հրոճարակ են դառնում քաղաքներն ու բերդերը՝ այդ թվում քաղաքամայր Սիսը, հազարավոր մարդիկ սպանվում են կամ քշվում գերութեան: Ընդ որում, Մառիի նշանավոր ճակատամարտում սպանվում է Հայոց արքայի եղբայրը և որդիներից Թորոսը, գերի է ընկնում մյուս որդին՝ հայոց արքայազն Լևոնը, գերեվարվում է նաև արքայի եղբոր՝ հայոց սպարապետ Սմբատ Գունդստաբլի որդին՝ Վասիլ Թաթարը: Մամլուքյան զորքերի նահանջից հետո, հիշյալ ողբերգութեան մեջ գոնե որևէ սփոփանք գտնելու նպատակով, պարզ է, որ Հեթումը ոչ մի միջոցի առաջ՝ թե՛ դիվանագիտական և թե՛ նյութական, կանգ չէր առնելու որդուն և իր գահաժառանգին եգիպտական գերութիւնից ազատելու նպատակով: Շուրջ երկու տարի Հեթումի դեսպաններն անդադար Սիս-Կահիրե ճանապարհին են լինում՝ Լևոնին ազատ արձակելու կամ փրկագնելու հարցում սուլթան Բայբարսին համոզելու նպատակով: Բազմաթիվ այդ դեսպանութիւններից վկայաբերենք մեկը, որում նաև Հեթումի հղած նվերների մասին հիշատակութիւն կա: Այսպես, 1267 թ. փետրվար-մարտ ամիսներին, երբ ալ-Ջահիր Բայբարսն Ասորիք էր եկել՝ Սաֆադի վերակառուցման աշխատանքներով զբաղվելու, նրան է ներկայանում մի հայկական դեսպանութիւն. «Ժամանեցին Սսի դեսպանները՝ նվերներով: Նրանք տեսան Ֆրանկ դեսպաններին, ինչպես նաև կտրված գլուխներ նիզակների վրա»¹⁹⁶: Պատմիչի հաղորդումից պարզ է, որ այս դաժան տեսարանը միտումնավոր էր ստեղծվել՝ քրիստոնյա դիվանագետներին ահաբեկելու նպատակով: Երկար խուսանավումներից հետո, Բայբարսն ի վերջո ձևակերպում է իր պահանջները. բացի տարածքային զիջումներից, նա ցանկացավ, որ Հեթումը մոնղոլական գերութիւնից ազատի և իրեն վերադարձնի իր մտերիմ մի մամլուքի՝ Սունկուր ալ-Աշկար անունով: Հայոց արքան համաձայնեց և որոշ ժամանակ անց գտավ «սուլթանի պահանջած նվերը»: Սուլթանը, սակայն, չշտապեց խաղաղութեան շուրջ վերջնական բանակցութիւններ սկսել, մինչև որ 1268 թ. չգրավեց Անտիոքը: Անտիոքի նվաճումը ևս հոգեբանական ճնշում էր Հեթումի վրա՝ նրանից որքան հնարավոր է շատ զիջումներ կորզելու նպատակով: 1268 թ. մայիսին կնքվեց հայ-մամլուքյան առաջին պայմանագիրը, իսկ Լևոնն ու մյուս պատանդված իշխանավորներն ազատվեցին գերութիւնից: Ընդ որում թե՛ գերութեան ժամանակ և թե՛ ազատ արձակելիս մուսուլման տիրակալը Լևոնին

¹⁹⁵ Šāfi' ibn 'Alī, Husn al-manāqib, ֆ. 237.

¹⁹⁶ Ibn 'Abd al-Zāhir, Al-Rawḍ al-zāhir, ֆ. 281.

վերաբերվում է ըստ արժանվուն՝ պատվով և հարգանքով, ինչպես հարիր է արքաներին: Մոտ երկու տարվա պանդխտությունից հետո հայոց արքայազնը պատիվներով և նվերներով ճանապարհվում է Կիլիկիա. «Եվ մինչ յայսմ մեծի տազնապի և ի դողման էաք, բացաւ առաւաւտ խաղաղութեան մարդասիրին Աստուծոյ, և մեծն Լեւոն՝ թագաժառանգն Հայոց՝ զերծեալ եղև խնամաւքն Աստուծոյ յերկաթի հալոցացն, ի ծառայութենէ և ի ձեռաց նոյն արքային Եգիպտացոց: Եւ բազում պատուով և ընծայիւք եկն յաշխարհ և ի հայրենի աթոռ իւր, և եղև խաղաղութիւն երկրիս և խնդութիւն քրիստոնէից»¹⁹⁷: Սմբատը գրում է, որ Սունկուր ալ-Աշկարին ստանալուց հետո, Բայբարսը բազում նվերներ է շնորհել նրան Եգիպտոս հասցրած Լեւոն իշխանին՝ Սմբատ Սպարապետի որդուն, ինչպես նաև մինչև «փոխանակման գործարքի» իրականացումը որպես երաշխիք պատանդ մնացած հայ ազնվականներին. «... զոր տեսեալ սուլտանին ուրախացաւ ուրախութիւն մեծ, և բազում տուրս շնորհեաց իշխանին Լեւոնի, և դարձան պանդանտքն բազում պարգեւօք»¹⁹⁸:

Յավոք, մուսուլման պատմիչները չեն պահպանել հայ-մամլուքյան առաջին դաշնագրի տեքստը, և նրանում ներառված դրույթների մասին կարելի է միայն ենթադրություններ անել: Այնուհանդերձ, ամփոփելով սկզբնաղբյուրային փաստերը՝ կարելի է եզրակացնել, որ պայմանագիրը կետ է ներառել մոնղոլների և Իկոնիայի սելջուկների վերաբերյալ գաղտնի տեղեկությունների փոխանցման, ավերված բերդերի վերաշինման արգելքի մասին: Պայմանագրում, ըստ ամենայնի, առանձին կետ է ներառված եղել նաև մամլուքյան սուլթաններին պարբերաբար թանկարժեք ընծաներ և պարգևներ մատուցելու վերաբերյալ: Այս մասին վկայություններ մամլուքյան պատմագրության մեջ իրապես գտնվում են:

Զորորինակ, մամլուքյան պատմիչները սուլթան Բայբարսի՝ Կիլիկյան Հայաստանի վրա 1275 թվականին երկրորդ անգամ արշավելու պատճառաբանություններից մեկը համարում են հայոց արքայի կողմից ընծաների մատուցման պարտավորության չկատարումը: Ինքը՝ սուլթանի վարքագիր Իբն Աբդ ալ-Ջահիրը, այս մասին գրում է. «Սաի տերը դադարել էր ուղարկել իր վրա դրված նվերները, ինչպես նաև խախտել էր գինադադարի այն պահանջը, ըստ որի՝ նա չէր կարող վերականուցել ոչ մի շինություն և ոչ էլ բերդ ամրացնել»¹⁹⁹:

¹⁹⁷ Տե՛ս **ՀԶԶ, ԺԳ դար**, էջ 359–360, ինչպես նաև՝ **Անդ**, էջ 588:

¹⁹⁸ **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք (Վենետիկ), էջ 251:

¹⁹⁹ **Ibn 'Abd al-Zāhir**, Al-Rawḍ al-zāhir, ֆ. 432; **al-Nuwayrī**, Nihāyat al-arab, ց. 30, ֆ. 216–219; **Ibn al-Furāt**, Tārīḥ al-duwal wa-l-mulūk (հետայսու՝ Al-Duwal), ց. 7, bi-tahqīq Quṣṣantīn Zurayq wa-Izz al-Dīn Nağla (Bayrūt, 1942), ֆ. 25–33; **al-Maqrīzī**, Al-Sulūk, ց. 1.2, 1957, ֆ. 616–618:

Այս արշավանքը նույնպես ծանր հետևանքներ ունեցավ հայոց թագավորության համար. թշնամական հրոսակախմբերը ոտնատակ արեցին երկրի տարածքի մեծ մասը՝ մեծ ու փոքր քաղաքներն ու բերդերը, և դաժան հաշվեհարդար տեսան հայ բնակչության հետ: Պատահական չէ, որ Հայոց արքայի դիվանապետ կամ ջանցլեր Վահրամ Բաբունին, Բայբարսի այս արշավանքն էլ ավելի ավերիչ ու ողբերգական է համարել, քան 1266 թվականինը.

«Զբոլոր երկիրս ապականեալ
Բիրապատիկ՝ շար գործեցեալ,
Քան զառաջին՝ ըն գոր տեսեալ»²⁰⁰:

Ընծաների նվիրաբերման սովորությունը, ինչպես երևում է 1275 թ. դեպքերից հետո վերականգնվել է, շնայած լարվածությունը երկու պետությունների տիրակալների միջև չի պակասել: Բայբարսն այս ժամանակ դիվանագիտական գաղտնի կապի մեջ էր Ռումի սուլթանության վեզիր Մուին ալ-Դին Փերվանեի հետ: Վերջինիս երկակի խաղի մեջ էր մտել մոնղոլների և մամլուքների հետ՝ Բայբարսին խոստանալով տերը դարձնել նաև Իկոնիայի սուլթանության գահի, եթե նա արշավանք կազմակերպեր դեպի Ռում: Վեզիրի երկդիմի գործողությունների էությունը վաղուց հասկացել էր Լևոն Բ-ը՝ քանիցս զգուշացնելով մոնղոլական իշխանություններին: Պատահական չէ, որ Բայբարսին շարունակ հայոց թագավորի դեմ գրգռելով՝ հենց նրա դրդմամբ է, որ Եգիպտոսի սուլթանը մեկ տարի առաջ արշավել էր Կիլիկիա: Իզզ ալ-Դին իբն Շահդադ պատմիչը հիշրայի 675 թ. Սաֆար ամսի տակ (1276 թ. հուլիս-օգոստոս) գրում է. «Երբ սուլթանն իջևանեց Հոմսում, նրան ներկայացան դեսպաններ Սաի տիրոջից՝ իրենց հետ նվերներ ունենալով: Նա ընդունեց նվերները, բայց դեսպանների հետ չհանդիպեց»²⁰¹:

Առաջ անցնելով նշենք, որ սուլթան Բայբարսի արշավանքը դեպի Ռում վերջապես իրականություն դարձավ 1277 թ. գարնանը՝ ապրիլ-մայիս ամիսներին: Այնուամենայնիվ, Փերվանեի անհասկանալի և շատ իմաստներով անտրամաբանական գործողությունների պատճառով արշավանքը ոչ միանշանակ արդյունքներ ունեցավ: Այդ դեպքերը բավական մանրամասն լուսաբանման են արժանացել արդի պատմագրության մեջ²⁰²:

²⁰⁰ Վահրամայ Բաբունույ Ոտանաւոր պատմութիւն Ռուբենեանց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ Վարդապետ Շահնազարեանց (Փարիզ, 1859), էջ 232:

²⁰¹ 'Izz al-Dīn Ibn Šaddād, Tārīḥ al-Mālik al-Zāhir, bi-taḥqīq Aḥmad Ḥuṭayṭ (Die Geschichte des Sultans Baibars von 'Izz ad-dīn Muḥammad b. 'Alī b. Ibrāhīm b. Šaddād (st. 684/1285) (Wiesbaden: Franz Steiner Verlag, 1983), ք. 161.

²⁰² Մուին ալ-Դին Փերվանեի գործունեությանն առավել հանգամանալից անդրադարձել են Կլոդ Կահենն ու Ռ. Ամիտայը, շնայած վեզիրի ոչ բոլոր քայլերի ու քաղաքական որոշումների տրամաբանությունն է հնարավոր եղել մինչև վերջ հասկանալ: Տե՛ս Cl. Cahen, *La Turquie*, p.

Նմանօրինակ մի իրավիճակ էլ ստեղծվում է 1285 թ., երբ Լևոն Բ արքան, վախենալով մամլուքյան զորքերի վերահաս ներխուժումից, հուսահատ փորձեր էր կատարում՝ խաղաղության շուրջ բանակցություններ սկսելու ալ-Մանսուր Կալավուն (մահ. 1279–1290 թթ.) սուլթանի հետ: Վերջինիս մոտ ուղարկված բոլոր դեսպանություններն անհաջողություն էին ունեցել, և պատվիրակության անդամները ձերբակալվել էին՝ առանց որևէ պատասխան տալու: Այս պարագայում Լևոնը որոշում է միջնորդությամբ լուծել հարցը: Միջնորդի և հաշտարարի դերն ստանձնում է Տաճարական ասպետական կարգի մագիստրոսը, ում նամակը նույն ասպետական կարգի Կիլիկյան Հայաստանի առաջնորդը՝ kamandūr-ը, հայոց արքայի կողմից փոխանցված նվերի հետ մեկտեղ ներկայացնում է Կալավունին: Վերջինս ընդունում է հաշտարարության միջնորդությունը և համաձայնում խաղաղության շուրջ բանակցություններ սկսել. «Երբ մեր տեր սուլթանը պաշարել էր Հիսն ալ-Մարկաբը, ժամանեց Հայոց երկրի տաճարականների քոմանդուրը՝ Սսի տիրոջ գրավոր դիմումով: Նա Թաքֆուրի կողմից ընծա և գրություն էր բերել, ինչպես նաև մեկ այլ գրություն տաճարականների հրամանատարից (իմա՝ մագիստրից)²⁰³»: Պատմիչն ընծան բնութագրում է որպես փառահեղ, այն բովանդակում էր արծաթեղեն (արծաթյա սպասք), կտորեղեն և այլն²⁰⁴:

Բանակցություններն ավարտվեցին 1285 թ. հայ-մամլուքյան երկրորդ պայմանագրի կնքմամբ՝ տասը տարի ժամանակով, որով հայոց թագավորությունն ընդունեց իր վասալական-ստորակայական կախվածությունը Մամլուքյան սուլթանությունից՝ 500 հազար դիրհամ տարեկան հարկ վճարելու պարտավորություն ստանձնելով: Բացի դրամական հարկից՝ Կիլիկյան Հայաստանը պարտավորվում էր նաև մամլուքյան իշխանություններին վճարել «ապրանքային ընծաների» (taqādim) տեսքով՝ ևս ընդհանուր 500 հզ. արժեքով: Մասնավորապես պայմանավորվածություն է կայանում, որ Սիսն ամեն տարի պետք է Կահիրեին մատակարար նաև երիվարների (25 գլուխ), ջորիների (25 գլուխ), երկաթյա պայտերի (10 հազար հատ) և դրանց մեխերի կոնկրետ

256–270 և **R. Amitai-Preiss**, *Mongols and Mamluks: The Mamluk-Īlkhānid war, 1260–1281* (Cambridge, Cambridge University Press, 1995), pp. 159–178, ինչպես նաև **C. Hillenbrand**, “Mu‘īn al-Dīn Parwāna: The servant of two masters?”, *Miscellanea Arabica et Islamica, Dissertationes in Academia Ultrajectina prolatæ anno MCMXC*, selegit et editit F. de Jong (Leuven: Peeters Press, 1993), pp. 267–274:

²⁰³ 1273–1291 թթ. Տաճարական ասպետական կարգի մագիստրի պաշտոնը զբաղեցրել է Գիյոմ դը Բոժեն (Guillaume de Beaujeu): Նա գոհվել է ալ-Աշրաֆ Նալիլ սուլթանի կողմից Աբրայի գրավման ժամանակ՝ 1291 թ.:

²⁰⁴ **Ibn ‘Abd al-Zāhir**, *Taṣrif al-ayyām*, §. 93.

խմբաքանակ: Սրան գումարվում էին սովորական նվերները և գործվածքեղենը²⁰⁵: Փաստորեն, նվերների մատուցումը 1285 թ. տասնամյա հաշտության պայմանագրով շարունակվել է:

Հայ-մամլուքյան հաշտության դաշնագիրը, իհարկե, ոչ թե տասը, այլ միայն յոթ տարվա հարաբերական խաղաղություն հաստատեց Կիլիկյան Հայաստանի և Մամլուքյան սուլթանության միջև: Երկու երկրների հարաբերություններում որոշակի լարվածություն առաջացավ 1289 թ. գարնանը, երբ Կալավունը տարածքային զիջումներ ներկայացրեց հայոց գահին Լևոնին փոխարինած որդուն՝ Հեթում Բ-ին (1289–1307 թթ. ընդմիջումներով): Կալավունն իր սուլյն պահանջի ներկայացման պատճառ կարող էր մատնանշել պայմանագրով հայկական կողմի ստանձնած հարկային պարտավորությունների զանցառումը, դրանց թերակատարումը կամ նորահռչակ արքայի կողմից սուլթանին ուղղված ընծաների ուղացումը: Արաբ պատմիչներից ալ-Մակրիզին այս առիթով գրում է, որ 1289 թ., երբ Կալավունը պաշարման մեջ էր առել Տրիպոլին, նրան են ներկայանում «Սսի դեսպանները՝ նրա գթասրտությունը խնդրելու: Սուլթանը նրանցից պահանջում է հանձնել Մարաշը, Բեհսան (գրչագրական սխալ է. պետք է լինի Բեհեսնան – Գ.Դ.) և սովորականի պես վճարել հարկերը (al-qat‘a): Նա, դեսպաններին ընծաների (բնագրում՝ ḥala‘a, այսինքն՝ «հարգանքի հագուստ»՝ ḥilā‘, հագցրեց) արժանացնելով, հետ ուղարկեց»²⁰⁶: Ալ-Մակրիզին, սակայն, հայոց արքայի պատասխանի մասին չի խոսում: Փոխարենը, այդ մասին վկայություն ենք գտնում այլ մատենագիրների՝ ալ-Նուվայրիի, դպտի Մուֆադդալի և Իբն ալ-Ֆուրաթի մոտ: Նրանցից, օրինակ, Իբն ալ-Ֆուրաթը, որ հենց երեկ ալ-Մակրիզիի սկզբնաղբյուրն է եղել, գրում է. «Վերադարձան Սսի դեսպանները բազմաթիվ նվերներով և ներողություն խնդրեցին, որ չեն կարող հանձնել Մարաշն ու Բեհեսնին, բայց [փոխարենը] կարող են մեծ գումարներ վճարել ամեն տարի»²⁰⁷: Սուլթանը, հավանաբար արդեն իսկ գոհացած լինելով կորզած նվերներից, զիջում է, և բանը սրանով էլ ավարտվում է: Կալավունի հաջորդի՝ ալ-Աշրաֆ Խալիլի (կառ. 1291–1294 թթ.) օրոք պայմանագրի հետագա գործողությունը պահելն արդեն խիստ անիրատեսական է դառնում: Լևոնտի խաչակրաց վերջին «բլոկպոստերի»

²⁰⁵ Անդ, թ. 92–93, 99:

²⁰⁶ *Še‘u al-Maqrīzī*, Al-Sulūk, ց. 1.3, թ. 748: Հմմտ. *al-Nuwayrī*, Nihāyat al-arab, ց. 31, թ. 106; *ibn al-Furāt*, Al-Duwal, ց. 8, bi-tahqīq Qusṭanīn Zurayq wa-‘Izz al-Dīn Nağla (Bayrūt, 1939), թ. 81 և *Mufaḍḍal*, Al-Nahğ al-sadi (PO, t. 14), թ. 367 [p. 531]: Հմմտ. *A.D. Stewart*, *The Armenian Kingdom*, pp. 72–73:

²⁰⁷ *ibn al-Furāt*, Al-Duwal, ց. 8, թ. 81.

նվաճման հաղթարշավը սուլթանը պսակում է հայոց կաթողիկոսանիստ Հռոմկլայի առմամբ՝ 1292 թ.²⁰⁸: Ալ-Աշրաֆն իր ազդեցիվ արտաքին քաղաքականության սլաքները հայոց թագավորության դեմ է ուղղում նաև հաջորդ տարում: Այս լուրը քաղաքական խժոժությունների բովում գտնվող հայոց արքունիքում մեծ տագնապով են ընդունում՝ ամեն ճիգը գործադրելով ալ-Աշրաֆ իսլամի հանդարտեցնելու և վերահաս արշավանքի մտքից նրան հեռու պահելու համար՝ չխորշելով անգամ մամլուքներին զիջել Բեհեսնի, Մարաշ և Թեյ Համդուն ռազմավարական բերդերը և համաձայնելով տարեկան հարկի կրկնապատկման պահանջին: Ըստ ալ-Այնի պատմիչի՝ երբ սուլթանը գտնվում էր Դամասկոսում, նրան են ներկայանում «թաքֆուրի փոխարքան և մի խումբ հայոց մեծամեծերից»՝ ընդունելության արժանանալով. «Երբ ներս մտան, շարունակում է նա, համբուրեցին հողը նրա առաջ՝ հանելով թաքֆուրի նամակը, որն ընթերցվեց սուլթանի համար: Նրանում հպատակության և հնազանդության ցուցադրում կար... Այնուհետ բերեցին այն, ինչ իրենց հետ ունեին՝ փառահեղ բյուրեղապակի, ոսկե և արծաթե սպասք, դրվագազարդ ամանեղեն, հրաշալի գորգեր և կարպետներ, ինչպես նաև այլ ընծաներ՝ արքաներին վայել»²⁰⁹: Ըստ ալ-Այնի՝ նամակում հայոց թագավորը գրում էր նաև, որ իր հողերն իրականում սուլթանի հողերն են, և ինքը միայն նրա կառավարիչն է այնտեղ²¹⁰: Սուլթանը, անսալով մուսուլման էմիրների հորդորներին, համաձայնում է սեղմել իրեն մեկնված ձեռքը՝ մանավանդ որ հայկական կողմն այդքան մեծ գին էր վճարելու «չներխուժման» և խաղաղության պայմանագրի ստորագրման դիմաց: Ժամանակակիցներից Հովհաննես Երզնկացին շատ արժեքավոր մանրամասներ է հաղորդում սուլթանի պատասխան նվերների մասին, որով ընդունում էր «ծառայության»՝ հայոց արքայի առաջարկը. «Ձի ի նոյն թուխ Չիֆ (1293 թ.), ի մուտս յունիս ամսոյ, եկին դեսպանք պատուաւորք ի սուլտանէն, և բերին աւժիտս մեծագին և պատուական զգեստուց զալաթ և զիլայ անձին թագաւորին, և զեղբօր նորա. բերին և թուղթս երդման զսուլտանին և զմեծամեծ ամիրայաց նորա, և հաստատեցին դաշինս սիրոյ և խաղաղութեան ընդ թագաւորն Հեթում, առին ի նմանէ երդումն հաստատութեան, ընկալան և պատմուճանս զարդուց ամենայն եկեալքն ի սուլտանէն»²¹¹: Իր հերթին երգվելով պայմանագրի վրա՝ ըստ Երզնկացու՝ Հեթումը

²⁰⁸ Այս մասին հանգամանորեն տե՛ս Գ. Դանիելյան, «Հռոմկլայի կաթողիկոսական աթոռի պատմության արաբական սկզբնաղբյուրները», Կիլիկյան Հայաստանը (2016), էջ 263–285, ինչպես նաև G. Danielyan, “Arabic Sources on the History of the Armenian Catholicosate of Hromkla,” in: *Cilician Armenia* (2019), pp. 244–266:

²⁰⁹ Al-ʿAynī, ʿIqd al-ǧumān, ǧ. 3, ʃ. 150–151.

²¹⁰ Անդ:

²¹¹ ՀԶՀ, ԺԳ դար, էջ 712:

նորից նվերներով ճանապարհում է սուլթանի դեսպաններին. «Առաքեաց եւ առատամիտ թագաւորն մեր բազում բեռինս արծաթուց եւ զանազան կտաւս ոսկէնկար մետաքսից, եւ բազմութիւն ձիոց եւ շորոց, եւ այլ իրս նորագիւտս, աղերս եւ հարկ սուլտանին: Եւ եղեւ այս սիրո[յ] եւ խաղաղութեան հաստատութիւն եւ խնդութիւն մեծ յերկրիս Հայոց»²¹²:

«Ընծաներով զեղուն» իրարահաջորդ այս առաքելություններից մեկի ժամանակ էլ հավանաբար մամլուքյան իշխանություններին են հանձնվել նաև այն բերդերի բանալիները, որոնք հայոց իշխանությունները խոստացել էին փոխանցել սուլթանին: Արաբ պատմիչները հաստատում են սա: Մասնավորապես ալ-Ջազարին գրում է. «[Հիշրայի 692 թ.] Ռաջաբ ամսի 28-ին (1293 թ. հուլիսի 4)՝ երկուշաբթի օրը²¹³, Դամասկոս հասավ էմիր Սայֆ ալ-Դին Տուղանը, որի հետ էին նաև Սաի տիրոջ դեսպանները՝ իրենց հետ բերելով հարկը, ինչպես նաև նվերներ և ընծաներ: Հալեպի փոխարքա ալ-Տաբբախի կողմից նրանց հետ էր վերջինիս ուսթագդարը, ով տեղեկացրեց նրանց կողմից Բեհեսնա բերդի և նրա շրջակայքի հանձնման մասին²¹⁴»:

Երբեմն սուլթանության հետ հարաբերություններում եղած լարվածությունը թոթափելու համար շատ լավ հնարավորություն էր միջնորդությունը երրորդ կողմի համար՝ մանավանդ ճիշտ ընտրված «դիվանագիտական ընծայի» օգնությամբ²¹⁵: Հենց այսպիսի իրավիճակ է ստեղծվում 1299 թ. կեսերին, երբ Կիլիկիան դեռ ուշքի չէր եկել մամլուքների 1298 թ. արշավանքից, որի արդյունքում առաջին անգամ կորցրել էր Ջահան գետից հարավ ընկած տարածքները: Ընդ որում սա տեղի էր ունեցել ներքաղաքական խիստ անախորժ և դավադրություններով լեցուն մի դրուսթյան պայմաններում, երբ Սմբատը, բռնազավթելով թագավորական իշխանությունը (1296–1298 թթ.), կուրացրել էր իր եղբայր Հեթում Բ-ին և բանտարկել, իսկ մյուս եղբորը՝ Թորոսին, խեղդամահ էր արել: Սմբատին իշխանությունից հեռացնելուց հետո՝ Ֆրանցիսկյան միաբանի կյանքի և աշխարհիկ իշխանության մեջ չկողմնորոշվող Հեթումը թագավորությունն այժմ էլ հանձնում է չորրորդ եղբորը՝ Կոստանդինին, ով

²¹² Անդ:

²¹³ Պատմիչը շփոթում է. Ռաջաբի 28-ը շաբաթ է եղել:

²¹⁴ Al-Gazarī, Tārīḥ Ḥawādīt al-zamān waanbā'uhu wa-wafayāt al-akābir wa-l-a'yān min abna'ihī al-ma'rūf bi-tārīḥ Ibn al-Ġazarī, ց. 1, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī (Ṣaydā-Bayrūt, al-Maṭba'a al-'Aṣriyya, 1999), ց. 151 և հմմտ. Ibn al-Dawādārī, Kanz al-durar, ց. 8, ց. 342; al-Mu'allif al-mağhūl, ց. 23.

²¹⁵ Նման մի միջնորդություն 1268-1269 թթ. ձեռնարկել էր հայոց արքա Հեթումը՝ փորձելով հաշտեցնել մոնղոլներին և մամլուքներին: Նրա այդ նախաձեռնությունը, սակայն, ձախողվել էր կողմերի բանակցային գործընթացի նկատմամբ ունեցած ոչ կառուցողական վերաբերմունքի պատճառով: Այս մասին մանրամասն տե՛ս R. Amitai-Preiss, "An exchange", pp. 11–33:

կառավարում է երկիրը մոտ մեկ տարի (1298–1299 թ.)՝ ստանձնելով մամլուքների հետ բանակցելու դժվարին առաքելությունը: Դամասկոսցի պատմիչ ալ-Ջազարին (մահ. 1338 թ.) գրում է. «Ռամադան ամսի 4-ին (1299 թ. հունիսի 5)՝ ուրբաթ օրը, Դամասկոս ժամանեցին ֆրանկների դեսպանը՝ Կոստանդնուպոլսի տիրոջ²¹⁶ մոտից, որոնց հետ էին նաև Սսի տիրոջ դեսպանը՝ իրենց հետ բերելով շատ նվերներ և ընծաներ, բազեններ և ճուռակներ (բնագրում՝ al-[š]aqūrā): Նրանց Եգիպտոս ուղարկեցին Ռամադան ամսի 6-ին՝ շաբաթ օրը: Ասում էին, որ նրանք սուլթանի մոտ էին գնում՝ ծովափնյա շրջանների հարցով, որպեսզի իրենք այնտեղ նավահանգիստ ունենան, որը կիսով չափ իրենցը կլինի, կիսով չափ՝ մուսուլմաններինը»²¹⁷: Միջերկրականի ծովափին համատեղ օգտագործման նավակայան ունենալու վերաբերյալ գաղափարն ակնհայտորեն անհրաժեշտ է վերագրել Բյուզանդիայի կայսրին, ով, ինչպես արաբ պատմիչներն են վկայում, հայոց արքայի միջնորդությունն էր խնդրել մամլուքյան իշխանություններին իր դիմումը տեղ հասցնելու համար²¹⁸: Հավանաբար հայոց արքայի դեսպանին է վերաբերում «բազենների և ճուռակների» մատուցումը Եգիպտոսի սուլթանին: Բազեններով որսն արաբական միջավայրում շատ հայտնի էր դեռ հնագույն նախաիսլամական ժամանակներից: Մամլուքյան իրականության մեջ որսաբազենները նույնպես շատ թանկ էին գնահատվում, և սա շատ լավ հասկանում էին նրանց տիրակալների հետ «գործ ունեցողները»²¹⁹:

²¹⁶ Խոսքը Բյուզանդիայի Անդրոնիկոս Բ Պալեոլոգոսի (կառ. 1282–1328 թթ.) որդի և գահակից կայսր Միքայել Թ Պալեոլոգոսի (կառ. 1294–1320 թթ.) մասին է: Միքայելը Հեթումի քեռայրն էր. նա ամուսնացած էր Հեթումի քույր Ռիտայի հետ, ով ամուսնությունից հետո ընդունել էր Ռիտա-Քսենիա անունը:

²¹⁷ Տե՛ս **al-Ğazari**, *Ḥawādīt al-zamān*, ց. 1, թ. 440; Հմմտ. **al-Yūnīnī**, *Ḍayl* (Abū Zabī), ց. 1, թ. 203, **al-Nuwayrī**, *Nihāyat al-arab*, ց. 31, թ. 237; **al-Maqrīzī**, *Al-Sulūk*, ց. 1.3, թ. 878; Տե՛ս նաև **A.D. Stewart**, *The Armenian Kingdom*, p. 134:

²¹⁸ **Al-Yūnīnī**, *Ḍayl* (Abū Zabī), ց. 1, թ. 203.

²¹⁹ Տե՛ս **H. Alkhateeb-Shehada**, *Mamluks and Animals: Veterinary Medicine in Medieval Islam* (Leiden: Brill, 2003), pp 68–72: Իսլամական ժամանակագրություններում հաղորդում է պահպանվել, ըստ որի՝ Նորվեգիայի արքա Հակոն Ե Սուրբը (կառ. 1299-1319 թթ.) 1310-ական թթ. կեսերին իր արքունիքում ընդունել է կիրիկյան Հայաստանից ժամանած մի պատվիրակություն: Եվ թեև աղբյուրներում պարզաբանված չեն դեսպանագնացության իրական նպատակները (գուցե մամլուքների դեմ պայքարի զինական կամ ֆինանսական օգնության հայցում), այնուամենայնիվ, ըստ մի վարկածի՝ հայ դեսպանները հնարավոր է նաև հետաքրքրված լինեին նորվեգական (իսլամական և գրեյանական) ճարտարագիտություն, որոնք նույնպես մեծ համբավ ունեին Արևելքում: Հայոց արքունիքն այս թանկարժեք ու հազվագյուտ նվերները կարող էր օգտագործել մոնղոլական և մամլուքյան կառավարողներին սիրաշահելու և դիվանագիտական հարցեր լուծելու համար: Տե՛ս **B. Bandlien**, “The Armenian Embassy to King Håkon V of

Եվ սա պատահական չէ, քանի որ Լեռնային Կիլիկիան հայտնի էր իր բազեներով: Դեռ Ուսամա իբն Մունկիրզն (մահ. 1188 թ.) էր իր ինքնակենսագրական նոթերում գրում, որ իր հոր, որ Հյուսիսային Ասորիքում գտնվող Շայզարի էմիրն էր, և հայոց իշխաններ Թորոսի և նրա որդի Լեռնի միջև բարեկամական հարաբերություններ են եղել, և նրանք անձնական նամակագրություն են ունեցել: Դրա հիմնական պատճառը նրա հոր հետաքրքրությունն էր որսաբազենների նկատմամբ. «Հայերն ամեն տարի նրան ուղարկում էին մի խումբ բազեններ՝ տասը կամ մոտ այդքան, որոնք իրենց ձեռքերի վրա բերում էին հայ բազեաբուծները... Մեզ նրանցից հասնում էին գեղեցիկ, բացառիկ բազեններ: Տարիների ընթացքում մեզ մոտ հավաքվեցին լեռնանցքներից բերված բազենները...»²²⁰:

Հայոց արքանները բազեններ և արծիվներ էին մատուցում նաև Ռումի սելջուկյան սուլթաններին: Այս մասին ժամանակի սկզբնաղբյուրներից մեկում պահպանված վկայությունը ներքևում կանդրադառնանք:

Թանկագին ընծաների գործադրմամբ մամլուքյան սուլթանների հետ դիվանագիտական հարաբերություններ հարթելու շատ փորձեր էլ արդյունավետ են դուրս եկել: 1307 թ. մոնղոլ զորավար Բիլարղուի կողմից հայոց արքա Լեռն Գ-ի և Հեթում պալի դաժան սպանությունից հետո հայոց թագավորության գահին նստեց վերջինիս եղբայրը՝ Օշինը (1308–1320 թթ.): Այս դժվարին կացության մեջ, երբ դեռ ամբողջովին փարատված չէր կասկածը, որ Բիլարղուի արարքը մոնղոլական Իլխանության հետ Կիլիկյան Հայաստանի հարաբերությունների խաթարում չէր նշանակում, Օշինը հարկադրված էր միջոց-

Norway”, JSAS 23 (2014), pp. 49-82: Հիշյալ դեսպանագնացության մասին տե՛ս նաև Ա. Բախչինյան, Հայությունը սկանդինավյան երկրներում. հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչությունները (սկզբից մինչև մեր օրերը) (Երևան, 2010), էջ 30:

²²⁰ **Usāma b. Munqid**, Kitāb al-ʿItibār, bi-taḥqīq ʿAbd al-Karīm al-Aštūr (Bayrūt-Dimašq-ʿAmmān, al-Maktab al-Islāmī, 2003), §. 308: Իր բազեներով և բազեներով կատարվող որսով հայտնի էր նաև բուն Հայաստանը: Այս զբաղմունքը հատկապես տարածված էր արքունական և նախարարական շրջանակներում: Ղազար Փարպեցին, օրինակ, այդ մասին գրում է. «Եւ շատք ի մանր մանկանց նախարարաց որդուցն դաստիարակօք և ծառայիւք զայլ և այլ սեռս ի թռչնոցն որսացեալ բազայիւք՝ դարձեալ բերիցեն ի յաճումն ընթրեացն ուրախութեան. և այսպես առլցեալք իւրաքանչիւր որսով՝ գնան ուրախացեալք»: Տե՛ս **Ղազար Փարպեցի**, Պատմութիւն Հայոց եւ թուրք առ Վահան Մամիկոնեան (Թիֆլիս, 1908), էջ 22: Տե՛ս նաև Ա. Պետրոսյան, «Որսորդությունը հայկական լեռնաշխարհում ըստ հայ պատմիչների վկայությունների», ԲԵՀ, 1 (52) (Երևան, 1984), էջ 199: Արաբական աղբյուրներից էլ հայտնի է, որ արաբական տիրապետության ժամանակ Արմինիա ոստիկանությունից Աբբասյան խալիֆաներին ի շարս այլ նվերների ուղարկում էին նաև 30 բազեններ: Տե՛ս **Abū ʿAbd Allāh al-Ġahšiyārī**, Kitāb al-wuzārāʾ wa-l-kuttāb, bi-taḥqīq Ḥasan al-Zayn (Bayrūt, Dār al-fikr al-ḥadīṭ, 1988), §. 185, *ինչպես նաև* **А. Тер-Гевондян**, *Армения*, с. 200–201: Տե՛ս նաև **H. Alkhateeb-Shehada**, *Mamluks and Animals*, p. 101:

ներ ձեռնարկել Մամլուքյան սուլթանության հետ հարաբերությունները փոքրիշատե բարելավելու ուղղությամբ՝ կանոնավոր վճարել հարկերը, հաճոյանալ սուլթան ալ-Մալիք ալ-Նասիրին՝ ավելորդ անգամ չգրգռելու համար նրան հայոց պետության դեմ: Շիհաբ ալ-Դին ալ-Հալաբիի Husn al-tawaşşul երկում պահպանված մի վավերագրի և ժամանակի պատմական սկզբնաղբյուրների մի շարք օժանդակ վկայությունների հիման վրա վերևում եզրակացրել ենք, որ Օշինը հավանաբար չի խորշել անգամ սուլթանից «իշխանության տվչություն» հայցելուց: Հայոց նորընծա արքայի՝ հայ-մամլուքյան հարաբերությունների «հարթեցման» ուղղված ճիգերը կարծես թե արդյունք են տալիս:

Այսպես, հիշրայի 708 թվականի (1308/1309 թ.) տակ արդեն մամլուքյան մատենագիրները գրում են թանկագին նվերներով Կահիրե շտապող հայ դեսպանների մասին: Նրանցից Բայբարս ալ-Մանսուրիի մոտ կարդում ենք. «[Այդ թվականին] եկան Սսի տիրոջ դեսպանները՝ նրա համար սահմանված հարկով և նվերներով՝ մի ոսկեձուլ տարա և կուժ՝ թանկագին գոհարներով պաճուճագարդ: Նրանց ժամանումը Ջուճաղա I ամսին էր (17.10.1308–15.11.1308): Նա նրանց պատվո հանդերձներ տվեց, և վերադարձվեցին նրանց ուղարկողի մոտ»²²¹: Հաջորդ տարվա դեսպերի շարադրանքում նույն հեղինակն արձանագրել է. «[Այդ թվականին] եկան Սսի իշխողի դեսպանները՝ սահմանված հարկով: Նրանք բերել էին նաև նվեր, թանկարժեք իրեր և այլն: Նրանց պատվի արժանացրին և ուղարկեցին նրանց ուղարկողի մոտ»²²²: Հիշրայի 710 թվականի տակ ալ-Մակրիզի պատմիչը գրում է սուլթանական արքունիք ժամանած ևս մի հայկական դեսպանության մասին, որի անդամները նվերներից զատ («ոսկեձուլ տարա և հախճապակե կուժ՝ գոհարներով դրվագված») հանձնեցին նաև հայոց թագավորի շնորհավորական նամակը՝ ուղղված սուլթան ալ-Նասիր Մուհամմադին (երրորդ շրջան՝ 1310–1341 թթ.) «իշխանությունը վերադառնալու կապակցությամբ, որին պատասխանեցին շնորհակալություն»²²³: Այս նվերները վկայում են Կիլիկյան Հայաստանում ապակեգործության և դրվագագործական արվեստի զարգացման բարձր մակարդակի և ինքնատիպության մասին:

Այնուամենայնիվ, ինչպես վերևում արդեն նշել ենք, Հալեպ ներկայացած հայ դեսպանները սահմանված հարկը մասամբ էին բերել, ինչը վրդովեցրել է

²²¹ Տե՛ս Baybars al-Mansūrī, Zubdat al-fikra, ֆ. 402 և հմմտ. al-Nuwayrī, Nihāyat al-arab, ց. 32, ֆ. 102; al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 2.1, ֆ. 43:

²²² Տե՛ս Baybars al-Mansūrī, Zubdat al-fikra, ֆ. 413, ինչպես նաև նույնի՝ Al-Tuhfa, ֆ. 193:

²²³ Al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 2.1, ֆ. 86.

սուլթանին, ով հրամայել է արշավանք կազմակերպել դեպի Կիլիկիա²²⁴: Հայոց արքան հարկադրված է եղել ուղարկել հարկի մնացած մասը: 1311 թ. Համայի «կառավարչությունը» ստանձնած Աբու ալ-Ֆիդան հաստատում է, որ ինքն ստացել է իր մասնաբաժինը («ջորիններ և կերպասեղեն»)²²⁵:

Թերևս մեկ անգամ ևս հիշատակենք ալ-Յունինի պատմիչի հաղորդումը 711 թ. տակ՝ հարկերով Կահիրե շտապող հայկական դեսպանության մասին՝ հավելյալ անհավանական տեղեկությամբ. «Ռաբի առաջին ամսի երեքին (1311 թ. հուլիսի 20) Դամասկոս հասան Սսի տիրոջ դեսպանները, Սսի տիրոջ քոջ և նրա հորեղբոր դստեր հետ, որպեսզի սուլթանի մոտ հարեմ մտնեն (, ընդծումը մերն է – Գ.Դ.)՝ իրենց հետ տանելով ձիեր, ջորիններ, նվերներ, ընծաներ և այլն, և հայտնեցին նզովյալ թշնամու (մոնղոլների-Գ.Դ.) շարժի մասին»²²⁶:

Հայկական դեսպանությունները սուլթանական արքունիք են այցելել զանազան նպատակներով: Ընդ որում, որքան ներկայացուցչական էր պատվիրակության կազմը, այդքան շատ էին բանակցություններում հաջողության հասնելու հնարավորությունները: Մի այդպիսի խիստ ներկայացուցչական դեսպանագնացություն դեպի Կահիրե տեղի է ունեցել 1323 թ.:

Այսպես, 1322 թ. մամլուքյան բանակն արշավում է Կիլիկիա: Այս արշավանքը ծանր հետևանքներ է ունենում հայոց թագավորության համար: Մասնավորապես գրավվում է և ավերածության ենթարկվում երկրի տնտեսական հզորության և բարեկեցության գրավականը՝ Այաս նավահանգիստը: Հայոց Լևոն Դ անշափահաս արքայի անունից որպես պաշտոնական պատվիրակության ղեկավար Կահիրե է մեկնում անձամբ հայոց կաթողիկոսը՝ Կոստանդին Լամբրոնացին (Դրագարկեցին)՝ հաշտության շուրջ ալ-Նասիր սուլթանի հետ բանակցելու. «Կաթողիկոս տէր Կոստանդին Լամբրոնացին: Սա չոգաւ յնգիպտոս առ Նասր սուլտանն եւ արար սէր եւ խաղաղութիւն ընդ Լեւոն թագաւորին տղայոյ»²²⁷:

Կիլիկիայից Կահիրե ժամանած նվիրակության մասին հիշատակություն ունի մամլուքյան պատմիչ Իբն ալ-Դավադարին: Նա, սակայն, պատվիրակության ղեկավարի մասին ոչինչ չի հաղորդում. «Այս թվականին ժամանեցին Սսի դեսպանները Բարձր Դուռ: Նրանք իրենց հետ ընտիր նվերներ էին բերել

²²⁴ *Shu Baybars al-Mansuri*, Al-Tuhfa, §. 217–218: Հմմտ. *al-Maqrizi*, Al-Sulik, §. 2.1, §. 90–91; *Ibn Tagri Birdi*, Al-Nuḡūm al-zāhira, §. 9, §. 21–22:

²²⁵ *Shu Abū al-Fidā*, Al-Muhtasar, §. 2, §. 407, ինչպես նաև **Հ.Թ. Նալբանդյան**, Արաբական աղբյուրները, էջ 246:

²²⁶ Հղումները տե՛ս վերևում՝ ծնթգր. 82 և 83:

²²⁷ **Սամուել Անեցի եւ Շարունակողներ**, ժամանակագրություն, էջ 275:

և հաշտություն էին խնդրում»²²⁸: Հայկական դեսպանության մասին ավելի մանրամասն է պատմում ալ-Նուվայրին. «[Հիջրայի] 723 թ. Ջումադա 1 ամսի վերջին տասնօրյակում սուլթանական արքունիք ժամանեցին հայոց իշխողի դեսպանները, որոնց մեջ նաև նրանց խալիֆան՝ որպես [պատվիրակության] ղեկավար, ինչպես նաև թագավորի մայրը և մի խումբ նրանց մեծամեծերից՝ խնդրելու սուլթանին իրենց բարեգթություն ողորմել, որպեսզի յուրաքանչյուր տարի սուլթանական գանձարան մուծեն 2 հարյուր հազար դիրհամ՝ սովորականի պես ջորիների երամակներով, երկաթյա պայտերով, ինչպես նաև այլ նվերներով»²²⁹: Հայոց հոգևոր պետի առաքելությունը, կարելի է ասել, լիովին անօգուտ չի անցնում, մանավանդ որ նա, սուլթանի բարյացակամությունը շահելու նպատակով, ձեռնունայն չէր գնացել: Ալ-Մակրիզին այս առիթով գրում է. «Այդժամ մատուցվեց Սսի [իշխողի] հարկը՝ նրա դեսպանի ձեռքով, ով թանկարժեք գոհարեղեն էր բերել»²³⁰:

Սուլթանը համաձայնում է հաշտության պայմանագիր կնքել Կիլիկյան Հայաստանի հետ՝ թելադրելով իր պահանջները: Բավարարելով Այասի վերաշինումը թուլատրելու կաթողիկոսի խնդրանքը՝ նա հրաժարվում է Այաս նավահանգստից ստացվող տարեկան հասույթը կիսելու կաթողիկոսի առաջարկից: Փոխարենը նա նավակայանի տարեկան հասույթից պահանջում է 800 հզ. դիրհամ՝ ի լրումն որպես տարեկան հարկ վճարվող 1 մլն. դիրհամի: Դեսպանագնացները հարկադրված էին ընդունել խաղաղության դաշնագրի այս դրույթը՝ էլ ավելի ծանր հարկային լծի տակ դնելով երկիրը: Բարսեղ վարդապետ անունով մի ժամանակակից գրիչ 1325 թ. հեղինակած մեկնական իր երկում հիշատակագրել է. «Եւ գրեցաւ սա ի վանս, որ կոչի Մաշկուոր, ի հայրապետութեանն տեառն Կոստանդեա կաթողիկոսի Դրազարկեցուց, որ բազում աշխատութեամբ ջանայ եւ հնարի զխաղաղութիւն այսմ աշխարհի: Որ եւ մինչեւ ի Մար առ սուլտանն անձամբ անձին գնացեալ, ոչինչ համարելով զաշխատութիւն, թէպէտ ծեր եւ տկար էր մարմնով»²³¹:

Դիվանագիտական ընձաններ կարող էին լինել նաև մարդիկ՝ որպես ստրուկներ (mamlūk-ներ), Մամլուքյան իշխանություններից կողմից քաղաքական հետապնդման և հետախուզման մեջ գտնվող անձինք, թշնամական գերությունից ազատված մամլուքյան էմիրները և այլ իշխանավորները, որոնց

²²⁸ **ibn al-Dawādārī**, *Kanz al-durar*, ց. 9, ց. 308.

²²⁹ **Al-Nuwayrī**, *Nihāyat al-arab*, ց. 33, ց. 46.

²³⁰ **Al-Maqrīzī**, *Al-Sulūk*, ց. 2.1, ց. 246.

²³¹ **ՀԶՀ, ԺԴ դար, Մասն Ա (1326–1350)**, կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Ղազարոսյան (Երևան, 2020), էջ 495:

ազատագրումն ու փոխանցումը կարող էր էլ ավելի փառահեղ նվեր և ծառայություն դիտարկվել, քան որևէ թանկագին ընծա կամ նվեր: Հայկական իշխանություններից Կահիրե հղված ընծաների թվում հաճախ են նկարագրվում մոնղոլական գերությունից հայոց արքայի միջնորդությամբ ազատ արձակված մամլուքները: Օրինակ, Մուհի ալ-Դին իբն Աբդ ալ-Ջահիրն ալ-Աշրաֆ Խալիլ սուլթանի կյանքին նվիրված իր անավարտ մնացած երկում՝ հիշրայի 690 թ. տակ (1291 թ.), գրում է. «Սաի տիրոջ հետ կապված որոշ պարագաներ: Դրանցից է այն, որ նա մոնղոլների մոտ էր գնացել, և այդ ժամանակ ժամանեց իր երկիրը՝ իր հետ բերելով մուսուլման գերիները (ընդգծումը մերն է-Գ.Գ.): Նա նրանց մի մասին ազատ արձակեց, մյուսներին բաշխեց իր բերդերում: Նա իր երկու դեսպաններին՝ Լիֆունին և Մինջալին²³², ուղարկեց սուլթանական արքունիք՝ Սաի կողմից ուղարկելով [սահմանված] հարկաչափից հարյուր հազար դիրհամ, իսկ ձիերից և ջորիներից՝ 58 գլուխ՝ այդ թվում 10-ը որպես նվեր»²³³: Այն մուսուլման գերիները, որ, ինչպես պատմիչն է գրում, հայոց արքայի կողմից «բերդերում էին բաշխվել», մի հարմար պահի, անշուշտ, օգտագործվելու էին մամլուքյան իշխանությունների հետ բանակցություններում՝ հայ ռազմագերիների հետ փոխանակելու կամ որևէ այլ հարցով նրանց բարյացակամությունը շահելու նպատակով:

«Գերիների ազատագրմամբ» խնդիրներ կարգավորելու լավ օրինակ են 1306 թ. դեպքերը, որ հետևյալ նախապատմությունն ունեին: 1304-1305 թթ. ընթացքում Մամլուքյան իշխանությունները երկու արշավանք նախաձեռնեցին Կիլիկյան Հայաստանի դեմ՝ պատժելու համար հայերին Ղազան խանի ասորիքյան արշավանքներին նրանց բերած մասնակցության համար: 1304 թ. արշավանքից հետո հայոց արքա Հեթում Բ-ը, ինչպես ալ-Յունինին, Իբն ալ-Դավադարին և այլք են հաղորդում, ստիպված է եղել զինադադարի պայմանագիր կնքել այն դրույթով, որ Ջահան (Պիրամոս) գետից Հալեպ ընկած բոլոր

²³² «Մինջալ». իսկ գուցե՞՞ գրչագրական սխալ է և խոսքն այստեղ Սմբատ Սպարապետի որդի Օշին սենեշալի (գունդստաբլի) մասին է. դժվար է ասել: Տե՛ս **ՀԶԶ, ԺԳ դար**, էջ 630, ինչպես նաև նաև **Լ. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները և հայերը, հտ. Բ, էջ 342–343: Օշինը սպանվել է 1307 թ. Բիլարդուի կազմակերպած դավադրության արդյունքում:

²³³ **Ibn Abd al-Zāhir**, Al-Altāf al-ḥafīyya, s. 44; **Գ. Դանիելյան**, Իբն Աբդ ալ-Ջահիր, էջ 216:

բերդերն²³⁴ անցնում են Սուլթանությունը: Պայմանագրի մեկ այլ դրույթով հայոց արքան պարտավորվել է նաև շուտափույթ կերպով վճարել երկու տարվա հարկը²³⁵:

Սուլթանական զորքերը Կիլիկիա են արշավում նաև հաջորդ տարում: Պատճառը, ինչպես արաբալեզու աղբյուրներն են հայտնում, զինադադարի պայմանագրով սահմանված հարկերի ուշացումն էր: Ի տարբերություն նախորդ տարվա արշավանքի՝ այս մեկը մամլուքյան զորքերի հրամանատար Կաշթամուր ալ-Շամսիի անհեռատես գործողությունների պատճառով անփառունակ վախճան է ունենում մուսուլմանների համար՝ ավարտվելով մի շարք էմիրների գերեվարությունով²³⁶: Իմանալով այս մասին՝ ալ-Նասիր Մուհամմադը հրահանգել է Հալեպի փոխարքային լայնածավալ պատերազմ սկսել հայոց թագավորության դեմ: Այս մասին իմանալով՝ հայոց արքան շտապել է «ուղարկել հարկը և ներում խնդրել՝ պատճառաբանելով, թե մարտն իր նախաձեռնությունով է, որ տեղի է ունեցել, այլ թաթարների: Նա խոստացավ խորամանկել և գերեվարված [մամլուք] էմիրներին հետ բերել: Այդ բանից հետո մուսուլմանական զորքը հետ վերադարձավ Կահիրե»²³⁷:

Աղբյուրներից հայտնի է դառնում, որ Հայոց արքան կատարել է իր խոստումը: Իբն ալ-Դավադարին իսլամական 706 թ. (1306 / 1307 թ.) տակ գրում է. «Սաֆար ամսի 13-ին (1306 թ. օգոստոսի 24) ժամանեցին Սսի դեսպանները՝ հարկով [շուրջ] 600 հզ. դիրհամ, ինչպես նաև ընծաներով և նվերներով, ջորիներով, ուղտերով [բեռնված] պայտերով և մեխերով, թվով 40 ուղտ և 170 մուսուլման գերիններ (ընդգծումը մերն է – Գ.Դ.)»²³⁸:

²³⁴ Պատմիչներից ալ-Յունինին (ինչպես նաև ալ-Քութուբին) և Իբն ալ-Դավադարին նշում են այս պայմանագրով մամլուքներին անցած «յոթ բերդերից» մի քանիսի անունները՝ Նուշայմա, Նուկայր (Nuqayr, որ անկասկած Նդիրն է – Գ.Դ.) և Ջանջաֆր (մեզ անհայտ է – Գ.Դ.): Հղումները տե՛ս հաջորդ ծանոթագրության մեջ: Այս բերդերը գրավվել էին նաև մամլուքների 1298 թ. արշավանքի ժամանակ, բայց հետագայում Ղազան խանի ասորիքյան արշավանքների արդյունքում հայերը կրկին տեր էին դարձել դրանց: 1298 թ. մամլուքների կողմից գրավված այս բերդերի մասին տե՛ս **A.D. Stewart**, *The Armenian Kingdom*, pp. 117–122, ինչպես նաև **Հ.Թ. Նալբանդյան**, *Արաբական աղբյուրները*, էջ 242–244:

²³⁵ Տե՛ս **al-Yūnīnī**, Dayl (Abū Zabī), ց. 2, ց. 768, ինչպես նաև **al-Kutubī**, ‘Uyūn al-Tawārīḥ (A 2922), ց. 21 / Topkapı Sarayı Küttüphanesi, Ahmed III, İstanbul, էջ 120ա; **Ibn al-Dawādārī**, *Kanz al-durar*, ց. 9, ց. 111; **al-Birzālī**, *Al-Muqtafi*, ց. 3, ց. 259; **Mufaḍḍal**, *Al-Nahj al-sadiḍ* (PO, t. 20), ց. 92–93 [598–599]; **Ibn Katīr**, *Al-Bidāya*, ց. 18, ց. 35:

²³⁶ Տե՛ս **Baybars al-Manūrī**, *Zubdat al-fikra*, ց. 383, ինչպես նաև **նուլնի**՝ *Al-Tuhfa*, ց. 177; **Mufaḍḍal**, *Al-Nahj al-sadiḍ* (PO, t. 20), ց. 616–617 [p. 110–111]; **al-‘Aynī**, ‘Iqd al-ḡumān, ց. 4, ց. 381; **Al-Maqrīzī**, *Al-Sulūk*, ց. 2.1, ց. 16:

²³⁷ Տե՛ս **al-Maqrīzī**, *Al-Sulūk*, ց. 2.1, ց. 16 և հմմտ. **Baybars al-Mansūrī**, *Zubdat al-fikra*, ց. 384, ինչպես նաև **նուլնի**՝ *Al-Tuhfa*, ց. 177–178, ինչպես նաև **al-‘Aynī**, ‘Iqd al-ḡumān, ց. 4, ց. 382–383 (մեջբերում է *Բայբարս ալ-Մանսուրիի վկայությունը*):

²³⁸ **Ibn al-Dawādārī**, *Kanz al-durar*, ց. 9, ց. 146.

Միջնադարյան արևելյան հասարակության մտածելակերպի համար սովորական էր, որ երկու տիրակալների հարաբերություններում մարդիկ դիվանագիտական ընծա համարվեին նաև հանգուցյալ վիճակում՝ օրինակ, Սուլթանություն թշնամի կամ դավաճան համարվող անձինք: Ավելի սահմուկեցուցիչ էր մարդկանց մարմնի մասերի մատուցումը՝ որպես սուլթանի նկատմամբ ունեցած հպատակության կամ ընդհանուր թշնամու դեմ տարած հաղթանակի խորհրդանիշ: Ինչպես արդեն նշել ենք, այսպիսի մի դեպք պատահել է, օրինակ, 1329 թ., երբ հայոց Լևոն Դ արքան դաժան հաշվեհարդար տեսավ իր խնամակալների՝ Օշին պալլի և Կոստանդին Գունդատաբլի հետ՝ առաջինի կտրված գլուխն ուղարկելով սուլթան ալ-Նասիր Մուհամմադին, երկրորդինը՝ Իրանի Աբու Սաիդ իլխանին. «Ի ՉՀԹ թվին առաքեաց թագաւորն Լեւոն զօրս ի յԱտանոյ եւ ըմբռնեաց զՕշին՝ Տէրն Կոռիկօսու, եւ զեղբայր նորին զԿոստանդին գունդատապլն, եւ եսպան ի սաղրելոյ իշխանացն եւ ի քսու արանց, եթէ խորհեալ են բառնալ զքեզ եւ ինքեանք թագաւորել, եւ առաքեաց զՕշինն գլուխն ի Մըսր՝ առ Մելիք Նասր սուլտանն, եւ զեղբօր նորին՝ յԱրեւելս՝ առ Բուսայիտ ղանն...»²³⁹: Սմբատի «Տարեգրքի» շարունակողի վկայությամբ դեպքը կատարվել է հայոց 1329 թ. հունվարի 26-ին²⁴⁰: Իսկ Հեթում պատմիչ Կոռիկոսցու ժամանակագրության շարունակողներից մեկը գրում է, որ Լևոնը երկու իշխանների գլուխներն էլ Եգիպտոսի սուլթանին է մատուցել²⁴¹: Հարկ է նշել նաև, որ Օշինն ու Կոստանդինը Հեթում Կոռիկոսցու որդիներն էին:

Այս դեպքի մասին տեղեկություն են պահպանվել նաև արաբական պատմագրության մեջ: Մասնավորապես Աբու ալ-Ֆիդայի Al-Muhtasar երկում պահպանված հաղորդումից եզրակացնելի է, որ Լևոն Դ-ի հիշյալ քայլը խիստ հաճո է թվացել Եգիպտոսի և Ասորիքի սուլթանին, և նա նվերներով և, ինչպես վերևում ենք ցույց տվել, «իշխանության տվչության» մասին վկայող փաստաթղթի տրամամբ է պատասխանել հայոց արքային, ով, անշուշտ, այդ հարցով դիմել էր նրան: «Այս թվականին շափահասության հասավ Սսի պատանի տերը՝ Լիֆուն իբն Ուշինը: Նրա վրա խնամակալ էր նշանակված ալ-Քարբի (իմա՝ Կոռիկոսի) տերը, որը փոքր բերդ է՝ ծովին մերձ՝ Սսի երկրի հյուսիս-արևմտյան կողմերում, որ սահմանակցում էին Կարամանյանների երկրին:

²³⁹ Տե՛ս Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ, Ժամանակագրութիւն, էջ 275–276 (դրված է 1330 թվականի տակ) և հմմտ. ՄՓ, հտ. 1, էջ 88: Տե՛ս նաև Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հտ. Բ, էջ 401–404:

²⁴⁰ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք (Փարիզ), էջ 131:

²⁴¹ Կ. Մաթևոսյան, Հեթում Պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը (Երևան, «Մուղնի» հրատ., 2011), էջ 58 (հետախուժ Հեթում Պատմիչ, Ժամանակագրություն), ինչպես նաև ՄՓ, հտ. 1, էջ 88:

Ալ-Քարքի հիշյալ տերը տիրացել էր Սսի տիրոջ թագավորությանը՝ նշյալ պատանու մանկահասակության հիմքով: Երբ այս թվականը եկավ (նկատի ունի հիշրայի 729 թ. – Գ.Դ.), ուժեղացավ պատանին և սպանել տվեց ալ-Քարքի տիրոջը, այնուհետ նրա եղբորը (իմա՝ Կոստանդին գունդստաբլին): Նա ալ-Քարքի տիրոջ գլուխն ուղարկեց սուլթանին: Սուլթանն [իր հերթին] Բարձր դռան արքունի միհմանդար (սենեկապետ) էմիր Շիհաբ ալ-Դին Ահմադի հետ պատիվներ, սուր, նժույգ՝ իր թամբով և սանձով ուղարկեց: Շիհաբ ալ-Դինը դրանցով ճանապարհ ընկավ Սսի պատանի տիրոջ մոտ: Սսի տերը հագավ «պատվո հանդերձը», բարձրացրեց սուրն ու համբուրեց հողը: Նա հեծնեց իրեն ողորմված երիվարը, և նրա հոգին դրանով գորեղացավ: Հիշյալ Շիհաբ ալ-Դին սենեկապետը [նույնպես] շատ շնորհների արժանացավ՝ վերադառնալով սուլթանական արքունիք: Նա Համայով անցավ՝ սուլթանական արքունիք գնալու ճանապարհին Ջումադա II ամսի 12-ին՝ հինգշաբթի օրը (1329 թ. ապրիլի 13)»²⁴², գրում է Համայի փոխարքա Աբու ալ-Ֆիդան: Պետական կառավարման խորհրդանիշներ հանդիսացող երիվարի, սրի և «պատվո հանդերձների» ընծայումը սուլթանի կողմից հավելյալ ապացույց է, որ հաստատում է Լևոնի՝ «իշխանության տվչություն» ստանալու համար Եգիպտոսի սուլթանին դիմած լինելու մեր վերոբերյալ պնդումը:

Դեսպանը նկատության մամլուքյան արարողակարգը, ինչպես վերևում ենք նշել, խիստ էր, և նրա կանոնների խախտումը կարող էր դիվանագիտական առաքելության տապալման պատճառ դառնալ: 1335–1336 թթ. մամլուքները մի քանի արշավանք կազմակերպեցին դեպի Կիլիկիա՝ նպատակ ունենալով Կիլիկիայից վերջնականապես պոկել Ջահան գետից հարավ ընկած տարածքները: Օրինակ, այդպես եղավ 1336 թ., երբ բանակցություններ վարելու նպատակով Եգիպտոսի և Ասորիքի սուլթանի հետ հանդիպելու է ուղարկվում հայոց ջամբուլայը՝ Հեթում Ախտուց տերը: Վերջինս սա արձանագրել է իր ժամանակագրության մեջ. «Ի թվին ԶԶԵ (1336) նոյն թագաւորն Լևոն յղրկեց զիս՝ զՀեթում Ախտուցն տէր ջամբուլայս Հայոց առ Մսրա սուլտանն դեսպան: Գնացի ինչվի յԱվազնիյարիշն, և անտի դարձուց զիս սուլտանն Միլէք Նասրն, որ եկի յերկիրս. կեցա և դուրս ամիս»²⁴³:

Ալ-Մակրիզին հաստատում է Հեթում Ջամբուլայի վկայությունը: «Թաքֆուրն իր դեսպաններին ծովով ուղարկեց Դիմյատ»²⁴⁴, բայց սուլթանը թույլ

²⁴² Abū al-Fidā, Al-Muḥtaṣar, ց. 2, 449, ինչպես նաև Հ.Թ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 247–248, 286–287:

²⁴³ Ա.Ս. Մաթևոսյան, «Հեթում Ախտուց Տիրոջ և Վասիլ Մարաշախտի ժամանակագրություններ», ՊԲՀ, հտ. 4 (1963), էջ 194:

²⁴⁴ Դամիեստա՝ քաղաք Եգիպտոսում՝ նեղոսի դելտայում:

չտվեց նրանց իրեն ներկայանալ, քանի որ նրանք Ասորիքի փոխարքային չէին տեղեկացրել իրենց ներկայանալու մասին: Ու վերադարձան թաքֆուրի մոտ»,²⁴⁵,- գրում է նա: Իրավիճակը հարթելու նպատակով Հայոց արքան դիմում է «դիվանագիտական նվերի»՝ այս դեպքում «կաշառքի» օգնությամբ: «[Թաքֆուրը] նվեր ուղարկեց [Թենգիզին]՝ Ասորիքի փոխարքային, և նրան խնդրեց արգելել զորքերին իր երկիրը [մտնել], և որ ինքը հանձնում է Ջահան գետից անդին ընկած բոլոր ամրոցները սուլթանին»,²⁴⁶,- շարունակում է ալ-Մակրիզին²⁴⁵: Թանքիզը, իհարկե, կատարում է խոստումը՝ հորդորելով բոլորին սպասել սուլթան ալ-Նասիր Մուհամմադի պատասխանին, բայց նա չի կարողանում Կիլիկիա արշավելու մտքից հետ պահել Հալեպի ամիրա Ալտուն-Բուղային: Առաջ անցնելով նշենք, որ Կիլիկյան Հայաստանը Ջահան գետից անդին ընկած բերդերի հետ մեկտեղ բանակցությունների արդյունքում 1337 թ. նոր պայմանագրով Մամլուքյան սուլթանությանն է զիջում նաև Այաս նավահանգիստը: «Նա անճար կեցաւ թագաւորն ու կատարեաց զսուլտանին կամքն, ու երեստ, զոր կտրէր Ջահան՝ բերդերովն ու գերկիրն ու զպանծալին այս Այաս, զոր բազում ծախիւք շինեալ էր»,²⁴⁶,- հիշատակագրել է դեպքերի մի ականատես²⁴⁶:

Այս ծանր կորստից հետո հայոց թագավորության հետագա ճակատագիրը, կարելի է ասել, վճռված էր: Իսլամական 739 թ. (1338/1339 թ.) տակ արաբ հեղինակներից ալ-Մակրիզին գրում է. «Այդ թվականին էմիր Թենգիզը՝ Ասորիքի փոխարքան, ճանապարհ ընկավ Դամասկոսից՝ Սսի երկիր [մտնելու] մտաչնությամբ, որպեսզի ստուգայց կատարի այն տիրույթներում, որ իրեն էին ընծայվել: ...Թենգիզը Հալեպ անցավ և մտավ Սսի երկիր: Թաքֆուրն իր եղբոր միջոցով թանկարժեք նվեր տվեց նրան: Նա ընդունեց այն և պատվո հանդերձներ հագցրեց նրան: [Թենգիզը] բնակեցրեց այդ գյուղերը մարդկանցով, անասուններով, հացահատիկի ցանք կատարեց և վերադարձավ»²⁴⁷: Այս հաղորդումից պարզ է, որ հայոց արքայի հեղինակությունն այն աստիճան էր ընկել, որ նա արդեն ստիպված էր «պատվո հանդերձներ» ընդունել ոչ թե սուլթանից, այլ վերջինիս վասալից՝ Ասորիքի փոխարքա Թանքիզից:

Լևոն Դ-ը մահանում է՝ գահաժառանգ չթողնելով: Զիվան (Հովհաննես-Ջեհանի) Լուզինյանի մոտ մեկամյա (1342–1343 թթ.) պայլուսյունից հետո Բյուզանդիայից Կիլիկիա է ժամանում և թագավոր օծվում նրա եղբայրը՝ Գի (Գվիդոն) Լուզինյանը (1342–1344 թթ.): Նրա օրոք հայ-մամլուքյան արդեն շուրջ

²⁴⁵ Al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 2.2, ց. 428.

²⁴⁶ Տե՛ս 292, ԺԴ դար, էջ 295, ինչպես նաև 292, ԺԴ դար, Մասն Ա (1326–1350), էջ 295–296: Հմմտ. Ա.Ս. Մաթևոսյան, «Հեթում Ախտուց Տիրոջ և Վասիլ Մարաշախտի ժամանակագրությունները», էջ 193:

²⁴⁷ Al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 2.2, ց. 467–468: Այդ մասին տե՛ս նաև Անդ, ց. 436:

80-ամյա հակամարտության մեջ առաջին անգամ հայոց արքունիքը բացեի-բաց հրաժարվում է ոչ միայն Մամլուքյան սուլթանին ընծաներ և պարգևներ մատուցելուց, այլև առհասարակ հարկատվությունից: Գրի այս խիզախման մասին խոսում է Լևոն Ե-ի կենսագիրը՝ Հովհաննես Դարդեյը. «Եւ քանզի սուլթանին Բաբելոնի և Թուրքաց, մերձաբնակաց թագաւորութեանն Հայոց, լեալ էր սովորութիւն զի ի լինել նորոյ թագաւորի ի Հայաստան, առաքեալ լինէին նոցա պարգևք և ընծայք, իբրև տուրս հարկաց, պատգամաւորս արձակեցին առ արքայն Գուի, պահանջելով՝ զի ըստ օրինակի նախորդացն իւրոց առաքեսցէ առ նոսա զտուրս ընծայիցն: Ետ նոցա պատասխանի արքայ Գուի և ասէ. «Կենդանի է Տէր, զի ցորչափ կայ մեր շունչ ի մարմնի՝ ոչ տացուք պարգևս, ոչ ընծայս և ոչ այլ ինչ ի հարկաց, ոչ սուլթանին և ոչ այլում ումեք յանհաւատից, մինչև թողեալ իցէ նոցա զաշխարհ մեր և զթագաւորութիւն ի վիճակ պայմանի, յորում գտանէր նա ի սկզբան անդ, յորժամ նախորդք մեր հատուցանէին նոցա զհարկսն»²⁴⁸: Դարդեյի այս վկայությունը հաստատում է, որ ընծաների մատուցումը մամլուքյան սուլթաններին նույնպիսի պարտավորություն էր հայոց թագավորների համար, ինչպես որ հարկագումարների վճարումը: Տարեկան հարկի վճարումից հրաժարվելու հանգամանքը հաստատվում է նաև դրամագիտական փաստերով: Բանն այն է, որ հարկերի միջոցով Սուլթանության գանձարանում հայտնված հայկական արծաթեղբամները՝ «թաքվորինները», միշտ չէ, որ շրջանառության մեջ էին դրվում անմիջականորեն: Դրանք շատ հաճախ կրկնադրոշմվում էին Եգիպտոսի սուլթանների անունով՝ արաբերեն մակագրություններով: Բայց միշտ չէ, որ հաջողվում էր մամլուքյան փողերանոցների կաղապարներով վերադրոշմումը խնամքով և անթերի կատարել: Այս մասին են վկայում հայտնաբերված դրամները, որոնց դարձերեսին դեռ ընթեռնելի են հայերեն մակագրությունները²⁴⁹: Զ. Պտուկյանին Գի Լուզինյանի անունով հատված և արաբերեն կրկնադրոշմներ կրող

²⁴⁸ Տե՛ս **Յովհանն Դարդեյ**, *Փամանակագրութիւն Հայոց*, էջ 33; **Jean Dardel**, *Chronique d'Arménie*, p. 22: Տե՛ս նաև **Լ. Տեր-Պետրոսյան**, *Խաչակիրները և հայերը*, հտ. 2, էջ 418:

²⁴⁹ Տե՛ս **P. Balog**, *The Coinage of the Mamluk Sultans of Egypt & Syria* (New York: The American Numismatic Society, 1964), pp. 146–147; **P.Z. Bedoukian**, “Some Armenian coins overstruck in Arabic,” in: *Armeniaca* (Venise, Saint Lasare: 1969), pp. 138–147: Հայկական դրամները հաջողությամբ օգտագործվում էին նաև միջազգային առևտրում՝ հասնելով անգամ Արևելքի հեռավոր երկրներ: Դեռ 1880-ականներին Հնդկաստանում, իսկ տարիներ առաջ էլ Պակիստանում հայտնաբերված կրկնադրոշմված հայկական դրամները դրա վառ ապացույցն են: Տե՛ս **O. Codrington**, “On a Hoard of Coins Found at Broach”, *Bombay Branch of the Royal Asiatic Society's Journal*, XV (1882-1883), pp. 367–370 և *հմմտ.* **L. Vrtanesyan**, “A small hoard of Armenian and Mamluk coins found in Pakistan”, *ANJ* 1 (31) (2005), pp. 75–79:

դրամներ հայտնի չեն եղել²⁵⁰: Եղիա Ներսիսյանը գտել է այդպիսի մեկ «թաք-վորին»²⁵¹, որը, գուցե, Գիի հաջորդ Կոստանդին Գ-ը (1344–1362 թթ.) իր վճարած հարկի մեջ հանձնած լինի թշնամական գանձարան²⁵²: Սա խոսում է հայոց արքայի՝ մամլուքյան հարկապահանջությունը մերժելու վերաբերյալ պատմիչների հաղորդումների արժանահավատության օգտին:

Գիի այս որոշումը, սակայն, նոր դժբախտություններից բացի ոչինչ չբերեց երկրին: Դարգելի հաղորդումը հաստատում են նաև արաբական աղբյուրները: Ալ-Մակրիզին հիշրայի 744 թ. Ջումադա I ամսի (21.09.1343–20.10.1343) ներքո գրում է. «Այդժամ փոստաձիերով սուրհանդակ եկավ Հալեպից՝ հայտնելով, որ Հալեպի, Համայի և Տրիպոլիի զորքերը՝ Ակսունկուրի և Սալահ ալ-Դին ալ-Դավադարիի գլխավորությամբ, դուրս են եկել՝ Սսի ուղղությամբ՝ [պատերազմելու նրա ժողովրդի դեմ], քանի որ վերջինս հրաժարվել էր խարաջ (գլխահարկ) [վճարելուց]: Թուրքմենները նրանց հնազանդորեն դիմավորեցին և միասնաբար հարձակվելով՝ այնքան վատ արարքներ թույլ տվեցին հայերի նկատմամբ, մինչև որ նրանց պարտադրեցին՝ վճարել խարաջը»²⁵³: Իբն ալ-Վարդիի հաղորդածը շատ ավելի ինֆորմատիվ է՝ բացահայտելով հիշյալ անցքերի կարևոր հանգամանքներ: Ըստ նրա՝ այս արշավանքին նախորդել էին թուրքմենական ասպատակություններ, որպես պատասխան «Կարամանի երկրում հայերի գործած [արարքների]»²⁵⁴: Նույն հեղինակի վկայությամբ՝ մոսուլմանները հասնում են մինչև Ադանա: Սակայն, կաշառվելով հայոց արքայի կողմից՝ Հալեպի զորքի հրամանատար Ակսունկուրը հրամայում է զորքերին նահանջել՝ փաստարկելով, որ սուլթանի կողմից հրաման չունի հայոց երկրի խորքերն առաջանալու²⁵⁵:

Թուրքմեն-մամլուքյան այս չդադարող ավարառուական արշավանքների և Գիի լատինամետ քաղաքականության ֆոնին խիստ թեժանում է նաև երկրի ներքին դրությունը՝ հանգեցնելով պետական հեղաշրջման, որի զոհն է դառնում նաև Գի արքան:

²⁵⁰ Անդ, էջ 144:

²⁵¹ Ե. Ներսիսյան, «Կիլիկեան Հայաստանի արաբներով կրկնադրոշմուած դրամները», ՀՀՀ, Հատոր Ի (Պետրոս, 2000), էջ 159, 166.

²⁵² Y.T. Necessian, “An overstruck takvorin of Guy”, ANJ, Series I, vol. XXIV, № 3 (September 1998), pp. 33–34.

²⁵³ Al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 2.3, ց. 650.

²⁵⁴ Տե՛ս Abū al-Fidā, Al-Muhtaşar, ց. 2, ց. 501, ինչպես նաև Ibn al-Wardī, Tatimmat al-Muhtaşar fi aḥbār al-başar, ց. 2 (Bayrūt, Dār al-kutub al-İlmiyya, 1996), ց. 325:

²⁵⁵ Abū al-Fidā, Al-Muhtaşar, ց. 2, ց. 503; Ibn al-Wardī, Tatimmat al-Muhtaşar, ց. 2, ց. 326–327.

Հարկատվությունը մամլուքներին վերականգնվում է Գի Լուզինյանի հաջորդի՝ Պաղտին մարաջախտի որդի Կոստանդին Գ-ի օրոք: Արաբական աղբյուրներում հետաքրքիր տեղեկություններ կան այս շրջանում հայ-մամլուքյան ռազմական բախումների վերաբերյալ: Այասի վերագրավման (1347 թ.) անհաջող փորձից հետո երկիրը, Արևմուտքից էական զինական օգնություն ստանալու հույսն սպառած, հայտնվում է թշնամական լիակատար շրջափակման մեջ և սկսում աստիճանաբար տնտեսապես քայքայվել: Ժամանակին Սուլթանության գահակալներին պարբերաբար մատուցվող շքեղ նվերների մասին թերևս արդեն անտեղին է խոսելը, մանավանդ որ արաբական աղբյուրներում դադարում են հիշատակությունները դրանց մասին: Պատճառն այն էր, որ հայոց թագավորությունն այժմ նույնիսկ չէր կարողանում իր վրա դրված հարկային բեռը կրել: Ալ-Մակրիզին գրում է, որ սուլթան ալ-Սալիհ Իսմաիլի (կառ. 1342–1345 թթ.) օրոք հայոց արքունիքը դիմել է տարեկան հարկաչափը կիսելու խնդրանքով, որը սուլթանը բավարարել է²⁵⁶: Նույն հեղինակը իսլամական 749 թ. Ջու ալ-Հիջա (1349 թ. փետրվար-մարտ)²⁵⁷ և 751 թ. Ռաջաբ (1351 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր)²⁵⁸ ամիսների ներքո խոսում է Կահիրե ժամանած հայկական դեսպանությունների մասին, որոնք հարկը կիսով չափ էին բերել՝ մի դեպքում երկրին պատուհասած համաճարակի, մեկ այլ դեպքում՝ երկրի քարուքանդ վիճակում լինելու պատճառաբանությամբ, ինչի համար հայցում էին մամլուքյան իշխանությունների ներողամտությունը: Իբն Կադի Շուհբան գրում է, որ հիջրայի 750 թվականի Սաֆար ամսին (1349 թ. ապրիլ-մայիս) սուլթանի հրամանով Դամասկոսից 3000-ոց հեծելազոր է ճանապարհվել «Սաի երկիր՝ հայերին սպանելու իրենց վրա դրված տարեկան հարկը վճարելուց հրաժարվելու պատճառով»: Ըստ պատմիչի՝ հայոց արքան, իմանալով պատրաստվող արշավանքի մասին, շտապել է ուղարկել հարկը, իսկ սուլթանը հետ է կանչել ասորիքյան զորախումբը²⁵⁹:

Կիլիկիայում հայոց պետականության կյանքը փոքրիշատե երկարում էր միայն Մամլուքյան սուլթանությունում ալ-Նասիր Մուհամմադի հետնորդների օրոք սկսված ներքաղաքական խառնակ ժամանակաշրջանի շնորհիվ, որն արդի պատմաբան Ռ. Իրվինը «փոթորկալից շրջան» է անվանում²⁶⁰:

Արշավանքները վերսկսվում են 1357 թվականից: 1360-ական թվականների սկզբին արդեն ակնհայտ էր, որ մամլուքների և թուրքմենների անդուլ

²⁵⁶ Al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 2.3, ց. 694.

²⁵⁷ Անդ, ց. 771:

²⁵⁸ Անդ, ց. 821:

²⁵⁹ Tārīḥ Ibn Qāḍī Ṣuhba, ց. 2, ց. 662.

²⁶⁰ R. Irwin, *The Middle East*, p. 125.

հարվածների ներքո տնտեսապես հյուծված երկիրն այլևս ի զորու չէր երկար գոյատևել: 1360 թ. Կոստանդինն ստիպված է լինում ծանր պայմաններով հաշտություն կնքել Կահիրեի հետ՝ հանձնելով Դաշտային Կիլիկիան և վերականգնելով հարկատվությունը: Հիշրայի 765 թ. Շավվալ ամսի (1364 թ. հուլիս) ներքո ալ-Մակրիզին գրել է. «Եկան Սսի իշխողի դեսպանները՝ իրենց վրա դրված հարկի թեթևացում խնդրելու: Նրանց Կահիրեում եղած ժամանակ մահացավ նրանց արքան, ուստի վերադարձան առանց որևէ արդյունքի»²⁶¹: Ինչ վերաբերում է ընծաների մատուցմանը, ապա դրանց մասին կոնկրետ վկայություններ ժամանակի մամլուքյան սկզբնաղբյուրներում մինչև 1375 թվականի իրադարձություններն այլևս չենք գտնում:

²⁶¹ Al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 3.1, ց. 92.

ՄԱՍ Բ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄԸ ՀԱՅ-ՄՈՆՂՈՒԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

**Բ 1. Կիլիկյան Հայաստան – Իրանի մոնղոլական Իլխանությունն
պաշտոնական գրագրության վերաբերյալ տեղեկությունները.**

Պաշտոնական գրագրության և քարտուղարության մամուլքյան ձեռնարկները և պատմական երկերը Կիլիկիո հայոց թագավորության և հարակից մուսուլմանական պետական կազմավորումների միջև դիվանագիտական նամակագրության ուսումնասիրության համար կարևորություն են բերված և ող միակ սկզբնաղբյուրները չեն: Մեզ է հասել ԺԴ դարի պարսկալեզու մի կարևոր հուշարձան ևս, որը մեզ որոշ պատկերացում է տալիս այս դեպքում արդեն Իրանի մոնղոլական Իլխանության և հայոց թագավորության բարձրագույն իլխանությունների նամակագրության մասին: Խոսքը Շամս ալ-Դին Մուհամմադ իբն Հինդուշահ Նախչիվանի (հայտնի նաև Շամս Մունշի անունով, մահ. 1376 թ.) *Dastūr al-kātib fī ta'yīn al-marātib* («Գրագրի ուղեցույցը [պաշտոնական] աստիճանների սահմանման համար») վերնագրով քարտուղարության ձեռնարկի մասին է¹:

Մինչև սույն հեղինակին և նրա աշխատությանն անդրադառնալը, հարկ ենք համարում մատնանշել Իլխանության և մյուս մոնղոլական ուլուսների դիվանատների աշխատանքի և այնտեղից դուրս եկած փաստաթղթերի վերաբերյալ արդեն իսկ կատարված կարևորագույն ուսումնասիրությունները:

¹ *Տե՛ս Muḥammad ibn Hindušāh Nahğawānī, Dastūr al-kātib fī ta'yīn al-marātib / Мухаммад ибн Хиндушах Нахчивани, Дастūr ал-кātиб фī та'йīн-ал-марātиб (Руководство для писца при определении степеней), 2 т., крит. текст, предисл. и указатели А.А. Али-заде (Москва, «Наука», 1964-1971), որ ընդգրկում է երկի քննական պարսկերեն բնագիրը՝ առանց թարգմանության:*

Մոնղոլական պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրմամբ եվրոպացի հետազոտողները սկսել են զբաղվել դեռ ժԸ դարի կեսերից: Մոնղոլ խաների և Հոմբի պապության նամակագրության մեզ հասած լատիներեն վավերագրերի ուսումնասիրության առաջամարտիկը գերմանացի լյութերական աստվածաբան Յոհանն Լորենց Մոսհեյմն (մահ. 1755 թ.) էր իր *Historia Tartarorum Ecclesiastica աշխատության*²: Այնուհետև ոլորտում իրենց հատկանշական ավանդն են բերել Ժ.-Պ. Աբել-Ռեմյուսան, Փ. Փելլիոն, Վ. Կլիվզը, Ա. Մոստերը և այլոք³: հետազոտության ծիրի մեջ առնելով նաև լատին Արևմուտքի հոգևոր և աշխարհիկ միապետների հետ մոնղոլ խաների նամակագրության պահպանված մոնղոլերեն և պարսկերեն բնօրինակները կամ էլ պատմական սկզբնաղբյուրներում պահպանված ընդօրինակությունները՝ ընդհանրացնելով մոնղոլական ուլուսների դիվանատների աշխատանքի

² **J.L. Mosheim**, *Historia Tartarorum ecclesiastica* (Helmstad Apud Fridericum: Christianum Weygand, 1741).

³ *Տե՛ս* **J.-P. Abel-Rémusat**, “Mémoires sur les relations politiques des princes chrétiens, et particulièrement des rois de France, avec les empereurs Mongols”, *MIF*, t. 6 (1822), p. 396–469, t. 7 (1824), p. 335–438; **R. Bonaparte**, *Documents de l’époque mongole des XIIIe et XIVe siècles* (Paris: Gravé et imprimé pour l’auteur, 1895); **И.Ю. Ключкин**, *О чем писал шль-хан Аргун Филиппу Красивому в 1289 г. (К разбору древнейших памятников монгольской письменности)* (Владивосток, 1925); **P. Pelliot**, “Les documents mongols du Musée de Téhéran,” in: *Athar-é Irān: Annales du service archéologique de l’Iran*, T. 1, Fasc. 1 (1936), p. 37–44, *ինչպես նաև նույնի* “Les Mongols et la papauté”, *ROC*, t. 23 (1922–1923), p. 3–30, t. 24 (1924), p. 225–335, t. 28 (1931–1932), p. 3–84; **E. Voegelin**, “The Mongol orders of submission to European powers, 1245–1255”, *Byzantion*, vol. 15 (1940–1941), pp. 378–413; **Eu. Tisserant**, “Une lettre de l’Ilkhan de Perse Abaga adressée en 1268 au Pape Clément IV”, *Le Muséon*, t. 59 (1946), p. 547–556; **E. Haenisch**, “Zu den Briefen der mongolischen Il-Khane Argun und Öljeitü an den König Philipp den Schönen von Frankreich (1289 u. 1305)”, *Oriens*, vol. 2, № 2 (1949), pp. 216–235; **Fr.W. Cleaves**, “A Chancellery Practice of the Mongols in the Thirteenth and Fourteenth Centuries”, *HJAS*, vol. 14, № 3/4 (1951), pp. 493–526; *նույնի* “The Mongolian Documents in the Musée de Téhéran”, *HJAS*, vol. 16, № 1/2 (1953), pp. 1–107; *նույնի* և **A. Mostaert**, “Trois documents mongols des Archives secrètes vaticanes”, *HJAS*, vol. 15, № 3/4 (1952), pp. 419–506, *ինչպես նաև կրկին երկուսի համահեղինակությամբ* *Les lettres de 1289 et 1305 des ilkhan Arghun et Öljeitü à Philippe le Bel* (Cambridge (MA): Harvard University Press, 1962); **P. Meyvaert**, “An unknown letter of Hulagu, Il-Khan of Persia, to king Louis IX of France”, *Viator*, vol. 2 (1980), pp. 245–259; **K.-E. Lupprian**, *Die Beziehungen der Päpste zu islamischen und mongolischen Herrschern im 13. Jahrhundert anhand ihres Briefwechsels* (Città del Vaticano: Biblioteca Apostolica Vaticana, 1981) (*մեզ համար անհասանելի է եղել*); **J. Richard**, “La lettre de Hülegü à Saint Louis et l’entente avec les Mongols”, dans J. Richard, *Au-delà de la Perse et de l’Arménie. L’Orient latin et la découverte de l’Asie intérieure: Quelques textes inégalement connus aux origines de l’alliance entre Francs et Mongols (1145–1262)* (Turnhout: Brepols, 2005), p. 174–193; **Th. Tanase**, “Une lettre en latin inédite de l’Ilkhan Abaqa au pape Nicolas III. Croisade ou mission?,” in: *Les relations diplomatiques entre le monde musulman et l’Occident latin (XIIIe–XVIe siècles)*, *OM*, Anno 88 (2), ed. by D. Aigle and P. Buresi (2008), p. 337–347; **D. Aigle**, “The Letters of Eljigidei, Hülegü and Abaqa: Mongol overtures or Christian Ventriloquism?,” *IA*, vol. 7 (2) (2005), pp. 143–162, *ինչպես նաև նույնի* “From ‘Non-Negotiation’ to an Abortive Alliance. Thoughts on the Diplomatic Exchanges between the Mongols and the Latin West,” in: D. Aigle, *The Mongol Empire between Myth and Reality. Studies in Anthropological History* (Leiden-Boston: Brill, 2014), pp. 159–198:

բնույթն ու գրագրության վարման հիմնական սկզբունքները: Տարիներ առաջ Մ. Բիրանը պահպանված սակավ վավերագրերի և սկզբնաղբյուրային փաստերի հիման վրա ի մի է բերել միջինասիական Չաղաթայի խանության (1226–1348) դիվանատան աշխատանքի մասին տվյալները⁴: Յուան հարստության (1260–1368) հիմնադիր խան Դուբիլայի դիվանագիտական նամակագրության հոետորաբանությունն է հետազոտել Ֆ. Ֆիասկետտին⁵:

Մամլուքյան սուլթանների հետ Իրանի մոնղոլ իլխանների փոխանակված մի շարք նամակների ընդօրինակություններ և դրանց արաբերեն քաղվածական թարգմանություններ են պահպանվել մամլուքյան պատմագրության երկերում, որոնց ուսումնասիրությամբ զբաղվել են Ա. Ալուչը, Ռ. Ամիտայը, Ջ. Փֆայֆերը⁶: Նրանցից Ռ. Ամիտայի՝ մամլուք-մոնղոլական քաղաքական-ուսումնական առճակատմանը նվիրված հոդվածները և մենագրությունները՝ երկու պետությունների դիվանագիտական շփումների, դեսպանագնացությունների, պաշտոնական նամակագրության լուսաբանման ամենահաջող փորձն են⁷: Զոչիի ուլուսի խաների և Եգիպտոսի սուլթանների դիվանագիտական հարաբերությունների և պաշտոնական նամակագրության արարողակարգի մասին պատկերացում կազմելու համար դեռ օգտակար է Ս. Ջաբիրովի՝ ավելի քան կես դար առաջ հրատարակված աշխատանքը⁸: Ոսկե Հորդայի դիվանա-

⁴ Տե՛ս **M. Biran**, “Diplomacy and Chancellery Practices in the Chagataid Khanate: Some Preliminary Remarks”, *OM*, Anno 88 (2) (2008) pp. 369–393, *ինչպես նաև* **M. Vêr**, “Chancellery and Diplomatic Practices in Central Asia during the Mongol Period as Shown in Old Uyghur and Middle Mongolian Documents”, *ES*, vol. 17, issue 2 (2020), pp. 182–201:

⁵ Տե՛ս **Fr. Fiaschetti**, “Tradition, Innovation and the construction of Qubilai’s diplomatic rhetoric”, *MQYJ*, XVIII (Napoli, 2014), pp. 65–96, *ինչպես նաև* **հույնի**՝ “Diplomacy in the Age of Mongol Globalization: an Introduction”, *ES*, vol. 17 (2019), pp. 175–181:

⁶ **A. Allouche**, “Teguder’s Ultimatum to Qalawun”, *IJMES*, vol. 22, № 4 (1990), pp. 437–446; **R. Amitai-Preiss**, “An Exchange of Letters in Arabic between Abaya Ilkhān and Sultan Baybars (A.H. 667/A.D. 1268–69)”, *CAJ*, vol. 38, № 1 (1994), pp. 11–33; **J. Pfeiffer**, “Aḥmad Tegüder’s Second letter to Qalā’ūn (682/1283)”, in: *History and Historiography of Post-Mongol Central Asia and the Middle East: Studies in Honour of J.E. Woods*, ed by J. Pfeiffer and Sh.A. Quinn (Wiesbaden, 2006), pp. 167–202.

⁷ Տե՛ս հասկապես **Amitai[-Preiss] R.**, *Mongols and Mamluks: The Mamluk-Ilkhānid war, 1260–1281* (Cambridge: Cambridge University Press, 1995); **հույնի**՝ *The Mongols in the Islamic Lands: Studies in the History of the Ilkhanate* (Variorum Collected Studies: CS 873) (London: Ashgate, 2007); **հույնի**՝ *Holy war and rapprochement: Studies in the Relations between the Mamluk Sultanate and the Mongol Ilkhanate (1260–1335)* (Turnhout: Brepols, 2013):

⁸ **С. Закиров**, *Дипломатические отношения (վերևում մեկ անգամ արդեն հղել ենք): Մ. Ֆավերոուի հոդվածներից մեկը նվիրված է դիվանագիտական երկու պետությունների ինքնակալների դիվանագիտական նամակագրության բանաձևերի ուսումնասիրությանը՝ սկզբնաղբյուր ունենալով մամլուքյան քարտուղարության ժանրի հեղինակների (ալ-Ումարի, Իբն Նազիր ալ-Ջալջ, ալ-Կալիլաշանդի) երկերը: Տե՛ս **M. Favereau**, “Comment le sultan mamlouk s’adressait au khan de la Horde d’Or” (*նույնպես հղել ենք վերևում*):*

տան աշխատանքի և պահպանված վավերագրերի ամբողջ կորպուսի վերաբերյալ լիարժեք պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ծանոթանալ Ա. Գրիգորևի, Ի. Վաշարիի, Մ. Ուսմանովի և Լ. Աբգալովի աշխատություններին⁹։

Հատկանշական է, որ մոնղոլական տիրապետության դարաշրջանի հայտնի պատմագրական հուշարձանները բավական լավ ուսումնասիրված են։ Հայ-մոնղոլական հարաբերությունների և մոնղոլների պատմության ուսումնասիրության ուսումնասիրության համար հայկական սկզբնաղբյուրների ներկայացրած նշանակալի արժեքը գիտակցվել է դեռ ԺԹ դարի կեսերից։ Առաջիններից մեկը Ֆրանսիացի անվանի հայագետ էր. Դյուլորիեն էր, ով մոնղոլների պատմությունը գիտարկեց հայկական պատմագրական երկերի հաղորդած տեղեկությունների լույսի ներքո՝ քաղվածական թարգմանություններ կատարելով դրանցից¹⁰։ Մինչ օրս բավական աշխատանք է տարվել մոնղոլական արշավանքների ու նվաճումների, մոնղոլական տիրապետության օրոք հայ-մոնղոլական (ինչպես բուն Հայաստանի իշխանական տների, այնպես էլ Կիլիկյան Հայաստանի) քաղաքական-դիվանագիտական հարաբերությունների, մոնղոլների հարկային քաղաքականության և Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրության ուղղությամբ։ Առավել կարևորներից հարկ է նշել Ք. Պատկանյանի, Ա. Գալստյանի, Հ. Մանանդյանի, Լ. Բաբայանի և վերջապես մոնղոլ հայագետ Դ. Բայրսայխանի գրքերը և թեմային նվիրված հոդվածները¹¹։ Ուսումնասիրության հարուստ ավանդույթ ու-

⁹ Առավել կարևորներից տե՛ս **А.П. Григорьев**, *Монгольская дипломатика XIII–XV вв. (чингизидские жалованные грамоты)* (Ленинград, 1978), *ինչպես նաև նույնի և В.П. Григорьев*, *Коллекция золотоордынских документов XIV века из Венеции: Источниковедческое исследование* (С. Петербург, 2002); **М.А. Усманов**, *Жалованные акты Джучиева улуса XIV–XVI вв.* (Казань, 1979); **I. Vásáry**, *Az Arany Horda kancelláriája* (Budapest, 1987) (*հունգարերեն. ձեռքի տակ շենք ունեցել*), *ինչպես նաև նույնի*՝ «Жалованные грамоты Джучиева Улуса, данные итальянским городам Кафа и Тана», *Источниковедение истории Улуса Джучи (Золотой Орды) от Калки до Астрахани 1223–1556* (Казань, 2002), с. 193–206; **Л.Ф. Абзалов**, *Ханские писцы. Из истории становления и развития канцелярской службы ханов Золотой Орды* (Казань, Изд. «ЯЗ» 2011):

¹⁰ Տե՛ս **Éd. Dulaurier**, «Les Mongols d’après les historiens arméniens», *JA*, t. 11 (1858), p. 192–255, 426–473, 481–508 և t. 16 (1860), p. 273–322.

¹¹ Տե՛ս *История монголов по армянским источникам*, перевод и объяснения **К.П. Патканова**, Вып. 1: Заключающий в себе извлечения из трудов Вардана, Стефана Орбелиана и Конетабля Сембата, Вып. 2: Заключающий в себе извлечения из истории Киракоса Гандзакецци (С.-Петербург, 1873, 1874); **G. Altunian**, *Die Mongolen und ihre Eroberungen in kaukasischen und kleinasiatischen Ländern im XIII. Jahrhundert* (Berlin, 1911) (Vaduz: Kraus reprint, 1965) և **նույնի՝ Մոնղոլները և նրանց արշավանքները ԺԳ դարում (դոկտորական շարագրություն) (Վաղարշապատ, 1913) (*հայերեն թարգմանություն*)։ **Ա. Գալստյան**, *Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից (Լենինական, 1945)*, *ինչպես նաև Армянские источники о монголах (извлечения***

նենալով՝ թեման, այնուամենայնիվ, դեռ սպառնալից չէ նաև մեր օրերում: Հայկական և հայագիտության համար նորահայտ կամ քիչ հայտնի օտարալեզու սկզբնաղբյուրների տեղեկությունների համադրական և համեմատական վերլուծությունը կարող է բերել նոր բացահայտումների՝ հնարավորություն տալով անհրաժեշտության դեպքում լրացումներ և ճշտումներ կատարել արդեն իսկ կատարված աշխատանքներում:

Վերադառնալով Մուհամմադ Հինդուշահին՝ պետք է նշել, որ նրա վերաբերյալ կենսագրական տեղեկությունները սուղ են: Մատենագրի անունից ինքնաբերաբար մակաձվում է այն, որ ծնվել է Նախիջևանում: Հայտնի է, նաև որ նա որդին էր Ֆախր ալ-Դին Հինդուշահ իբն Սինջարի, ով նույնպես պատմիչ էր և հայտնի բառարանագիր¹²: Ստանալով հիանալի կրթություն՝ Մուհամմադ Հինդուշահը երիտասարդ տարիքում տեղափոխվել է Թավրիզ և ծառայության անցել մոնղոլական Իլխանության Ֆինանսական գերատեսչությանում և դիվանատանը: Արքունականների՝ մասնավորապես հանրահայտ իլխանյան վեզիր և պատմիչ Ռաշիդ ալ-Դին Ֆադլալլահի որդի Ղիյաս ալ-Դինի բարեհաճությունն ու հովանավորությունը վայելելով՝ նա իլխան Աբու Սաիդի (կառ. 1316–1335 թթ.) հանձնարարություն է ստացել գրելու պետական կառավարման համակարգի վերաբերյալ ձեռնարկ: Աշխատությունը, սակայն, Նախիջևանին ավարտին է հասցրել 1360-ական թթ. և նվիրել այդ ժամանակ արդեն տապալված Հուլաղույանների փոխարեն Իրանում ազդեցիկ

из рукописей XIII–XIV вв.), перевод с древнеармянского, предисловье и примечания А.Г. Галстяна (Москва, Изд. Восточной литературы, 1962); **Լ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. XI դարից մինչև XV դարի սկիզբը (Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1952), էջ 178–324 (վերահրատարակությունը՝ Երկեր, հ. Գ (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1977), էջ 189–336); **Լ.Լ. Բաբայան**, Հայաստանի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական պատմությունը XIII–XIV դարերում (Երևան, 1964), ինչպես նաև **նույնի**՝ «Հայաստանը մոնղոլ-թաթարական տիրապետության ժամանակաշրջանում», Հայ ժողովրդի պատմություն, հտ. III (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976), էջ 595–668; **D. Bayarsaikhan**, *The Mongols and the Armenians (1220–1335)* (Leiden-Boston: Brill, 2011): Ամբողջությամբ հայ-մոնղոլական առնչություններին և մոնղոլների վերաբերյալ միջնադարյան հայ պատմագրության և բանահյուսության մեջ պահպանված նյութին է նվիրվել «Բազմավէպ» հայագիտական հանդեսի 2010 թվականի հատորներից մեկը (Բազմավէպ, № 3/4 (Ս. Ղազար, Վենետիկ, 2010), ուր հոդվածներով են հանդես եկել Հայաստանի և արտերկրի մի շարք միջնադարագետներ: «Մոնղոլական շրջանի» հայկական սկզբնաղբյուրների հետազոտության պատմության և արդի վիճակի մասին տե՛ս Մ. Բալսի հոդվածն այս հատորում (**M. Bais**, “Armenian Sources on the Mongols”, p. 366–446):

¹² Նա արաբերենից պարսկերեն է թարգմանել Իբն ալ-Տիկտակայի (մահ. 1309 թ.) Kitāb al-Fahrī երկը՝ Tağārib al-salaf («Զարմի [կենսա]փորձը») վերնագրի ներքո՝ որոշ շափով լրամշակելով այն, ինչպես նաև հեղինակել է Şihāh ‘ağam վերնագրով պարսկերեն-թյուրքերեն բառարան: **Տե՛ս Hindušāh ibn Sağar Nahğawānī**, Tağārib al-salaf, be-tašhīh we-ehitimām ‘Abbās Eqbāl (Tehrān, 1965/1966): Şihāh-ի հեղինակության մասին տե՛ս **O.F. Akimushkin**, “On the date of *Al-Şihāh al-‘Ajamiyya*’s composition”, *MO*, vol. 3, № 2 (June 1997), pp. 31–32:

ուժ դարձած Զալարյանների (1340–1410 թթ.) սուլթան Շեյխ Ուվայսին (կառ. 1356–1374 թթ.)¹³: Զնայած դրան՝ երկը հարուստ տեղեկություններ է պարունակում նաև Իլխանության ժամանակների հասարակական-քաղաքական կյանքի իրողությունների մասին: Մեծ հարգանք ու վարկ ձեռք բերելով՝ ժամանակակիցների կողմից կոչվել է Շամս Մունշի (Šams munšī, իմա՝ «Գրագիր Շամս»)՝¹⁴:

Մուհամմադ Նախշիվանիի Dastūr al-kātib երկը մոնղոլական Իրանի պետական գերատեսչությունների՝ դիվանների (dīwān)՝ այդ թվում պաշտոնական դիվանատան աշխատանքի և նրանց «թողարկած» փաստաթղթերի վերաբերյալ տվյալներ հաղորդող եզակի սկզբնաղբյուրներից մեկն է, որը հրատարակությունից ի վեր խորքային ուսումնասիրության և որևէ լեզվով թարգմանության չի ենթարկվել: Ըստ Հինդուշահի՝ պետական գերատեսչությունները ղեկավարող գերագույն մարմինն այսպես կոչված «Մեծ դիվանն» (dīwān-i bozorg) էր կամ «Գերագույն դիվանը» (dīwān a'lā), որը ղեկավարում էր արքունի վեզիրը կամ šāhib dīwān-ը՝ իր տեղակալի (nā'ib šāhib dīwān) հետ միասին: Գործադիր այս մարմնում ընդգրկված պետական պաշտոնյաներն էլ վարում էին արքունի գերատեսչությունները: «Գերագույն դիվան»-ի ազդեցիկ պաշտոնյաներից էր մունշին (munšī կամ munšī mamālik, թյուրք.՝ bahšī¹⁵) կամ, ինչպես Իրանում սելջուկյան տիրապետության ժամանակաշրջանից էր ժառանգություն մնացել, տուղրահին (tuğrā'ī), որի վերատեսչության ներքո էր գտնվում իլխանական արքունի նոտարատունը (dīwān inšā' wa-tuğrā): Տուղրան տիրակալի անունը (ստորագրությունը կամ ինքնագիրը) կրող կնիք էր, որով մունշին կնքում էր նրա անունից կազմված գրությունները: Հարկ է նաև նշել, որ իլխանական նոտարատնից դուրս եկած փաստաթղթերը վավերացվում էին հատուկ նշան կրող կնիքներով, որոնք տամդա (tamgā) էին կոչվում և լինում

¹³ Մուհամմադ Նախշիվանին, ինչպես իր հայրը, նույնպես իր ուժերը փորձել է բառարանագրության մեջ: Նրա գրչին է վերագրվում Šihāh al-Furs պարսկերենի բացատրական բառարանը (1328 թ.), որը նվիրել է վերոհիշյալ Ղիյաս ալ-Դին Ռաշիդին: *Šē'u Muḥammad ibn Hindušāh Nahğawānī, Šihāh al-Furs, be-ehemām 'Abd al-'Alī Ṭa'ā'ī* (Tehrān, 1962/1963), ինչպես նաև **С.И. Баевский, Ранняя персидская лексикография (XI–XV cc.)** (Москва, «Наука», 1989), с. 39–41; **S.I. Baevskii, Early Persian Lexicography. Farhangs of the Eleventh to the Fifteenth Centuries**, tr. by N. Killian, revised and updated by J.R. Perry (Folkestone: Global Oriental, 2007), pp. 55–56 (նախորդի թարմացված թարգմանական հրատարակությունը): *Мухаммад ибн Хиндушах Нахчивани, Дастүр ал-катиб, том. 1, часть 1, с. 9 (Предисловие)*: Ա.Ա. Ալի-Ջադեհ այստեղ շփոթում է հոր և որդու բառարանները՝ հետևելով Таğārib al-salaf երկի խմբագիր Աբբաս էղբալին: Հմմտ. **Hindušāh ibn Saṅğar Nahğawānī, Tağārib al-salaf**, §. 10 («Հրատարակողի առաջաբան»):

¹⁴ *Мухаммад ибн Хиндушах Нахчивани, Дастүр ал-катиб, том. 2, с. 5–7 (Предисловие)*; **D.O. Morgan, “Dastūr al-Kāteb,”** in: *Elr*, vol. VII, Fasc. 2 (1994), pp. 113–114.

¹⁵ **J.F. von Hammer-Purgstall, Geschichte der Goldenen Horde in Kiptschak, das ist der Mongolen in Russland** (Pesth: C.A.Hartleben's Verlag, 1840), S. 219.

էին տարբեր գույների (ոսկեգույն՝ *altun tamgā*, սև՝ *qarā tamgā*, կապտա-կանաչ՝ *kok tamgā*)՝ կախված փաստաթղթի կարևորությունից և տեսակից¹⁶: Մունշին համակարգում էր արքունի գրագիրների (*bitikči*) աշխատանքը և վարում պաշտոնական մտից և ելից գրագրությունը՝ այդ թվում պատասխանատու լինելով օտարերկրյա տիրակալների հետ պաշտոնական նամակագրության ապահովման համար¹⁷: Հինդուշահն այսպես պատկերավոր է նկարագրում արքունի քարտուղարության (*inšā' mamālik*) պաշտոնը զբաղեցնողի նշանակությունը պետական իշխանության ղեկը զբաղեցնողների համար. «Վերելքը դեպի բարեգարգություն և վեհություն լեռների կատարները, տիրապետումը կատարելության (*kamāl wa-ikmāl*) հանգրվանների բարձունքներին, վերլնթացքն աշխարհակալության (*ǧahānbānī*) աստիճաններով և համբառնումը հերոսության սանդուղքներով (*urūǧ bar ma'āriǧ qahrāmānī*) կարելի են սոսկ պետական քարտուղարության դիվանապետի բարձր պաշտոնում մեծահմուտ գրագիրների նշանակման դեպքում»¹⁸: Ըստ նրա՝ սուլթաններին ու արքաներին պետք է մեկը, ում կարելի է վստահել պետական իշխանության գաղտնիքներն ու պետական գործերը¹⁹, և այդ մեկն արքունի դիվանապետն է:

Ի շարս բազմաթիվ արժեքավոր տեղեկությունների, երկար ժամանակ անտեսված է եղել նաև *Dastūr al-kātib-i*՝ ոչ մուսուլմանների հետ պաշտոնական նամակագրության վերաբերյալ մի շատ ուշագրավ հատված, որում խոսք կա նաև հայոց արքաների հետ մոնղոլական իշխանությունների նամակագրության մասին²⁰ (տե՛ս Պատկեր 3): Թարգմանաբար մեջբերենք հատվածը. «Սուրիստոնյա (*ṯawīyyān*) թաքֆուրներին, վրացիներին, նազարեթցիներին (բնա-

¹⁶ Տե՛ս **G. Leiser**, “TAMGHA,” in: *EI2*, vol. 10 (T-U) (Leiden: Brill, 2000), p. 170; **G. Doerfer**, “ĀL TAMĠĀ,” in: *EIr*, vol. I, Fasc. 7 (1984), pp. 766-768, *ինչպես նաև նույնի*՝ “ALTŪN TAMĠĀ,” in: *EIr*, vol. I, Fasc. 9 (1989), pp. 913-914:

¹⁷ Իրանում մոնղոլական վարչական ապարատի կառուցվածքի և առանձնապես իլխանական դիվանատան վերաբերյալ տե՛ս **Мухаммад ибн Хиндусах Нахчивани**, *Дастūr ал-кātиуб*, том. 2, с. 11-21 (Предисловие); **B. Spuler**, *Die Mongolen in Iran. Politik, Verwaltung und Kultur der Ilchanzeit 1220-1350* (Berlin: Akademie Verlag, 1955), S. 289-294; **A. Lambton**, *Continuity and Change in Medieval Persia: Aspects of Administrative, Economic and Social History, 11th-14th Century* (Albany: SUNY press., 1988), pp. 50-68:

¹⁸ Տե՛ս **Muhammad ibn Hindušāh Nahğawānī**, *Dastūr al-kātib fi ta'yīn al-marātīb*, ǧ. 2, ǧ. 117: Հատվածի ամբողջական թարգմանությունը տե՛ս **J.F. von Hammer-Purgstall**, *Geschichte*, S. 493-496, *ինչպես նաև հմմտ*. **С. Закиров**, *Дипломатические отношения*, с. 104-108:

¹⁹ Անդ:

²⁰ *Dastūr al-kātib-i* այս հատվածի վրա մեզանից առաջ հարևանցի անդադարձել է Ռ. Շուքուրովը՝ մատնանշելով բանաձևի ձևակերպման մեջ առկա հակասությունը: Տե՛ս **Р. Шукуров**, *Великие комнины и Восток (1204-1461)*, под ред. С. П. Карпова (Санкт-Петербург, Алетейя, 2001), с. 49:

գրում՝ *naṣārā* կրկին նկատի ունի «քրիստոնյաներին»)՝ հայերին և ֆրանկներին, հարկավոր է այսպես գրել՝ Սսի թաքֆուրին, որ այս համայնքի տիրակալն է (*pādešāh*) ու գլուխը (*bozorg*՝ «մեծը», «գլխավորը»), մեծագույն վասիլևսին (*fāsilyūs a'zam*), հարգամեծար Ֆայլազուսին (*faylaqūs akram*)՝ Ալեքսանդրյան ընտանիքի փառք (*iftihār-i dudmān-i Iskandar*), քրիստոնյաների ապաստան (*malād-i āl-i Masīh*), Սսի թաքֆուրին, որի մեծութունը թող հարատև լինի»²¹։ Նախշիվանիի արձանագրած բանաձևի շարունակությունն առաջին իսկ հայացքից հարցեր է հարուցում, քանզի նրանում եղած տիտղոսներն ու պատվանունները գերազանցապես կրոնական բովանդակություն են. «Եպիսկոպոսների եպիսկոպոսին (*marhāsya marhāsya*)»²² պատվելի տիրոջը (*tīr mukarram*), քրիստոնյաների տիրոջը (*sayyid al-naṣārā*)՝ եպիսկոպոսների ռահվիրա (*qudwat al-asāqifa*), քրիստոնեական համայնքի առաջնորդ (*muqaddam al-ṭā'ifa al-'isawiyya*) տեր Դավթին (*tīr Dāwūd*)»:

Ոչ պակաս ուշագրավ է հատվածի երկրորդ մասը. «Վրաց իշխաններին (*umarā-i kurğ*) [պետք է գրել]՝ հարգարժան իշխան (*amīr mukarram*)՝ Բագրատի զարմի փառք (*iftihār-i āl-i Baqrāt*)»²³, վրացիների և աբխազների ամիրսպասալար (*sipahdār-i kurğ wa-abhāz*), քրիստոնեական զարմի ռահվիրա (*qudwat āl-i Masīh*) «Իվաներին», [իսկ] քահանաներին և վանականներին՝ քահանաների ռահվիրա կամ վանականների առաջնորդ «Իվանիսին» (Հովհաննես) կամ քրիստոնեական համայնքի առաջնորդ (*muqaddam al-firqa al-masīhiyya*) «Սարգսին» (*Sarkīs*), իսկ [առհասարակ] քրիստոնյաներին (*naṣārā*)՝ քրիստոնյաների տեր (*sayyid al-naṣārā*) «Ավագին» (*Awak*)»²⁴։

²¹ **Muhammad Nahğawānī**, *Dastūr al-katib*, ց. 1.2, ց. 391.

²² Բառն ասորական ծագում ունի: Հստ Սիլվեստր դը Սասիլի՝ արաբերենի և պարսկերենի կողմից փոխառնված այս եզրույթը բառացիորեն նշանակում է «սրբազան այր» (այլ կերպ ասած՝ «կրոնավոր», «հոգևորական»), թեև այն ավելի ճիշտ է «եպիսկոպոս» թարգմանել: Տե՛ս **M. Silvestre de Sacy**, “Mémoire sur une correspondance inédite entre Tamerlan et le roi de France Charles VI”, *Histoire et mémoires de l'Institut royal de France* (Paris: Académie des inscriptions et belles-lettres, 1822), p. 476–477: Բառի կիրառության այլ օրինակների համար տե՛ս **Rašīd al-Dīn**, *Ġāmi‘ al-tawārīh (Tārīh-e Afrang, Pāpān wa-Qayāsera)*, tašhīh-e Moḥammad Rowšān (Tehrān, Mīrāt Maktūb, 2005), ց. 74; **Ḥamd Allāh Mustawfī Qazwīnī**, *Kitāb Nuzhat al-qulūb* (Leiden: E.J. Brill, 1913), ց. 89 (բացատրում է՝ *marhāsya ke bozorg-i kašīšān ast*, այն՝ «մարհասյան, ով կղերականների մեծն է»), իսկ արաբալեզու պատմագրության մեջ՝ **‘Izz al-Dīn Ibn Šaddād**, *Tārīh al-Malik al-Zāhir, bi-tahqīq Aḥmad Ḥuṭayṭ* (Die Geschichte des Sultans Baibars von ‘Izz ad-dīn Muḥammad b. ‘Alī b. Ibrāhīm b. Šaddād (st. 684/1285) (Wiesbaden: Franz Steiner Verlag, 1983), ց. 169; **Baybars al-Mansūrī**, *Zubdat al-fikra fi tārih al-hiğra, bi-tahqīq Dunāld Rītšārdz* (D.S. Richards) (Berlin-Bayrūt, 1998), ց. 71; **al-Yūnīnī**, *Ḍayl Mirāt al-zamān, al-tab‘a al-ūlā*, ց. 3 (Ḥaydārabād, Maṭba‘at Dā‘irat al-Ma‘ārif al-‘Uṭmāniyya, 1960), ց. 112–114:

²³ Նկատի է առնված Բագրատունիների (վրաց.՝ Բագրատիոնիներ) հարստությունը:

²⁴ **Muhammad Nahğawānī**, *Dastūr al-katib*, ց. 1.2, ց. 391–392.

Նախշիվանին, որպես հետգրություն ավելացնում է, որ հայերի և ֆրանկների հետ գրագրությունը նույն սկզբունքով է, իսկ նրանց հետ գրագրության մեջ որպես *du'ā* կիրառելի էին «մովսիսականներին» (*mūsawiyyān*, իմա՝ հրեաներին) ուղարկվող նամակներում կիրառվողները, որոնք Նախշիվանին արձանագրել է «Սաի թաքֆուրի» հետ նամակագրությանն անդրադառնալուց առաջ: Ինչպես վերևում ենք պարզաբանել, *du'ā* (հգն.՝ *ad'iya*) էին կոչվում քրիստոնյա գահակալներին ուղղված նամակներում հասցեատիրոջն ուղղված [բարե]մաղթանքները, վերջինիս բարեկեցության կամ բարօրության համար Ալլահին ուղղված ըղձական աղերսները: *Du'ā*-ները սովորաբար նախորդում և հաջորդում էին նամակի հասցեատիրոջ անվան հիշատակությանը: Ուստի «հրեաներին» ուղղված նամակագրության բանաձևից դուրս բերենք այդ ըղձական աղերսները, որոնք, փաստորեն, կարելի էր օգտագործել նաև «հայերի» հետ նամակագրության մեջ: Այդպիսի հինգ գրեթե նույնիմաստ արաբերեն արտահայտություններ են հիշվում՝ *hadāhu Allāh* («թո՛ղ Ալլահն ուղղորդի նրան»), *aršadahu Allāh* («թո՛ղ Ալլահը նրան ճիշտ ուղի ցույց տա»), *adallahu Allāh ilā al-dīn al-qawīm* («թո՛ղ Ալլահը նրան դարձնի դեպի [միակ] ճշմարիտ կրոնը»), *saddada Allāh tariqahu* («թո՛ղ Ալլահը նրան ճիշտ ճանապարհի վրա դնի»), *aršadahu ilā al-širāt al-mustaqīm* («թո՛ղ Ալլահն ուղղորդի նրան դեպի [միակ] ճշմարիտ ուղին»)²⁵:

Շատ հետաքրքիր է բանաձևում հայերեն «տեր» բառի տառադարձված գործածումը: Այստեղից հետևում է, որ բանաձևի առաջին մասը նախատեսված է եղել հայոց արքաներին, իսկ երկրորդ մասը՝ հայոց կաթողիկոսներին գրելու համար: «Դավիթ» անունն այստեղ ամենայն հավանականությամբ կամայականորեն է հիշատակված՝ պարզապես որպես օրինակ, քանզի ոչ Իլխանության շրջանում և ոչ էլ Ջալարյանների օրոք հայոց հայրապետական աթոռին «Դավիթ» անունով կաթողիկոս չի նստել²⁶: Ցավոք, պահպանված չեն նաև Իլխանական իշխանություններից հայոց կաթողիկոսներին հասցեագրված նամակներ, որ կհավաստեին այս բանաձևի իսկությունը:

Մեզ են հասել կամ գոնե ցայսօր հայտնի են լոկ Աբու Սաիդ Իլխանի օրոք հրապարակված երկու հրովարտականեր (յաուլիկներ)՝ տրված Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի վանահայր Վարդանին²⁷ (կրկին անվանված

²⁵ Անդ, §. 391:

²⁶ Թեև 1346-մոտ 1368 թթ. Դավիթ Բ անունով կաթողիկոս է նստել Աղթամարում:

²⁷ Տե՛ս Հ. Փափազյան, «Երկու նորահայտ իլխանական յաուլիկներ», Բանբեր Մատենադարանի, № 6 (1962), էջ 379–401: Այս երկու իլխանական յաուլիկներից հետո՝ մեզ հասած պարսկերեն հնագույն վավերագիրը Կարա-Կոյունլու սուլթան Ջհանշահի կողմից տրված մի հրովարտակ է՝ թվագրված 1449-ով: Տե՛ս նույնի՝ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտականեր, պրակ Ա (ԺԵ-ԺԶ դդ.) (Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1956), էջ 43:

է մարհաս[յա)՝ նրա վակուֆային-հողատիրական իրավունքները սահմանելու համար: Հետևաբար այդ երկու փաստաթղթերը ոչ մի կերպ չեն կարող օգտակար լինել Մուհամմադ Հինդուշահի պահպանած դիմումաձևի ուսումնասիրության հարցում:

Հատվածի վերջնամասում, ինչպես կարելի է տեսնել, ներկայացված են վրաց ազնվականության հետ գրագրության մեջ օգտագործված որոշ բանաձևեր: Ընդ որում, Մուհամմադ Հինդուշահի մատնանշած անուններից (Իվանե, Ավագ) առավել քան ակնհայտ է, որ խոսքը Վրաց թագավորության և առանձնապես Զաքարյանների (վրաց.՝ Մխարբրձեղիների) տոհմի հետ մոնղոլների դիվանագիտական շփումների արդյունքում դեռ մինչև ԺԳ դարի կեսերը ձևավորված նամակագրական բանաձևերի մասին է, որոնք, փաստորեն, հետագայում փոխառել է և շարունակել է օգտագործել Իլխանության պետական դիվանատունը:

Ինչևիցե, եթե վերադառնանք բանաձևի սկզբնամասին, ապա մյուս ուշագրավ հանգամանքը, անշուշտ, հենց հայոց արքաներին վերագրված տիտղոսներն ու պատվանուններն են՝ մասնավորապես *fāsilyūs a'zam-ը*, *Faylaqūs akram-ը* և *iftihār-i dudmān-i Iskandar-ը*: Դրանցից առաջինը շատ ավելի հարիր էր Բյուզանդական կայսրերին վերագրվելու համար, քան թե Կիլիկիո հայոց միապետերին: Իսկ մյուս երկու պատվանունների տակ նկատի են առնված համապատասխանաբար Մակեդոնիայի արքա Ֆիլիպ Բ-ն (կառ. մ.թ.ա 359–336 թթ.) և նրա որդի Ալեքսանդր Մակեդոնացին (կառ. մ.թ.ա. 336–323 թթ.), որոնց ժառանգներ հայոց արքաներն իրենց երբևէ չեն համարել: Դրան հակառակ՝ մամլուքյան դիվանատան փաստաթղթերում Բյուզանդական կայսրության միապետերը համարվում էին Ալեքսանդր Մեծի հետնորդներ: Օրինակ, ալ-Կալկաշանդին «Ռումի արքաների» իր տոհմաբանական ցանկում ներառել է նաև Ֆիլիպին (*Filibūs*) և նրա որդի Ալեքսանդրին (*al-Iskandar*)²⁸: Մամլուքյան սուլթանության և Բյուզանդական կայսրության դիվանագիտական նամակագրության վերաբերյալ իր ուսումնասիրության մեջ վերջերս Դմիտրի Կորոբեյնիկովը, քննության առնելով պարսիկ մատենագրի պահպանած բանաձևը, եզրակացրել է, որ հայոց և ֆրանկ թագավորների հետ նամակագրության դիմումը կազմելիս, իլխանական դիվանատանն ըստ էության հիմք

²⁸ *St' u al-Qalqašandī, Šubh al-a'šā fi šinā'at al-insā'*, ց. 5 (al-Qāhira, al-Maṭba'a al-amīriyya, 1915), ց. 380, *ինչպես նաև D.A. Korobeinikov*, "Diplomatic Correspondence between Byzantium and the Mamluk Sultanate in the Fourteenth Century", *Al-Masāq*, vol. 16 (2004), p. 64:

է ընդունվել բյուզանդական կայսրերի հետ նամակագրության բանաձևը, որը, սակայն, *Dastūr al-kātib*-ում ավանդված չէ²⁹: Դ. Կորոբեյնիկովի այս տեսակետը, իհարկե, ընդունելի է մեզ համար: Հայոց արքային բյուզանդական տիտղոսներով կոչելը զուտ մեխանիկական վերագրում համարել չի կարելի. չէ՞ որ տարածաշրջանի պատմական հիշողության մեջ դեռ մարմրում էր այն պատկերացումը, որ հայոց թագավորությունը ծնունդ էր առել Սրբազան Հռոմեական կայսրության ինքնակալի և Բյուզանդիայի կայսեր ուղարկած թագերով: Զուր չէ, որ Լևոն Մեծագործ արքան (կառ. 1198–1216 թթ.) իր ուղարկած պաշտոնական նամակներում և շնորհած արտոնագրերում իրեն հաճախ «Հռոմեական կայսրության փառք»³⁰ էր կոչում: Նույնքան պատահական չէ, որ մամլուքյան մատենագիր և կահիրյան դիվանատան դպիր ալ-Ումարին (մահ. 1349 թ.) նույնպես հայոց թագավորության մասին իր պատմական ակնարկը սկսում է ժամանակին տարածված այն պատկերացման բացատրությամբ, թե իբր «թաքֆուրի դինաստիան» սերում էր «կոստանդինյան տնից»՝ նույնն է, թե Հռոմի կայսր Կոստանդինոս Ա Մեծից (կառ. 306–337 թթ.) և նրա սերունդներից³¹: Այդ վերհուշն իր յուրատեսակ վերարժևորումն է գտել Կիրիկիո հայոց թագավորության նկատմամբ հարակից մուսուլմանական կազմավորումների ընկալումներում՝ արտացոլվելով նրանց բարձրագույն քաղաքական իշխանությունների և հայոց արքաների դիվանագիտական նամակագրության արարողակարգում:

Բ 2. Դիվանագիտական նամակագրության լեզուն, բանագնացները, թարգմանիչները.

Կարևոր է պարզաբանել նաև հայ-մոնղոլական դիվանագիտական նամակագրության լեզվի հարցը: Ցավոք, սկզբնաղբյուրային վկայությունների և վավերագրերի բացակայությունը թույլ չի տալիս հիմնավոր տեսակետ առաջարկել: Այնուամենայնիվ, որոշ փաստերի հիմքով կարելի է ենթադրություններ անել: Նախ արձանագրենք, որ ի տարբերություն Մամլուքյան սուլթանության՝ միջնադարյան սկզբնաղբյուրներում սակավաթիվ են մոնղոլական ուրդու ուղարկված հայկական դիվանագիտական ներկայացուցչությունների

²⁹ *Անդ.*, pp. 64–65:

³⁰ *Տե՛ս V. Langlois, Le trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupénides*, Venise, 1863, p. 105, 112, 117–118, 130: Հմմտ. **D. Korobeinikov**, “Diplomatic Correspondence”, p. 74, n. 122:

³¹ **Al-Umārī**, *Al-Ta’rīf*, §. 80.

մասին վկայությունները: Սրա պատճառը հավանաբար այն է, որ հայոց արքաները՝ համաձայն մոնղոլական աշխարհակալական գաղափարաբանության, որպես մոնղոլական պետության վասալներ՝ պարտավորություն են ունեցել անհրաժեշտության դեպքում իրենք անձամբ կամ ծայրահեղ դեպքերում իրենց փոխարեն բարձաստիճան մեկ այլ պաշտոնատար անձ ուղարկելու Իլխանություն:

1220–1240-ական թվականներին Կովկասյան տարածաշրջանը և Փոքր Ասիան սրբնթաց արշավանքներով գրավելով՝ մոնղոլական բանակներն արդեն նույն 1240-ական թվականներին իրենց են ենթարկում Ռուսիայի իշխանություններն ու ապա շարժվում դեպի Հունգարիա և Լեհաստան՝ ջախջախիչ պարտության մատնելով նաև եվրոպական բանակներին: Մոնղոլական ներխուժման վերահաս վտանգը վախի և տագնապի մթնոլորտ է ստեղծում եվրոպական մայրաքաղաքներում՝ օրահարց դարձնելով նոր նվաճողների հետ անհապաղ երկխոսությունը: Առաջին քայլերից մեկը կատարում են կաթոլիկ պապերը՝ դեսպանագնացություններ ու նամակներ ուղարկելով նրանց զորապետերին և քաղաքական առաջնորդներին: Միայն թե ինչպե՞ս և ի՞նչ լեզվով խոսել նոր զավթիչների հետ: Դ. էգլը իրավացիորեն եվրոպացի ինքնակալների և մոնղոլ խաների մեզ հասած նամակագրությունը բաժանում է երկու մասի: 1247–1254 թթ. ընդգրկող ժամանակահատվածից մեզ են հասել մոնղոլ Մեծ խաների (Գուլուկ, Մոնգկե) և լատին հոգևոր և աշխարհիկ միապետների (Իննոկենտիոս Դ պապ, Ֆրանսիայի արքա Լուի Թ⁶) փոխանակած նամակներ, որոնց կենտրոնական թեման մոնղոլական գերիշխանությունն անվերապահորեն ճանաչելու պահանջն էր: Երկրորդ խմբի վավերագրերն արդեն Իրանի իլխանների հետ փոխանակած գրություններն են, որոնց համար առանցքային է արդեն Մամլուքյան սուլթանության դեմ ուղղված դաշինք ստեղծելու և Ասորիքն ու Սուրբ Երկիրը մուսուլմանների ձեռքից համատեղ ուժերով ազատագրելու թեման³²:

Արևելյան քրիստոնյաների, իսկ հետո նաև եվրոպացիների հետ շփման առաջին իսկ փորձերից մոնղոլները նույնպես բախվել են լեզվական խոչընդոտի խնդրին: Մի բան պարզ էր. իրենց գրաված բազմազգ և բազմալեզու անծայրածիր տարածքներում իշխելն անկարելի էր լինելու առանց գրավված ժողովուրդների լեզվական և մշակութային առանձնահատկությունները հաշվի առնելու: Մոնղոլական արշավանքների արդյունքում, ճիշտ է, աննկարագրելիորեն վերաձևվում է գրեթե ողջ Եվրասիայի քաղաքական քարտեզը, բայց էթնոլեզվական առումով աշխարհամասի նկարագիրը գլխիվայր չի շրջվում,

³² D. Aigle, “The Letters of Eljigidei, Hülegü and Abaqa”, pp. 143-144.

Թեև ավելի խայտաբղետ է դառնում: Այսպես, մոնղոլերենն առանձնապես ճանաչված լեզու չէր գրավյալ ժողովուրդների շրջանում, ուստի անիրատեսական էր տեղական լեզուներն ու մշակույթը մամլելու գնով հասնել մոնղոլերենի մասսայականացմանը: Ուստի Մոնղոլական Մեծ տերությունում, իսկ հետո նաև առանձին ուլուսներում, մոնղոլերենի (ուլգուրական գրով) պաշտոնական կարգավիճակին զուգահեռ՝ մոնղոլ իշխողները մշտապես ակտիվորեն օգտվում էին նաև տեղացի ոչ-մոնղոլ (այդ թվում հայ) թարգմանիչների (մոնղոլ.՝ *kālāmācī* կամ *kalemūrčī*, թյուրք.՝ *tīlmac*) և դեսպանների (մոնղոլ.՝ *ilčī*, թյուրք.՝ *yalawāč*) ծառայություններից³³՝ այդու միջազգային, միջմշակութային

³³ **D. Sinor**, “Interpreters in Medieval Inner Asia”, *AAS*, vol. 16, № 3 (1982), pp. 311-316; **P. Jackson**, *The Mongols and the West, 1221-1410* (London-New York: Routledge, 2005 (2nd ed.: Abingdon-New York: Routledge, 2014), pp. 173-174: *Դեսպաններն ու սուրհանդակները մոնղոլահպատակ տարածքներով ճամփորդում էին մոնղոլական իշխանութուններից ստացած հատուկ «արտոնագրերով», որ փայլա էին կոչվում (տե՛ս ներքևում): Լայնարձակ տարածքներով բանագնացների անվտանգ ու անխոչընդոտ երթևեկն ապահովելու համար մոնղոլական Մեծ տերությունում Ուլգեդեյ խանից սկսած, իսկ հետո նաև մյուս մոնղոլական ուլուսներում գործում էր կանոնավոր փոստային համակարգ, որը յամ (*yām*) էր կոչվում: Այն իրենից ներկայացնում էր բազմաթիվ ուղերթերով փոխադրված փոստային կայանների ցանց: Ընդ որում, մոնղոլ սուրհանդակներն արտոնություն ունեին գիշերակացի տեղ, պարեն, անասնակեր, փոխադրամիջոցներ (փոստաձիեր՝ *սլāḡ*) և կամ անհրաժեշտ այլ պարագաներ պահանջել և անհատուց ստանալ այն վայրերի բնակչությունից, որտեղով ճամփորդում էին: Շատ հաճախ հարյուրավոր ուղեկիցների շքագնդերով և պահուստներով շրջող բանագնացները վերագանցում էին իրենց արտոնությունները՝ կեղեքելով ու հարստահարելով տեղացի բնակչությանը: Ըստ Ռաշիդ ալ-Դինի՝ իրավիճակն այնքան է բարդացել, որ Ղազան խանի օրոք յամի բարեփոխմանն ու իլչիների գործունեությանը վերաբերող նոր հրովարտակ է հրապարակվել, որի համաձայն զգալիորեն կրճատվել է վերջիններիս թիվը, ինչպես նաև սկսել են նրանց արքունի գանձարանից օրապահիկ վճարել: Տե՛ս **Rašīd al-Dīn**, *Ġāmi‘ al-Tawārīḥ*, ց. 1, be-kūšēš-e Bahmān Karīmī (Tehrān, Eqbāl, 1960), ց. 1045-1050 և **Рашид-ад-Дин**, *Сборник летописей*, том III, пер. А. К. Арндса, под ред. А.А. Ромаскевича (Москва-Ленинград, Изд. Академии Наук СССР, 1946), стр. 263-268: Տե՛ս նաև **Հ. Մանանդյան**, *Քրնական տեսություն (ճ. Գ)*, էջ 291-293; **Լ. Քաբայան**, «Հայաստանը մոնղոլ-թաթարական տիրապետության ժամանակաշրջանում», էջ 654; **D. Bayarsaikhan**, *The Mongols and the Armenians*, pp. 115–116: Մոնղոլական փոստային համակարգի մասին ավելի մանրամասն տե՛ս **A. Silverstein**, “The Mongol Yām and its legacy,” in: *Postal Systems in the Pre-Modern Islamic World* (Cambridge: Cambridge University Press, 2007), pp. 141-164: Գրիգոր Ակներցու «Պատմութիւն ազգին նետողաց» երկում իլչիների երթևեկի, գիշերակացի և պարենավորման պարհակը «տղու» (որոշ գրչագրերում՝ «տղու» կամ «տրղու») եզրով է բնորոշված: Ըստ Ֆ.Վ. Կլիվզի՝ այն հավանաբար թյուրքական ծագում ունի, որի մոնղոլերեն համարժեքը *tusqu-n* է, որ «բաժակ» կամ «սկահ» նշանակությունն ունի: Տե՛ս **F.W. Cleaves**, “The Mongolian Names and Terms in the History of the Nation of the Archers by Grigor of Akanc”, *HJAS*, vol. 12, № 3/4 (1949), p. 442, *ինչպես նաև վերջինիս հղած գրականությունը և հմմտ. Լ. Քաբայան*, *Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը*, էջ 486-493:*

և միջբաղադրակրթական շփման ու առնչությունների նոր դարաշրջան բացելով³⁴: Իսկ օրինակ, Ջոշիի ուլուսի (Ոսկե Հորդաչի) դեպքում՝ գերակշռող թյուրքալեզու բնակչության պարագայում, մոնղոլերենն այդպես գերիշխող դիրք չի ստացել և շատ արագ իր տեղը զիջել է թյուրքերենին³⁵:

Սկզբնական շրջանում, իհարկե, լատին-մոնղոլական շփումը շատ բարդ էր ստացվում: Մի միջադեպ շատ ցայտուն է դրսևորում այդ բարդությունը: Իննոկենտիոս Դ-ի (1243–1254 թթ.) նվիրակ Ասցելինը և նրա ուղեկից Սիմոն դը Սենտ Քվենտինը, որոնք Արևելք էին ուղարկվել՝ տեսակցելու մոնղոլ զորապետ Բաչու-նոյինին, 1247 թ. ամռանը վերջինիս գտնում են Հայաստանի Սիսիան բնակավայրի մերձակայքում գտնվող զորակայանում և փորձում փոխանցել պապի ուղարկած նամակները: Վինսենտ դե Բովեի *Speculum Historiale* աշխատության մեջ մեզ է հասել Սիմոն դը Սենտ Քվենտինի՝ դիվանագիտական վերոհիշյալ առաքելության մասին գրած հաշվետվական զեկուլցը՝ *Historia Tartarorum* («Թաթարների պատմություն») խորագրով, որի շնորհիվ էլ հայտնի են Բաչուի հետ բանակցությունների մանրամասները: Վինսենտ դը Բովեի գրքի գրչագրերից Սիմոն դը Քվենտինին վերագրվող հատվածների քննական հրատարակությունը կազմել է Ժ. Ռիշարը³⁶: Ինչ վերաբերում է հիշյալ միջադեպին, մասնավորապես պատմվում է, որ Ասցելինն ու նրան ուղեկցող վանականներն ու երեք թարգմանիչները Բաչուի գրագիրների և այլ թյուրք և հույն թարգմանիչների (բնագրում՝ *Turcis et a Grecis interpretibus*) հետ մեկտեղ թարգմանում են պապի նամակները նախ պարս-

³⁴ Երևույթի փայլուն օրինակ է ԺԴ դարի կեսերին Եմենի Ռասուլյան հարստության տիրակալ ալ-Մալիք ալ-Աֆդալ Դիրդամ ալ-Դին ալ-Աբբասի (1363–1377 թթ.) պատվերով (կամ գուցե հենց նրա ձեռքով) գրված վեցալեզու (արաբերեն, պարսկերեն, թյուրքերեն, մոնղոլերեն, հունարեն, հայերեն) մի բառարան: Բառարանի հրատարակության նախաբանում մերձավորարևելյան տարածաշրջանում մոնղոլական գործոնի հարուցած էթնոլեզվական փոփոխությունների մասին երկու հետաքրքիր ակնարկներ են ներկայացրել Պ. Գոլդենն ու Թ. Օլսենը: Տե՛ս **P.B. Golden**, “The World of the Rasulid Hexaglot” & **Th.T. Allsen**, “The Rasulid Hexaglot in its Eurasian Cultural Context,” in: *The King’s dictionary: The Rasūlid Hexaglot: Fourteenth century vocabularies in Arabic, Persian, Turkic, Greek, Armenian and Mongol*, tr. by T. Halasi-Kun, P.B. Golden, L. Ligeti and Ed. Schütz, with introductory essays by P.B. Golden and Th. Allsen, notes and commentary by P.B. Golden (Leiden: E.J. Brill, 2000), pp. 1-24 & 25-49:

³⁵ Տե՛ս **И. Васари**, “Многоязычие и культурные взаимодействия в Золотой Орде”, 30 (2017), т. 5, № 1, стр. 56-63 և հատկապես **Л.Ф. Абзалов**, *Ханские писцы*, стр. 79-129:

³⁶ *Simon de Saint-Quentin: Histoire des Tartares*, ed. J. Richard (Paris, 1965): Պապական նվիրակների դեսպանագնացության մասին տե՛ս նաև **G.G. Guzman**, “Simon of Saint-Quentin and the Dominican Mission to the Mongol Baiju: A Reappraisal”, *Speculum*, vol. 46, № 2 (1971), pp. 232-249, *ինչպես նաև նույնի*՝ “European Clerical Envoys to the Mongols: Reports of Western merchants in Eastern Europe and Central Asia, 1231-1255”, *JMH*, vol. 22, № 1 (1996), pp. 53-67:

կերեն, ապա փոխադրում մոնղոլերեն և հետո միայն ներկայացնում Բաշուին³⁷: Այնուհետև իր նամակն ու Գույուկ խանի հրովարտակը պապին հասցնելու համար Բաշուն Ասցելինին և նրա ճանփորդակիցներին ուղեկից է կարգում իր մոտ ծառայության մեջ գտնվող երկու թարգմանիչների՝ Այբեգ (Aybeg) և Սարգիս (Sargis) անուններով, որոնցից երկրորդն ըստ Գ. Մինորի՝ շատ հավանական է, որ հայ լիներ³⁸, չնայած կա նաև նրա նեստորական լինելու մասին տեսակետը ևս³⁹: Ֆրանսիայի արքա Լուի Թ՝ բանագնաց Գիյոմ դը Ռուբրուքն իր ուղեգրություններում գրում է, որ մոնղոլ զորապետ Բաթու խանի (հետագայում՝ Ջոչիի Ուլուսի կամ Ոսկե Հորդայի հիմնադիր) որդի Սարթախի արքունիքում նույնպես թյուրքերեն և արաբերեն իմացող հայ վանականների է հանդիպել⁴⁰:

Մոնղոլական Մեծ տերության մայրաքաղաք Կարակորում հասած պապական մեկ այլ նվիրակ Պլանո Կարպինիի (մահ. 1252 թ.) դեսպանագնացության շնորհիվ Վատիկանի գաղտնի արխիվում (այժմ՝ Վատիկանի առաքելական արխիվ) մեզ է հասել Իննոկենտիոս պապին ողղված Գույուկ խանի նամակի պարսկերեն բնօրինակը և նույն նամակի լատիներեն թարգմանությունը՝ կատարված, սակայն, ոչ թե պարսկերեն բնագրից, այլ մոնղոլերեն (ույգուրերեն) նախօրինակից, որը չի պահպանվել⁴¹: Ինքը՝ Պլանո Կարպինին, որն իր դիվանագիտական առաքելության ընթացքը ներկայացրել է իր ուղեգրական գրքում՝ *Ystoria Mongalorum quos nos Tartaros appellamus* («Պատմություն մոնղոլների, ուրոնց մենք թաթար ենք կոչում») կամ *Liber Tartarorum* («Գիրք թաթարաց») վերնագրերով, այսպես է նկարագրում նամակի գրության հանգամանքները. «Եվ նա (իմա՝ Գույուկը) այդժամ հարցրեց մեզ, թե արդյոք

³⁷ Simon de Saint-Quentin, *Histoire des Tartares*, p. 106, 115.

³⁸ Տե՛ս D. Sinor, “Interpreters”, pp. 313-314: Հիշյալ դեսպանների՝ Իննոկենտիոս Գ-ի կողմից ընդունելության մասին հաղորդում է Մատթեոս Փարիզցի (մահ. 1259 թ.) ժամանակագիրը: Տե՛ս Matthew Paris’s *English History: From the Year 1235 to 1273*, vol. 2, trans. from the Latin by G.A. Giles (London, 1853), p. 280: Ըստ նրա՝ պապը նրանց հետ խոսել է թարգմանիչների միջոցով, ինչը նշանակում է, որ նրանք լատիներենին չեն տիրապետել: Գ. Մինորը, հետևաբար, եզրակացնում է, որ «Այբեգն ու Սարգիսը» հավանաբար հենց այն թարգմանիչներն էին, որոնք պապի նամակը պարսկերեն էին թարգմանել: Տե՛ս D. Sinor, “Interpreters”, p. 314, ինչպես նաև P. Jackson, *The Mongols and the West*, p. 89:

³⁹ P. Pelliot, “Les Mongols et la papauté”, *ROC*, t. 24 (1924), p. 327.

⁴⁰ *The Mission of Friar William of Rubruck His Journey to the Court of the Great Khan Möngke, 1253–1255*, trans. by P. Jackson, Introduction, notes and appendices by P. Jackson with D. Morgan (London: The Hakluyt Society, 1990), p. 118, 171: Նույն Ռուբրուքը Սարգիս անունով մեկ այլ հայ վանականի է հանդիպել նաև Կարակորումում՝ Մանգու խանի արքունիքում, ով նրան ասել է, թե իբր պատրաստվում է մկրտել խանին: Տե՛ս Անդ, p. 187:

⁴¹ P. Pelliot, “Les Mongols et la papauté”, *ROC*, t. 23, p. 17-23.

պապն իր շրջապատում ունի մեկին, որը հասկանում է ռուսների, սարացիների (պարսկերե՞ն) և կամ մոնղոլների լեզուն: Մենք պատասխանեցինք, որ շունենք մեկին, ով հասկանում է ռուսերեն, սարացիներեն և մոնղոլերեն, չնայած որ մեր երկրում կան սարացիներ, բայց նրանք պապից հեռու են բնակվում: Մենք ասացինք, որ ամենողջամիտը կլինի, եթե նրանք իրենց մտքերը մոնղոլերեն շարագրեն և ապա թարգմանեն մեզ համար, իսկ մենք այն ուշագրություններ մեր լեզվին կփոխագրենք»⁴²: Պլանո Կարպինին շարունակում է, որ անվտանգության նկատառումներով իրենց է հանձնվել նաև նամակի պարսկերեն տարբերակը՝ տարընկալումներից խուսափելու համար⁴³:

Հայ-մոնղոլական հարաբերություններում օգտագործված բանագնացների վերաբերյալ ուշագրավ այլ սկզբնաղբյուրային փաստեր էլ կան: Օրինակ, Հեթումի 1254 թ. ուղևորության կազմակերպիչների և շքախմբի կազմում Կիրակոս Գանձակեցին և Սմբատը նշում են հայազգի Բարսեղ անունով մի քահանայի, որ «դեսպանն էր Բաթուին»⁴⁴ և «բազում անգամ ճանապարհ արարեալ էր ընդ նույն պողոտայ»⁴⁵: Այս Բարսեղ վանականը գուցե մե՞կն էր այն հայ հոգևորականներից, որ ըստ Գիյոմ դը Ռուբրուքի՝ ծառայում էին Սարթախին: Բար Հեբրեոսի աստիճանական կազմակերպության մեջ վկայություն կա հավանաբար նույն Բարսեղ վանականի մասին, ով հայոց արքայի դեսպանն էր թաթարների մոտ⁴⁶: Իսկ Կիրակոս Գանձակեցին գրում է, որ Կարակորումից հետդարձի ճանապարհին Հեթում արքան, ինչպես որ Կարակորում ուղևորվելիս, առժամանակ կանգ է առել Արագածոտնի Վարդենիս գյուղում՝ իջևանելով Քուրդ Վաչուտյան անունով հայ իշխանի տանը՝ սպասելու Բարսեղ

⁴² *The Texts and Versions of John de Plano Carpini and William de Rubruquis*, as printed for the first time by Hakluyt in 1598, together with some shorter pieces, ed. C.R. Beazley (London: The Hakluyt Society, 1903), p. 141.

⁴³ Տե՛ս Անդ, p. 142: Տե՛ս նաև D. Morgan, “Persian as a Lingua Franca in the Mongol Empire,” in: *Literacy in the Persianate World: Writing and the Social Order*, ed. by B. Spooner and W.L. Hanaway (Philadelphia, PA: University of Pennsylvania Press, 2012), pp. 164-165.

⁴⁴ «Եւ եպիսկոպոսն տէր Ստեփանոս եկն, և Մխիթար վարդապետն, որ լինէր ի Սկևռայն, գնացեալ անդ ի կողմանցս Արևելից, և Բարսեղ քահանայ, որ դեսպանն էր Բաթուին, ընդ նմա իսկ եկեալ էր և Թորոս քահանայ կուսակրօն, և Կարապետն, որ դրան երէց էր արքային, հեզ բարուք և գիտնական, այլ և իշխանք յորովք»: Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի (Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961), էջ 366: Հեթումի ուղևորության մասին Կիրակոսի հաղորդման քննարկումը տե՛ս J.A. Boyle, “The Journey of Het’um I, King of Little Armenia, to the Court of the Great Khan Mongke”, *CAJ*, vol. 9, № 3 (1964), pp. 175-189:

⁴⁵ Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք (Վենետիկ)*, էջ 230:

⁴⁶ Տե՛ս Bar Hebraeus, *Chronography*, p. 447: Երկի արաբերեն խմբագրության մեջ Բարսեղի անունն արձանագրված չէ: Տե՛ս Ibn al-ʿIbrī, *Tārīḥ muḥtaṣar al-duwal, al-ṭabʿa al-ṭāniya, bi-taḥqīq Anṭūn Ṣāliḥānī al-Yasūʿī* (Bayrūt, Dār al-Rāʿid al-Lubnānī, 1994), ք. 499 (Բարսեղ վանականի փոխարեն՝ «նրա իշխաններից մեկը»): Այս մասին ներքևում քիչ ավելի մանրամասն կխոսենք:

քահանային, որին վերստին ուղարկել էր Բաթու խանի մոտ՝ «զի ցուցցէ նմա զգիրս և զհրաման Մանգու դանին, զի և նա ըստ նմին օրինակի՝ գրեսցէ հրամանս»⁴⁷: Ցավոք, պատմիչը, ի տարբերություն Պլանո Կարպինիի, հարկ չի համարում նշել, թե որ լեզվով էին տրվել Բաթուի և Մանգուի գրություններն ու վերջինիս հրովարտակը:

Աղբյուրներում տեղեկություններ կան նաև նահանգային մոնղոլ պաշտոնյաներին կամ առանձին զորապետերին ծառայող հայ գրագիրներին ու դպիրների մասին: Ջորջորինակ, Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ երբ ինքը մի խումբ այլ վանականների հետ գերի է ընկել մոնղոլ զորապետ Մուլար նոյինին, վերջինս ցանկացել է, որ ինքը որպես գրագիր ծառայի նրան. «Ապա առին և զիս յընկերաց իմոց զկնի իւրեանց ի պէտս դպրութեան՝ գրել թուղթ և ընթեռնուլ»⁴⁸: Մոնղոլ զորապետը հրաժարվել է Կիրակոսին ազատ արձակել նաև փրկագնի դիմաց՝ պատճառաբանելով. «Սա ի պետք է մեզ թուղթ գրելոյ և ընթերցման, թէպետ բազում գինս տայք, ո՛չ տամք զսա»⁴⁹: Կիրակոսը, ով հավանաբար պարսկերեն է իմացել, այս «ծառայություն» ընթացքում անգամ ինչ-որ շափով տիրապետել է նաև մոնղոլերենին⁵⁰: Գրիգոր Ակներցին իր «Պատմութիւն ազգին նետողաց» երկում հաղորդում է, որ Բաշու նոյինը վրաց արքա Գեորգի Դ Լաշայի որդի Դավթին բանտարկությունից ազատելու դիվանագիտական առաքելությունը վստահել էր Վահրամ Գագեցի հայազգի իշխանին⁵¹: Հակոբեիկների մաֆրիան Բար Հեբրեոսի ասորերեն ժամանակագրության մեջ 1265 թ. անցքերի շարադրանքում տեղեկություն կա Բաղդադի մոնղոլ վերատեսուչ (շիհնա՝ *šihna*) Կարա-Բուղայի «Իսահակ հայ» անունով դպիրի մասին, ով հանցակցել է Իրաքի կառավարիչ Ալա ալ-Դին Ջուվայնիի⁵² դեմ կազմակերպված դավադրությունը⁵³: Ժամանակագրության արաբերեն խմբագրության

⁴⁷ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 370:

⁴⁸ Անդ, էջ 249:

⁴⁹ Անդ, էջ 251:

⁵⁰ Անդ, էջ ԺԷ-ԺԹ (Առաջաբան) և 273-275:

⁵¹ Տես՝ Գրիգոր Ակներցի, Պատմութիւն թաթարաց (Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 1974), էջ 33-34: Բարսեղի, Կիրակոսի և Վահրամ Գագեցու մասին տե՛ս նաև Դ. Bayarsaikhan, *The Mongols and the Armenians*, p. 94, ինչպես նաև **նույնի**՝ “Kirakos Gandzakets’i, as a Mongol Prisoner”, *MQYJ*, vol. 22 (2018), pp. 155–163:

⁵² Իլխանության մեծ վեզիր Շամս ալ-Դին Ջուվայնիի եղբայրն է՝ հայտնի պատմիչը՝ «Աշխարհակալի պատմությունը» (Tārīḫ Ḥahān-Gušā) երկի հեղինակը:

⁵³ Ալա ալ-Դինը մեղադրվում էր Մամլուքյան իշխանությունների հետ կապի մեջ և իբր պատրաստվում էր մի բեղվին արաբի հետ փախչել: Բայց Աբաղայի արքունիքում տեղի ունեցած «գառավարություն» ընթացքում, խարդավանքը պարզվել է: Դաժան ծեծի ենթարկվելով՝ արաբը խոստովանել է, որ իրականում դպիր Իսահակն է իրեն համոզել սուտ վկայություն տալ Ալա ալ-Դինի դեմ: Իսահակը դատապարտվել է մահվան: Տե՛ս Bar Hebraeus, *Chronography*, p. 445:

մեջ նույն դրվագում Իսահակը Կարա-Բուղայի «տեղակալ» (Qarā-Būgā wa-nā'ibuhu Ishaq al-Armanī) է անվանված⁵⁴:

Աղբյուրներում հիշատակություններ կան նաև հենց իլխանական պահակագնդի հայազգի ծառայողների մասին: Մասնավորապես Գրիգոր Ակներցին վկայում է. «... զի զգեղեցիկ եւ զերիտասարդ որդիս մեծ ի շխանացս Հայոց եւ Վրաց ընտրեաց եւ կացոյց դռնապանս իւր, եւ անուանեաց զնոսայ քէսիկ-թոյք⁵⁵, որք են դռնապանք, սրով եւ աղեղամբ»⁵⁶: Այս քեշիքները մեծ հաջողությամբ կարող էին օգտագործվել նաև Կիլիկյան Հայաստանի հետ դիվանագիտական հաղորդակցության մեջ՝ որպես բանագնացներ⁵⁷ կամ թարգմանիչներ՝ իլխանական արքունիքում հայ դեսպանների ընդունելության ժամանակ: Հետաքրքիր է, որ այլուր նույն հեղինակը գրում է հայ իլխանների մասին, որ «որ կային ի դուռն Ապաղայ Ղանին», որոնց հետ Հեթումը ծածուկ նամակագրական կապ էր պահում և անհրաժեշտության դեպքում իլխանությանն առնչվող իր քաղաքական որոշումների շուրջ խորհուրդներ ստանում⁵⁸:

Իլխանական արքունիքի հետ սերտ կապեր ուներ նաև Երզնկայի հայոց Սարգիս արքեպիսկոպոսը (մահ. 1277 թ.), որի գործունեության մասին ժամանակի հայկական, ասորական և արաբական (մուսուլմանների կողմից անվանված է Marḥasyā) սկզբնաղբյուրներում առկա տեղեկությունների ուսումնասիրությանն առանձին հոդված ենք նվիրել⁵⁹: Այս Սարգիսը, որը Երզնկայի և գավառի հոգևոր առաջնորդությունը ստանձնել էր 1249 թ., արդեն մոտ

⁵⁴ **Ibn al-ʿIbrī**, *Tārīḥ muḥtaṣar al-duwal*, ֆ. 497-498: Այս դեպքի մասին հաղորդում է նաև բաղդադցի պատմիչ Իբն ալ-Ֆուլատին (մահ. 1323 թ.), միայն թե չի հիշատակում ո՛չ դավադրի անունը և ո՛չ էլ նրա պաշտոնը: Բայց գրում է, որ դատավարությունից (al-yārḡū) հետո, երբ Ալա ալ-Իհին դեմ մեղադրանքը չի հաստատվել, վերջինս վերադարձել է Բաղդադ, Կարա-Բուղան հեռացվել է Իրաքից, իսկ նոր շիհնա է նշանակվել Tawakāl Bahṣī անունով մեկը՝ մոնղոլ պաշտոնակցի հետ մեկտեղ: Տե՛ս **Ibn al-Fuwaṭī**, *Al-Ḥawādīṯ al-ǧāmiʿa wa-l-taǧārib al-nāfiʿa fi al-miʿa al-sābiʿa*, bi-taḥqīq Maḥdī al-Naǧm (Bayrūt, Dār al-kutub al-ʿilmiyya 2002), ֆ. 253:

⁵⁵ Բառի բացատրությունն ու քեշիքների ձևավորման ու առանձին ուլուններում դրանց դերի ու նշանակության մասին տե՛ս **F.W. Cleaves**, “The Mongolian Names”, p. 437 և հատկապես՝ **Ch. Melville**, “The Keshig in Iran: The Survival of the Royal Mongol Household,” in: *Beyond the Legacy of Genghis Khan*, ed. by L. Komaroff (Leiden-Boston: Brill, 2006), pp. 135-164:

⁵⁶ **Գրիգոր Ակներցի**, Պատմութիւն թաթարաց, էջ 47:

⁵⁷ Հայազգի իլխաններին դիվանագիտական առաքելություններ վստահելու այլ օրինակներ էլ կան աղբյուրներում: Օրինակ, ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Բաղդադի 1258 թ. գրավման ժամանակ Մուսթասիմ Բի-Ալլահ (կառ. 1242-1258 թթ.) խալիֆայի մոտ ուղարկված դեսպանագնացությունը ղեկավարել է Պոռշ հաղբակյան իլխանը: Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, էջ 380 և **D. Bayarsaikhan**, *The Mongols and the Armenians*, pp. 127-130:

⁵⁸ **Գրիգոր Ակներցի**, Պատմութիւն թաթարաց, էջ 59-60:

⁵⁹ Տե՛ս **Գ. Դանիէլեան**, «Երզնկայի Սարգիս արքեպիսկոպոսի գործունեությունն ըստ ԺԳ.-ԺԴ. դարերի մամուլքեան սկզբնաղբյուրների», Հայկազեան հայագիտական հանդէս, հտ. 38 (Պէլյուրթ, 2018), էջ 181-216:

1256 թ. հաջողացրել է իր հոգևոր իշխանությունն օրինականացնող յառիկ ստանալ մոնղոլներից: Ասորի Բար Հեբրեոսի «Եկեղեցական ժամանակագրություն» մի հաղորդման (թվագրված 1259-ով) համաձայն՝ Սարգիսն «այնտեղ էր նշանակվել թաթարների կողմից»⁶⁰: Սարգսի համբավի ու հեղինակության մասին է վկայում այն փաստը, որ վերջինս մասնակցել է 1265 թ. Կ. Պոլիս գնացած մի «խնամախոսական» առաքելության, որի նպատակը Բյուզանդիայի Միքայել Ը Պալեոլոգոս (կառ. 1259-1282 թթ.) կայսեր ապօրինի դստերից մեկին՝ Մարիային, Հուլադուին կնուսթյան բերելն էր: Պատվիրակությունը ղեկավարել է Անտիոքի հույն պատրիարք Եվթեմիոսը, որին, ըստ հայկական աղբյուրների, ուղեկցել են հիշյալ Սարգիսը և Բենեթ անունով վարդապետը: Մինչև բանագնացների վերադարձը, սակայն, Հուլադուն մահացել է, և Մարիային կնուսթյան են տվել գահի վրա նրան փոխարինած որդուն՝ Աբադային (կառ. 1265-1282 թթ.). «... և՛ պատրիարքն Անտիոքու, և այլ եպիսկոպոսք ընդ նմա. զոր եբեր տէր Սարգիս Եզնկային եպիսկոպոսն, և Բենեթ վարդապետն, և մկրտեալ զԱբադա դանն՝ ետուն զաղջիկն նմա կին»⁶¹:

Իրանի տարածքում ստեղծված մոնղոլական պետությունում՝ Իլխանությունում, վարչարարության և արքունի դիվանատան հիմնական պաշտոնական լեզուն, անշուշտ, մոնղոլերենն էր՝ վերջինիս հարմարեցված ուլգուրական գրով: Պ. Մեյվարտի բնորոշմամբ Իլխանության հիմնադիր Հուլադուն հավանաբար գիտակցել է Լատին Աշխարհի հետ շփումները դյուրացնելու համար իր դիվանատանը լատին գրագիրներ ունենալու անհրաժեշտությունը⁶²: Եվ, իրոք, Հուլադու Աբադա, Արդուն (կառ. 1284-1291 թթ.), Օլջայթու (1304-1316 թթ.) իլխանների օրոք մոնղոլական ուրդուից Եվրոպա ուղարկված գրեթե բոլոր դեսպանությունների խմբում անպայմանորեն ներառված են եղել քրիստոնյա անդամներ՝ ինչպես Արևելքի նեստորական կղերականներ, այնպես էլ եվրոպացիներ՝ ընդ որում հաճախ որպես պատվիրակությունների ղեկավարներ. անգլիացի Դեյվիդ էջբի, նեստորականներ Սողոմոն Արևատուն

⁶⁰ *St' u Gregorii Barhebraei Chronicon ecclesiasticum*, quod e codice musei Britannici descriptum conjuncta opera ediderunt, Latinitate donarunt annotationibusque theologicis, historicis, geographicis et archeologicis illustrarunt J.B. Abbeloos et T.J. Lamy, tomus II (Parisiis-Lovanii, 1874), pp. 732-734, *ինչպես նաև Bar Hebraeus, Ecclesiastical Chronicle: An English translation*, tr. by D. Wilmshurst (Piscataway, NJ: Gorgias Press, 2016), p. 262:

⁶¹ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, էջ 398-399: Մարիան բարձր դիրքի է հասել Աբադայի արքունիքում՝ ստանալով Դեսպինա-Խաթուն («դեսպինա»՝ Δέσποινα, բառը հունարեն նշանակում է «տիրուհի», «խաթուն»-ը՝ մոնղոլերեն «տիկին») անունը: Դեսպանագնացության վերաբերյալ սկզբնաղբյուրային տեղեկությունների քննարկումը տես մեր վերոհիշյալ հոդվածում: **Տե՛ս Գ. Դանիէլեան**, «Երզնկայի Սարգիս արքեպիսկոպոսի գործունէութիւնն...», էջ 191-192:

⁶² P. Meyvaert, “An unknown letter”, p. 250, n 29.

(«քրիստոնյա», «նեստորական»), Ռաբբան Սաումա⁶³, Իսա Քելեմեչի («Թարգման»), Սաաբեդդին Արկաուն⁶⁴, ջենովացիներ Տոմմազո Բանկրինուս, Բուսկարելլո Գիզոլֆի, Իզոլ Պիզացի, Տոմմազո Ուզի Սիենացի և այլք⁶⁵ :

⁶³ Մեզ է հասել Ռաբբան Սաումայի և ասորի նեստորական եկեղեցու պատրիարք Յահբալահ Գ-ի (1281-1317 թթ.) կյանքն ու գործունեությունը լուսաբանող վարքագրական երկ՝ գրված անանուն ժամանակակիցի կողմից, որը հավանաբար ձեռքի տակ ունեցել և օգտագործել է նաև Ռաբբան Սաումայի նոթագրությունները: Ասորերեն բնագիրը հրատարակել է Փ. Բեշանը, ֆրանսերեն է թարգմանել Ժ.-Բ. Շաբոն, անգլերեն՝ Ջ. Մոնթգոմերին (մասնակի) և է.Ա. Ուոլլիս Բաշը: *Տե՛ս Histoire de Mar Jab-Alaha, patriarche, et de Raban Sauma*, ed. par P. Bedjan (Paris-Leipzig, 1895); **J.-B. Chabot**, *Histoire de Mar Jabalaha III et du moine Rabban Çauma, ambassadeur du roi Argoun en Occident (1287)* (Paris, 1895); *The History of Yaballaha III Nestorian Patriarch and of His Vicar Bar Sauma*, trans. from the Syriac and annot. by **J.A. Montgomery** (New York: Columbia University Press, 1927); *The Monks of Kublai Khan, Emperor of China or The History of the Life and Travels of Rabban Sawma, Envoy and Plenipotentiary of the Mongol Khans to the Kings of Europe, and Markos Who as Mar Yahballaha III became Patriarch of the Nestorian Church in Asia*, tr. from the Syriac by E.A. Wallis Budge (London, 1928) (հետալսու՝ **E.A. Wallis Budge**, *Rabban Sauma*): Սույն աշխատանքը գրելիս օգտագործել ենք Բաշի անգլերեն և Ն. Պիզուլևսկայայի ռուսերեն թարգմանությունները, իսկ Պ. Բորբոնեի քննական հրատարակությունը՝ անգլերեն թարգմանությամբ, ձեռքի տակ չենք ունեցել: Տե՛ս **Н.В. Пигулевская**, «История мар Ябалахи III и раббан Саумы», *Сирийская средневековая историография. Исследования и переводы* (С. Петербург, 2000), стр. 677-755; *History of Mar Yahballaha and Rabban Sauma*, ed., trans., and annot. by **P.G. Borbone**, tr. from the Italian by L.E. Parodi (Hamburg: Verlag Tredition, 2021): *Երկի և նրա պատմագրական արժեքի մասին տե՛ս Н.В. Пигулевская*, «История Мар Ябалахи и Саумы», *Палестинский сборник*, выпуск 2, 64-65 (Москва-Ленинград, 1956), стр. 97-108 և *հատկապես՝ P.G. Borbone*, «The History of Mar Yahballaha and Rabban Sawma as a Source for Ilkhanid History», in: *New Approaches to Ilkhanid History*, ed. by T. May, B. Dashdondog, and Chr.P. Atwood (Leiden: Brill, 2020), pp. 349-372: *Ռաբբան Սաումայի դեսպանագնացության ընթացքի մասին տե՛ս նաև M. Rossabi*, *Voyager from Xanadu: Rabban Sauma and The First Journey from China to the West* (Tokyo-New York-London: Kodansha International, 1992).

⁶⁴ Կարծիք է հայտնվել, որ Ռաբբան Սաումային 1287 թ. Եվրոպա ուղեկցած և հետագայում նաև 1290 և 1302 թվականների մոնղոլական դեսպանությունների կազմում ընդգրկված այս «Սաաբեդդին»-ը կարող է նույնացվել ԺԳ դարի հայ մեծահարուստ, խոշոր կալվածատեր Սահմադդինին (կամ Սահմատին, ծն. և մահ. թթ. անհայտ): Տե՛ս **Г.Г. Микаелян**, *История Куликийского Армянского государства* (Ереван, Изд. А.Н. АССР, 1952), стр. 422, сн. 2; **D. Bayersaikh**, *The Mongols and the Armenians*, p. 183, n. 249: Վերջինս իր կառուցած և նորոգած շինությունների վրա թողած արձանագրություններում իրեն կոչում է «Սէնոպ Սահմատին Ավետեց որդի»: Ըստ Անիի մի արձանագրության՝ սույն Սահմադդինը, ոմն Քերիմէդդինը (Քարիմատին, հավանաբար մեկ այլ մեծահարուստ Ումեկի որդին է) և Իլխանության վեզիր (սահիբ դիվան) Շամս ալ-Գին Ջուվայնին 1263 թ. կապալով հանձնառել են Անիի հարկահանությունը: Իսկ ըստ Երևանի Սբ. Աստվածածին եկեղեցու պատին նրա թողած արձանագրության՝ 1264 թ. գնել է Երևանը՝ «հողով և ջրով»: Տե՛ս **Կ. Կոստանեանց**, Վիմական տարեգիր, ցուցակ-ժողովածոյ արձանագրութեանց Հայոց (*Ս.-Պետերբուրգ*, 1913), էջ 106, 126, 130; **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ (Երևան, Պետական համալսարանի հրատ., 1948), էջ 376; **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության (XI դարից մինչև XV արի սկիզբը), հտ. Գ (Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1952), էջ 265-267; **Ք. Հակոբյան**, Անիի պատմություն, հտ. Բ (Երևան, 1988), էջ 320; **Cl. Mutafyan**, *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)* (Paris: Les Belles Lettres, 2012), p. 472-474 (*Սահմադդինի, Քերիմեդդինի և վերջինիս հայր Ումեկի մասին*): Սա

Հետաքրքիր մի փաստ ևս, մեզ է հասել 1276 թ. Իտալիայի Վիտերբո քաղաքից Անգլիայի արքա էդուարդ Ա-ին (կառ. 1272-1307 թթ.) Հովհաննես և Հակոբ (Johan, Jaques) Վասսալ եղբայրների հղած մի նամակ, որով տեղեկացնում են, որ նպատակ ունեն այցելելու նաև վերջինիս՝ հանձնելու Աբաղա խանի նամակը, ինչպես նաև մեկ այլ նամակ «Հայաստանի թագավորից» (*roy de Hermenie*)՝ այսինքն Լևոն Բ արքայից⁶⁶: Բացառված չէ, որ եղբայրների գլխավորած պատվիրակության կազմում լինեն նաև հայ պատվիրակ, որին հանձնարարված լինեք Լևոն արքայի նամակն անձամբ Անգլիայի արքային հանձնել: Ֆրանսիացի պատմիչ Գիյոմ դը Նանժիի (մահ. 1300 թ. հետո) ժամանակագրության մեջ վկայություն կա գուցե հենց հիշյալ դեսպանների՝ Ֆրանսիայի արքա Ֆիլիպ Գ Խիզախի (կառ. 1270-1285 թթ.) արքունիքում ընդունելության մասին: Վերջինս նրանց վրացի (*sed de secta Georgianorum christiani*) է անվանում, բայց և կասկած հայտնում, թե գուցե ոչ թե դեսպաններ, այլ լրտեսներ էին⁶⁷՝ շտոսելով դեսպանության որևէ հայազգի անդամի մասին: «Ֆրանսիական մեծ ժամանակագրություններում» (*Grandes Chroniques de France*) նույնպես հաղորդում կա Ֆիլիպ արքային 1277 թ. ներկայացած դեսպանների մասին, որոնք ուղարկված էին ոմն «Տարսի թագավորից» (*roy de Tarse*): Աղբյուրը հաղորդում է, որ բանագնացները ոչ թաթար էին և ոչ էլ վրացի և Սեն Դենի (Saint Denis) էին եկել իրենց քրիստոնյա արքայի կարգադրությամբ, ով ենթակա էր թաթարներին: Նրանք աջակցություն էին խոստանում Ֆիլիպին,

նշանակում է, որ 1263-1264 թթ. Սահմադինն արդեն ազդեցիկ ու հարուստ պարոն էր և հազիվ թե դրանից 40 տարի անց դեռ մոնղոլական դիվանագիտական առաքելությունների մասնակից լինեք: Հետևաբար, այս նույնացումն այնքան էլ հիմնավոր չենք համարում:

⁶⁵ C. Desimoni, “I conti dell’ambasciata al Chan di Persia nel MCCXCII”, *Atti della Società Ligure di Storia Patria*, t. XIII (1877), pp. 537-698; L. Petech, “Les marchands italiens dans l’empire mongol”, *JA*, t. 201 (1962), pp. 549-574; J. Richard, “Isol le Pisan: Un aventurier franc gouverneur d’une province mongole?”, *CAJ*, vol. 14, №1/3 (1970), pp. 186-194; D. Sinor, “Interpreters”, pp. 315-316; J. Paviot, “Buscarello de Ghisolfi, marchand génois intermédiaire entre la Perse mongole et la Chrétienté latine (fin du XIII^e - début du XIV^e siècles)”, *StG*, vol. 11 (1991), p. 107-117, *ինչպես նաև նույնի*՝ “England and the Mongols (c. 1260-1330)”, *JRAS*, vol. 10, № 3 (2000), pp. 310-311; P. Jackson, *The Mongols and the West*, pp. 173-175; H. Kim, “Īsa Kelemechi: A Translator Turned Envoy between Asia and Europe,” in *Along the Silk Roads in Mongol Eurasia Generals, Merchants, Intellectuals*, ed. by M. Biran, J. Brack, and Fr. Fiaschetti (Berkeley: University of California Press, 2020), pp. 255-269.

⁶⁶ Ch.-V. Langlois, Ch. Kohler, “Lettres inédites concernant les croisades (1275-1307)”, *Bibliothèque de l’école des chartes* (1891), tome 52, p. 56-57.

⁶⁷ *Stéu Chronique latine de Guillaume de Nangis, de 1113 à 1300, avec les continuations de cette chronique, de 1300 à 1368*, ed. H. Géraud, tome 1 (Paris: 1843), p. 247-248: Այս մասին տե՛ս նաև J.-P. Abel-Rémusat, “Mémoires”, *MIF*, t. 7, pp. 346-347; L. Lockhart, “The Relations between Edward I and Edward II of England and the Mongol Il-Khāns of Persia”, *Iran*, vol. 6 (1968), pp. 24-25; J. Paviot, “England and the Mongols”, p. 311; P. Jackson, *The Mongols and the West*, p. 174:

եթե վերջինիս ցանկանա «սարացենների» դեմ պատերազմի դուրս գալ: Դեսպաններն այնուհետև ճանապարհ են ընկել Անգլիայի թագավորի մոտ՝ նույնը նաև վերջինիս հաղորդելու⁶⁸: Կարելի է մտածել, թե խոսքը Տարսոնի և հետևաբար Կիլիկիո հայոց թագավորի մասին է: Այնուամենայնիվ, Գիյոմ դը Նանտի մեկնաբանությունը վկայում է, որ սույն դեսպանագնացության նպատակներն ու հենց դեսպանների ինքնությունը մինչև վերջ չեն պարզվել՝ տեղիք տալով զանազան գրույցների և ասեկոսենների: Խորամուտ չլինելով մանրամասնությունների մեջ՝ նշենք, որ վերոհիշյալ հաղորդումը հավանաբար նաև «Տարսի արքայի» մասին Եվրոպայում ԺԳ-ԺԴ դարերում տարածված առասպել-վեպի առաջին արձագանքներից է, որը կարծես անտեսվել է առասպելի տասնյակ տարբերակներն ուսումնասիրած հետազոտողների կողմից⁶⁹:

Աղբյուրներից հայտնի է նաև, որ իլխանական դիվանատանը Հուլաղուից սկսած աշխատել են ֆրանկ քարտուղարներ և գրագիրներ: Նրանցից ամենահայտնին Ռիկարդուս անունով գրագիրն ու թարգմանիչն էր, որը երկար տարիներ ղեկավարել է լատին նոտարների աշխատանքը⁷⁰: Որպեսզի պարզ

⁶⁸ *Les grandes chroniques de France, publiées pour la Société de l'histoire de France, t. 8: Philippe III le Hardi, Philippe IV le Bel, Louis X Hutin, Philippe V le Long*, ed. J. Viard (Paris: Honoré Champion, 1934), p. 74: Հայտնի է նաև, որ 1278 թ. մայիսի վերջերին Հայաստանի (Երմենի) թագավորի կողմից էդվարդ Ա-ի մոտ ուղարկված ինչ-որ դեսպանների համար «անվտանգության երաշխավորագրեր» են գրվել, և վերջիններս վերադարձել են իրենց երկիրը: *St' u Calendar of the patent rolls preserved in the Public record office / prepared under the superintendence of the deputy keeper of the records: Edward I (A.D.1272-1281)*, prepared under the supervision of H.C. Maxwell Lyte, text by J.G. Black (London, 1901), p. 265, *ինչպես նաև S. Lloyd, English Society and the Crusade, 1216-1307* (Oxford: Clarendon Press, 1988), p. 254: Հմմտ. նաև **Cl. Mutafyan**, *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)* (Paris: Les Belles Lettres, 2012), p. 163:

⁶⁹ Անգլիական, գերմանական և ֆրանսիական մի շարք անալոգներով մեզ հասած այս առասպելի առանցքային թեման մի դեպքում «Թաթարների արքայի» (կամ վերջինիս եղբոր) և մեկ այլ դեպքում՝ «Դամասկոսի սուլթանի» քրիստոնեություն ընդունելն է իրենց քրիստոնյա կնոջ շնորհիվ, որը, ըստ որոշ պատումների, «Հայաստանի արքայի» դուստրն էր: Առասպելը բացատրում է այն կարևոր միջնորդական դերը, որ ուներ Կիլիկյան Հայաստանը մուսուլմանական Արևելքի և Քրիստոնյա Արևմուտքի քաղաքակրթական երկխոսության մեջ: **St' u F. Krauze**, “Kleine Publicationen aus der Auchinleck-hs, XI: The King of Tars”, *Englische Studien*, XI Band (1888), S. 1–62; **L.H. Hornstein**, “A Study of Historical and Folklore Sources of the ‘King of Tars’”, Ph.D. diss. (New York University, 1939); **նույնի** “The Historical Background of The King of Tars”, *Speculum*, vol. 16, Issue 4 (1941), pp. 404–414; **նույնի** “New Analogues to the ‘King of Tars’”, *MLR*, vol. 36, № 4 (1941), pp. 433–442; **R.J. Geist**, “On the Genesis of ‘The King of Tars’”, *JEGP*, vol. 42, № 2 (1943), pp. 260–268; **S. Schein**, “Who was the King of Tars?”, in: *Medieval Studies in Honour of Avrom Saltmann* (Ramat-Gan: Bar-Ilan University Press, 1995), pp. 173–187; **T.M. Boyadjian**, “An Armenian Princess, a Mongol, and a Conversion Tale: The Middle English Didactic Romance, *King of Tars*, and its Adaptations,” in: *Cultural, Linguistic and Ethnological Interrelations In and Around Armenia*, ed. by J. Dum-Tragut, U. Bläsing (Newcastle upon Tyne: Cambridge Scholars Publishing, 2011), pp. 51–57:

⁷⁰ **P. Jackson**, *The Mongols and the West*, pp. 173–174.

լինի, թե ինչ կարևոր դեր է ունեցել լատին նոտարատունն արքունի դիվանատան համար, բավական է մի փաստ մատնանշել Հռոմի պապ Կղեմես Դ-ի և իլխան Աբաղայի նամակագրությունից: Մասնավորապես, 1267 թ. պապն Աբաղային հղած նամակում ասուսանքով գրում է, որ ոչ ոք չի կարողացել իր համար վերծանել վերջինիս գրություն բովանդակությունը, քանի որ այն, ի տարբերություն նախորդ նամակի, գրված է եղել մոնղոլերեն: 1268 թ. Աբաղան ևս մեկ անգամ է գրում պապին (այս անգամ մոնղոլերեն և լատիներեն տարբերակներով)՝ բացատրելով, որ Թավրիզից իր լատին թարգմանչի (իմա՝ Ռիկարդուսի) ժամանակավոր բացակայությունն էր եղել նախորդ նամակը միայն մոնղոլերեն գրելու պատճառը⁷¹:

Այսպիսով, շնայած վերևում սկզբնաղբյուրային որոշ փաստեր բերեցինք մոնղոլական արքունիքի հայազգի ծառայողների՝ քեշիքների, թարգմանիչների և բանագնացների մասին, բնավ չենք կարծում, որ հայոց արքաների և Իրանի մոնղոլ տիրակալների միջև դիվանագիտական նամակագրությունը կարող էր վարվել հայերենով և կամ մոնղոլերենով: Շատ ավելի հավանական է թվում այն ենթադրությունը, որ հայոց արքունիքի և մոնղոլական Իլխանության նամակագրությունը տարվում էր որևէ երրորդ՝ միջանկյալ լեզվով (*lingua franca*), որի դերում կարող էր հանդես գալ լատիներենը, որին տիրապետողների պակաս հայոց դիվանատանը վստահաբար չկար: Անշուշտ, հնարավոր է, և Հինդուշահ Նախչիվանիի քարտուղարության ձեռնարկում մեզ հասած և վերը քննարկված դիմումաձևն էլ վկայում է, որ նամակների նախօրինակները կարող էին գրվել պարսկերենով և հետո միայն լատին նոտարների կողմից թարգմանվել լատիներեն: Նամակների նախօրինակները, ինչպես եվրոպացի գահակալների հետ գրագրության մեջ, որոշ դեպքերում կարող էին ուղեկցել լատիներեն բնօրինակներին:

Բ 3. Դիվանագիտական ընթաները հայ-մոնղոլական հարաբերություններում.

«Յայնժամ Մուղալ՝ ազգն շարժեալ
Ջամենեսեան՝ ի սուր մաշեալ,
Մեր արքայիս՝ պարգև յղեալ,

⁷¹ Այս նամակի հրատարակությունը վերևում մի անգամ արդեն հղել ենք: Տե՛ս Eu. Tisserant, “Une lettre”, pp. 547-556:

Եւ մեծապէս՝ շնորհակալեալ»⁷²:

1246 թ. Սմբատ Սպարապետի և 1254 թ. Հեթում արքայի Կարակորում կատարած ուղևորություններով հայ-մոնղոլական հարաբերությունները ձեռք բերեցին, ինչպես արդի պատմագրության մեջ են հաճախ բնորոշում, «դաշնակցային» բնույթ: Այնուամենայնիվ, մոնղոլական աշխարհակալական գաղափարաբանության համաձայն՝ Թեմուչինը՝ ապագա Չինգիզ խանը, ու նրա հետնորդներն իրենց իշխանությունը շնորհ էին ստացել երկնքի աստվածությունից՝ Թենգրիից⁷³: Այդ առանձնաշնորհումով նրանց լեգիտիմ լիազորություն էր տրվում իշխելու և կառավարելու մյուս բոլոր երկրներն ու ժողովուրդներին կամ, ինչպես Կիրակոս Գանձակեցին է ձևակերպել, «...գարքայն իւրեանց ազգակից աստուծոյ, զերկինս առեալ աստուծոյ իւր բաժին և զերկիրս տուեալ խաղանին»⁷⁴: Այս գաղափարաբանության համաձայն՝ առանձնացվում էր մոնղոլների հետ հարաբերությունների երկու կարգավիճակ՝ «հնազանդության» և «պատերազմի»: Առաջինը բնորոշվում էր մոնղոլներն ըլ (թյուրք.՝ իլ) բառով և նշանակում էր «հպատակություն» կամ «խաղաղություն», իսկ երկրորդը՝ Եսլգա բառով, որ նշանակում էր «ըմբոստություն», «անհնազանդություն»⁷⁵: Հետևապես հայ-մոնղոլական քաղաքական առնչությունները միանշանակորեն բնութագրելի են «ստորակա-գերակա» փոխհարաբերությամբ՝ լավագույն դեպքում «գործակցային», «բարեկամական» մակդիրներով, բայց հազիվ թե կողմերի հավասարազորություն կամ իրավահավասարություն ենթադրող «դաշնակցային» մակդիրով:

Միջնադարյան սկզբնաղբյուրների տեղեկություններից երևում է, որ մոնղոլ խաները դիվանագիտական ընձաններ են փոխանակել սոսկ այն հզորագույն տիրակալների հետ, որոնց իրենց գրեթե հավասար կամ համապատասխան են համարել: Մոնղոլների տիրապետությանն իրենց հնազանդությունը

⁷² Վահրամայ Բաբունույ Ոստանաուր պատմութիւն Ռուբենեանց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ Վարդապետ Շահնազարեանց (Փարիզ, 1859), էջ 235:

⁷³ I. de Rachewiltz, “Some Remarks on the Ideological foundations of Chingis Khan’s Empire,” in: PFEH, № 7 (1973), pp. 21-36.

⁷⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 272: Մոնղոլական տիեզերակալության հայկական ընկալումների մասին ավելի մանրամասն տես՝ Լ. Տ. Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հտ. Բ, Պատմա-քաղաքագիտական հետազոտություն (Հայկական մատենաշար Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան) (Երևան, 2007), էջ 18-21:

⁷⁵ Տես՝ P. Pelliot, “Les Mongols et la papauté”, ROC, t. 23, p. 26, ինչպես նաև t. 24, p. 322-323; A. Mostaert, F.W. Cleaves, “Trois documents”, pp. 492-493: Մոնղոլական գաղափարաբանության քննարկումը մամլուք-մոնղոլական հակամարտության համատեքստում տես՝ R. Amitai-Preiss, “Mongol Imperial Ideology and the Ilkhanid War against the Mamluks,” in: *The Mongol Empire and Its Legacy*, ed. by R. Amitai-Preiss, D.O. Morgan (Leiden-Boston- Köln: Brill, 2000), pp. 58-72:

հայտնած միապետները իրենք էին նրանց գահակալներին շքեղ նվերներով պարբերաբար «հաճոյանալու» պարտավորութիւն ստանձնում, որը սովորաբար ենթակայութեան խորհրդանիշ՝ հարկատեսակ էր ընկալվում և կարող էր ամենևին էլ պատասխան նվեր չենթադրել⁷⁶: Նույն կերպ և հայոց գահին նստած յուրաքանչյուր միապետ գահընկալումից անմիջապէս հետո շտապում էր մեծամեծ ընծաներով ներկայանալ Իլխանութեան գահակալին՝ նրանից «իշխանութեան տվչութիւն» խնդրելու: Միայն մոնղոլական իշխանութիւններից «յաուլիկ» («յաուլախ») ստանալուց հետո էր հայոց գահակալը կառավարման լեգիտիմութիւն ստանում:

Հայ-մոնղոլական հարաբերութիւնների առանձնահատկութիւնը լավագոյնս է բնութագրել Գրիգոր Ակներցիին՝ «դաշինք սիրոյ եւ հնազանդութեան»⁷⁷: Որպէս մոնղոլների վասալ՝ հայոց թագավորութիւնը տարեկան հարկ վճարելուց բացի⁷⁸, այլ պարտավորութիւններ էլ ուներ մոնղոլների՝ մասնավորապէս Իլխանութեան նկատմամբ՝ պարբերաբար կազմակերպվող արշավանքներին օժանդակ զորքերի տրամադրում և պարենային ապահովութիւն, ինչպէս նաև թանկարժեք ընծաների մատուցում⁷⁹:

Հայոց արքաների և մոնղոլ խաների միջև դիվանագիտական նվերների և ընծաների փոխանակման վերաբերյալ տեղեկութիւնների հիմնական աղբյուրը հայ պատմագրութեան հուշարձաններն են: Ընդ որում, մոնղոլ խաներին մատուցված դիվանագիտական ընծաների մասին առաջին հիշատակութիւնները վերաբերում են հայ-մոնղոլական մերձեցման առաջին իսկ փորձերին՝ Սմբատ Սպարապետի և Հեթում թագավորի՝ համապատասխանաբար Գույուկ

⁷⁶ Հմմտ. Q. Yihao, “Gift-Exchange in Diplomatic Practices during the Early Mongol Period”, *ES*, vol. 17 (2019), pp. 202-227:

⁷⁷ Գրիգոր Ակներցի, Պատմութիւն թաթարաց, էջ 31:

⁷⁸ Հայոց թագավորութեան հարկային բեռը շատ ծանր չէր, մյուս մոնղոլահայտակ երկրների հետ համեմատութեամբ՝ նույնիսկ կարելի է ասել խորհրդանշական: Ըստ մոնղոլական Իլխանութեան պետական գործիչ և պատմիչ Համդալլահ Գազվինիի 1336 թ. գրված *Nuzhat al-qulūb* («Սրտերի գլխարկութիւն») երկի, որում աշխարհագրական տեղեկութիւններին զուգահեռ նաև հպատակ երկրների՝ իր պետութեան գանձարան վճարած հարկաչափերի մասին տվյալներ է ներառել ֆինանսական հարկամատչաններից, Կիլիկյան Հայաստանի վճարած հարկաչափը 30 հզ. դինար (3 թուման) է եղել: Տե՛ս **Hamd Allāh Qazwīnī**, *Nuzhat al-qulūb*, §. 100, ինչպէս նաև *The geographical part of the Nuzhat-al-Qulūb composed by Hamd-allah Mustawfi of Qazwin in 740 (1340)*, tr. by G. Le Strange (Leiden-London: E.J. Brill, 1919), p. 100: Որպէսզի պարզ լինի այս հարկաչափի չնչնութիւնը՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ, օրինակ, Ռումի (*molk Rūm*) վճարած հարկը նույն երկում 3.300.000 է նշված (**Անդ**, p. 95), Վրաց թագավորութեանը (*belād Abhāz wa-Gurjastān*)՝ 1.202.000 (**Անդ**, p. 94), բուն Հայաստանինը (*Armīnya al-akbar*)՝ 390.000 դինար, թէև նշվում է, որ նախկինում Հայաստանից ստացվող հարկաշահույթը 2.000.000 է եղել (**Անդ**, p. 94):

⁷⁹ Լ. Տ. Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը, հտ. Բ*, էջ 305-315:

(1246-1248 թթ.) և Մոգկե (1251-1259 թթ.) խաների արքունիքներ կատարած «գիվանագիտական գործուղումներին», Բաշու նույնի հետ հաստատած դրացիությունը: «Նա յառաջագոյն առաքեաց զեղբայրն իւր զՍմբատ, որ զօրավարն էր նորին, առ Ղանն Գիուգ ընծայիւք և պատարագօք, և դարձավ ի նմանէ պատուով և հրովարտակօք ընդունելութեան»⁸⁰, - գրում է Կիրակոսն արդեն Սմբատի գիվանագիտական առաքելության մասին: Գրեթե նույնը Գրիգոր Ակներցին է գրում Հեթումի դեսպանագնացության մասին. «... ապա վասն սիրոյ քրիստոնէից, եւս առաւել վասն իւր սեփական երկրիս, գնաց բազում գանձիւք առ Մանկու Ղանն, եւ հոգաց շթողով յերկրիս իւր զայսպիսի բարկութիւնս»⁸¹: Մանգու խանին Հեթումի տարած ընծաների փառահեղության մասին է վկայում թեկուզ այն հանգամանքը, որ վերջինս Սից ճանապարհվելիս անվտանգության նկատառումներով նվերներն իր հետ չի վերցրել: Ինչպես արդեն վերևում գրել ենք, ըստ Սմբատի և Կիրակոս Գանձակեցու՝ նա հասել է Արագածոտնի Վարդենիս գյուղ և իջևանել Քուրդ Վաշուտյան անունով հայ իշխանի տանը, մինչև որ հայրը՝ Կոստանդին Գունդատաբլը, պատրաստել է ծանրաբեռն նվերները և ուղարկել նրա հետևից⁸²: Նույն Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ Հեթումը «բազում ընծայիւք եւ զօրօք սպասաւորութիւն կատարէր Բաշու-նուինին եւ զօրացն՝ որ ընդ նմա, մինչեւ թուղթ գոհութեան եւ գովութեան գրեալ վասն նորա առ Հուլաւուն»⁸³: Հետադուր հայոց արքաները ծառայելու պարտավորություն ստանձնեցին Հուլաղուի և Իրանի տարածքում նրա հիմնադրած պետության մոնղոլ տիրակալների նկատմամբ՝ իրենց անվերապահ հավատարմությունն ի շարս այլնի ժամանակ առ ժամանակ ապացուցելով նաև մատուցած թանկարժեք նվերներով: «Իսկ լուեալ զայս բարեպաշտ թագաւորն Հայոց Հեթում, թէ Հուլաւունն զան նստաւ, եւ այնպէս բարէսէր է եւ քրիստոնասէր, ապա եւ ինքն Հայոց թագաւորն գնաց յարեւելք բազում ընծայիւք, եւ ետես զՀուլաւու Ղանն»⁸⁴, - հաստատում է Գրիգոր Ակներցին:

Մոնղոլական իշխանությունների պատասխան նվերները սովորաբար նույնքան շքեղ չէին, որքան հայոց արքաների մատուցածները: Դրանք, կարելի է ասել՝ «խորհրդանշական» կամ «արարողակարգային» էին: Դրանք սովորաբար ներառում էին Կիլիկիո միապետների իշխանությունն ընդունող

⁸⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 364 և հմմտ. **ՀԶԷ, ԺԳ դար**, կազմեց Ա.Ս. Մաթևոսյան (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984), էջ 238:

⁸¹ Գրիգոր Ակներցի, Պատմութիւն թաթարաց, էջ 37:

⁸² Սմբատ Սպարապետ, Տարեգիրք (Վենետիկ), էջ 230 և առավել մանրամասն՝ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 364-365:

⁸³ Անդ, էջ 376:

⁸⁴ Գրիգոր Ակներցի, Պատմութիւն թաթարաց, էջ 46:

փաստաթուղթ՝ «յառլիկ» (կամ՝ «յառլախ», ինչպես որ հայկական աղբյուրներում են վկայված) և «փայզա»⁸⁵ (տե՛ս Պատկեր 5), երբեմն արքայական հանդերձներ կամ էլ, ինչպես մոնղոլական ավանդույթն էր պահանջում, մոնղոլ կին, որոնք երեքն էլ հպատակության, վասալության խորհրդանիշ էին: Սմբատ Սպարապետը, օրինակ, Կարակորումից վերադարձել է մի մոնղոլ կին «նվեր» ստանալով: Գրիգոր Ակներցին այս պատիվների ստացումն այսպես է բնորոշում. «Եւ տուեալ մեծ իառլախ, եւ փայիզայս ոսկիս, եւ տաթար խաթուն պաւխտախաւոր» (իմա՝ «գդակավոր»), զի այն էր նոցայ մեծ սէրն, որ զով սիրէին և մեծարէին տային կին ի պատուաւոր կանանցն իւրեանց»⁸⁶: Վերջինից Գունդստաբլն անգամ որդի է ունեցել՝ Վասիլ Թաթար անունով, որը Լևոն արքայազնի հետ 1265 թ. գերեվարվել է Եգիպտոս և վերջինիս հետ էլ ազատվել գերությունից⁸⁷: Կիլիկյան Հայաստանի հետ առնչություն չունի, բայց այս

⁸⁵ Ստեփանոս Օրբելեանի բացատրությունն ամենաբնորոշիչն է. «փայիզայ ոսկի, որ էր տախտակ ի չափ թղթոյ միոյ եւ կիսոյ գրեալ ի վերայ զանուն Աստուծոյ եւ Ղանին եւ այլ սակաւ բանք»: Տե՛ս Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ **Ստեփաննոսի Օրբելեան** արք եպիսկոպոսի Սիւնեաց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կ. Վարդապետ Շահնազարեանց, հտ. Բ (Փարիզ, ի գործատան Կ.Վ. Շահնազարեանց, 1859), էջ 231: Սա, ըստ էության, խանի անունը կրող մետաղյա տախտակ էր՝ յուրատեսակ «անցաթուղթ» կամ «պատվաթուղթ», որը երաշխավորում էր այն ստացողի (այդ թվում դեսպանների և բանազնացների) անվտանգ անցումը մոնղոլահպատակ տարածքներով կամ խանի կողմից շնորհված որևէ արտոնություն: Ըստ Ռաշիդ ալ-Դինի՝ փայզաների և յառլիկների տրման, դրանց փոխանակման և վերադարձի, դրանց վրա «տամդա»-ների (կնիքների) դաջման ընթացակարգը կանոնակարգվել է Ղազան խանի օրոք և նրա հրամանով: Այս մասին տե՛ս **Rašīd al-Dīn**, *Ġāmiʿ al-Tawārīḫ*, ց. 1, ք. 1061-1065 և **Рашид-ад-Дин**, *Сборник летописей*, том III, стр. 277-278:

⁸⁶ **Գրիգոր Ակներցի**, Պատմութիւն թաթարաց, էջ 32:

⁸⁷ **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք (Վենետիկ), էջ 244, 247-248: Հատկանշական է, որ Կարակորում մեկնելու ժամանակ Սմբատն արդեն կին ուներ՝ Թեոֆանո անունով, որի մասին հայտնում է 1268 թ. գրված Ճաշոցի չափածո հիշատակարանում.

«Զի չիշատակ ինձ եղիցի,
Տրուպ եւ անգեղջ մեղաւորի
Սմբատա Գունդստապլի,
Հաւր իմոյ Կոստանդնի,
Եւ մաւր իմոյ տամ Ավիծի,
Եղբարց եւ քերց, նաեւ ազգի,
Զնոյն եւ որդոց իմում գկնի՝
Հեթմոյ, Աւշնի, եւ Կոստանդնի,
Եւ մաւր սոցին Թեֆանաւի»:

Տե՛ս **ՀԶԷ, ԺԳ դար**, էջ 362-363: Հետաքրքիր է, որ միջնադարյան հայ իրավունքն ու եկեղեցին մերժում և դատապարտում էին երկկնության և բազմակնության երևույթը: Այնուամենայնիվ, ինչպես երևում է, ազնվական դասի ներկայացուցիչներն ու արքունի մեծամեծերն ինչ-որ կերպ խուսանավել են այդ արգելքից՝ հիշյալ արարքի՝ քաղաքական նկատառումներով պայմանավորված լինելու մասին պատրվականներ ներկայացնելով: Գույուկ խանից ստացած մոնղոլուհին, հետևաբար, ոչ թե կին է համարվել, այլ հարճ, իսկ վերջինից ունեցած որդին՝ արտամուսնական կապից ծնված զավակ: Նա հավանաբար հենց այս պատճառով էլ չի հիշատակվել Սմբատ Սպարապետի կողմից վերոբերյալ հիշատակարանում, չնայած

երևույթի ևս մի օրինակ է նաև այն, որ Վրաց թագավորության աթաբեկ Ավագ Զաքարյանը, 1240-1241 թթ. մեծ խան Ուզեդեյին (կառ. 1229-1241 թթ.) այցելելով, նույնպես Կարակորումից վերադարձել է՝ իր հետ «կին ի թաթար ազգէն» բերելով⁸⁸:

Նվիրաբերման տեսակ էր նաև մոնղոլական իշխանությունների հետ կիսավոլ ռազմավարը: Նման մի տեղեկություն տալիս է Բար Հեբրեոսն իր «Եկեղեցական ժամանակագրության» մեջ, որ վերաբերում է Հուլիանոսի արքունիք իր իսկ կատարած ուղևորությանը և նրա կողմից ընդունելությանը: Ասորի մաֆրիանը մոնղոլ խանին ներկայացել է Հյուսիսային Ասորիքի բնակավայրերի դեմ հայոց արքա Հեթումի ձեռնարկած արշավանքի (1264 թ.) հաջողության մասին ավետիսով. «Ուրդու հասնելու հենց նույն օրը նա⁸⁹ ընդունվեց արքայից արքա Հուլիանոսի կողմից: Տեղեկացրեց նրան, որ հայերը գրավել են Սարմին քաղաքը եգիպտացիներից և մեծ քանակությամբ ավար բերել՝ այդ թվում՝ մեծ թվով ստրուկներ ու ստրկուհիներ, և որ դեսպանները շուտով կժամանեն՝ ուրդուին հասանելիք ավարամասը մատուցելու: Արծիվը (նկատի ունի Հուլիանոսին) շատ ուրախացավ՝ այս լուրը լսելով»⁹⁰:

1265 թ. դեռ Հուլիանոս իլխանի կենդանության օրոք Թավրիզ գնացած, և նրա մահից հետո նոր իլխանի գահընկալման առիթով գումարված կուրուլտայի («մեծ ժողով») ժամանակ դեռ այնտեղ գտնված Վարդան Արևելցիին վկայում է, որ մոնղոլների համար տոնական համարվող այդ օրերին մոնղոլահպատակ բոլոր միապետներն այցի էին գալիս իրենց նորընծա գերակային՝ «շատ և երևելի նուիրօք՝ թագաւորք և սուլտանք. որպես և ի մեր տեսն թագաւորն Հայոց Հեթում, և թագաւորն վրաց Դաւիթ և Բրինձն Անտաքու, և սուլտանք ի Պարսից կողմանց յոլովք»⁹¹:

որ 1268 թ. դեռ ողջ էր: Վասիլին ու եղբայրներից՝ Հեթումին, ինչպես հայրն է վկայում, 1264 թ. «ձիւտրեցուցին» (իմա՝ «ձիւտր» են դարձրել, «ասպետ» են կարգել): Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք (Վենետիկ), էջ 244: Մի քանի տարի անց՝ 1269 թ. հոկտեմբերին, Վասիլն անհայտ պատճառով մահացել է և թաղվել Մլիճի վանքում: Տե՛ս **Անդ**, էջ 252:

⁸⁸ Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, էջ 263; **Վրաց ժամանակագրություն** (1207-1318), թարգ. հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագր. Պարույր Մուրադյանի (Երևան, 1971), էջ 96-97:

⁸⁹ Պատմիչը հենց իրեն նկատի ունի: Նա ասորի հակոբիկյան եկեղեցու մաֆրիանի պաշտոնը զբաղեցրել է 1264-ից 1286 թվականը:

⁹⁰ **Bar Hebraeus**, *The Ecclesiastical Chronicle*, p. 272: Տե՛ս նաև **Լ.Յ. Տէր-Պետրոսեան**, Ասորիների դերը հայկական Կիլիկիոյ մշակութային կեանքում ժԲ-ժԳ դարերում (Հայագիտական Մատենադարան «Բազմավէպ» 28) (Վենետիկ, Ս. Ղազար, 1989), էջ 75:

⁹¹ Տե՛ս Հաւաքումն պատմութեան **Վարդանայ Վարդապետի**, լուսաբանեալ աշխատասիրութեամբ Ղ. Ալիշանի (Մատենադրութիւնք նախնեաց: Պատմագիրք հայոց) (Վենետիկ, 1862), էջ 156:

Իլլիսանական արքունիքին մատուցվող նվերները սոսկ հնազանդության և նրա քաղաքական գերակայության ճանաչման առհավատչյա չէին: Հայկական իշխանությունները շատ հաճախ դիվանագիտական թանկարժեք ընծաների էին դիմում որևէ հստակ խնդրով ուրդուի բարեհաճությունը շահելու նպատակով: Այս դեպքում ընծաները հանդես էին գալիս որպես կաշառք կամ դահամունք: Օրինակ, մամլուքյան պատմիչ Բադր ալ-Դին ալ-Այնին գրում է, որ հայոց արքա Հեթումը Բեհեանի բերդին «նվերներով» է տիրել. «Այն [նախկինում] Հալեպի տարածքների մաս էր, - գրում է նա, - պատկանում էր մուսուլմաններին, և նրա վրա իշխողը Հալեպի տեր ալ-Մալիք ալ-Նասիրն էր: Այդպես էր, քանի դեռ Հուլավուն չէր մտել Հալեպ և գրավել բոլոր երկրները⁹²: Երբ թաքֆուրը՝ Սսի տերը, իմացավ, որ Հուլավուն այն [նույնպես] գրավել է, նրա մոտ գնաց և նվերներով շողորթեց, գումար տարավ նրան՝ խնդրելով, որ Բահասնան (Bahasnā) իրենը լինի, և նա էլ հանձնեց նրան»⁹³:

Եվս մի օրինակ: 1266 թ. մամլուքյան սուլթան Բայբարս ալ-Բունդուկդարին ավերիչ արշավանք է կազմակերպում Կիրիկյան Հայաստանի դեմ: Այս արշավանքը, ինչպես վերևում ենք նշել, ողբերգական հետևանքներ է ունենում հայոց թագավորության և անձնապես հայոց թագավորի համար: Վերջինս այդ ժամանակ բացակայում էր երկրից, քանի որ մեկնել էր մոնղոլների մոտ՝ նրանցից երկրի պաշտպանության համար օժանդակ ուժեր հայցելու⁹⁴: Բազմաթիվ գերիների թվում պատանդվում և Կահիրե է տարվում նաև Հեթումի գահաժառանգ որդին՝ Լևոնը: Հեթումն անհապաղ բանակցություններ է սկսում սուլթան Բայբարսի հետ: Երկար դիվանագիտական խուսանավումներից հետո սուլթանն ի վերջո առաջադրում է իր պահանջը: Նա Լևոնի ազատության դիմաց պահանջում է գտնել և իրեն փոխանցել մոնղոլական գերությունների մեջ գտնվող իր մտերիմ և զինակից մի մամլուքի՝ Սունկուր ալ-Աշկար անունով: Բայբարսի կողմից որոնվող Սունկուր ալ-Աշկարին գտնելու և իր գահաժառանգ որդուն գերությունից ազատելու համար Հեթումը, պարզ է, որ ոչինչ չէր խնայելու և ոչնչի առաջ կանգ չէր առնելու: Հայոց արքան 1267 թ. մեծամեծ նվերներով, ինչպես Գրիգոր Ակներցին է գրում, մեկնում է Աբաղա իլլիսանի արքունիք՝ որդու ազատության դիմաց իրեն ներկայացված պահանջը քննարկելու. «Ձայս լուեալ թագաւորն Հայոց ի դեսպանացն, (եւ) իսկոյն

⁹² Խոսքը մոնղոլների 1260 թ. «ասորիքյան արշավանքի» մասին է:

⁹³ Al-'Aynī, 'Iqd al-ġumān fī tāriḥ ahl al-zamān, ց. 3, bi-tahqīq Muḥammad Muḥammad Amīn (al-Qāhira, al-Hay'a al-miṣriyya al-'āma li-l-kitāb, 1989), ց. 151-152.

⁹⁴ Տե՛ս Գրիգոր Ակներցի, Պատմութիւն թաթարաց, էջ 54; *Les gestes des Chiprois*, ed. G. Raynaud (Publications de la Société de l'Orient Latin. Série historique 5) (Geneva, 1887), p. 181, *ինչպես նաև The 'Templar of Tyre', Part III of the 'Deeds of the Cypriots'*, ed. by P. Crawford (Aldershot: Ashgate, 2003) (repr. London & New York, Routledge, 2016), p. 52:

զուգեաց բազում գանձս և պատուական ինչս, եւ գնաց յարեւելք առ Աբաղայ Ղանն»⁹⁵: Դեպքերի մասին գրում է նաև Սմբատը: Ըստ նրա Հեթումը՝ ներկայացել է Աբաղա իլխանին և «խնդրեաց զխօշտաշն Պեկպարս սուլտանին...և ոչ գտաներին գնա: Եւ դարձաւ թագաւորն տրտմութեամբ և եկն յաշխարհն իւր, և առաքեաց առ սուլտանն եթէ, ոչ գտի. և սուլտանն մոմոեալ ասէր, եթէ գնա ոչ բերցէ՝ զորդի նորա ոչ ազատեցից»⁹⁶: Ըստ Բար Հեբրեոսի՝ Աբաղա խանը հորդորել է իր առաջ հեկեկացող Հեթում արքային իր երկիրը վերադառնալ՝ խոստանալով, որ ինքը կգտնի և նրա մոտ կուղարկի Սունկուրին⁹⁷: Երկար որոնումներից հետո Սունկուր ալ-Աշկարն, ի վերջո, գտնվում է⁹⁸, և կողմերը սկսում են պատանդների փոխանակման շուրջ բանակցություններ⁹⁹: Վերադառնալուց հետո Լևոնը վանք մտած և կարճ ժամանակ անց (1270 թ.) մահկանացուն կնքած հոր փոխարեն նստում է թագավորության գահին (Լևոն Բ, 1269-1289 թթ.): Մինչ այդ, սակայն, ուղևորվեց Աբաղա իլխանի մոտ և «առեալ հրաման վասն թագաւորելոյ իւր»¹⁰⁰: Ըստ Սմբատ Սպարապետի՝ Լևոնը լավ ընդունելություն է գտել Աբաղայի մոտ՝ թանկագին պարգևների արժանանալով. «Ի սոյն ամի պարոնն Հայոց Լեւոն, գնաց յարեւելս առ խանն Ապաղա, և

⁹⁵ Գրիգոր Ակներցի, Պատմութիւն թաթարաց, էջ 61:

⁹⁶ Տե՛ս Սմբատ, Տարեգիրք (Վենետիկ), էջ 249: Այս դեպքերի առնչությամբ բազմաթիվ մամուլային պատմիչներ են գրում, բայց մյուսների մոտ չհանդիպող մի պատմություն է տալիս ալ-Յունինի պատմագիրը: Ըստ նրա՝ հայոց արքան Աբաղայի մոտ գնալիս իրեն ուղեկից է վերցրել ալ-Չահիր Բայբարսի ուղարկած դեսպաններից մեկին՝ Բահրի էմիր Ալամ ալ-Դինին, ում անձը չբացահայտելու համար հայկական հագուստներ (zayy al-armān) են հագցրել: Վերջինս իբր Աբաղայի արքունիքում հանդիպել է Սունկուր ալ-Աշկարին և համոզել, որ ինքն իսկապես ուղարկվել է Բայբարսի կողմից: Սունկուրը համաձայնել է հայկական հագուստներ հագնելով փախչել Աբաղայի արքունիքից: Երբ կիլիկիա են հասել, Ալամ ալ-Դինը վերադարձել է Կահիրե՝ սուլթանին հայտնելու նրա «խուշդաշին» գտնելու մասին լուրը, որպեսզի պատրաստվի Լևոնի հետ նրա փոխանակությունը: Տե՛ս al-Yūnīnī, Dayl (Ḥaydarābad), ց. 2, ք. 385:

⁹⁷ Bar Hebraeus, Chronography, p. 447.

⁹⁸ Ըստ Բար Հեբրեոսի՝ Սունկուր ալ-Աշկարին գտել են Միջին Ասիայի խորքերում Սամար-դանդում: Տե՛ս Անդ, p. 447, ինչպես նաև Ibn al-Ybrī, Tārīḥ muḥtaṣar al-duwal, ք. 500: Գրիգոր Ակներցին էլ շարունակում է, որ Սունկուրին կիլիկիա է բերել Հեթումի եղբորորդին: Տե՛ս Գրիգոր Ակներցի, Պատմութիւն թաթարաց, էջ 61: Սմբատի վկայությամբ՝ խոսքը վերջինիս Լևոն որդու (ապագա գունդատաբլ) մասին է, ում վստահվել է նաև Սունկուր Աշկարին և Լևոն արքայազնի հետ փոխանակության առաքելությունը: Տե՛ս Սմբատ, Տարեգիրք (Վենետիկ), էջ 249, 251:

⁹⁹ Տե՛ս Les gestes des Chipriots, p. 191, ինչպես նաև Deeds of the Cypriots, p. 59:

¹⁰⁰ Գրիգոր Ակներցի, Պատմութիւն թաթարաց, էջ 65: Ըստ Բար Հեբրեոսի՝ Հեթումը գահը թողնելուց (1268 թ.) առաջ ինքն էլ Բաղդադում տեսակցել է Աբաղա խանին՝ նրան որդու ազատության համար իր երախտագիտությունը հայտնելու, ինչպես նաև իր իշխանությունը վերջինիս փոխանցելու թույլտվություն ստանալու: «Արքայից արքան» համաձայնել է՝ պահանջելով, որ Լևոնն անձամբ իրեն այցի գա իշխանությունը ժառանգելու խնդրով: Տե՛ս Bar Hebraeus, Chronography, p. 448: Ըստ ասորի մատենագրի՝ 1269 թ. հուլիսին Աբաղային այցելել է արդեն Լևոնը և վավերացրել իր իշխանությունը: Տե՛ս Անդ:

նա ընկալաւ զնա մեծարանօք, և բազում պարգևօք դարձոյց յաշխարհն իւր
Կիլիկիա»¹⁰¹ :

Մամլուքյան պատմիչներ Իզզ ալ-Դին Իբն Շադդադն ու ալ-Յունիսին իրենց երկերում մի շատ արժեքավոր հաղորդում են պահպանել, որը, ճիշտ է, Կիլիկյան Հայաստանի և Իլխանության պաշտոնական հարաբերություններին չի վերաբերում, այնուամենայնիվ, հաջողությամբ տեղավորվում է հայ-մոնղոլական հարաբերությունների շրջանակում: Խոսքը վերաբերում է 1275 թ. Աբաղա իլխանի կողմից Ռումի գործերի վերաբերյալ խորհրդակցությունների նպատակով իլխանական արքունիք կանչված Ռումի սուլթան Ղիյաս ալ-Դինի և Իկոնիայի նոր վերատեսուչ նշանակված Թակու-նույինի դեսպանագնացությունը: Նրանց ուղեկցողների թվում էր Երզնկայի Սարգիս արքեպիսկոպոսը, որը, ինչպես վերևում ենք նշել, մեծ համբավ և հարգանք էր վայելում իլխանական արքունիքում, և անգամ անձնական մտերմություն ուներ իլխան Աբաղայի հետ¹⁰²: Իզզ ալ-Դին իբն Շադդադը գրում է. «Մուհարրամ ամսի սկզբներին (1275 թ. հուլիս) նրանք հասան Աբաղայի մոտ, ով [այդ ժամանակ] գտնվում էր Արմուում (Armū)¹⁰³ Ատրպատականի (Adārbayğān) երկրում, և գտնվում էր այն տանը, որ Հուլաղուն էր կառուցել՝ կողքին իր կին Տողուզ Խաթունի համար մի հսկայական եկեղեցի, որի պատերը ներսից ոսկեզօծ էին, դրվագված տարատեսակ թանկարժեք քարերով: Երբ նրա առջև հայտնվեցին, վախեցան իրենց բերած նվերների համար: Առաջինը, ով իր ընծաները մատուցեց, Մարհասյան էր: Դրանց մեջ կային հրաշագեղ օղազրահներ, որ

¹⁰¹ **Ամբատ**, Տարեգիրք (Վենետիկ), էջ 251-251: Լևոնը պաշտոնապես թագադրվեց միայն 1271 թ. հունվարի 6-ին:

¹⁰² Սարգիս արքեպիսկոպոսի այս դեսպանագնացության և նրա օրեցօր աճող հեղինակության պատճառով Ռումի սուլթանության վեզիր Մուին ալ-Դին Փերվանեի դավադրության զոհ դառնալու մասին մասնրամասն տե՛ս **Գ. Դանիէլեան**, «Երզնկայի Սարգիս արքեպիսկոպոսի գործունէութիւնն...», էջ 196-201:

¹⁰³ Armū ասվածի տակ Բայբարսի կենսագիրն ամենայն հավանականությամբ նկատի ունի Ուրմիան: Եթե այդպես է, ապա Իլխանության պատմիչ Ռաշիդ ալ-Դինի երկում այդ տուն-ամրոցի մասին գտնում ենք հետևյալ տեղեկությունը. «Բաղդադից բերված գանձերն ու հսկայական հարստությունները Հուլաղու խանը Ռեյի տիրոջ՝ Ալա ալ-Դինի որդի Նասիր ալ-Դինի հետ ուղարկեց Ատրպատական, նույնպես և հերետիկոսների բերդերից, Ռումից, Վրաստանից, Հայաստանից, լուրերից և քրդերից վերցրած գանձերը: [Հուլաղուն] Թավրիզի մեկը Մաջդ ալ-Դինին կարգադրեց Ուրմիայի և Սալմասի (Սալմաստ) լճի ափին՝ լեռան վրա, մի հիասքանչ և խիստ ամուր բերդ կառուցել: Հալեթով բոլոր թանկարժեք մետաղադրամները և դրանցից բալիշ (բնագրում՝ bālīš, որ մոնղոլական դրամական միավոր էր) հատելով՝ այստեղ գետեղեցին»: **Se'u Rašīd al-Dīn**, Ğāmi' al-Tawārīh, ց. 1, ք. 716-717 և հմմտ. **Рашид-ад-Дин**, Сборник летописей, том III, стр. 47:

զարմացրին նրան (իմա՝ Աբաղային), և նա բաժանեց դրանք իր [արքունական] երևելիներին»¹⁰⁴։

Մոնղոլական իշխանությունները բարձր էին գնահատում հայոց արքաների հավատարմությունը և պատրաստ էին արտոնություններ ու լիազորություններ շնորհել նրանց։ Հեթում Պատմիչ Կոռիկոսցու վկայությամբ՝ Աբաղա իլխանը 1277 թ., երբ սուլթան Բայբարսի «իկոնիական» արշավանքից հետո փորձում էր կարգուկանոն հաստատել Ռումում՝ պատժելով Եգիպտոսի սուլթանի հետ գաղտնի բանակցությունների մեջ մտած կենտրոնախույս ուժերին՝ վեզիր Փերվանեի գլխավորությամբ, առաջարկում է հայոց արքա Լևոնին ստանձնել Ռումի թագավորության (*roiaume de Turquie*) կառավարումը։ Հայոց արքան, սակայն, հաշվի առնելով Մամլուքյան սուլթանությունից եկող մշտական վտանգը և թե ինչ գլխացավանք կարող էր դառնալ դա Հայոց թագավորության համար, հրաժարվել է Աբաղայի առաջարկն ընդունելուց՝ իլխանին հորդորելով այդուհետ Ռումի գործերի տնօրինումը չվստահել մուսուլման կառավարիչների¹⁰⁵։ Հեթում Կոռիկոսցու երկի քարոզչական նպատակներն անառարկելի փաստ են արդի հետազոտողների համար, այնուամենայնիվ, հաղորդման պատմական հիմքերը լիովին բացառելն էլ սխալ կլինի¹⁰⁶։

Արտաքին թշնամիների և հավանաբար հենց նույն Փերվանեի՝ հայոց թագավոր Լևոնի դեմ հյուսած տարատեսակ դավերն ու մոնղոլական իշխանությունների աչքում վերջինիս ունեցած բարի համբավն ու հեղինակությունն արատավորելու փորձերն է ակնարկում Ստեփանոս Վահկացին, երբ գրում է, թե «... ընթացան առ թագաւոր ազգինն նետողաց, ի բարէպաշտ խանն Ապաղա, որդի մեծի խանին Հուլայունի, եւ բազում նենգաբանութեամբ մատնեալ զարքայն ամենայն Հայոց՝ շարաշար սուտ եւ բասիր բանիւք»¹⁰⁷։ Հայոց արքան, սակայն, ամեն անգամ խորագետ իմաստությամբ և իլխանին մատուցած փառահեղ նվերներով կարողացել է հերքել թշնամական բանասարկությունները և շահել մոնղոլ ինքնակալի բարյացակամությունը. «Վասն որոյ եւ ամենասուրբ արքայն Հայոց թէպէտ եւ բազում անգամ ընթացեալ եւս էր առ մեծ խանն վասն քրիստոնէից, եւս առաւել սակս այս պատճառի, զանազան եւ անբաւ բազմութեամբ ընծայից ամենայն արեւելայնոցն իշխանաց արքայազանց, նա եւս առաւել խանին եւ ամենայն բազմութեան զաւրաց իւրոց մա-

¹⁰⁴ Իzz al-Dīn ibn Šaddād, *Tārīḥ al-Mālik al-Zāhir*, §. 122; al-Yūnūnī, *Dayl* (Ḥaydārābad), §. 3, 112.

¹⁰⁵ Hayton, “La Flor des estoires de la Terre d’Orient”, éd. Ch. Köhler, *RHC d.a.*, t. 2 (Paris, 1906), p. 180-181.

¹⁰⁶ Տե՛ս Լ. Տ.-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը, հտ. Բ*, էջ 323-325; Շ. Մուֆյան, *L’Arménie*, p. 163:

¹⁰⁷ ՀԶԷ, ԺԳ դար, էջ 573:

տուցեալ, մինչեւ դվադընջուց բանսարկուեալ նենգաբանութիւնսն ի թշնամեաց իւրոց կարողութեամբ անեղին Աստուծոյ սուտ արարեալ, եւ զիւրն ամենայնճմարիտ հաւատս եւ զգործս անարատ ընդդէմ Աստուծոյ եւ խանին յայտնի կացուցեալ, որ եւ բազում գովութիւնս ընկալեալ ի նմանէն, եւ պարգեւաւք թագաւորականնաւք դարձուցեալ յաշխարհ իւր, եւ զամենայն թշնամիսն իւր եղեալ ի ներքոյ ոտից նորա՝ առնել ընդ նոսա զոր ինչ եւ կամեսցի, եւ այս այսպէս պատահեցաւ ըստ ժամանակին բերմանց եւ տարբերութեան»¹⁰⁸:

1285 թ. Լևոն Բ-ը վերստին այցելել է ուրդու՝ այս անգամ Իլխանութեան գահին նստած նոր միապետին՝ Արղուն խանին իր հավատարմությունը հայտնելու. «Ի թվին ՉԼԴ (1285 թ.) թագաւորն Հայոց Լևոն գայ յարևելս առ Արղուն խանն և բազում մեծարանաւք սիրեաց զնա»¹⁰⁹, - գրում է Անանուն Սեբաստացի ժամանակագիրը՝ հավելելով. «էր և անդ սուլտանն Հոռոմոց»¹¹⁰: Եւ դարձաւ թագաւորն Հայոց Լևոն յաթոռ իւր և յորժամ եմուտ յերկիր իւր վախճանեալ էր Կեռանէ թագուհի իւր»¹¹¹:

Դահամունքով իլխանների հետ հարցեր կարգավորելու վերաբերյալ մեկ այլ հաղորդում էլ գտնում ենք Tārīḥ āl-i Saljūq («Սելջուկյան զարմի պատմություն») անանուն պարսկալեզու մի ժամանակագրության մեջ (գրված ենթադրաբար ԺԴ դարի սկզբներին): Ըստ այդ վկայության՝ հիշրայի 686 թ. վերջերին (1287 թ. վերջեր-1288 թ. սկզբներ) Կիլիկյան Հայաստանը (deyār Ṭarsūs՝ «Տարսունի երկիրը») ենթարկվել է թուրքմեն Կարամանների (pesar qarāmān) ասպատակություններին: Այս իրավիճակում հայոց թագավորը (նկատի է առնված Լևոն Բ-ը, բնագրում՝ Takfūr) իր «տեղակալին» (nāyeb ḥod, ո՞վ է) մեծ գումարով (bā māl farāwān) ուղարկում է իլխանի մոտ՝ այս մասին զեկուցելու և հավանաբար նաև զինական օգնություն խնդրելու նպատակով: Ինչպես 1285 թ. այցելության դեպքում, այս անգամ ևս պարզվում է, որ այդժամ ուրդուում էին գտնվում նաև Իկոնիայի սուլթան Մասուդ Բ-ը և վերջինիս վեզիր Սահիբ Ֆախր ալ-Դինը՝ նույնպես թուրքմենական իլխանությունների (բեյլիքների) դեմ պայքարում օժանդակություն ստանալու խնդրով: Վերջիններիս հրա-

¹⁰⁸ Անդ:

¹⁰⁹ ՄԺ, հտ. Բ, կազմեց Վ.Ա. Հակոբյան (Նրևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1956), էջ 148, ինչպես նաև **ՀԶԶ, ԺԳ դար**, էջ 571-572:

¹¹⁰ Ռումի սուլթան Ղիյաս ալ-Դին Մասուդ Բ-ն է (կառ. 1282-1283, 1284-1293, 1294-1300, 1302-1304 թթ.): Գահի համար երկարամյա պայքար է մղել Քայկուբադ Գ-ի հետ, ով նույնպես քանիցս հայտնվել է իլխանության ղեկին (1284, 1293-1294, 1300-1302, 1304-1307 թթ.):

¹¹¹ Տե՛ս ՄԺ, հտ. Բ, էջ 148, ինչպես նաև **ՀԶԶ, ԺԳ դար**, էջ 571-572: Հմմտ. նաև ՄԺ, հտ. Բ, էջ 169, ծնթգր. 171:

հանգվում է Արղունի եղբայր Գայխաթուի (ապագա իլխանը) գլխավորութ-
յամբ, ով այդ ժամանակ Ռումի իլխանական կառավարիչն էր, պատժել թուրք-
մեններին: Ճիշտ է՝ կարճ ժամանակ անց մոնղոլ-սելջուկյան զորքերը գրավում
և ավերածություն են ենթարկվում Լարանդան, իսկ Կարամանների առաջնորդ
Գյուների-բեկը ձևականորեն ընդունում է իր հպատակությունը Մասուդ Բ-ին
և մոնղոլներին, բայց Կարամաններից և մյուս թուրքմենական իշխանու-
թյուններից եկող վտանգը չեզոքացնել այդպես էլ չի հաջողվում¹¹²:

Մոնղոլ պետական այրերի նկատմամբ հայկական իշխանությունների
ունեցած նվիրաբերման պարտականության մասին վկայող մի հետաքրքիր
դրվագ է ներկայացնում Բար Հեբրեոսի շարունակողը: 1295 թ., երբ հայոց ար-
քա Հեթում Բ-ը շտապում էր իր հավատարմությունը հավաստելու և ընծաները
մատուցելու պետական հեղաշրջման արդյունքում իլխանության գահին
նստած Բայդու խանին (1295 թ. մարտ - 1295 թ. հոկտեմբեր), վերջինս թեժ
պայքարի մեջ էր Արղուն խանի որդի Ղազանի և էմիր Նովրուզի հետ, որոնք
իրենք հավակնություն ունեին իշխանության նկատմամբ՝ հօգուտ հիշյալ Ղա-
զանի: Այսպիսի պայմաններում, ինչպես Բար Հեբրեոսի շարունակողն է վկա-
յում, Բայդուն իրեն այցելելու եկած Հեթումի մոտ դեսպան է ուղարկում և խոր-
հուրդտալիս առժամանակ հանգրվանել Մարաղայում, մինչև որ ինքը կպար-

¹¹² Tārīḥ Āl Salḡūq dar Ānāṭūlī, taṣḥīḥ we-ta'liqāt Nādereh Ḡalālī (Tehran, 1999), §. 113:
Թուրքմենների դեմ Գայխաթուի գործողությունների մասին ակնարկում է նաև Բար Հեբրեոսի
շարունակողը, բայց հայոց թագավորության վրա նրանց հարձակումների մասին լուում է: **Sté-
Bar Hebraeus, Chronography**, p. 492: Այս մասին տե՛ս նաև **Cl. Cahen, La Turquie pré-ottomane**
(Varia Turcica VII) (Istanbul: Institut Français d'Études Anatoliennes, 1988), p. 293; **F. Sümer,**
“Karāmān-Oghulları,” in: *EI2*, vol. 4 (IRAN-KHA) (Leiden: E.J Brill, 1997), p. 621: Հատկանշական է,
որ Կարամանյանների հրոսումները Կիլիկյան Հայաստանի տարածք բավական հաճախապես
էին դարձել 1270-80-ական թթ.: Ընդունելով Եգիպտոսի և Ասորիքի Մամլուքյան սուլթանների
գերագահությունը՝ նրանք իրենց գործողությունները մեծամասամբ համապատասխանեցնում
էին հայոց թագավորության դեմ մամլուքյան զորաբանակների շարժերի հետ՝ ասպատակ
սփռելով հայկական բնակավայրերում: Հայկական աղբյուրներից էլ հայտնի է, որ, օրինակ,
1283-1284 թթ. հայ-թուրքմենական թեժ մարտեր են ծավալվել Մանիոն բերդի համար: Ընդ
որում, մի անանուն ժամանակագրի՝ ՉԼԳ (1285) թվականի ներքո արձանագրած վկայությունից
հաստատվում է նաև Tārīḥ āl-i Salḡūq երկի հեղինակի վերոբերյալ հաղորդումը. «Սարամանն
գերեաց գերկիրս Տարսոն ի Կիլիկիայ»: Տե՛ս **Գարեգին Ա Կաթողիկոս, Յիշատակարանք ձե-
ռագրաց**, էջ 528, ինչպես նաև **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն, էջ 261:
Կարելի է ենթադրել, որ Տարսոնի մերձակայքի մի շարք շրջաններ Կարամանները հայոց թա-
գավորությունից խլել էին դեռ հիշյալ 1285 թ. և միայն 1288 թ. մոնղոլական զորքերի միջա-
մտությունից հնարավոր եղել դրանց ազատագրումն ու վերամիակցումը հայոց թագավորու-
թյանը: Հայ-թուրքմենական հարաբերությունների մանրամասն քննարկումն առանձին հետազո-
տության թեմա է: 1270-1280-ական թթ. որոշ դրվագների մասին տե՛ս նաև **Գ. Գանիեյան**, Իբն
Աբդ ալ-Ջահիր, էջ 252, 257, 263:

զի իր հարցերը խոսովարարների հետ: Հեթումը մոտ տասն օր սպասում է՝ հանդիպման ակնկալիքով: Այդ ընթացքում Նովրուզը, շահելով մի շարք հզոր ու ազդեցիկ էմիրների վստահությունը, ի վերջո Իլխանության գահին է բազմեցնում Ղազանին: Իսկ Բայդուն, իրեն պարտված համարելով, փախուստի է դիմում, չնայած շուտով բռնվում և դատապարտվում է մահվան¹¹³: Այս դրույթյան մեջ Հեթում արքան վճռում է Բայդուի փոխարեն հանդիպել նորահռչակ Ղազանին և իր հավատարմությունը հավաստել վերջինիս: «Եվ Հեթումն անհապաղ պատրաստվեց և գնաց նրան իր ծառայությունը հայտնելու՝ մեծամեծ նվերներ հանձնելով նրան: «Արքայից արքան» (իմա՝ Ղազանը) ասաց նրան. «Ինչ եկել էիր Բայդուին այցելելու և ոչ մեզ»: Եվ Հեթում արքան պատասխանեց. «Ես պարտավորված եմ հնազանդություն ցուցաբերելու Չինգիզ խանի ողջ զարմին, ուստի ես եկել եմ հավատարմություն հայտնելու նրան, ով գահին է նստել»: Այդուհետ «արքայից արքան» ջերմորեն ողջունեց նրան և արքայական հանդերձ հագցրեց: Նա հրամայեց, որ նրա համար արտոնագիր գրվի, և որ նրա բոլոր խնդրանքները կատարվեն»¹¹⁴:

Ընծաներն ու կաշառքը գործուն միջոց էին ոչ միայն մոնղոլական բարձրագույն իշխանությունների՝ իլխանների և անմիջապես արքունիքի հետ հարաբերություններում, այլև զանազան մոնղոլ կառավարիչների և ազդեցիկ ռազմաքաղաքական այրերի հետ «ընդհանուր լեզու» գտնելիս: Այս մասին մի հաղորդում ենք գտնում «Մար Յահբալլահ Գ-ի և Ռաբբան Սաումայի պատմություն» վերնագրով երկում: Պատմելով ասորի նեստորական եկեղեցու պատրիարք Յահբալլահ Գ-ի՝ էմիր Նովրուզի ձեռքից նրա և Մարաղայի նեստորական բնակչության կրած տանջանքների և հալածանքների մասին, Ռաբբան Սաումայի կենսագիրը գրում է, որ Նովրուզի հետապնդումներից խուսափելու նպատակով պատրիարքն ապավինում է այդ ժամանակ Մարաղայում հանգրվանած և, ինչպես վերևում ենք նշել, մոնղոլական արքունիքում իր ընդունելությանը սպասող հայոց արքա Հեթում Բ-ի օգնությանը. «Ռաբբան Սաումայի կառուցած եկեղեցուն հասավ Հայոց արքան՝ Խիթամ (իմա՝ Հեթում) Թաբֆուրը, և իր նվերների բազմությամբ և զորքով փրկեց այն ավերումից: Կաթողիկոսը, իրեն բռնածների ձեռքից մազապուրծ, փախչում է և գիշերը թաքնվում նրա մոտ»: Վարքագիրը գրում է, որ հաջորդ օրն էմիր Նովրուզի մարդիկ Հեթումին են ներկայացնում կաթողիկոսին ձերբակալելու հրամանը՝ պահանջելով հետախուզվողին իրեն հանձնել: Իմանալով այս մասին կաթո-

¹¹³ Կ. Մաթևոսյան, **Հեթում Պատմիչ Կողիկոսցին** և նրա ժամանակագրությունը (Երևան, «Մուղնի» հրատ., 2011), էջ 57 (գրված է 1294 թ. տակ): Հմմտ. **ՀԶԶ, ԺԳ դար**, էջ 772-773:

¹¹⁴ Bar Hebraeus, *Chronography*, p. 506.

ղրկուսը կրկին փախչում է: Իսկ Հեթումը փորձում է կրկին նվերներ մատուցելով հանդարտեցնել էմիր Նովրուզին: Մի քանի օր անց Հեթումը Մարաղայից մեկնում է Թավրիզ՝ իրեն ուղեկցող ենթակաների շարքում իշխանության եկած Ղազանի արքունիք տանելով նաև հայկական զգեստներով ծպտված Մար Յահթալահին¹¹⁵:

Իլխաններից «իշխանության տվչության» ակնկալիք ունեցող և նրանց քաղաքական կամքի բարեհաճությունը շահելու ցանկությամբ տոգորված հայոց գահակալների այցելությունները ուրդու միշտ ուղեկցվում էին շքեղ նվերներով: 1297 թ. տեղի ունեցած մի դեպք պարզորոշ է արտահայտում այդ երևույթը: 1296 թ. հայոց արքա Հեթում Բ-ը, որն իրեն ավելի շատ Ֆրանցիսկյան միաբան էր համարում, քան թե արքա, ևս մի անգամ վտանգի տակ է դնում թագավորական իշխանությունը և «թագապահ» կարգելով իր եղբորը՝ Սմբատին, մյուս եղբոր՝ Թորոսի հետ մեկնում է Կոստանդնուպոլիս՝ իր քրոջը՝ Ռիտա-Մարիային (Մարիա-Քսենիա) տեսակցելու¹¹⁶: Օգտվելով Հեթումի և Թորոսի բացակայությունից՝ Սմբատը բռնազավթում է իշխանությունը և Գրիգոր է Անավարզեցի (1293-1307 թթ.) կաթողիկոսի ձեռքով օծվում է հայոց թագավոր (կառ. 1296-1298 թթ.): Այնուհետ Սմբատը ճանապարհվում է Ղազան խանի մոտ՝ իր իշխանությունը լեզբիտիմացնելու: Իմանալով տեղի ունեցած դավադրության և հեղաշրջման մասին՝ Հեթումը և Թորոսը նույնպես շտապում են Ղազանի մոտ¹¹⁷ կրկին նվերներով, որ խնդրում են կայսրից: Գահի համար ծավալված «մրցավազքը» Սամուել Անեցու շարունակողներից մեկն այսպես է նկարագրում. «Եվ նոքա դարձան անդէն առ կայսրն, եւ առեալ ոսկի բազում գնացին առ ղանն Ղազան յԱրեւելս: Իսկ Սմբատն յառաջագոյն էր գնացեալ ի Թաթարն բազում գանձիւք, եւ առեալ էր ի ղանէն իւր կին, որ էր ի ղանի ազգէն, դարձեալ գայր յաշխարհն իւր»¹¹⁸: Մոնղոլ կին տալու վերաբերյալ այս վկայությունն իրենցից կախյալ կառավարողների իշխանությունը ճանաչելու մոնղոլների վերը նկարագրված սովորության ևս մի վառ օրինակ

¹¹⁵ Стѣс Е.А. Wallis Budge, *Rabban Sawma*, pp. 103-105 և Н.В. Пигулевская, “История мар Ябалахи III и раббан Саумы”, стр. 717-718:

¹¹⁶ Բյուզանդիայի Անդրոնիկոս Բ Պալեոլոգոսի (կառ. 1282-1328 թթ.) որդի և գահակից կայսր Միքայել Թ Պալեոլոգոսը (կառ. 1294-1320 թթ.) Հեթումի քեռայրն էր. նա ամուսնացած էր Հեթումի քույր Ռիտայի հետ, ով ամուսնությունից հետո ընդունել էր Ռիտա-Քսենիա անունը:

¹¹⁷ *Les gestes des Chipriots*, p. 282-284; *Deeds of the Cypriots*, pp. 137-138.

¹¹⁸ Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի (Երևան, «Նաիրի», 2014), էջ 268:

է¹¹⁹: Սմբատը, սակայն, ձախողում է իլխանական արքունիք հասնելու Հեթումի ծրագիրը՝ կուրացնելով և բանտարկելով վերջինիս, իսկ մյուս եղբորը՝ Թորոսին, սպանում է: Այս «դավադրաշատ» ու եղբայրասպան գործողություններին, միջամտում է նաև շորրորդ եղբայրը՝ Կոստանդինը, ով բանտից ազատում է Հեթումին՝ վերջինից ստանալով երկիրը «պարոնություն» սկզբունքով կառավարելու իրավունք¹²⁰: Բայց շուտով նա նույնպես պետական իշխանությունը բռնազավթելու բացահայտ նկրտումներ է ցուցաբերում, ինչի պատճառով ձերբակալվում է Հեթումի կողմից և Սմբատի հետ միասին քստրվում Կոստանդնուպոլիս: Ուշագրավ է, որ այս ամենից հետո Հեթումը հարկադրված է եղել ևս մի անգամ մեկնել Աբաղայի մոտ (1298 թ.)՝ իր իշխանության օրինականությունը վերստին հաստատելու¹²¹:

Մոնղոլներն արդեն Ղազան խանի օրոք պաշտոնապես դառնում են իսլամի հետևորդներ, և այս հանգամանքը մեծապես փոխում է հայ-մոնղոլական հարաբերությունների բնույթն ու բովանդակությունը: Այս շրջադարձի գույժն է դառնում 1307 թ. մոնղոլ զորապետ Բիլարղուի կողմից հայոց մանկահասակ արքա Լևոն Գ-ի (կառ. 1306-1307 թթ.) և նրա խնամակալ, «ավագ պարոն» կամ «թագավորահայր» Հեթումի դաժան սպանությունը: Բիլարղուի արարքը, ըստ էության, ինքնագործունեության հետևանք էր և չէր արտահայտում իլխանական ուրղուի պաշտոնական վերաբերմունքը: այնուամենայնիվ, պարզ էր, որ ոչինչ այլևս նախկինի պես չէր: Սրա ապացույցն այն է, որ մոնղոլ զորապետի գործած արարքն Օլջայթու Խոդաբանդա խանը չի ներել՝ մահապատժի ենթարկելով նրան և մեղսակիցներին: Հովհաննես Դարդելը գրում է, որ Հեթումի եղբայր Ալինախը «մեծ պարգևներով ու նվերներով» գնացել է իլխանական արքունիք՝ բողոքելու Բիլարղուի դեմ¹²²: Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» համառոտ տարբերակի շարունակողի վկայությամբ՝ իր մոտ գանգատով ներկայացած Ալինախին՝ Հեթումի եղբորը, իլխանը «դրամական փոխհատուցում» («զվճար անմեղացն») է տվել¹²³: Չնայած այս հանգամանքին, այնուամենայնիվ, պարզ էր, որ ոչինչ այլևս նախկինի պես չէր: Օլջայթուի և նրան գահի վրա հաջորդած Աբու Սաիդի կառավարման օրոք խիստ թուլանում է

¹¹⁹ Ըստ «Վարք կիպրացվոց» երկի անանուն հեղինակի՝ Սմբատը մոնղոլուհի է առել կնություն, որպեսզի «թաթարներին» հետ ավելի ամուր մտերմություն ունենա: Տե՛ս *Les gestes des Chipriots*, p. 283; *Deeds of the Cypriots*, p. 138:

¹²⁰ ՄԺ, հտ. Բ, էջ 150:

¹²¹ Սամուէլ Անեցի և Շարունակողներ, Ժամանակագրութիւն, էջ 269:

¹²² Տե՛ս «Chronique d'Arménie par Jean Dardel», éd. Ch. Köhler, *RHC d.a.*, t. 2 (Paris, 1906), p. 17 և *Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն Հայոց, տպարան Ի.Ն. Սկօրոխօրովի (Ս. Պետերբուրգ, 1891)*, էջ 25:

¹²³ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք (Փարիզ), էջ 127:

կապը Իլխանության արքունիքի հետ և մոնղոլների հետ «դաշնակցությունը» ձեռք է բերում խորհրդանշական բնույթ: Աղբյուրներում նվազում են մոնղոլների հետ գործակցային հարաբերությունների՝ այդ թվում նվիրաբերման վերաբերյալ տեղեկությունները: Այնուամենայնիվ, որոշ փաստեր ունենք՝ պնդելու, որ հայոց արքունիքը նախկինի պես կատարել է մոնղոլական ռազմական ձեռնարկումներին մասնակցելու և իլխանական բանակի պարենով ապահովելու իր ստանձնած պարտավորությունը:

Մամլուքյան պատմագրությունից, օրինակ, կարող ենք մատնանշել մի դրվագ, որը թվագրելի է հիշրայի 712-713 թվականներով (1312-1313 թթ.), երբ մոնղոլական զորքերը նախապատրաստել և իրականացրել են մերձեփրատյան ալ-Ռահբա բերդի անհաջող պաշարումը: Օլջայթուի այս արշավանքը, ըստ էության, Ասորիքը գրավելու մոնղոլների վերջին փորձն էր: Չնայած Կիլիկիայի պատմության հետազոտողների պնդմանը, թե հայկական ուժերն այս անգամ արդեն առհասարակ որևէ մասնակցություն չեն ունեցել այս ռազմական ձեռնարկմանը, մամլուքյան պատմիչ Իբն ալ-Դավադարին մեջբերում է իր մի տեղեկատուի վկայությունները, որոնք լրիվ հակառակն են ապացուցում: Այդ հաղորդումների և դրանց հավաստիության մանրամասն քննարկումն այլ հետազոտության թողնելով՝ նշենք միայն սույն թեմայի համար հետաքրքրություն ներկայացնող հատվածները: Մասնավորապես արձանագրված է, որ իլխանի աջակցության կոչին արձագանքած «Սսի տերը» (անվանված է «պիղծ և ստոր», բնագրում՝ *ṣāḥib Sīs al-nağis al-ḥasīs*) հսկայական նյութական օգնություն (փայտ, պարեն, ջորիներ, մեխեր և պարաններ) էր ուղարկել ալ-Ռահբան պաշարած մոնղոլական զորքին: Այլուր նշվում է, որ «Սսի տերն ալ-Մալիք Խոդաբանդային մատուցելու մեծաքանակ նվերներ (*al-taqādim*) էր ուղարկել՝ գումար՝ ջորիների և ձիերի (*al-akādīs*) վրա, 100 հզ. երկաթյա պայտ՝ իրենց մեխերով, մեծ քանակությամբ այծեր և կովեր, ամեն տեսակի որսորդական թռչունների վանդակներ (*ḥūshānah*), ցորենով և գարիով բեռնավորված 30 հզ. ավանակներ»¹²⁴:

Վերևում՝ Եգիպտոսի և Ասորիքի սուլթանների հետ հայոց արքաների միջև նվիրաբերմանը վերաբերող հատվածում նշել ենք, որ միջնադարյան մտածողության համաձայն դիվանագիտական ընթաներ կարող էին դիտվել նաև մարդիկ (ողջ կամ սպանված, և անգամ մարմնի մասերը)՝ որպես ստրուկներ, քաղաքական հետապնդման և հետախուզման մեջ գտնվող ան-

¹²⁴ **Ibn al-Dawādārī**, *Kanz al-durar*, §. 253-255: Այս մասին տե՛ս նաև **Գ. Դանիելյան**, «Մալաթիայի գրառումը», էջ 91-92, ծնթգր. 8:

ձինք, թշնամական գերությունից ազատված իշխանավորներ: Դրանց փոխանցումը կարող էր էլ ավելի փառահեղ նվեր և ծառայություն դիտարկվել, քան որևէ թանկագին ընծա կամ նվեր: Օրինակ, այս տրամաբանությամբ 1296 թ. Կիլիկիայում ձերբակալվել և իլխանական իշխանություններին է փոխանցվել Ռումի խոռվարար էմիր Բալտուն: Հեթումի բացակայության պայմաններում հայոց գահը բռնազավթած Սմբատը սա հավանաբար հարմար հանգամանք է համարել Ղազանի բարեհաճությունը շահելու և նրանից «իշխանության տվչություն» հայցելու համար, ինչի մասին վերևում արդեն գրել ենք. «Եւ ըմբռնեալ[ց] զՊալթօն և զորդի նորա գՔարաթն և առաքեաց առ Խազանն, գրում է Անանուն Սեբաստացի տարեգիրը՝ շարունակելով, ու և յետոյ ինքն գնաց առ Խազանն»¹²⁵: Ապստամբները տարվում են Թավրիզ և դատապարտվում մահվան¹²⁶:

Հար և նման մի դեպք էլ տեղի է ունենում 2-3 տարի անց: 1298-1299 թթ. մոնղոլների իշխանության դեմ ապստամբություն է բարձրացնում Բալտուի սպանությունից հետո Ռումի կառավարիչ նշանակված Սուլամիշը: Վերջինս, գործակցելով թուրքմեն կարամանների հետ, գաղտնի բանակցություններ է սկսում Մամլուքյան իշխանությունների հետ: Խռովությունը խեղդելու նպատակով Ղազանը Կուտլուհ-շահի հրամանատարությամբ զորք է ուղարկում Իկոնիա: Վճռական ճակատամարտում Սուլամիշը պարտվում է և փախչում Կահիրե, որտեղ լավ ընդունելության է արժանանում: Բայց շուտով ստիպված է լինում կրկին վերադառնալ Ռում՝ իր ընտանիքը գտնելու համար: Սմբատին գահից հեռացրած Հեթումը սա պատեհ հնարավորություն է համարում իլխանական իշխանությունների աչքում իր վարկը վերստին բարձրացնելու համար: Նույն Անանուն Սեբաստացու վկայությամբ (1299 թ.)՝ Հեթումը բռնում է ապստամբ զորապետին և փոխանցում Ղազանին, որի հրամանով էլ սպանվում է¹²⁷:

¹²⁵ Տե՛ս Մժ, հտ. Բ, էջ 150: Հմմտ. Մժ, հտ. Ա, էջ 87 (սխալագրությամբ «պաշտոն» է՝ «Պալթօ»-ի փոխարեն), ինչպես նաև Հեթում Պատմիչ Կոռիկոսցի, Ժամանակագրություն, էջ 57:

¹²⁶ Անդ: Բալտուի ապստամբության և դրա ճնշման մասին գրում է նաև Ռաշիդ ալ-Դինը, թեև նրա ձերբակալության գործում հայոց թագավորի ունեցած դերի մասին լռում է: Տե՛ս Rašīd al-Dīn, Ġāmi‘ al-Tawārīḫ, ց. 1, ց. 925, 929 և Рашид-ад-Дин, Сводник летописей, том III, стр. 171, 175 (ըստ պատմիչի՝ Բալտուն բռնվել է Սուլամիշ (Բաշու նոյինի թոռ) և Արաբ զորապետերի ձեռքով, որոնցից առաջինին շուտով Ղազանը վստահել է Ռումի կառավարումը):

¹²⁷ Տե՛ս Մժ, հտ. Բ, էջ 151: Հմմտ. Մժ, հտ. Ա, էջ 87, ինչպես նաև Հեթում Պատմիչ Կոռիկոսցի, Ժամանակագրություն, էջ 57 (սույն ժամանակագրության՝ Հեթում Բ-ին վերագրվող խմբագրության մեջ հաղորդումը դրված է Բալտուի խռովության մասին վկայությունից անմիջապես հետո՝ 2-ին (1296) թ. ներքո. ակնհայտ է, որ այստեղ երկու տարբեր դեպքերի շփոթ կա): Այս անցքերի մասին մանրամասն պատմում են նաև Ռաշիդ ալ-Դինն ու Ակսարայյին, թեև Սուլամիշի ձերբակալման գործում հայոց արքայի ունեցած դերի մասին չեն հիշատակում: Տե՛ս

Նույն տեղում հիշատակված դրվագը հավասարապես վերաբերում է նաև հայ-մոնղոլական հարաբերություններին: Խոսքն իր խնամակալներ Օշին պայլի և Կոստանդին Գունդստաբլի հանդեպ հայոց Լևոն Դ արքայի՝ 1329 թ. տեսած արյունալի հաշվեհարդարի և դրան հաջորդած մի քստմենելի արարքի մասին է, երբ առաջինի կտրված գլուխը որպես նվեր ուղարկել էր սուլթան ալ-Նասիր Մուհամմադին, երկրորդինը՝ Իրանի Աբու Սաիդ իլխանին. «Ի ՉՉԹ թվին առաքեաց թագաւորն Լեւոն զօրս ի յԱտանոյ եւ ըմբռնեաց զՕշին՝ Տէրն Կօռիկօսու, եւ զեղբայր նորին զԿոստանդին գունդստապլն, եւ եսպան ի սադրելոյ իշխանացն եւ ի քսու արանց, եթէ խորհեալ են բառնալ զքեզ եւ ինքեանք թագաւորել, եւ առաքեաց զՕշնին գլուխն ի Մըսր՝ առ Մելիք Նասր սուլտանն, եւ զեղբօր նորին՝ յԱրեւելս՝ առ Բուսայիտ դանն...»¹²⁸:

Rašīd al-Dīn, Ğāmi‘ al-Tawārīh, ց. 1, ց. 935-938 և Рашид-ад-Дин, Сборник летописей, том III, стр. 180-182, ինչպես նաև Aqsarayyī, Musāmarat al-aḥbār, ց. 239-242, 245-247, 270-271: Այս դեպքերն իրենց լայն արձագանքն են գտել նաև մամլուքյան պատմագրության մեջ, ընդ որում արաբագիր պատմիչները գրեթե միաձայն են Սուլամիշի դեմ պայքարի, նրա հայտնաբերման և ձեռքբերված հարցում Հեթումի գործուն մասնակցության մասին: Զերծ կմնանք այդ վկայությունների հանգամանակից քննությունից, բայց կհղենք առավել կարևորները. տե՛ս **Baybars al-Manṣūrī**, Zubdat al-fikra fī tāriḥ al-ḥiğra, bi-taḥqīq Dunāld Rīṯšārdz (D.S. Richards) (Berlin-Bayrūt, 1998), ց. 319; **al-Yūnīnī**, Dayl Mirāt al-zamān (tāriḥ al-sanawāt 696-711 h. / 1297- 1312 m.), bi-taḥqīq Ḥamza ‘Abbās, ց. 1 (Abū Zabī, 2007), ց. 193-196; Tāriḥ **Abī al-Fidā’** al-musammā al-Muḥtaṣar fī aḥbār albaṣār, ց. 2, bi-taḥqīq Maḥmūd Dayyūb (Bayrūt, Dār al-kutub al-‘ilmiyya, 1997), ց. 375; **al-Nuwayrī**, Nihāyat al-arab, ց. 31, ց. 236-237; **al-Ġazarī**, Tāriḥ Ḥawādīṯ al-zamān wa-ambā’uḥu wa-wafayāt al-akābir wa-l-a’yān min abnā’iḥi al-ma’rūf bi-tāriḥ Ibn al-Ġazarī, ց. 1, bi-taḥqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī (Şaydā-Bayrūt al-Maṭba’a al-‘Asriyya, 1999), ց. 435-437; **Ibn al-Dawādārī**, Kanz al-durar, ց. 9, ց. 9-11; **Al-Maqrīzī**, Kitāb al-sulūk li-ma’rifat duwal al-mulūk, ց. 1.3, bi-taḥqīq Muḥammad Muṣṭafā Ziyāda (al-Qāhira, 1934), ց. 874-878; **al-‘Aynī**, ‘Iqd al-ğumān fī tāriḥ ahl al-zamān, ց. 3, bi-taḥqīq Muḥammad Muḥammad Amīn (al-Qāhira, Al-Hay’a al-miṣriyya al-‘āma li-l-kitāb, 1989), ց. 400-402: Իսկ ըստ «Գործք կիրարացվոց» երկի՝ հայոց արքան, զգուշանալով Մամլուքյան իշխանությունների հակազդեցությունից, սկզբում չի համարձակվել ընդդիմանալ իր երկրի տարածքով Սուլամիշի և մամլուքներից վերջինիս ստացած 1000 հոգանոց հեծելազորի անցմանը, բայց երբ վրա են հասել Ղազանի ուղարկած պատժիչ զորախմբերը, հայերն արդեն սկսել են ավելի վստահ գործել: Սուլամիշն ու նրա զորախումբն անզոր են եղել դիմադրել, և շուտով ամբողջությամբ գերեվարվել ու սպանվել են: Տե՛ս *Les gestes des Chiprois*, p. 297-298, ինչպես նաև *Deeds of the Cypriots*, p. 151: Ապստամբության և նրա անհաջող ելքի մասին ավելի մանրամասն տե՛ս **C.M. D’Ohsson**, *Histoire des Mongols, depuis Tchinguiz-Khan jusqu’à Timour Bey, ou Tamerlan*, t. 4 (La Haye-Amsterdam: Les frères Van Cleef, 1835), p. 200-203; **H.H. Howort**, *History of the Mongols, from the 9th to the 19th century*, Part. 3 (The Mongols of Persia) (London: Longmans, Green and Co., 1888), pp. 427-428; **A.J. Boyle**, “Dynastic and Political History of the Īl-Khāns,” in: *Cambridge History of Iran*, vol. 5 (The Saljuq and Mongol Periods), ed. by J.A. Boyle (Cambridge: Cambridge University Press, 1968), p. 386; **Cl. Cahen**, *La Turquie*, p. 293; **A.D. Stewart**, *The Armenian Kingdom*, pp. 128-136: Հայերի ձեռքով Սուլամիշի բռնվելու Ա. Բոյլեի պնդման սկզբնաղբյուրը չգտնելով՝ Ա. Սոյուարտը գրում է, թե նա հաստատապես որևէ պարսկական աղբյուրի է հետևում: Տե՛ս **A.D. Stewart**, *The Armenian Kingdom*, p. 135, n. 313:

¹²⁸ Տե՛ս **Սամուէլ Անեցի և Շարունակողներ**, Ժամանակագրություն, էջ 275-276 (դրված է 1330 թվականի տակ): Հմմտ. **ՄԺ**, հտ. Ա, էջ 88; **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք (Փարիզ), էջ

Յավոք, նվիրաբերման մասին հիշատակություններից զատ՝ հայկական, իլխանական և այլ օտար աղբյուրները տեղեկություններ չեն հաղորդում ո՛չ մոնղոլական ուրդուում հայ դեսպանների ընդունելության, ո՛չ բուն նվիրաբերման արարողակարգի և ո՛չ էլ հայոց արքունիքում իլխանական դեսպանների ընդունելության վերաբերյալ:

131; *Հեթում Պատմիչ Կոռիկոսցի, Ժամանակագրություն, էջ 58; Abū al-Fidā', Al-Muhtaṣar, ց. 2, 449, ինչպես նաև Հ.Ք. Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 247-248, 286-287; Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հտ. Բ, էջ 401-404:*

ՄԱՍ Գ

ԿԻՒԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ - ԻԿՈՆԻԱՅԻ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ 1. Պաշտոնական գրագրության լեզուն եւ դեսպանընկալության արարողակարգը.

Ռումի սելջուկյան սուլթանությունը ձևավորվել է գրեթե նույն ժամանակ, ինչ Կիլիկիո հայոց իշխանապետությունը: Միջինասիական Արալյան ծովի (լճի) շրջակայքում բնակվող սելջուկ-թյուրքական խաշնարած ցեղերի զանգվածային գաղթի և նվաճումների հետևանքով դեռ ժԱ դարի 30-ականներին ստեղծվել էր Մեծ Սելջուկյան պետությունը (1037–1194 թթ.): Մոտ 60 տարվա ընթացքում սելջուկ սուլթաններ թողրուլ-բեկը (կառ. 1038–1063 թթ.), Ալի-Արսլանը (կառ. 1063–1072 թթ.) և Մելիք-Շահ Ա-ը (կառ. 1072–1092 թթ.) բռնազավթեցին լայնածավալ տարածքներ (Իրան, Շիրվան, Միջագետք, Հայաստան, Վրաստան և այլն)՝ իրենց ենթարկելով մեծաթիվ ժողովուրդների: 1071 թ. Մանազկերտում կրած ջախջախիչ պարտությունից հետո սելջուկյան հորդանների առջև ընկրկում է նաև Բյուզանդական կայսրությունը՝ ստիպված լինելով նրանց զիջել իր փոքրասիական տիրույթները: Մելիք-Շահի մահից հետո սկսվում է Սելջուկյան պետության թուլացման գործընթացը, որն ուղեկցվում է կենտրոնական իշխանությունը միայն ձևականորեն ընդունող փոքր պետական միավորների առաջացմամբ¹: Սրանցից էր նաև Ռումի սելջուկյան

¹ Մեծ Սելջուկյան պետության պատմության վերաբերյալ հարուստ գրականություն կա: Առավել կարևորներից տե՛ս **A.K.S. Lambton**, “The Internal Structure of the Seljuq Empire,” in: *The Cambridge History of Iran*, vol. V (The Seljuk and Mongol Periods), ed. by J.A. Boyle (Cambridge: Cambridge University Press, 1968); *The Seljuqs Politics, Society and Culture*, ed. by **Chr. Lange** and **S. Mécit** (Edinburgh: Edinburgh University Press, 2011) (սելջուկների քաղաքական, սոցիալ-մշակութային պատմությանը նվիրված տարբեր հեղինակների հոդվածների ժողովածու է); **A.C.S. Peacock**, *Early Seljuq History. A new interpretation* (London & New York: Routledge, 2010), ինչպես նաև **նույնի՝ The Great Seljuk Empire** (Edinburgh: Edinburgh University Press, 2015)՝ իրենց մատենագիտությամբ:

սուլթանությունը (1077–1308 թթ.)², որը հիմնադրել է սելջուկ գորավար Սուլթանյան իբն Գիլմուշը (1077–1086 թթ.)՝ Մելիք-Շահ Ա-ի զարմիրկներից մեկը: Սկզբում մայրաքաղաքը Նիկեան էր, ապա՝ Կոնիան: Իզգ ալ-Դին Կիլիչ Արսլան Բ-ի (կառ. 1156–1192 թթ.) երկարատև կառավարման շրջանում Իկոնիայի սուլթանությունը դառնում է տարածաշրջանային լուրջ ուժ, որի գորությունն արդեն բավական էր զսպելու Բյուզանդական կայսրության՝ իր կորցրած փոքրասիական տարածքները վերագրավելու ասորժակը: Մասնավորապես, Միրիոկեֆալոնի 1176 թ. ճակատամարտում բյուզանդացիների կրած պարտությունը, ոչ այնքան ռազմական, որքան ծանր հոգեբանական ազդեցություն թողեց Բյուզանդիայի վրա՝ վերջ դնելով նրա հավակնություններին: Լևոն Մեծագործի իշխանապետության (կառ. 1187–1198 թթ.) և թագավորության (Լևոն Ա արքա, կառ. 1198–1219 թթ.) օրոք Իկոնիան արդեն վտանգավոր թշնամի է դառնում նաև Կիլիկյան Հայաստանի համար³: Ռուքն ալ-Դին Սուլայման-Շահի (կառ. 1196–1204 թթ.) կառավարման շրջանի մասին Իբն Բիբին գրում է.

² Ռումի պատմության վերաբերյալ դասական աշխատությունները հետևյալներն են. **S. Vryonis**, *The Decline of Medieval Hellenism in Asia Minor and the Process of Islamization from the Eleventh through the Fifteenth Century* (Berkeley, CA, 1971); **O. Turan**, *Selçuklar zamanında Türkiye: Siyasi tarih Alp Arslan'dan Osman Gazi'ye 1071–1318* (Istanbul, 1971); **В. Гордлевский**, *Государство Сельджукидов Малой Азии* (Москва-Ленинград, 1941); **Cl. Cahen**, *La Turquie: Зарождение и расцвет* (Paris, 1968); **P. Blessing**, *Rebuilding Anatolia after the Mongol Conquest. Islamic Architecture in the Lands of Rûm, 1240–1330* (New York: Routledge, 2016) (1st ed.: Farnham, Surrey: Ashgate, 2014): *Վերջին տարիներին Ռումի սուլթանության պատմության նկատմամբ սուր հետաքրքրություն կա, և ոչորտի մերօրյա առաջատար մասնագետների՝ թեմայի զանազան ասպեկտներին վերաբերող հոդվածների մի քանի կարևոր ժողովածուներ են հրատարակվել: Տե՛ս օրինակ՝ The Seljuks of Anatolia. Court And Society In the Medieval Middle East, ed. by A.C.S. Peacock and S.N. Yildiz (London-New York: I.B. Tauris, 2013); Islam and Christianity in Medieval Anatolia, ed. by A.C.S. Peacock, B. De Nicola, S.N. Yildiz, Ashgate, Farnham, 2015; Architecture and Landscape in Medieval Anatolia, 1100–1500, ed. by P. Blessing and R. Goshgarian (Edinburgh: Edinburgh University Press, 2017)՝ իրենց մատենագիտություններով: Իկոնիա-Բյուզանդական կայսրություն, Իկոնիա-Նիկիական կայսրություն և առհասարակ թյուրք-բյուզանդական առնչությունների թեմայով հետաքրքիր հետազոտություն է կատարել Դ. Կորոբեյնիկովը: Տե՛ս **D. Korobeinikov**, *Byzantium and the Turks* (Oxford: Oxford University Press, 2014): Պատմագրության և առհասարակ մատենագրական ժառանգության վերաբերյալ հիմնական ուսումնասիրությունների թվարկումը տե՛ս մեր գործընկեր Ռ. Շուքուրովի մի հոդվածում (**P.M. Шукров**, *Образ Киликийской Армении в анатолийских мусульманских источниках (XIII–XIV в.)*, *Կիլիկյան Հայաստանը (2016)*, с. 86, сн. 2), ինչպես նաև է. Փիքոքի վերջերս հրատարակած գիրքը: Տե՛ս **A.C.S. Peacock**, *Islam, Literature and Society in Mongol Anatolia* (Cambridge: Cambridge University Press, 2019):*

³ Հայ-սելջուկյան հարաբերությունների բազմաթիվ դրվագներ քննարկված են Կիլիկյան Հայաստանի պատմությանը նվիրված հայ և օտար հեղինակների տարբեր աշխատություններում՝ սկսած Գ. Ալիշանից: Առանձնապես երկու պետությունների քաղաքական հարաբերությունների վերաբերյալ ուսումնասիրությունները շատ չեն: Առավել կարևորներից տե՛ս **S.N. Yildiz**, “Reconceptualizing the Seljuk-Cilician Frontier: Armenians, Latins, and Turks in Conflict and Alliance during the Early Thirteenth Century,” in: *Borders, Barriers, and Ethnogenesis: Frontiers in Late*

«Իսլամի արքաներն ու սուլթանները, հայոց թաքֆուրները և հոռոմների կայսրերը ուրախութեամբ ընդունում էին այս ազնվական զարմի վսեմութունը և խարաջ ու տուրք (բնագրում՝ bāğ) էին մատուցում [նրա] հարուստ գանձարան»⁴: Չնայած «Ֆիկտիվ» ստորակայությունը՝ Լևոնը ոչ պակաս վտանգավոր հակառակորդ էր հենց Ռումի սելջուկների համար և երբեմն անգամ միջամտում էր նրանց ներքաղաքական գործերին: «Սուլթան [Կիլիչ Արսլանի] մահից հետո,՝ գրում է Միքայել Ասորի պատմիչը,՝ Լևոնը տիրացավ Ռումի երկրի 72 բերդի, որոնց մի մասը թյուրքերից էր վերցրել, մյուս մասը՝ հույներից: Թյուրքերի հետ իր բոլոր պատերազմներում նա հաղթական էր, և սուլթանի որդիներն ապաստան էին գտել նրա մոտ: 1506 (1195) թվականին Աբ-

Antiquity and the Middle Ages (Turnhout: Brepols Publishers, 2005), pp. 91–120, *ինչպես նաև Ռ. Շուքուրովի վերը հիշված հոդվածը* (2016 թ.) մեր համահեղինակությամբ հրատարակված ժողովածուում: Հայ-սելջուկյան հարաբերությունների թեմայով մի քանի հոդված ունի Արամ Հովհաննիսյանը, որոնք, սակայն, լրացնելի են սելջուկյան և առհասարակ մուսուլմանական սկզբնաղբյուրների նյութով: Տե՛ս Ա. Հովհաննիսյան, «Կիլիկյան Հայաստանի եւ Իկոնիայի Սելջուկյան սուլթանության միջև 1218 թ. կնքված հաշտության պայմանագրի շուրջ», *ԲՆՀ (Միջագագային հարաբերություններ, քաղաքագիտություն)*, № 131.6 (Երևան, 2010), էջ 71–78; **նույնի՝** «Կիլիկիայի Հայկական թագաւորութեան եւ Իկոնիայի Սուլթանութեան Յարաբերութիւնների Պատմութիւնից (1220ական թուականներ)», *Բազմավէպ. ՃԿԸ տարի, թիւ 1–2*, 2010, էջ 191–203; **նույնի՝** «Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սուլթանության հարաբերությունների պատմությունից (13-րդ դարի 40-ական թվականներ)», *ԲՆՀ (Միջագագային հարաբերություններ, քաղաքագիտություն)*, № 137.6 (Երևան, 2012), էջ 55–63; **նույնի՝** «Կիլիկիայի հայկական թագավորության և Իկոնիայի սուլթանության հարաբերությունները 1198–1219 թվականներին», «*Էջմիածին*», ԿԸ (Բ) (2012), pp. 83–93: Անշուշտ, արժե հիշատակել նաև հայ-սելջուկյան երկկեզվյան դրամների վերաբերող հետազոտությունները: Տե՛ս P. Bedoukian, “The Bilingual Coins of Hetoum I (1226–1270), King of Cilician Armenia”, *MN (ANS)*, vol. 7 (1957), pp. 219–230, *ինչպես նաև նույնի՝* “A Hoard of Bilingual Trams of Hetoum I of Cilician Armenia”, *MN (ANS)*, vol. 23 (1957), pp. 149–160; **նույնի՝** *Coinage of Cilician Armenia* (New York: The American Numismatic Society, 1962), pp. 84–85, *ինչպես նաև Y.T. Nersessian, Attribution and Dating of Armenian Bilingual Trams*, Armenian Numismatic Society, Special Publication, No. 2 (Los Angeles, 1983), *ինչպես նաև նույնի՝* “Armenian Bilingual Half Trams”, *ANJ*, vol. XXIV (1998), pp. 17–23:

⁴ Տե՛ս **Ibn-i Bībī**, *El-Evāmīrū'l-'Alā'īyye fī'l-umūri'l-'Alā'īyye*, onsöz ve fihristi hazirliyan A.S. Erzi (Ankara: Türk Tarih Kurumu Basimevi 1956), §. 76 (*հետայսու՝ Ibn-i Bībī*, *El-Evāmīrū'l-'Alā'īyye*): Համառոտ տարբերակում այս միտքը քիչ այլ կերպ է ձևակերպված. «Սեփարթեի նվաճումը, որն Արևմուտքի ծովի ափերի մեծագույն ամրոցներից մեկն էր, իրականություն դարձավ այս աստվածապահ պատանու իշխանության օրերին, և իսլամի արքաները, Հոռոմների կայսրերը, թաքֆուրները, վրացիները, հնազանդ էին նրան, և նախկինի պես տարբեր տեղերից ընծաներն ու հարկերը հոսում էին [սուլթանական] գանձարան»: Տե՛ս *Recueil de Textes Relatifs à l'Histoire des Seldjoudes par M.Th. Houtsma*, vol. IV, *Histoire des Seldjoudes d'Asie Mineure d'après l'abrégé du Seldjoudenâmeh d'Ibn-Bībī* (Leiden: E.J. Brill, 1902) (*հետայսու՝ Ibn Bībī*, Muhtasar), §. 24: *Բնագրում* ընթերցած al-durğ-ը Մ.Թ. Հաուսման առաջարկում է ուղղել al-kurğ (այն է՝ վրացիներ), մինչդեռ մեր կարծիքով բառը գուցե arman բառի (*ինչպես որ ամբողջական տարբերակում է*) գրչական սխալագրությունն է:

լասթայնի տեր (Էլբիստան, հայ.՝ Ապլստա, Ապլսթայն) [Մուղիս ալ-Դին Թող-րուլ Շահը] գնաց և իր հավատարմությունն առաջարկեց նրան: Ապա Լևոնն արշավեց Կեսարիայի տիրոջ դեմ, հաղթեց նրան և նրանից Կեսարիայի մերձակայքի մի բերդ խլեց»⁵:

Ռումի սուլթանությունն իր ծաղկման բարձրակետին է հասել Ալա ալ-Դին Քայկուբադ Ա-ի (կառ. 1220–1237 թթ.) օրոք, երբ հայոց Հեթում Ա արքան (կառ. 1226–1269 թթ.) նույնպես ստիպված է եղել գոնե ձևականորեն ընդունել նրա գերիշխանությունը, նրա պատկերով երկլեզվյան դրամներ է հատել, զորախմբեր է ուղարկել նրա ռազմական ձեռնարկումներին մասնակցելու համար, վճարել է հարկ: Երկլեզվյան դրամների հատումը շարունակվել է նաև Քայկուբադի որդի և հաջորդ Դիյաս ալ-Դին Քայխուսրով Բ-ի (կառ. 1237–1246 թթ) օրոք: Նրա կառավարման վերջին տարիներին անկասելի հաղթարշավով տարածաշրջան են խուժել մոնղոլական բանակները: Արագ կողմնորոշվելով ստեղծված նոր ռազմաքաղաքական բարդ իրավիճակում՝ Հայոց ռազմավարչական վերնախավը՝ ի դեմս Հեթում արքայի, Սմբատ Գունդստաբլի և Թագավորահայր Կոստանդին պալլի, վճռել է դրժել օժանդակ զորքերով սելջուկներին օգնության հասնելու իր ստանձնած պարտավորությունը և ինքնակամ ընդունել հպատակությունը նոր նվաճողներին՝ իր երկիրն այդու գերծ պահելով նրանց ավերիչ ներխուժումից: Զուր չէ, որ ժամանակակից հիշատակագիրներից մեկն ուրախությամբ արձանագրել է. «Արդ, ի սոյն այս բազմավրդով ժամանակի, ի ձեռն վերոյ նշանակեալ Թագաւորին Հեթմոյ խորագէտ իմաստութեան և նախահոգակ հանճարեղութեան, մեք մնամք ի խաղաղութան՝ որպէս կղզի ինչ ի յալեաց մնացեալ յանդորր»⁶: Թերևս հարկ է, որ կրկին մի հատված մեջբերենք ալ-Ումարիի վերը վկայաբերված հաղորդումից, որում մամլուքյան հեղինակը փորձում է բնութագրել Ռումի սուլթանությունից Կիլիկյան Հայաստանի ունեցած «ստորակայական կախվածության» բնույթն ու առանձնահատկությունները. «Եվ վերջապես նրանց հպատակությունը Ռումի

⁵ *Stéu Chronique de Michel le Syrien*, patriarche jacobite d'Antioche 1166–1199, éditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III, Ernest Leroux, Paris, 1905, p. 411, *ինչպես նաև The Syriac Chronicle of Michael Rabo (The Great). A Universal History from the Creation*, eng. trans. by Matti Moosa, Beth Antioch Press, Teaneck, NJ, 2014, p. 735 և **Bar Hebraeus**, *Chronography*, p. 344: *Սուլայման-Շահի կառավարման շրջանի վերաբերյալ առանձին հոդված ունի Ա. Սավվիդեսը: Stéu A.G.C. Savvides*, “Suleyman Shah of Rûm, Byzantium, Cilician Armenia and Georgia (A.D. 1197- 1204)”, *Byzantion* 73, № 1 (2003), pp. 96–111: *1201 թ. սկսած Անտիոքի գահաժառանգության խնդրին Լևոնի միջամտությունը շատ շուտով նրա դեմ ձևավորում է թշնամաբար տրամադրված հարևանների «եռյակ դաշինք»՝ ի դեմս Անտիոք-Տրիպոլիի կոմսության, Ռումի սուլթանության և Հալեպի սուլթանության:*

⁶ **ՀԶԶ, ԺԳ դար**, էջ 233:

սելջուկյան արքաների մնացած մասի նկատմամբ էր, և նրանց վրա [գլխա]-հարկ ու [բոլորին] հայտնի հնազանդություն կար սահմանված, և սելջուկյան արքայի կողմից երկրի վրա գործակատար-վերակացուներ կային կարգված, մինչև որ թուսացավ այդ [սելջուկյան] պետությունը: ...Այս ամենն այն էր, ինչին տենչում էր այդ անիծյալը, և նրա թռչնակը արծվի վերածվեց, ու հաճախացան նրա երդմնազանցությունները, առանց պահապան մնացած հոտ տեսնելով՝ [իր մոտ] քշեց-տարավ, առանց հսկիչ մնացած ապրանքներ տեսնելով՝ դրանցով իր ծանրոցը լցրեց, և նա գրավեց այս երկրներն ու տիրեց դրանց և [աստիճանաբար] նվազեցնելով սելջուկների ժառանգությունը՝ [վերջնականապես] յուրացրեց այն»⁷:

Մինչդեռ մոնղոլների հետ առճակատման գնացած Ռումի սուլթանության ճակատագիրն այլ կերպ է դասավորվում: 1243 թ. Քյոսեդաղի (Չմանկատուկի) ճակատամարտում նրանցից կրած ծանր պարտությունից հետո Սուլթանությունն իր գոյության հետագա տարիներին արդեն հարկադրված էր ընդունել իր անվերապահ վասալությունը մոնղոլներին: Ժամանակի ընթացքում երկրի փաստական իշխանությունը կենտրոնանում է մոնղոլների կողմի նշանակված վերատեսուչների ձեռքին, և սուլթանների իշխանությունը հետզհետե ձեռք է բերում սոսկ խորհրդանշական բնույթ:

Ի տարբերություն Մամլուքյան սուլթանության՝ Ռումի սելջուկյան սուլթանության և հարակից երկրների տիրակալների դիվանագիտական նամակագրության, Իկոնիայի դիվանատների աշխատանքի, դեսպանընկալության և դեսպանագնացության արարողակարգի մասին հետազոտությունները շատ չեն: Իկոնիայի սուլթանության պատմության ուսումնասիրողներից Կլոդ Կահենն, օրինակ, իր *La Turquie pré-ottomane* հիմնարար աշխատության մեջ ընդամենը երկու էջ է հատկացրել այդ թեմային⁸: Սուլթանության և Վենետիկի միջև 1220 թ. կնքված և մեզ հասած առևտրական համաձայնագրի քննություն է կատարել Մ. Մարտինը⁹:

Ռումի սուլթանների և հայոց արքաների պաշտոնական նամակագրության արարողակարգի մասին ճիշտ է սուղ, բայց բավական հետաքրքրական տեղեկություններ կան ինչպես ժամանակի հայալեզու, այնպես էլ Ռումի սուլթանության պարսկալեզու պատմագրական գրականության մեջ: Առկա են

⁷ Հղումը տե՛ս վերևում:

⁸ Cl. Cahen, *La Turquie*, p. 188: Ռումի սուլթանության արքունի գործակալությունների՝ այդ թվում դիվանատան մասին տե՛ս նաև D. Korobeinikov, *Byzantium and the Turks*, pp. 84–88:

⁹ M.E. Martin, “The Venetian-Seljuk Treaty of 1220”, *EHR*, vol. 95, № 375 (April), 1980, pp. 321–330.

նաև վկայություններ երկու պետությունների տիրակալների միջև դիվանագիտական ընթացքների փոխանակության վերաբերյալ: Այժմ այս մասին ավելի մանրամասն:

Ռումի սուլթանության դիվանատանը, որ *dīwān-i tuğrā'* (արաբերեն *dīwān al-inšā'*-ի համարժեքը) էր կոչվում, պաշտոնական գրագրության լեզուն պարսկերենն էր: Պարսկերենով էին սովորաբար կազմվում սելջուկյան սուլթանների պաշտոնական նամակները և այլ վավերագրերը¹⁰: Այնուամենայնիվ, օտարերկրյա միապետներին երբեմն նամակներ կարող էին հղվել նաև նրանց լեզվով: Օրինակ, մեզ են հասել Իզզ ալ-Դին Քալկավուս Ա սուլթանի անունից գրված հունարեն նամակներ, ինչը վկայում է սելջուկյան դիվանատանը հույն նոտարների ծառայության մասին¹¹: Այս մասին վկայող այլ փաստեր էլ կան: Օրինակ, Ռումի սուլթանների պաշտոնական պատմիչ Իբն Բիբին, ում մասին ներքևում քիչ ավելի հանգամանալից կխոսենք, իր երկում, երբ պատմում է Տրապիզոնի կայսր Ալեքսիոս Ա Մեգաս Կոմնենոսի (կառ. 1204–1222 թթ.) և Իզզ ալ-Դին Քալկավուսի միջև 1214 թ. կնքված հաշտության պայմանագրի մասին, հիշատակում է *nūtārān-e dīwān-e saltānat*-ի («սուլթանական դիվանատան նոտարներ») մասին՝ ակնհայտորեն նկատի ունենալով հենց հունական գրասենյակի ատենագիրներին¹²: Բյուզանդական ծագման սելջուկահպատակները շատ հաճախ բարձր դիրք և պաշտոն են զբաղեցրել ոչ միայն Ռումի ռազմավարչական համակարգում, այլ նաև դիվանատանը և «դիվանագիտական կորպուսում»: Հայտնի է, օրինակ, որ Քալկավուս Ա-ից 1216 թ. Կիպրոսի

¹⁰ Այս առիթով արժանահիշատակ է մի հետաքրքիր սկզբնաղբյուրային փաստ: Իբն Բիբի պատմիչը գրում է, որ երբ թուրքմեն Կարամանյանները իրենց առաջնորդ Մեհմեդ-Բեգի գլխավորությամբ 1277 թ. անակնկալ կերպով գրավում են Կոնիան, նրանք թուրքերենը հռչակել են որպես հաղորդակցության բոլոր ձևերի պաշտոնական լեզու՝ պարսկերենի և արաբերենի փոխարեն: Չնայած, ինչպես է. Փիքոքն է կարծում, պատմիչի այս վկայությունը կարելի է բացատրել նաև Կարամանյան ապստամբներին վատ լուսի ներքո ներկայացնելու նրա ցանկությունով, որոնք հանդգնում էին արգելել պարսկերենը՝ մշակույթի և քաղաքակրթության լեզուն՝ փոխարինելով այն գրական ցածր արժեք և վարկ ունեցող թուրքերենով: Տե՛ս A.C.S. Peacock, *Islam, Literature and Society in Mongol Anatolia* (Cambridge: Cambridge University Press, 2019), pp. 147–148: Մեհմեդ-Բեգի «լեզվական ռեֆորմը» բարձր է գնահատվում արդի թուրքիայի ազգայնական գաղափարախոսություններում՝ նրան համարելով «թուրքերենի պաշտպան» և «թուրքականության խորհրդանիշ»: Տե՛ս S.N. Yildiz, “Karamanoğlu Mehmed Bey: Medieval Anatolian Warlord or Kemalist Language Reformer? History, Language Politics and the Celebration of the Language Festival in Karaman, Turkey, 1961–2008,” in: *Religion, Ethnicity and Contested Nationhood in the Former Ottoman Space*, ed. by J. Nielsen (Leiden-Boston: Brill, 2012):

¹¹ Cl. Cahen, *La Turquie*, p. 186–187.

¹² W.H. Duda, *Die Seltschukengeschichte des Ibn Bibī Munksgaard*, Kopenhagen, 1959, S. 67; S. Vryonis, *The Decline*, p. 233; P.M. Шукров, *Великие Комнины*, с. 100–101; D. Korobeinikov, *Byzantium and the Turks*, p. 86.

Թագավորին ուղարկված դեսպանը ազգությամբ հույն «Կիո Ալեքսիոս» հոր-ջորջված մեկն էր¹³: Կրոնական և ֆինանսական փաստաղթերի, վիճաբար արձանագրությունների, սելջուկյան փողերանոցներից դուրս եկած դրամների նշագրությունների լեզուն էլ սովորաբար արաբերենն էր¹⁴: Սուլթանական դիվանում գրագիրների (kātib-ների կամ munši'-ների) պատրաստած փաստաթղթերը վավերացվում էին հատուկ տարբերակիչ նշանով, որ tuğrā' էր կոչվում (այստեղից էլ դիվանատան անվանումը): Փաստաթուղթը կնիքով հավաստագրելու գործողությունը վերապահված էր tuğrā'-ին, ով երբեմն malik al-kuttāb («գրագիրների արքա») տիտղոսով էր կոչվում: Նա արքունի դիվանատան գլխավոր քարտուղարն էր՝ դիվանապետը կամ ատենապետը (արաբ.՝ šāhib dīwān al-insā')¹⁵: Արքունիքում գրագիրներից բացի եղել են նաև թարգմանիչներ (tarğumān), որոնք, ըստ Դ. Կորոբեյնիկովի, ինչպես որ օտար միապետների հետ գրագրության համար պատասխանատու այլազգի (օրինակ՝ հույն, հայ) նոտարները, գործել են ոչ թե դիվանապետի, այլ պետական վեզիրի վերահսկողության ներքո՝ վեզիրի դիվանում (dīwān-i saltānat կամ dīwān-i a'lā կամ dīwān-i bozorg), քանի որ հենց նա էր արտաքին հարաբերությունների վարման պատասխանատուն¹⁶:

Որոշ փաստեր կան ենթադրելու, որ Ռումի սուլթանության դիվանատանը արաբերենին, պարսկերենին և հունարենին տիրապետող գրագիրների հետ միասին ծառայել են նաև քրիստոնյա այլ՝ այդ թվում հայ ատենադպիրներ, որոնք զբաղվել են Կիրիկիո հայոց թագավորներից սելջուկ սուլթաններին հասցեագրված, և հակառակը՝ սուլթաններից հայոց միապետներին ուղղված պաշտոնական նամակներով, պատրաստել երկու երկրների քաղաքական հարաբերությունների վավերագրերը (օրինակ՝ պայմանագրերը): Բնավ չենք կարծում, թե հայոց արքաների հետ գրագրությունն ամբողջությամբ տարված լինի հայերենով: Թեև հստակ փաստ չունենք, այնուհանդերձ, կարող ենք ենթադրել, որ երկու տիրակալների պաշտոնական նամակագրության մեծագույն մասը կատարվել է որևէ միջանկյալ լեզվով: Այդ դեպքում որպես lingua franca հազիվ թե կարող էր հանդես գալ պարսկերենը: Շատ ավելի հավանական է հունարենի տարբերակը, որին տիրապետողների պակաս հայոց արքունիքում և դպրատներում վստահաբար չկար: Որոշ առանձին դեպքերում՝ հատուկ առիթներով միայն սուլթանները կարող էին օգտվել իրենց հայազգի

¹³ S. Vryonis, *The Decline*, p. 231–244.

¹⁴ Cl. Cahen, *La Turquie*, p. 187.

¹⁵ Տե՛ս Անդ, էջ 186; В. Гордлевский, *Государство Сельджукидов*, с. 138–141; D. Korobeinikov, *Byzantium and the Turks*, p. 86:

¹⁶ D. Korobeinikov, *Byzantium and the Turks*, p. 86.

ատենագիրների ծառայություններից, օրինակ, երբ երկլեզու համաձայնագրերի տեքստերի համաձայնեցման անհրաժեշտություն էր լինում:

Բյուզանդագետ-թյուրքագետ Դմիտրի Կորոբեյնիկովն իր մի հոդվածում այդպես մտածելու բավական հիմնավոր փաստ է մատնանշել: Նա ուշադրություն է հրավիրել Իկոնիայում՝ մասնավորապես Կեսարիայում, հայ գրչի ձեռքով գաղափարված մի հունարեն ավետարանի¹⁷ երկլեզու՝ հունարեն և հայերեն հիշատակարանների վրա¹⁸ (տե՛ս Պատկեր 6, Պատկեր 7): Հայերեն հիշատակագրությունները երկուսն են: Մեկում ասվում է. «Ձվասիլ գրիչ յիշեսչիք առ Քրիստոս, զի եւ դուք յիշեալ լիջիք»: Երկրորդում կարդում ենք. «Գրեցաւ եւ կատարեցաւ Աւետարանս ձեռամբ իմով Վասլի դպրապետիս ի Մելիտինոյ որդոյ Առեսաի քահանայի, թվին ՈՂՆ (1226), յամսեան մայիս, ի պէտս անձին իմոյ եւ յիշատակ հոգոյ, ի կամս Քրիստոսի»¹⁹:

Ներսես Ակինյանը «Հանդէս ամսօրեայ»-ի էջերում դեռ 1908 թ. հայերեն է թարգմանել ավետարանի հունարեն հիշատակարանը, որը քիչ ավելի ինֆորմատիվ է հեղինակի անձի մասին. «Ավարտեցավ շորք Աւետարանք քարոզացն Աստուծոյ, մեծացն չորից աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Լուկասու եւ Յովհաննու ձեռամբ իմով Վասլի դպրապետի Մելիտինեցոյ, որդոյ Ուրեստէսի քահանայի, ի ժամանակին, յորժամ նուաճեաց մեծն սուլթան»²⁰ Քէյկուբադ, որդին Դիաթեդինի Քէյ Խոսրովու զՅունաստան²¹, զՀայաստան,

¹⁷ Ձեռագիրն այժմ գտնվում է Աթենքի Գեննադիուսի գրադարանում՝ *Gennadius Ms. I.5* համարի ներքո:

¹⁸ Տե՛ս **D. Korobeinikov**, “A Greek Orthodox Armenian in the Seljukid Service: The Colophon of Basil of Melitina,” in: *Mare et litora. Essays Presented to Sergei Karpov for his 60th Birthday*, ed. by R. Shukurov (Moscow: Indrik, 2009), pp. 709-724: Այս ձեռագրի մասին առաջին անգամ խոսվել է ավելի քան մեկ դար առաջ: Տե՛ս **E. Zomarides**, “Eine neue griechische Handschrift aus Caesarea vom J. 1226 mit armenischer Beischrift”, *Studien zur Palaeographie und Papyruskunde 2* (Leipzig: Verlag von E. Avenarius, 1902), S. 21–24: Դ. Կորոբեյնիկովից առաջ հայ գրչի ընդօրինակած ձեռագրի մասին իր հիմնարար աշխատության մեջ հիշատակել է Ս. Վրիոնիսը: Տե՛ս **S. Vryonis**, *The Decline*, p. 470, n. 95: Ձեռագրի նկարագրությունը տե՛ս **A. Mitsani**, “The illustrated Gospelbook of Basil Meliteniotes (Caesaria, 1226)”, *Delition tes Christianikes Archaialogikes Hetaireias*, 4th ser. 26 (2005), p. 149–164 (in Greek); *Exploring Greek Manuscripts in the Gennadius Library (Gennadeion Monographs VI)*, ed. by **M.L. Politi** and **E. Pappa**, tr. by J.C. Davis and E.K. Fowden, American School of Classical Studies at Athens in collaboration with the Greek Paleographical Society (Princeton, NJ, 2011), pp. 14–16.

¹⁹ **ՀԶԶ, ԺԳ դար**, էջ 145:

²⁰ Հետաքրքիր է, որ Ն. Ակինյանի թարգմանությունից ընկել է բնագրում «մեծն սուլթան»-ին նախորդող «իմ սուրբ տիրակալ» (άγιος αὐθέντης) արտահայտությունը, որից մակաբերելի է, որ գրիչը հիշյալ սուլթանի ենթակայության կամ ծառայության ներքո էր:

²¹ Բնագրում Փωμάνιαν է՝ «Ռոմանիա», որն ավելի ճիշտ կլիներ «Ռում» կամ «Բյուզանդիա» թարգմանել: Սրանով Իկոնիայի սելջուկյան սուլթանները նկատի ունեին նախկինում Բյուզանդիային պատկանած այն տարածքները, որոնք այժմ իրենց օրինական սեփականություն էին համարում: Իկոնիայի սելջուկյան սուլթաններին վերագրված տիրոջանքի մասին հոդված ունի Դ. Կորոբեյնիկովը: Տե՛ս **D. Korobeinikov**, “‘The King of the East and the West’: The Seljuk

զԱսորիս, եւ զամենայն տեղիս եւ զգալառս Թուրքաստանի եւ զծովու, մինչեւ ի մեծն Կեսարիա. եւ որք հանդիպիք այսմ Աւետարանիս կամ օրինակէք կամ ընթեռնութիւնք, յիշեսցիք զիս զբազմասխալս զՎասիլ եւ զԾնողս իմ ի Տէր հանգուցեալ զՈվրեստէս քահանայ եւ զմայրն իմ զՍոփիա, եւ ընդ այսր ողորմեսցի Ձեզ ամենեցուն ամենասուրբն Աստուած, պահեսցէ անվնաս իւրով մարդասիրութեամբն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամեն: Գրեցաւ ի թուին աշխ. ՅՁԼԴ (1226) եւ յԻնդիկտ. ԺԴ., յամսեանն Մայիսի ա»²²:

Վերլուծելով գրիչի մասին հիշատակագրութեան մեջ առկա սուղ տեղեկութիւնները և համեմատելով հունարեն հիշատակարանում նրա օգտագործած ձևակերպումները (օրինակ՝ սելջուկ սուլթանին վերագրված տիտղոսը, նրանում տեղ գտած սխալագրութիւնները, որոնք հավանաբար արդյունք էին հունարենի ոչ այնքան լավ իմացութեան) սուլթանական դիվանատանից դուրս եկած և քրիստոնյա տիրակալներին ուղղված այլ վավերագրերի հետ՝ Դ. Կորոբեյնիկովը եզրակացրել է, որ Վասիլ գրիչը, որն ամենայն հավանականութեամբ հունադավան էր՝ քաղկեդոնական եկեղեցու հետևորդ, ծառայել է սուլթանական դիվանատան Կեսարիայի գրասենյակում՝ որպէս հայ գրագիրների քարտուղար՝ այլ կերպ ասած՝ գլխավոր նոտար, ինչպէս հունարեն հիշատակարանում է՝ պրոտոնոտար (πρωτονοτάριος): Հետևաբար, որոշ հիմքեր կան ենթադրելու, որ Կիլիկիո հայոց արքաների հետ դիվանագիտական շփումը Ռումի իշխանութիւնները կարող էին ըստ անհրաժեշտութեան վարել նաև հայերենով՝ օգտագործելով իրենց դիվանատան հայազգի և հայերենին տիրապետող ծառայողներին²³: Այս ծառայողները կարող էին նաև թարգմանչական ծառայութիւններ մատուցել արքունիքին հայազգի պատվիրակներին ընդունելութեան ժամանակ:

Անշուշտ, չպետք է մոռանալ, որ հիշատակարանի գրութեան ժամանակ Իկոնիայում հոծ հայկական համայնք կար՝ իր եպիսկոպոսական աթոռով: Հայտնի է, որ 1201 կամ 1203 թ. Սեբաստիայի արքեպիսկոպոս Անանիան (մահ. 1227 թ.), հրաժարվելով ընդունել Գրիգոր Զ Ապիրատի (1194–1203 թթ.) կամ նրա մահից հետո հայրապետական գահը ստանձնած Հովհաննես Զ Սսեցու իշխանութիւնը (1203–1220 թթ.), Ռումի Ռուքն ալ-Դին Սուլայման-Շահ Բ-ից հոգևոր իշխանութեան տվչութիւն է խնդրել՝ ինքնահռչակվելով ոչ միայն

Dynastic Concept and Titles in the Muslim and Christian Sources,” in: *The Seljuks of Anatolia. Court and Society in the Medieval Middle East* (հետայսու՝ *The Seljuks of Anatolia*), ed. by A.C.S. Peacock & S. Nur Yildiz (London-New York: I.B. Tauris, 2013), pp. 68–90:

²² **Հ.Ն. Ակինյան**, «Հայերէն յիշատակարան մը (ԺԴ. դարէ) յունարէն աւետարանի մը մէջ», ՀԱ, № 7 (հուլիս) (1908), էջ 220:

²³ **D. Korobeinikov**, “A Greek Orthodox”, pp. 710–713.

Ռումի հայություն, այլև հայոց եկեղեցու հակաթոռ կաթողիկոս՝ նստավայր ունենալով Կեսարիան (և մի ինչ-որ ժամանակ՝ Սեբաստիան)²⁴:

Գ2. Իբն Բիբիի երկը.

Հայ-սելջուկյան պաշտոնական գրագրության մասին որոշ ուշագրավ փաստեր կարելի է քաղել Ռումի սելջուկյան սուլթանների պաշտոնական պատմիչ Նասիր ալ-Դին Հուսայն իբն Մուհամմադ իբն Ալի ալ-Ջաֆարի ալ-Ռուզազիի կամ Իբն Բիբիի «Սելջուկնամե» կամ Al-Awāmir al-‘Alā’iyya fī l-umūr al-

²⁴ Իր տերության սահմաններում հայոց եկեղեցու հակաթոռ կաթողիկոսություն ունենալն, անշուշտ, ձեռնտու էր Ռումի իշխանություններին: Դա խարխուլում էր հայոց եկեղեցու միասնականությունը, հետևաբար և կարևոր խաղաքարտ էր հայոց աշխարհիկ իշխանությունների հետ իրենց հարաբերություններում: Արքեպիսկոպոս Անանիայի գործունեությունը նվիրված հոդված է հեղինակել Հ. Պէրպէրեանը: Տե՛ս Հ. Պէրպէրեան, «Անանիա հակաթոռ կաթողիկոս 1201–1211 (1223?)», Սիոն (Երուսաղեմ, 1964) (հոկտեմբեր), էջ 286–289 և **նույնի՝** «Անանիա հակաթոռ կաթողիկոսի մահուան թուականը», Սիոն, Երուսաղեմ, 1965 (սեպտեմբեր), էջ 317–318, ինչպես նաև վերջիններիս ֆրանսերեն թարգմանությունը՝ **H. Berberian**, “Le patriarcat armenien du Sultanat de Roum, l’anti Catholico Anania”, *REArm*, t. 3 (1966), pp. 233–243: Վերջերս Անանիային նվիրված հոդված է հեղինակել նաև Կ. Մաթևոսյանը: Տե՛ս Կ. Մաթևոսյան, «Ռումի սուլթանության հակաթոռ կաթողիկոս Անանիան», *ԲՄ* 34 (2022), էջ 22–39: Իկոնիայի այս ժամանակվա հայ համայնքի կյանքի և կարգավիճակի մասին ուշագրավ տեղեկություններ կան ԺԳ դարի մի անանուն հեղինակի «Վկայաբանություն Թեոդորոսի Կեսարացույ» նահատակագրության մեջ, որում պատմվում է Կեսարիայի բնակիչ Թեոդորոս անունով մի հայի մասին, ով մուսուլմանին ունեցած պարտքը շմարելու պատճառով դատարան է ընկնում: Մուսուլման կադիին նրան պարտավորեցնում է վճարել պարտքը: Պարտապանի հալածանքներից ազատվելու համար նա ձևականորեն իսլամ է ընդունում, բայց հետո հեռանալով Կեսարիայից՝ կրկին սկսում է ապրել որպես քրիստոնյա: Կեսարիացի մի մուսուլման ճանաչում է նրան և մեղադրում կրոնորացության մեջ: Նրան ներկայացնում են սուլթան Ռուբն ալ-Դինին, ով իր հերթին հարցը դնում է կադիի իրավասության ներքո: Վերջինս ո՛չ նվերներով, ո՛չ ոսկով, ո՛չ սպառնալիքներով իսլամ դավանելու հարցում ամբաստանյալին համոզել չկարողանալով՝ ի վերջո նրան դատապարտում է մահվան՝ քարկոծման միջոցով (նահատակության օր՝ 1204 թ. մայիսի 18): Այս մասին իմանալով՝ սուլթան Ռուբն ալ-Դինը թույլ է տալիս Անանիային հողին հանձնել Թեոդորոսի մարմինը: Քննական բնագիրը տե՛ս Հայոց նոր վկայները (1155–1843), աշխատութեամբ **Յ. Մանանդեանի** և **Հ. Աճառեանի** (Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1903), էջ 73–93: Թեոդորոս Կեսարացու վարքը տեղ է գտել նաև Յայսմաուրթ ժողովածուում: Տե՛ս Յայսմաուրթ ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաուրթաց Տէր Իրայէլի (Կոստանդնուպոլիս, ի տպ. Պօղոսի Արապեան Ապուլեխցույ, 1834), էջ 224–225: Ուսումնասիրությունն ու ընդարձակ մատենագիտությունը տե՛ս **P. Cowe**, “Martyrology of T’ēodoros Kesarac’i,” in: *Christian-Muslim Relations. A Bibliographical History*, vol. 4 (1200–1350), ed. by D. Thomas, A.Mallett et al. (Leiden-Boston: Brill, 2012), pp. 94–97: Ռումի հայության մասին տե՛ս նաև **S.P. Cowe**, “The Armenian community of the Konia region in the Seljuk period,” in: *Armenian communities of Asia Minor*, ed. by R.G. Hovannisian (Costa Mesa, CA: Mazda Publishers, 2014), pp. 89–106:

Alā'yya²⁵ պարսկալեզու երկից: Իբն Բիբին իր երկը գրել է Իլխանուլթյան պատմիչ Ալա ալ-Դին Ատա Մալիք իբն Մուհամմադ Ջուվայնիի (մահ. 1283 թ.) հորդորով (այստեղից էլ երկի վերնագիրը՝ «[Ի կատարումն] Ալա [ալ-Դին Ջուվայնիի] կարգադրությունների՝ Ալա [ալ-Դին Քայկուբադի] գործերի մասին»):

²⁵ Իբն Բիբիի ժամանակագրությունը մեզ է հասել երկու տարբերակով՝ ամբողջական և համառոտ (Muhtaşar): Երկի համառոտ տարբերակը 1902 թ. հրատարակել է Մ.Թ. Հաուսման, որը վերևում արդեն հղել ենք: Այս հրատարակությունից հայերին վերաբերող որոշ հատվածներ է քաղել և թարգմանել Հ. Մասսեն դեռ 1929 թ.: Տե՛ս **H. Massé**, “Le Sultan Seldjoukide Keykobod I^{er} et l’Arménie (Documents Persans)”, *RÉArm*, t. IX, fasc. 1 (Paris, 1929), p. 113–129; Muhtaşar-ը վերահրատարակվել է նաև Թեհրանում Մ.Ջ. Մաշքուրի կողմից: Տե՛ս **Ahbar salāḡeq Rūm bā-matn kāmel Mohtaşar Salḡūq-nāme Ibn Bībī**, be-ehthemām **Moḡammad Ġawād Maškūr** (Tehrān, 1971): Համառոտ տարբերակը գերմաներեն է թարգմանել Վ. Դուրան: Այդ հրատարակությունն արդեն ծանոթագրել ենք վերևում: Այս հրատարակությունից հայերին վերաբերող հատվածները քաղել ու հայերեն է թարգմանել Հ. Պողոս Տեր-Պողոսյանը: Խոսքը, սակայն, ոչ թե բառացի, այլ վերաշարադրական թարգմանության մասին է, որից տեքստի որոշ շատ կարևոր մանրամասներ դուրս են մնացել: Տե՛ս **Հ.Պ. Տեր-Պողոսյան**, «Հայաստան իբն Բիբիի համեմատ», ՀԱ (1960), № 4-6 (ապրիլ-հունիս), էջ 10–12, 162–177, № 10–12 (հոկտեմբեր-դեկտեմբեր), էջ 482-492: Դուրաչյի հրատարակությունը վերջերս հիմք է դարձել համառոտ տարբերակի ևս մի ուսումնասիրության և թարգմանության: Տե՛ս **M. Balivet, H.L. Pezechki, R. Mounier**, *Les Turcs seldjoukides d’Anatolie XIe-XIVe siècle. Une anthologie des sources premières (Vol. 1 Les sources persanes, Ibn Bībī)* (Aix-en-Provence: Presses universitaires de Provence, 2017): «Սելջուկյան»-ի ամբողջական տարբերակը, որը մեզ է հասել Թուրքիայի Այա Սոֆիայի գրադարանի եզակի ձեռագրով (*MS Aya Sofya* 2985, տե՛ս Պատկեր 8) ֆաքսիմիլե եղանակով հրատարակվել է միայն 1956 թ. (նույնպես արդեն հղել ենք վերևում): Մեկ տարի անց իրագործվել է նաև երկի առաջին կեսի շարվածքային հրատարակությունը (ընդգրկում է մինչև 1219 թ. իրադարձությունները): Տե՛ս **Ibn-i Bibi**, *El-evāmürü’l-’alā’iyye fi’l-umürü’l-’alā’iyye*, yayına hazırlayan **N. Lugal, A.S. Erzi** (Ankara: Türk Tarih Kurumu Basımevi, 1957): Երկի ամբողջական տարբերակի լիակատար քննական հրատարակությունն իրականություն է դարձել միայն 2011 թ.: Տե՛ս **Al-Awāmīr al-’Alā’iyya fi l-umūr al-’Alā’iyya ma’rūf be-tārīḡ Ibn Bībī**, be-taḡhīḡ Zāle Mottaheddīn (Tehrān, 2011, հետալսու՝ **Ibn Bībī**, *Al-Awāmīr* (Tehrān): Ուստի սույն աշխատանքը գրելիս օգտվել ենք և՛ քննական և ֆաքսիմիլե հրատարակություններից՝ զուգահեռաբար ձեռքի տակ ունենալով նաև Մ.Թ. Հաուսմանյի հրատարակած համառոտ տարբերակը: Հատկանշական է, որ երկի ամբողջական տարբերակը մինչ օրս հազվագեղ է օգտագործվել որպես Կիլիկյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուր՝ թերևս միայն Ս.Ն. Յիլդիզի և Ռ. Շուքուրովի վերոհիշյալ աշխատանքներում, այն էլ՝ ոչ բոլոր մանրամասներով: Սրա պատճառով երկը մինչ օրս մեզանում, ինչպես հարկն է, արժևորված չէ, և նրա շատ հաղորդումներ անհայտ են հայագետներին: Երկի հայերեն քաղվածական թարգմանությունն իսկական նվեր կլիներ ոլորտի մասնագետներին:

Պետք է նշել, որ մեզ է հասել նաև երկի ամբողջական տարբերակի օսմաներեն խմբագրությունը: Սուլթան Մուրադ Բ-ի (1421–1451 թթ.) օրոք և հավանաբար վերջինիս հորդորով Յագիջի-օղլու (Յագիջի-գադե) Ալին ձեռնամուխ է եղել սելջուկների պատմության շարագրմանը՝ գրելով իր *Tawārīḡ āl-i Salḡūq* («Սելջուկյան զարմի պատմություն») կամ («Օղուզ-նամե») երկը: Այս ժամանակագրության մասերից մեկն իբն Բիբիի երկի թարգմանությունն է՝ որոշ հավելումներով և համառոտումներով՝ առանց հեղինակի անվան հիշատակության: Այն նույնպես մասամբ հրատարակել է Մ.Թ. Հաուսման: Տե՛ս *Recueil de Textes Relatifs à l’Histoire des Seldjoucides par M.Th. Houtsma*, vol. III, *Histoire des Seldjoucides d’Asie Mineure d’après Ibn-Bībī (texte turk)*, publié d’après les Mss. De Leide et de Paris (Leide: E.J. Brill, 1902):

Իբն Բիբիի հայրը՝ Մաշդ ալ-Դին Մուհամմադ Թարջումանը («Թարգման») գրագիր է աշխատել Ջալալ ալ-Դին Խորեզմշահի դիվանատանը: Վերջինիս մահից հետո Մաշդ ալ-Դինն իր ընտանիքը տեղափոխել է Ասորիք, մի կարճ ժամանակ ծառայել Դամասկոսի Այյուբյաններին, ապա որպես թարգմանիչ ծառայության անցել Ռումի սելջուկների արքունիքում: Պատմիչի հորից ավելի անվանի էր մայրը՝ Բիբի Խաթունը, որը հուշակավոր աստղագուշակ էր և ամուսնու հետ ծառայել է Ջալալ ալ-Դինի, Այյուբյանների և Իկոնիայի սելջուկների արքունիքներում: Հատկանշական է, որ պատմիչը հենց մոր անունով է կոչվել Իբն Բիբի ալ-Մունաշխիմա: Իբն Բիբին շարունակել է հոր գործը և գրագիր, իսկ հետո նաև գլխավոր դիվանապետ (mālik dīwān al-tuğrā) է աշխատել Ռումի սուլթանների արքունի նոտարատանը²⁶:

Al-Awāmir al-‘Alā’iyya-ն Իկոնիայի սուլթանների 1192–1280 թթ. իդեալականացված, դրվատական պատմությունն է: Այս ժամանակագրության մեջ հայ-սելջուկյան հարաբերությունների վերաբերյալ առկա բավական հարուստ նյութից կարելի է եզրակացնել, որ թե՛ Լևոնի և թե՛ Հեթումի օրոք դիվանագիտական ակտիվ շփում, երկուստեք դեսպանագնացություններ և նամակագրություն է եղել երկու պետությունների բարձրագույն իշխանությունների միջև: Հետագա շարադրանքում ուշադրության կենտրոնում կպահենք Իբն Բիբիի այն վկայությունները, որոնցում ուղղակի կամ անուղղակի տեղեկություններ կան հայոց և Ռումի սելջուկ միապետների միջև պաշտոնական գրագրության, նամակագրության, դիվանագիտական առաքելությունների և նվերների փոխանակման և դրանց արարողակարգի վերաբերյալ՝ խուսափելով հայ-սելջուկյան քաղաքական հարաբերությունների բոլոր մանրամասներն ու ամբողջական պատկերը ներկայացնելուց: Անշուշտ, զբաղեցրած լինելով սելջուկյան դիվանատան գլխավոր քարտուղարի պաշտոնը՝ Իբն Բիբին անկասկած հասանելիություն է ունեցել պաշտոնական նոտարատան փաստաթղթերին և հավանաբար դրանք օգտագործել է իր ժամանակագրությունը գրելիս:

Իբն Բիբիի երկում որոշ արժեքավոր տեղեկություններ կարելի է գտնել դեսպանընկալության և հյուրընկալության հայկական արարողակարգի մասին: Վերջերս մեր ավագ գործընկեր Ռ. Շուքուրովը մեր համահեղինակությամբ հրատարակված մի ժողովածուում հրապարակած հոդվածում Իբն Բիբիի երկի ամբողջական և համառոտ խմբագրությունների հիման վրա կազմել

²⁶ Իբն Բիբիի մասին հայտնի կենսագրական տվյալները տե՛ս H.W. Duda, *Die Seltschukengeschichte*, S. 1-4; **նույնի**՝ “Ibn Bībī,” in: *EI2*, vol. 3, pp. 737–738; T. Yazici, “Ebn Bībī, Nāṣer-al-dīn Ḥosayn,” in: *EI*, vol. VIII, Fasc. 1 (1997), pp. 8–9; Ch. Melville, “The Early Persian Historiography of Anatoli,” in: *History and Historiography of Post-Mongol Central Asia and the Middle East* (Studies in Honour of John E. Woods), ed. J. Pfeiffer, Sh.A. Quinn (Wiesbaden: Harrassowitz Verlag, 2009), pp. 137–140; R. Shukurov, “Ibn-i Bībī,” in: *EMChr*, pp. 830–831:

է հայ-սելջուկյան հարաբերությունների կարևորագույն իրադարձությունների ռեգեստները՝ ի շարս այլ խնդիրների քննության առնելով նաև հայոց միապետներից Ռումի սուլթաններին և սելջուկյան քաղաքական վերնախավի առանձին ներկայացուցիչներին ուղղված ընծաների մասին վկայությունները²⁷: Ներքևում, իհարկե, երկի՝ հայ-սելջուկյան պաշտոնական նամակագրության և բանակցությունների մասին հաղորդումները²⁸ վերլուծելիս մենք նույնպես աչքաթող չենք անի նաև դիվանագիտական ընծաների մասին հիշատակությունները: Հարկ է, որ ներկայացնենք հայ-սելջուկյան դիվանագիտական շփումներում դիվանագիտական նվիրաբերման առանձնահատկությունները: Նախ պետք է նշել, որ ի տարբերություն հայ-մամլուքյան հարաբերությունների՝ Ռումի սուլթանության հետ Կիլիկյան Հայաստանի հետ հարաբերությունները միշտ չէ, որ միանշանակ կերպով բնութագրելի են «ստորակա» և «գերակա» եզրույթներով, անգամ երբ իր «հպատակության» հանգամանքը հայկական կողմը *de jure* չէր առարկում:

Ճիշտ է՝ քաջ գիտակցում ենք, որ Al-Awāmir al-‘Alā’iyya-ն դինաստիական պատմություն է, և Իբն Բիբին շատ հաճախ է տարվում սելջուկ սուլթանների գովաբանությամբ, նրանց ուժի և հեղինակության պերճաշուք և չափազանցական նկարագրությամբ, այնուհանդերձ, նրա բազմաթիվ հաղորդումներ հայ-սելջուկյան հարաբերությունների մանրամասների մասին հաղորդող եզակի վկայություններ են, և դրանք բոլորն անարժանահավատ համարելն էլ սխալ կլինի:

Մի առանձին դեպքում, օրինակ, պարսկագիր պատմիչը գրում է հայոց արքունիքում հյուրընկալված սելջուկ սուլթանի մասին: Բանն այն է, որ 1196 թ. Ռուքն ալ-Դին Սուլայման-Շահը (1196–1204 թթ.) խլում է սուլթանությունն իր եղբորից՝ Ղիյաս ալ-Դին Քայխոսրով Ա-ից (1192–1196 թթ., 1205–1211 թթ.): Քայխոսրովը ստիպված է լինում լքել երկիրն ու «քաղաքական» ապաստան փնտրել հարևան պետություններում՝ իր կորսված իշխանությունը նորոգելու համար աջակիցներ հավաքելու նպատակով: Առաջինն, ով օթևան է տալիս գահագուրկ սուլթանին, հայոց իշխան Լևոնն էր: Քայխոսրովը, որին հայկական իշխանությունները, անշուշտ, դեռ լեզիտիմ սուլթան էին համարում, պատվով է ընդունվում Կիլիկյան Հայաստանում՝ մեկ ամիս անցկացնելով հա-

²⁷ Տե՛ս P.M. Шукуров, “Образ Киликийской Армении”, с. 118–119, *ինչպես նաև նույնի*՝ “The Image of Cilician Armenia”, pp. 111–112:

²⁸ Երկից կատարված քաղվածքների բարդագույն հատվածների թարգմանության գործում մեզ սիրալիր կերպով օգնել է մեր ավագ գործընկեր Քրիստինե Կոստիկյանը, ինչի համար մեր անկեղծ երախտագիտությունն ենք հայտնում նրան: Անշուշտ բոլոր անճշտությունները, եթե այդպիսիք մնացել են, իմն են:

յոց արքունիքում: Իբն Բիբին Լևոնի կազմակերպած հյուրընկալության և երկու միապետների շփման մասին այսպես է արտահայտվում. «Երբ Լևոն Թաքվարը սուլթանի բարեհաջող ժամանման լուրն առավ, դուրս եկավ՝ դիմավորելու նրան մեծ հարգանքով և պատկառանքով, ինչպես ծարավ [մարդն] է դեպի ականակիտ ջուրը տենչում և կամ ինչպես ծոմ պահողը, որ ցանկանում է կիսալուսնի պատկերը տեսնել: Երբ նրա աչքը նկատեց նրա օրհնյալ հովանոցը, վար իջավ իր երիվարից և շտապեց սուլթանին ներկայանալ: Նա պատիվ ունեցավ համբուրելու նրա ձեռքը, և նրա ամբողջ մարմինը մի պերճախոս լեզու դարձավ՝ ցուցադրելու սուլթանի նկատմամբ իր ունեցած ակնածանքն ու հայցելու նրա ներողամտությունը: Ել չգիտեր՝ ինչ արտահայտություններով ազնվագարմ սուլթանին հաճոյանար: Նա իր թագավորությունում մեկ ամիս հյուրընկալեց սուլթանին: Նա ամեն օր զվարճություններ էր կազմակերպում զբոսարան[ներ]ում: Նա այնպիսի սեղաններ էր գցում հրավերքների ժամանակ, որ նրանց ճաշկերույթների համբավը տարածվեց հայերի և հոռոմների երկրներում և քաղաքներում:

Զվարճանքների ժամանակ նա հաճելի զվարճախոսություններ էր պատմում, կատակներ անում՝ սուլթանին իր վշտերից վանելու համար: Ամեն շաբաթ նա սուլթանին ընծաներ էր տալիս աշխարհի հազվագյուտ իրերից, Ֆրանգեստանի և տարբեր կողմերի հրաշալիքներից և լավագույն ապրանքներից: Նրան ծառայելու համար նա անուշադրության շմատնեց հյուրընկալության և հյուրասիրության և ոչ մի կանոն: Երբ սուլթանը որոշեց գնալ, նա սուլթանական շքախմբի հետ ուղեկցեց նրան մինչև իր երկրի սահմանը: Նա ուրախացնում էր իր հյուրին, որը շահերից էր սերում՝ նրան առաջարկելով [զանազան] այլ նվերներ՝ նախկինում չմատուցված: Հաջորդ օրը նա Լևոնին նվիրեց հատուկ զգեստ և սուլթաններին արժանի նժույգ՝ թույլ տալով վերադառնալ: Լևոնը նրա առաջ համբուրեց հողն ու վերադարձավ իր պետության նստավայրը»²⁹:

Ղիյաս ալ-Դինի հյուրընկալության մասին Իբն Բիբիի պատումը գուցե և չափազանցություններ է պարունակում՝ մասնավորապես Լևոն Մեծագործի կողմից սուլթանի մեծարման տեսարանների բնութագրման առումով, այնուհանդերձ, այս նկարագրությունը մեզ ցայտուն պատկերացում է տալիս, թե ինչ շուքով և հանդիսավորությամբ էին կազմակերպվում օտարերկրյա բարձրաստիճան հյուրերի ընդունելությունները հայոց արքունիքում:

²⁹ *Տե՛ս Ibn-i Bībī, El-Evāmīrū'l-'Alā'iyye, ֆ. 39–40; Ibn Bībī, Al-Awāmīr (Tehrān), ֆ. 40: Երկի համառոտ տարբերակում Քայխոսրովի և Լևոնի հանդիպումը շատ հպանցիկ է ներկայացված: Տե՛ս Ibn Bībī, Muhtaşar, ֆ. 9:*

Վերոբերյալ հատվածից եզրակացնելի է, որ հայոց արքունիքի բարձրաստիճան այցելուներին դիմավորելու և ճանապարհելու էր գնում անձամբ հայոց միապետը: Եվ խոսքն այստեղ միայն պետական առաջին այրերի մասին չէ միայն, այլ նաև հայոց արքայի հետ բարեկամական հարաբերություններ և անձնական մտերմություն ունեցող բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասին: Սրանում համոզվում ենք իբրև Բիբիի մեկ այլ վկայությունից: Դրվագը ներկայացնելուց առաջ հարկ է, որ որ համառոտակի անդրադառնանք դեպքերի նախապատմությանը:

Այսպես, 1211 թ. Սուլթանության գահին է նստում Իզզ ալ-Դին Քայկավուս Ա-ը (կառ. 1211–1220 թթ.), բայց այս հանգամանքի հետ չի հաշտվում նրա կրտսեր եղբայրը՝ Ալա ալ-Դին Քայկուբադը (ապագա սուլթան Քայկուբադ Ա՝ կառ. 1220–1237 թթ.): Եղբայրների կոնֆլիկտում ակտիվ դերակատարություն է ունենում հայոց Լևոն Մեծագործ արքան, ով ընդունում է Ալա ալ-Դինի աջակցության խնդրանքը՝ այն պայմանով, որ հաջողության դեպքում նրանից նվեր կստանա Կեսարիան (Կայսերին): Ալա ալ-Դինին օժանդակելու պատրաստակամություն է հայտնում նաև նրա հորեղբայրը՝ էրզրումի էմիր Մուղիս ալ-Դին Տողրուլ-Շահը: Լևոնի և Մուղիս ալ-Դինի զորքերը պաշարման մեջ են առնում Կեսարիան՝ պատրաստվելով գրավել: Սակայն, Իզզ ալ-Դինին հաջողվում է համոզել Լևոնին՝ դուրս գալ իր և եղբոր հակամարտությունից: Իզզ ալ-Դինի և հայոց թագավորի բանակցություններում միջնորդ է հանդես գալիս Ջալալ ալ-Դին Կայսարը՝ Կեսարիայի կառավարիչը³⁰: Ըստ իբրև Բիբիի՝ Ջալալ ալ-Դին Կայսարի և Լևոնի միջև վաղուց ի վեր նամակագրություն և բարեկամություն (morāsālāt wa-mosādaqāt) կար: Ջալալ ալ-Դինը սուլթանին խնդրում է իրեն տալ իր հարեմի կանացից մեկի թանկարժեք զարդերից մեկը: Իզզ ալ-Դինն առաջարկում է իր քրոջ 12 հզ. եգիպտական ոսկե դինար արժեցող գլխազարդը (dastarǧe): Լևոնի հետ համերաշխության եզրեր գտնելու Ջալալ ալ-Դինի դիվանագիտական առաքելության հետագա ընթացքի մասին իբրև Բիբին այսպես է գրում. «Երբ առաջապահ դետքի (գիշերային ժամապահներին) հասավ, ասաց. «Տեղեկացրե՛ք Թաքվարին, որ Ջալալ ալ-Դին Կայսարը՝ Կեսարիայի կառավարիչը (šihne-e Qayşariyye), թուլտվություն է խնդրում ներկայանալու: Անմիջապես այս լուրը թաքֆուրին հասցրեցին: Մեկին իր ազնվականներից, որը մշտապես նրանց միջև ճանապարհորդում էր ու բանակցում (insān mosāferat wa-sefārat), և երախտապարտ էր Ջալալ ալ-Դինին նրա նվիրատվությունների համար, ասաց. «Գնա՛, և պարզի՛ր՝ ինչն ինչոց է, քանզի

³⁰ Այս դեպքերի մասին տե՛ս նաև Cl. Cahen, *La Turquie*, p. 69; P. Шукуров, *Великие Комнины*, с. 95–96, *ինչպես նաև նույնի* “Образ Киликийской Армении”, с. 94; D. Korobeinikov, *Byzantium and the Turks*, p. 151–152:

Ջալալ ալ-Դինի պես հարգուպատիվ և դիրք ունեցող այրը հազիվ թե իրեն այս ժամին նեղություն պատճառեր: Ուղարկվածը վերադարձավ և ասաց. «Իրավամբ էմիր Ջալալ ալ-Դին է: Թաքֆուրը դիմավորելու գնաց, և մեծարանքով և պատկառանքով ընկերության և բարեկամության պայմաններն, ինչպես հարկն է, կատարեց: Ջալալ ալ-Դինն ասաց. «Ես քեզ համար մի նուրբ ու կարևոր մի գործ ունեմ, թաքվա՛ր, որը քեզ կհաղորդեմ, երբ մենակ մնանք: Թաքվարը կարգադրեց, որ բոլոր [արքունական] ծառայողներն ու շքախումբը ցրվեն: Երբ ընդունելության սրահը լքեցին ծառայողներն ու ներքինիները, Ջալալ ալ-Դինն ասաց թաքվարին»³¹: Կեսարիայի էմիրն այնուհետև Լևոնին է տալիս գոհարակապ գլխազարդը՝ որպես կատարած ուղղակի ծախսերի փոխհատուցում, սուլթան Իզզ ալ-Դինի անունից խոստանում է 12 հզ. mudd ցորեն մատակարարել հայոց բերդերին՝ սուլթանին պատկանող անասունների հետ միասին, և փոխանցում նրա երդումն առ այն, որ նրա իշխանության օրոք սելջուկներն այլևս երբեք չեն խախտի հայոց երկրի հանգիստը: Արքան ընդունում է Ջալալ ալ-Դին Կայսարի առաջարկությունը և իր երդմնագիրը (sawgandnāme)՝ նրա և նրան ուղեկցող հայ դեսպանի հետ ուղարկում է սուլթանի մոտ: Սուլթանն իր հերթին երդմնագիր է գրում և նվերներով առաքում Լևոնին³²:

Համաձայնությունը կայանում է. հայոց արքան ուղտերի վրա բեռնավորում է ասպազենը և իր զորքերը ծածուկ հետ քաշում Կեսարիայից: Առավոտյան Ալա ալ-Դինն ու էրզրումի էմիր Տողրուլ-Շահը անակնկալի են գալիս հայկական բանակի ընկրկումը տեսնելով: Դաշնակիցները անիրատեսական են համարում քաղաքի պաշարումն առանց Լևոնի օգնության շարունակելը և իրենք նույնպես հեռանում են: Ալա ալ-Դինին բանտարկելուց (1213 թ.) և իր դեմ ծագած խռովությունը խեղդելուց հետո, Քայկավուս Ա-ն այդ մասին տեղեկացում է ուղարկում Լևոնին, ով ի պատասխան ընտիր նվերներ է հղում սուլթանին: Իբն Բիբին մասնավորապես գրում է. «Դրանից հետո amīrāhūr («արքունի ախոռապետ») Ջայն ալ-Դին Բաշարային ուղարկեց Նիքդե: Նա բարերարությանմբ և մեծարանքով շահեց քաղաքի բնակչության և ազնվականների սիրտը: Նա Լևոն թաքվարի մոտ բանագնացներ ուղարկեց՝ տեղեկացնելու թշնամիների ձախողման և հակառակորդների հուսահատության և պարտության մասին: Իրազեկեց նաև թագավորության հանդարտեցման ու

³¹ Տե՛ս **Ibn-i Bībī**, *El-Evāmīrū'l-'Alā'iyye*, §. 116; **Ibn Bībī**, *Al-Awāmīr* (Tehrān), §. 115 և *հմմտ.* **Ibn Bībī**, *Muhtasar*, §. 42-43:

³² Տե՛ս **Ibn-i Bībī**, *El-Evāmīrū'l-'Alā'iyye*, §. 117-118; **Ibn Bībī**, *Al-Awāmīr* (Tehrān), §. 115-116 և *հմմտ.* **Ibn Bībī**, *Muhtasar*, §. 43:

Իզզ ալ-Դին Քայկավուսին սուլթան հռչակելու մասին: Թաքվար Լևոնն ի պատասխան նրան մեծամեծ նվերներ և ընծաներ ուղարկեց՝ արաբական և ֆրանկյան երիվարներ, ոսկյա և արծաթյա սպասք, մահուդե կոշիկներ³³ ³⁴:

Այժմ որոշ նշանակալից կետեր առանձնացնենք Իբն Բիբի վերոբերյալ հաղորդումներից: Ուշադրության է արժանի դիվանագիտական ներկայացուցչին պաշտոնական ընդունելությունների համար նախատեսված սրահում արքունի մեծամեծերի (որոշ դեպքերում գուցե նաև հոգևոր պետերի) ներկայությամբ ընդունելու մասին պատմիչի ակնարկը: Ինչպես պատումից կարելի է ենթադրել, որ պաշտոնական ընդունելության ծիսակարգի բոլոր անհրաժեշտ նորմերն ապահովելուց հետո, օտարերկրյա պատվիրակի հետ գաղտնի հաղորդակցման նպատակով հայոց արքան կարող էր դուրս հրավիրել ներկաներին դահլիճից (բացառությամբ թերևս պետական գաղտնիքի հետ առնչվելու իրավասություն ունեցող անձանց) և առանձնանալ իր հյուրի հետ: Հետաքրքիր է նաև երկուստեք երդմնագիրների տրման արարողակարգը: Սրանք, ըստ էության, հաշտության դրույթների ընդունումը հավաստելու նպատակով օգտագործվող գրություններ էին: Դրանցով կողմերն իրենց ստորագրությամբ կամ կնիքով հաստատում էին իրենց համաձայնությունը բանակցությունների առարկա հարցերի նկատմամբ՝ երդվելով հավատարիմ լինել դրանց տառին և էությանը:

Իբն Բիբիի երկում հայ-սելջուկյան դիվանագիտական հաղորդակցության մասին կան ոչ միայն անուղղակի վկայություններ, այլև որոշ վավերագրային նյութ՝ օրինակ, Ռումի սուլթանին հայոց արքայից հղված գրություններից իրական քաղվածքներ կամ դրանց բովանդակության վերաշարադրանքներ: Հեղինակը, ինչպես վերևում ենք գրել, կառավարող վերնախավին շատ մոտ կանգնած մարդ էր՝ որպես դիվանագետ, անշուշտ, ձեռքի տակ ունենալով սուլթանական դիվանի արխիվները: Այնուամենայնիվ, հիշյալ քաղվածքների վավերությունն ու իսկությունն ապացուցելու ծանրակշիռ փաստեր չունենք, և դժվարանում ենք ասել, թե հեղինակը երկրորդային աղբյուրների (ականատեսներ, ինֆորմանտներ) հիման վրա է վերականգնել պատմական փաստաթղթերի մոտավոր բովանդակությունը, թե դրանք իրականում տեսել և օգտագործել իր երկը գրելիս: Ներկայացնենք Հայոց արքա Լևոնից Քայկավուս Ա-ին հասցեագրված և Al-Awāmir al-'Alā'iyya-ում վկայաբերված մի նամակի նախապատմությունը:

³³ *Տե՛ս Թ. Շուքուրովի բացատրությունը: Տե՛ս P.M. Шукуров, “Образ Киликийской Армении”*, с. 119, сн. 115:

³⁴ *Տե՛ս Ibn-i Bībī, El-Evāmīrū'l-'Alā'iyye*, §. 119; *Ibn Bībī, Al-Awāmir (Tehrān)*, §. 117-118 և *հմմտ. Ibn Bībī, Muhtasar*, §. 44:

Այսպես, խաղաղությունը հայ-սելջուկյան հարաբերություններում, հակառակ կողմերի տված երդման, ձգվում է հազիվ մինչև 1216 թ.: Ըստ Իբն Բիբիի՝ այդ թվականին սելջուկ հարկավաճները (muḥaṣṣilān waǧūh ḥarāǧ Sīs) բողոքում են սուլթանին, որ հայոց արքան հրաժարվում է վճարել հարկերը³⁵: Միայն թե սա ընդամենը պատրվակ էր Կիլիկիա ներխուժելու համար: Իրական պատճառը թերևս այն էր, որ հայոց արքան այդ թվականի փետրվարին երկրորդ անգամ գրավել էր Անտիոքը և Բոհեմունդ Դ-ի փոխարեն գահին նստեցրել Ռուբեն-Ռայմոնդին: Իրադարձություններն այդուհետ գրեթե նույն ուղեգծով են զարգանում, ինչպես տարիներ առաջ՝ Անտիոքի առաջին գրավումից (1208 թ.) հետո³⁶:

Անսալով իշխանությունից զրկված Բոհեմունդ Դ-ի օգնության կոչին և հավանաբար իրենք էլ վախենալով հայոց թագավորության հետագա հզորացումից՝ Լևոնի դեմ միասնական ճակատով հանդես գալու ռազմական նախաձեռնություն են մշակում Հալեպի սուլթան ալ-Մալիք ալ-Ջահիրը և Իկոնիայի սուլթան Քալկավուսը³⁷: Ալ-Մալիք ալ-Ջահիրի հորեղբայր և բոլոր Այյուբյանների մեջ գերագահ Եգիպտոսի սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլը, ով հայոց Լևոն թագավորի հետ վաղուց ի վեր բարեկամական հարաբերություններ և նամակագրություն ունեւր, հավանություն չի տալիս Հալեպի միջամտությանը³⁸: Ալ-Մալիք ալ-Ադիլի դիրքորոշումը կապում է ալ-Մալիք ալ-Ջահիրի ձեռքերը: Հալեպում շիկացած կրքերը վերջնականապես հանդարտեցնելու նպատակով

³⁵ *Տե՛ս Ibn-i Bībī*, El-Evāmīrū'l-'Alā'yye, §. 162; *Ibn Bībī*, Al-Awāmīr (Tehrān), §. 160-161 և *հմմտ. Ibn Bībī*, Muḥtaṣar, §. 60:

³⁶ Այս մասին տե՛ս **A.-M. Eddé**, *La Principauté Ayyoubide d'Alep (579/1183–658/1260)* (Stuttgart: Franz Steiner Verlag, 1999), p. 83; **Վ. Տեր-Ղևոնդյան**, *Կիլիկյան Հայաստանը և Այյուբյան պետությունները (1171–1260 թթ.)* (Երևան, «Տիր» հրատ., 2017), էջ 153–164: Իսկ 1216 թվականի դեպքերի մասին տե՛ս **Cahen Cl.**, *La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche* (Paris: Geuthner, 1940); p. 628–633, ինչպես նաև **Նույնի՝ La Turquie**, p. 71–72; **A.-M. Eddé**, *La Principaute*, p. 83–84; **S.N. Yildiz**, “Reconceptualizing”, pp. 101–104; **P.M. Шукров**, “Образ Киликийской Армении”, с. 119; **Վ. Տեր-Ղևոնդյան**, *Կիլիկյան Հայաստանը*, էջ 165–181:

³⁷ Ըստ Իբն Վասիլի՝ Անտիոքը գրավելուց հետո Լևոնը մեծահոգաբար գերեվարված մուսուլմաններին ուղարկել է Հալեպ: Նրա այս քայլը բարձր է գնահատվել մուսուլմանական միջավայրում, և իր դերն է ունեցել դեպքերի հետո հանգուցալուծման ժամանակ: Պատմիչը նաև գրում է, որ Ռայմոնդ-Ռուբենին Անտիոքի գահին նստեցնելուց հետո, հայոց թագավորը շտապել է Կիլիկիա, որովհետև վախենում էր սուլթան Իզզ ալ-Դինից: *Տե՛ս Ibn Wāṣil*, Mufarrīǧ al-kurūb fi aḥbār banī Ayyūb, §. 3, bi-tahqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī (Ṣaydā-Bayrūt, al-Makaba al-‘Aṣriyya, 2004), §. 233: Ըստ նույն հեղինակի՝ Քալկավուսը նամակ է ուղարկել ալ-Մալիք ալ-Ջահիրին՝ առաջարկելով իրեն միանալ Մարաշում, որպեսզի միասնաբար արշավեն հայոց երկրի վրա: Ի վերջո որոշվել է, որ Իկոնիայի սուլթանը Կիլիկյան Հայաստան պիտի մտնի Մարաշի, իսկ Հալեպի սուլթանը՝ Դարպասակի կողմից: *Տե՛ս Անդ.*, §. 234:

³⁸ **Անդ.**:

հայոց արքան ալ-Մալիք ալ-Ադիլից հետո նամակ է ուղարկում նաև ալ-Ջահիրին՝ մի փառահեղ նվերի հետ մեկտեղ՝ շահելով նրա վստահությունը³⁹ :

Ավելի նախաձեռնող է գտնվում սուլթան Քայկավուսը, ով շուտով պատերազմ է սանձազերծում Կիլիկյան Հայաստանի դեմ՝ պաշարելով Կապան բերդը: Ըստ հայկական աղբյուրների՝ Հայոց բանակը սկզբում որոշ հաջողություններ է ունենում: Կապանի պաշտպանները՝ բերդատեր Լևոնի գլխավորությամբ, անգամ կարողանում են դուրս գալ և կրակի տալ թշնամու բաբանները: Սակայն Կոստանդին Գունդատաբլի գլխավորությամբ հայկական զորքերը մարտավարական սխալ են թույլ տալիս թշնամու զգալիորեն գերազանցող բանակի դեմ մարտ տալով բաց դաշտում: Շողական բերդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հայոց զորքը ծանր պարտություն է կրում՝ շուրջ հազար զոհ տալով: Բախման ժամանակ գերության մեջ են հայտնվում մի շարք իշխաններ՝ այդ թվում Կոստանդին Գունդատաբլը, պալլ և արքունի սենեսկալ Սիր Ատանը (Ադամ), Կոստանդին Լամբրոնացին⁴⁰, Կեոսակը (Կիո Սահակը)⁴¹, «Ազիլ Օքսենց»-ը⁴² և այլք⁴³ :

³⁹ Իբն Վասիլը հաղորդում է նամակի բովանդակությունը. «Ես սուլթանի ստրուկն եմ, նրա պետության մի տնկին: Ես նրա մոտ եմ մտնում որպես արաբ և խնդրում նրանից ինձ ազատել այս ծանր դրությունից: Ես միշտ նրա ծառան եմ, քանի դեռ կամ, և քանի՛ անգամ եմ պաշտպանել սուլթանի երկիրը և ծառայել նրան: Զորքի նակ, երբ սուլթանն օղակել էր Դամասկոսն առաջին անգամ, և նրա երկիրը լիովին դատարկվել էր զորքերից, ես նրա սրտին նեղություն չտվեցի և չառնչեցի նրա երկիրն, այլ օգնեցի և օժանդակեցի գումարով և իմ զինականներով: Նույնպես և երբ Դամասկոսը երկրորդ անգամ է պաշարվել, ինձ գումարներ էին առաջարկվել, որպեսզի ես զբաղեցնեմ նրան և շեղեմ պաշարումից, բայց ես չեմ արել: Եվ եթե պրինցը (իմա՛ Բոհեմունը Դ-ը) ծառայություն է մատուցել սուլթանին, իմ մատուցած ծառայությունն ավելին է, քան նրանը, և սուլթանն իր ազնիվ հայեցողությամբ պիտի նկատի իմ ծառայությունն ու ջանքը: Ես նաև իմ քեռորդուն, ում նշանակել եմ Անտիոքում, պատվիրել եմ նրա ծառայության պարտավորություն ստանձնել»: *Տե՛ս Ibn Wāṣil, Mufarrig al-kurūb*, ց. 3, ք. 235:

⁴⁰ Թագադիր իշխան էր՝ ներսես Լամբրոնացու եղբայր Հեթում Լամբրոնացու որդին: Հեթումի Ա-ի օրոք նա հայ-սելջուկյան հարաբերությունների ակտիվ դերակատարներից էր լինելու՝ հավատարմորեն ծառայելով Ռումի սելջուկներին:

⁴¹ Այս Կիո Սահակը հիշատակված է Լևոնի թագադրման արարողության մասնակցած բերդատեր իշխանների ցանկում, որպես՝ «իշխան Մաղվաչոյ եւ Սիկոյ եւ Պալապոլին»: *Տե՛ս Սմբատ Սպարապետ*, Տարեգիրք (Փարիզ), էջ 112, ինչպես նաև *նույնի՛*՝ Վենետիկ, էջ 210:

⁴² Հիշատակված է միայն Սմբատի «Տարեգրքի» համառոտ տարբերակում, այլ աղբյուրներից անհայտ է և հետևաբար չի նույնականացվում: Կարող է լինել Իբն Բիբիի կողմից հիշատակված «Վասիլ»-ը (*Fāsil*): *Տե՛ս* ներքևում: Ղ. Ալիշանը մի տեղ՝ Կապանի պաշարման մասին խոսելիս, նրա անունը գրում է՝ «Վասիլ Օքսենց»: *Տե՛ս Ղ. Ալիշան*, Սիսուան (Համագրություն Հայկական Կիլիկիո եւ Լեւոն Մեծագործ) (Վենետիկ, Ս. Ղազար, 1885), էջ 521:

⁴³ Դեպքերի մասին հաղորդում են 1216 թ. Տարսոնում գրված մի Ավետարանի գրիչը, Սմբատ Սպարապետը, Վահրամ Բաբունին, Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն խմբագրությունները, Սամուէլ Անեցու շարունակողը, Հեթում Կոռիկոսցին, միայն թե՛ դեսպանների փոխանակություն և բանակցությունների ընթացքի մասին շատ բան չեն հայտնում: *Տե՛ս Սմբատ*, Տարեգիրք (Փարիզ), էջ 117–118, ինչպես նաև *նույնի՛* (Վենետիկ), էջ 221–222 և հմմտ.

Իր ազնվականների պատանդառման հետևանքով գրեթե հուսահատ վիճակում հայտնված հայոց արքան բանակցություններ է սկսում սուլթանի հետ նրանց ազատության և հաշտության շուրջ՝ պատրաստ լինելով ընդունել նրա առաջադրած պահանջները: Արքայի որոշումը, սակայն, միակողմանի մեկնաբանել չի կարելի: Կաշկանդված լինելով գերեվարվածների ճակատագրի համար իր պատասխանատվությամբ՝ նրա քայլն, անշուշտ, հարկադրված էր: Անգամ այս պարագայում սուլթանի գերիշխանությունն և իր անվերապահ ստորակայությունն ընդունելու նրա որոշումը կարելի է և պետք է նաև ձևական կամ ցուցադրական՝ անհարկի բարդություններից խուսափելուն ուղղված ակտ դիտարկել: Այսպիսով, դիվանագիտական հնարագիտություն ցուցաբերելով՝ նա ընդունում է Անտիոքի գրավման փաստը սվիններով ընդունած իր հարևանների՝ թե՛ Հալեպի և թե՛ Իկոնիայի գերակայությունը, ավելին, իր բազմավեկտոր քաղաքականության շնորհիվ խարխյում նրանց դաշինքը: Հայոց արքան քաջագիտակ էր նաև Այյուբյանների միջև առկա տարաձայնությունների մասին, և իր քաղաքական նպատակների իրագործման համար հաջողությամբ օգտագործում էր նաև Եգիպտոսի սուլթանի հետ իր ունեցած բարեկամական հարաբերությունները՝ ընդդեմ Ասորիքի Այյուբյանների:

Իբն Բիբիի պատումը նշանակալիորեն տարբերվում է հայկական աղբյուրների պատումներից: Ըստ նրա՝ Քալկապուսի գլխավորած զորքը նախ պաշարել է Ջանջին⁴⁴ բերդը և սկսել քարկոծել բաբաններով: Բերդի պաշտպանները օգնության խնդրանքով դիմել են Թաքվարին, բայց վերջինս պատասխանել է, որ իր վիճակն էլ բարդ է: Տեսնելով, որ անկարող են դիմադրել սելջուկյան զորքերին՝ պաշտպաններն *amān*՝ անվտանգության երաշխիք են խնդրել բերդը հանձնելու դիմաց, ինչը սուլթանը չի մերժել և խնայել է բնակիչներին: Այնտեղ *katwāl*՝ ամրապահ և կայազոր նշանակելով՝ շարունակել են արշավանքը⁴⁵:

Ապա պաշարվել է Քանջինը (*Kānǧīn*)⁴⁶: Քարանետ մեքենաներով ճնշելով պաշտպաններին՝ սելջուկ զինվորները աստիճանների միջոցով մագլցել են

Միխայել Ասորի, Ժամանակագրություն (1870), էջ 519–520; **նույնի**՝ (1871), էջ 511–513; **Վահրամ Բաբունի**, Ոտանաւոր, էջ 216; **Սամուէլ Անեցի և Շարունակողներ**, Ժամանակագրություն, էջ 238; **Հեթում Պատմիչ**, Ժամանակագրություն, էջ 50:

⁴⁴ *Hānǧīn*-ը (այլուր՝ *Ġanǧīn*) ամենայն հավանականությամբ Ճանճի բերդն է: Տե՛ս նաև հաջորդ ծանոթագրությունը:

⁴⁵ Տե՛ս **Ibn-i Bībī**, *El-Evāmīrū'l-'Alā'yye*, §. 164–165; **Ibn Bībī**, *Al-Awāmīr* (Tehrān), §. 161–162 և *հմմտ. Ibn Bībī*, *Muhtaşar*, §. 61–62:

⁴⁶ Այս դեպքում էլ խոսքը հավանաբար Կանչի բերդի մասին է: Հատկանշական է, որ հայկական աղբյուրներում Կապան բերդի պաշարման նկարագրությունը որոշ ընդհանուր գծեր ունի Իբն Բիբիի մոտ *Ġanǧīn* անվանված բերդի պաշարման նկարագրության հետ, և չի բացառվում, որ Իբն Բիբիի պատումը նույնպես Կապանի մասին է, որը նա շփոթում է Ճանճիի հետ: Ըստ նրա՝ այդ բերդից ավելի ամուրը չկար հայոց երկրում: Այս դատողությունն ավելի շատ

բերդապատերի վրա և ներս խուժելով՝ բացել դարպասները: Բերդի բնակիչներն անխնա սրածվել են, նրանց ունեցվածքը՝ կողոպտվել: Սելջուկյան զորքերի առաջխաղացումը կասեցնելու են շտապել ոմն պարոն Վասիրը (bārūn Fāsīl), ոմն պարոն Օշինը (bārūn Ūšīn) և Գունդաստաբլը (Kund[i]ṣṭabl): Վճռական ճակատամարտում սելջուկները գերեվարել են Գունդաստաբլին, Ուշինին և Լս մի իշխանի՝ Նուշին (Nūšīn) անունով: Հատկանշական է, որ հիշյալ իշխաններից առանց բարդության նույնականացվում է թերևս միայն «Գունդաստաբլը»⁴⁷: Յոթնօրյա ասպատակություններից հետո սուլթանը վերցնում է իր ազնվական գերիներին և մեծ ավարով (ծիեր, ջորիներ, ոսկի) վերադառնում Կեսարիա՝ առատ պարգևների արժանացնելով արշավանքի մասնակիցներին: Ըստ Իբն Բիբիի՝ գերիների թիվն այնքան մեծ է եղել, որ, երբ սելջուկյան զորքը Կեսարիա է հասել, գեղեցկատես հայ ստրուկների և ստրկուհիների զինը 50 դիրհամ է դարձել⁴⁸:

Այս դեպքերից հետո հայոց արքային հաշտություն խնդրելուց բացի ոչինչ չի մնացել: Ըստ Իբն Բիբիի՝ նա թանկագին նվերներ է ուղարկել Քայկավուսին՝ «ընտիր երիվարներ՝ ոսկյա և արծաթյա գունագեղ թամբուսարքերով, ջորիներ՝ թեթևոտն, ինչպես կաքավները, սրաթուխ բազեններ և արծիվներ, բարետես ֆրանկ ստրկուհիներ», և նամակ հետևյալ բովանդակությամբ. «Եթե դու [մտադիր ես] նվաստացնել ինձ, էլ ինչու՞ էիր ինձ վեր հանում [նախկինում], թե արմատախիլ ես անում, էլ ինչու՞ էիր ցանում: Ես միշտ էլ նույն ծառան եմ եղել, ինչպես որ կարծել ես: [Ուրեմն] ինչու՞ ես ցած նետում այն մեկին, ում մինչ այս բարձրացրել ես: Եթե քո՝ աշխարհի սուլթանիդ նենգ վերակացուները, քո ականջները լցրել են իմ մասին հերյուրանքներով, և եթե դու՝ աշխարհի տիրոջ պատվելի միջնորդդ, տրամադրվել ես թշվառ տարաբախտիս նկատմամբ, [ամեն ինչ] փոխվել է. ես արդեն կրել եմ իմ պատիժը դրա համար: Իմ իշխանները սպանվել են, երկիրը՝ գլխավայր է, զինվորները ջարդված են և կոտորված, իսկ նրանց տունուտեղից տեղեկություններ չկան: Ապավինելով մեր սուլթանի անեզր ողորմածությանը, ով տերն է սրի և կնիքի՝ [ցանկանում եմ, որ] հանուն Ալլահի թողություն տա այս թշվառիս մեղքին իր անհուն

հարմարում է իր անառիկությամբ հայտնի Կապանին, քան թե Ճանճիին: Ամեն դեպքում Կապան, Ճանճի և Կանչի բերդերն աշխարհագրորեն իրար շատ մոտ գտնվող բերդեր էին, և բոլորն էլ հավանաբար թիրախվել են սելջուկների արշավանքի ընթացքում: Սրանով կարելի է բացատրել հայ հեղինակների և Իբն Բիբիի պատումների տարբերությունները: Տե՛ս նաև Ս. Նուր-Յիլդիզի բացատրությունը: Տե՛ս S.N. Yildiz, “Reconceptualizing”, p. 101, n. 49:

⁴⁷ Տե՛ս Ռ. Շուքուրովի մեկնաբանություններն այս իշխանների վերաբերյալ: Տե՛ս P.M. Шукуров, “Образ Киликийской Армении”, с. 117:

⁴⁸ Տե՛ս Ibn-i Bībī, El-Evāmīrūl-‘Alā’iyye, §. 165–168; Ibn Bībī, Al-Awāmīr (Tehrān), §. 161–165 և հմմտ. Ibn Bībī, Muhtaşar, §. 62–65:

մեծահոգությունը և անշափելի առատաձեռնությունը: [Ընդամիսն] ներումն ու ներողությունը Ձեր բարեվարքության պահանջը համարեք: [Եվ եթե ներում եք, [դրանով] մոտենում եք բարեպաշտությանը]⁴⁹: Մեզ ներելը համարեք Ձեր առատաձեռնության և Ձեր սեփական մեղքի թողության անհրաժեշտություն:

Ճշմարիտ է, որ եթե աշխարհի տերը Սաի երկիրն ինձնից ստանա, տալու է իր պետության ծառաներից մեկ ուրիշին: Եթե Դու ինձ համարում ես քո ծառաներից ամենանվաստը, ապա ես ամենայն ազնվությամբ ստրկության օղեմ անում ականջիս և բարձրացնում հնազանդության լուծը: Երկրի տիրակալի շների ձայներն ինձ հաճելի կհամարեմ: Կրկնապատկում եմ [իմ կողմից վճարվելիք] հարկը: Ամեն տարի, արդեն իսկ ընդունված կարգից և պայմանավորվածությունից դուրս, ես կուղարկեմ Ձեզ 500 հեծյալների՝ իրենց ասպազենով, որպեսզի կովեն այնտեղ, որտեղ անհրաժեշտ կհամարեք⁵⁰: [Ավելին] ես կկատարեմ բոլոր առաջադրանքները՝ կարողության և կարելիության սահմաններում, ես քեզ հավատարիմ կլինեմ, ինչպես կետը շրջանի կենտրոնում: Ես արձանագրում եմ քո հրամանն իմ գոյության⁵¹ էջին»⁵²:

Հետաքրքիր է նամակում Ղուրանից կատարված մեջբերումը: Եթե իսկապես նամակի բովանդակության այս ձևակերպումը հորինված չէ Իբն Բիբիի կողմից, և եթե սա քաղվածք է իրականում գոյություն ունեցած նամակից, ապա հակառակորդին իր իսկ սուրբ գրքով համոզելու այս հանգամանքը խոսում է ոչ միայն Լևոնի բանակցային հնարամտության, այլև հայոց դիվանատան «արհեստավարժ աշխատանքի» մասին:

Բանակցությունները հաջողությամբ են ավարտվում: Համաձայնագրի կնքումից հետո (1218 թ.) Կոստանդին Գունդատաբլի գլխավորությամբ ազատ

⁴⁹ Մեջբերում է Ղուրանից: *Տե՛ս Al-Qūrān*, 2/237 (Sūrat al-Baqara):

⁵⁰ Ըստ Միխայել Ասորու ժամանակագրության հայ շարունակողների՝ հայոց թագավորը ստանձնել է «յամենայն ամի երեք հարիւր այր ի ծառայութիւն» տալու պարտավորություն: *Տե՛ս Միխայել Ասորի*, ժամանակագրութիւն (1870), էջ 520: Հմմտ. *Նույնի՛* (1871), էջ 513:

⁵¹ Բնագրում *hastī* է, որը նաև «ունեցվածք», «կարողություն» է նշանակում: Գուցե՞ պետք է թարգմանել՝ «իմ ունեցվածքի էջին»:

⁵² *Տե՛ս Ibn-i Bībī*, *El-Evāmīrū'l-'Alā'yye*, §. 169–170; *Ibn Bībī*, *Al-Awāmīr* (Tehrān), §. 166–167 և *Հմմտ. Ibn Bībī*, *Muhtaşar*, §. 65–66:

են արձակվում հայոց գերեվարված իշխանավորները՝ սուլթանի կողմից ըն-
ծաների արժանանալով⁵³: Ըստ Սմբատի՝ հայ ազնվականները գերուխյան մեջ
են անցկացրել 1 տարի և չորս ամիս⁵⁴:

Հայոց արքայի «հնազանդեցումից» որոշ ժամանակ անց՝ 1218 թ., Քայկա-
վուս Ա-ն ռազմական գործողություններ է սկսում Հալեպի սուլթանության
դեմ⁵⁵: Նա, ըստ ձեռք բերված պայմանավորվածության, օգնական ուժեր է
պահանջում նաև հայոց արքայից: Այս դեպքերի մասին ուշագրավ մանրա-
մասներ են հաղորդում Միխայել Ասորու ժամանակագրության հայկական
խմբագրությունները: Երբ սելջուկյան զորքերը գրավում են Ռաբանը, Թել Բա-
շիրը և Այնթապը, Հալեպի սուլթանի գահին նստած անշափահաս Մելիք Ազի-
զի խնամակալ (աթաբեկ) Շիրաբ ալ-Դին Տուղրիլը, զգալով վերահաս վտան-
գը, դիմում է Լևոնին օգնության խնդրանքով: Լևոնը հնարք է բանեցնում սուլ-
թանի նկատմամբ: Ասորի պատմիչի հայ շարունակողները վկայաբերում են
քաղվածք հայոց արքայից Քայկավուսին ուղղված նամակից. «Եւ թագաւորն
Հայոց այնուհետեւ ի հոգս անկեալ իւրով կորովամիտ իմաստութեամբն. Առա-
քեաց զանխլաբար առ Սուլտանն Հոռոմոց, մինչ ի սահմանս Թլւպաշարայ էր,
գրեալ առ նա այսպիսի օրինակաւ. «Թագաւոր Հայոց Լեւոն. եղբօր մերոյ Քե-
քայուզ Սուլտանիդ ի Տեր խնդալ: Յուշ լիցի քեզ իբրեւ սիրելոյ մերում, զի
իմացեալ հաստատեցաք. Եթէ քառասուն ամիրայ ի զօրաց քոց դաշինս եղեալ
են տալ զքեզ ի ձեռն Աշրափուն: Եւ դուն այսուհետեւ զօգուտ անձին քո խոր-
հեաց, զի մի անկցիս ի ձեռս ատելեաց քոց, ողջ լեր»⁵⁶»: Երբ այս նամակն ըն-
թերցում են սուլթանի համար, նա վախենում է և հրամայում իր զորքին հետ
դառնալ՝ կորցնելով գրաված բերդերը: Իսկ երբ Կեսարիա է հասնում, կար-
գադրում է մահապատժի ենթարկել դավաճանության մեջ ամբաստանվող
էմիրներին: Իսկ սուլթանի «ասորիքյան արշավանքն» այդպես էլ իր լրմանը

⁵³ Տե՛ս **Ibn-i Bībī**, El-Evāmirü'l-'Alā'iyye, §. 171; **Ibn Bībī**, Al-Awāmir (Tehrān), §. 167-168 և հմմտ. **Ibn Bībī**, Muhtasar, §. 66: Ըստ հայկական աղբյուրների՝ Լևոնն իշխանների ազատության դիմաց Ռու-
մին գիջել է «զլուովայ եւ զիսարիոյ գետն և զանառիկ ծագն Լօզատի»: Տե՛ս **Սմբատ**, Տարեգիրք
(Փարիզ), էջ 118, ինչպես նաև նույնի՝ (Վենետիկ), էջ 222 և հմմտ. **Միխայել Ասորի**, Ժամանա-
կագրութիւն (1870), էջ 520: Հմմտ. **նույնի՝** (1871), էջ 513; **Սամուէլ Անեցի և Շարունակողներ**,
Ժամանակագրութիւն, էջ 238; **Հեթում Պատմիչ**, Ժամանակագրութիւն, էջ 50:

⁵⁴ **Սմբատ**, Տարեգիրք (Փարիզ), էջ 118:

⁵⁵ Այս դեպքերի մասին մանրամասն տե՛ս **Cl. Cahen**, *La Turquie*, p. 72–73; **R.S. Humphreys**,
From Saladin to the Mongols: The Ayyubids of Damascus, 1193–1260 (Albany: State University of New
York Press, 1977), pp. 159–160; **A.-M. Eddé**, *La Principaute*, p. 90–92 և հատկապես **Վ. Տեր-
Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը, էջ 175-180:

⁵⁶ **Միխայել Ասորի**, Ժամանակագրութիւն (1870), էջ 521–522: Հմմտ. **նույնի՝** (1871), էջ 514:
Վ. Տեր Ղևոնդյանի աչքից վրիպել է, որ նամակի վերաբերյալ հատվածն առկա է նաև երկի 1871
թ. հրատարակության մեջ: Հմմտ. **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը, էջ 177, ծնթգր. 423:

չի հասնում, չնայած արաբ պատմիչները ռազմարշավի ընթացքի և դեպքերի հանգուցալուծման այլ փոքր-ինչ տարբերվող պատումներ են պահպանել⁵⁷:

Սուլթանին ուղղված «կեղծ» նամակների մասին խոսում է նաև Իբն Բիբին, թեև դրանք ոչ մի կերպ չի կապում Լևոնի անվան հետ: Ըստ նրա՝ հալեպցիները Ռումի մի բնակչի էին բռնել, որը գիտեր սուլթանության բոլոր էմիրների անունները և վերջիններիս անունից ալ-Մալիք ալ-Ադիլի որդի ալ-Մալիք ալ-Աշրաֆին ուղղված շինծու նամակներ պատրաստել: Այդ նամակներում Ռումի էմիրներն իբր իրենց հավատարմությունն էին հայտում ալ-Աշրաֆին և իբր նախապատրաստվում էին գահընկեց անել սուլթան Քալկավուսին: Կեղծ նամակները հասցվել էին սուլթանին, ով, կարդալով դրանք, վախեցել է իր կյանքի համար և որոշել է հետ նահանջել՝ օր առաջ խեղդելու իր դեմ պատրաստվող խռովությունը: Հնարքն աշխատել է, և սուլթանը, հավատ չընծայելով նամակներում հիշատակված էմիրների արդարացումներին, հրամայել է դաժանորեն սպանել «դավաճաններին»՝ ողջ-ողջ այրելով: Բայց հետո, ճշմարտությունն իմանալով, նա խիստ զղջացել է իր արածի համար և ծանր հիվանդանալով՝ կնքել մահկանացուն⁵⁸:

Այսպիսով, չնայած Իբն Բիբին միջադեպին հայոց արքայի ներգրավվածության մասին չի խոսում, Միքայել Ասորու հայկական խմբագրությունների և Իբն Բիբիի պատումներն ակնհայտորեն ընդհանուր գծեր ունեն: Հետևաբար շատ հնարավոր է, որ խաբուսիկ այս քայլը Լևոնի և Շիհաբ ալ-Դին Տուղրիլի համատեղ մտահաղացումն էր, մինչև որ Եգիպտոսից օգնության կհասներ ալ-Մալիք ալ-Աշրաֆը: Հայոց թագավորի և Հալեպի Այյուբյանների միջև համագործակցության այս միջադեպը վկայում է, որ Ռումի սուլթանությունից Լևոնի հայտարարած կախվածությունը հիմնավոր չէր: Չէ՞ որ նույն կերպ Հայոց արքան ճանաչել էր Հալեպի սուլթանի գերակայությունը: Դրանով նա ընդամենը երկդիմի դիվանագիտության նուրբ թելերով խճճել էր Ռումի սուլթանություն - Հալեպի Այյուբյան սուլթանություն - Անտիոք-Տրիպոլիսի իշխանապետություն եռյակ դաշինքի անդամներին և անգամ խարխլել նրանց միասնականությունը՝ առաջ տանելով իր քաղաքական շահերը:

Հայ-սելջուկյան հարաբերությունների հերթական ճգնաժամը տեղի է ունենում 1225 թ. վերջերին: Ալա ալ-Դին Քալկուբադ Ա-ը (1220–1237 թթ.), ում օրոք Ռումի սուլթանությունը հասել է իր հզորության բարձրակետին: Նրա օրոք սելջուկյան պետությունը դարձել է տարածաշրջանի հզորագույն քաղա-

⁵⁷ A.-M. Edde, *La Principaute*, p. 90–92.

⁵⁸ *Տե՛ս Ibn-i Bībī*, *El-Evāmīrū'l-'Alā'iyye*, §. 182–199; *Ibn Bībī*, *Al-Awāmīr* (Tehrān), §. 177–192 և *հմմտ. Ibn Bībī*, *Muhtaşar*, §. 72–82:

քական դերակատարներից մեկը՝ ծավալապաշտական նկրտումներ ունենալով իր հարևանների՝ այդ թվում Կիլիկյան Հայաստանի նկատմամբ: Դեռ 1221 թ. Քայկուբադի հրամանով գրավվում է հայազգի հունադավան իշխան Կիո Վարդին պատկանող Կալոնորոս ծովային բերդը և սուլթանի անունով վերանվանվում Ալախյա (այժմ՝ Ալանյա): Կիո Վարդը կորցրած բերդի փոխարեն որպես տիրույթ ստացավ Ակշեհիբը, ինչպես նաև իր դստերից մեկին կնուծյան տվեց սուլթանին: Եվ հավանաբար հենց նա էր աղբյուրներում սուլթանի «Մահ Փերի-խաթուն» պարսկական անունով հիշված կինը, ով ծնունդ է տվել ապագա սուլթան Ղիյաս ալ-Դին Քալխսորով Բ-ին⁵⁹:

Հայոց թագավորության դեմ ուղղված արշավանքը Քալխսորով Բ-ի միանձնյա որոշումը չէր: Նրա այդ քայլը համաձայնեցված էր Անտիոքի պրինց Բոհեմունդ Դ-ի հետ, ում հետ դաշնակցային հարաբերությունների մեջ էր: Սակայն, ինչպես նախկինում, այս անգամ էլ համատեղ ուժերով բացարձակ առավելության հասնել Կիլիկյան Հայաստանի նկատմամբ չի հաջողվել: Ավելին, արաբալեզու աղբյուրներում տեղեկություններ կան, որ այս անգամ Հալեպի սուլթանությունը՝ ի դեմս աթաբեկ Շիհաբ ալ-Դին Տուղրիլի, արձագանքել է հայկական իշխանությունների օգնության կոչին և զինական աջակցություն է ցույց տվել Կիլիկյան Հայաստանին Բոհեմունդ Դ-ի դեմ պայքարում⁶⁰: Սա գուցե և երախտալից հատուցումն էր այն աջակցության, որ ժամանակին հալեպցիները Լևոն արքայից էին ստացել:

Այս անգամ Կիլիկյան Հայաստանի բերդերի դեմ արշաված սելջուկյան բանակը առաջնորդում էին էմիր Մուբարիզ ալ-Դին էրթուկուշը և ազգությամբ հույն սելջուկահպատակ էմիր «Քումնինուս»-ը (Մավրոզոմ Կոմնենոս)⁶¹:

⁵⁹ Այս մասին տե՛ս **Cl. Cahen**, *La Turquie*, p. 74–75; **S.N. Yildiz**, “Reconceptualizing”, pp. 106–107; **P.M. Шукуров**, “Образ Киликийской Армении”, с. 98–101: Մահ Փերի-խաթունի մասին տե՛ս **A. Eastmond**, “Gender and patronage between Christianity and Islam in the thirteenth century,” in: *First International Byzantine Studies Symposium Proceedings, Istanbul 25–28 June, 2007* (Istanbul, 2010), pp. 78–79; **Cl. Mutafian**, *L’Arménie*, p. 134–135: Կիո Վարդի և նրա դստեր հունական ծագման վարկածի մասին տե՛ս **Cl. Cahen**, *La Turquie*, p. 74 և հատկապես՝ **R. Shukurov**, “Harem Christianity: The Byzantine Identity of Seljuk Princes,” in: *The Seljuks of Anatolia*, p. 117, 136–137: Թ. Շուքուրովը վերջերս կատարած իր մի հետազոտության մեջ փոխել է իր տեսակետը՝ ավելի հակված լինելով նրա հայ լինելու մտքին: Տե՛ս **P.M. Шукуров**, “Образ Киликийской Армении”, с. 98–101:

⁶⁰ **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը, էջ 185–188:

⁶¹ Հայկական աղբյուրները խիստ սակավախոս են այս արշավանքի և արդյունքում կնքված հաշտության պայմանագրի մասին: Արշավանքի մասին տե՛ս **Միխայել Ասորի**, Ժամանակագրություն (1871), էջ 525–526, ինչպես նաև **նույնի**՝ (1871), էջ 518–519 (հաղորդում են Ճանճի, Կանչի և Մագոս խաչ բերդերի գրավման մասին); **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք (Փարիզ), էջ 119; **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, էջ 190: Տե՛ս նաև **Cl. Cahen**, *La Turquie*, p. 75; **S.N. Yildiz**, “Reconceptualizing”, pp. 108–109; **P.M. Шукуров**, “Образ Киликийской Армении”, с. 102–103:

Հստ Իբն Բիբիի՝ սելջուկյան զորքերը օղակում են Ճանճի (Ġanġīn, Ĥanġīn կամ Ġanġū) բերդը, որի պաշտպանները՝ իրենց բերդատիրոջ գլխավորությամբ, ով ըստ պարսկագիր պատմիչի վանական (kašīš) էր, նամակ են հղում «Լիֆուն թաքվարին»⁶² նրանից օգնություն խնդրելով: Վերջինս իր հերթին նամակներ է գրում և աջակցություն խնդրում «ծովափնյա ֆրանկներից»⁶³. «Եթե դուք այսօր իսկ օգնություն չառաքեք, այստեղ այլևս քրիստոնեական կրոն չի լինի»: Սակայն սելջուկյան զորքերին լուրջ դիմադրություն ցույց տալ և բերդը շրջափակման օղակից դուրս բերել չի հաջողվում: Բերդի բնակիչները ստիպված են լինում «անվտանգության երաշխիք» խնդրել Մուբարիզ ալ-Դինից: Վերջինս չի մերժում, որից հետո ձեռնամուխ է լինում շրջակայքի մյուս բերդերի գրավմանը: Ժամանում են հայոց դեսպանները՝ զինադադար խնդրելու: Իբն Բիբին հաղորդում է նամակի բովանդակությունը, որը շատ նման է թվում Լևոնի կողմից 1216 թ. ուղարկված նամակին. «Եթե փաղիշահը մտադրություն ունի պատժել գործած հանցանքի համար, ապա հպատակ մեղսագործիս քո մեծաթիվ զորքից բաժին հասած պատիժն արդեն իսկ բավարար է: [Սուլթանն] այսպես թե այնպես թողնելու է այս երկրի կառավարչությունն ու իշխանությունն իր ծառաներից մեկի ձեռքին, ուստի թույլ տուր ինձ լինել այդ հավատարիմ և նվիրված ծառան: Ամիրայապետը (բնագրում՝ malik umarā, իմա՝ Մուբարիզ ալ-Դինը) մոռալեցրել է մեր օրը հոգեմաշ քինախնդրությամբ (be-kīn-e ġānfarsāy): Բոլորիս վիճակը բարելավելու համար անհրաժեշտ է, որ քո անծայրածիր ողորմածության շնորհն անես: Կարճ ասած՝ ամեն տարի 1000 հեծյալ և 500 աղեղնավոր՝ իրենց ծախսով, կուղարկեմ տիրակալին՝ ի ծառայություն, դրամներ[ս] կհատեմ երջանիկ տիրակալի հաջողակ տիտղոսներով՝ սովորականի պես պատվելով, կկրկնապատկեմ հարկը և առանց հապաղման և ձգձգման [սուլթանական] հարուստ գանձարան կուղարկեմ»⁶⁴:

⁶² Այսպես սխալով է բնագրում: Նկատի է առնված կամ Հեթում արքան կամ Կոստանդին Պալլը:

⁶³ Ռ. Շուքուրովը դժվարացել է վերծանել երկրի *شركان سواحل و بخراس و انطاك و فريزان ديوى* հատվածը: Մեր կարծիքով հարկավոր է այսպես կարդալ՝ «فرنگان سواحل و بخراس و انطاك و فريزان ديوى», այսինքն՝ «ծովափի, ինչպես նաև Բաղրասի և Անտիոքի ֆրանկերին, տաճարական ասպետներին», ինչպես որ թեհրանյան հրատարակության մեջ է: Տե՛ս **Ibn-i Bībī**, El-Evāmīrū'l-'Alā'iyye, §. 337; **Ibn Bībī**, Al-Awāmīr (Tehrān), §. 309: Բանն այն է, որ Տաճարական հոգևոր-ասպետական միաբանությունը մուսուլմանական աղբյուրներում al-Dāwīyya էր կոչվում, իսկ firān բառի տակ պետք է հասկանալ հին ֆրանսերենի frères-ը («եղբայրներ», եգ.՝ frère): Հատկանշական է, որ ժամանակի հայկական աղբյուրները նույնպես փոխառել են այդ բառը «ֆրերք» հոգնակի ձևով՝ նկատի ունենալով հոգևոր-ասպետական միաբանությունների անդամներին: Բառը փոխառել են նաև ասորի մատենագիրները:

⁶⁴ Տե՛ս **Ibn-i Bībī**, El-Evāmīrū'l-'Alā'iyye, §. 341; **Ibn Bībī**, Al-Awāmīr (Tehrān), §. 312-313 և *հմմտ.* **Ibn Bībī**, Muhtasar, §. 141:

Սելջուկ գորահրամանատարը «թաքվարի» նամակն իր բանագնացի միջոցով ուղարկում է սուլթանին: Եվ մինչ դիտարկվում էր հայկական իշխանությունների առաջարկը, Մուբարիզ ալ-Դինը շարունակում է իր նվաճումները՝ ըստ Իբն Բիբիի գրավելով մոտ 40 բերդ (այդ թվում՝ Մանավղատը, Անդուշ-ժան, Սիկը, Անամուրը և այլն): Սուլթանն ընդունում է հայկական կողմի հաշտության առաջարկը և հնազանդության խոստումը: Փոխադարձ դեսպանագնացություններն ավարտվում են զինադադարի պայմանագրի կնքմամբ (1226 թ.)⁶⁵: Միքայել Ասորու ժամանակագրության հայկական խմբագրություններից մեկում հայ-սելջուկյան հաշտեցման առիթով կարդում ենք. «Ի թուին հայոց ՈՂՆ (675, իմա՝ 1226 թ.) միաբանութեամբ ամենայն իշխանացն տուին զՋապէլ դուստր Լեւոն թագաւորին ի կնութիւն Հեթմոյ որդւոյ պարոն Կոստանդեայ, և թագաւորեցուցին ի վերայ Հայոց, որ էր տղայ հասակաւ. և հայր նորա կարգաւորէր զթագաւորութիւն, որ և արար սէր ընդ Ալադին սուլտանն և հնազանդեցաւ նմա՝ տալով նմա յամենայն ամի երեք հարիւր այր ի ծառայութիւն»⁶⁶: Հեթումի հնազանդությունը Քայկուբատ Ա-ի իմաստնության դրսևորում է համարում Սմբատ Սպարապետը. «Իսկ պարոն Կոստանդին պայլն զի խելօք էր՝ իմաստութեամբ անցոյց զաւուրքն. եւ իւր թապտրովն էառ ի վերայն հարկ որ տայ ամէն տարի հեծեալ ի ծառայութիւն չորս հարիւր մարդ: Եւ զինչ գտնուր ֆռանկցի օժտնի՝ նա քնքշեցնէր»⁶⁷:

1226 թվականի հաշտությունը տևական՝ մոտ տասնութամյա խաղաղություն է հաստատում Ռումի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի հարաբերություններում: Սրա պատճառն այն էր, որ հայկական իշխանությունները՝ ի դեմս Հեթում արքայի և Կոստանդին Պայլի իրենց «ստորակայական» կարգավիճակի վերաբերյալ կասկածներ չէին հարուցում սելջուկների մոտ՝ պարբերաբար մասնակցություն բերելով սուլթանի ռազմական ձեռնարկումներին⁶⁸:

⁶⁵ Տե՛ս **Ibn-i Bībī**, *El-Evāmīrū'l-'Alā'iyye*, §. 334–343; **Ibn Bībī**, *Al-Awāmīr* (Tehrān), §. 307-314 և *հմմտ. Ibn Bībī*, *Muhtaşar*, §. 138–142:

⁶⁶ **Միխայել Ասորի**, *Ժամանակագրութիւն* (1871), էջ 518–519, *ինչպես նաև նույնի*՝ (1870), էջ 525–526: Հմմտ. **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, էջ 190:

⁶⁷ **Սմբատ**, *Տարեգիրք* (Փարիզ), էջ 119: Սիմոն դը Սենթ-Քվենտինն էլ գրում է, որ «Փոքր Հայաստանի արքան պարտավորվել էր ծառայել «Թյուրքիայի» սուլթանին (*soldano Turquie*)՝ 4 ամսով 300 նիզակ[ակիր] տրամադրելով, ավելին, իր մայրաքաղաքում (*in sua majori civitate*) տարին մեկ անգամ հայտարարելով Մուհամմադի Օրենքի գերակայությունը: Իր երկրում նրա հատած դրամների կեսը, գնում էր սուլթանին»: Նույնպես և Լամբրոնի տերը (իմա՝ Կոստանդին Լամբրոնացին) պարտավորված էր ծառայելու նրան 29 նիզակ[ակիր]ներով, *ինչպես արքան, այսինքն ներկայանար այնտեղ, որտեղ սուլթանը կցանկանար նրան ուղարկել*»: Տե՛ս **Simon de Saint-Quentin**: *Histoire des Tartares*, ed. par J. Richard (Paris, 1965), p. 70:

⁶⁸ Վառ օրինակ է Երզնկայի (Յասի-Չիմենի) 1230 թ. ճակատամարտը Ջալալ ալ-Դինի խորեզմյան բանակների դեմ: Ռումի սելջուկյան և Ասորիքի Ալյուբյանների զորքերի հետ մեկտեղ մասնակցել են նաև «հայ-ֆրանկյան» զորամիավորումներ Կիլիկյան Հայաստանից:

Հայ-սելջուկյան դիվանագիտական հարաբերություններում դրամատիկ իրադարձություններով և փոխադարձ դեսպանագնացություններով լի շրջան էին 1243–1245 թվականները: Ըստ Իբն Բիբիի՝ Ղիյաս ալ-Դին Քայխուսրով Բ-ը, ստանալով մոնղոլ զորավար Բաշու (Բաջու) նոյինի կողմից Կարինի (էրզրու-մի) առման մասին լուրը, փորձել է իր դաշնակից կամ իր ազդեցության տակ գտնվող երկրներից զորքեր հավաքել մոնղոլներին դիմակայելու համար: Նա դեսպանություններ է ուղարկել նաև «Սսի պայլին» (նկատի է առնված կամ Հեթումը կամ Կոստանդին Պայլը) և մեծ դրամական շնորհի (100 հզ. դրնար և մի քանի միլիոն դրոհամ) և Հերակլեան հայոց թագավորությանը հանձնելու դիմաց ֆրանկ վարձկանների օժանդակ զորքերով իրեն օգնության հասնելու «պահանջով» դիմել: Սուլթանի առատաձեռն նվերն ավելի շատ կաշառքի տպավորություն է տալիս՝ վկայելով, որ Սսի «անվերապահ հպատակությունը» Ռումին ընդամենը պատրանք էր: Քայխուսրով Բ-ը, փաստորեն, օգնական ուժեր էր գնում կամ վարձում իրեն հավատարմության երզում տված հարևաններից: Ինչևէ, սուլթանի հարցմանն ի պատասխան «Սսի պայլը» վերահաստատել է իր հնազանդությունը⁶⁹:

Իսկ ըստ Բար Հեբրեոսի՝ Կոստանդին պայլն անձամբ Կեսարիա է գնացել, որտեղ սուլթանն ընդունել է նրան մեծ պատվով և շնորհներով ու մոնղոլների դեմ պատերազմում իրեն օգնելու խոստում ստացել⁷⁰: Այն, որ ի շարս Փոքր Ասիայի և Ասորիքի մի խումբ Այյուբյան տիրակալների՝ Ռումի սուլթանին զինական օգնություն տրամադրելու պարտավորություն է ստանձնել նաև Հայոց արքան, հաստատում է նաև Սիմոն դը Սենթ-Քլենտինը, ում պնդմամբ հայոց արքան պետք է 4 ամսով 1400 «նիզակ» (այսինքն՝ «նիզակակիրների զորաջոկատներ») տրամադրեր սելջուկյան բանակին⁷¹:

Ըստ Իբն Բիբիի երկի համառոտ տարբերակի՝ երբ սելջուկյան զորքը պատրաստվում էր մոնղոլների ժամանմանը, «...լուր ստացվեց, որ հասնում է նաև takwar-ը («թագավորը») երեք հազար ֆրանկներով»⁷²: Ռ. Շուքուրովն ու նրան հետևելով նաև Դ. Կորոբեյնիկովը Ռումի սուլթանին օգնության գնացող

Տե՛ս Վ. Տեր-Ղևոնդյան, «Երզնկայի 1230 թ. ճակատամարտը և կիլիկեցիների դիրքորոշումը», *ԲՄ*, հտ. 21, 2014, էջ 147–157:

⁶⁹ Տե՛ս **Ibn-i Bībī**, *El-Evāmīrū'l-'Alā'iyye*, §. 518–519; **Ibn Bībī**, *Al-Awāmīr* (Tehrān), §. 456–457 և հմմտ. **Ibn Bībī**, *Muhtaşar*, §. 236:

⁷⁰ **Bar Hebraeus**, *Chronography*, p. 407: Ըստ Սիմոն դը Սենթ-Քլենտինի, երբ Կոստանդին պայլը Կեսարիա է գնացել, նա սուլթանից մեծ քանակությամբ ոսկեդրամ, ինչպես նաև ոսկյա և արծաթե սպասք է ստացել: Տե՛ս **Simon de Saint-Quentin**, *Histoire des Tartares*, p. 69–70:

⁷¹ Տե՛ս **Անդ**, p. 70–71: Տե՛ս նաև **Cl. Cahen**, *La Turquie*, p. 93–94:

⁷² Տե՛ս **Ibn Bībī**, *Muhtaşar*, §. 238: Հմմտ. **Ibn-i Bībī**, *El-Evāmīrū'l-'Alā'iyye*, §. 522; **Ibn Bībī**, *Al-Awāmīr* (Tehrān), §. 459:

այս takwar-ին նույնացրել են Տրապիզոնի կայսր Մանուել Ա Մեծի հետ⁷³: Մինչդեռ այն, որ Իբն Բիբիի երկի ամբողջական տարբերակում takwar-ի փոխարեն bāyl Sīs («Սսի պալ») է, խոսում է հիշյալ տեսակետի սխալ լինելու մասին: Հեթումը գուցե և ձևացրած լինի, թե ինքը նույնպես օգնություն է գնում սուլթանին՝ այնքան ժամանակ հապաղելով, ինչպես Բար Հեբրեոսն է գրում, «մինչև տեսնի՝ ինչով են ավարտվում դեպքերը»⁷⁴:

Ինչևէ, Հայոց արքան և Կոստանդին պալը ոչ միայն չկատարեցին հայֆրանկյան օժանդակ զորք տրամադրելու իրենց տված խոստումը, այլև Կիլիկիո երկիրն ու ժողովրդին մոնղոլների ավերիչ ներխուժումից զերծ պահելու նպատակով հարկադրաբար, թեկուզև հյուրընկալության բարոյական նորմի կոպիտ խախտմամբ Ռումի սելջուկ սուլթանի՝ Կիլիկիայում ապաստան գտած ընտանիքին (մորը՝ Մահ Փերի-Խաթունին, կնոջը և դստերը) հանձնեցին մոնղոլներին⁷⁵: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Հեթումը մեծ դժվարությամբ և մեղքի զգացումով է գնացել այդ քաղվին՝ ասելով. «...լավ էր ինձ եթէ զորդի իմ գլխոն խնդրեալ էին յինէն, քան թէ գնոսա»⁷⁶: Հիրավի, Հեթումի արարքը միակողմանի գնահատել չի կարելի, քանզի Ղիյաս ալ-Դինի ընտանիքին մոնղոլներին հանձնելով նա հազարավոր հայրենակիցների անվտանգության կենաց-մահու հարց էր լուծում: Զուր չէ, որ ժամանակակից հիշատակագիրներից մեկն ուրախությամբ արձանագրում է. «Արդ, ի սոյն այս բազմավրդով ժամանակի, ի ձեռն վերայ նշանակեալ թագաւորին Հեթմոյ խորագէտ իմաստութեան և նախահոգակ հանճարեղութեան, մեք մնամք ի խաղաղութեան՝ որպէս կղզի ինչ ի յալեաց մնացեալ յանդորր»⁷⁷:

⁷³ P. Шукуров, *Великие Комнины*, с. 160; D. Korobeinikov, *Byzantium and the Turks*, pp. 178–179: Ռ. Շուքուրովը հետազոտում փոխել է իր կարծիքը հիշյալ takwar-ի անձի վերաբերյալ: Տե՛ս P.M. Шукуров, “Образ Киликийской Армении”, с. 104:

⁷⁴ Տե՛ս Bar Hebraeus, *Chronography*, p. 407: Հմմտ. Cahen, *La Turquie*, p. 96: Նման մի տեղեկություն էլ հաղորդում է Սիմոն դը Սենթ-Քվենտինը: Ըստ նրա, երբ մոնղոլները գրավել են Կեսարիան (գրավվել է Քյոսեդաղի ճակատամարտից հետո – Գ.Գ.), լուր է տարածվել, թե հայոց արքան գալիս է այն ազատագրելու, չնայած որ հազիվ թե մեծ զորքով գար: Այնուամենայնիվ, մոնղոլներն այս լուրից տագնապել են և թողնելով իրենց ավարը փախել: Բայց հետո, երբ արքայի ժամանման լուրը չի հաստատվել, վերադարձել են: Տե՛ս Simon de Saint-Quentin, *Histoire des Tartares*, p. 76:

⁷⁵ Տե՛ս Ibn-i Bībī, *El-Evāmīrūl-‘Alā’iyye*, §. 536; Ibn Bībī, *Al-Awāmīr* (Tehrān), §. 471–472; Ibn Bībī, *Muhtasar*, §. 245; Սմբատ, *Տարեգիրք* (Վենետիկ), էջ 226–227; Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 285; Bar Hebraeus, *Chronography*, pp. 407–408:

⁷⁶ Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 285:

⁷⁷ ՀԶԶ, ԺԳ դար, էջ 233:

Հեթումի և Կոստանդին Պալլի այս արարքը սելջուկ սուլթանը չէր կարող ներել⁷⁸: 1245 թվականին Ղիյաս ալ-Դինը վճռում է վրեժխնդիր լինել հայերից: Իկոնիայի սուլթանուլթյանը ստորակա հայազգի Կոստանդին Լամբրոնացի իշխանի հետ դաշնակցած՝ սելջուկյան բանակը Սահիբ Շամս ալ-Դինի հրամանատարութեամբ երկու անգամ՝ 1245 թ. և 1246 թ., ներխուժեց Կիլիկիա, ավերածութեան ու թալանի մատնեց երկրի շատ բնակավայրեր⁷⁹: Մասնավորապես 1246 թ. սելջուկներն ահարկու պաշարման ենթարկեցին Տարսոնը՝ քարանետ մեքենաներով քանդելով պարիսպները⁸⁰: Եվ թեև Սմբատ Սպարապետն ու Կոստանդին Պալլն անձամբ գլխավորեցին Տարսոնի պաշտպանությունը, քաղաքն անկարող եղավ դիմադրել թշնամուն: Նույն Սմբատն իր տարեգրության մեջ գրում է, որ կռվի թե՛ պահին վրա են հասել մոնղոլների դեսպանները և օգնություն առաջարկել պաշարվածներին, բայց «նա չէաք ի լսել. վասն զի զքաղաքն առած ունեին»⁸¹: Քաղաքի վերջնական առմանը խանգարեցին միայն սկսված և ըստ Սմբատի 20 օր տևած տեղատարափ անձրևներն ու սուլթան Քալխասրով Բ-ի հանկարծահաս մահը: «Այդ թվականին սուլթան Ղիյաս ալ-Դինը մեծաթիվ բանակ ուղարկեց Տարսոն քաղաքի վրա, գրում է Բար Հեբրեոսն իր արաբերեն ժամանակագրության մեջ՝ շարունակելով, և այն որոշ ժամանակով պաշարման օղակի մեջ առան, սկսեցին ճնշել և մոտ էին այն ուժով գրավելուն, եթե պաշարումը չհամընկներ այդ օրերին սուլթան Ղիյաս ալ-Դինի մահվան հետ»⁸²: Այնուամենայնիվ, Սահիբ Շամս ալ-Դինը, սուլթանի մահվան փաստը հայերին չբացահայտելով, նահանջելուց առաջ

⁷⁸ Կոստանդին արարքի մասին պարսավանքով է արտահայտվում նաև Սիմոն դը Սենթ-Քվենտինը: «Լեոնի մահից հետո, գրում է նա, այս Հայաստանի (իմա՝ «Փոքր Հայաստանի»՝ Կիլիկիայի) պարոններից մեկը՝ Կոստանդին անունով, բռնի ուժով առևանգեց նրա դստերը և ամուսնացրեց իր որդու հետ: ... Սույն Կոստանդինը տարբեր հնարներով և միջոցներով սպանել է Հայաստանի վաթսուներկու մեծ պարոնների: Եվ երբ Թուրքիայի սուլթանը նրա մոտ է ուղարկել իր մորը և քրոջը՝ որպես իրեն հավատարիմ այրի և բարեպաշտ քրիստոնյայի, որ ապաստան գտնեն նրա մոտ և խույս տան թաթարներից (իմա՝ մոնղոլներից), նա իրեն դրսևորել է որպես անհավատ և ուխտադրուժ: Նա հանձնել է նրանց թաթարներին՝ նրանց բարեհաճությունը շահելու համար»: Տե՛ս Simon de Saint-Quentin, *Histoire des Tartares*, p. 89:

⁷⁹ Այս մասին տե՛ս Cl. Cahen, *La Turquie*, p. 229–230; P.M. Шукров, “Образ Киликийской Армении”, с. 106:

⁸⁰ Հայկական աղբյուրների վկայությունները տե՛ս Սմբատ, *Տարեգիրք (Փարիզ)*, էջ 123–124, *Նույնի՝ Տարեգիրք (Վենետիկ)*, էջ 227–228; ՄԺ, *հտ.* 1, էջ 81 և *Հեթում Պատմիչ*, *Ժամանակագրություն*, էջ 51; *Սամուէլ Անեցի և Շարունակողներ*, *Ժամանակագրություն*, էջ 247; *Ա.Ս. Մաթևոսյան*, «Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաշախտի ժամանակագրությունները», էջ 190; *Լ. Տեր-Պետրոսյան*, *Խաչակիրները և հայերը*, էջ 540 (*Հեթում Նղիրցի*, «Համառօտ պատմություն ժամանակաց»):

⁸¹ Սմբատ, *Տարեգիրք (Փարիզ)*, էջ 123 և *Նույնի՝ Տարեգիրք (Վենետիկ)*, էջ 227:

⁸² Ibn al-ʿIbrī, *Muhtasar*, §. 446: Գրեթե նույն հաղորդումը կա նաև հեղինակի ասորերեն ժամանակագրության մեջ: Հմմտ. *Նույնի՝ Chronography*, p. 410:

գիշերով սուրհանդակի միջոցով նամակ է հղում թաքվարին՝ խորամանկութ-
յամբ նրանց խաղաղություն առաջարկելով Պռականա և մի քանի այլ ամրոց-
ներ հանձնելու դիմաց: Իբն Բիբին հաղորդում է նամակի բովանդակությունը.
«Ես միշտ ձգտել եմ նեցուկ լինել Ձեզ, և քանի անգամ եմ մեծ սուլթան Ալա
ալ-Դին Քայկուբադի օրոք, թո՛ղ Ալլահը լուսավորի նրա հոգին, տիրակալի
զորքերին հետ պահել Ձեր երկիր խուժելու մտադրությունից: Թաքվարը
[երևի] համոզված և վստահ էր, որ նույնպես և այս անգամ պիտի կանգնեց-
նեի: Սակայն այն պատճառով, որ նորին սուլթանության գայրուլթի ծովն ա-
լեկոծվել էր, պոռթկումով բոցավառվել, վրդովմունքի և ցասման քամիներով
փոթորկվել: Որովհետև երբ մեր զորքին շար աչքը դիպավ Քյոսե-Դաղում, դուք
բոլոր արգահատելի արարքները՝ այդ թվում շարիքը, կեղծավորությունը և
դավաճանությունը, գործեցիք: Եվ այլևս տեղ չի մնացել ներողության համար,
ուստի մենք ստիպված էինք մեր զորքը ձեր դեմ հանել: Եթե ես հիմա հրաման
արձակեմ, մենք անմիջապես քաղաքը կգրավենք: Բայց եթե թաքվարը զղշա
և ներողություն հայցի, վճարի նախկինում կնքված պայմանագրով ստանձ-
նած հարկային պարտավորությունը, վերադարձնի այդ ժամանակամիջոցում
գողացած բերդերը՝ հանձնելով սուլթանի ենթականերին և ի հատուցում քո
մեղքի՝ հարկերն անհապաղ գանձարան կուղարկի, ես կպարտավորվեմ սրդո-
ղության փոշին լվանալ սուլթանի ազնիվ սրտից իմ միջնորդության և հպա-
տակության ջրով»⁸³:

Երբ հայոց արքան (մի տեղ՝ bayl Sīs, այլուր՝ takwar Sīs) ստանում է Սահիբ
Շամս ալ-Դինի ուղերձը, շտապում է համաձայնել: Նա իր հերթին դեսպան է
ուղարկում սելջուկ էմիրների մոտ և amān («անվտանգության երաշխիք») խնդրելով՝ Պռականա (բնագրում՝ Brākanā) բերդը մի քանի այլ ամրոցների
հետ գիշեց սուլթանի ենթականերին: Նա նաև ուղարկեց նախկինում չվճա-
րած և վճարելիք հարկերը (ḥarāj-e māḍī wa-mostaqbal)՝ նվերների հետ միասին⁸⁴:
Նույնի մասին Սմբատը գրում է, որ իրենք, անտեղյակ լինելով սուլթան Արյաս
ալ-Դինի մահվան փաստին, համաձայնեցին Պռականա ամրոցը գիշելու դի-
մաց պատերազմական գործողությունները դադարեցնելու սելջուկների ա-
ռաջարկին: «Եւ չէաք իմացեր զսուլտանին մահն.- գրում է նա,- զի կարէաք
նեղել. յետ երկու տարուոյ (այսինքն՝ 1248 թ.) գողացաք զՊռականա»⁸⁵: Փաս-
տորեն, երկու տարի անց հաջողվել է կրկին տեր դառնալ կորցրած բերդին:

⁸³ **Ibn-i Bībī**, El-Evāmīrül-'Alā'iyye, փ. 546-547; **Ibn Bībī**, Al-Awāmīr (Tehrān), փ. 478-480; **Ibn Bībī**, Muhtasar, փ. 250.

⁸⁴ *Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:*

⁸⁵ *Տե՛ս Սմբատ, Տարեգիրք (Փարիզ), էջ 124: Հմմտ. նույնի՝ (Վենետիկ), էջ 228:*

Հայ-սելջուկյան այս պատերազմի և բանակցությունների մասին հաղորդում է նաև Իզզ ալ-Դին Իբն Շադդադը, միայն թե իրադարձությունները փոքր-ինչ այլ կերպ է ներկայացնում. «Երբ զինադադար հաստատվեց Ղիյաս ալ-Դինի և թաթարների միջև, նրանք թուլլտվություն խնդրեցին [նրանցից] պատերազմելու Հեթումի դեմ և ստացան այդ թուլլտվությունը (ընդգծումը մերն է – Գ.Դ.): [Սուլթանը] զորք պատրաստեց նրանց դեմ, արշավեց նրանց վրա, գերեվարեց և պաշարման մեջ գցեց Տարսոնում և գրեթե պիտի գրավեր այն: Սակայն Հեթումը [սելջուկ] զորահրամանատարի մոտ դեսպան ուղարկեց, ով նրա մոտ գնաց գումարով, իսկ նա էլ վերցրեց այն և հեռացավ: Դա տեղի ունեցավ [հիշրայի] 643 թ. (1245 / 1246 թ.)»⁸⁶: Նախ, նկատենք, որ ըստ արաբ մատենագրի՝ հայ-սելջուկյան զինադադարը հաստատվել է Հեթումի վճարած դրամի դիմաց, այլ ոչ թե՝ Պռականա բերդի հանձնման: Հակառակ Սմբատի վերոբերյալ վկայությանը՝ ավելի կարևոր է Իբն Շադդադի այն պնդումը, թե Բաշու նոյինը թուլլ է տվել սելջուկներին արշավել Կիլիկիա: Սա նշանակում է, որ, չնայած մոնղոլներին հայտնած հպատակությանը, հայ-մոնղոլական գործակցային հարաբերություններ դեռ ձևավորված չէին, և Բաշուն սկզբում ավելորդ է համարել միջամտել Ղիյաս ալ-Դինի և Հեթումի կոնֆլիկտին⁸⁷:

1245 թվականի դեպքերից հետո Իբն Բիբիի երկում հայ-սելջուկյան դիվանագիտական շփումների, պաշտոնական նամակագրության, փոխադարձ դեսպանագնացությունների և նվիրաբերման վերաբերյալ հաղորդումներ այլևս չենք գտնում:

Այնուամենայնիվ, որոշ տեղեկություններ ենք գտնում օտարալեզու այլ աղբյուրներում: Օրինակ, Ֆրանսիայի արքա, խաչակրաց է արշավանքի առաջնորդ Լուի Թ-ի (կառ. 1226–1270 թթ.) վարքագրության հեղինակ Ժան դը Ժուանվիլը (մահ. 1317 թ.) գրում է, որ հայոց արքա Հեթումը Լուիին մի մեծարժեք վրան է նվիրել: Հայոց արքան հայտնել է, որ այդ վրանն իրեն Իկոնիայի սուլթանի ֆարրաշն (բնագրում՝ *ferrais*) է նվիրել, որը պատասխանատու էր սուլթանի վրանների և կացարանին հետևելու համար⁸⁸:

Ընծաների փոխանակության մի նշանակալի դեպքի մասին տեղեկություն գտնում ենք արաբալեզու մատենագրության մեջ: Սուլթան Բայբարս ալ-Բունդուկդարիի կենսագիր և արքունի դիվանապետ Մուհի ալ-Դին Իբն Աբդ ալ-Ջահիրը իր *Al-Rawḍ al-zāhir* երկում հայտնում է հայ-սելջուկյան հաշտեցման

⁸⁶ **Izz al-Dīn Ibn Šaddād**, *Al-A'lāq al-ḥaṭīra fī dīkr umarā' al-Šām wa-l-Ğazīra*, ց. 1.2, bi-taḥqīq Yahyā Zakarīyā 'Abbāra (Dimašq, 1991), ց. 240.

⁸⁷ **Cl. Cahen**, *La Turquie*, p. 230.

⁸⁸ *Memoirs of the Crusades* by Villehardoin & **de Joinville**, tr. by Sir Frank Marzials (London & New York, 1908), p. 171.

մոնղոլական իշխանությունների նախաձեռնած մի հաջող փորձի մասին: Մասնավորապես գրում է, որ երբ հայոց Հեթում արքան 1263 թ. վերադառնում էր Հուլաղուի մոտից, նա ոչ թե Կիլիկիա մտավ, այլ ուղևորվեց Ռումի սուլթան Ռուքն ալ-Դին Կիլիչ Արսլան Դ-ի (կառ. 1246–1264 թթ.) մոտ: Ռուքն ալ-Դինը, որը թշնամություն ուներ Հեթումի նկատմամբ, մտադրվել էր բռնել նրան և մեղքը բարդել թուրքմենների վրա: Հայոց թագավորը, սակայն, կանխատեսել էր սա և Հուլաղուից իրեն ուղեկից էր խնդրել մոնղոլ դատավորի (qāḍī) Հայոց իշխողը նրան շատ ընծաներ էր շնորհել՝ իր կողմը գրավելու նպատակով՝ ասելով. «Ես չեմ կարող Ռումի երկիր մտնել առանց թաթարական զորախմբի ուղեկցության, որ կապահովի իմ անվտանգությունը»: [Այդժամ] կադին գրեց Ռումում գտնվող թաթարներին, և նրանցից մի զորախումբ եկավ՝ մոտ քառասուն հեծյալից բաղկացած: Այդ բանից հետո [միայն] նա ճանապարհ ընկավ: Ռումի տերը դիմավորեց նրան, բայց վախեցավ Հուլաղուի կադիին տեսնելով, իսկ Հայը չվախեցավ: Նրանք երկուսն էլ թանկարժեք նվերներ տվեցին իրար: Ռումի տիրոջ նվերը ներառում էր 14 նժույգ և 40 հզ. դիրհամ, արքունիքի (բնագրում՝ al-maǧlis) ամբողջ ոսկյա և արծաթյա սպասքը, եզներ և այլն, իսկ հայը նրան տվեց 4 բերդ: [Այնուհետև] բոլորով ուղևորվեցին դեպի Հիրկալա (իմա՝ Հերակլես), որտեղ դաշինք կոեցին և համաձայնության եկան»⁸⁹:

Այս դեպքը հայ հեղինակներից արձանագրել են նաև Սմբատ Սպարապետն ու Հեթում Պատմիչ Կոռիկոսցին: «Եւ խանն Հուլայուն,- գրում է Սմբատը,- վասնզի յոյժ սիրէր զթագաւորն, առաքեաց զկնի իւր իրաւադատ Մուղալք Արղուչիք»⁹⁰, որք եկեալք զկնի թագաւորին մինչեւ յԱռակլի, եւ եկն անդ սուլտանն Հոռոմոց Ըռուզնատինն, եւ եղեն անդ աւուրս ինչ եւ եդին դաշինս սիրոյ երգմամբ, եւ արարին խաղաղութիւն, եւ եղեն հայր եւ որդի՝ թագաւորն եւ սուլտանն, եւ դարձան իւրաքանչիւր ի տեղի իւր»⁹¹: Հեթում Պատմիչի հաղորդումը երկու ինքնակալների հանդիպման նպատակն ավելի դիպուկ է նկարագրում՝ «վասն բերթերաց սնօռաց բաժանելոյ», այսինքն՝ «սահմանային բերդերի բաժանման համար»⁹²:

⁸⁹ *Stéfan Ibn ‘Abd al-Zāhir*, *Al-Rawḍ al-zāhir*, §. 191–192: Հմմտ. **Baybars al-Manṣūrī**, *Zubdat al-fikra*, §. 88, *ինչպես նաև նուլնի* Muhtār al-aḥbār, §. 27; **al-Nuwayrī**, *Nihāyat al-arab*, §. 30, §. 165; **al-Aynī**, *‘Iqd al-ǧumān*, §. 1, §. 384:

⁹⁰ Արղուչիների (մոնղոլերեն՝ «յարուգա» (yaruǰa) «դատավարություն» բառից) ինստիտուտի մասին տես հատկապես **I. Vásáry**, “The Preconditions to Becoming a Judge (Yarguči) in Mongol Iran”, *JRAS*, vol. 26 (1–2), pp. 157–169, *ինչպես նաև D. Bayarsaikhan*, *The Mongols*, p. 103, n. 28 և n. 29 և հիշյալ ծանոթագրություններում հղված աղբյուրները:

⁹¹ **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք (Վենետիկ)*, էջ 241:

⁹² **Հեթում Պատմիչ**, *Ժամանակագրութիւն*, էջ 53 և **ՄԺ**, հտ. Ա, էջ 82:

Թորոս Ռոսլինի ձեռքով գրված մի ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Հեթումը, ձևավորված քաղաքական պատշաճ պայմաններն օգտագործելով, 1262 թ. մի շարք բերդեր է խլել Ռուսի սուլթանությունից. «Այլև բարեպաշտութեամբն իւրով յԱստուած զորացեալ հէրքեք զհոյս հաքարածին ծննդոցն և անարինաց սեռիցն, բազում անգամ յաղթեալ սուլտանին Հոռոմոց, և առեալ զամուրս նորա՝ զանմատչելին Մունտաս, և զՄանիանն, զըՍիկի և զայլս բազում զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ»⁹³: Հավանաբար Հեթումի գրաված այս բերդերից մի քանիսի զիջման և հիշյալ նվերների փոխանակման արդյունքում էլ կայացել է հաշտությունը:

Ռուսի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի վերնախավերի միջև ընթանների կիրառմամբ հարցեր կարգավորելու մի դեպքի մասին էլ պատմվում է Բար Հեբրեոսի ասորերեն ժամանակագրության մեջ: Ըստ պատմիչի՝ Ռուսի սուլթանության վեզիր Մուլին ալ-Դին Փերվանեն, ով մանկահասակ Ղիյաս ալ-Դին Քայխոսրով Գ (կառ. 1265–1284 թթ.) սուլթանի խնամակալը լինելով, համարվում էր երկրի փաստական կառավարիչը, ցանկություն է հայտնում բարեկամանալ Հեթում արքայի հետ՝ կնուծյան առնելով նրա դստերից մեկին: Այս հարցով միջնորդելու նպատակով նա դիմում է Բարսեղ անունով մի հայ քահանայի, ով «թաթարների արքայի (նկատի ունի իլխանին) դեսպաններից էր»: Վերջինս խորհուրդ է տալիս վեզիրին հանդիպել հայոց արքային և նվերներով պատվել, երբ նա կանցնի իր երկրով Իլխանությունից վերադարձի ճանապարհին: Բանն այն է, որ այդ ժամանակ ակնկալվում էր հայոց արքայի վերադարձը Աբաղա իլխանի արքունիքից, որտեղ գնացել էր մամլուքյան սուլթան Բայբարսի պահանջած Սունկուր ալ-Աշկարի ազատության հարցով

⁹³ Տե՛ս **ՀԶԷ, ԺԳ դար**, էջ 317: Մոնղոլների Մեծ խան Մանգուի (Մոնգկեի) մոտից «դաշինքով» վերադարձած Հեթում արքան վստահություն էր ձեռք բերել և արդեն իրեն ավելի ազատ էր զգում Ռուսի սելջուկների հետ հարաբերություններում՝ դեռ 1256 թվականից համառ պայքար սկսելով մի շարք սահմանային բերդերի համար: Հմմտ. **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք (Վենետիկ), էջ 231, 234–235 (պատմում է Մունգաս բերդի ազատագրման հանգամանքների մասին, որին տիրելու համար թեժ պայքար էր գնում դեռ 1259 թվականից): Հմմտ. **նույնի՝** Տարեգիրք (Փարիզ), էջ 124; **ՄԺ**, հտ. Ա, էջ 82; **նույնի՝** հտ. Բ, էջ 70–71 և **Հեթում Պատմիչ**, ժամանակագրություն, էջ 52, 53, ինչպես նաև **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, ժամանակագրություն, էջ 250, 251; **Լ. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները և հայերը, էջ 541 (Հեթում նղիրցի, «Համառօտ պատմություն ժամանակաց»); **Ա.Ս. Մաթևոսյան**, «Հեթում Ախտուց Տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները», էջ 190: Ինչպես կարելի է եզրակացնել այս աղբյուրների վկայություններից, Մանիոն բերդն էլ 1260–1261 թթ. միջակայքում կովախնձոր է եղել նաև հայերի և թուրքմեն կարամանյանների միջև, որից հետո Հեթումի գրավելուց առաջ բերդը հավանաբար կրկին անցած է եղել Իկոնիայի վերահսկողության տակ: Հմմտ. **Ա. Հովհաննիսյան**, «Կիլիկիայի հայկական թագավորության և Կարամանյան պետության հարաբերությունների պատմությունից (XIII դարի երկրորդ կես)», ՊԲՀ, № 1 (2014), էջ 127–130:

բանակցելու: Վերջինս, ինչպես գիտենք, պիտի փոխանակվեր հայոց արքայազն և գահաժառանգ Լևոնի հետ. «Այսպես,- շարունակում է նա,- երբ արքան վերադառնում էր ուրդուից, և ժամանել էր Կարատայի իջևանատուն՝ այնտեղ գիշերելով, Փերվանեն նրա մոտ եկավ՝ Ռումի բոլոր մեծամեծերի ուղեկցությամբ և նրան շատ արժեքավոր նվերներ մատուցեց՝ խնդրելով նրա դստեր [ձեռքը]: Բայց քանի որ արքան վախենում էր, որ նա կարող է ճանապարհին իրեն ծուղակը գցել և վնասել, նա չվիրավորեց նրան [մերժելով], այլ խոստացավ և իր աջ ձեռքը մեկնեց՝ ճանապարհ ընկնելով իր երկիրը: Երբ Փերվանեն սկսեց խնդրել նրան, արքան պատասխանեց. «Մեզ համար նպատակահարմար չի լինի հարսանյաց հանդես անել, երբ նրա եղբայրը բանտարկության մեջ է: Փերվանեն սպասեց մինչև որ նրա եղբայրը եկավ, և որևէ պատրվակ չմնաց նրան (դստերը) նրանից հեռու պահելու համար, բայց դուստրը մահացավ, և Բարսեղ վանականը [նույնպես] զայրույթի մեջ մահացավ»⁹⁴: Խոսքն այստեղ Հեթումի Զաբել (Իզաբել) անունով դստեր մասին է, ով մահացել է 1268/1269 թ.⁹⁵:

Ամփոփելով նշենք, որ հրաշալի կլիներ, եթե հայ մատենագրության մեջ պահպանված լինեին Մամլուքյան սուլթանության, Ռումի սելջուկյան սուլթանության և մոնղոլական Իլխանության հետ դիվանագիտական շփումների վերաբերյալ բնօրինակ վավերագրեր: Դա հնարավորություն կտար մեզ համեմատության լույսի տակ քննել մոսուլմանական մատենագրության մեջ պահպանված և սուլյն հետազոտության առարկա դարձած վավերագրական նյութը: Այս պարագայում անգամ չի կարելի թերագնահատել մոսուլմանական արաբալեզու և իլխանական պարսկալեզու մատենագրության մեջ՝ պատմագրական երկերում և քարտուղարության ձեռնարկներում պահպանված նյութի արժեքը: Ավելին, ներկա պարագայում դրա կարևորությունն ինչ-որ առումով ավելի ցցուն է դառնում, քանզի մեզ մեծապես օգնում է երևակել հայոց թագավորության պատկերը մերձմիջերկրածովյան տարածաշրջանի ԺԳ-ԺԴ դարերի քաղաքական ուժերի դիվանագիտական հարաբերությունների համայնապատկերում, ավելի լավ հասկանալու նրա քաղաքական դերի և կշռի աստիճանական անկման և կործանման պատմական գործընթացները:

⁹⁴ Bar Hebraeus, *Chronography*, p. 447.

⁹⁵ Տե՛ս նաև Լ. Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը*, էջ 312–313, ծնթգր. 84:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Բնագրեր և թարգմանություններ.

1. Ալ-Աշրաֆ Խալիլ սուլթանի՝ Աքրայի գրավումից հետո Հեթում Բ-ին հղած նամակի լատիներեն թարգմանության բնագիրը և վերջինիս հայերեն թարգմանությունը: Պահպանվել է Նորիջի վանքի վանական Բարդուղեմեոս Կոտտոնի «Անգլիայի պատմություն» երկում:

Լատիներեն բնագիր	Հայերեն թարգմանություն
<p style="text-align: center;"><i>Nos Soldanus Mellec et (sic)</i> <i>Asseraph, magnus dominus, sapiens,</i> <i>rectus, fortis, potens, solicitus,</i> <i>bonus seculo et fidei, Soldanus</i> <i>Sarracenorum et perfectorum</i> <i>salvandorum, vivificator juris</i> <i>seculo, faciens justitiam oppressis et</i> <i>opprimentibus, aedificator</i> <i>dominationis.</i></p> <p style="text-align: center;"><i>Soldanus Arabum, Turcorum,</i> <i>et Persarum, conquisitor terrarum et</i> <i>provinciarum, debellator et victor</i> <i>exercituum Francorum, Armenorum,</i> <i>et Tartarorum, rex et dominator in</i> <i>gemmo et gemmis maris, dominus</i> <i>duarum adorationum, orientis</i> <i>scilicet et meridiei, servus duarum</i> <i>grandium domorum, scilicet Mechae</i> <i>et Ierusalem, dominus regum et</i></p>	<p style="text-align: center;">Մենք՝ մեծագույն սուլթան ալ-Մալիք և (sic) ալ-Աշրաֆը, իմաստուն, արդարամիտ, խի- զախ, հզոր, հոգացող, աշխար- հի և կրոնի բարօրություն, սարակենոսների և փրկության ենթակա կատարյալների սուլ- թան, իրավունքը աշխարհի համար վերակենդանացնող, ճնշվածների և ճնշողների համար արդարադատություն հաստատող, տերություն կառուցող:</p> <p style="text-align: center;">Սուլթանն արաբների, թյուրքերի և պարսիկների, հողերի ու գավառների նվա- ճող, ֆրանկների, հայերի ու թաթարների զորքերի գերա- զանցող և հաղթող, թանկար- ժեք քարերի ու ծովերի արքա և տիրակալ, երկու երկրպագութ- յան տեր՝ արևելյան և հարա- վային, երկու մեծ տների Մեք-</p>

<p><i>Soldanorum, participator ammiralium fidelium, filius Soldani Melec Monossorii, ensis fidei, Calaon Salathi, in nomine Dei misericordis misericordiam. Istae nostrae literae nobili et honorabili sapienti, simili leoni, Haytono, de stirpe Christi, gloria[m] nationis crucis, lumen sequentium Jesum, amicum regum et Soldanorum, faciat eum Deus, de his quae providenter in futurum super his quae superventura sunt sibi, et ut uniat eum cum obedientibus private et manifeste, et recipiat in propria persona sua cum patientia tribulationem emergentem supra suam nationem, ex quo viam non invenit contra standi.</i></p> <p><i>Facimus tibi notum, quod civitatem Acon, quae erat sedes fidei crucis, conquisimus eam, et in tam paucis diebus obsedimus eam, quod milites cum omni potentia sua non potuerunt eam defendere et portare multitudinem exercitus obsidentis, et tantum eos distrinximus et coartavimus, quod sustinere nequiverunt multitudinem occisorum, et quantumcumque</i></p>	<p>քայի և Երուսաղեմի սպա- սավոր, արքաների ու սուլթան- ների գերակա, հավատաց- յալների վեհապետի գործակից, սուլթան Մելեք Մոնոսոր, «հավատի սուր» (sic, Սայֆ ալ- Դին) Կալավուն Սալաթիի (sic, Իմա՝ ալ-Սալիհի) որդի:</p> <p>Հանուն բարեգութ և ողոր- մած Աստծո:</p> <p>Մեր այս նամակը [հղվել է]՝ ազնվազարմ, պատվարժան, իմաստուն, առյուծանման Հե- թումին՝ Քրիստոսի զարմից, խաչի ցեղի փառք, Հիսուսի հե- տևորդների լույս՝ ապագայում իր գուշակած բաների մասին, իրեն պատահելիք բաների մա- սին, որպեսզի պարզ ու ակ- ներև ձևով միավորվի իրեն հպատակվողների հետ և համ- բերությամբ սեփական հոգու մեջ ընդունի իր ազգի համար հառնող տագնապը, որին ուղի չի գտնում դիմակայելու:</p> <p>Քեզ տեղեկացնում ենք, որ Աքրա քաղաքը, որ նստավայրն էր խաչի հավատի, նվաճել ենք, և այնքան քիչ օր պաշարեցինք այն, որ զինվորներն իրենց ողջ զորությամբ չկարողացան պաշտպանել այն և դիմանալ պաշարող զորքի բազմութ- յանը, և այնքան էինք նրանց շրջապատել ու նեղել, որ չէին կարող դիմանալ սպանված- ների բազմությանը, և որքան</p>
--	--

<p><i>nominati essent et privilegiati milites, una transacta hora diei, omnes a nobis fuerunt ferrati et compediti. Et milites Hospitalarios omnes noster vibrans ensis consumpsit. Et Templarii prodicionem fecerunt super civitatem Achon et super suos Francos, ex eo quod dubitabant de sua terra; sed nec sic evaserunt ruinae eventum, et similiter Hospitalarii Almanorum. Ex eis nolumus cambium; ecclesias omnes coaequavimus terrae; et super altaribus fuerunt trucidati, qui ad obedientiam populum detinebant et inducebant. Et si multitudinem videretis thesaurorum qui pervenerunt ad manus hominum, nam adcantarii ponderabantur nomine, indeclinabile pondus. Et tanta dominarum fuit multitudo, quod una vendebatur pro dragma. Et si videretis turren Achon, devenerunt enim ad vastitatem et in agriculturam; et hujus civitatis conquestus certus est.</i></p> <p><i>Et ex praesentiarum nostrarum literarum exhibitione scire poteris, corpora mortuorum coaequantur balistariis et ignem supponentes</i></p>	<p>որ մարտիկ կոչեցեալ և արտոնյալ կար, օրվա մեկ ժամն անց բոլորը մեր ձեռքով շղթայվեցին: Եվ բոլոր Հիվանդախնամ զինվորներին մեր փայլկտացող սուրը կոտորեց: Իսկ Տաճարականները դավաճանութուն գործեցին Աքրա քաղաքի ու յուրային Ֆրանկների հանդեպ, քանի որ վախենում էին իրենց երկրի համար, սակայն շխուսափեցին աղետալի ճակատագրից, նույնպես և արման (իմա՝ «գերմանացի») հիվանդախնամները: Նրանցից փոխանակում չենք ուզում. բոլոր եկեղեցիները հողին ենք հավասարեցրել, սեղանների վրա են սպանվել նրանք, ովքեր ժողովրդին մղել են հնազանդության: Անգամ պատրիարքն ինքը շարշարանքի է մատնվել:</p> <p>Եվ եթե տեսնեի՞ք գանձերի բազմութունը, որ մարդկանց ձեռքն էին ընկել, որ անհնար էր կշռել որևէ քաշով: Իսկ տիկնանց թիվն այնքան մեծ էր, որ մեկը վաճառվում էր [մեկ] դիրհամով:</p> <p>Եվ եթե տեսնեի՞ք Աքրայի աշտարակները, որ վերածվել էին ավերակի ու արտի: Եվ այդ քաղաքի գրավումն անհերքելի է: Եվ մեր ներկա նամակի բովանդակությունից կարող ես</p>
--	---

<p>(sic) mortuorum corporibus, in pulverem redacta sunt. Et ex armamentis fieri fecimus compedes pro pedibus eorum qui vivi supersteterunt. Et comites et barones qui super eorum capita portare consueverant, ligati et compediti ad carcerem ducti sunt. Et tu, o rex, si teipsum castigaveris super hujus rei eventum, qui super civitatem Achon evenit, salvus eris; quod si non feceris, sanguinem plorabis cum eis, et super te dicetur quod super eis dicitur, ibis tu et terra tua sicut ipsi iverunt, per ense.</p> <p>Et si cognoveris eventum eorum quae acciderunt, ad profectum melius tibi erit, et venias personaliter cum dominis tuis et altitudinem portarum nostrarum, sicut homo qui vult salutem propriae personae et terrae suae, et qui nolit subterfugere robur potentiae nostrae; et dicere poteris quod post Achom desolationem, nullus remansit praeter me. Idcirco labora cito et cognita de te, antequam in muscipulam cadas.</p>	<p>տեղեկանալ, մեռածների մարմինները ընկած հավասարապես ինչպես աղեղից, այնպես էլ կրակից, մոխրի վերածվեցին: Իսկ նրանց զենքերից կապանքներ պատրաստեցինք ողջ մնացածների ոտքերի համար: Իսկ կոմսերն ու բարոնները, որ սովոր էին գլուխները նրանցից բարձր պահել, կապված ու շղթայված բանտ են տարվել:</p> <p>Եվ դու՛, ո՛վ արքա, եթե ձեռնպահ մնաս Աքրա քաղաքի ճակատագրից, ողջ կլինես: Եթե դա չանես, նրանց հետ արյան արցունք կթափես, և քո մասին կասվի այն, ինչ նրանց մասին է ասվում, դու և քո երկիրը սրի կմատնվեք, ինչպես նրանք մատնվեցին: Եվ եթե հաշվի առնես նրանց ճակատագիրը, որ ընկան, քեզ համար ավելի լավ կլինի, և մեր Բարձր դուռ կգաս անձամբ՝ քո տերերի հետ և երկու տարվա հարկով, որ քո վրա է [դրված], որպես մարդ, որ ցանկանում է իր անձի և իր երկրի փրկությունը, և ով չի ցանկանում ծածուկ ճողոպրել մեր տերության ուժից, կկարողանաս ասել՝ Աքրայի ավերումից հետո ինձնից բացի ոչ ոք չի մնացել: Ուստի արագ աշխատիր և մտածի՛ր քո մասին, քանի դեռ թակարդը չես ընկել:</p>
--	--

2. Ալ-Աշրաֆ Խալիլ սուլթանի՝ Աքրայի գրավումից հետո Հեթում Բ-ին հղած նամակի արաբերեն տարբերակը՝ պահպանված ԺԴ դարի մամուլք Անանուն հեղինակի և Իբն ալ-Դավադարիի ժամանակագրություններում, ինչպես նաև Իբն ալ-Սարրաջ ալ-Դիմաշկիի “Tuffāh al-arwāh” գրքում: Ստորև ներկայացված է Անանուն հեղինակի բնագիրը (al-Mu‘allif al-mağhūl, §. 8.), փակագծերում տրված են Իբն ալ-Դավադարիի և Իբն ալ-Սարրաջի տեքստերից արված լրացումները, իսկ ծանոթագրություններում տրված են բնագրային էական տարբերությունները և տարբերությունները:

Արաբերեն տեքստ	Թարգմանություն
<p>[من السلطان الملك الأشرف السيد الأجل العالم العادل المؤيد مظفر المنصور، صلاح الدنيا والدين، سلطان الإسلام والمسلمين، محي العدل في العالمين، منصف المظلومين من الظالمين، وارث الملك، سلطان العرب والعجم والترك، فاتح الأماص، مبيد جيوش الفرنج والأرمن والتتار، إسكندر الزمان، مؤلي الإحسان، ملك البحرين، صاحب القبالتين، خادم الحرمين الشريفين، سيد الملوك والسلطين، أبي الفتح خليل بن السلطان الملك المنصور</p>	<p>[Սուլթան ալ-Մալիք ալ-Աշրաֆից՝ գերապատիվ տեր, իմաստուն, արդարամիտ, [Աստժո կողմից] լիազորված, հաղթակիր, հաղթական, աշխարհի և կրոնի բարօրություն, իսլամի և մուսուլմանների սուլթան, երկու աշխարհներում արդարությունը վերականգնող, կեղեքվածներին կեղեքիչներից արդարացնող, արքայական իշխանության ժառանգորդ, արաբների, պարսիկների և թյուրքերի սուլթան, երկրներ գրավող, ֆրանկների, հայերի և թաթարների բանակները ոչնչացնող, [մեր] ժամանակի Ալեքսանդր, երկու ծովերի տիրակալ, երկու ուղղությունների տեր, երկու սրբավայրերի սպասավոր, արքաների և սուլթանների գերակա, հավատացյալների վեհապետի (իմա՝ խալիֆայի) գործակից, Աբու ալ-Ֆաթհ Խալիլ՝ սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուր Սալֆ ալ-Դունյա վալ-Դին («աշխարհի և կրոնի սուր») Կալավուն ալ-Սալիհիի որդի: Թո՛ղ</p>

¹ Բնագրում իրականում masadd (مسد) է: Տե՛ս վերևում՝ ՄԱՍ Ա, ծնթգր. 141:

<p>سيف الدنيا والدين قلاوون الصالحي، قسيم أمير المؤمنين، أعزَّ الله أنصارَه.² [بسم الله الرحمن الرحيم.] ليعلم³ الملك تكفور الأرمن⁴ ووقه الله في سرّه وجّهه، وجعله ممّن يلتقي⁵ المصيبة في أهل ملّته [بصبره⁶] إذا عجز أن يلتقيها بصدره، أمّا بعد فإنّا فتحنا عكّا التي هي [على دين الصليب⁷] في هذا الأمد القريب، [وجعلنا أسوارها دكّا]⁸ [فصار فتوحها حقّاً بعد أن كان فيوجها⁹ يقينا شكّا]¹⁰ فلو رأيتَ خندقها العميق مردوماً، و كلّ برج منيع [بها] مهدوماً، وفرسانها في خنادقها [وأزقتّها]¹¹ جائية، أصبحوا</p>	<p>Ալլահը հզորացնի նրա հաղթա- նակները]: [Հանուն բարեգութ և ողորմած Աստծո]: Ի գիտություն հայոց թաքֆուր արքայի, թո՛ղ Աստված նրան հաջողություն տա իր գաղտնի և հրապարակային գործերում, և դարձնի նրանցից մեկը, որն իր ժո- ղովրդի ճակատագրին կառերեսվի [իր համբերությամբ], եթե ապի- կար է այն իր կրծքով ընդունելու համար: Եվ հետո՝ մենք այս կարճ ժամկետում գրավել ենք Աքքան, որ խաշակրաց կրոնին է պատկա- նում, [և կործանել նրա պարիսպ- ները]: Եթե նրա գրավումը նախ- քան սա կասկածելի համոզմունք էր, ապա այժմ այն [արդեն] իրա- կանություն է: Եթե նրա խորը խանդակները լցված տեսներիր և նրա դժվարամատչելի աշտարակ- ները փլատակված, խրամախոր- շերում [և փողոցներում] տեսներիր նրա ասպետների անշնչացած</p>
---	---

² Փակագծերում առնվածը Իբն ալ-Սարրաջի բնագրից է: Տե՛ս **Ibn al-Sarrāğ**, Tuffāh al-arwāh, §. 303-304:
³ Իբն ալ-Դավադարիի (**Ibn al-Dawādārī**, Kanz al-durar, ց. 8, §. 320) և Իբն ալ-Սարրաջի (**Ibn al-Sarrāğ**, Tuffāh al-arwāh, §. 304) մոտ նույն («տեղեկացնում ենք», «իրազեկում ենք»):
⁴ Իբն ալ-Դավադարիի և Իբն ալ-Սարրաջի մոտ al-malik takfūr al-arman-ի փոխարեն գրչա-
 գրական սխալով al-malik Arğūn sarmān է:
⁵ Իբն ալ-Սարրաջի մոտ mimman yaktafi («ով կբավարարվի»):
⁶ Bi-ṣabrihi «իր համբերությամբ». լրացնում ենք Իբն ալ-Սարրաջի տեքստից:
⁷ Իբն ալ-Սարրաջի մոտ «kursī al-ṣalīb» («խաչի աթոռ»):
⁸ Լրացնում ենք Իբն ալ-Սարրաջից: Տե՛ս **Ibn al-Sarrāğ**, Tuffāh al-arwāh, §. 304:
⁹ Թեբևս գրչական սխալ է. ավելի հստակ է Իբն ալ-Սարրաջի տարբերակը՝ wa-ṣāra fathūhā
 yaqīnan ba'ada an kāna yaqīnu fathihā šakkan: Տե՛ս **Անդ**, §. 304:
¹⁰ Փակագծերում առնված հատվածը Kanz al-durar-ում չկա:
¹¹ Լրացնում ենք Իբն ալ-Սարրաջից: Տե՛ս **Անդ**, §. 304:

<p>بسيوفنا¹² [صَرَ عَى كَانَهُمْ أَعْجَازَ نَخْلٍ خَاوِيَةٍ، فَهَلْ تَرَى لَهُمْ مِنْ بَاقِيَةٍ]¹³، وَلَمَّا أَحَاطَ بِهَا رُكَابِنَا الْمُنْصُورِ، [وَأَحَاطَ بِهَا جَيْشِنَا الْمُؤَيَّدِ]¹⁴ كَمَا يُحِيطُ بِهَا السُّورُ، أَظْهَرُوا الْجَلَادَةَ فِي الْقِتَالِ، وَرَمَوْا بِالْمَجَانِيقِ وَالنَّبَالِ، وَحَسَبُوا أَنَّ بِأَسْهَابِهَا يُصَوْنُهُمْ، [وَوَظَّنُوا أَنََّّهُمْ مَا نَعْتُهُمْ حُصُونُهُمْ]¹⁵، فَمَا نَفَعَهُمُ الْحَدِيدُ، وَلَا كَثْرَةُ الْعَدَدِ وَالْعَدِيدِ، لَمَّا قَوْمَنَا لَهُمْ كُلَّ سِنَانٍ، وَجَاءَهُمُ الْمَوْتُ مِنْ كُلِّ مَكَانٍ، [فَلَمَّا تَحَقَّقُوا حَمَلَاتِنَا الْجَبْرِيَّةَ وَأَنَّ قُلُوبَنَا بِاللَّهِ قَوِيَّةٌ]¹⁶ أَشْرَفْنَا عَلَيْهِمْ مِنَ الْأَسْوَارِ، وَأَحْطْنَا بِهِمْ كَمَا يُحِيطُ الْيَدُ¹⁷ السُّوَارِ، فَوَلَّوْا مِنْ بَيْنِ أَيْدِينَا مُنْهَزِمِينَ، وَأَصْبَحُوا عَلَى مَا فَعَلُوا نَادِمِينَ، [فَلَمْ يُزَرَ مِنْهُمْ غَيْرَ جَرِيحٍ أَوْ أُسِيرٍ أَوْ قَتِيلٍ، وَلَمْ يَنْجُجْ مِنْهُمْ مِنْ سَبِوْفِنَا إِلَّا</p>	<p>մարմինները, որ մեր սրերով [ար- մավենու դատարկ ցողուններ էին դարձել, արդյո՞ք կտեսներիր, թե նրանցից ինչ-որ բան է մնացել]: Երբ մեր հաղթական հեծելա- գորն ու [աստվածապահ բանակն] օղակեցին այն, [և] շրջապատե- ցին, ինչպես որ նրա շուրջը եղած պարիսպը, խիզախությամբ նետ- վեցին մարտի, գործի դրեցին բա- բաններն ու կրակեցին նետերից: Նրանք կարծում էին, թե նրա զորությունը կպաշտպանի իրենց, [և կարծում էին, թե իրենց ամրությունները կպաշտպանեն իրենց]: Սակայն ո՛չ սրերը, ո՛չ քա- նակն ու բազմությունը չօգնեցին նրանց: Եվ երբ մենք նրանց վրա բարձրացրեցինք մեր բոլոր [թրե- րի] շեղբերը, մահն ամեն կողմից այցելեց նրանց: [Երբ տեսան մեր բռնի գրոհները, և որ մեր սրտերը Աստծով են ուժեղ], մոտեցանք նրանց պարիսպներին և շրջապա- տեցինք, ինչպես ապարանջանն է բոլորում ձեռքը (դաստակը): Նրանք շրջվեցին ու պարտված փախան մեր ձեռքերից՝ զղջալով իրենց արածի համար: [Զէիր տես-</p>
--	---

¹² Իբն ալ-Սարրաջի մոտ՝ bi-sūqihā («նրա շուկայում»): Տե՛ս Անդ, ք. 304:

¹³ Փակագծերում առնվածը մեջբերում է Դուրանի 69-րդ սուրայից: Տե՛ս al-Qurān, 69/7-8.

¹⁴ Wa-ḡayṣunā al-muʿayyad-ը («և մեր աստվածապահ բանակը») լրացնում ենք Իբն ալ-Սարրաջից: Տե՛ս Ibn al-Sarrāḡ, Tuffāh al-arwāh, ք. 304:

¹⁵ Մեջբերում է Դուրանից՝ al-Qurān, 59/2:

¹⁶ Հավելում ենք Իբն ալ-Սարրաջից: Տե՛ս Ibn al-Sarrāḡ, Tuffāh al-arwāh, ք. 304:

¹⁷ Իբն ալ-Դավադարիի և Իբն ալ-Սարրաջի տեքստերում al-yad («ձեռք») բառի փոխարեն al-zand է («դաստակ»): Տե՛ս Ibn al-Dawādārī, Kanz al-durar, ց. 8, ք. 321; Ibn al-Sarrāḡ, Tuffāh al-arwāh, ք. 305.

<p>القليل، فلو رأيت الديوية وقد أحاطت بهم كلُّ بليّة، ولو رأيت الاسبتار وقد أفناه سيّفنا البنّار، والجنويّة ما نفعهم طارقة ولا جنويّة¹⁸، أستار الأمن¹⁹ ما قويلوا ممّا بفديّة، ولا منّ، والبنادقة الزنادقة ألقوا بأنفسهم في البحر لمّا رأوا حملاتنا الصادقة، وكلّ قبيلة فيها وعشير ما بقي منهم كبير ولا صغير، وبعض الفرسان والمقدّمين أوثقتاهم بالقیود، وخلدناهم في خزانة البنود²⁰، و كان كل</p>	<p>նի մեկին, որ վիրավոր, գերեվար- ված կամ սպանված չէ. շատ քչերն էին փրկվել մեր սրերից: Եթե տես- ներ Տաճարականներին, որոնց պարուրել էր դժբախտությունը, և եթե տեսներ Հիվանդախնամ- ներին, որոնց մեր հատու սուրը ոչնչացրեց, և ո՛չ մի վահան և ո՛չ էլ ասպար չօգնեց նրանց: Իսկ Տևտոնյանները մեզնից ո՛չ կաշառք և ո՛չ նվեր չվերցրին, իսկ անհա- վատ վենետիկցիները, մեր արդար գրոհները տեսնելով, իրենց ծովը նետեցին: Ոչ մի ցեղ ու զարմից՝ ոչ մեծ և ոչ էլ փոքր, չմնաց այնտեղ: Որոշ ասպետների և զորապետերի</p>
--	---

¹⁸ Tāriqa-ն և ḡanawiyya-ն (կամ ḡanawiyya) վահանի տեսակներ են: Դրանցից առաջինը, ինչ-
պես ենթադրվում է, նույնանուն է ֆրանկյան targe-ին: Իսկ ḡanawiyya (չենովակա՞ն) էին կոչվում
հավանաբար խաչակիրների վահանների օրինակով պատրաստված ասպարները: *Sté n Histoire
des Mongols de la Perse, écrite en Persan par Raschid-Eldin, publiée, traduite en français, accompagnée
de notes et d’un mémoire sur la vie et les ouvrages de l’auteur par M. Quatremère, t. I (Paris: Imprimerie
royale, 1836), p. 288-289; Cl. Cahen, “Un traité d’armurerie composé pour Saladin”, BEO, t. 12 (1947-
1948), pp. 156; Cl. Cahen, Orient et Occident au temps des Croisades (Paris: Aubier, 1983), p. 176:*

¹⁹ Tuffāh al-arwāh երկի խմբագիրը ձեռագրից այսպես է կարդացել՝ astār al-amn, որը բա-
ռացի թարգմանությունը նշանակում է «անվտանգության ծածկոց» կամ «անվտանգության
վարագույր», ինչը փոքր-ինչ տարօրինակ է թվում: Մեզ թվում է, որ սա “isbitār al-amn” արտա-
հայտության մի տարբերակն է, որը հանդիպում է նաև մամլուքյան շրջանի այլ հեղինակների
(Իբն Աբդ ալ-Ջահիր, Իբն ալ-Ֆուրաթ և այլն) երկերում և տարատեսակ մեկնաբանությունների
տեղիք է տվել: Ամենայն հավանականությամբ, և ինչպես «Աքրայի նամակի» լատիներեն թարգ-
մանությունից կարելի է եզրակացնել, այս սխալագիր արտահայտությամբ նկատի են առնված
գերմանացի (almān) խաչակիր ասպետները կամ Տևտոնյանները: Հմմտ. H. Hein, “Der Deutsche
Orden bei den arabischen Historikern der Kreuzzugszeit”, *Der Islam*, vol. 76 (1999), S. 152-154:

²⁰ Հրատարակիչ-խմբագիրը իրականում ձեռագրից ḡarābat al-bunūd (خرابة البنود) է կարդացել,
որը բառացի թարգմանությամբ կնշանակի «գրոշների ավերակներ»: Սա թերևս տարընթերցում
պիտի համարել, և արտահայտությունը ճիշտ կլինի ḡizānat al-bunūd («գրոշների պահեստարան»)՝
կարդալ: Այսպես էր կոչվում դեռ Ֆաթիմյան ժամանակներում Կահիրեում կառուցված զինա-
տուն-զինապահեստը, որն արդեն Մամլուքների օրոք վերածվում է բանտի: Այստեղ հիմնակա-
նում բանտարկվում էին հայ և ֆրանկ ռազմագերիները: Որպես «գետտո» ստեղծված այս տա-
րածքը ժամանակի ընթացքում այնքան է ընդարձակվում և լցվում գերիներով, որ վերածվում է
քրիստոնեաբնակ հիմնականում հայաբնակ թաղամասի, որտեղ անգամ եկեղեցի կար: Այս

<p>منهم يودُّ لو راح أسيراً لما دمّرناهم وديارهم تدميراً.</p> <p>وأنت أيها الملك إن لم تتأسى بأهل عكّا، وإلا أبكيناك على ديارك، وعلى مثلها بيكي، وأفضى وجوتك إلى العدم، وندمت كما ندم أهل عكّا حيث لا ينفعهم الندم.</p> <p>وتحمّل القطيعة الأولى والثانية، وتحضرها بنفسك إلى أبوابنا العالية، وإن أظعت في مخالفة²¹ إبليس لثظيلنَّ حُرْتُكَ على بلاد سيس، فكلُّ منكم يقول: ما بقي بعدَ عكّا إلا أنا، فأنجُ بنفسك قبل أن تقع في الويل والعناء، واعتمدْ على ما رسمنا لك به والسلام.²²]</p>	<p>շղթյակապ արեցինք և հավեր- ժացրինք «դրոշների պահեստա- րանում»: Բոլորը ցանկանում էին գոնե գերի ընկնել, երբ մենք ջար- դեցինք նրանց և հիմնահատակ քանդեցինք նրանց տները]:</p> <p>Իսկ դու, օ՛ արքա, եթե Աքրային չես կարեկցել, մենք քեզ կստիպենք նրա նման լացել քո խակ տների վրա՝ վերջ տալով քո գոյությանը: Կզղջաս Աքրայի ժո- ղովրդի պես, բայց զղջումն այլևս չի օգնի: Ուստի բե՛ր առաջին և երկրորդ հարկերը և ինքդ անձամբ ներկայացրու՛ մեր Բարձր դուռ, բայց թե հնազանդվեցիր սատա- նյի հետ դաշնակցությանը, ապա սուզդ կտարածվի Սսի երկրի վրա: Ձեզնից յուրաքանչյուրը թո՛ղ ասի՝ ինձնից բացի ոչ ոք չի մնացել Աքրայից հետո: Փրկի՛ր քո հոգին, քանի դեռ նրան չեն պատուհասել վիշտն ու տառապանքը՝ առաջ- նորդվելով մեր կարգադրությամբ: Խաղաղություն [քեզ]:</p>
---	---

մասին մենք առանձին հոդված ունենք: Տե՛ս Գ. Դանիելյան, «Հայերը ԺԴ դարի Մամլուքյան Կա-
հիրեում. Խիզանաթ ալ-բունուդ (Hizānat al-bunūd) հայաբնակ թաղամասը», ԱԱ 2 (2020), էջ 164-201:

²¹ Muḥālafā (مخالفة). Իրականում այսպես է տեքստում, և նշանակում է «հակառակում», «հա-
կասում»: Բայց սա ամենայն հավանականությամբ դրչական սխալ է, և փոխարենը պետք է
muḥālafā (مخالفة) լինի, որն ընդամենը մեկ հնչյունատարբերիչ կետով է տարբերվում նախորդից
և ավելի է հարմարում համատեքստին: Muḥālafā է նաև Իբն ալ-Դավադարիի և Անանունի մոտ:

²² Փակագծերում առնված հատվածը շատ թերի է ինչպես Անանուն հեղինակի, այնպես էլ
Իբն ալ-Դավադարիի մոտ, ուստի մինչև նամակի վերջը շարունակում ենք Իբն ալ-Սարրաջի
երկրից: Տե՛ս Ibn al-Sarrāğ, Tuffāh al-arwāh, s. 305:

3. Ալ-Աշրաֆ Խալիլ սուլթանի՝ Տյուրոսի (Սուրի) գրավումից հետո Հեթում Բ-ին հղած նամակի լատիներեն բնագիրը՝ պահպանված Բարդուղեմեոս Կոտտոնի «Անգլիայի պատմություն» երկում: Այս նամակի արաբերեն տարբերակը մեզ հայտնի արաբական պատմագրական երկերում չի պահպանվել: Ստորև ներկայացնում ենք հայերեն զուգադիր թարգմանություն:

Լատիներեն բնագիր	Հայերեն թարգմանություն
<p><i>Nos Soldanus Mellec Asseraph, magnus dominus, sapiens rectitudine, potens laboriosus, bonus seculo et legi, Soldanus Sarracenorum et salvandorum, vivificator juris seculo, faciens justitiam oppressis et opprimentibus, haereditor regnorum, Soldanus Arrabum, Persarum, Sarracenorum, et Turcorum, conquisitor terrarum et mundi convictor, triumphator et debellator exercituum Francorum, Armenorum, et Tartarorum, Alexander temporis praesentis, tributor bonorum, rex in gemmis maris, dominus duarum adorationum, minister duarum grandium domorum, dominus regum et Soldanorum, participator amiralium fidelium, filius Soldani Mellec Monossorii, ensis fidei, Calaon Salathi,</i></p>	<p>Մենք՝ սուլթան [ալ]-Մալիք ալ-Աշրաֆը, մեծագույն տիրակալ, իմաստուն, արդարամիտ, հզոր, ջանասեր, աշխարհի և օրենքի հանդեպ բարի, սարակենոսների և փրկության ենթակաների սուլթան, իրավունքն աշխարհի համար վերականգնող, ճնշվածների և ճնշողների միջև արդարադատություն հաստատող, արքաների ժառանգ, արաբների, պարսիկների, սարակենոսների և թյուրքերի սուլթան, հողերի նվաճող, աշխարհի հաղթող, ֆրանկների, հայերի ու թաթարների զորքերի գերագանցող և հաղթող, ներկա ժամանակների Ալեքսանդր, ծովի թանկարժեք քարերի մեջ թագավոր, երկու պաշտամունքների տիրակալ, երկու մեծ տների սպասավոր, արքաների ու սուլթանների գերակա, հավատացյալների վեհապետի</p>

